
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ	9
2021 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈԽՅՈՒՆՆԵՐԸ	15
Տնտեսական զարգացում	16
Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում	29
Էներգետիկա և բնական պաշարների կառավարում	34
Միջուկային անվտանգություն	39
Զրային տնտեսություն	40
Տրանսպորտ	42
Քաղաքացիական ավիացիա	45
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն	46
Քաղաքաշինություն	51
Արտակարգ իրավիճակների ոլորտ	52
Արտաքին քաղաքականություն	55
Արդարադատություն	62
Սփյուռք	69
Կրթություն	70
Մշակույթ	82
Սպորտ	88
Երիտասարդություն	90
Առողջապահություն	92
Աշխատանք և սոցիալական պաշտպանություն	95
Շրջակա միջավայր	112
Պետական գույքի կառավարում	120
Անշարժ գույքի կադաստր	122
Հասարակական կարգի պահպանություն	123
Բյուջեների կազմման բնագավառ	127
Հաշվապահական հաշվառում և առողիտորական գործունեություն	129
Եկամուտների քաղաքականություն	130
Պետական եկամուտների վարչարարություն	133
Կապիտալի շուկայի զարգացում	137
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ	140
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ	140
Արտաքին միջավայրի զարգացումներ	140

ՀՀ մակրոտնտեսական զարգացումներ	140
Համախառն առաջարկ և պահանջարկ	140
Աշխատանքի շուկա	146
Գնաճ և դրամավարկային քաղաքականություն	146
Արտաքին հատված	148
Փոխարժեքներ	152
Ֆինանսական շուկաներ	153
 ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ	156
Հավելված: Տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի, արտահանման և ներմուծման ապրանքախմբերի հիմնական ցուցանիշների աղյուսակներ	162
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	165
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	167
Պաշտոնական դրամաշնորհներ	185
Այլ եկամուտներ	189
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	194
Տնտեսագիտական դասակարգում	194
Ծրագրային դասակարգում	201
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ	330
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	342

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
- ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն
- ԱՄՆ – Ամերիկայի Միացյալ Նահանգներ
- ԱՄՆ ՄԶԳ – Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
- ՈԴ – Ռուսաստանի դաշնություն
- ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
- ՅՈՒՆԵՍԿՕ – Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն
- ԱՄՀ – Արժույթի միջազգային հիմնադրամ
- ՀԲ – Համաշխարհային բանկ
- ՎՀՄԲ – Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
- ՀՄԸ – Հարգացման միջազգային ընկերակցություն
- ԵՄ – Եվրոպական միություն
- ԵՆԲ – Եվրոպական ներդրումային բանկ
- ՎՀԵԲ – Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ
- ԱՀԿ – Առևտրի համաշխարհային կազմակերպություն
- ԱՀԲ – Ասիական զարգացման բանկ
- ԵԱՏՄ – Եվրասիական տնտեսական միություն
- ԱՆ – Առողջապահության նախարարություն
- ԱՍՀՀ – Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ԲՏԱՆ – Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
- ԿԳՄՄՆ – Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
- ՏԿԵՆ – Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
- ՖՆ – Ֆինանսների նախարարություն
- ԿԲ – Կենտրոնական բանկ
- ՊԵԿ – Պետական եկամուտների կոմիտե
- ՍԱԾ – Սոցիալական ապահովության ծառայություն
- ՄՄԾ – Միասնական սոցիալական ծառայություն
- ՄՄԾՏԿ – Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն
- ՓԲԸ – Փակ բաժնետիրական ընկերություն
- ՓՄՁ – Փոքր և միջին ձեռնարկատիրություն / ձեռնարկություն
- ԾԻԳ – Ծրագրերի իրականացման գրասենյակ

- ՊՈԱԿ – Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՔԿԱԳ – Քաղաքացիական կացության ակտերի գրանցում
ՄԻԱՎ – Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՀՆԱ – Համախառն ներքին արդյունք
ԱԱՀ – Ավելացված արժեքի հարկ
ՄԿՈՒ – Մասնագիտական կրթություն և ուսուցում
ԶԼՄ – Զանգվածային լրատվության միջոց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ¹

ՄԱԿՐՈՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

- 1) 2021 թվականին համաշխարհային տնտեսությունը, այդ թվում՝ << գործընկեր երկրների տնտեսությունները թևակոխել են տնտեսական աճի վերականգնման փուլ: Առաջարկի սահմանափակումների պայմաններում համաշխարհային պահանջարկի վերականգնման ազդեցությամբ միջազգային (այդ թվում՝ հումքային) շուկաներում գրանցվել են բարձր գնաճային միտումներ:
- 2) 2020 թվականի համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով գրանցված տնտեսական անկումից հետո 2021 թվականին << տնտեսությունը թևակոխեց վերականգման փուլ՝ գրանցելով 5.7% տնտեսական աճ: 2021 թվականին տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ գյուղատնտեսության, գրանցվեց ավելացված արժեքի աճ: Տնտեսական աճն ուղեկցվեց ներքին պահանջարկի վերականգնմամբ:
- 3) 2021 թվականին տեղի է ունեցել տնտեսության արտաքին դիրքի որոշակի բարելավում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է ՀՆԱ-ի 3.7%-ը: Հիմնականում ճանապարհորդության վերականգման հետևանքով ծառայությունների արտահանման աճի արդյունքում, ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կրճատվել է: Միաժամանակ բարձր աճ է գրանցվել մասնավոր տրանսֆերտներում: Իսկ ներքին և արտաքին պահանջարկի վերականգնման պայմաններում գրանցվել է և՝ արտահանման, և՝ ներմուծման ծավալների աճ:
- 4) 2021 թվականի դեկտեմբերին 12-ամյա գնաճը կազմել է 7.7%՝ գերազանցելով << կենտրոնական բանկի նպատակային՝ (4 +/- 1.5%) ցուցանիշը: Տարվա ընթացքում, հաշվի առնելով ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում գնաճային գարգացումները և գնաճային սպասումների որոշակի արագացումը, << ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույթը ընդհանուր առմամբ 2.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7.75%:
- 5) Տնտեսության իրական հատվածում անորոշությունների պահպանման ներքո բանկային վարկերի ծավալը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է, մինչդեռ ավանդների աճի տեմպն՝ արագացել: Միաժամանակ, վարկերի և ավանդների տոկոսադրույթները էական փոփոխություններ չեն գրանցել, մինչդեռ պետական պարտատոմսերի առաջնային շուկայում գրանցվել է եկամտաբերությունների աճի տեսանելի միտում, իսկ << Եվրոբոնդերի տոկոսադրույթները և << ոիսկի հավելավճարը նախորդ տարվա աճից հետո նվազել են:

¹Հաշվետվության մեջ ներկայացված ցուցանիշների հանրագումարների և դրանց բաղադրիչների միջև շեղումները պայմանավորված են կլորացումներով:

- 6) 2021 թվականին հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են եղել հարկաբյուջետային կայունության ապահովումը, նպաստումը տնտեսական վերականգնմանը և COVID-19 համավարակի ու Արցախյան պատերազմի հետևանքների էական մեղմումը: Մասնավորապես, ապահովվել է պատմական միջինից բարձր պետական բյուջեի պակասուրդ՝ ՀՆԱ-ում 4.6%, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.8 տոկոսային կետով: Ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը պլանավորվածին համահունչ զարդարություն է ունեցել, իսկ ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 3.2 տոկոսային կետով:
- 7) Հարկաբյուջետային քաղաքականության ուղղությանը համահունչ հարկային եկամուտները ՀՆԱ-ում բարելավվել են, իսկ ծախսերը ՀՆԱ-ում՝ նվազել: 2021 թվականին հարկային վարչարարության և օրենսդրական փոփոխությունների արդյունքում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը բարելավվել է 0.3 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ-ի 22.7 տոկոսը: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականի նկատմամբ նվազել է 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 28.7%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 25.6%:
- 8) 2021 թվականին ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերում (կապիտալ ծախսերում) արձանագրվել է կատարողականի բարելավում: 2021 թվականի ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի աճը, առանց 2020 թվականի Արցախյան պատերազմով պայմանավորված լրացուցիչ ռազմական ծախսերի, կազմել է շուրջ 26.0%:
- 9) COVID-19 համավարակ և Արցախյան պատերազմի բացասական հետևանքների մեղմման ուղղությամբ իրականացվող հարկաբյուջետային միջոցառումները շարունակվել են նաև 2021 թվականին: ՀՀ 2021 թվականին պետական բյուջեից կորոնավիրուսի տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման նպատակով իրականացված միջոցառումների գծով հատկացված միջոցների (ծախսեր և վարկավորում) ծավալը կազմել է 54.6 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.8 տոկոս: Արցախյան պատերազմի հետևանքների հակագրման ուղղությամբ հատկացված միջոցները (հիմնականում սոցիալական աջակցության ծախսեր և Արցախին վարկավորում) կազմել են 132.9 մլրդ դրամ՝ ՀՆԱ-ի 1.9 տոկոսը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՏԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

- 10) ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքով հաստատված եկամուտների և ծախսերի՝ կառավարությանն օրենսդրությամբ վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունների արդյունքում ձևավորված ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 99.6%-ով՝ կազմելով 1,683.8 մլրդ դրամ, ծախսերի գծով՝ 97.8%-ով՝ կազմելով 2,004.3 մլրդ դրամ: Հարկ է նշել, որ հաշվետու տարում ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնված պարտավորությունների ամբողջական և ժամանակին կատարումը:

- 11) Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի և Եկամուտներում, և՝ ծախսերում արձանագրվել է աճ: Մասնավորապես՝ Եկամուտներն աճել են 7.9%-ով կամ 123.2 մլրդ դրամով՝ պայմանավորված հարկային Եկամուտների և պետական տուրքերի աճով, ծախսերը՝ 5.8%-ով կամ 109.7 մլրդ դրամով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով:

ՀՀ պետական բյուջեի Եկամուտները

- 12) 2020 թվականի համեմատ 2021 թվականի պետական բյուջեի Եկամուտներում 5.5 տոկոսային կետով ավելացել է հարկային Եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռը, իսկ պաշտոնական դրամաշնորհների և այլ Եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 2.7 և 2.8 տոկոսային կետով:
- 13) 2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,587.0 մլրդ դրամ հարկային Եկամուտներ և պետական տուրքեր, որոնք 100.2%-ով ապահովել են ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը: 2020 թվականի համեմատ հարկային Եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 14.6%-ով կամ 201.7 մլրդ դրամով: Հաշվետու տարում գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ ակցիզային հարկի: 2021 թվականի պետական բյուջեի հարկային Եկամուտների ցուցանիշի վրա զգալի դրական ազդեցություն է ունեցել տնտեսական ակտիվության, ներմուծման և արտահանման աճը, հարկունակ ոլորտների իրացման շրջանառությունների, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը: Միաժամանակ, 2021 թվականի պետական բյուջեի հարկային Եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել ԱԱՀ-ի, Եկամտային հարկի և ակցիզային հարկի գծով վերադարձված գումարների աճը: Մասնավորապես, ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարները 2021 թվականին կազմել են 146.7 մլրդ դրամ՝ 22.2%-ով կամ 26.6 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, ակցիզային հարկի գծով վերադարձված գումարները՝ 915.8 մլն դրամ՝ 35.1%-ով կամ 237.9 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, իսկ Եկամտային հարկի գծով՝ 32.6 մլրդ դրամ՝ 83.8%-ով կամ 14.9 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:
- 14) 2021 թվականին արտաքին աղյուրներից տրամադրվել են 12.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 63.1%-ը, որից 9.6 մլրդ դրամը՝ նպատակային, իսկ 2.8 մլրդ դրամը՝ բյուջետային աջակցության շրջանակներում, որոնք ապահովել են համապատասխանաբար 78.7% և 37.8% կատարողական: Նպատակային դրամաշնորհների կատարողականի ցուցանիշը պայմանավորված է ծրագրերի կատարման ցածր աստիճանով: Ոչ նպատակային դրամաշնորհների ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ԵՄ բյուջետային աջակցության շրջանակներում նախատեսված դրամաշնորհների կատարողականով, որը կազմել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 19.2%-ը:

- 15) 2021 թվականին << պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 84.6 մլրդ դրամ՝ 97.2%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այլ եկամուտների գծով արձանագրվել է 30.8% (37.7 մլրդ դրամով) նվազում, որը հիմնականում բացատրվում է այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտների նվազմամբ՝ պայմանավորված 2020 թվականին ռազմական դրության պայմաններում ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման համար պետությանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կատարված 52.7 մլրդ դրամ նվիրաբերությամբ:

<< պետական բյուջեի ծախսերը

- 16) << 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 174 ծրագրերի իրականացում 46 պետական մարմինների և Կառավարության պատասխանատվության ներքո: Կառավարության կատարած ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 178, որոնցից փաստացի միջոցներ են օգտագործվել 175-ի գծով, իսկ Կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին:
- 17) << 2021 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերի՝ 2,004.3 մլրդ դրամի 30.9%-ը բաժին է ընկել << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, 16.8%-ը՝ << պաշտպանության նախարարության, 10%-ը՝ << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, 9.2%-ը՝ << ֆինանսների նախարարության, 8.7%-ը՝ << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, 3.3%-ը՝ << ոստիկանության, 2.2%-ը՝ << էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերին:
- 18) 2020 թվականի համեմատ << պետական բյուջեի ծախսերի 5.8% կամ 109.7 մլրդ դրամով աճը հիմնականում պայմանավորված է << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ծախսերի՝ 13%, << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության՝ 13%, << ֆինանսների նախարարության՝ 10.1% և << առողջապահության նախարարության ծախսերի 11.4% աճով: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ 13.1%-ով նվազել են << պաշտպանության նախարարության ծախսերը՝ պայմանավորված 2020 թվականին ռազմական գործողությունների պայմաններում լրացուցիչ միջոցների հատկացմամբ:
- 19) Ըստ տնտեսագիտական կառուցվածքի պետական բյուջեի ծախսերի 89.2 %-ը կամ 1,788.0 մլրդ դրամը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, իսկ 10.8%-ը կամ 216.3 մլն դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին, իսկ նախորդ տարվա համեմատ աճը պայմանավորված է ընթացիկ ծախսերի աճով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերում 1.1 տոկոսային կետով ավելացել է ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը և նոյնքան նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը:

- 20) Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերի 7.2% աճը մեծ մասամբ պայմանավորված է նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերի աճով: Գրեթե բոլոր ծախսատեսակների գծով արձանագրվել է աճ, բացառությամբ այլ ծախսերի, որոնց 6.6% (18.8 մլրդ դրամ) անկումը հիմնականում կապված է 2020 թվականին ուղղական գործողություններով պայմանավորված՝ << պաշտպանության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի հետ, որոնք հաշվետու տարում կազմել են 197.8 մլրդ դրամ (նախատեսվածի 99.9%-ը՝՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.2%-ով (20.2 մլրդ դրամով):
- 21) Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների ծրագրված ցուցանիշի 92% կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ 4.4% (9.9 մլրդ դրամ) նվազումը հիմնականում պայմանավորված են ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսերի) կատարողականով: << աշվետու տարում կապիտալ ծախսերը կազմել են 218.4 մլրդ դրամ կամ ճշտված ծրագրի 92.5%-ը: << ատկացված միջոցների 49.3%-ը կամ 107.7 մլրդ դրամը բաժին է ընկել պաշտպանության ոլորտին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ կապիտալ ծախսերի 4.1% նվազումը հիմնականում պայմանավորված է << պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման միջոցառման շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի նվազմամբ՝ պայմանավորված 2020 թվականին ուղղական դրության հետ կապված ծախսերով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի զգալի աճ է ապահովվել ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում, որոնք կազմել են համապատասխանաբար 53.4 մլրդ դրամ և 6.3 մլրդ դրամ՝ 26.7%-ով (11.3 մլրդ դրամով) և 4.5 անգամ (4.9 մլրդ դրամով) գերազանցելով 2020 թվականի ցուցանիշները:

<< պետական բյուջեի պակասուրդը

- 22) 2021 թվականին << պետական բյուջեն կատարվել է 320.5 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրի 89.2%-ը և 4.0%-ով (13.5 մլրդ դրամով) զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի համեմատ պակասուրդի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է արտաքին աղբյուրներից վարկերի և փոխատվությունների ստացման ցածր ցուցանիշով: << աշվետու տարում պակասուրդը 101.2 մլրդ դրամով (98.3% կատարողական) ֆինանսավորվել է ներքին, 219.3 մլրդ դրամով (85.6% կատարողական) արտաքին աղբյուրների հաշվին:
- 23) 2020 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի պակասուրդն ամբողջությամբ ֆինանսավորվել էր ներքին աղբյուրների հաշվին, ապա 2021 թվականին այն զգալի չափով (68.4%-ով) ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից՝ պայմանավորված արտարժութային պետական պարտատոմսերի թողարկմամբ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

- 24) 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,429.6 մլրդ դրամ (9,225.6 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ նախորդ տարեվերջի համեմատ ՀՀ պետական պարտքի ցուցանիշներն աճել են անհամաշափորեն՝ համապատասխանաբար 6.4%-ով և 15.8%-ով: Դա պայմանավորված է եղել 2020 թվականի և 2021 թվականի դեկտեմբերի ամսվա վերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքների տարբերությամբ, որը փոփոխվել է 8.1%-ով՝ 522.59-ից նվազելով մինչև 480.14: ՀՀ պետական պարտքում 3,192.2 մլրդ դրամը (6,648.4 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 1,237.4 մլրդ դրամը (2,577.2 մլն ԱՄՆ դոլարը)¹ ներքին պարտքը:
- 25) ՀՀ կառավարության պարտքը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4,209.8 մլրդ դրամ (8,767.9 մլն ԱՄՆ դոլար), որից արտաքին պարտքը՝ 2,972.4 մլրդ դրամ (6,190.7 մլն ԱՄՆ դոլար), իսկ ներքին պարտքը՝ 1,237.4 մլրդ դրամ (2,577.2 մլն ԱՄՆ դոլար):
- 26) 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 265.3 մլրդ դրամով (1,257.2 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով, որն աճել է 7.3%-ով, իսկ ՀՀ ԿԲ արտաքին պարտքը նվազել է 8.6%-ով:

2021 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏԻՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈԽՅՅՈՒՆԵՐԸ

2021 թվականի պետական բյուջեն հաստատվել էր կառավարության գործունեության ծրագրի նպատակների ու ներդրված հարկաբյուջետային արդիականացված կանոնների հիման վրա: Ըստ այդմ՝ 2021 թվականի հարկաբյուջետային քաղաքականության նպատակն է եղել ապահովել հարկաբյուջետային կայունությունը և պայմաններ ստեղծել << կառավարության պարտքի նվազման համար, ինչպես նաև կապիտալ ծախսերի ընդլայնման ճանապարհով նպաստել տնտեսության և նրա ներուժի վերականգնմանը համավարակի ու Արցախյան պատերազմի հետևանքներին հակազդող միջոցառումների իրականացման ճանապարհով:

2020 թվականի ընթացքում տեղի ունեցած աննախադեպ բացասական ցնցումներ պարունակող զարգացումները, մասնավորապես համավարակի հետևանքներով առաջացած իրավիճակը և Արցախյան պատերազմը, հարկաբյուջետային կանոններով սահմանված կարգով դիտարկվել էին որպես բացարիկ դեպքեր, որը թույլ էր տվել հարկաբյուջետային քաղաքականությամբ ճկուն արձագանքել առաջացած ցնցումներին: Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2020 թվականին «բացարիկ դեպքի» կարգավորումների հիմք հանդիսացած գործոնների տնտեսական և հարկաբյուջետային հետևանքները ոչ ամբողջությամբ էին հաղթահարված և դեռևս անհրաժեշտ էր հարկաբյուջետային քաղաքականության հակազդող միջոցառումների շարունակությունը՝ 2021 թվականի համար ևս սահմանվել էր այդ կարգավորումների պահպանումը:

Հարկաբյուջետային հակազդող քաղաքականության միջոցառումներն ուղղվել են կապիտալ ծախսերի ընդլայնմանը, համավարակի, ինչպես նաև Արցախյան պատերազմի՝ 2021 թվականին շարունակվող բացասական սոցիալ-տնտեսական հետևանքների հնարավորինս չեղոքացմանը՝ Կառավարության հաստատած հականգնաժամային միջոցառումների փաթեթի շրջանակներում: 2021 թվականի ընթացքում իրականացված հականգնաժամային միջոցառումների շրջանակներում շուրջ 54.6 մլրդ դրամ գումար ուղղվել է COVID-19 համավարակի բացասական հետևանքների մեջմանը, որը ներառել է ինչպես առողջապահական, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնույթի միջոցառումներ: Բացի այդ, շուրջ 132.9 մլրդ դրամ ուղղվել է Արցախյան պատերազմի հետևանքների մեջմանը:

2021 թվականի տնտեսական վերականգնումը և հարկաբյուջետային քաղաքականության ջանքերը թույլ են տվել ապահովել ՀՆԱ համեմատությամբ պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի որոշակի նվազում, որը հիմքեր է ստեղծել 2022-2026թթ. պարտքի բերի նվազեցման ծրագրի թիրախների իրականացման համար՝ միաժամանակ չխաթարելով 2020

թվականի շուկերից հետո տնտեսության վերականգնումը: Մասնավորապես << կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 3.2 տոկոսային կետով:

Արդյունքում, հաշվետու տարվա ընթացքում տնտեսական իրավիճակին համարժեք հարկաբյուջետային քաղաքականության իրականացումը և դրամավարկային քաղաքականության հետ դրա արդյունավետ կոորդինացումը թույլ են տվել <<-ում ապահովել կայուն մակրոմիջավայրի առկայություն, իիմքեր ստեղծել միջնաժամկետում տնտեսական աճի ներուժի բարձրացման ու պարտքի կայունության ամրապնդման համար:

Տնտեսական զարգացում

2021 թվականին տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակը կառուցվել է << կառավարության՝ 2019 թվականի փետրվարի 8-ի թիվ 65-Ա որոշմամբ հաստատված ծրագրի առաջնահերթությունների և 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված << կառավարության հնգամյա ծրագրի շուրջ: Իրականացվելիք միջոցառումների հիմնական նպատակը եղել է տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և դրանց հավասար հասանելիության ապահովումը, մարդու ստեղծարար հմտությունների զարգացումը և իրացման միջոցով միջին խավի բարեկեցության աճն ու աղքատության կրճատումը, արտահանումը խթանող պայմանների ապահովումն ու միջավայրի ձևավորումը: Այս համատեքստում Կառավարությունը մինչև 2026 թվականը թիրախավորել է ՀՆԱ-ի տարեկան միջին աճի նվազագույն մակարդակը հասցնել 7%-ի (բարենպաստ արտաքին տնտեսական պայմաններում՝ 9%-ի), ֆորմալ հատվածի ոչ պետական ոլորտի աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների ֆոնդը՝ ՀՆԱ-ի 25%-ի, և 10%-ից ցածր գործազրկության մակարդակ:

Մրցունակության երկարաժամկետ աճի և պահպանման նպատակով, բացի ներդրումների և զբաղվածության ընդլայնումից, անհրաժեշտ է եղել զգալիորեն բարձրացնել կապիտալի և աշխատանքի արտադրողականությունը՝ ընդլայնելով քաղաքացիներին հասանելի տնտեսական հնարավորությունների դաշտը:

Միջազգային մրցունակության աճն ապահովելու նպատակով Կառավարությունը որդեգրել էր գիտելիքահենք և նորարարական տնտեսություն ձևավորելու տեսլականը և գիտելիքն ու նորարարությունը հոչակել տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ: Կառավարության տնտեսական քաղաքականությունը հիմնվում էր գիտելիքի ներմուծման, ստեղծման, արտահանման և դրա արդյունավետ կիրառման վրա:

Տնտեսական աճի ներառականության առանցք էր դարձել բնակչության շարժունակության և տեղեկացվածության բարձր մակարդակի ապահովումը, ստեղծարար կարողությունների զարգացումն ու իրացումը՝ կրթության, առողջապահության և տնտեսական ենթակառուցվածքների հնարավորինս հավասար հասանելիության ապահովումը: Ավելին, մրցունակության աճը և ներառականությունն ապահովող կարևոր գործններից էր քաղաքացիների լայն ներգրավվածության ապահովումը և բարձր որակավորում ունեցող մարդկային ռեսուրսի առկայությունը տնտեսության բոլոր ճյուղերում: Առանց տնտեսապես ակտիվ քաղաքացիների տեսակարար կշռի զգալի աճի հնարավոր չէ տնտեսական աճի ապահովումը, որը ենթադրում է նաև տնտեսական կյանքում կանանց և երիտասարդների մասնակցության զգալի աճ:

Այս իմաստով բարեփոխումների առանձնահերթ ուղղություններ են համարվել նաև՝

- Հողային օրենսգրքի բարեփոխումները՝ միտված արտադրողական գյուղատնտեսության ձևավորմանը,
- Զրային ոլորտի բարեփոխումները՝ ուղղված ջրային ռեսուրսների խնայողությանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը,
- Քաղաքաշինության ոլորտի բարեփոխումները՝ ուղղված ոլորտի ներուժի ընդլայնմանը, տարածքային համաչափ զարգացմանը, ինչպես նաև գործընթացների ու կարգավորումների արդիականացմանը:

Ներդրումներ

2021 թվականի հուլիս 29-ին Կառավարության կողմից հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում լեռնային հանգստավայրի կառուցման «Մայեն» ներդրումային ծրագրին հավանություն տալու մասին» ներդրումային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում Արագածոտնի մարզում հիմնվում է բազմաֆունկցիոնալ լեռնային համալիր: Սա այլընտրանք է գործող համալիրներին և հնարավորություն կտա ձևավորել առավել մրցակցային գնային միջավայր:

Ծրագիրն իրականացնելուց հետո կստեղծվի 1500 աշխատատեղ՝ 180,000 դրամ միջին ամսական աշխատավարձով: Ծրագրի հիմնական շահառուն զբոսաշրջիկն է: Սա ենթադրում է տնտեսության համար հավելյալ արժեքի ստեղծում և արտաքինային դրամական միջոցների հոսք դեպի Հայաստան: Ներդրող ընկերությունը պատրաստվում է առաջին փուլով 15 միլիարդ դրամ ներդնել ճոպանուղի և սահուղիներ կառուցելու համար:

Արդյունաբերության մրցունակության աճ

ՀՀ կայուն տնտեսական զարգացման տեսանկյունից ՀՀ կառավարությունը կարևորում է արտահանմանն ուղղված պետական աջակցությունը՝ համապատասխան գործիքների կիրառմամբ։ 2021 թվականի ընթացքում ծրագրի իրականացման շրջանակներում մի շարք արդյունաբերական կազմակերպություններ ստացել են պետական աջակցություն միջազգային ցուցահանդեսներին մասնակցության նպատակով, ինչը դրական է ազդել այդ ընկերությունների արտահանման և արտադրության ծավալների աճի վրա։ Ծրագրով «հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում» միջոցառման շրջանակում կազմակերպվել է հետևյալ ցուցահանդեսներին հայկական ընկերությունների մասնակցության ապահովումը։

- IphEB, 2021թ. ապրիլի 14-ից 16-ը՝ դեղագործության, բիոտեխնոլոգիաների ցուցահանդես, ՌԴ, Սանկտ-Պետերբուրգ,
- Иzmайлово Shoes, 2021թ. օգոստոսի 16-ից սեպտեմբերի 3-ը՝ կոշիկի և կաշվե իրերի ցուցահանդես, ՌԴ, Մոսկվա,
- CPM, 2021թ. օգոստոսի 31-ից սեպտեմբերի 3-ը՝ հագուստի ցուցահանդես, ՌԴ, Մոսկվա,
- PRODEXPO 2022, 2022 թվականի փետրվարի 7-ից 11-ը՝ սննդարդյունաբերության ցուցահանդես, ՌԴ, Մոսկվա։

2021 թվականի հունվարի 1-ից մինչև նոյեմբերի 15-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից մաքսատուրքից ազատման արտոնություն է տրամադրվել 20 ներդրումային ծրագրի (որից 12-ը՝ նոր կարգով): Ծրագրերի շրջանակներում նախատեսվում էր ներմուծել 61.3 մլրդ դրամի ապրանքներ (հումք և սարքավորում): Վերոնշյալ ապրանքների մասով մաքսատուրքից ազատման արտոնությունը գնահատվում է 6.5 մլրդ դրամ։ Ծրագրերի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 71 մլրդ դրամի ներդրում և ստեղծել 584 նոր աշխատատեղ։

Արտոնությունները տրամադրվել են մշակող արդյունաբերության (թեթև արդյունաբերություն, ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն, այումինե արտադրատեսակների արտադրություն, պոլիգրաֆիական արտադրատեսակների արտադրություն, կենցաղային տեխնիկայի արտադրություն), առողջապահության, հանքարդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում (ջերմոցային տնտեսություններ) գործունեություն ծավալող ընկերություններին։

Գործարար և ներդրումային միջավայր

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավման համար մեծապես կարևորվել են պարզ, թափանցիկ, արագ, կանխատեսելի և հնարավորինս քիչ ծախսատար պետական կարգավորումներն ու վարչական ընթացակարգերը, հավասար մրցակցային պայմանները, տեղեկատվության առավելագույն հասանելիությունը և գործարարությանն օժանդակող զարգացած շուկայական ենթակառուցվածքներ ապահովելու քաղաքականությունը։ Գործարար միջավայրի բարելավման նպատակով իրականացվող ծրագրերը թիրախավորել են գործարարությամբ զբաղվելուն խոչընդոտող վարչարարական բնույթի խնդիրների լուծումը՝ նպաստելով գործարար գաղափարների իրագործմանը տնտեսության բոլոր ճյուղերում։

Թիրախային գործողությունների իրականացման արդյունքում բարձրացվել է գործարարներին ծառայություններ մատուցող մարմինների գործունեության թափանցիկությունը, և թեթևացվել է առկա վարչարարական բեռը։ Իրականացված գործողությունները նպաստել են Հայաստանում ազատ և մրցակցային գործարար միջավայրի կայացմանը և ամրապնդմանը, որը երկիրն ավելի գրավիչ է դարձրել օտարերկրյա ներդրողների համար։

Գործարար և ներդրումային միջավայրի ճկունությունն ապահովելու նպատակով իրականացվել են կառուցվածքային բարեփոխումներ, որոնք նպատակ են ունեցել ընդլայնելու << քաղաքացիներին հասանելի տնտեսական հնարավորությունների դաշտը և առավելագույնս խրախուսելու հատկապես գիտելիք ձևավորող ներքին և օտարերկրյա մասնավոր ներդրումներ։ Ներդրումային քաղաքականության նպատակներից են եղել ներդրումների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների ապահովումը՝ միջազգային լավագույն պրակտիկաների ձևաչափով՝ կարևորելով ազատ ու հավասար մրցակցությունը, բիզնեսի համար կանխատեսելիությունը և առաջնային դիրքի պահպանման նպատակով դրա շարունակական բարելավումը։

Ներդրումային քաղաքականության առաջնահերթ թիրախը նորարարական, նոր գիտելիք ստեղծող ծրագրերի իրագործման համար առավել արագ և ճկուն գործընթացների, ինչպես նաև մրցունակության գործոնների առավելագույն հասանելիության ապահովումն է։

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում²

2021 թվականին Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնական քայլերն ուղղված են եղել ՀՆԱ-ում ՓՄՁ-ների տեսակարար կշռի աճին և համաշափ տարածքային զարգացմանը։ Ոլորտում իրականացվող քաղաքանությունն ուղղված է եղել։

² ՓՄՁ պետական աջակցության 2021թ. ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացված է հետևյալ հավելվածում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\16.Հավելված N11_ՓՄՁ.doc](#):

- նորարարական նախաձեռնությունների և ծրագրերի խրախուսմանը,
- գործարար կարողությունների և հմտությունների զարգացմանը,
- շուկաների հասանելիության ապահովմանը,
- ձեռնարկությունների աշխատանքի արտադրուղականության խթանմանը,
- ֆինանսների հասանելիության ապահովմանը,
- կանանց ձեռներեցության զարգացմանը և տնտեսական ներուժի հզորացմանը:

2021 թվականին քայլեր են իրականացվել նորարարական գաղափարների իրականացման և վերջինիս միջոցով եկամտի այլընտրանքային աղբյուրների ստեղծման ու հետճանաժամային շրջանում ՀՀ-ում մրցակցային առավելությունների իրացման զարգացման ուղղությամբ՝ իրավական լուծումների և աջակցության նոր մեխանիզմների ներդրման միջոցով:

Ներառական տնտեսական աճի խթանման նպատակով աշխատանքներ են իրականացվել մարդկային կապիտալում ներդրումների (կրթություն)՝ առաջադեմ գիտելիքի, աշխատուժի մասնակցության մակարդակն ու տնտեսության ներկա և ապագա պահանջներին աշխատուժի համապատասխանությունը, առաջատար և զարգացող մասնագիտությունների գծով մրցունակ մասնագետների թվաքանակի աճը բարձրացնելու ուղղությամբ, ինչը թույլ է տվել նվազեցնել գործազրկության մակարդակը և ընձեռել աշխատելու ավելի մեծ հնարավորություններ, նպաստել կրթության մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը, բարձրագույն կրթական հաստատությունների կարողությունների ավելացմանը, հայոց լեզվով հասանելի դարձնել մեծածավալ համաշխարհային առաջադեմ գիտելիք և փորձ, բարելավել հանրային ծառայության և հանրային կառավարման ռուակը, խթանել հայրենադարձությունը, նպաստել ներդրումների ծավալի և տնտեսության արտադրողականության աճը՝ ապահովելով հարաճուն տնտեսական աճի համար անհրաժեշտ նախադրյաներ և տնտեսության մեջ ստեղծելով բազմապատիկ ներգործություն:

Իրականացվել են աշխատանքներ Հայաստանի 2021-2025թթ. թվայնացման ռազմավարության «Շվային տնտեսություն» բաղադրիչի մշակման ուղղությամբ՝ կենտրոնանալով ՓՄՁ հատվածների վրա այն ոլորտներում, որոնք զգալի ներդրում են կատարում ազգային ՀՆԱ-ում:

Իրականացվել են աշխատանքներ ոլորտային ճանապարհային քարտեզի մշակման ուղղությամբ՝ օգնելու ՓՄՁ-ներին այդ ոլորտներում ավտոմատացնելու իրենց գործողությունները (back-office and front-office operations): Նշվածը ներառում է ձեռնարկությունների ռեսուրսների պլանավորման համակարգերի օգտագործումը և ինտեգրումը, տվյալների կառավարումը և բիզնես վերլուծության ու տվյալների հիման վրա որոշումների կայացման հնարավորությունները:

Մշակվել է իրավական լուծումների փաթեթ՝ ուղղված գիտահետազոտական աշխատանքների իրականացման սկզբնական փուլում այդ ոլորտի ընկերություններին աջակցման գործիքակազմի

ներդրմանը, համաձայն որի առաջարկվել է պետության կողմից փոխհատուցել հարկման ընդիանուր համակարգում գործող առևտրային իրավաբանական անձանց՝ << տարածքում իրականացված (այդ թվում՝ պատվիրակված) գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա կատարված ծախսերի 40%-ը:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման բաղարականություն

Մարզեթինգային քաղաքականության իրականացման շրջանակներում ապահովվել է մասնակցությունը միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսներին, տպագրվել են գովազդատեղեկատվական նյութեր, սոցիալական ցանցերում և այլ թվային հարթակներում իրապարակվել են Հայաստանի մասին գովազդատեղեկատվական նյութեր, կազմակերպվել են ճանաչողական այցեր լրատվամիջոցների ներկայացուցիչների համար, հեղինակավոր պարբերականներում իրապարակվել են գովազդատեղեկատվական հոդվածներ:

Համայնքային ռեսուրսների հիման վրա զբոսաշրջային արդյունքի բազմազանեցման շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել << մարզերում փառատոնների անցկացմանը:

Զբոսաշրջային ենթակառուցվածքների և կարողությունների զարգացմանն աջակցության շրջանակներում աջակցություն է տրամադրվել << Կոտայքի մարզի Գառնիի և << Գեղարքունիքի մարզի Սևանի տեղեկատվական կենտրոնների բնականոն գործունեությանը, բացի այդ՝ «Պետական աջակցություն զբոսավարների ուսուցման, վերապատրաստման դասընթացներին» միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել կազմակերպությունների, որոնց կողմից իրականացված երկամսյա վերապատրաստման դասընթացների արդյունքում վերապատրաստվել են 48 զբոսավարներ:

ՀԲ ֆինանսավորմամբ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» (ՏՏԵԶ) ծրագրի շրջանակներում իրականացվել է ենթածրագրերի ուսումնասիրում, բաղադրիչների փորձաքննության արդյունքների ուսումնասիրում:

Միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում Հայկական պատվիրակությունը մասնակցել է << Հունաստանի Աթենք քաղաքում կայացած ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 66-րդ նիստին: Նիստի ընթացքում ընդունվել է նաև որոշում ՄԱԿ ԶՀԿ Եվրոպայի տարածաշրջանային հանձնաժողովի 67-րդ նիստը Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:

Համաձայն ԱՊՀ մասնակից պետությունների զբոսաշրջության խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 10-ի նիստի արձանագրության 9-րդ կետի՝ 2021 թվականի հոկտեմբերին Երևանում կայացել է ԱՊՀ մասնակից պետությունների զբոսաշրջության խորհրդի հերթական նիստը: ԱՊՀ

մասնակից պետությունների գրոսաշրջության խորհրդի ղեկավարումը 2020 թվականին փոխանցվել էր Հայաստանին:

Ուկրաինայի գրոսաշրջության զարգացման պետական գործակալության հետ համագործակցությամբ Ուկրաինայում (Կիև) իրականացվել է «Բացահայտիր Հայաստանը» խորագրով գովազդային արշավ: Միջոցառման շրջանակներում իրականացվեցին Հայաստանի և Ուկրաինայի գրոսաշրջության ոլորտի շնորհանդեսներ:

Ապահովվել է հսպանիայում (Մադրիդ) 2021 թվականի նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 3-ը կայացած ՄԱԿ ԶՀԿ Գլխավոր ասամբլեայի նիստին Հայաստանի մասնակցությունը: Գլխավոր ասամբլեայի շրջանակներում կայացել են ՄԱԿ ԶՀԿ գործադիր խորհրդի նիստեր, տարբեր ձևաչափերի քննարկումներ, պլենար նիստեր, թեմատիկ քննարկումներ:

«Հեկոնոմիկայի նախարարության գրոսաշրջության կոմիտեի և Բելառուսի Հանրապետության սպորտի և զոսաշրջության նախարարության հետ համագործակցությամբ 2021 թվականի նոյեմբերի 21-26-ը իրականացվել է ՀՀ արտագնա տուրիստական օպերատորների ճանաչողական այց Բելառուս: Այցի նպատակն էր հայկական շուկայում Բելառուսի՝ որպես գրոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի ներկայացումը և Բելառուսի գրոսաշրջային ներուժի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը:

Գյուղատնտեսություն

Ագրոպարենային համակարգի զարգացման քաղաքականության մեջ որպես հիմնական գերակայություններ են դրված եղել գյուղատնտեսության ռեսուրսային ներուժի արդյունավետ օգտագործումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, առաջադիմական տեխնոլոգիաների ներդրումը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, բնակլիմայական ռիսկերի մեղմումն ու տնտեսավարողների եկամուտների ավելացումը:

ՀՀ ագրարային հատկածում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակառության է եղել գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների՝ գյուղացիական տնտեսությունների, կոռապերատիվների, գյուղատնտեսական մթերքներ վերամշակողների, սպասարկող ենթակառուցվածքների եկամուտների ավելացմանը և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Ագրոպարենային ոլորտի բարեկիոխումներն ուղղվել են պետական աջակցության ծրագրերի իրականացմանը, հողային ռեսուրսների նպատակային օգտագործման վիճակի բարելավմանն ու հողատեսքերի խոշորացմանը, գյուղատնտեսության տնտեսավարման ձևերի զարգացմանը՝

հատկապես կոռապերացիայի խթանմանը, ոլորտում գործունեության նպաստավոր պայմանների ստեղծմամբ մրցունակության բարձրացմանը, մատչելի մեխանիզմների կիրառմամբ ագրոպարենային ոլորտի տեխնիկական հագեցվածության վիճակի բարելավմանը, գյուղատնտեսական մթերքների իրացման պայմանների բարելավմանը, գյուղատնտեսությունում ամբողջական ապահովագրական համակարգի ներդրման համար նախադրյաների ստեղծմանը և ագրարային արտադրական ու սպասարկման գործընթացներում արդիական մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությանը:

Նշված քաղաքականության իրականացման նպատակով 2021 թվականին պետական բյուջեով նախատեսված ծախսերն առաջնահերթ նպատակառուղյակել են հետևյալ ծրագրերի իրականացմանը.

- գյուղատնտեսության ոլորտում տնտեսավարողներին և գյուղատնտեսական մթերքներ վերամշակող սուբյեկտներին վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման և փոխհատուցման մեխանիզմների կիրառում,
- մատչելի մեխանիզմներով՝ ֆինանսական վարձակալությամբ, լիգինգով գյուղատնտեսական և ագրոպարենային ոլորտի տեխնիկական միջոցների մատակարարում,
- ժամանակակից տեխնոլոգիայով՝ մշակվող ինտենսիվ այգեգործության, բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման, ռոռոգման արդիական տեխնոլոգիաների, ջրավազանների, կարկտապաշտպան ցանցերի ներդրման միջոցառումներ,
- փոխհատուցման մեխանիզմների կիրառմամբ ջերմատնային տնտեսությունների, «խելացի» անասնաշենքերի ներդրում,
- խաղողագործության և գինեգործության զարգացման միջոցառումներ,
- հողերի ագրոքիմիական հետազոտություններ և բերրիության բարձրացում,
- անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում,
- անասնապահության ոլորտում առաջադիմական տեխնոլոգիաների ներդրում,
- գյուղատնտեսությունում ապահովագրական փորձնական ծրագրի իրականացում,
- տեղեկատվական և խորհրդատվական ոլորտի ամրապնդում և զարգացում,
- սերմերի որակի ստուգում և պետական սորտավորձարկում,
- բույսերի պաշտպանության միջոցառումներ,
- գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ հակահամաճարակային միջոցառումներ,
- տնտեսավարողներին գարնանացան և աշնանացան որոշ մշակաբույսերի սերմերի ձեռքբերման մատչելիության ապահովում,

- բնական կերիանդակների նպատակային և համակարգված օգտագործում:

2021 թվականին շարունակվել են իրականացվել գյուղատնտեսության ոլորտի պետական օժանադրության ծրագրերը, որոնց արդյունավետության բարձրացման նպատակով պարբերաբար կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ, մասնավորապես << կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 175-Լ որոշմամբ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ֆինանսական կառուցների կողմից << դրամով տրամադրվող վարկերի կամ լիզինգի փաստացի տոկոսադրույթը չի գերազանցել 14%-ը, և սուբսիդավորումն իրականացվել է այնպիսի չափաքանակով, որ վարկերը կամ լիզինգը տնտեսավարողներին հասանելի են եղել 0% տոկոսադրույթով: 2021 թվականի մարտի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ և 2020 թվականի մարտի 31-ի N 416-Լ որոշումներում փոփոխություն և լրացում կատարելու մասին» << կառավարության N 417-Լ որոշումը, համաձայն որի Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում մինչև 2021 թվականի հոկտեմբերի 1-ը շարունակվել է ֆիզիկական անձանց 0% տոկոսադրույթով, մինչև 1 մլն դրամ վարկերի տրամադրման գործընթացը:

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով 2021 թվականին կատարված լրացումներով ծրագրի ընդգրկման շրջանակն ավելացվել է շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներով, սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ծեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև տրամադրվող սարքավորումների օգտագործման ոլորտներով:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի գծով տնտեսավարողների մոտ ապահովման միջոցի ոչ բավարար մակարդակի դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը տրամադրվել է մինչև 50%-ի չափով բյուջետային երաշխիք, բայց ոչ ավելի, քան 2020 թվականին արտահանված արտադրանքի արժեքը:

Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, ոռոգման առաջադիմական տեխնոլոգիաների ներդրման, ոռոգման ջրի արդյունավետ օգտագործման, ինչպես նաև բարձրարժեք մշակաբույսերի մշակության խթանման նպատակով Կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատվել է <<-ում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագիրը, որում միավորվել են Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով

մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման և Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման ծրագրերը՝ հաշվի առնելով, որ կարկտապաշտպան ցանցերը և ոռոգման կաթիլային համակարգերը, որպես կանոն, ներդրվում են այգեգործության բնագավառում (գործող ծրագրերի շրջանակում կարկտապաշտպան ցանցերն ամբողջությամբ, իսկ ոռոգման արդիական համակարգերի շուրջ 90%-ը ներդրվել են այգիներում): Նախագծում ներառվել է նաև ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման և ջրավազանների կառուցման համար անհրաժեշտ մատչելի ֆինանսական ռեսուրսների ձեռքբերման հնարավորությունը, ինչպես նաև ճշգրտվել են գործող ծրագրերում 1 հա-ի վրա կատարվող ծախսերը, սահմանվել են նախագծի շրջանակում թույլատրելի տարածքների նվազագույն և առավելագույն սահմանաչափերը, հստակեցվել է անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և բովանդակությունը:

2021 թվականին շարունակվել է գյուղատնտեսության ապահովագրության պետական աջակցության ծրագրը, որի շրջանակում 2021 գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվող մշակաբույսերի ցանկը և ծրագիրն ընդգրկող մարզերի շրջանակն ընդլայնվել է՝ ներառելով կարտոֆիլ, սալոր, ձմերուկ/սեխ մշակաբույսերը:

Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի, աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով ռազմական և արտակարգ դրության հետևանքների՝ մասնավորապես օգտագործվող արոտավայրերի կրճատման արդյունքում անասնակերի ապահովման խնդիրների մեջման, պարենամթերքի ինքնաբավորթյան մակարդակի բարձրացման և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացման նպատակով իրականացվել են աշնանացան ցորենի և գարնանացան հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային որոշ մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրեր:

Հանրային ներդրումներ

Կորոնավիրուսի համավարակի հետևանքները մեղմելու նպատակով հատկապես կարևորվել է հանրային կապիտալ ներդրումների արդյունավետության բարձրացումն ու կատարողականի աճը՝ միտված հանրային ներդրումային միջոցների առավել արդյունավետ և նպատակային օգտագործմանը: Վերջինիս նպատակն է ապահովել հանրային ներդրումային ծրագրերի համապատասխանությունը ՀՀ կառավարության գերակայություններին և ռազմավարական

առաջնահերթություններին, ինչն իր հերթին նպաստում է ծրագրերի իրականացման արդյունավետության աճին: Հանրային սահմանափակ միջոցների արդյունավետ օգտագործման հիմնախնդրին համակարգային հանգուցալուծում տալու նպատակով վարվող քաղաքականության հիմքում դրվել են ներդրումային առաջնահերթությունների որոշման համակարգը և ինստիտուցիոնալ կարողությունների շարունակական զարգացումը:

Պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) տեսակետից կարևորվել է մասնավոր հատվածի մարդկային, ֆինանսական ռեսուրսների, մասնագիտական փորձի և հնարավորությունների ներգրավումը հանրային բարիքի ստեղծման գործընթացում:

Նախաձեռնվել են կանաչ և կայուն տնտեսական զարգացման ռազմավարության մշակման աշխատանքներ: Ռազմավարությամբ հստակ արտացոլված կլինեն կանաչ և կայուն տնտեսության զարգացման ուղղությունները և նախատեսվող գործողությունների շրջանակը, ինչպես նաև կանաչ տնտեսության խթանման և կայուն զարգացման երկարաժամկետ նպատակների իրագործման մեխանիզմները:

Արտաքին տնտեսական քաղաքականություն

2021 թվականի մարտի 24-ից 25-ը Երևանում առցանց ձևաչափով տեղի է ունեցել ՀՀ-ԵՄ Առևտուրի հարցերով գործընկերության կոմիտեի երրորդ նիստը: Նիստի ընթացքում կողմերը քննարկել են ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳ) Առևտուր և առևտուրին առնչվող հարցերի (Մաս VI) ներքո համագործակցության շրջանակներում իրականացվող միջոցառումները և համապատասխան 12 ճանապարհային քարտեզները հետևյալ ոլորտներում՝ ապրանքների առևտուր, մաքսային ոլորտ, առևտուրի տեխնիկական խոչընդոտներ, սանիտարական և բուսասանիտարական միջոցառումներ, ծառայությունների առևտուր, հիմնադրում և էլեկտրոնային առևտուր, ընթացիկ վճարումներ և կապիտալի տեղաշարժ, մտավոր սեփականություն, պետական գնումներ, առևտուր և կայուն զարգացում, մրցակցություն, պետական ձեռնարկություններ, թափանցիկություն: Ներկայացվել և քննարկվել են նաև առևտուրի և ներդրումների ոլորտում առկա զարգացումներին, «GSP+» արտոնյալ առևտուրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող դիտանցմանը, ՀՀ-ԵՄ ՀԸԳ Հոդված 237-ով ամրագրված՝ «Կոնյակ» աշխարհագրական նշման վերաբերյալ դրույթների իրականացման գործընթացին առնչվող, ինչպես նաև ՀՀ-ԵՄ առևտուրատնտեսական համագործակցությանն ուղղված այլ հարցեր: Նիստի ավարտին հաստատվել է «Գործառնական եզրակացություններ» փաստաթուղթը, որտեղ ամրագրվել են ՀՀ-ԵՄ ՀԸԳ Մաս VI-ի ներքո երկողմ

պայմանավորվածություններ և պարտավորություններ՝ դրանց իրականացման համար համապատասխան ժամկետներ, որոնց իրականացումն էլ ապահովվել է հետագայում:

2021 թվականի մարտի 24-ին Երևանում առցանց ձևաչափով տեղի է ունեցել ՀՀԳՀ ներքո գործող Աշխարհագրական նշումների ենթակոմիտեի երկրորդ նիստը (ենթակոմիտեի համանախագահը << Էկոնոմիկայի նախարարի տեղական է): Նիստի ընթացքում կողմերը քննարկել են <<-ԵՄ ՀՀԳՀ-ով ամրագրված «Շամպայն» և «Կոնյակ» աշխարհագրական նշումների վերաբերյալ դրույթների իրականացման ուղղությամբ աշխատանքների ներկա վիճակը, աշխարհագրական նշումների վերաբերյալ օրենսդրական զարգացումները, աշխարհագրական նշումների ցանկերի փոփոխությունները և այլ հարցեր, ծեռք են բերվել համապատասխան պայմանավորվածություններ:

Դիտանցվել և վերանայվել են <<-ԵՄ ՀՀԳՀ Մաս VI-ի («Առևտուր և առևտրին առնչվող հարցեր») ներքո 12 ճանապարհային քարտեզները՝ ապահովելով համագործակցությունն այդ քարտեզների իրականացման գործընթացում ներգրավված գրեթե բոլոր << պետական կառավարման մարմինների և գերատեսչությունների հետ:

«GSP+» առևտրային ռեժիմի շրջանակներում ԵՄ կողմից իրականացվող 2020-2021թթ. դիտանցման փուլի շրջանակներում պատրաստվել, ամփոփվել և 2021թ. սեպտեմբերի 15-ին եվրոպական կողմին է տրամադրվել << հերթական գեկուցը՝ «GSP+» ռեժիմի տրամադրման նախապայման հանդիսացող մարդու իրավունքներին, աշխատանքային իրավունքներին, բնապահպանությանը և արդյունավետ կառավարմանն առնչվող 27 միջազգային կոնվենցիաների արդյունավետ իրականացումը գնահատելու նպատակով:

«GSP+» առևտրային ռեժիմի շրջանակներում «Գրանցված արտահանողների համակարգի» (REX) համակարգում կատարվել է 286 ընկերությունների գրանցում (արտադրատեսակներ՝ պղնձի հանքանյութ և խտանյութ, երկաթե համաձուլվածք, մոլիբդենի հանքանյութ և խտանյութ, քիմիական նյութեր և միացություններ, պահածոներ, ալկոհոլային խմիչքներ, տեքստիլ արտադրանք, թանկարժեք քարեր և զարդեր, բնական և գազավորված ջրեր, մեղր, պահածոներ, չորացրած մրգեր և բանջարեղեն, թեյեր, համեմունքներ և այլն):

«GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմի ընդհանուր կարգավորումները սահմանող ԵՄ 978/2012 կանոնակարգի համաձայն՝ երկիրը դուրս է գալիս ռեժիմի շահառուների ցանկից, եթե <Բ կողմից դասակարգվել է որպես բարձր եկամուտ կամ միջինից բարձր եկամուտ ունեցող տնտեսություն 3 հաջորդական տարի անընդմեջ: Միևնույն ժամանակ, երկրին տրվում է 1 տարի անցումային ժամանակահատված, որի ընթացքում երկիրն օգտվելու է «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմից: 2017թ., 2018թ. և 2019թ. Հայաստանը <Բ կողմից դասակարգվել է միջինից բարձր եկամուտ ունեցող

տնտեսություն ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ուստի 2022թ. հունվարի 1-ից Հայաստանը չի հանդիսանում ԵՄ «GSP+» արտոնյալ առևտրային համակարգի շահառու երկիր:

ԵՄ Արևելյան Գործընկերության «Վերականգնում, դիմակայունություն և բարեփոխում Արևելյան գործընկերության առաջնահերթությունները 2020-ից հետո» փաստաթղթի շրջանակներում ԵՄ-ից ակնկալվող 2.6 մլրդ եվրոյի չափով օժանդակության՝ ուղենիշ 1-ի (աջակցություն կայուն, նորարար և մրցակցային տնտեսությանը ուղղակի աջակցություն 30000 ՓՄՁ-ների) շրջանակներում մշակվել է ծրագրերի ներկայացման ընդհանուր ձևաչափ, համապատասխանեցվել և վերջնականացվել են ՀՀ Էկոնոմիկայի նախարարության, ինչպես նաև շահառու մարմինների ոլորտային ծրագրերը:

Ուղենիշ 1-ի շրջանակներում մշակված և ամբողջացված ծրագրերը ներկայացվել են ՀՀ փոխվարչապետի գրասենյակ, և քննարկվել են ուղենիշ 1-ի շրջանակներում առաջնահերթ ծրագրերն ու ուղղությունները:

Եվրոպական կողմի հետ ծրագրերը քննարկելու և համաձայնեցնելու նպատակով ՀՀ կառավարության հետ համատեղ ձևավորվել են աշխատանքային խմբեր՝ հայկական և Եվրոպական կողմի պատասխանատունների ներգրավմամբ:

Առևտրային քաղաքականության թափանցիկության և կանխատեսելիության ապահովման նպատակով 2021 թվականի ընթացքում ԱՀԿ քարտուղարություն են ներկայացվել ՀՀ առևտրային քաղաքականությանն ու կիրառվող միջոցներին առնչվող՝ ԱՀԿ համաձայնագրերով սահմանված մոտ 30 ծանուցումներ, որոնց նախագծերը նախապատրաստվել և համաձայնեցվել են ՀՀ համապատասխան շահագրգիռ մարմինների, իսկ մի մասը նաև ԵՏՀ համապատասխան ստորաբաժանումների հետ:

ԱՀԿ ընթացակարգերին համապատասխան շարունակվել է ԵԱՏՄ անդամակցությամբ պայմանավորված՝ ԱՀԿ-ում ՀՀ մաքսատուրքերի սահմանային ամրագրված դրույքաչափերի պարտավորությունների փոփոխության բանակցային գործնթացը՝ այդ նպատակով ԵԱՏՄ շրջանակներում ձևավորված բանակցային խմբի շրջանակներում: Բանակցությունների հիմնական գործնթացներն ընթացել են ԵՄ-ի հետ, և արդյունաբերական ապրանքների մասով Եվրոպական կողմի հետ արդեն իսկ ձեռք է բերվել փոխհամաձայնություն: Գյուղատնտեսական ապրանքների մասով բանակցությունների շրջանակներում ընթացիկ ժամանակահատվածում Եվրոպական կողմի հետ երկողմ ձևաչափով կայացել են երկու քննարկումներ՝ փոխհատուցումային առաջարկների հստակեցման նպատակով:

Միևնույն ժամանակ, տեսակոնֆերանսի ձևաչափով կազմակերպվել և անց են կացվել ԵԱՏՄ շրջանակներում գործող բանակցային խմբի երեք նիստեր, ինչպես նաև դրդղական կողմի հետ

առանձին նիստ՝ փոխհատուցումային առաջարկությունները քննարկելու և համաձայնեցնելու նպատակով:

ՀՀ կողմից իրականացված աշխատանքների շնորհիվ ԱՀԿ քարտուղարության Ապրանքների առևտրի խորհրդի 2021 թվականի նոյեմբերի 1-ի նիստի որոշմամբ վերոնշյալ բանակցությունների ավարտի վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2023 թվականի հունվար:

ՀՀ-ն ակտիվորեն մասնակցել է ԱՀԿ շրջանակներում ընթացող բազմակողմ գործընթացներին, մասնավորապես՝ ԱՀԿ գլխավոր տնօրենի և ԱՀԿ Պետական գնումների կոմիտեի նախագահի ընտրություններին, ինչպես նաև ԱՀԿ քարտուղարությունում գործող մի քանի ոլորտային կոմիտեների նիստերին և այլ քննարկումներին:

Ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել ԵԱՏՄ շրջանակներում ստեղծված ԱՀԿ հարցերով աշխատանքային խմբի երկու նիստերին: Մասնակցություն է ապահովվել ԵՏՀ շրջանակներում կազմակերպված և ԱՀԿ առնչվող հարցերով 25-ից ավել տեսակոնֆերանսներին:

ԱՀԿ շրջանակներում ստանձնած ՀՀ պարտավորություններին համապատասխանեցնելու նպատակով՝ փորձաքննության են ենթարկվել մի շարք միջազգային և ներպետական փաստաթղթերի և օրենսդրական փաթեթների նախագծեր:

Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում

Տարածքային կառավարման բնագավառ

2021 թվականին «Տարածքային կառավարման մասին» օրենքում կատարված փոփոխություններին համապատասխան լրամշակվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության և «Մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» վարչապետի որոշումների նախագծերը:

Հաշվետու տարում մշակվել են նաև «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ և ոլորտը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում փոփոխությունների և լրացումների նախագծեր, իրականացվել է համայնքային ծառայողների վերապատրաստման համակարգի արդիականացում:

Համայնքային ծառայության համակարգի ինստիտուցիոնալ բարեփոխումների շրջանակներում 2021 թվականին առաջին անգամ հեռավար եղանակով իրականացվել է տարածքային կառավարման մարմինների թվով 75 աշխատակիցների հեռավար եղանակով վերապատրաստում: Վերապատրաստումն իրականացնող կազմակերպության հետ ակտիվ աշխատանքներ են տարվել

Վերապատրաստման ծրագրի շրջանակներում մատուցվող թեմաների մշակման, դրանց մատուցման եղանակների, ներկայացվող պրեզենտացիաների բովանդակության ուղղությամբ:

Համայնքային ծառայության ոլորտը կարգավորող իրավական ակտերի մշակման շրջանակներում մշակվել և ՀՀ մարզերի համայնքներին է տրամադրվել «Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման, կառուցվածքի հաստատման, պաշտոնային դրույքաչափերի համամասնության սահմանման» մեթոդական ուղեցույցը:

Ապահովվել է սահմանամերձ համայնքներում իրականացվող սոցիալական ու տնտեսական աջակցության ծրագրերի շարունակականությունը: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից սահմանամերձ համայնքներին հատկացվել է 927.4 մլն դրամ գումար՝ սահմանամերձ 23 համայնքների 81 բնկավայրերում գազի, էլեկտրաէներգիայի և ռոռոգման ջրի սակագնի մասնակի փոխհատուցման և անշարժ գույքի հարկի ամբողջական փոխհատուցման համար:

Տեղական ինքնակառավարման բնագավառ

Վարչատարածքային բարեփոխումների շարունակականության ապահովում

2021 թվականի սեպտեմբերի 24-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքները, որոնց համաձայն թվով 441 համայնքների ներառմամբ ծնավորվեցին թվով 38 համայնքային փնջեր:

Միավորված համայնքներին ՏԻՄ բարեփոխումների աջակցման ծրագրերի շրջանակներում ընդհանուր 47 միավորված համայնքի տրամադրվել է 430 միավոր տեխնիկա և 3,225 աղքի կոնտեյներ, որոնց ընդհանուր արժեքը կազմում է մոտ 15.75 մլն ԱՄՆ դոլար:

Քաղաքացիների սպասարկման գրասենյակներ (ՔՍԳ) են հիմնվել թվով 10 միավորված բազմաբնակավայր համայնքներում: Ներկայումս ՔՍԳ-ներ են գործում հանրապետության 57 միավորված համայնքների 68 բնակավայրերում:

Ամբողջությամբ ներդրվել է անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման և հավաքագրման միասնական էլեկտրոնային համակարգը, որը համայնքների ՏԻՄ-երին հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնելու տեղական հարկերին առնչվող իրենց գործառույթները, իսկ հարկատուների համար մշակված վճարման էլեկտրոնային համակարգի միջոցով ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են իրենց հարկային պարտավորությունները կատարել առցանց եղանակով՝ առանց համայնքապետարան կամ բանկ այցելելու:

Մշակվել և շրջանառվել են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» «Համայնքներում Միջնաժամկետ ծախսերի ծրագրերի (ՄԺԾԾ) ներդրման համար: Փոփոխություն է կատարվել նաև «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքում:

Տարածքային (կապիտալ) ծրագրերի աջակցության և կոշտ թափոնների կառավարման ընազական

«Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբյենցիայի տրամադրման գործընթացի շրջանակներում 2021 թվականի ընթացքում կարգավորվել են «Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբյենցիայի տրամադրման գործընթացի մեխանիզմները: 2021 թվականին ուսումնասիրվել են «Համայնքներից ներկայացված 809 սուբյենցիոն նախնական հայտ և տեխնիկական առաջադրանք: «Վարչապետի որոշմամբ ստեղծված սուբյենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջզերատեսչական հանձնաժողովի 7 նիստում քննարկման արդյունքներով հավանության է արժանացել թվով 678 սուբյենցիայի ծրագիր՝ 48.42 մլրդ դրամ ընդհանուր նախնական արժեքով, որից «Համաֆինանսավորման նախնական գումարը կազմել է շուրջ 23.25 մլրդ դրամ: Վերոհիշյալ ծրագրերից շուրջ 620 ծրագրի գծով «Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են աշխատանքների իրականացման մրցութային գործընթացները և սկսվել շինարարական աշխատանքներն ու գույքի և տեխնիկայի ձեռքբերման գործընթացները: Հարկ է նշել, որ 2020 թվականին սկսված, սակայն համավարակի և ռազմական դրության, ինչպես նաև եղանակային պատճառներով չավարտված մի շարք սուբյենցիոն ծրագրեր իրականացվել են 2021 թվականին: Արդյունքում «Համաֆինանսավորման նախնական գումարը կազմում է շուրջ 2020 և 2021 թվականների թվով 605 սուբյենցիայի ծրագրերը համաֆինանսավորվել են «Համաֆինանսավորման նախնական գումարը կազմում է շուրջ 2020 և 2021 թվականների թվով 13 համապատասխան որոշումներով 2020 և 2021 թվականների թվով 13.68 մլրդ դրամի չափով: 2021 թվականին սկսված, սակայն համավարակի և հետպատերազմյան, ինչպես նաև եղանակային պատճառներով չավարտված սուբյենցիոն ծրագրերի պայմանագրերի ժամկետները երկարաձգվել են մինչև 2022 թվականի հոկտեմբերի 1-ը:

Կոչու կենցաղային թափոնների կառավարման և աղբահանության գործընթաց: Մշակվել է «Աղբահանության համակարգի ռազմավարությունը և ռազմավարության կիրարկումն ապահովող միջոցառումների ծրագիրը», որը հաստատվել է ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի թիվ 464-Լ որոշմամբ: Մշակվել է նաև «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

2021 թվականին մշակվել են «Աղբահանության և կոշտ թափոնների տեղական կառավարման պլանի կազմման մեթոդաբանությունը» և «Աղբի բաղադրության ուսումնասիրության մեթոդաբանությունը», որոնք ներկայացվել են ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին:

Մշակվել ու ստեղծվել է ԱՏՄ-ի (աշխարհագրական տեղեկատվական համակարգի) վրա հիմնված աղբահանության և կոշտ թափոնների կառավարման մոդելավորման ծրագրային գործիքը:

Մշակվել են «Հանրապետությունում գործող աղբավայրերի բարեկարգման, շահագործման և փակման նվազագույն նորմերն ու պահանջները:

ՎՃԵԲ-ի աջակցությամբ իրականացվող «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրի» շրջանակներում իրականացվել են Հրազդան համայնքում կառուցվող նոր սանիտարական աղբավայրի և Ակունք ու Մարտունի համայնքներում վերաբեռնման կայանների կառուցապատման աշխատանքները, որոնք նախատեսվում է ավարտել 2022 թվականի աշնանը: Միաժամանակ, երկու մարզերի բոլոր բնակավայրերում ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության ինտեգրված համակարգի ներդրման նպատակով միջազգային մրցույթի արդյունքում ընտրված շվեդական «ՍՎԵԿՈ» ընկերության հետ իրականացվել են աղբահանության սխեմաների մշակման աշխատանքներ, հավաքագրվել է անրաժեշտ տեղեկատվությունը, որոնց հիման վրա նախատեսվում է հստակեցնել և ձեռք բերել անհրաժեշտ գույքը, սարքավորումներն ու մեքենամեխանիզմացիան:

Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարեկարգման» ծրագիր: Մշակվել և ՀՀ կառավարության 06.05.2021թ. թիվ 723-Ն որոշմամբ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 797-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումը, որով հաստատված դպրոցների ցանկում ընգրկված թվով 4 դպրոցներ փոխարինվել են ավելի վատթար վիճակում գտնվող դպրոցներով:

Ծրագրի շրջանակներում 2021 թվականին ավարտվել են ևս 2 դպրոցների շինարարական աշխատանքները, որոնք հանձնվել են շահագործման (Երևանի թիվ 51 հիմնական դպրոց և Նոր Խարբերդի թիվ 2 միջնակարգ դպրոց): Շինարարություն է իրականացվել թվով 14 դպրոցում, 3 դպրոցների կառուցապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով ընտրվել են

կապալառու կազմակերպությունները, 2 դպրոցների կառուցապատման աշխատանքներ իրականացնող կապալառու ընկերության ընտրության համար հայտարարվել է մրցույթ, 3 դպրոցների նախագծային աշխատանքներն ավարտվել են, 5 դպրոցներ գտնվում են նախագծման տարբեր փուլերում:

«Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագիր: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի շրջանակներում 2021 թվականին իրականացվել են երկրորդ փուլում ընդգրկված երկու չափաբաժիններով 9-12 մետր լայնությամբ շուրջ 11 կմ երկարությամբ 15 փողոցների ու հարակից մայթերի հիմնանորոգման շինարարական աշխատանքները, ինչպես նաև 3-րդ չափաբաժնով 5.5 կմ երկարությամբ 7 փողոցների և կայարանամերձ հրապարակի հիմնանորոգման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են ճանապարհների ամբողջական վերակառուցմամբ՝ ասֆալտի և մայթեզրերի նորոգմամբ, ջրահեռացման (դրենաժային) ենթակառուցվածքների արդիականացմամբ, հետիւտնային նոր տարածքների կառուցմամբ, ինչպես նաև հրապարակների հիմնանորոգման մայթերի սալիկապատմամբ, ջրահեռացման համակարգերի և գետնանցումների կառուցմամբ: Նախատեսվում է, որ աշխատանքներն ավարտին կհասցվեն 2022 թվականին: Ընդհանուր առմամբ ծրագրով նախատեսվում է հիմնանորոգված, կահավորված և արդիականացված էներգախնայող լուսավորությամբ 26 կմ երկարությամբ քաղաքային փողոց և 3 հրապարակ:

Միգրացիա

«Հառավարությունը 2021 թվականի ապրիլին հավանություն տվեց միգրացիայի կառավարման համակարգում ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելուն ուղղված օրենսդրական նախաձեռնությանը, որն ուղարկվել է Ազգային ժողով: Սրանով նախատեսվում է Ներքին գործերի նախարարության կազմում Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ձևավորում:

2021 թվականին «Հառավարությունը նախաձեռնել է օտարերկրյա քաղաքացիներին ՀՀ-ում աշխատանքի թույլտվության և կացության տրամադրման համակարգի թվայնացում և պարզեցում՝ օտարերկրյա աշխատողների գրանցման միասնական Էլեկտրոնային հարթակի գործարկման ճանապարհով: Հարթակը հնարավորություն է տալիս միաժամանակյա հասանելիություն ապահովել աշխատանքի թույլտվության գործընթացում ներառված բոլոր պետական մարմինների համար՝ կրճատելով գործընթացի վրա ծախսվող ժամանակը և բարելավելով վարչարարությունը:

Մարտին մեկնարկել է ԵՄ կողմից ֆինանսավորվող և Միգրացիոն քաղաքականության միջազգային կենտրոնի կողմից իրականացվող «ԵՄ-ն հանուն միգրանտների ներուժի հզորացման՝ ի նպաստ Հայաստանի զարգացման» (EU4IMPACT ARMENIA) ծրագիրը։ Ստացվել է 126 հայտադիմում։ Ընտրված 25-30 մասնակիցները կդառնան ծրագրի շահառու և ծրագրի կողմից հատկացվելիք 2.000-10.000 եվրո չափի դրամաշնորհի (և նոյն չափի սեփական ներդրման) օգնությամբ հնարավորություն կստանան իիմնել կամ ընդլայնել սեփական գործը։

2021 թվականին ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով Միգրացիոն ծառայություն են դիմել 255 անձ։ Փախստական են ճանաչվել 85 օտարերկրացիներ, մերժվել՝ 63-ը։

Մեկնարկել է 1988-1992 թվականներին Ադրբեյջանից բռնի տեղահանված ընտանիքների բնակապահովման ծրագրի 3-րդ փուլը Շենգավիթում։ Տրամադրվել է 44 մեկ, 22 երկու, 8 երեք, 2 չորս սենյականց բնակարանի գնման վկայագիր։ 2021 թվականին 116 շահառուներ գնել են բնակարաններ։

ՀՀ-ում փախստական ճանաչված 19 ընտանիքների տրամադրվել է փոխհատուցում բնակարան վարձակալելու նպատակով՝ 60 000 դրամի չափով, 9 ամիս տևողությամբ։

Հայաստան վերադարձած քաղաքացիների վերաինտեգրմանն ուղղված առաջնային աջակցության պետական ծրագրի շրջանակներում բավարարվել են Գերմանիայից, ՌԴ-ից, Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Ավստրիայից, Շվեյցարիայից վերադարձած 21 ՀՀ քաղաքացիների դիմումները։ Նրանց տրամադրվել է բնակվարձի փոխհատուցում՝ 6 ամիս ժամկետով, ամսական 60 հազար դրամի չափով։

ԵՄ և ՌԴ հետ կնքված ոեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում 2021 թվականի ընթացքում ստացվել են 785 ոեադմիսիոն հայցեր՝ 1354 անձանց մասին։ Ստացված հայցերի թվով առաջատար երկիրը Գերմանիան է՝ 503 հայց 916 անձանց մասին, որից հաստատվել է 674 անձի քաղաքացիությունը (83.42%)։ Վերադարձի և վերաինտեգրման եվրոպական ցանցի (ERRIN) աջակցությամբ «Զվարթնոց» օդանավակայանում 2021 թվականի դեկտեմբերի 1-ից գործում է տեղեկատվական կետ՝ Հայաստան վերադարձող ՀՀ քաղաքացիներին աջակցության տրամադրման հնարավորությունների մասին իրազեկելու նպատակով։

Էներգետիկա և բնական պաշարների կառավարում

Էներգետիկայի բնագավառ

2021 թվականին Կառավարության քաղաքականությունն ուղղված է եղել երկրի էներգետիկ անկախության և անվտանգության մակարդակի բարձրացմանը, սպառողներին էլեկտրաէներգիայի և գազի հուսալի ու որակյալ մատակարարման ապահովմանը։

ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի № 48-Լ որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրին (մինչև 2040 թվականը) և Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցին:

2021 թվականին շահագործման է հանձնվել «Արմփառեր» 254 ՄՎտ հզորությամբ գազային վառելիքով համակցված ցիկլով էլեկտրակայանը: Ծրագրի իրականացման համար ներդրվել է ավելի քան 250 մլն դոլար: Շինարարության ընթացքում ներգրավվել է շուրջ 1000-1200 մարդ, իսկ կայանի շահագործմամբ ստեղծվել է 50 բարձր վարձատրությամբ աշխատատեղ: Նոր կայանը շուրջ 4 տոկոսով ավելի բարձր ՕԳԳ ունի, որը նշանակում է, որ 1 կՎտժ էլեկտրաէներգիա արտադրելու համար ծախսում է ավելի քիչ վառելիք, և էլեկտրաէներգիան ստացվում է ավելի էժան:

2021 թվականին շարունակվել են Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում ԱԷԿ-ի արդիականացման աշխատանքները:

Հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի շրջանակներում արդիականացվել է ռեակտորի ակտիվ գոտու վթարային սառեցման համակարգը, վերանորոգվել է միջուկային վառելիքի պահման ավագանը, իրականացվել են նաև նորոգման այլ աշխատանքներ, ռեակտորի իրանի վերականգնողական թրծաթռողման աշխատանքներ, որոնց շնորհիվ 1995թ.-ից ի վեր առաջին անգամ թույլատրվել է 92% ջերմային հզորության փոխարեն 98% ջերմային հզորություն, և կայանի ժամային արտադրությունն ավելացել է մոտ 40 ՄՎտ-ով:

2021 թվականին Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագրի շրջանակներում ավարտվել են «Աշնակ» 220 կՎ լարման ենթակայանի վերակառուցման աշխատանքները, և ենթակայանը սահմանված կարգով ամբողջությամբ դրվել է լարման տակ: Ներդրվել է շուրջ 9.8 մլն ԱՄՆ դոլար:

Շարունակվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի սեփական միջոցներով «Լիճ» 220/110/35 կՎ ենթակայանի վերակառուցման աշխատանքները՝ իրականացվել են ծրագրի 1-ին փուլով նախատեսված շինմոնտաժային աշխատանքները, տեղադրվել է 125 ՄՎ ավտոտրանսֆորմատոր, և ենթակայանի մի մասը դրվել է լարման տակ:

Շարունակվել են Իրան-Հայաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի և համապատասխան ենթակայանի կառուցման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում էլեկտրահաղորդման օդային գծի բոլոր հատվածներում բետոնացվել է 640 հենարանի հիմք, և մոնտաժվել 481 հենարան: «Նորավան» ենթակայանի բարձր լարման սարքավորումներն ամբողջությամբ ներմուծվել են,

ընթացքում է գտնվում ցածր լարման, հեռահաղորդակցության և պաշտպանության համակարգերի արտադրությունը: Ենթակայանում ավարտման փուլում են բարձր լարման սարքավորումների հիմքերի, 400 կՎ ԲԲՍ և 220 կՎ ԲԲՍ հատվածների մալուխային խրամուղիների բետոնացման, ինչպես նաև շենք-շինությունների կոնստրուկցիաների մոնտաժման աշխատանքները:

Հայաստան-Վրաստան 400 կՎ էլեկտրահաղորդման գծի, ենթակայանի և փոխակերպիչ կայանի կառուցման նպատակով իրականացվել է գլխավոր կապալառուների ընտրության նախադրակավորման մրցութային գործընթաց, որից հետո պատրաստվում են ծրագրի գլխավոր կապալառուների ընտրության մրցութային փաստաթղթերի փաթեթները, որոնք սահմանված կարգով հաստատումներ ստանալուց հետո, հայտերի ներկայացման նպատակով կտրամադրվեն նախադրակավորված հայտատուներին: Փաթեթների վերջնականացումը և հաստատումները նախատեսվում են 2022 թվականի երկրորդ եռամյակում:

2021 թվականի ընթացքում էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելին ամբողջական անցում կատարելու նպատակով ստեղծվել են անհրաժեշտ իրավական և տնտեսական նախադրյալները: Ընդունվել են անհրաժեշտ իրավական ակտեր, կարգավորումներ, մասնավորապես՝ ամրագրվել են ԷՄՇ-ի առևտրի իրականացման կանոնները և սկզբունքները, սահմանվել են ԷՄՇ-ի մասնակիցները և շուկայում առևտրի մասնակիցները: ԷՄՇ-ի նոր մոդելին անցումը սահուն կազմակերպելու և էլեկտրաէներգետիկական համակարգի կայունությունն ու հուսալիությունն ապահովելու նպատակով սահմանվել են անցումային կարգավորումներ: 2022 թվականի փետրվարի 1-ից էլեկտրաէներգետիկական համակարգում անցում է կատարվել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելին: Գործարկվել է ԷՄՇ-ի կառավարման ծրագիրը:

Ծարունակվել են ԵԱՏՄ ընդհանուր էլեկտրաէներգետիկական և գազի շուկաների հետ ձևավորման նպատակով անհրաժեշտ իրավական ակտերի մշակման աշխատանքները:

Իրանական կողմի հետ աշխատանքներ են տարվել գազ էլեկտրաէներգիայի դիմաց պայմանագրի ժամկետները երկարացնելու և պայմանագրում համապատասխան փոփոխություններ կատարելու նպատակով:

«Մասդար» ընկերության կողմից Հայաստանում 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» արևային կայանի կառուցման ծրագրով 2021 թվականին «Աբու Դաբի Ֆյուչեր Էներգի Քոմփանի» ընկերության հետ ստորագրվել է Կառավարության աջակցության համաձայնագիրը: Կայանը շահագործման կիանձնվի 2023 թվականին, ներդրումների ծավալը կկազմի շուրջ 170 մլն դոլար:

«Մասդար Արմենիա ծրագիր» ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվում է 200 ՄՎտ հզորության «Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի կառուցման ծրագիրը: «Մասդար-1» 55

ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովլուտային կայանի կառուցման ծրագիրը ընթացքում է, դեռևս չի տեղափոխվել կառուցման փուլ՝ գլխավոր կապալառուի կողմից ներկայացված պատճառներով:

Աշխատանքներ են իրականացվել 120 ՄՎտ հզորությամբ 5 արևային ֆոտովլուտային կայանների կառուցման ծրագրերի մրցութային փաթեթների նախապատրաստման ուղղությամբ:

Զգալիորեն աճել է ինքնավար արևային կայանների թիվը, մասնավորապես՝ 01.01.2022թ. դրությամբ մինչև 500 կՎտ հզորություն ունեցող 6940 ինքնավար էներգաարտադրողներ (գումարային շուրջ 136.08 ՄՎտ հզորությամբ) կնքել են պայմանագրեր «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ, ինչը 2796-ով (59.8 ՄՎտ հզորություն) ավելի է նախորդ տարվա համամետությամբ, ևս 518 ինքնավար էներգաարտադրողներ (գումարային շուրջ 11.5 ՄՎտ հզորությամբ) ստացել են տեխնիկական պայմաններ, ինչը 284-ով (3 ՄՎտ) ավելի է նախորդ տարվա համամետությամբ:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիա են արտադրում մինչև 5 ՄՎտ դրվածքային հզորությամբ 29 արևային էլեկտրակայաններ՝ գումարային 55.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ, ևս 32 արևային կայաններ՝ գումարային 154 ՄՎտ դրվածքային հզորությամբ, գտնվում են կառուցման փուլում:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիա են արտադրում 189 փոքր ՀԷԿ-եր՝ գումարային շուրջ 389 ՄՎտ դրվածքային հզորությամբ, ևս 23 փոքր ՀԷԿ-եր՝ 40.7 ՄՎտ նախագծային գումարային հզորությամբ, գտնվում են կառուցման փուլում:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիա են արտադրում 2 հողմային էլեկտրակայաններ՝ գումարային շուրջ 2.89 ՄՎտ դրվածքային հզորությամբ, տրամադրվել է հողմային էլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության 5 լիցենզիա՝ 8.23 ՄՎտ տեղակայված (տեղակայվող) հզորությամբ, որոնցից մեկը՝ 4 ՄՎտ տեղակայվող հզորությամբ, գտնվում է կառուցման փուլում:

2021 թվականի փետրվարի 25-ին իրապարակվել է 2019 թվականի << Էներգետիկ հաշվեկշիռը, որը տեղադրվել է www.mtag.am կայքում:

Սուրվենցիայի ծրագրի շրջանակներում 2021 թվականին քննարկվել են շուրջ 140 արհեստական փողոցային լուսավորության արդիականացման, արևային ՖՎ համակարգերի տեղակայման և գազաֆիկացման հայտեր:

Աշխատանքներ են տարվել բնակավայրերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման աշխատանքներում էներգետիկայի մասով առաջարկությունների ներկայացման ուղղությամբ:

Իրականացվել է << կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն և N 1920-Ն որոշումներով սահմանված կարգերով հողերի նպատակային և գործառնական նշանակության փոփոխման շուրջ 974 առաջարկների քննարկում:

Ընդերքի բնագավառ

Ընդերքի օգտագործման գործընթացը կարգավորող, պետական կառավարումը և վերահսկողությունն ապահովող նորմատիվ իրավական ակտերի մշակման ապահովման նպատակով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ընդունվել են հետևյալ իրավական ակտերը: 2021 թվականի ապրիլի 14-ին << Աժ-ի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» <Օ-172-Ն օրենքը: 2021 թվականի օգոստոսի 12-ին << կառավարությունը հավանության է արժանացրել ««<< բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթը, որը 2021 թվականի դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Մեկնարկել են Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարության (այսուհետ՝ Ռազմավարություն) մշակման աշխատանքները (2021 թվականի սեպտեմբերի 7-ին կնքվել է պայմանագիր Խորհրդատուի հետ): Մշակվելիք ռազմավարական փաստաթղթում կտրվեն ոլորտի կայուն զարգացման համար խոչընդուռ հանդիսացող՝ բացահայտված խնդիրների լուծման ուղղությունները և հանքարդյունաբերության ոլորտում բարեփոխումներ ապահովելու համար իրականացվելիք միջոցառումները: Աշխատանքների 1-ին փուլում ներկայացվել է Մեկնարկային հաշվետվությունը, որում տրվել է Ռազմավարության տեսլականի, ռազմավարության տեսանկյունից կարևոր հիմնահարցերի՝ Խորհրդատուի կողմից հիմնավորված առանձնացման և սահմանման հիման վրա ռազմավարության մշակման մեթոդաբանությունը:

Ընթացքի մեջ են գտնվում մի շարք օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ:

2021 թվականի ընթացքում ընդերքաբանական փորձաքննության է ներկայացվել օգտակար հանածոների հանքավայրերի և (կամ) տեղամասերի պաշարների հաշվարկման (վերահաշվարկման) և (կամ) երկրաբանատնտեսագիտական գնահատման (վերագնահատման) աշխատանքների արդյունքների մասին 26 հաշվետվություն, որից 6-ը՝ մետաղական, 2-ը՝ քաղցրահամ և հանքային ջրի և 18-ը՝ ոչ մետաղական: Հաշվետու ժամանակահատվածում նախարարի հրամանով հաստատվել են թվով 15 հանքավայրերի կոնդիցիաների պարամետրերը և (կամ) պաշարները, դրանցից 3-ը՝ մետաղական, 2-ը՝ քաղցրահամ և հանքային ջրի և 10-ը՝ ոչ մետաղական:

Մեկ պատուհանի սկզբունքի կիրառմամբ հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 59 ընդերքօգտագործման իրավունք (օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով թույլտվություններ՝ 32, երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով՝ 27, որից 3-ը՝ մետաղական), ինչպես նաև մերժվել է ընդերքօգտագործման իրավունք հայցելու 50 հայտ: Տրամադրվել է նաև Հայաստանի Հանրապետության տարածքից հանքային հումքի տեսակների արտահանման 8 մեկանգամյա լիցենզիա, ինչպես նաև 6 գլխավոր լիցենզիա:

«ՏԿԵՆ կողմից՝ սկսած 16.01.2021թ.-ից 248 գրավոր զգուշացում է տրվել մետաղական/ոչ մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման, ածխաթթվային հանքային ջրերի և 13 երկրաբանական ուսումնասիրության իրավունք ունեցող ընդերքօգտագործողներին՝ պետական տուրքի, շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի, մշտադիտարկումների, 0-ական 5-0ՀՊ ներկայացրած և չներկայացրած հաշվետվությունների, համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձնած պարտավորությունների մասով և 6 մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող ընկերություններին՝ իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ: Զգուշացման արդյունքում պետական բյուջե է մուտքագրվել 189,552.9 մլն դրամ: Զգուշացմամբ տրված խախտումները սահմանված ժամկետներում չվերացնելու հիմքով ՏԿԵՆ կողմից իրականացված վարչական վարույթի արդյունքում դադարեցվել է 17 ընկերությունների ընդերքօգտագործման իրավունք:

Միջուկային անվտանգություն

2021 թվականին իրականացվել է «Ատոմային էներգիայի մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի, ինչպես նաև միջուկային և ճառագայթային անվտանգության նոր նորմերի, կանոնների, պահանջների, մեթոդների մշակումը: Նոր օրենքի նախագծի ներկայացումը միջազգային փորձաքննության նախատեսվում է 2022 թվականին:

Մշակվել է «Էներգետիկայի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը նվազեցնելու, տարածք հետ վերցնելու և ամրացնելու մասին» որոշումը (հաստատվել է 2021 թվականի սեպտեմբերի 30-ի N 1601-Ա որոշմամբ): Որոշմամբ ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին հատկացվել է համապատասխան տարածք, որը վերանորոգումից և կահավորելուց հետո կդառնա ժամանակակից պահանջներին համապատասխանող ճառագայթային չափումների ռեֆերենսային ռադիոքիմիական լաբորատորիա՝ հագեցած բարձր ճշտության ռադիոմետրիկ ու սպեկտրոմետրիկ սարքերով, ինչպես նաև ռադիոքիմիական անալիզների կատարման ու փորձանմուշներ վերցնելու և մշակելու համար անհրաժեշտ սարքավորումներով՝ ապահովելու Հայաստանի Հանրապետության բնակչության պաշտպանությունն իոնացնող

ճառագայթման հնարավոր վնասակար ազդեցությունից, բարելավելու շրջակա միջավայրի պահպանությունը:

Զրային տնտեսություն

Զրային տնտեսության ոլորտում 2021 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ հիմնական աշխատանքները:

Համաձայն 2016 թվականի նոյեմբերի 21-ին << կառավարության՝ ի դեմս << ԷԵԲՊՆ Զրային տնտեսության պետական Կոմիտեի, «Վեոլիա Օ ԺԵՆԵՐԱԼ ԴԵԳ Օ» կոմանդիտային բաժնետիրական ընկերության և «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի միջև ստորագրված վարձակալության պայմանագրի, որն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ից, 2021 թվականին «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի կողմից որպես վարձակալական վճար << պետական բյուջե է մուտքագրվել 731.0 մլն դրամ:

Ոռոգման նպատակով Զրառ իրականացնող «Զրառ» ՓԲԸ-ի, ինչպես նաև ոռոգման ջուր մատակարարող 15 ջրօգտագործողների ընկերությունների գործունեությունների արդյունքներով ապահովվել է 87.3 հազ. հա հողատարածքների կայուն ջրամատակարարումը:

Համակարգի կազմակերպությունների հիմնական գործունեության վերլուծությունը ցույց է տալիս, որ 2021 թվականին իրագործվել են հաստատված ծրագրերը:

Ոռոգման և խմելու ջրամատակարարման ծառայությունների դիմաց հավաքագրումների գծով 2021 թվականին համակարգի գանձումը կազմել է շուրջ 27.1 մլրդ դրամ՝ 2020 թվականի 25.1 մլրդ դրամի փոխարեն կամ ավել է գանձվել 2.0 մլրդ դրամ:

Խմելու ջրի ոլորտում գանձման տոկոսը 2021 թվականին կազմել է 93.5%, որը նախորդ տարվա համեմատ ավել է 0.8 %-ով, իսկ ոռոգման ոլորտում գանձման տոկոսը 2021 թվականին կազմել է 68.9 %, որը նախորդ տարվա համեմատ ավել է 8.0%-ով:

Խմելու ջրի մասով գանձվել է շուրջ 22.79 մլրդ դրամ՝ 2020 թվականի 21.41 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 1.38 մլրդ դրամ, իսկ ոռոգման ոլորտում գանձվել է 4.28 մլրդ դրամ՝ 2020 թվականի 3.74 մլրդ դրամի դիմաց կամ ավել է գանձվել շուրջ 540.0 մլն դրամ:

Հաշվի առնելով 2021 թվականի սակավաջրության և եղանակային անբարենպաստ պայմանները՝ համակարգն ունեցել է Էլեկտրաէներգիայի գերածախս: 2021 թվականին Էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 232.2 մլն կՎտ ժ կամ 9.27 մլրդ դրամ՝ 2020 թվականի 200.16 մլն կՎտ/ժամի կամ 7.4 մլրդ դրամի դիմաց, կամ ավել է ծախսվել 32.04 մլն կՎտ ժ 1.9 մլրդ դրամ: Ոռոգման ոլորտում Էլեկտրաէներգիայի ծախսը կազմել է 170.19 մլն կՎտ ժ կամ 7.1 մլրդ դրամ՝ 2020 թվականի 142.8 մլն կՎտ ժ-ի կամ 5.6 մլրդ դրամի դիմաց, կամ ավել է ծախսվել 27.4 մլն

կվառ ժ կամ 1.6 մլրդ դրամ: Էլեկտրաէներգիայի գերծախսի 1.9 մլրդ դրամը պայմանավորված է նաև Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացմամբ:

2021 թվականի ընթացքում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման միջին կշռային տևողությունը Երևան քաղաքում եղել է 23.2 ժամ/օր, այլ քաղաքային համայնքներում՝ 20.6 ժամ/օր, իսկ գյուղական տարածքներում՝ 20.1 ժամ/օր:

2021 թվականի մայիսի 24-ին ընդունվել է «Ոռոգման նպատակով 2021 թվականին Սևանա լճից ջրառի մասին» << կառավարության N 842-Ա որոշումը, որով ոռոգման նպատակով Սևանա լճից 2021 թվականի ջրառի չափաբանակը սահմանվել է մինչև 170.0 մլն խոր.մ:

Սևան-Հրազդան դերիվացիոն համակարգից սնվող ոռոգման համակարգերի իշխման տակ ընկած հողերի ոռոգման ջրապահովության դեֆիցիտը մասնակիորեն մեղմելու և ջրապահովվածությունը բարձրացնելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ 2021 թվականի օգոստոսի 17-ին ընդունվել է «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին <Օ-322-Ն օրենքը, որի համաձայն 2021 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողնման տարեկան առավելագույն չափաբանակը ավելացվել է 75 մլն խոր.մ-ով և սահմանվել է մինչև 245 մլն խոր.մ:

2021 թվականի մայիսի 25-ից մինչև հոկտեմբերի 27-ը Սևանա լճից ոռոգման նպատակով բաց է թողնվել 227.65 մլն խոր.մ ջուր (նախորդ տարվա ոռոգման շրջանում բաց է թողնվել 162.39 մլն խոր.մ ջուր), իսկ Արփա-Սևան թունելով 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Սևանա լիճ է տեղափոխվել շուրջ 157.5 մլն խոր.մ ջուր՝ 2020 թվականի 205.2 մլն խոր.մ-ի դիմաց, կամ պակաս է տեղափոխվել շուրջ 47.7 մլն խոր.մ ջուր, որը պայմանավորված է եղել Արփա և Եղեգիս գետերի պակաս ջրատվությամբ:

Ընդունվել է «Մինչև 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրևացման ոռոգման համակարգերի ներդրման դեպքում ջրօգտագործողներին ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» << կառավարության 14.10.21թ. N 1695-Լ որոշումը, որի համաձայն <այսատանի Հանրապետության գյուղատնտեսական մշակաբույսերով գրադեցված այն հողատարածքները, որոնք ընդգրկված են ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում, բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների, այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր հանդիսանում են ջրօգտագործողների ընկերությունների անդամներ, ովքեր մինչև 3 հա հողատարածքներում կաթիլային, անձրևացման ոռոգման արդի համակարգերում կկատարեն ներդրում, կստանան ոռոգման ջրի վարձավճարի փոխհատուցում՝ 5 տարի ժամկետով:

Տրանսպորտ

Ճանապարհային տնտեսության բաղադրականության բնագավառ

Համաշխարհային փորձը ցուց է տալիս, որ ճանապարհային ոլորտը կարևորագույններից մեկն է, որի միջոցով հնարավոր է դրական ազդեցություն ունենալ տնտեսության մյուս ճյուղերի վրա՝ խթանելով արդյունաբերությունը, առևտուրը, սոցիալական փոխհարաբերությունները և տարատեսակ այլ ծառայությունների մատուցումը։ Այս տեսանկյունից << ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների, ինչպես նաև դրանց վրա գտնվող տրանսպորտային օբյեկտների (կամուրջներ, թունելներ և այլ արհեստական կառուցվածքներ) հիմնական և միջին նորոգումը, վերակառուցումը և ընթացիկ պահպանումը 2021 թվականին գտնվել են Կառավարության ուշադրության և վերահսկողության ներքո։ Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2021 թվականին իրականացվել է պետական նշանակության շուրջ 300 կմ ավտոմոբիլային ճանապարհների ու թվով 3 տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում, 77.4 կմ միջին նորոգման աշխատանքներ։ Ավարտին են հասցել 2020-2021 թվականներին (փոխանցիկ) նախատեսված 34.8 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների, ինչպես նաև 2020 թվականից անավարտ մնացած ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ։ Միաժամանակ, հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ Հայաստանի հարավային շրջանների բնակչության անվտանգությունն ու կենսական կարիքներն ապահովելու նպատակով 2021 թվականին հատկապես ուշադրության կենտրոնում է գտնվել << Սյունիքի մարզում այլընտրանքային ճանապարհների կառուցման և վերակառուցման ծրագրերը։ Մասնավորապես, մարզում նախատեսվում է կառուցել շուրջ 77 կմ ընդհանուր երկարությամբ այլընտրանքային ճանապարհներ։

2021 թվականին վարկային միջոցների հաշվին շարունակվել են Մ-6, Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջանական նշանակության ճանապարհի վերականգնման և բարելավման, Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Բագրատաշենի կամուրջի վերակառուցման, ինչպես նաև Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհացանցի լրացուցիչ վարկային ծրագրերը։ Վարկային ծրագրերով 2021 թվականի ընթացքում նորոգվել և վերակառուցվել են 137 կմ ընդհանուր երկարությամբ միջանական, հանրապետական, տեղական նշանակության ճանապարհահատվածներ։

Ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բնագավառ

Ավտոմոբիլային տրանսպորտի բնագավառում իրականացված իրավական բարեփոխումների շրջանակներում աշխատանքներ են տարվում կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կարգավորման, միասնական երթուղային ցանցի ներդրման և կանոնավոր ուղևորափոխադրումներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ուղղությամբ: 2021 թվականին կայացել են Կոտայքի մարզի և Արմավիրի մարզի Վաղարշապատի ու Արմավիրի տարածաշրջանների միասնական երթուղային ցանցի օպերատորների մրցույթները, որոնց արդյունքում Կոտայքի մարզի և Արմավիրի մարզի Վաղարշապատի տարածաշրջանում ընտրվել են միասնական օպերատորները, իսկ Արմավիրի տարածաշրջանում հաղթող չի ճանաչվել:

Փոփոխություններ են կատարվել << կառավարության 03.12.2020թ. N 1994-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցութային կարգում, որով առավել հստակեցվել է մրցույթների կազմակերպման գործընթացը:

Ընդունվել է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազավառելիքային համակարգի շահագործման գործընթացը կարգավորող ենթաօրենսդրական ակտերի փաթեթը: Իրականացվել են աշխատանքներ գործընթացի ավտոմատացված համակարգի ստեղծման ուղղությամբ:

Ընդունվել է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» << օրենքը, որով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու թույլտվություն ստանալու համար տարեկան տուրքը փոխարինվել է մեկանգամյա տուրքով:

Ներդրվել է ավտոտրանսպորտի տեխնիկական գննության գործընթացի նոր համակարգ, որի արդյունքում տեխնիկական զննման կտրոնների պահանջը փոխարինվել է վերահսկողության իրականացման էլեկտրոնային համակարգով:

Արևելյան գործընկերության շրջանակներում ԵՄ օրենսդրությանը << օրենսդրությունը ներդաշնակեցնելու, միջայտական փոխադրումների գործընթացը դյուրացնելու նպատակով իրականացվում են մի շարք օրենսդրական բարեփոխումներ: Մասնավորապես՝ ընդունվել է վարորդների աշխատանքի և հանգստի ռեժիմը սահմանող թվային տախոգրաֆի կիրառումն ապահովող օրենսդրական դաշտը կատարելագործող օրենսդրական փաթեթը, աշխատանքներ են տարվում ճանապարհային ցանցի պահպանմանն ու զարգացմանն ուղղված ճանապարհային վճարի

գանձման էլեկտրոնային համակարգի ներդրման ուղղությամբ, որը հնարավորություն կընձեռի մինչև երթուղի դուրս գալը էլեկտրոնային եղանակով կատարել վճարումները: Մշակվել է օրենսդրական փաթեթ, որով կսահմանվեն Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) բազմակողմ քվոտայի համակարգում միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների Որակի խարտիայով միջաետական փոխադրումներ իրականացնող օպերատորներին ներկայացվող պահանջները, ինչպես նաև կկանոնակարգվեն ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրումներ իրականացնող «C», «D», «CE», «DE», «C1E», «D1E» կարգ ունեցող վարորդների պարբերական մասնագիտական վերապատրաստում անցնելու և մասնագիտական որակավորման վկայական ստանալու գործընթացները:

Աշխատանքներ են տարվում մի շարք միջազգային համաձայնագրերի ստորագրման և վավերացման ուղղությամբ, որոնք կզարգացնեն միջաետական համագործակցությունը և կնպաստեն փոխահավետ տնտեսական ու գործարար կապերի խթանմանը:

Երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտի բաղարականության բնագավառ

Երկաթուղային ուղևորափոխադրումների արդյունավետության, մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով շարունակվել է շարժակազմի նորացման և արդիականացման գործընթացի իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում շարժակազմի նորացման շրջանակներում ձեռք են բերվել և շահագործման հանձնվել միջազգային հաղորդակցությունների համար թվով 27 նոր ուղևորատար ժամանակակից վագոններ, տեղական հաղորդակցությունների համար՝ երկու նոր ԷՊ2Դ էլեկտրագնացքներ: Վերանորոգվել են 2 միավոր ԲԼ10 և 3 միավոր ԿՄԷ3 էլեկտրաքարշեր: Կապիտալ վերանորոգվել է 5կմ գիծ նոր նյութերով և 4.5 կմ գիծ՝ հնամաշ նյութերով: Վերանորոգվել է 4 կմ հպակային ցանց և 4 կմ օդային էլեկտրամատակարարման ցանց:

2021 թվականի արդյունքներով երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը կազմել է 3.125 մլն տոննա:

Հաշվետու ժամանակահատվածում փոխադրվել է 434.7 հազար ուղևոր, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցել է շուրջ 42,8%-ով, ընդ որում, ուղևորաշրջանառությունն ավելացել է շուրջ 76.5%-ով:

Կոնցեսիոն պայմանագրի արդիականացման շրջանակներում 2021 թվականի ընթացքում ռուսական կողմի հետ իրականացվել են աշխատանքային քննարկումներ և համաձայնեցվել են Կոնցեսիոն պայմանագրով նախատեսված հիմնական հասկացությունների փոփոխությունների գգալի մասը:

Երկաթուղային գծանցքների շահագործումը կանոնավոր կազմակերպելու, երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով՝ << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի կողմից հաստատված՝ ուսումնասիրությունների հիման վրա կազմված երկաթուղու բոլոր գծանցների անհրաժեշտ հագեցվածության և տեխնիկական վիճակի արձանագրած թերությունների վերացման միջոցառումների ծրագրի շրջանակներում վերացվել է արձանագրված թերությունների մոտ 60%-ը:

2021 թվականի նոյեմբերի 15-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Եվրոպական Միության անդամ-պետությունների միջև ընդհանուր ավիացիոն գոտու մասին» համաձայնագիրը:

«Ավիաընկերությունների թվի ավելացմանն ուղղված միջոցառումներին աջակցություն» միջոցառման շրջանակներում ավիացիոն շուկա են մուտք գործել մեկ հայկական ավիաընկերություն՝ «Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ-ն, որին տրամադրվել է օդանավ շահագործողի վկայական, և օտարերկրյա 3 ավիաընկերություններ՝ «Կոնդոր», «Լյուֆթիանզա գերմանական ավիաուղիներ» և «Եվրովինգ»:

2021 թվականի ընթացքում իրականացվել են համապատասխան աշխատանքներ ազգային ավիափոխադրողի ստեղծման ուղղությամբ: Վերջինիս ստեղծումը հնարավորություն է տախս Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ավելի մատչելի գներով ճանապարհորդել:

<< կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի N1237-Ա որոշմամբ կատարվել են փոփոխություններ 2018-2022թթ. Մաստեր Պլանում:

2021 թվականին << ՏԿԵՆ Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կողմից մշակվել է «Ավիացիայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով հստակեցվել է կոմիտեի կողմից նույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորությունը:

Զրային տրանսպորտի բնագավառում 2021 թվականին իրականացվել են «Առևտրային ծովագնացության մասին» օրենքի մշակման աշխատանքները և ծով չունեցող այլ երկրների օրենսդրությունների ուսումնասիրությունները:

Քաղաքացիական ավիացիա

Իրականացվել է ինստիտուցիոնալ համագործակցություն Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ICAO), Շոհէքների անվտանգության Եվրոպական գործակալության (EASA) հետ, ԵՏՀ տրանսպորտի և ենթակառուցվածքի հարցերով խորհրդատվական կոմիտեի քաղաքացիական ավիացիայի ենթակոմիտեի շրջանակներում:

ԵՄ թոհքների անվտանգության ցուցակից դուրս գալու կապակցությամբ ՀՀ քաղաքացիական ավիացիայի կոմիտեն համագործակցել և համագործակցում է Թոհքների անվտանգության եվրոպական գործակալության, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի ավիացիոն իշխանությունների հետ: Համագործակցության շրջանակներում, մասնավորապես, իրականացվել են մի շարք ընթացակարգերի մշակում և ներդրում, անվճար դասընթացների կազմակերպում:

Իրականացվել են օրենսդրական փոփոխություններ, մշակվել և լրամշակվել են օրենքի մի շարք նախագծեր:

Տրամադրվել են օդանավ շահագործողի վկայականներ «Շիրակ Ավիա», «Սքայբոլ», «Ֆլայուան Արմենիա» ավիաընկերություններին: Երկարաձգվել է «Արմենիա Էյրվեյզ» ավիաընկերության օդանավ շահագործողի վկայականի գործողության ժամկետը:

Կանոնավոր առևտրային օդային փոխադրումների իրականացման հավաստագիր է տրամադրվել «Շիրակ Ավիա», «Ֆլայուան Արմենիա» ավիաընկերություններին:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն

ՀՀ Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր, որին հասնելու ուղիներից է բարձր տեխնոլոգիաների, կապի, թվայնացման և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, զինված ուժերի մարտունակության ու պաշտպանունակության բարձրացումը, տնտեսական աճը, գիտական և տեխնոլոգիական առաջընթացը:

2021 թվականին ոլորտի աշխատանքն ուղղված էր հետևյալ երեք հիմնական նպատակների (ուղենիշների) կատարմանը՝

- պաշտպանական տեխնոլոգիաների զարգացում՝ ռազմարդյունաբերություն, գիտահետազոտական ծրագրեր, տեխնոլոգիաների ներդրում,
- տաղանդի արտահոսքի կանխում և ներհոսքի հարուցում՝ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացում, ստարտափ և ինժեներական Էկոհամակարգի զարգացում, Հայաստանը տարածաշրջանային կենտրոնի վերածում,
- ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի աճին նպաստում՝ արտաքին շուկաներում պրոյեկտների և արտադրանքի ներկայացման, տնտեսության և կառավարման համակարգի թվայնացման, արտահանման ծավալների ավելացման և տնտեսական աճի ապահովման միջոցով:

2021 թվականին իրականացվել են հետևյալ ծրագրերն ու միջոցառումները.

Ռազմարդյունաբերության ոլորտ

Ուղղմարդյունաբերության զարգացման ուղղությամբ 2021 թվականին 16.7%-ով ավելացվել է նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորումը, ինչպես նաև ապահովվել է արտադրական կարողությունների զարգացումը:

«Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում» ծրագիրն իր մեջ ներառում է «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակրնստրուկտորական աշխատանքներ միջոցառումը: Միջոցառման ֆինանսավորման ծավալները 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշմամբ << կառավարության որդեգրած քաղաքականության համաձայն նախատեսվում էր շեշտակի ավելացնել 2020 թվականից սկսած: Արդյունքում իրականացվել են նոր նմուշների մշակում, նոր և արդիականացված նմուշների փորձնական խմբաքանակների արտադրություն, սպառագինության ու ռազմական տեխնիկայի և ռազմատեխնիկական ունեցվածքի արդիականացում:

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտ

2021 թվականին նախատեսվում էր իրականացնել Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիրը, որի նպատակն է՝

- իրականացնել կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում՝ հաշվի առնելով շուկայի կտրուկ զարգացումն ու կադրերի նկատմամբ շուկայի պահանջարկի կտրուկ աճը,
- Զարգացնել բարձր տեխնոլոգիական ոլորտի համար անհրաժեշտ էկոհամակարգը՝ ներառյալ թիրախավորված գիտահետազոտական աշխատանքների, ստեղծագործական խմբերի, նորաստեղծ ընկերությունների ֆինանսավորումը և այլն,
- Հայկական Սփյուռքի ներգրավվածությունն ապահովելու նպատակով նախատեսվում էր տարբեր ֆորմատներում շարունակական համագործակցության հարթակ ստեղծել հայկական ընկերությունների, կազմակերպությունների և անհատների համար,
- Զանգվածաբար կիրառել և զարգացնել թվային տեխնոլոգիաները: Զուգահեռաբար նախատեսվում էր բարձրացնել կիբեռանվտանգության և ինտերնետ հասանելիության մակարդակը Հայաստանում:

Նշված նպատակների իրականացման համար վերոհիշյալ ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- Մասնագետների պատրաստման ԲՈՒՀ-մասնավոր համագործակցություն,
- «Գաղափարից մինչև բիզնես դրամաշնորհներ»,
- «Հայկական վիրտուալ կամուրջ»,

- Շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն:

Հեռահաղորդակցության ապահովում

Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը: Ծրագիրն իր մեջ ընդգրկում է երկու գործող միջոցառում՝

- Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգում. միջոցառումն ապահովում է հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը, մասնավորապես՝ ՀՀ հաճախականությունների բաշխումների աղյուսակի կազմումը, ռադիոեթերի մոնիթորինգի և ազդանշանների տեխնիկական պարամետրերի չափումների անցկացումը, ռադիոէլեկտրոնային միջոցների և բարձր հաճախության սարքավորումների տեղորոշումը:

- Թվային հեռուստահեռարձակման ապահովման ծառայություններ. միջոցառման նպատակը Հանրապետական սփոման մուտիպլեքսի արբանյակային տարածման համար արբանյակային ունակության վարձակալումն է՝ համաձայն կնքված պայմանագրի:

Թվայնացման ոլորտ

2021 թվականի փետրվարի 11-ին Կառավարությունը հաստատել է ՀՀ թվայնացման ռազմավարությունը, որի միջոցառումների ծրագրը միտված է կյանքի նոր որակի ապահովմանը, տնտեսության թվային վերափոխմանն ու պետության ավելի թափանցիկ կառավարմանը:

Սեպտեմբերից իրականացվում են թվայնացման միասնական ստանդարտների ներդրման աշխատանքներ, որոնց նպատակն է՝ սահմանել օգտատերերի հարմարավետությանը միտված նախագծման, տեխնիկական, կիբեռանվտանգության, թվայնացման գործընթացների և պետական ամպային ենթակառուցվածքների չափանիշներ:

Էլեկտրոնային հարթակների ներդրման աշխատանքների համատեքստում ծրագրեր են իրականացվել Էլեկտրոնային արդարադատություն, Պետական եկամուտներ, Էլեկտրոնային աճուրդ, Թվային տնտեսություն, Էլեկտրոնային կրթություն, Էլեկտրոնային ֆինանսներ, Էլեկտրոնային նոտար, Էլեկտրոնային սոցիալական ծառայություններ, Թվային միգրացիա, Ոստիկանության բարեփոխումներ և այլ ուղղություններով:

ԵԱՏՄ թվային օրակարգի, Եվրամիությունը թվայնացման համար ծրագրերի շրջանակներում Կառավարությունը համագործակցել է միջազգային մի շարք գործընկերների հետ (Ճապոնիայի միջազգային զարգացման ազգային գործակալություն, ՄԱԿ, ՀԲ և այլն):

ԵՆԲ-ի կողմից ներգրավված փորձագիտական առաքելության շրջանակներում իրականացվել են Պետական կառավարման համակարգի թվային փոխակերպման տեխնիկական գնահատման աշխատանքներ:

Մեկնարկել է Կիբերանվտանգության և տվյալագիտության ազգային կենտրոնի ստեղծման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գործընթացը:

Կազմվել և հավաքագրվել է << պետական կառավարման համակարգի Էլեկտրոնային հարթակների և պաշտոնական կայքերի հաշվառման բազան:

Մեկնարկել է Ծրագրերի կառավարման Էլեկտրոնային միասնական հարթակի ստեղծման տեխնիկական առաջադրանքի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գործընթացը:

Համաձայն Հայաստանի թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագրի՝ իրականացվել է << պետական կառավարման համակարգի մարմինների թվայնացման ուղղությամբ իրականացվող գործառույթների գույքագրում:

Աշխատանքներ են իրականացվել տեղեկատվական անվտանգության ապահովման օրենսդրական դաշտի արդիականացման ուղղությամբ:

Համաձայն Հայաստանի թվայնացման ռազմավարության միջոցառումների ծրագրի՝ թվայնացման ոլորտում օրենսդրական դաշտի ուսումնասիրության և փոփոխության աշխատանքների համատեքստում «Ավենյու Քոնսալթինգ» ընկերության հետ իրականացվել է օրենսդրական դաշտի ներկա իրավիճակի վերլուծություն:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից Էլեկտրոնային ծառայությունների համար օգտագործվող Էլեկտրոնային համակարգերի Գլոբալ փոխգործելիության հարթակի (GIP) անվտանգ, անխափան և տեխնիկական ընդհանուր պահանջներին համապատասխան գործարկման համատեքստում իրականացվել են ծրագրի միջանկյալ 9-րդ հաշվետվության գնահատման աշխատանքներ:

Բարձր տեխնոլոգիական ոլորտ

2021 թվականին տիեզերական և ռոբոտաշինության բնագավառում կատարվել են հետևյալ աշխատանքները:

Հունիսի 14-17-ը ԲՏԱՆ պատվիրակությունը նախարարի գլխավորությամբ մասնակցել է «Ռուսկոսմոս» և «International Astronautical Federation» կազմակերպությունների կողմից կազմակերպված «Global Space Exploration Conference» GLEX միջոցառմանը: Միջոցառման

շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարն ու «Ռոսկոսմոսի» տնօրենը համատեղ քննարկում են ունեցել, բացի այդ, ոլորտային համագործակցությունների շուրջ քննարկումներ են ծավալվել շուրջ մեկ տասնյակ կազմակերպությունների հետ:

Հուլիսի 22-ին ՀՀ ԲՏԱՆ նախարարի թիվ Ն/17.1/2581-2021 հրամանով ՀՀ ազգային տիեզերական ռազմավարության նախագիծը լրամշակելու նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, կայացել են հանդիպումներ և ոլորտային քննարկումներ:

Օգոստոսի 29-ից սեպտեմբերի 1-ը «ԱՅԱՍ» ՀԿ-ի, «COAF» և «Հրթիռամոդելային ասոցիացիա» հիմնադրամների համագործակցությամբ կայացել է «Տիեզերական ճամբար 2021» («SpaceCamp-2021») ծրագիրը: Տիեզերակալական բնագավառի ամառային դպրոց-ճամբարին մասնակցել են թվով 70 անձ՝ ներառյալ մասնակիցներ, կազմակերպիչներ, հյուրեր:

Օգոստոսին ՀՀ ԲՏԱՆ գլխավորությամբ ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ ռուսական «Ռոսկոսմոս» կազմակերպության հետ տիեզերական գործունեության ոլորտում համագործակցության հնարավորությունների քննարկման համար: Աշխատանքային խումբը քննարկել է ռուսական կողմի առաջարկած համագործակցության ուղղությունները և պատասխան նամակով տեղեկացրել ռուսական կողմին:

Սեպտեմբերի 18-ին Լոռու մարզի Լեռնապատ համայնքում ստեղծված անօդաչու թռչող սարքերի օդանավակայանում անցկացվել է «Հավք 2021» մրցույթը: Մրցույթին մասնակցել են 21 թիմեր:

Հոկտեմբեր 2-3-ը «ISTC», «ISOC Armenia», «X-Tech» և «COWO» ընկերությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել է «NASA Space Apps Challenge Armenia» առցանց մրցույթ-հաքաթոնը, որն ունեցել է 35 մասնակից: Մրցույթի ամփոփիչ փուլը կայացել է հոկտեմբերի 7-ին: Ժյուրիի գնահատմամբ մրցույթի հաղթողներ են ընտրվել «Donut Oddity», «Three Smart», «Digital Wave» թիմերը: Հաղթողները որպես մրցանակ ստացել են աստղադիտակներ:

Հոկտեմբեր 16-ին ՀՀ նախագահի նստավայրում կայացել է «Քեմուրջան-100» միջազգային կոնֆերանսը, որի ընթացքում հանդիսավոր կերպով տեղի է ունեցել անվանական նամականիշի մարում:

Հոկտեմբերի 25-27-ը ԲՏԱՆ պատվիրակությունը մասնակցել է Դուբայում կայացած 72-րդ «International Astronautical Congress» IAC 2021 միջոցառմանը, որը մեկտեղել էր ոլորտի 4500-ից ավել ներկայացուցիչների: Միջոցառման շրջանակներում քննարկումներ են եղել շուրջ երկու տասնյակ արտերկրյա կազմակերպությունների հետ՝ համագործակցությունների հնարավորությունների և ՀՀ ուրուժի զարգացման վերաբերյալ: Իրականացվել են 20-ից ավելի հանդիպում-քննարկումներ:

Նոյեմբերի 10-ին հայտարարվել է Հայաստանում ռոբոտաշինության և տիեզերական սարքաշինության ոլորտների առաջխաղացման դրամաշնորհային մրցույթ երեք քաղաքիներով։ Դրամաշնորհային մրցույթի շրջանակներում 24 հայտ է ստացվել, որից հաղթող ճանաչվել են 3-ը։

Դեկտեմբերի 12-ին անցկացվել է «ԱրմՌոբոտիք» 2021 ինքնակառավարվող ռոբոտների Հայաստանի 13-րդ առաջնության եզրափակիչը, որը կրում էր «Խելացի քաղաք» խորագիրը և ուներ 2.400.000 դրամ մրցանակային ֆոնդ։

Գործնական կապեր են հաստատվել տիեզերական գործունեության ոլորտում տասնամյա փորձ ունեցող հունական «Արատոս Գրուպ»-ի հետ։ Ընկերության պատվիրակությունը նախագահի գլխավորությամբ երկու անգամ այցելել է Հայաստան։ Ընկերությունը << ազգային ագրարային համալսարանի հետ տեխնոլոգիական կրթության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրել, ինչպես նաև գործնական քննարկումների մեջ է 10 այլ ընկերությունների հետ։

Հավաքագրվել է գերատեսչությունների տիեզերալուսանկարների պահանջարկը, վերլուծվել են արտերկրյա կազմակերպություններից ստացված արբանյակների առաջարկները։ Կազմակերպվել են արտերկրյա այցեր Իսպանիա և Ֆրանսիա, որոնց շրջանակում նախարարութան պատվիրակությունը ծանոթացել է կազմակերպությունների հետազոտական և արտադրական կարողություններին։ Որոշ ընկերություններ աշխատանքային այցեր են կատարել Հայաստան, որոնց ընթացքում մշակվել են համապատասխան օրակարգեր, ներկայացվել է հայկական տեխնոլոգիական ներուժը, և սկսվել են համագործակցություններ։ Քննարկումներ են եղել հետևյալ ընկերությունների հետ. «Satlantis» (Իսպանիա), «Head Aerospace Group» (Չինաստան), «Պրոմեթեյ» (Ֆրանսիա), «Hemeria» (Ֆրանսիա), «Comat» (Ֆրանսիա)։ Ուսումնասիրությունների ընթացքում նախարարությունը մշակել է իր ամփոփիչ առաջարկը և ներկայացրել << անվտանգության խորհրդին ու << Վարչապետի աշխատակազմին։

Քաղաքաշինություն

<< կառավարության ծրագրի առաջնահերթությունների շուրջ կառուցված 2021 թվականի տնտեսական զարգացման քաղաքականության շրջանակներում քաղաքաշինության ոլորտի հիմնական խնդիրներից են համարվել՝

- << կառավարության 23.02.2017թ. նիստի N8 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի մշակման (տեղայնացման)» ծրագրի շրջանակներում միջազգայնորեն ընդունված սկզբունքներին համահունչ քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի բարեփոխման և արդիականացման

շարունակական աշխատանքների իրականացումը՝ անհրաժեշտ փաստաթղթերի բազայի ստեղծմամբ, ինչը հնարավորություն կտա ապահովել նախագծային և շինարարական աշխատանքների որակական երաշխիքներ, միասնական շուկայում հանրապետության շինարարական արտադրանքի և ծառայությունների համատեղելիություն ու տեխնոլոգիաների արդիականացում.

• Հանրապետության բոլոր համայնքները 2017-2023թթ. ընթացքում տեղական մակարդակի ծրագրային փաստաթղթերով (գլխավոր հատակագծեր և գոտևորման նախագծեր) ապահովելու նպատակով «Միկրոոեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակում» ծրագրի իրականացումը, որի միջոցով ՀՀ համայնքներն ապահովում են տարածական պլանավորման փաստաթղթերով, և տարբեր մակարդակների փաստաթղթերի համատեղման շնորհիվ խնայվում են զգալի ֆինանսական միջոցներ:

Արտակարգ իրավիճակների ոլորտ

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակառությամբ է եղել բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը: Արտակարգ իրավիճակների ոլորտում 2021 թվականին իրականացվել են հետևյալ ծրագրերը:

Փրկարար ծառայությունը հետևողական աշխատանքներ է տարել ծառայողների մասնագիտական վերապատրաստման ուղղությամբ, և այդ նպատակով սերտ համագործակցություն է իրականացվել ավելի քան 10 միջազգային կառույցների՝ ՀԱՊԿ-ի, ԱՊՀ-ի, ՄԱԿ-ի Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG), ԵՄ հետ համատեղ իրականացվող «Տեխնածին և տարերային աղետների կանխարգելում, պատրաստվածություն և արձագանքում արևելյան տարածքում» (PPRD) և բնակչության պաշտպանության ոլորտում ԱԻՆ ՓԾ կարողությունների հզորացմանն ու ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված (Թվինինգ) ծրագրերի, ԱՄՆ պաշտպանության դեպարտամենտի վտանգների նվազեցման գործակալության, ՆԱՏՕ-ի Եվրատլանտյան աղետների արձագանքման համակարգման գրասենյակի (EADRCC), Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) հետ:

2022 թվականին կայանալիք INSARAG արտաքին որակավորումն անցած հայկական միջազգային քաղաքային որոնողափրկարարական թիմի վերաորակավորման նախապատրաստման նպատակով Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության և ՄԱԿ-ի միջազգային քաղաքային որոնողափրկարարական խորհրդատվական

խմբում << քաղաքական պատասխանատուի միջև կնքվել է տեխնիկական համագործակցության հուշագիր, որի համաձայն նախատեսվում է իրականացնել անձնակազմի վերապատրաստում և փոխայցելություններ ինչպես Շվեյցարիայի Համադաշնություն, այնպես էլ Հայաստանի Հանրապետություն:

Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության (JICA) կողմից իրականացվող «Mini Grant Project» ծրագրերի շրջանակներում Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Անգեղակող, Շաղատ, Շաքի, Ույծ բնակավայրերի 4 հանրակրթական դպրոցներում իրականացվել է «Աղետների ռիսկի կառավարման պատրաստվածություն» փոքր դրամաշնորհային ծրագիրը՝ 4000 ԱՄՆ դոլարի չափով:

Կազմակերպվել են աշխատանքներ Հայաստան-ԵՄ իրականացվող ծրագրերի ուղղությամբ՝ Փրկարար ծառայության կարողությունների հզորացմանն ու ինստիտուցիոնալ կայացմանն ուղղված թվինինգ ծրագիրը, որի շրջանակներում ակտիվ աշխատանքներ են տարվում բնակչության պաշտպանության ոլորտի օրենսդրական դաշտի կատարելագործման, աղետների ռիսկի նվազեցման ու կամավորական շարժման համակարգերի զարգացման ուղղությամբ:

Հրշեց գույքի բարելավման նպատակով մշակվել է հանրային ներդրումային ծրագիր, որով նախատեսվում է ԱԻՆ Փրկարար ծառայության հրշեց-փրկարարական ստորաբաժանումների հաշվեկշռում առկա և հնամաշ հրշեց-փրկարարական ավտոմեքենաները փոխարինել նորերով: Թվով 15 հրշեց-փրկարարական ջոկատների համար նախատեսվում են 49 միավոր հրշեց-փրկարարական ավտոմեքենաներ՝ ընդհանուր 3,741.7 մլն դրամ արժեքով: Ծրագիրը հավանության է արժանացել <Բ-ի և շահագոգիո մարմինների ներկայացուցիչների կողմից:

2021 թվականին << Սյունիքի մարզի Շիկահող, Կոտայքի մարզի Գառնի և Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքներում ստեղծվել են կամավորական ջոկատներ: Կամավորական հրշեց-փրկարարական հենակետեր ստեղծելու նպատակով «Կամավոր կարողությունների միջոցով բնակչության պաշտպանության համակարգերի ամրապնդում» ծրագրի շրջանակներում Ավստրիական և հայկական կարմիր խաչի ընկերությունների մասնագետների հետ համատեղ իրականացված ծրագրի շրջանակներում ստորագրվել է «<< արտակարգ իրավիճակների նախարարության, << Կոտայքի ու Լոռու մարզերի և Հայկական Կարմիր խաչի ընկերության միջև արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում համագործակցության և փոխօգնության մասին» փոխըմբռնման հուշագիրը:

Սեյսմիկ պաշտպանության ոլորտում սեյսմիկ վտանգի գնահատման համալիր վարչության կողմից կատարվել է սեյսմոլոգիական ցանցից ստացվող տվյալների վերլուծություն, երկրաշարժերի հիմնական պարամետրերի որոշում և երկրաշարժերի Ազգային կատալոգի լրացում:

ՀՀ և ԱՀ տարածքների ընթացիկ սեյսմիկ վտանգի գնահատման նպատակով հավաքագրվել և վերլուծվել են Երկրաֆիզիկական բլոկի ու Երկրաքիմիական դիտակայանների տվյալները: Իրականացվել է առանձին պարամետրերով սեյսմածին անոմալիաների վիճակագրության ուսումնասիրում:

Ամենօրյա ռեժիմով կատարվել են ընթացիկ աշխատանքներ՝ դիտացանցի կայանների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով: Կատարվել են թվային ավտոմատ չափիչ սարքերով վերագինմանն ուղղված աշխատանքներ (հեռահաղորդման համակարգեր, տվյալներ, «լոցեններ» և այլն): Հունվարի 23-ին Նախիջևան-Հայաստան սահմանային գոտում տեղի ունեցած Երկրաշարժի հետ կապված՝ Վայքի տարածաշրջանի Բարձրունի գյուղում տեղադրվել էր ժամանակավոր GURALP սեյսմիկ կայան՝ Երկրաշարժի հետցնցումային մոնիթորինգն իրականացնելու նպատակով:

Զգալի աշխատանքներ են կատարվել փետրվարի 5-ին Շորժայում և փետրվարի 13-ին Երևանում տեղի ունեցած Երկրաշարժերից և դրանց բազմաթիվ հետցնցումներից հետո բնակչության իրազեկման ուղղությամբ:

Սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների շրջանակում իրականացվել են շենք-շինությունների տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության գնահատման աշխատանքներ ինչպես պետական համալիր ծրագրի համաձայն, այնպես էլ պայմանագրային հիմունքներով:

Սեյսմիկ ռիսկի գնահատման նպատակով շարունակվում են ԱՏՀ-ում ՀՀ համայնքների քարտեզների թվայնացման և տվյալների բազայի համարման աշխատանքները: Սեյսմիկ ռիսկի նվազեցման նպատակով իրականացվել են 3 համայնքի հատակագծերի AutoCAD ձևաչափի փոփոխում և տեղափոխում Երկրատեղեկատվական համակարգերում (ԱՏՀ) ու քարտեզների թվայնացում:

Ճգնաժամային կառավարման ուսուցման ոլորտում իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մասնագետների պատրաստման որակի բարելավմանը, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում մարդուն իրատապ օգնության համապետական համակարգի «911» ծառայության զարգացմանն ու կատարելագործմանը՝ ծառայության մատուցումը մոտեցնելով միջազգային չափանիշներին:

Աղետների ռիսկի վերաբերյալ իրականացվել է տվյալների հավաքագրման, վերլուծության, համայնքներում աղետների ռիսկի բացահայտման և գնահատման համակարգի փուլային ներդրում, սողանքային աղետի կառավարման միասնական համակարգի փորձնական ներդրում:

Արտաքին քաղաքականություն

Արտաքին քաղաքականության ոլորտում աշխատանքներ են իրականացվել ՀՀ արտաքին քաղաքականության ուղենիշների և կառավարության ծրագրի իրականացման, բարեփոխումների և զարգացման օրակարգի խթանման, միջազգային գործընկերների և կառուցների հետ փոխգործակցության ամրապնդման ուղղությամբ՝ ՀՀ պետական շահերի պաշտպանության, ինքնիշխանության ամրապնդման, Արցախի ժողովրդի իրավունքների և անվտանգության ապահովման, պատերազմի հետևանքով ծագած հումանիտար խնդիրների հաղթահարման նպատակով:

Հայաստանի արտաքին քաղաքականության կարևորագույն գերակայությունը շարունակել են մնալ Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մանդատի ներքո միջազգային իրավունքի հայտնի սկզբունքների և տարրերի, այդ թվում՝ «անջատում հանուն փրկության» բանաձևի հիման վրա: Զանքերն ուղղված են եղել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում և նրա մանդատի ներքո Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման շուրջ բովանդակային բանակցությունների լիարժեք վերսկսմանը: Շուրջ մեկամյա դադարից հետո ինչպես շահագրգիռ պետությունների դիրքորոշման, այնպես էլ հայկական կողմի հետևողական աշխատանքի շնորհիվ 2021 թվականի սեպտեմբերի 24-ին Նյու Յորքում տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության և Ադրբեյչանի Հանրապետության արտաքին գործերի նախարարների առաջին հանդիպումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության մասնակցությամբ և միջնորդությամբ:

ԵԱՀԿ համանախագահության ձևաչափով հաջորդ հանդիպումը տեղի է ունեցել 2021 թվականի նոյեմբերի 10-ին Փարիզում, Ֆրանսիայի արտգործնախարար Լը Դրիանի բացմամբ: Հնգակողմ հանդիպման ընթացքում քննարկվել են հումանիտար բնույթի հարցեր: Հայկական կողմն ընդգծել է իր դիրքորոշումը՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացը լիարժեքորեն վերականգնելու առնչությամբ: Վերահաստատվել է դեէսկալացիայի և հումանիտար խնդիրների կարգավորման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ սաղրանքների ու հայատյաց հոետորաբանության անընդունելիությունը:

ԵԱՀԿ համանախագահության ձևաչափով հաջորդ հանդիպումը նախատեսված էր անցկացնել դեկտեմբերի 1-3-ը Ստոկհոլմում՝ ԵԱՀԿ ամենամյա նախարարական վեհաժողովի շրջանակներում: Ադրբեյչանական կողմը չեղարկել է Ստոկհոլմում նախատեսված հնգակողմ հանդիպումը՝ որպես դրդապատճառ նշելով ՀՀ ԱԺ պատգամավորների այցը Լեռնային Ղարաբաղ:

Ստուկիոլում ԵԱՀԿ ամենամյա նախարարական խորհրդաժողովի ընթացքում ԵԱՀԿ մասնակից պետությունների մեծամասնության, ինչպես նաև մի շաբթ միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից հստակ ընդգծվել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ԵԱՀԿ ՄԽ համանախագահության ձևաչափում բանակցությունների միջոցով կարգավորելու անհրաժեշտությունը:

2021 թվականի դեկտեմբերի 17-ին հայկական կողմի ջանքերով ԵԱՀԿ գործող նախագահության՝ ՇՎԵԴԻՀԱՅԻ կողմից կազմակերպվել է «ԵԱՀԿ ՄԽՆՍԿԻ կոնֆերանսի կողմից հասցեագրվող հակամարտությունը». Նախորդ տարվա ռազմական գործողությունների հետևանքներից դեպի քաղաքական կարգավորում» խորագրով համաժողով, որի շրջանակներում քննարկվել են հակամարտության վերափոխման հնարավորությունները, հումանիտար խնդիրների հասցեագրումը և քաղաքական գործնթացի վերագործարկման ուղիները:

Տարվա ընթացքում ԵԱՀԿ ՄԽՆՍԿԻ խմբի համանախագահները և համանախագահող երկրներն ընդունել են 11 հայտարարություն, որոնցում անդրադարձել են հայտնի սկզբունքների և տարրերի հիման վրա Լեռնային Ղարաբաղի հակամարտության քաղաքական կարգավորմանը, հումանիտար հարցերի հասցեագրմանը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղ մատչումի, մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանության, վստահության ամրապնդման անհրաժեշտությանը, ինչպես նաև հայ-ադրբեջանական սահմանամերձ տարածքներում ռազմական գործողություններին:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև 44-օրյա պատերազմի առաջին իսկ օրերից մեկնարկած աշխատանքներն՝ ուղղված Արցախում միջազգային կազմակերպությունների ներգրավմանն ու հումանիտար աջակցության տրամադրմանը: Առաջնահերթ նպատակ է սահմանվել բոլոր տեղահանված անձանց կամավոր, անվտանգ ու արժանապատիվ վերադարձն Արցախ:

ՄԱԿ-ի մարդասիրական մարմինների հետ շարունակաբար քննարկվել է Արցախ մարդասիրական առաքելություն ուղարկելու հարցը: Պատերազմի հետևանքով տեղահանված անձանց մարդասիրական կարիքները հոգալու նպատակով իրականացվել են աշխատանքներ, որոնց արդյունքում լրացումներ են կատարվել «2021-2025թթ. համար Հայաստան-ՄԱԿ կայուն զարգացման համագործակցության շրջանակ» փաստաթղթում (ստորագրվել է 2021թ. հունիսի 1-ին), ինչպես նաև ՄԱԿ-ի գործակալությունների, մասնավորապես՝ ՄԱԶԾ (UNDP), ՄԱԲՀ (UNFPA) և ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ Հայաստանի համար ծրագրային փաստաթղթերում:

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակը պատերազմից տուժածներին մարդասիրական օգնության տրամադրման աշխատանքների համակարգման նպատակով մեկնարկել է նաև ՄԱԿ-ի միջգործակալական արձագանքման ծրագիրը (Inter-Agency Response Plan), որը 2021 թվականի

ընթացքում աշխատանքներ է իրագործել 5 ուղղություններով՝ սննդի անվտանգություն, առողջապահություն, մարդկային անվտանգության ապահովում, կացարանների տրամադրում և վաղ վերականգնում:

Արցախի դեմ Աղրբեջանի ռազմական ագրեսիայի, հայ-աղրբեջանական սահմանին Աղրբեջանի կողմից սադրանքների և այլ առնչվող հարցերով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, ինչպես և Անվտանգության խորհրդում 2021 թվականին շրջանառվել է ավելի քան 3 տասնյակ փաստաթուղթ՝ ՄԱԿ-ի անդամ պետություններին ներկայացնելով ՀՀ հակամարտության վերաբերյալ ՀՀ դիրքորոշումները, տեղեկացնելով Արցախի և Հայաստանի անվտանգությանը սպառնացող վտանգների, Աղրբեջանի շարունակական սադրանքների մասին:

ԵԱՀԿ շրջանակներում ՀՀ մշտական առաքելության կողմից շրջանառվել է շուրջ 70 փաստաթուղթ, այդ թվում՝ Արցախի իշխանությունների հայտարարությունները: Մշտական խորհրդի ընթացիկ հարցեր կետի ներքո ՀՀ առաքելությունը գրեթե յուրաքանչյուր շաբաթ շարունակել է բարձրացնել «Արցախի և Հայաստանի դեմ Աղրբեջանի՝ Թուրքիայի և օտարերկրյա զինյալ ահաբեկչների ներգրավմամբ ագրեսիան» խորագրով հարցը՝ մասնակից պետություններին ներկայացնելով ընթացիկ իրավիճակը, Աղրբեջանի կողմից շարունակվող ագրեսիվ քաղաքականությունը, հայատյացությունը, արցախահայության իրավունքների և հայ ռազմագերիների հետ կապված խնդիրները: Նշալ հարցերին անդրադարձ է կատարվել նաև ԵԱՀԿ Անվտանգության համագործակցության ֆորումի շրջանակներում 2021 թվականի ապրիլ-օգոստոս ամիսներին ՀՀ նախագահության ընթացքում, ինչպես ՀՀ առաքելության, այնպել էլ իրավիրյալ բանախոսների միջոցով:

ԵԽ նախարարների կոմիտեի ընթացիկ քաղաքական հարցեր կետի ներքո յուրաքանչյուր շաբաթ հայկական կողմի նախաձեռնությամբ քննարկվել է «Լեռնային Ղարաբաղի հակամարտություն» խորագրով հարցը, որի շրջանակներում մասնակիցների ուշադրությանն են ներկայացվել հայ ռազմագերիների, արցախահայության իրավունքների և ընթացիկ իրավիճակի հետ կապված խնդիրները: Վերոնշյալ հարցերին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների խորհրդում:

Արցախի ժողովրդի անվտանգության ապահովման և իրավունքների պաշտպանության խնդրին անդրադարձ է կատարվել նաև ԱԳ նախարարի անունից ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշին, տասնյակ պետությունների արտաքին գործերի նախարարներին, ինչպես նաև ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով բարձր հանձնակատար Միշել Բաչելետին, ԵԽ մարդու իրավունքների հարցերով հանձնակատար Դունյա Միյատովիչին ուղղված նամակներում:

Շարունակվել են աշխատանքներն Աղբեջանում ապօրինաբար պահվող հայ ռազմագերիների և պատանդների ազատ արձակման, միջազգային բարձրաստիճան պաշտոնյաներին, պետությունների ղեկավարներին, խորհրդարանականներին, մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին և փորձագետներին խնդրի ներկայացման ուղղությամբ՝ ՄԱԿ, ԵԽ, ԵԱՀԿ համապատասխան ընթացակարգերի կիրառմամբ։ Գերիների վերադարձի հարցը բարձրաձայնվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում տեղի ունեցած հանդիպումների ընթացքում։ Գերիների խնդիրն արծարծվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններում, այդ թվում՝ համանախագահող երկրների անունց շրջանառված դեկտեմբերի 7-ի հայտարարության մեջ։

Գերիների հարցի առնչությամբ միջազգային կազմակերպություններում փաստաթղթեր են տարածվել Նյու Յորքում, Ժնևում, Ստրասբուրգում, Վիեննայում, Բրյուսելում։ << մշտական ներկայացուցիչները խնդիրը մշտապես բարձրաձայնում են բոլոր հանդիպումների, ժողովների և միջոցառումների ձևաչափերում։ Արդյունքում ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերը (Խոշտանգումների հարցով ՄԱԿ հատուկ գեկուցող, Բռնի անհետացման հարցերով ՄԱԿ աշխատանքային խմբի նախագահող և Արտադատական, արագացված մահապատիժների հարցերով հատուկ գեկուցողներ) հանդես են եկել «Լեռնային Ղարաբաղ. բոլոր գերիները պետք է ազատ արձակվեն» խորագրով հայտարարությամբ, որում հղում են կատարում 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը։ ԵՄ շրջանակներում հայ գերիների վերադարձի անհրաժեշտության խնդիրը բարձրացվել է Եվրոպական հանձնաժողովի նախագահի, ԵՄ Արտաքին հարաբերությունների ծառայության խոսնակի, Եվրոպական խորհրդարանի 100-ից ավելի պատգամավորների կողմից։ Մի շարք պատգամավորներ իրենց երկրների հայտնի օրաթերթերում հանդես են եկել նաև խնդիրն առնչվող հոդվածներով։ ԵԽԵՎ հունվարյան նստաշրջանի ընթացքում ռազմագերիների վերադարձի հարցը ներառվել է վեհաժողովի մոնիթորինգային գործընթացների վերաբերյալ բանաձևում՝ կոչ անելով «անհապաղ իրականացնել ռազմագերիների և մարմինների փոխանակում» (ԵԽԵՎ բանաձև թիվ 2357 (2021), 11-րդ պարբերություն)։ ԵԽԵՎ Մոնիթորինգային կոմիտեն իրապարակել է հայտարարություն, որտեղ, վկայակոչելով ՄԻԵԴ ձևակերպումներն Աղբեջանի կողմից անօրինական կերպով պահվող 188 հայ ռազմագերիների վերաբերյալ, հորդորել է Աղբեջանին վերադարձնել նրանց հայրենիք։ ԵԽԵՎ Միգրացիայի, փախստականների և տեղահանված անձանց հարցերով կոմիտեի «Հայաստանի և Աղբեջանի միջև հակամարտության հումանիտար հետևանքները/ԼՂ հակամարտություն» գեկուցում անդրադարձ է կատարվում հայ գերիների խնդրին, այդ թվում՝ նաև բռնի անհետացումների դեպքերին (խոսքն այն հայ գերիների մասին է, որոնց գերեվարման վերաբերյալ առկա են ապացույցներ, սակայն

Աղորեցանը հերքում է նրանց գերեվարումը): Human Rights Watch իրավապաշտպան կազմակերպությունը Հայաստան և Լեռնային Ղարաբաղ կատարած այցի արդյունքում հրապարակել է զեկույց, որում տեղ են գտել հստակ ձևակերպումներ հայ գերիների խոշտանգումների վերաբերյալ՝ դրանք որակելով որպես պատերազմական հանցագործություն: Հայ գերիների վերադարձի խնդրին է անդրադարձել նաև Freedom House իրավապաշտպան կազմակերպությունը: Մայիսի 20-ին Եվրոպական խորհրդարանը 607 անդամների ձայնով ընդունել է հայ գերիների անհապաղ ազատման և վերադարձի կոչ անող բանաձև:

ԱԳՆ կողմից շարունակվել է համագործակցությունը մշակութային արժեքների պաշտպանության ոլորտում գործող միջազգային կազմակերպությունների (ՅՈՒՆԵՍԿՕ) հետ՝ ուղղված Արցախի հայկական մշակութային և կրոնական ժառանգության երաշխավորված պաշտպանությանը: Մասնավորապես՝ ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր միջազգային հանրության ուշադրությունը կատարվող հանցագործություններին սևեռելու, պատմամշակութային հուշարձանների, հնագիտական վայրերի և թանգարանային առարկաների դիտավորյալ ոչնչացման և վնասման դեպքերը դատապարտելու և կանխելու ուղղությամբ:

Ակտիվ համագործակցություն է ծավալվել նաև մշակութային արժեքների պաշտպանության հարցերով զբաղվող միջազգային այլ կառույցների և կազմակերպությունների հետ, այդ թվում՝ Համաշխարհային հուշարձանների հիմնադրամի, Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ), Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի (ԻԿՕՄՕՍ), «Կապույտ վահան» միջազգային կազմակերպության, Հնագետների Եվրոպական ասոցիացիայի, Հակամարտության գոտիներում ժառանգության պաշտպանության հարցերով միջազգային դաշինքի (ALIPH), Մշակութային արժեքների պահպանման և վերականգնման հարցերով միջազգային հետազոտական կենտրոնի (ԻԿԿՈՄ), Եվրոպա Նոստրա ՀԿ-ի հետ: Վերջիններիս ուշադրությունը հրավիրվել է Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանների և հնագիտական վայրերի վտանգված լինելու խնդրին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ վարվող շարունակական աշխատանքների շրջանակներում՝ Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի ազգային հանձնաժողովի կողմից պարբերական սկզբունքով պատրաստվել և կազմակերպության գլխավոր տնօրենին, ինչպես նաև անդամ երկրների ազգային հանձնաժողովներին են ներկայացվել պատերազմի ընթացքում և դրանից հետո հայկական մշակութային ժառանգության հուշարձանների միտումնավոր թիրախավորումն ու ռմբակոծումը հիմնավորող, ինչպես նաև հայկական քրիստոնեական հուշարձաններն աղվանական ներկայացնելու միջոցով դրանց ինքնության աղավաղմանն ուղղված ադրբեջանական հետևողական քաղաքականության մասին համապարփակ նյութեր և փաստեր:

Հայաստանը կառուցողական կերպով ներգրավված է Եղել Արցախ և հարակից շրջաններ ՅՈՒՆԵՍԿՕ-ի փաստահավաք առաքելության հնարավորինս արագ գործուղման գործընթացում: Շարունակական ակտիվ ջանքեր են գործադրվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր տնօրենի կողմից ի սկզբանե հայտարարված և Զինված հակամարտությունների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954թ. Հաագայի կոնվենցիայի Երկրորդ արձանագրության միջկառավարական կոմիտեի հայտարարությամբ վերահաստատված ծևաչափով առաքելությունն իրականացնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետության դիվանագիտության ծառայության առաջնահերթությունների շարքում է Եղել նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և դատապարտումը, ինչպես նաև Հայաստանի ակտիվ ներգրավվածությունը ցեղասպանությունների, մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելմանն ուղղված միջազգային ջանքերում:

Հաշվետու տարում շարունակվել են Ռուսաստանի հետ բոլոր ուղղություններով դաշնակցային հարաբերությունների և ռազմավարական գործընկերության ամրապնդմանն ու հետագա ընդլայնմանն ուղղված ջանքերը: Տարին նշանավորվել է բարձր մակարդակներում քաղաքական ակտիվ երկխոսությամբ, տարածաշրջանային և միջազգային հարթակներում քայլերի համակարգմամբ, տարբեր բնագավառներում սերտ համագործակցությամբ, այդ թվում՝ ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ ոլորտներում:

Հայաստանի Հանրապետությունն ակտիվորեն մասնակցել է Եվրասիական տնտեսական ինտեգրման խորացման, ԵԱՏՄ անդամ պետությունների հետ համագործակցության ընդլայնման, Եվրասիական տարածաշրջանի տնտեսական ներուժի բացահայտման և իրացման գործընթացին:

Քայլեր են ձեռնարկվել ՀԱՊԿ շրջանակներում իրականացվող համագործակցության հետագա խորացման ու կառույցի նորմատիվ-իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ:

2021 թվականի ընթացքում հայ-ամերիկյան հարաբերություններում նկատվել է զգալի առաջընթաց, ինչը պայմանավորված է Եղել ամերիկյան նոր վարչակազմի վարած քաղաքականությամբ և հայկական կողմի՝ ԱՄՆ հետ հարաբերությունները տարբեր ոլորտներում զարգացնելու պատրաստակամությամբ: Հաշվետու տարվա ընթացքում կայացել են ամերիկյան բարձրաստիճան պատվիրակությունների մի շարք այցեր:

2021 թվականի սկզբին ավարտվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի վավերացման գործընթացը: Մարտի 1-ից Համաձայնագիրը լիովին ուժի մեջ է մտել: 2021 թվականի մայիսի 26-ին Միջգերատեսչական հանձնաժողովը հավանության է արժանացրել մարտի 1-ից ուժի մեջ մտած ՀՀԳՀ դրույթների վերաբերյալ ճանապարհային քարտեզը, որի իրականացումը ՀՀ վարչապետի 587-Լ որոշմամբ ուժի մեջ է մտել 2021 թվականի հունիսի 1-ից:

Վերջինս բաղկացած է 300-ից ավելի միջոցառումներից, որոնք վերաբերում են ամենատարբեր ոլորտներին, այդ թվում՝ կրթության և գիտության, առողջապահության, սոցիալական պաշտպանվածության, ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի, պաշտպանության, տնտեսության և այլ ոլորտների:

Հաշվետու տարում Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական հարաբերությունները զարգացել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում: Պատերազմից հետո առավել ընդգծվել են այս երկրների հետ տարածաշրջանային հարցերով երկխոսությունն ամրապնդելու ջանքերը:

Շարունակվել է փոխգործակցության խորացումը տարբեր աշխարհագրություններով, այդ թվում՝ Եվրասիական տարածաշրջանի, Եվրոպական, Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հետ: Հայաստանը շարունակել է աշխատանքները Հյուսիսային և Հարավային Ամերիկայի երկրների հետ հարաբերությունների զարգացման ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունը խորացրել է իր ներգրավվածությունը ՄԱԿ-ի կառույցներում, ՖՄԿ-ում, ԱՊՀ-ում, ԵԽ-ում, ԵԱՀԿ-ում, ՆԱՏՕ-ում:

«ՀՐՈՒ խաղաղապահ ուժերի ստորաբաժանումները շարունակել են իրենց մասնակցությունը Լիբանանում, Մալիում, Կոստվոյում: ՆԱՏՕ-ի «Հաստատակամ աջակցություն» առաքելության շրջանակներում Գերմանիայի խաղաղապահ զորակազմի՝ Աֆղանստանից դուրս գալուց հետո հայ խաղաղապահները ևս ավարտել են գերմանական իրամանատարության ներքո իրականացվող առաքելությունը: Շարունակվել է «Հ ականազերծման առաքելությունը Միրիայում:»

«ԱԳՆ կողմից, դեսպանությունների գործուն ջանքերով իրականացվել է մի շարք երկրների կողմից կորոնավիրուսային համավարակի դեմ պայքարի շրջանակներում Հայաստանին մարդասիրական աջակցության տրամադրումը:»

Հաշվետու ժամանակահատվածում «Հ կառավարության կողմից աջակցություն է ցուցաբերվել Մերձավոր Արևելքի վտանգված հայ համայնքներին: Այդ թվում՝ ԱԳՆ կողմից համակարգվել է տարբեր խողովակներով տրամադրվող մարդասիրական օգնությունը Լիբանանի Հանրապետությանը՝ լիբանանահայ համայնքին:»

Հանդիպումներ և փոխայցելություններ. Հաշվետու ժամանակահատվածում կայացել է «Հ նախագահի 12 այց, այդ թվում՝ 1 պետական, 2 պաշտոնական, «Հ վարչապետի 17 այց, այդ թվում՝ 2 պաշտոնական, ԱԳ նախարարի՝ 14 աշխատանքային այց: Հայաստան են այցելել 6 երկրի կառավարությունների դեկավարներ, 12 երկրի ԱԳ նախարարներ, 5 միջազգային կազմակերպությունների դեկավարներ:»

Իրավապայմանագրայի ոլորտ. 2021 թվականի ընթացքում նախապատրաստվել և ստորագրման է ներկայացվել 58 միջազգային պայմանագիր, իրականացվել է 38 միջազգային պայմանագրի վավերացման կամ հաստատման գործընթաց:

Միջազգային հանրային կարծիք. 2021 թվականի ընթացքում շարունակվել են << արտաքին քաղաքականության դիրքորոշումների վերաբերյալ միջազգային իրազեկվածության բարձրացմանը, Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդմանն ուղղված աշխատանքները: Համակարգվել է միջազգային ԶԼՄ ներկայացուցիչների գործունեությունը Հայաստանում և Արցախում:

Հանրապետության նախագահը, վարչապետն ու արտաքին գործերի նախարարը մի քանի շարք հարցազրույցներ են տվել միջազգային հեղինակավոր լրատվամիջոցներին, հանդես են եկել մամուլի ասովիսներով՝ ներկայացնելով տարածաշրջանային և միջազգային տարբեր գործընթացների խնդիրների ու դրանց հանգուցալուծման վերաբերյալ Հայաստանի դիրքորոշումները:

Արդարադատություն

Դատաիրավական ոլորտ

Հաշվետու տարում դատաիրավական ոլորտում իրականացվել են << կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1441-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունից բխող գործողություններ, նախաձեռնվել է Սահմանադրական բարեփոխումների իրականացման խորհրդի ստեղծման գործընթաց:

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 14-ին ընդունվել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով նախատեսվում է Հակակոռուպցիոն մասնագիտացված դատարանի ստեղծումը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի ուժով 2021 թվականին ներդրվել է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ վերահսկողություն իրականացնող և օպերատիվ-հետախուզական միջնորդություններ քննող դատավորների ինստիտուտը:

2021 թվականի ընթացքում դատական համակարգում դատավորների հաստիքների թվաքանակն ավելացվել է 38-ով:

2021 թվականին սկսվել և 2022 թվականի սկզբին ավարտին է հասցվել Վճռաբեկ դատարանում քաղաքացիական, վարչական, ինչպես նաև նոր հակակոռուպցիոն պալատ ստեղծելու գործընթացը:

2021 թվականի դեկտեմբերին հանրային քննարկման է ներկայացվել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով նախատեսվում են մի շարք լավարկումներ, որոնք էականորեն կբարելավեն ապօրինի ծագում ունեցող գույքի հայտնաբերման և բռնագանձման գործընթացները:

Հանրապետության երեք քաղաքներում գործարկվել են ՔԿԱԳ, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի, Սոցիալական ապահովության ծառայության, Պետական եկամուտների կոմիտեի, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության սպասարկման միասնական կենտրոնները: 2021 թվականի փետրվարից հջևան քաղաքում, իսկ մարտից՝ Գյումրի քաղաքում գործարկված միասնական գրասենյակներում տեղեկայվել են նաև ԱՎՎ ստորաբաժանումներ: Իսկ ներկայումս աշխատանքներ են իրականացվում Վանաձոր քաղաքում հանրային ծառայությունների մատուցման միասնական գրասենյակ ստեղծելու ուղղությամբ:

«Սնանկության մասին» օրենքում կատարվել են համապատասխան փոփոխություններ՝ վերանայելով սնանկության կառավարչին ներկայացվող պահանջները և նշանակման կարգը:

Բարձրացվել է սնանկության կառավարիչների մասնագիտական պատրաստվածության մակարդակը, զարգացվել են նրանց կարողությունները, ապահովվել է սնանկության գործերի արդարացի բաշխումը սնանկության կառավարիչների միջև, ամրապնդվել է կառավարիչների անկախությունը, և բարձրացվել է վերջիններիս պատասխանատվությունը:

Հակակոռուպցիոն ոլորտ

2021 թվականի ընթացքում Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացում իրականացվել են հետևյալ հիմնական քայլերը.

- Ազգային ժողովի կողմից 2021 թվականի մարտի 24-ին ընդունվել են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը և հարակից օրենքները: Միաժամանակ, տարվել են սույն իրավական ակտերից բխող ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակման աշխատանքները,
- մասնավոր ոլորտում թափանցիկության բարձրացման, իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման գործուն մեխանիզմներ ներդնելու նպատակով 2021 թվականի հունիսի 3-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է իրավաբանական անձանց իրական

շահառուների բացահայտման պարտադիր պահանջի սահմանման ուղղված օրենսդրական փաթեթը,

• հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի կատարելագործման նպատակով 2021 թվականի հունվարի 19-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է ««Հանրային ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքը և հարակից օրենքների փաթեթը,

• տարվել են աշխատանքներ հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մարմինների նյութական և շենքային պայմանների ապահովման նպատակով,

• մշակվել և 2021 թվականի նոյեմբերին շահագրգիռ կողմերին կարծիքի են ուղարկվել «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցով առաջարկվում է վերանայել խոշտանգման վերաբերյալ քրեական գործերով առկա կարգավորումները,

• Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ), Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ), ինչպես նաև այլ միջազգային կառույցների հետ համագործակցության շրջանակներում իրականացվել են միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված գործողություններ,

• մշակվել է «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում 2022 թվականի հաղորդակցման գործողությունների ծրագրիր հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը,

• իրականացվել են Հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված միջոցառումները, վերահսկվել է այլ մարմինների կողմից Ռազմավարության միջոցառումների ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքների իրականացումը:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտ

Շրջանառվել, հանրային քննարկումների լայնածավալ փուլ անցնելուց հետո 2021 թվականին ընդունվել են ՀՀ քրեական նոր օրենսգրքի, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի, «ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը, որոնցով գործող օրենսդրության մեջ ներդրվել են համաձայնեցման և համագործակցության վարույթները: Օրենսգրերի ուժի մեջ մտնելու ժամկետ է սահմանվել 2022 թվականի հուլիսի 1-ը, իսկ առանձին դրույթներ ուժի մեջ են մտնելու ավելի ուշ:

Ազատությունից գրկված անձանց համար վերասոցիալականացման արդյունավետ միջոցառումների կազմակերպման, արժանապատիվ պահման պայմաններ, քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների համար պատշաճ աշխատանքային կենսապայմաններ ապահովելու, պետական ռեսուրսների խնայման և քրեակատարողական համակարգի միջոցներն այդ ուղղությամբ արդյունավետ և թիրախավորված բաշխելու նպատակով << արդարադատության նախարարության կողմից մեկնարկ է տրվել քրեակատարողական հիմնարկների օպտիմալացման գործընթացին, ինչի արդյունքում << կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1755-Ն որոշման կարգավորումների համաձայն՝ 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է << ԱՆ «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների գործունեությունը, իսկ հիմնարկներում պահպող ազատությունից գրկված անձինք տեղափոխվել են այլ քրեակատարողական հիմնարկներ:

Օպտիմալացման պլանին զուգահեռ նախատեսվել է կառուցել քրեակատարողական նոր հիմնարկ, որի ուղղությամբ ներկայում իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես պլանավորվում է իրականացնել (առկա է ծառայությունների ձեռքբերման հայտարարություն) քրեակատարողական նոր հիմնարկ նախանշված տարածքի ինժեներակրաբանական հետազննությունը:

Եվրոպայի խորհրդի հետ արդյունավետ համագործակցության շրջանակներում ընթացիկ տարում իրականացվել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների գնահատում: Գնահատման արդյունքներով նախատեսվում է բանտային բժշկության ոլորտում ներդնել ազատազրկված անձանց համար բժշկական տվյալների գաղտնիության ապահովմամբ, բնակչության շրջանում մատուցվող բժշկական խորհրդատվությունների ծավալին և որակին համապատասխանող, միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին համապատասխան հեռաբժշկության մոդելը, ինչը, ի թիվս այլնի, թույլ կտա նվազեցնել ազատությունից գրկված անձանց մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման ձգձգման ռիսկը, մյուս կողմից լրացնել տեղում մասնագետների հնարավոր պակասը: Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի կողմից հեռաբժշկության մոդելի ներդրման նպատակով անհրաժեշտ սարքավորումների (այդ թվում՝ բժշկական), ինչպես նաև ծրագրային ապահովման (նախատեսվում է ՊՈԱԿ-ի համար ներդնել Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ և այն կցել հանրային առողջապահական համակարգին) ձեռք բերման նպատակով հայտարարվել է մրցույթ, որի արդյունքում արդեն իսկ առկա է հաղթող ճանաչված մասնակից:

Ապահովվել են քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի ռազմավարության՝ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների իրականացման աշխատանքները:

Քրեակատարողական համակարգում վարչարությունը կրճատելու, համակարգի գործունեությունը թափանցիկ և հաշվետու դարձնելու նպատակով՝ e-penitentiary էլեկտրոնային կառավարման համակարգի պատշաճ ներդրման համար քրեակատարողական համակարգի աշխատակիցները վերապատրաստվել են: Համակարգն ամբողջությամբ գործարկվել է:

Պրոբացիայի ծառայությանն էլեկտրոնային հսկողության միջոցներով զինելու նպատակով իրականացվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ: Ուսումնասիրվել են տեղական և արտասահմանյան կազմակերպությունների արտադրանքները: Վերջիններիս արտադրանքը պիլոտային տարբերակով փորձարկվել է Պրոբացիայի ծառայությունում:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտ

Իրականացվել են Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումները, մասնավորապես միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ մշակվել է խոշտանգումից տուժած անձանց ռեարիլիտացիայի իրավունքի վերաբերյալ միջազգային չափանիշների, արտասահմանյան փորձի և ներպետական օրենսդրության, պրակտիկայի համեմատական դիտարկմանն առնչվող հետազոտությունը, մշակվել և տպագրվել է «ֆիզիկական ուժեղ ցավ» և «հոգեկան տառապանք» եզրույթների մեկնաբանման և կիրառման վերաբերյալ ուղեցույցը, մշակվել է երեխաների նկատմամբ մարմնական պատժի արգելքին ուղղված օրենսդրության բարեփոխման անհրաժեշտությունը հիմնավորող ուսումնասիրությունը, իրականացվել է մարդու իրավունքների պաշտպանության գործունեությամբ գրաղվող անձանց քրեական և իրավական պաշտպանության երաշխիքների ամրապնդմանն ուղղված ուսումնասիրություն:

Իրականացվել է «Բռնությունը լրության մեջ է» խորագրով իրազեկման արշավը, որի նպատակն էր բարձրաձայնել ընտանիքում բռնության կանխարգելման և զոհերին ու վերապրածներին հասանելի աջակցության մեխանիզմների մասին: Արշավի շրջանակներում գործարկվել է www.violenceinsilence.org կայքէջը, ֆեյսբուքյան էջը, իրականացվել է 2 սոցիալական էքսպերիմենտ, թողարկվել ինտերակտիվ հոլովակներ, մշակվել և տեղադրվել են սոցիալական պաստառներ: Արշավի ամփոփիչ հոլովակը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=9GM4PQO-P40>:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտ

2021 թվականի հունվարի 19-ին ընդունվել է «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» օրենքը, որով ՔԿԱԳ տարածքային մարմինները վերացվել են: Կառավարության 16.09.2021թ. թիվ 1531-Ն որոշմամբ հաստատվել է ՔԿԱԳ հետ կապված գործառույթների կատարման համար տեղական ինքնակառավարման մարմիններում ստեղծված սպասարկման կենտրոնների նստավայրերի, հաստիքային միավորների ցանկերը:

ՔԿԱԳ ոլորտում 2021 թվականին շարունակվել են քաղաքացիական կացության ակտերի թվայնացման և արխիվացման աշխատանքները:

Ուսումնասիրվել են օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և ՀՀ տարածքից դուրս բնակվող ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու նպատակով որպես որդեգրել ցանկացող անձ հաշվառվելու նպատակով ներկայացված դիմումները, ապահովվել է «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» կոնվենցիայի շրջանակներում կենտրոնական մարմնի լիազորությունների իրականացումը, կազմակերպվել է որդեգրման ենթակա երեխայի համադրման գործընթացը, ապահովվել է ՀՀ արդարադատության նախարարության ներկայությունը դատարանում:

Անձնական տվյալների պաշտպանության ոլորտ

2021 թվականին զգայի աշխատանքներ են իրականացվել անձնական տվյալների պաշտպանության ոլորտում: Անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից տրամադրվել է 249 խորհրդատվություն, հարուցվել է 50 վարչական վարույթ, տրվել է ավելի քան 203 գրավոր կարծիք, ներկայացվել է 41 ծանուցում, իրականացվել է 52 ուսուցում: Տեղի են ունեցել հանդիպումներ, քննարկումներ, հարցազրույցներ: Գործակալության ֆեյսբուքյան էջում հրապարակվել է 64 խորհրդատվական և իրազեկող նյութ:

Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի ոլորտ

2021 թվականի փետրվարի 26-ին ուժի մեջ է մտել «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների փաթեթը, որով նախատեսվել էին հետևյալ հիմնական փոփոխությունները.

- Առևտրային կազմակերպությունների սկզբնական գրանցման ժամկետը երկու աշխատանքային օրից կրճատվել է մեկ աշխատանքային օր.

- Նպատակ ունենալով նաև խրախուսել առցանց ծառայություններից օգտվելը՝ վերացվում է 3000 դրամ պետական տուրքի վճարման պահանջը առցանց անհատ ձեռնարկատեր հաշվառվելու դեպքերի համար, առևտրային կազմակերպությունների գրանցման համար պետական տուրք նախատեսված չէ.
- Սահմանվել է մահացած անհատ ձեռնարկատիրոջը ինքնաշխատ եղանակով հաշվառումից հանելու հնարավորություն.
- Հեշտացվել են իրավաբանական անձի գտնվելու վայրի փոփոխության, օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական անձ մասնակցի մասին տեղեկությունների փոփոխության գրանցման կարգերը.
- Նախատեսվել է նաև որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու նպատակով լիազորված անձի կողմից թղթային եղանակով դիմում ներկայացնելու հնարավորություն.
- Լուծարման գրանցման համար պահանջվող՝ դատական դեպարտամենտից և ԴԱՀԿ-ից ներկայացվող տեղեկանքների վաղեմության ժամկետը սահմանվել է 10 աշխատանքային օր.
- Սահմանվել է դիմող անձի կողմից պետական գրանցման նախընտրելի ժամկետ նշելու հնարավորություն.
- Հստակեցվել են իրավաբանական անձի ռեդոմիցիլացման մասին պետական միասնական գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունների ցանկը, ռեդոմիցիլացման գրանցման ժամկետները.
- Սահմանվել է նաև ԿԲ-ի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վերաբերյալ պետական միասնական գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունների ցանկը.
- Սահմանվել է Գործակալության սպասարկման գրասենյակների գործառույթները ՀՀ հյուպատոսական հիմնարկների կողմից իրականացվելու հնարավորություն՝ հեշտացնելով նաև ՀՀ տարածքից դուրս գտնվող քաղաքացիներին Հայաստանում բիզնես հիմնադրելու եղանակով ներդրումների իրականացման համապատասխան գործնթացների կազմակերպումը.
- Սահմանվել է հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի որոշումներ ներկայացնելու հնարավորություն՝ հոգաբարձուների խորհրդի որոշումները խորհրդի նախագահի կողմից ստորագրվելու պայմանով.
- Արհեստակցական միությունների պետական գրանցման սահմանված 30-օրյա ժամկետը կրճատվել է՝ սահմանվելով 10 աշխատանքային օր,
- Սահմանվել է ՍՊ ընկերությունների վերակազմակերպման կարգը:

Հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է www.e-register.am և www.azdarar.am կայքերի վարումը, իրապարակվել է 195471 հայտարարություն:

Հարկադիր կատարման ոլորտ

2021 թվականին գործարկվել է հարկադիր Էլեկտրոնային աճուրդի <http://harkadir.ajurd.am/hy/> նոր կայքը՝ նոր գործիքակազմերով: Իրականացվել է անձնագրային հարցումների ամբողջական ավտոմատացում, ներդրվել է ոչ ռեզիդենտ քաղաքացիների անձնագրերերով վարչական ակտերի խմբային արգելանք կիրառելու հնարավորություն, Էլեկտրոնային վարույթների շտեմարանում ՃՌ որոշումների խմբային գեներացում և ուղարկում «Հայփոստ» ՓԲԸ, սոցիալական քարտից հրաժարված քաղաքացիների նույնականացման մեխանիզմը:

Մշակվել և գործարկման փուլում է գտնվում ավտոմատ բռնագանձումների և ազատումների մոդուլը:

Սփյուռք

«Հառավարության՝ Հայաստան-Սփյուռք գործակցության կապերի զարգացմանը և ամրապնդմանն ուղղված միջոցառումների շրջանակներում «Հարչապետի աշխատակազմի սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից իրականացվել է «Քայլ դեպի տուն» միջոցառումը, որի նպատակն է նպաստել Սփյուռքում բնակվող հայ պատանիների և երիտասարդների ազգային ինքնության գիտակցության բարձրացմանը, հայրենիքի հետ կապերի ամրապնդումը, հայրենադարձության խթանումը՝ Հայրենիք այցելությունների միջոցով: Միջոցառմանը մասնակցել են 24 երկրից Ժամանած 13-18 տարեկան 400 սփյուռքահայ պատանիներ ու երիտասարդներ: Միջոցառումն ունի ուսումնաճանաչողական և կրթամշակութային ուղղվածություն, և ամբողջ կրթական բաղադրիչն իրականացվել է «Դասավանդի՛ր Հայաստան» կրթական իիմնադրամի կողմից՝ կառավարության առաջադրած պահանջներին համապատասխան:

««իԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգրավում «և Արցախի պետական կառավարման համակարգում» միջոցառման շրջանակներում 2021 թվականին «Հարչապետի կառավարման համակարգի 19 մարմիններում ներգրավվել են աշխարհի 14 երկրից Ժամանած 48 սփյուռքահայ մասնագետներ: 2020 թվականին միջոցառմանը ներգրավվել էին թվով 50 սփյուռքահայ մասնագետ, որոնց մասնակցությունը միջոցառմանը ավարտվել է 2021 թվականին: Նշալ մասնագետներից 14-ը 2021 թվականին պաշտոններ են ստանձնել «Հարչապետի կառավարման մարմիններում: 2021 թվականին միջոցառման մասնագետների շրջանակներում արձանագրվել է 70% հայրենադարձության ցուցանիշ:

Աշխատելով բազմամիլիոնանոց սփյուռքի հետ՝ տեղեկատվության հասանելիությունը և տարաբնույթ մեջիա գործիքների կիրառումը դառնում են այն իիմնական ուղիներից մեկը, որոնք

լրացնում են հայրենիքի և համայնքների միջև առկա ֆիզիկական հեռավորությունը: «Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ իրազեկման ապահովում» միջոցառման շրջանակում տարաբնույթ լրատվական, տեղեկատվական, վերլուծական ձևաչափերով սփյուռքին են ներկայացվել հայապահպանության, Սփյուռքի ներուժի ներգրավման, համահայկական ցանցերի և մասնագիտական խմբերի, կառույցների, Հայաստան-Սփյուռք ծրագրերի, նախաձեռնությունների, կամավորության հնարավորություններին, Սփյուռքի հետ աշխատանքի պետական մոտեցումների, հայրենադարձների և նրանց ինտեգրման, Հայաստանի պատմության և ներկայիս զարգացումների, ներդրումների վերաբերյալ հաղորդաշարեր, նյութեր, ֆոտոպատմություններ, ֆիլմեր, անհմացիոն հոլովակներ: Սփյուռքի հնարավորինս լայն շրջանակներին հասանելի դարձնելու համար բոլոր մեղիանութերը թարգմանվել են արևմտահայերեն և անգլերեն:

«Աշխատանք Սփյուռքի համայնքներում» միջոցառման շրջանակներում կազմակերպվել են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի աշխատանքային այցելությունները Ռուսաստանի, Ուկրաինայի և ԱՄՆ-ի հայաշատ համայնքներ, որոնց ընթացքում տեղի են ունեցել շուրջ 80 հանդիպումներ համայնքային կառույցների և անհատների հետ: Հանդիպումների արդյունքում առաջարկվել է առկա խնդիրների լուծման ուղիների երկկողմանի մշակում և իրականացման օժանդակում:

«Հայրենադարձության և ինտեգրման կենտրոն» միջոցառումն իրականացնելու համար տարվել են մի շարք աշխատանքներ:

«Սփյուռքի մարդկային ներուժի վերհանում, դրա քարտեզագրում և տեղեկատվական բազայի ստեղծում» միջոցառման շրջանակներում ստեղծվել է տեղեկատվական համակարգ, որտեղ ամփոփվում է Սփյուռքի մարդկային ներուժի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը:

Կրթություն

Կրթության ոլորտում շարունակվել են հիմնական բարեփոխումները, որոնց նպատակն է կրթության որակի բարձրացումը, բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության հավասար մատչելիության ապահովումը կրթության բոլոր (նաև՝ նախադպրոցական) մակարդակներում և համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:

Հանրակրթություն

Հանրակրթության ոլորտում ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված՝ 3-5 տարեկան նախադպրոցահասակ երեխաների 85% ընդգրկվածության թիրախն ապահովելու նպատակով, իրականացվել են իրավական դաշտի բարելավմանն ուղղված աշխատանքներ.

- «ՀԳՄՍ նախարարի 2021թ. հունվարի 26-ի N20-Ն հրամանով հաստատվել է «Նախադպրոցական կրթության այլընտրանքային, ծախսարդյունավետ մոդելների և դրանց ներդրման» կարգը,
 - «Հ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի N598-Ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ նախադպրոցական կրթության ոլորտում համընդիանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանը և ժամանակացույցը»,
 - «Հ կառավարության 2021թ. հունիսի 15-ի N1169-Ն որոշմամբ հաստատվել է «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորման, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» կարգը,
 - «ՀԳՄՍ նախարարի 2021թ. դեկտեմբերի 16-ի՝ N55-Լ, N60-Լ հրամաններով հաստատվել են նախադպրոցական կրթական համալիր ծրագրեր՝ տարիքային բոլոր խմբերի երեխաների համար:

Ընդլայնվել են հանրակրթական ուսուցիչների մասնագիտական առաջընթացը խթանող մեխանիզմներն ու հնարավորությունները. << Կառավարության 2021թ. ապրիլի 1-ի N466-Ն որոշմամբ վերանայվել է հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը: 2021 թվականի սեպտեմբերին անցկացվեց կամավոր ատեստավորվող ուսուցիչների առարկայական գիտելիքների ստուգում՝ 8 առարկաների ուսուցիչների համար: Արդյունքում 478 ուսուցիչ կատանա հավելավճար 30-50 տոկոսի չափով:

Հանրակրթության բովանդակային արդիականացման նպատակով, «Հառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի՝ «Հառավարության 2010թ. ապրիլի 8-ի N439-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N136-Ն որոշմամբ վերանայվել է հանրակրթության պետական չափորոշիչը: «ԿԳՄՍ նախարարի (2021թ. ապրիլի 30-ի NN08-Լ-27-Լ, մայսի 7-ի N28-Լ) հրամաններով հաստատվել են առարկայական նոր չափորոշիչները և ծրագրերը, որոնք 2021-2022 ուսումնական տարում սկսել են փորձարկվել «Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում: Իրականացվել են վերապատրաստումներ «Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների բոլոր ուսուցիչների համար:

2020-2021 թվականներին 107 ավագ դպրոցներում ներդրվել են ժամանակակից բնագիտական առարկաների գծով 335 յաբորատորիաներ: 2021 թվականին ներդրվել են նաև.

1) «Հավելի մարզի 80 դպրոցներում լաբորատորիաներ,

2) 504 առանձին դպրոցներում լաբորատորիաներ,

3) 293 ցանցային լաբորատորիաներ:

Հանրակրթության հասանելիությունը ապահովելու նպատակով շարունակվել են նաև «Հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրելու աշխատանքները, ինչպես նաև տրանսպորտային ծախսերի փոխհատուցման գումարների տրամադրումը մարզերի՝ իրենց բնակավայրերից դուրս աշխատող մանկավարժներին և սովորողներին։ Այդ ուղղություններով աշխատանքները բարելավելու նպատակով։

- 2021 թվականի հուլիսի 9-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 14-ի N 40-ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 48-Ն հրամանը, որով լրամշակվել է մանկավարժների գործուղման կարգը,

- 2021 թվականի հոկտեմբերի 8-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 47-ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 74-Ն հրամանը, որի արդյունքում լրամշակվել է փոխհատուցման տրամադրման կարգը։

Ընդլայնվել է հեռավար կրթության կազմակերպման համակարգը՝ Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն ՊՈԱԿ-ում գործող հեռավար ուսուցման կենտրոնի (ՀՈՒԿ-ի) և արդեն ընտրված մենթոր դպրոցների միջոցով։ «Հ մարզային դպրոցներում բացակա ուսուցիչների խնդիրը լուծելու նպատակով, E-school Armenia նախագծի շրջանակներում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ մեկնարկել է «101 դպրոց» ծրագիրը։

Հեռավար կրթության կազմակերպման համապարփակ և ապակենտրոնացված հարթակ ստեղծելու նպատակով ԱՀԲ-ի տեխնիկական աջակցության ծրագրի շրջանակում մշակվել է Հեռավար կրթության հարթակը։

Շարունակվել են Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (ԿԿՏՀ) ամբողջականացման աշխատանքները։ «Հ ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի օգոստոսի 17-ի N65-Ն հրամանով հաստատվել է «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի վարման և կրթության ոլորտի պետական վարչական ռեգիստրի ներդրման» կարգը։

Շարունակվել է նաև տարրական դասարանների աշակերտներին, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին և սահմանամերձ համայնքների սովորողներին անվճար դասագրքերով ապահովման գործընթացը։ 2021 թվականի փետրվարի 12-ին ընդունվել է «Հառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի

18-ի N 1444-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2021 թվականին Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներին տրվող սոցիալական աջակցության փոխհատուցման ենթակա ծավալները և փոխհատուցման կարգը հաստատելու մասին» թիվ 184-Ն որոշումը, որով ամրագրվել է սահմանամերձ բնակավայրերում տեղակայված հանրակրթական դպրոցների աշակերտներին դասագրքերի գումարների փոխհատուցման կարգը: 2021 թվականին փոխհատուցում է տրվել 9338 աշակերտի:

«Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում» ծրագրի շրջանակում սննդով ապահովվել են <<Արարատի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, Շիրակի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Լոռու մարզերի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցի նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված երեխաները:

2021 թվականին շարունակվել է 21 համայնքներում փոքրաթիվ համակազմ ունեցող դպրոցների համար մոդուլային շենքերի կառուցման գործընթացը:

Միաժամանակ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ-ի «Կրթության բարելավում» վարկային ծրագրի 2-րդ փուլով իրականացվել են 8 ավագ դպրոցների մասնաշենքերի հիմնանորոգման աշխատանքներ:

Հանրակրթության ոլորտն ամբողջությամբ անցում է կատարել համընդհանուր ներառական կրթության՝ համակարգը ներդրվել է նաև Վայոց Ձորի և Արարատի մարզերում: << տարածքում արդեն իսկ գործում են 17 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ (ՏՄԱԿ) և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը, իսկ 3 մարզերում ծառայությունները պատվիրակվել են առանձին կազմակերպությունների:

ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ ընթացքի մեջ են Գեղարքունիքի մարզի 9 դպրոցի և 1 ՏՄԱԿ-ի սանհանգույցների վերանորոգման ու թեքահարթակների կառուցման աշխատանքները:

Հանրակրթության կառավարման համակարգի արդյունավետության բարձրացման նպատակով << ԿԳՄՍ նախարարի 2021թ. մարտի 15-ի՝ << Կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N25-Ն հրամանով վերանայվել են պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների խոհուրդների ձևավորման ժամկետներն ու սկզբունքները, ներդրվել է դպրոցական խորհուրդների խոշորացման գաղափարը, ինչպես նաև ընդլայնվել է խորհրդում ընդգրկվելու իրավունք ունեցող մանկավարժների շրջանակը (նոր խորհուրդները ձևավորվում են 3 տարի ժամկետով):

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն

Մասնագիտական կրթության բնագավառում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ ուղղված մասնագիտական կրթության որակի բարելավմանը, աշխատաշուկայի և միջազգային չափանիշներին ու պահանջներին համապատասխան կարերի պատրաստման կարողությունների հզորացմանը, եվրոպական կրթական տարածքին ինտեգրմանը, կրթության որակի ապահովմանը, սոցիալապես խոցելի խավերի համար մասնագիտական կրթության մատչելիությանը և հասանելիությանը: Շարունակվել են ուսուցման կազմակերպման նոր մոդելների ներդրումը (աշխատանքի վրա հիմնված), համակարգի բովանդակային արդիականացումը, ուսումնական հաստատությունների բարեկարգումը և ժամանակակից ուսումնական միջավայրի ստեղծումը: Այդ նպատակով.

- << կառավարության կողմից 2021 թվականի նոյեմբերի 4-ին հաստատվել է «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և (կամ) միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ հատկացնելու, ուսման վարձը փոխհատուցելու և կրթաթոշակ սահմանելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 28-ի N 1330-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1784-Ն որոշումը, որով հստակեցվել է ուսանողական նպաստի հատկացման, ինչպես նաև սոցիալական տարբեր խմբերի (մարտական գործողություններին մասնակից, 2 և ավելի անչափահաս երեխա ունեցող, սոցալապես անապահով և սահմանամերձ ու բարձր լեռնային բնակավայրերի ուսանողներ) համար ուսման վարձերի մասնակի գեղչման գործընթացը.

- Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունիսի 7-ի թիվ 45-Ն հրամանով «Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը հաստատելու մասին» կարգում արվել են փոփոխություններ և լրացումներ՝ հնարավորություն ընձեռելով դիմորդներին առավել տեղեկացված լինելու ընդունելության քննությունների պահանջներին, փոփոխությունների արդյունքում նաև արվեստի և սպորտի ոլորտի ճանաչված դիմորդները դուրս չեն մնա ընդունելության մրցույթից:

- մշակվել և վերանայվել է համապատասխանաբար 12 և 20 նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչ: Ցանկերում ընդգրկվել են նաև աշխատաշուկայում պահանջարկ ունեցող 3 նոր մասնագիտություն («Շինությունների տեղեկատվական մոդելավորում», «հնքնակառավարվող սարքերը որոնողակրկարարական աշխատանքներում», «Պաշտպանական կառույցների շահագործում»).

• իրականացվել է դուալ ուսուցման փորձնական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությունների գծով ուսումնաարտադրական բազայով համալրում:

• «Աշխատիր Հայաստան» ծրագրի շրջանակում մշակվել է 18 դուալ կարճաժամկետ ծրագիր «Ռոբոտաշինություն», «Արևային էներգիայի համակարգերի սպասարկում», «Մեխատրոնիկա» և այլ մասնագիտությունների գծով,

• «Մարդը կարիքի մեջ» (People in Need) հասարակական կազմակերպության հայաստանյան գրասենյակի հետ համագործակցության շրջանակում Մարալիկի արհեստագործական պետական ուսումնարանում ներդրվել է «Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում», Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Շիրակի միջին մասնագիտական կրթական ծրագրում «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», Արթիկի պետական քոլեջում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», Ամասիայի արհեստագործական պետական ուսումնարանում «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունների գծով փորձարարական դուալ ուսուցման համակարգը,

• ավարտվել են 8 գյուղատնտեսական ՆՄԿՈՒ հաստատության նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Նախաձեռնվել է հիմնանորոգման աշխատանքների ներառումը ԵՄ-ից ակնկալվող 2.6 մլրդ եվրոյի չափով օժանդակության ծրագրի շրջանակում:

Բարձրագույն կրթություն

Ելնելով << բարձրագույն կրթության համակարգի զարգացման գերակայությունների և գործողությունների օրենսդրական շրջանակի կարգավորումների սահմանման անհրաժեշտությունից՝ մշակվել է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» << օրենքի նախագիծը, որն Ազգային ժողովի կողմից ամբողջությամբ ընդունվել է Երկրորդ ընթերցմամբ 2021 թվականի մարտի 24-ին և ներկայացվել է << Նախագահի աշխատակազմ: << Նախագահի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի 2021 թվականի օգոստոսի 2-ի թիվ ՍԴՈ-1608 որոշմամբ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» << օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ճանաչվել են Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող: Նախագիծը լրամշակվել է և սահմանված կարգով կրկին ներկայացվել Վարչապետի աշխատակազմ: Նախագծով սահմանվել են ֆինանսավորման անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք ուղղված են բարձրագույն կրթության ու գիտության համակարգի ու հաստատությունների մրցունակության բարձրացմանը, բուհերի ֆինանսական ինքնավարությանը՝ նպաստելով բուհի ենթակառուցվածքների զարգացմանը և կրթության որակի բարելավմանը: Ըստ նախագծի՝ բուհերը Հայաստանի Հանրապետության

պետական բյուջեից, բացի ուսանողական նպաստներից ու կրթաթոշակից, կարող են ֆինանսավորվել հետևյալ ձևերով.

1) ինստիտուցիոնալ ֆինանսավորում, որը հատկացվում է հանրային բուհերին ենթակառուցվածքների զարգացման, ինչպես նաև կրթության որակի բարելավման նպատակով և կախված չէ բուհին տրամադրվող պետական կրթաթոշակների թվից: Ինստիտուցիոնալ ֆինանսավորման հիմք են նաև բուհի գործունեության արդյունքային ցուցանիշները.

2) մրցակցային ֆինանսավորում, որը տրամադրվում է բուհի զարգացմանն ուղղված նորարարական-նպատակային ծրագրերի ֆինանսավորմանը՝ մրցութային հիմունքներով.

3) նպատակային ֆինանսավորում՝ պետության կողմից կոնկրետ միջոցառումների իրականացման համար տրամադրվող ֆինանսավորում:

Սոցիալական տարբեր խմբերի համար բարձրագույն կրթության հավասար մատչելիության ապահովման տեսակետից << կառավարության 2021 թվականին հոկտեմբերի 28-ի N 1752-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել << կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի N 1183-Ն որոշման մեջ: Համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» օրենքներում, իրավական հիմք, լիազորող նորմ ապահովելով՝ հնարավորություն է ստեղծվել Կառավարության որոշմամբ սահմանելու բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող պետական ուսումնական հաստատություններում սովորողների առանձին խմբեր, որոնք կարող են օգտվել պետության կողմից տրամադրվող նպաստից՝ լրիվ կամ մասնակի, կարգավորելու ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին, սոցիալական աջակցություն ստացող սահմանամերժ համայնքների ուսանողներին, մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին, սահմանված կարգով առկա ուսուցմամբ բակալավրի կամ ինտեգրացված կրթական ծրագրով ընդունված երկու և ավելի անշափահաս երեխա ունեցող ուսանողներին տրվող նպաստների չափերը, ինչպես նաև ամրագրելու առաջադիմության շեմեր (բուհերում՝ ՄՊԳ), ըստ որոնց կնախատեսվեն համապատասխան փոխհատուցման չափերը՝ նպատակ ունենալով խրախուսել և կարևորել նաև սովորողների առաջադիմությունը, ապահովել կրթության որակի շարունակական բարելավումը:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» << օրենքի նախագծով սահմանված է, որ բոլոր բուհերը ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում անցնում են նաև ծրագրային հավատարմագրում: Ըստ նախագծի՝ 2027 թվականի սեպտեմբերի 1-ից ինտո ինստիտուցիոնալ հավատարմագրում ունեցող, սակայն ծրագրային հավատարմագրում չունեցող բուհերի տրամադրած դիպլոմները և շնորհված որակավորումները չեն ճանաչվում պետության կողմից:

2021 թվականին հավատարմագրվել են 11 ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և 3 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Արտադրոցական դաստիարակություն

Ոլորտում 6-18 տարեկան 20'022 երեխաների համար կազմակերպվել է լրացուցիչ կրթություն՝ արտադրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններում, 2 արտադրոցական հաստատություններում իրականացվել է գույքի և տեխնիկական կրթության բազայի վերագինում, զոհված, հաշմանդամ դարձած գինծառայողների և աշխարհագորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 3200 երեխաների համար կազմակերպվել է ամառային հանգիստ, 11-րդ դասարանների 100 աշակերտների համար կազմակերպվել է ռազմամարզական ճամբար:

Սփյուռք

2021 թվականին սփյուռքի կրթօջախների համար ձեռք է բերվել 5600 կտոր ուսումնական գրականություն, սփյուռքի 18 երկրների 100-ից ավելի կրթօջախներին տրամադրվել է շուրջ 44000 կտոր գրականություն: Առավել մասնաբաժինը՝ 5220 հատ դասագիրք առաքվել է Վրաստան՝ Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ պայմանավորվածության համաձայն Վրաստանի հայերենի ուսուցմամբ հանրային դպրոցների համար:

Իրականացվել է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման ծրագիր՝ հեռավար ձևաչափով, որին մասնակցել է 115 ուսուցիչ՝ սփյուռքի 22 երկրից: Ծրագրում ընդգրկվել են 39 դասախոսներ, այդ թվում՝ սփյուռքում գործող մասնագետներ, դասագրքերի և մեթոդների հեղինակներ: Ծրագրերի ընդհանուր ժամաքանակը կազմել է 840 դասաժամ: 97 ուսուցիչների տրվել են ՀՀ ԿԳՄՍՆ վկայականներ:

2021 թվականի հոկտեմբերին ստորագրվել է հուշագիր Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Վրաստանի կրթության և գիտության նախարարության հետ, որով կողմերը կնպաստեն երկու երկրների ուսուցիչների վերապատրաստման և գնահատման համակարգերի կատարելագործման նպատակով փորձի փոխանակմանը:

Օտարերկրյա պետությունների համալսարաններում, թանգարան-ինստիտուտներում և կենտրոններում կազմակերպվել է հայերենի ու հայագիտական առարկաների դասավանդում, որն իրականացվել է օտարերկրյա 9 պետությունների 11 համալսարաններում նախորդ տարվա 4 պետությունների 6 համալսարանների փոխարեն: ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի

շրջանակներում ֆինանսավորվել են նաև 2 հետազոտական աշխատանքներ՝ Արգենտինայում և Գերմանիայի «Մաշտոց» հայագիտական կենտրոններում:

ՀՀ ուսումնական հաստատություններում սովորելու նպատակով դիմել է 930 սփյուռքահայ քաղաքացի, որից 70-ն ընդունվել է պետական պատվերի շրջանակներում:

Կազմակերպվել է Համահայկական մանկապատանեկան նկարչական մրցույթ-փառատոնը, որն անցկացրել է Հ.Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնը: Մասնակցել են Հայաստանի, Արցախի և Սփյուռքի 7 երկրների հայկական կրթօջախների սաներ: Ընտրվել և պարգևատրվել են 20 հաստատությունների 146 սաներ:

Գիտություն

2021 թվականին գիտության ոլորտում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են շուրջ 15.1 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրի 94.9%-ը:

Գիտական և գիտապեխնիկական գործունեության բնագավառում կարարողականի վրա հիմնված պետական ֆինանսավորման մեխանիզմների ներդրում, ինչպես նաև գիտության ոլորտի օպերիմալացման և կառուցվածքային բարեփոխումների ծրագրի մշակում և ներդրում: ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակով ՀՀ գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող դրամաշնորհային մրցույթներում ներդրվել է գիտական թեմաների իրականացման ավարտից հետո արդյունքային ցուցանիշների առկայության դրույթը (երկու գիտական հոդված «Scimago Journal & Country Ranking (SJR)»-ում ամսագրերի դասակարգման առաջին կամ երկրորդ (Q1, Q2 quartile) քառորդում (այսուհետ՝ Ք1 կամ Ք2) ընդգրկված ամսագրերում (<https://www.scimagojr.com/journalrank.php>), «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառի մասնագիտությունների համար՝ առնվազն երկու գիտական իրապարակում միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված պարբերականներում կամ մեկ՝ առնվազն 5 տպագրական մամուլ ծավալ ունեցող մենագրություն, կոլեկտիվ մենագրություն կամ գիտական աշխատություն՝ իրատարակված Web of Science գիտատեղեկատվական հարթակի գրքերի հղման ինդեքսի (Book Citation Index) իրատարակիչների ցանկում ներառված իրատարակչություններում: Վերջինիս չկատարելլ/կատարելլ կազդի հետագայում Գիտության կոմիտեի հայտարարած մրցութային ծրագրերին գիտահետազոտական խմբի անդամների կողմից ներկայացված գիտական թեմաների փորձագիտական գնահատականի վրա:

Տնտեսության պահանջներից բխող հետազորությունների պարկերների ձևավորման մեխանիզմների մշակում և ներդրում: 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի «Գիտական և

գիտատեխնիկական նպատակային-ծրագրային հետազոտություններ» ծախսային ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են շուրջ 10 ծրագրեր:

Երկակի նշանակության ծրագրերի իրականացում: Հաշվի առնելով ուղղմական արդյունաբերության կարիքները՝ 2021 թվականին կազմակերպվել է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ՝ Ռազմարդյունաբերական կոմիտեի հետ համատեղ: Մրցույթի արդյունքներով օգոստոս ամսից ֆինանսավորման են երաշխավորվել 12 գիտական թեմաներ 24 ամիս տևողությամբ:

Գիրության ոլորտի երիտասարդ կադրերի ներգրավման ծրագրի իրականացում: 2021 թվականի կազմակերպվել է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2021» մրցույթ: Մրցույթի արդյունքներով հոկտեմբեր ամսից ֆինանսավորման են երաշխավորվել 29 գիտական թեմաներ 12-ից մինչև 36 ամիս տևողությամբ: Այժմ ասպիրանտն իր 60 հազար դրամ կրթաթոշակից բացի ստանում է ամսական 150 հազար դրամ աշխատավարձ, իսկ ղեկավարը՝ հավելյալ 50 հազար դրամ:

Մինչև 10 երիտասարդ կամ միջին սերնդի ղեկավար ունեցող համաշխարհային մակարդակով հավակնութ ուղղություններում աշխատող միջազգային խորհրդատու և մինչև 5 մասնակից ունեցող գիտական խմբեր ծևավորելու նպատակով <<ԿԳՄՍ նախարարի 2021 թվականի ապրիլի 27-ի N 620-Ա/2 հրամանի համաձայն կազմակերպվել է Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում գիտական խմբերի մեկնարկի կամ լաբորատորիաների (բաժինների) ամրապնդմանն աջակցության գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ մինչև 40 տարեկան այն գիտնականների համար, որոնք համապատասխանում են առաջատար հետազոտողի (Principal investigator, PI) միջազգային չափանիշներին: Մրցույթի արդյունքներով սեպտեմբեր ամսից ֆինանսավորման են երաշխավորվել 16 գիտական թեմաներ: Հաջորդ մրցույթը նախատեսվում է իրականացնել երեք տարին մեկ պարբերականությամբ, ինչը կապահովի երիտասարդների առաջխաղացման և նոր խմբերի ձևավորման շարունակականությունը: Արդյունքում կունենանք գիտական նոր ուղղությունների ստեղծում և զարգացում, հավակնութ ծրագրեր ղեկավարելու փորձ ունեցող մինչև 16 երիտասարդ հետազոտողներ, բարձր որակավորում ունեցող առնվազն 30 երիտասարդ գիտաշխատող,

խորհրդատուի հետ համատեղ աշխատանքներ, փորձի փոխանակում և կապերի ընդլայնում, առնվազն 20 Ք1 կամ Ք2 պարբերականներում տպագրություններ:

Օդարերկրյա պետություններում աշխարող գիրական և (կամ) գիրակրթական կարերի վերահնդեգրման ծրագրերի իրականացում: Գիտության կոմիտեի կողմից կազմակերպվող դրամաշնորհային մրցույթներում ներառվել է օտարերկրյա գիտական կազմակերպություններում գիտահետազոտական գործունեություն իրականացնող գիտական խորհրդատուի առկայության դրույթը, որի շրջանակներում գիտական թեմայի իրականացման ժամանակահատվածում կազմակերպվելու են փոխայցելություններ գիտական խորհրդատուի և գիտահետազոտական խմբի անդամների միջև: Միևնույն ժամանակ գիտական նախագծերի գիտական փորձաքննությունների իրականացման նպատակով պարբերաբար թարմացվում է օտարերկրյա պետություններում բնակվող հայազգի գիտնականների մասին միասնական տվյալների շտեմարանը:

Միջազգային չափանիշներին համապարասխան գիրական հետազոտություններ իրականացնելու պայմանների ծևավորման մեխանիզմների մշակում և ներդրում: 2021 թվականի նոյեմբերի 12-ին Բրյուսելում <<և Եվրոպական միության միջև ստորագրվել է Միության «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարության շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին» համաձայնագիրը, որը վավերացվել է 2022 թվականին: 2021 թվականից <<գիտության կոմիտեի կողմից ներդրվել է Գիտական, գիտատեխնիկական և գիտատեխնոլոգիական ծրագրերի իրականացման կենտրոնի ստեղծման ծրագիրը, որի շրջանակներում իր գործունեությունն է վերսկսել «Գիտական և նորարարական գործընկերության աջակցման կենտրոն» (նախկինում՝ «Գիտական ծրագրերի ինտեգրմանն աջակցության կենտրոն») հիմնադրամը, որի նպատակն է իրականացնել գիտության, տեխնոլոգիաների և նորարարությունների ոլորտներում միջազգային կառույցների, այդ թվում՝ «Հորիզոն Եվրոպա» հետազոտությունների և նորարարությունների ԵՄ շրջանակային նոր ծրագրի կողմից ֆինանսավորվող դրամաշնորհային ծրագրերում <<գիտական կազմակերպությունների, բուհերի և առանձին գիտնականների ու գիտական խմբերի մասնակցության ակտիվացմանն ուղղված միջոցառումներ՝ տրամադրելով համապարասխան խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:

2021 թվականի հոկտեմբերին Կենտրոնը հայտարարել է մրցույթ ԵՄ շրջանակային ծրագրի հայաստանյան հնարավոր մասնակիցների նախագծերի և հայտադիմումների նախապատրաստմանն աջակցություն տրամադրելու նպատակով: Մրցույթի արդյունքում ընտրված 9 հայտառուների համար այժմ անցկացվում են խորհրդատվություններ՝ «Հորիզոն Եվրոպա» ծրագրի շրջանակներում հայտարարված մրցույթների նպատակների և դրանց մասնակցության պայմանների

մասին: Շահառուներին կտրամադրվի օժանդակություն հայտադիմումների լրացման ընթացքում: Ծրագիրն իրականացվում է գերմանական GIZ ընկերության և CIVITTA խորհրդատվական ընկերության հայաստանյան գրասենյակի աջակցությամբ:

Գիրանորարարական ենթակառուցվածքների սպեղման աջակցության մեխանիզմների ներդրում: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում կազմակերպվել և անց է կացվել կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական նախագծերի մրցույթը՝ տնտեսության մասնավոր հատվածի հետ համաֆինանսավորման սկզբունքով: Մրցույթի արդյունքում 2021 թվականի հոկտեմբեր ամսից ֆինանսավորվում են 13 նախագծեր՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության «Բնական գիտություններ», «Ճարտարագիտություն և տեխնոլոգիա» բնագավառներից: Յուրաքանչյուր ծրագրի համաֆինանսավորումը կազմում է առնվազն 6 միլիոն << դրամ: Համաֆինանսավորող են հանդիսանում հայաստանյան և օտարերկրյա ընկերություններ, որոնք հետաքրքրված են ակնկալվող արդյունքի կիրառության մեջ: Նախագծերի տևողությունը 2 տարի է, սակայն ավարտից հետո դրանք կարող են ստանալ ևս մեկ տարվա ֆինանսավորում՝ գիտահետազոտական աշխատանքները շարունակելու նպատակով, եթե համապատասխանեն նախապես սահմանված չափորոշիչներին և <<-ում գործող ինովացիոն ենթակառուցվածքներից (տեխնոլոգիաների փոխանցման կենտրոն կամ այլ) ստանան երաշխավորություն նախագծերի վերջնական արդյունքի առևտրայնացման հնարավորությունների վերաբերյալ: Այս մեխանիզմը ոչ միայն նպաստում է գիտություն-բիզնես օղակի ձևավորմանը, այլև հնարավորություն է տալիս աջակցել գիտանորարարական ենթակառուցվածքների զարգացմանը:

Եվրոպական հերազդութան գրածքում խելացի մասնագիրացման դիրույթի ձեռքբերմանն ուղղված ծրագրերի իրականացում: 2020 թվականին << կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ԵՀ Միացյալ հետազոտական կենտրոն է ներկայացրել հայտ՝ խելացի մասնագիտացման ռազմավարության մշակման համար խորհրդատվական և տեխնիկական աջակցություն ստանալու համար: Ծրագրի իրականացման համար ստեղծվել է ազգային թիմ՝ ընդգրկելով << ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի, << Էկոնոմիկայի, << բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, << աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների ներկայացուցիչներին: Թիմը մասնակցել է ԵՀ Միացյալ հետազոտական կենտրոնի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 2-ին և 9-ին անցկացված 2-օրյա վերապատրաստման դասընթացներին: Դասընթացները միտված էին հայաստանյան մասնակիցներին ծանոթացնելու խելացի մասնագիտացման ռազմավարության մշակման աշխատանքների կազմակերպմանը, դրանց

բովանդակությանը, փովերին, ինչպես նաև ներկայացնելու ռազմավարության մշակման փուլն ավարտած երկրների փորձը և ձեռքբերումները:

Հայագիտական հետազոտությունների առաջանցիկ զարգացման ապահովում, այդ թվում՝ միջազգային համագործակցության զարգացման մակարդակի բարձրացում: 2021 թվականին շարունակվել է «Հասարակական գիտություններ» և «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների մասնագիտություններով օտարերկրյա գործընկերոց ընդգրկմամբ գիտական թեմաների հայտերի մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված 17 գիտական թեմաների ֆինանսավորումը:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծախսային ծրագրի շրջանակներում հայագիտության բնագավառում ֆինանսավորվել են՝ ՀՀ ԳԱԱ համակարգում գործող Պատմության, Գրականության, Լեզվի, Արևելագիտության, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները, ինչպես նաև ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտը:

Մշակույթ

2021 թվականին մշակույթի ոլորտում իրականացված քաղաքականությունը նպատակառուղղված է եղել ՀՀ կառավարության գործունեության ծրագրով նախանշված հիմնական խնդիրների լուծմանը:

Կինեմատոգրաֆիայի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղված են եղել խաղարկային, մուլտիպլիկացիոն և վավերագրական կինոնկարների արտադրության աջակցմանը, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանը, կինոարվեստի հանրահոչակմանը, տարածմանը, մատչելիության ապահովմանը, հայկական կինոյի ավանդույթների շարունակականության ապահովմանը: Ծրագրի շրջանակում իրականացվել է 14 (1 շարունակող) խաղարկային, 4 (3 շարունակող) վավերագրական, 4 (2 շարունակող) մուլտիպլիկացիոն կինոնկարների արտադրություն, աջակցություն է ցուցաբերվել Հայաստանում կազմակերպված 3 միջազգային կինոփառատոնի:

12 հայ կինոգործիչներ ու 15 հայկական ֆիլմեր մասնակցել են մի շարք հեղինակավոր կինոփառատոնների (այդ թվում՝ հեռավար): 2021 թվականի նոյեմբերի 22-27-ը Երևանում անցկացվեց «ՍոլիդԱրտ» ժամանակակից արվեստ և հանրային կառավարում» սեմինարը, որն ուղղված էր ԱՊՀ, Բալթյան երկրների և Վրաստանի Հանրապետության կինեմատոգրաֆիայի ոլորտում հայեցակարգերի և իրավական ձևակերպումների միասնական համակարգի ձևավորմանը,

կինոարտադրանքի արտահանման և միասնական շուկայի ստեղծման մեխանիզմների ուսումնասիրմանը և այլ հարցերի քննարկմանը:

Արվեստների ծրագրի շրջանակներում իրականացվող ծրագրերը նպատակառությամբ են եղել ազգային արժեհամակարգի հիման վրա ստեղծված հայ ժամանակակից թատերարվեստի, երաժշտարվեստի, պարարվեստի և կերպարվեստի զարգացմանն ու միջազգային ասպարեզում հանրահոչակմանը, ստեղծագործական և գեղարվեստական մասնագիտական չափանիշների պահպանմամբ հանրության տարբեր շերտերին մշակութային արդյունքի և ծառայությունների մատուցման ապահովմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսևորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին միջազգային մշակութային գործընթացներում ներգրավմամբ աջակցմանը, ոլորտում գործող ստեղծագործական միությունների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնմանը և մրցակցային դաշտի ձևավորմանը:

«կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 8-ի N 1472-Ա որոշմամբ «Պետական կամերային երաժշտական թատրոն» ՊՈԱԿ-ը միավորվել է «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմետիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ին:

2021 թվականին իրականացվել է 15 միջոցառում՝ ինքնազբաղ ստեղծագործողների մասնակցությամբ:

2021 թվականին ժամանակակից արվեստի ոլորտում ֆինանսավորվել է 68 նախագիծ, մասնավորապես 33 ստեղծագործական, 12 կրթամշակութային նախագծեր 23 հոբեյանական միջոցառումներ:

Ներառական քաղաքականության շրջանակներում 2021 թվականին իրականացվել է 6 նախագիծ, իսկ «Ֆրեսկո» արդի արվեստի և հոգևոր ֆիլմերի միջազգային փառատոնի ներառական ծրագրերին մասնակցել են շուրջ 450 հաշմանդամություն ունեցող անձինք: «Գեղագիտության ազգային կենտրոն» ՓԲԸ ներքո գործող «Կատարողական արվեստի ներառական արվեստ» կենտրոնում 2021 թվականի դեկտեմբերի 1-ից մեկնարկել են ուսումնական դասընթացներ: Գեղագիտական և արհեստագործության ուսուցման ծրագրերի շրջանակներում կազմակերպվել է անվճար ուսուցում հաշմանդամ, ծնողազուրկ և սոցիալապես անապահով 614 երեխայի համար:

Մշակութային և գեղագիտական դաստիարակության ծրագիրը նպատակառությամբ է եղել կադրերի պատրաստման պետպատվերի համակարգի կատարելագործմանը, մշակութային կրթության որակի բարձրացմանը, մասնագետների կրթության շարունակականության և

մատչելիության ապահովմանը, ՀՀ ապագա քաղաքացիների գեղագիտական դաստիարակության ձևավորմանը նպաստող ծրագրերի իրականացմանը, ներառական ծրագրերի աջակցմանը, մանկապատանեկան տարիքի երեխաների, կրթության իրականացման պայմանների մատչելիության և որակի ապահովմանը: 2021 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

• «Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի շրջանակներում ապահովվել է 146 երաժշտական և արվեստի դպրոցի 2361 սովորողի ուսման վարձավճարների փոխհատուցումը,

• «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագիրն ուղղված է 11-20 տարեկան առավել տաղանդավոր պատանի երաժիշտ-կատարողների (դասական երաժշտական գործիքներ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ) զարգացմանը, կատարելագործմանը և խրախուսմանը՝ հետագայում միջազգային ասպարեզում հայկական կատարողական արվեստը ներկայացնելու նպատակով: 2021 թվականին ծրագրում ընդգրկվել է 15 տաղանդավոր երիտասարդ երաժիշտ-կատարող և 6 առաջատար մասնագետ՝ դաշնամուր, ջութակ, թավջութակ մասնագիտություններով: 2021 թվականին «Մեկնարկ» տաղանդի զարգացման նպատակային ծրագրի շնորհալի երեխաները մասնակցել են 18 առցանց երաժշտական միջազգային մրցույթների և արժանացել են 1-ին և 2-րդ մրցանակների: Ծրագրի անդամները մի շաբթ վարպետության դասեր են ստացել աշխարհի լավագույն մասնագետներից,

• մեկնարկել են պարարվեստի ոլորտի առարկայական ծրագրերի լրամշակման աշխատանքները,

• իրականացվել են մշակութային կրթության կապը խթանող, ապագա քաղաքացիների ձևավորմանը նպաստող արժեքահեն նպատակային ծրագրեր, այդ թվում՝ «Բաժանորդային համակարգ», «Դպրոցականի ֆիլիարմոնիա», «Քո արվեստը դպրոցում» և այլն:

Մարզերի մշակութային զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացներն ուղղված են մարզերում մշակութային կյանքի և մշակութաստեղծ գործունեության ակտիվացմանը, համայնքներում մշակույթի հասանելիության և մշակութային կյանքին մարզային բնակչության ընդգրկվածության ընդլայնմանը, մշակութային միջոցառումների կազմակերպմանն ու իրականացմանը, մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը, համայնքային ենթակայության մշակույթի տներում և կենտրոններում ստեղծագործական ծրագրերի և նախագծերի աջակցմանը:

Ծրագրի շրջանակում.

• ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 15-ի N 591-Ն, N 643-Լ, և սեպտեմբերի 8-ի N 1452-Լ որոշումների համաձայն իրականացվել է «ՀՀ մարզերում երիտասարդների ինքնազարգացման,

սոցիալական ծեռներեցության, մշակութային-ժամանցային միջավայրերի ապահովման, նորարարական կենտրոնների ձևավորման նախագծեր և միջոցառումներ» դրամաշնորհային ծրագիրը, որի շրջանակում հաստատվել է 6 նախագիծ, որոնցից հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են 4-ը: Մեկ նախագիծ ավարտվելու է 2022 թվականին, մեկ նախագիծ չեղարկվել է:

• «Հայաստանի սահմանամերձ գոտիներում, Արցախում մշակութային կյանքն ակտիվացնելու, հասարակությանը դրական հովզեր պարզեցնելու նպատակով իրականացվել է «Թիկոնքը՝ մշակույթ, սահմանը՝ կենտրոն» ծրագիրը՝ 28 միջոցառումներով, ներկա էր 5050 հանդիսատես.

• «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական ֆիլիարմոնիան «Թիկոնքը՝ մշակույթ, սահմանը՝ կենտրոն» ծրագրի շրջանակում մայիս ամսին Սյունիքում և Արցախում իրականացրեց «Երգով ու սիրով» խորագիրը կրող երգչախմբային փառատոնը: Փառատոնի ղեկավարն էր Տիգրան Հեքերյանը: Փառատոնին մասնակցում էին Սյունիքի ու Արցախի 17 երգչախմբեր:

2021 թվականին մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում շարունակվել են պահպանության և հանրահոչակման աշխատանքները՝ ուղղված ՀՀ տարածքում և արտերկրում գտնվող մշակութային արժեքների և պատմամշակութային հուշարձանների հաշվառմանն ու գիտական ուսումնասիրությունների իրականացմանը, մշակութային ժառանգության (նյութական և ոչ նյութական) անխաթար պահպանմանը, վերականգնմանն ու սերունդներին փոխանցմանը:

ՀՀ ԿԳՄՍՆ ենթակայության թանգարանների ֆոնդը համալրվել է 10299 թանգարանային առարկաներով, որոնց թիվը կազմել է 1954533 միավոր:

2021 թվականին թանգարանների գրադարանային միավորների թիվը կազմել է 251560: Թանգարաններում կազմակերպվել են 2033 կրթական ծրագիր և 713 միջոցառում: Շարունակվել են ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 11-ի N 1058-Ն որոշմամբ հաստատված «Մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարան» (Հայկական գանձեր) ծրագրի ներբեռնման աշխատանքները: 2020 թվականին «Գանձարան» էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանում ներգրավված 41 թանգարաններից 23-ն ավարտել են իրենց ֆոնդերի թվայնացումը, իսկ մնացյալ թանգարաններում ներբեռնման աշխատանքները կրել են շարունակական բնույթ:

«Թանգարանների գիշեր» և «Թանգարանների միջազգային օր» միջոցառումների շրջանակում ՀՀ և Արցախի շուրջ 113 թանգարան կազմակերպել են «Թանգարանների ապագա. Վերականգնել և վերահիմատավորել» խորագրի ներքո միջոցառումներ և անվճար սպասարկել 28259 այցելուի:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 21-ի N 644-Ն որոշմամբ ստեղծվել են «Դաշտադեմ ամրոց», «Մայրաքաղաք Դվին» պատմամշակութային արգելոցները:

«Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը» միջոցառման շրջանակում ուսումնասիրվել և վկայագրվել է արտերկրում գտնվող հայկական մշակութային անշարժ ժառանգության մաս կազմող 200 հուշարձան:

Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության և հանրահոչակման ուղղությամբ իրականացվել է 18 ծրագիր, որից երկուսը՝ միջազգային:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցանկում գրանցման ներկայացնելու համար «Գյումրիի դարբնության ավանդույթը» թեմայով հայտ է պատրաստվել, և հայտին կից ֆիլմ է նկարահանվել:

Դրամաշնորհային մրցույթի «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության ծրագրեր» անվանակարգի շրջանակում իրականացվել է 16 ծրագիր:

Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման գործընթացը պարզեցնելու նպատակով այսուհետ եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) ստանալու համար կազմակերպությունը կամ ֆիզիկական անձը (հայտատուն) հայտը և ուղեկցող փաստաթղթերը կարող է ներկայացնել առձեռն, փոստով, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով՝ << արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան էլեկտրոնային հարթակում (www.trade.gov.am) հասանելի «Թույլատվական փաստաթղթեր» (www.sw.gov.am) համակարգում՝ ենթահայտ լրացնելու միջոցով:

Հայոց մշակութային ժառանգության պատկերն ամբողջացնելու նպատակով շարունակվել է այլ պետությունների տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների հայտնաբերման և հաշվառման գործընթացը:

Գրահրատարակչության և գրադարանների ծրագրի շրջանակում իրականացվող ծրագրերն ուղղված են եղել գրականության զարգացմանն ու տարածմանը, տպագիր արտադրանքի միջոցով հոգևոր-մշակութային ժառանգության փոխանցմանը, << տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների համար լոյս տեսնող լրատվամիջոցների և պարբերականների գործունեության շարունակականությանը, գրքի միջազգային ցուցահանդեսներին մեր երկրի մասնակցությանը, հանրապետական գրական ծրագրերի կազմակերպմանը, ստեղծագործողների և մշակութային հետազոտողների աշխատանքների խթանմանը, գրադարանների հավաքածուների համարմանն ու պահպանմանը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ գրավոր ժառանգության (անձեռնմխելի հավաքածուներ) թվայնացմանը, տեղեկատվական շտեմարանների շարունակական զարգացմանը, գրադարանային հավաքածուների օգտագործման մատչելիության ապահովմանը, միջազգային համագործակցության ընդլայնմանը, մատենագիտական տվյալների կազմանն ու հրապարակմանը, հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

2021 թվականին գրադարանները սպասարկել են 102032 ընթերցողի: Հաջողությամբ իրականացվել է գրադարանային հավաքածուների համալրման (66 հազար 794 միավոր) գործընթացը: Հայաստանի ազգային գրադարանի հնատիա գրքի հավաքածուն համալրվել է 4 անուն եղակի օրինակով: Գրադարաններում իրականացվել է կրթամշակութային 1914 միջացառում:

Հայաստանի ազգային գրադարանի, գործընկեր գրադարանների՝ Խնկո Ապոր անվան ազգային մանկական, ինչպես նաև 10 մարզային գրադարանների գործուն աջակցությամբ թվայնացվել և «Հայ գիրք» և «Հայ պարբերական մամուլ» շտեմարաններում տեղադրվել է գրքի և պարբերականի 1669588 էջ: Հայաստանյան գրադարանների Էլեկտրոնային համահավաք գրացուցակում նախարարության ենթակայության գրադարանների կողմից մուտքագրվել է 188411 միավոր գրառում՝ գրառումների ընդհանուր թիվը հասցնելով 2715060-ի: Արևմտահայերենով գրականության և մշակույթի պահպանման ու հանրահոչակման նպատակով Շիրակի մարզային գրադարանում 2021 թվականին ստեղծվել է <https://arevmtahayeren-shmg.am/> կայքէջը:

Շարունակվել է Լոռու և Շիրակի մարզային գրադարանների կողմից «Ընտանեկան գրադարան» ծրագիրը:

«Շրջիկ գրադարան» ծրագրի շրջանակում Հայաստանի ազգային գրադարանի կողմից «Արարատի, Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի, Տավուշի, Շիրակի և Լոռու համայնքային գրադարաններին տրամադրվել է 1752 միավոր գիրք:

«Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» դրամաշնորհային ծրագրով ստեղծվել են 6 ստեղծագործական, 2 հետազոտական, 11 թարգմանական (այլ լեզուներից հայերեն) աշխատանքներ:

«Հայ գրականությունը թարգմանություններում» դրամաշնորհային ծրագրով արտասահմանյան հրատարակչություններին աջակցություն է ցուցաբերվել 11 գրքի թարգմանության համար 8 լեզվով, որոնց թվում՝ սերբերեն, հունարեն, իսպաներեն, ռումիներեն, մակեդոներեն, վրացերեն, արաբերեն, ալբաներեն:

«Ոչ պետական մամուլի հրատարակում» ծրագրով աջակցություն է ցուցաբերվել ազգային փոքրամասնությունների համար Հայաստանում լույս տեսնող պարբերականների:

«Աջակցություն գրականության հանրահոչակմանը՝ գրական ծրագրերին և գրքի միջազգային ցուցահանդեսներին մասնակցությանը» ծրագրով Հայաստանն առանձին տաղավարով մասնակցել է Մոսկվայի գրքի միջազգային ցուցահանդեսին: Տեղի է ունեցել նաև Գրքի երևանյան չորրորդ փառատոնը:

«Տեսողությունը կորցրած հաշմանդամություն ունեցող անձանց համար Բրայյան տառատեսակով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստում և «Խոսող գրքերի»

ձայնագրության ծառայություններ» ծրագրով բրայլյան տառատեսակով լուս են տեսել Սարոյան,
Աննա Ֆրանկ, Զեխով, Տուրգենև, Կապուտիկյան, Ագաթա Քրիստի և այլ հեղինակների
ստեղծագորություններ:

Ազգային արխիվի ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացները
նպատակառուղիվել են << ազգային արխիվային հավաքածուի պահպանությանը (4.224 337 միավոր),
համարմանը, հաշվառմանը, արխիվային փաստաթղթերի վերանորոգմանը (216 890 գործ), <<
արխիվային հավաքածուի փաստաթղթերի թվայնացման աշխատանքների իրականացմանը
(287 732 էջ/պատկեր), տեսալսողական փաստաթղթերի թվայնացմանը (400 պահպանման
միավոր), նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկությունների
էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքների իրականացմանը (66 439 քարտ),
հանրության կողմից արխիվային նյութերի օգտագործման ապահովմանը (550 ֆիզիկական և
իրավաքանական անձ):

Սպորտ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվել են աշխատանքներ հետևյալ հիմնական ուղղություններով՝ օլիմպիական հերթափոխի և բարձրակարգ մարզիկների պատրաստում, բնակչության ֆիզիկական դաստիարակության ապահովում, հաշմանդամային սպորտին, ազգային ֆեդերացիաներին, մարզական-հասարակական կազմակերպություններին, ազգային հավաքականներին պետական աջակցության տրամադրում:

Պետական աջակցության ծրագրում ընդգրկված ֆեդերացիաները 2021 թվականի ընթացքում մեծահասակների, երիտասարդների և պատանիների օլիմպիական խաղերի Եվրոպայի, աշխարհի առաջնություններում նվաճել են 199 մեդալ, այդ թվում՝ 55 ոսկե, 57 արծաթե և 87 բրոնզե մեդալ:

Պետական աջակցության ծրագրում ընդգրկված 34 ֆեդերացիաները 2021 թվականի ընթացքում պետական աջակցության միջոցներով անցկացրել են Հայաստանի Հանրապետության 99 առաջնություններ, 130 ուսումնամարզական հավաքներ, մասնակցել են 143 միջազգային մրցաշարերի, այդ թվում՝ Եվրոպայի և աշխարհի առաջնությունների:

2021 թվականին հաշմանդամային (ադապտիվ) սպորտով գրաղվող 5 հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվել է << 7 առաջնություն, 4 ուսումնամարզական հավաք, 1 ֆիզկուլտուրային առողջարարական զանգվածային հանրապետական միջոցառում, հաշմանդամություն ունեցող մարզիկները մասնակցել են 5 միջազգային մրցումների, այդ թվում՝ Տունիայի ամառային պարակիմայիկ խաղերին, հաշմանդամային բազկամարտի աշխարհի

առաջնությունում ընդհանուր հաշվով մեր հավաքականը նվաճել է 3 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզե մեդալներ:

Զանգվածային (մասսայական) սպորտին ուղղված միջոցառումների շրջանակներում իրականացվել են «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական խճուղային հեծանվավագրի, «Հայաստանի Հանրապետության Վարչապետի գավաթ» սիրողական կրոսավագրի մրցաշարեր, 22 բուհի մասնակցությամբ հանրապետական ուսանողական 22-րդ մարզական խաղեր 8 մարզաձևից, 60 պետական և ինքնակառավարման մարմինների աշխատակիցների մասնակցությամբ ՀՀ պետական մարմինների միջև հրաձգության հանրապետական մրցումներ:

Համակարգվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող 26 մանկապատանեկան մարզադպրոցների և պետական աջակցություն ստացող մարզական հասարակական կազմակերպությունների ուսումնամարզական գործընթացը, որտեղ տարբեր մարզաձևերի 1435 խմբերում մարզվել է 14367 պարապող:

2021 թվականի մայիսի 13-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1096-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 755-Ն որոշումը, համաձայն որի Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի կազմում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկների և նրանց մարզիչների անվանական թոշակից հարկեր և պարտադիր այլ վճարներ չեն պահպում:

2021 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N 1096-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1526-Ն որոշումը, համաձայն որի կրկնապատկվել է Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի կազմում բարձր արդյունքներ ցուցաբերած մարզիկներին և նրանց մարզիչներին հատկացվող անվանական թոշակի չափը:

2021 թվականի սեպտեմբերի 16-ին ընդունվել է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 5-ի «Օլիմպիական, պարալիմպիկ, սուրդիմպիկ խաղերում, օլիմպիական խաղերի ծրագրում ընդգրկված մարզաձևերի (նաև օլիմպիական խաղերի ծրագրում չընդգրկված սամբո ըմբշամարտ, միջազգային շաշկի, ուշու և շախմատ մարզաձևերի) աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում (նաև հաշմանդամների), Եվրոպական խաղերում, շախմատի համաշխարհային օլիմպիադայում, Եվրոպայի օլիմպիական երիտասարդական փառատոնում, համաշխարհային ունիվերսիադայում, պատանեկան օլիմպիական խաղերում, շախմատի պատանեկան օլիմպիադայում 1-3-րդ տեղերը գրաված մարզիկներին, ազգային հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, մեդալակիր մարզիկների

անձնական մարզիչներին, ազգային հավաքական թիմերի երկորոր մարզիչներին, բժիշկներին շնորհվող դրամական մրցանակների չափերն ու շնորհման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 29-ի N 462 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1282-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 1505-Ն որոշումը, որի արդյունքում աճել են դրամական մրցանակների չափերը:

2021 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունվել է Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության մարզական կոչումների և մարզական կարգերի շնորհման չափորոշիչներն ու կարգը հաստատելու մասին» N 587-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2182-Ն որոշումը, որով ընդլայնվել է մարզաձևերի ցանկը:

Երիտասարդություն

Երիտասարդության ոլորտում արդյունավետ քաղաքականության իրականացման, ներառական երիտասարդական քաղաքականության մշակման, երիտասարդների հասարակական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական և մշակութային մասնակցության մակարդակի բարձրացման, ինչպես նաև երիտասարդության զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման նպատակով 2021 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները.

• «Երիտասարդական պորտալի պահպանում» ամենամյա միջոցառումը, որի նպատակն էր երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, ապահովել երիտասարդական պետական քաղաքականության թափանցիկությունը ու իրապարակայնությունը:

• «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» ամենամյա միջոցառումը, որի նպատակն էր նպաստել ՀՀ համայնքների համաշափ զարգացմանը, զարգացնել երիտասարդական նախաձեռնողականության, երիտասարդական քաղաքականության ոլորտում համայնքների միջև գործընկերային հարաբերությունները՝ ինչպես տեղական և ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում, խրախուսել ՀՀ համայնքային իշխանություններին՝ տեղական մակարդակում մշակելու արդյունավետ երիտասարդական քաղաքականություն, նպաստել մարզերում երիտասարդական կազմակերպությունների և ենթակառուցների զարգացմանը.

• Երիտասարդության միջազգային օրվան՝ օգոստոսի 12-ին նվիրված միջոցառումների շարք՝ հեծանվավագք, գրքի շնորհանդես և քննարկում, համերգի կազմակերպում, որոնց նպատակն էր համախմբել երիտասարդներին, օրը երիտասարդների համար վերածել տոնի.

- «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ամենամյա միջոցառումը, որի նպատակն է <<-ում երիտասարդական աշխատանք կատարող մարդկանց վերապատրաստումը, ինչպես նաև երիտասարդական աշխատանքի նկատմամբ համակարգված մոտեցման որոեգումը: 2021 թվականին երիտասարդական աշխատանքին, << պետական երիտասարդական քաղաքականությանը ծանոթացել և վերապատրաստվել են 25 երիտասարդներ:
- «Թրաֆիքինգի ռիսկերի մասին երիտասարդների իրազեկում» միջոցառման շրջանակներում իրականացվել է դասընթացի կազմակերպում և մրցախաղի անցկացում շուրջ 200 երիտասարդների համար.
- www.antitrafficking.am կայքի պահպանում միջոցառման շրջանակներում իրականացվել են www.antitrafficking.am կայքի պահպանման և թարմացման աշխատանքները: www.antitrafficking.am կայքեջը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միակ հայալեզու, ժամանակակից հարթակն է, որը դարձել է << կառավարության թրաֆիքինգի դեմ պայքարի Ազգային խորհրդի ոչ պաշտոնական կայքեջը.
- Իրականացվել է «Հայաստանի Հանրապետությունում մարդկանց շահագործման երևոյթը և դրա դեմ պայքարը արձարծող լրագրողական մրցույթ» միջոցառումը: Մրցույթի նպատակն էր խրախուսել <<-ում մարդկանց շահագործման/թրաֆիքինգի երևոյթի և դրա դեմ պայքարի վերաբերյալ լուսաբանումը: Մրցույթի մասնակիցներն են 2021 թվականի ընթացքում մարդկանց շահագործման երևոյթի և դրա դեմ պայքարի մասին հանրային իրազեկման աշխատանքներ իրականացրած լրագրողները:
- «Աջակցություն երիտասարդ ընտանիքներին» ծրագրի շրջանակներում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ սուբսիդավորվել է 5475 վարկ՝ ընդհանուր 1,351.4 մլն դրամ ծավալով:
- «<<-ում գործող երիտասարդական հասարակական կազմակերպություններին դրամաշնորհների տրամադրում» միջոցառման շրջանակներում 2021 թվականին դրամաշնորհային մրցույթի արդյունքում հասարակական կազմակերպությունների հետ կնքվել են 11 դրամաշնորհային պայմանագրեր.
- «100 գաղափար Հայաստանի համար» համահայկական երիտասարդական մրցույթ» ամենամյա միջոցառումը, որի նպատակն է երիտասարդներին ներգրավել << սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների լուծման գործընթացներում: 2021 թվականին մրցույթն անց է կացվել կանոնակարգով հաստատված բոլոր 20 անվանակարգերով, ստացվել է 137 հայտ, որից հաղթող են ճանաչվել 5-ը և ստացել 500,000-ական դրամ պարգևատրում.

- 2021 թվականի հոկտեմբերի 11-13-ը Սյունիքի մարզի Կապան քաղաքում տեղի է ունեցել ԱՊՀ պետությունների երիտասարդության հարցերով խորհրդի նիստն ու «100 գաղափար ԱՊՀ համար» երիտասարդական նորարարական մրցույթի եզրափակիչ փուլը:

Առողջապահություն

Բնակչության առողջության պահպանման և բարելավման հիմնախնդիրները դիտարկվում են որպես պետության կայուն զարգացումը պայմանավորող հիմնական գործուներից և ազգային անվտանգության ապահովման առաջնահերթություններից մեկը: 2021 թվականին առողջապահության ոլորտի գործունեության բարելավման և զարգացման քաղաքականության հիմքում որդեգրվել է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու առողջության պահպանման սահմանադրական իրավունքը՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում:

Ոլորտում իրականացվող քաղաքականությունն ուղղված է եղել հանրային առողջապահական ծառայությունների հզորացմանը, հիվանդությունների կանխարգելմանը, առողջ կենսակերպի համար պայմանների ստեղծմանը:

Պետական առողջապահական ծախսերի նպատակայնության հետևողական բարձրացման, հատկացվող ֆինանսական միջոցների վերահսկման և մատուցվող ծառայությունների որակի կառավարման գործուն մեխանիզմների շարունակական բարելավման շնորհիվ առողջապահական համակարգի շահառուն ստիպված չի եղել հավելյալ վճարել պետության կողմից անվճար և արտոնյալ պայմաններով մատուցվող ծառայությունների համար և հիմնականում ստացել է որակյալ բժշկական օգնություն և ծառայություններ: Անվճար բժշկական օգնությունը տրամադրվել է միայն սոցիալական արդարության սկզբունքի հիման վրա: Միաժամանակ պետությունը կանգնած է եղել անհետաձգելի բժշկական օգնության կարիք ունեցող ցանկացած մարդու կողքին:

Առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջապահական, վերաբերողական առողջության պահպանման ծառայությունները եղել են պետության առաջնահերթությունը:

Հանրային առողջապահական ծառայությունների հզորացման ոլորտում կառավարությունն ապահովել է հանրային առողջապահության միասնական պետական քաղաքականության մշակումը և իրականացումը, օրենսդրական դաշտի բարելավումը, վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման և տարածման պատճառների ուսումնասիրությունը և դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը: Բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության բնագավառում տարվող քաղաքականության հիմնական նպատակն է եղել

բնակչության սանհիտարահամաճարակային անվտանգության ապահովումը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության նվազեցումը՝ սանհիտարահամաճարակային կանոնների և նորմերի, հիգիենիկ նորմատիվների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության միջոցով:

Շարունակվել են աշխատանքները հանրային առողջության համար վտանգ ներկայացնող իրավիճակներին արձագանքման կատարելագործման, համընդհանուր լաբորատոր ցանցի և լաբորատոր համակարգի շարունակական զարգացման, առողջ ապրելակերպի քարոզչության, աշխատողների առողջության պահպանման հիմնական կանոնների և նորմերի սահմանման ու կիրառման ուղղություններով:

Արտահիվանդանոցային և հիվանդանոցային առողջապահական ծառայությունների որակի, մատչելիության, հասանելիության ապահովման ոլորտում բժշկական օգնության կազմակերպման որակի բարձրացման առումով՝ բժշկական ծառայությունների որակի կառավարման նպատակով փուլ առ փուլ շարունակվում են ներդրվել ապացուցողական բժշկության վրա հիմնված բժշկական օգնության տրամադրման ուղղեցուցերը: Կառավարությունը շարունակել է մարզային բժշկական կազմակերպությունները (առողջության առաջնային պահպանման օղակի և հիվանդանոցային) վերանորոգելու, վերակառուցելու և վերազինելու ծրագրի իրականացումը՝ հանրապետության ամբողջ տարածքում հասանելի դարձնելով ժամանակակից բժշկական ծառայությունները: Աշխատանքներ են իրականացվել ոլորտը նորագույն սարքավորումներով վերազինելու և միասնական էլեկտրոնային համակարգ ներդնելու ուղղություններով:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի (տեղամասային թերապևտ, մանկաբույժ, ընտանեկան բժիշկ) գործառույթներն առավելագույնս ուղղվել են հիվանդությունների կանխարգելմանն ու վաղ հայտնաբերմանը:

Մոր ու մանկան առողջության պահպանման ծառայությունների բարելավման ոլորտում կառավարությունը նպաստել է մոր և մանկան առողջության ցուցանիշների բարելավմանը՝ ուղղորդված առողջապահական ծրագրային միջոցառումների իրականացման միջոցով ապահովելու մոր ու մանկան առողջության առաջնային պահպանման համակարգում կանխարգելիչ ծրագրային ուղղությունների ուժեղացումը:

Առողջապահական կադրային ներուժի ապահովման ոլորտում իրականացվել են աշխատանքներ բուժաշխատողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական բարելավման ուղղությամբ: Ներդրվել են մեխանիզմներ առողջապահական կադրային ներուժի տարածքային օպտիմալ բաշխման, մարզային առողջապահական կազմակերպությունները

որակյալ կադրերով ապահովելու և բժշկի աշխատանքը մարզում հնարավորինս խրախուսելու համար:

Դեղերի անվտանգության, արդյունավետության և որակի ապահովման ոլորտում իրականացվել են աշխատանքներ հանրապետությունում անվտանգ, արդյունավետ, որակյալ և մատչելի դեղեր ունենալու ուղղությամբ՝ դեղային ազգային քաղաքականության մշակման, դեղերի շրջանառության բոլոր փուլերի կանոնակարգման, այս ոլորտի պետական վերահսկողության բարելավման, հայրենական արտադրության դեղերի մրցունակության ապահովման և տեղական դեղարտադրության խրախուսման միջոցով:

Շարունակվել են լրացուցիչ միջոցներ ուղղվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կյանք փրկող գիտութեղի սուր և/կամ ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայության զարգացմանը, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝ արտագնա անհետաձգելի բժշկական օգնության արագ արձագանքման ծառայության կողմից պացիենտներին ուղղաթիռով տեղափոխելու գործընթացին:

Վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը ռազմավարական մեկ այլ կարևոր նպատակ է եղել, որի շրջանակներում ապահովվել է առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերման, ախտորոշման ու կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավում և այդ հիվանդությունների բարդությունների, հաշմանդամության և մահացության ցուցանիշների կրճատում, ինչպես նաև վարակիչ հիվանդություններով հիվանդացության նվազեցում, կառավարելի վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերի կանխում և վարակիչ հիվանդությունների նկատմամբ բնակչության անընկալիության ապահովում:

Կառավարության հիմնական խնդիրներից է եղել հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը: Ուռուցքաբանական վիրահատությունների գների վերանայման, ճառագայթային բուժման դեպքերի, քիմիաթերապիայի դեղերի ցանկի ընդլայնման և պետության կողմից երաշխավորված անվճար պալիատիվ ծառայության ներդրման միջոցով ուռուցքաբանական հիվանդություններով հիվանդ քաղաքացիներին մատուցվել են որակյալ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ՝ միաժամանակ վերջիններիս «վիրկելով» հիվանդության բուժման հետ կապված կործանարար ծախսեր կատարելու վտանգներից:

Նոր տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվել են մարդու օրգանների (երիկամ և յարդ) և ուսկրածության բջիջների փոխառատվաստման ծառայություններ, որոնք բարելավել են

քրոնիկ երիկամային և յարդային անբավարարությամբ ու արյան չարորակ հիվանդություններով տառապող անձանց կյանքի որակը և ապրելիության ցուցանիշը:

2021 թվականին կառավարությունը դիմակայել է այնպիսի մարտահրավերի, ինչպիսին էր COVID 19 համավարակը:

Աշխատանք և սոցիալական պաշտպանություն

Աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում 2021 թվականին ՀՀ կառավարության համար գերակա վերջնական արդյունքներ են պետական միջոցների շրջանակում շահառուներին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը՝ խրախուսելով ծառայությունների հասարակական կազմակերպություններին մրցութային եղանակով պատվիրակումը, շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավումը, ծառայությունների ապահնատիտուցիոնալացման գործընթացի համատեքստում համայնքային այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը՝ ներգրավելով համայնքի ներուժը:

Ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների բնագավառ

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան, սոցիալական նպաստներ, հրատապ օգնություն) վճարումները սկսել են իրականացվել նաև անկանխիկ եղանակով:

ՀՀ վարչապետի 2021թ. սեպտեմբերի 29-ի N 1082-Ա որոշմամբ անապահովության (սոցիալական) գնահատման համակարգում առկա խնդիրների բացահայտման, համակարգի հասցեականության և արդյունավետության բարձրացման, նոր համակարգի ներդրման նպատակով ստեղծվել է հանձնաժողով: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ստեղծվել է նաև աշխատանքային խումբ: Նոր համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի բարեփոխումների համատեքստում 2021 թվականի ապրիլի 1-ից գործարկվել է Միասնական սոցիալական ծառայությունը, որը հիմնված է սոցիալական կարիքի գնահատման միասնական համակարգի վրա՝ նպատակ ունենալով բարձրացնել սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման արդյունավետությունը, սոցիալական ծառայությունների որակը: Միասնական սոցիալական ծառայությունը ստեղծվել է ՀՀ ԱՍՀՆ ենթակա մարմին ՍԱԾ հիմքի վրա՝ սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր 4 մարմինների՝ ՍԱԾ, բժշկասոցիալական փորձաքնության, գրադադության պետական

գրասենյակների և մարզային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալության, համայնքային ենթակայության սոցիալական աջակցության 17 բաժինների ներգրավմամբ:

Այս կապակցությամբ 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունվել են «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Պետական կենսաթոշակների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» << օրենքները և դրանց կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական իրավական ակտերը:

Շարունակվում են սոցիալական դեպքի վարման գործառնական հենքի ձևավորման, ինչպես նաև տեղեկատվական համակարգի կատարելագործման աշխատանքները: Համաշխարհային բանկի սոցիալական պաշտպանության վարչարարության 2-րդ ծրագրի շրջանակներում մշակվել է սոցիալական ոլորտի Միասնական տեղեկատվական համակարգի ամբողջական և մասնակի իրականացման նկատմամբ սահմանվող պահանջների նկարագիրը և տեխնիկական առաջադրանքը, որը հաստատվել է ՀՀ կողմից, շրջանառվել է շահագրգիռ գերատեսչությունների շրջանում և ներկայացվել է համակարգող փոխվարչապետ Մ. Գրիգորյանի գրասենյակ՝ Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի նիստի քննարկմանը, որի դրական եզրակացության դեպքում կիետուի մրցույթի հայտարարման գործընթացը:

«Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման (մասնագիտացման) դասընթացներին մասնակցել են 83 աշխատողներ: ՄՄԾ սոցիալական աշխատողների ամբողջական վերապատրաստումներ կիրականացվեն 2022 թվականի ընթացքում:

Մեկնարկել են Կառավարության ծրագրով նախատեսված՝ Բնակարանով ապահովելու միասնական սոցիալական ռազմավարության մշակման աշխատանքները:

<< կառավարության կողմից շարունակվել են իրականացվել << կառավարության 2020 թվականի մայիսի 14-ի N 968-Լ որոշմամբ հաստատված՝ Երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության 2020-2023 թվականների ծրագրերը: 2021 թվականի ծրագրերի շրջանակներում աջակցություն է ստացել 1949 շահառու՝ 1,266.7 մլն դրամի չափով:

Աշխատանքի և զբաղվածության բնագավառում 2021 թվականին պետական քաղաքականությունը շարունակել է ուղղվել աշխատաշուկայի լարվածությունը մեղմելուն, զբաղվածության ակտիվ ծրագրերի միջոցով՝ աշխատաշուկայում անմրցունակ անձանց, ըստ առաջնահերթությունների, կայուն զբաղվածության ապահովմանը և ինքնազբաղվածության

խթանմանը, աշխատանք փնտրողների, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց, երիտասարդների զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կայուն զբաղվածություն ապահովող պետական ծրագրերին գործատուների շահագրգիռ ներգրավվածության խթանմանը, գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերը որակյալ մասնագետներով համալրելուն, ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման շրջանակներում՝ աշխատաշուկայում անմրցունակ խմբերի արդյունավետ և կայուն զբաղվածության ապահովմանը, ինչպես նաև սոցիալ-աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավական դրույթների համապատասխանեցմանը << կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին: Այս համատեքստում առանձնապես կարևորվել են՝

- զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության մեծացմանը և կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջացառումները,
- կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև աշխատաշուկայի կարգավորման նպատակային ծրագրերի և արդյունավետ գործիքների ներդրումը,
- սոցիալ-աշխատանքային երաշխիքների հետևողական կատարելագործումը, այդ թվում << աշխատանքային օրենսդրության փոփոխությունները՝ << կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխանեցման, ինչպես նաև իրավակիրառական պրակտիկայից բխող խնդիրների լուծման նպատակով:

Կորոնավիրուսային հիվանդության տարածման հետևանքով ստեղծված իրավիճակում աշխատանքային հարաբերությունների պատշաճ կենսագործունեությունն ու իրականացումը, ինչպես նաև աշխատողների՝ առողջության համար անվնաս աշխատանքային պայմաններում աշխատելու իրավունքի իրացման համար պայմաններ ապահովելու նպատակով մշակվել են «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» << օրենքների նախագծերը, որոնք ընդունվել են 2021 թվականի դեկտեմբերի 10-ին («Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-389-Ն և ««Հանրային ծառայության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-390-Ն օրենքներ): Օրենքներով սահմանվել են կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված սանհտարահամաճարակային անվտանգության կանոններով նախատեսված՝ աշխատանքի ներկայանալու անհրաժեշտ պայման հանդիսացող փաստաթղթերն աշխատողների կողմից չներկայացվելու դեպքում աշխատողին աշխատանքի չթույլատրելու, գործատուի կողմից

աշխատանքային պայմանագիրը միակողմանիորեն լուծելու, հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին աշխատանքի չթույլատրելու և լիազորությունների դադարեցման կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու հասովկ հիմքերը:

2021 թվականի հոկտեմբերի 6-ին կատարվել են լրացումներ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքում: Ըստ այդմ՝ հնարավորություն է տրվել սոցփաթեթի համար հատկացվող միջոցներն ուղղել նաև մարզա-առողջարարական և սպորտային համալիրների, լողավազանների և այլ սպորտային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու համար սահմանված վճարի, ինչպես նաև պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկերի մարմանը:

2021 թվականի հոկտեմբերի 28-ին ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշմամբ լայնածավալ և էական փոփոխություններ են կատարվել սոցփաթեթի հատկացման կարգում: Ըստ այդմ՝ սոցփաթեթի ծախսման ուղղությունները, բացի «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով իրականացված լրացումների, լրացվել են ևս մի քանի նոր ուղղություններով: Մասնավորապես՝

- առողջապահական փաթեթի մեջ չներառված լրացուցիչ ծառայություններից օգտվելու վճարի մարում, օրինակ՝ ստոմատոլոգիական ծառայություններ՝ թերապևտիկ և վիրաբուժական (ծառայությունից կկարողանա օգտվել շահառուն),
- պետական սուբսիդավորմամբ ուսանողական վարկի մարում (ծառայությունից կկարողանա օգտվել շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը),
- նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների (մանկապարտեզների, նախակրթարանների) վճարների մարում (ծառայությունից կկարողանա օգտվել շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը),
- գույքի ձեռքբերման կամ կառուցապատման նպատակով տրամադրված բոլոր հիպոտեկային վարկերի ամսական վճարի մարում (ծառայությունից կկարողանա օգտվել շահառուն կամ նրա ընտանիքի անմիջական անդամը):

Կատարվել են մի շարք այլ էական փոփոխություններ ևս, օրինակ՝

- հանվել է սոցփաթեթի ծառայություններից օգտվելու համար նույնականացման քարտը ներկայացնելու պարտադիր պահանջը,
- շահառուների համար նաև սահմանվել է երաշխիք, որպեսզի սոցփաթեթի մեկ շահառու կազմակերպությունից մյուսը մեկամսյա ժամկետում աշխատանքի անցնելիս պահպանվի սոցփաթեթից օգտվելու իրենց իրավունքը,
- վերանայվել է սոցփաթեթի շահառուների ընտանիքի անմիջական անդամների շրջանակը:

Կարևորվել են նաև սոցիալական գործընկերության զարգացումը և ամրապնդումը, մասնավորապես՝ ճյուղային, տարածքային ու կազմակերպությունների մակարդակում: «Հայավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆերերացիայի և Հայաստանի գործատունների հանրապետական միության միջև ստորագրված Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի 5-րդ բաժնին համապատասխան՝ «Հայավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆերերացիայի և Հայաստանի գործատունների հանրապետական միության 2021 թվականի հունիսի 4-ի համաձայնագրով ձևավորվել է Հանրապետական եռակողմ հանձնաժողովը (այսուհետ՝ «Հանձնաժողով») և հաստատվել Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների ցուցակը: Մինչև 2021 թվականի հոկտեմբերի 5-ը Հանձնաժողովի նախագահությունն իրականացվել է «ԱՍՀՆ կողմից: 2021 թվականի հովիսին գումարվել է Հանձնաժողովի 1-ին նիստը, որի ընթացքում հաստատվել է վերջինիս աշխատակարգը: Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի համաձայն սոցիալական գործընկերների կարծիքին են ներկայացվել և վերջիններիս հետ քննարկվել են աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող, գործատունների ու աշխատողների աշխատանքային իրավունքների և շահերի պաշտպանության առումով էական նշանակություն ունեցող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը:

2021 թվականի հոկտեմբերի 5-ից, համաձայն Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի 5.4-րդ և 5.6-րդ կետերի, Հանձնաժողովի նախագահությունը ռոտացիոն կարգով անցել է Հայաստանի գործատունների հանրապետական միությանը:

2021 թվականին Զբաղվածության ծրագրի շրջանակում իրականացվել են զբաղվածության պետական կարգավորման թվով 11 միջոցառումներ: Ընդհանուր առմամբ, ՄՍԾՏԿ-ների միջնորդությամբ 2021 թվականին աշխատանքի է տեղափոխվել 10117 անձ: Զբաղվածության պետական կարգավորման ծրագրում ընդգրկել է 3486 շահառու (որոնցից՝ 174-ը հաշմանդամություն ունեցող անձինք), ընդ որում, 1076-ը՝ ժամանակավոր բնույթ ունեցող՝ սեզոնային և վարձատրվող հասարակական աշխատանքներում: Զբաղվածության պետական ծրագրի արդյունքում կայուն զբաղվածություն է ձեռք բերել 774 անձ:

Երեխաների հիմնահարցերի բնագավառ³

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կարարելու մասին» օրենքի և «Ընդունեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կարարելու մասին» օրենքի նախագծերի մշակում: Կատարվել է ուսումնասիրություն երեխայի որդեգրման

³ Երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագրի կատարման հաշվետվությունը ներկայացված է հետևյալ հավելվածում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\13.Հավելված N8 Երեխաների իրավունքների պաշտպանություն.doc](#):

ընթացակարգի վերաբերյալ խնդիրների վերհանման նպատակով՝ ոլորտային կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվել են ավելի քան մեկ տասնյակ քննարկումներ, վերանայվել են երեխայի որոշքրման գործընթացի իրավական մեխանիզմները, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորումներ:

Մշակվել է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» <<օրենքի նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Հաշվի առնելով այն, որ Նախագիծը մշակվել է երեխայի բոլոր իրավունքների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման տրամաբանությամբ՝ անհրաժեշտություն է առաջացել նաև փոփոխություններ և լրացումներ կատարելու «Լիցենզավորման մասին» <<օրենքում և «Հաղաքացիական դատավարության օրենսգրքում»: Վերոնշյալ նախագծերը ևս մշակվել են: Նախագիծը մշակվել է շուրջ երկու տասնյակ քննարկումների արդյունքում, որի ընթացքում ամրագրվել են երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի տարբեր դերակատարների կողմից ներկայացված խնդիրները: Նախագծի մշակման գործում անմիջական մասնակցություն են ունեցել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչները:

Կազմակերպվել են հանրային քննարկումներ՝ տարբեր գերատեսչությունների, ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդգրկմամբ: Որդեգրման գործընթացի բարելավման նպատակով գումարվել է նաև << վարչապետի 2019թ. օգոստոսի 26-ի N 1197-Ն որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի 4 նիստ, որոնց ընթացքում ևս քննարկվել են գործընթացի լավարկմանն ուղղված հարցեր:

Կյանքի դժվարին իրավիճակում հայդնված երեխաների և նրանց ընդունակությունների կարիքների խորը գնահատում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընդունակությունների կարիքների խորը գնահատման նպատակով ձեռնարկվել են մի շարք միջոցառումներ: Մասնավորապես՝ << ԱՍՀԵ-ը նախաձեռնել է շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունների երեխաների՝ կենսաբանական ընտանիքների հետ հնարավոր վերամիավորման գործընթաց՝ այդ նպատակով ընդգրկելով երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի դերակատարներին: Մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի՝ երեխաների իրավունքների պաշտպանություն իրականացնող բաժիններին վերապահվել է խորքային գնահատման գործընթացի կազմակերպման և դեկավարման իրավասությունը՝ հիմք ընդունելով վերջիններիս լիազորությունների շրջանակը: Գործընթացի մասնակից են նաև շահագրգիռ մարմիններն ու կազմակերպությունները: Գործընթացի շրջանակներում իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 100 երեխաների և ընտանիքների խորքային գնահատում:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատությունների լուծարման արդյունքում ընտանիքների հետ վերամիավորված երեխաների կարիքների խորքային գնահատման արդյունքների հիման վրա իրականացվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 297 երեխայի գնահատված կարիքների վերլուծություն:

Պետության կողմից պատվիրակված լիազորություններ ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից գնահատվել են ավելի քան 4500 երեխաների և նրանց ընտանիքների կարիքները, ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված երեխաների կարիքների գնահատման արդյունքում դասընթացներ են կազմակերպվել ծնողների համար մի շարք թեմաներով:

Երեխաների կրթական իրավունքի լիարժեք իրացման համար դպրոցների հետ կազմակերպվել են հանդիպումներ՝ 65 հանդիպում մարզերի 65 դպրոցների հետ (35 քաղաքային և 30 գյուղական), որոնց մասնակցել է ընդհանուր թվով 267 կրթության ոլորտի մասնագետ, հատուկ մանկավարժների կողմից ծառայություններ են մատուցվել 69 երեխայի, 34 երեխա ուղղորդվել է հանրակրթական ներառական կրթության:

Մշակութային արժեքներին հաղորդակցվելու երեխայի իրավունքի ապահովման նպատակով.

- համայնքային մշակութային, սպորտային, կրթական կենտրոններ են ուղղորդվել 223 երեխաներ, շուրջ 200 երեխաներ մասնակցել են մշակութային և մարզական տարբեր միջոցառումների՝ արդյունքում գրավելով մրցանակային տեղեր.

- ցերեկային կենտրոնում գործող խմբակներում ընդգրկվել են շուրջ 2500 երեխաներ:

Նախարարության և ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի միջև կնքված հուշագրի շրջանակում իրականացվել են երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրազեկման, ինչպես նաև խնամատարության ինստիտուտի տարածքային համաշափ զարգացման ապահովմանն ուղղված աշխատանքներ: Արդյունքում ընդլայնվել է խնամատարության ինստիտուտի տարածքային բաշխվածությունը՝ ընդգրկելով նոր համայնքներ: Միաժամանակ իրականացվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և խնամատար ընտանիքներում խնամք և դաստիարակություն ստացող երեխաների և նրանց կենսաբանական ընտանիքների կարիքների համակողմանի մասնագիտական, շարունակական գնահատում, որի վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական համակարգ: Ներկայում առկա են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 0-18 տարեկան 8100 երեխաների կարիքների գնահատման արդյունքներ, որոնք շարունակաբար ճշգրտվում և ամբողջականցվում են:

Իրականացված գնահատումների ուսումնասիրության արդյունքում նախարարությունը ձեռնամուխ է եղել կարիքների գնահատման նոր ձևաչափի մշակման, որի շրջանակում 2021

թվականի հունվար և փետրվար ամիսներին ԱՄՆ ՄշԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Տվյալներ ազդեցության համար (Data for Impact /D4I)» ծրագրի հետ սերտ համագործակցությամբ առանձնացվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների մասին այն տեղեկատվության ցանկը, որը նպատակահարմար է էլեկտրոնային տարբերակով՝ համակարգերի փոխգործելիությամբ ստանալ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին տեղեկատվական համակարգերից: Այժմ քննարկումներ են կազմակերպվում նախարարության կողմից մշակվող Միասնական տեղեկատվական համակարգի, Ընտանիքների սոցիալական գնահատման, Անձի ֆունկցիոնալության գնահատման նոր տեղեկատվական համակարգերի հետ «Մանուկ» տեղեկատվական համակարգի փոխգործելիության ապահովման հարցերի շուրջ:

Ընդհանուր առմամբ իրականացվել է շուրջ 5000 երեխաների կարիքների խորքային գնահատում, որը կազմում է ներկայում հաշվառված, կարիքները գնահատված կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների շուրջ 62%-ը:

Յերեկային խնամքի համայնքահենք և ներառական հասանելի ծառայությունների սպեղծում Երևան քաղաքում և << մարզերի խոշոր համայնքներում՝ ներառելով բարաբնույթ ծառայություններ կյանքի դժվարին բարբեր իրավիճակներում հայրնված երեխաների համար: 2021 թվականին դրամաշնորհային մրցույթի արդյունքում պետության կողմից հասարակական կազմակերպություններին պատվիրակման շրջանակում հանրապետության 22 խոշոր համայնքներում շուրջ 3100 երեխայի տրամադրվել են ցերեկային խնամքի ծառայություններ: Ծառայությունն ունի նաև շարժական բաղադրիչ, որի շրջանակում աջակցություն է տրամադրվել 118 ընտանիքի, 276 երեխայի՝ ուղղված սպասարկելու այն համայնքների երեխաներին, որտեղ ծառայությունը տեղակայված չէ, սակայն աջակցության կարիք կա: Ծառայությունը ներառական է, ընդգրկում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների: Յերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաների մասնաբաժինը կազմել է միջինում 21%:

Երեխաների խնամքի ցերեկային ծառայություններ են տրամադրվում նաև << աշատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող 6 հաստատությունների կողմից, որտեղ ծառայություն են ստանում 600 երեխաներ: Նշված հաստատություններում ևս ծառայությունը ներառական է, ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաները կազմում են միջինում 9.5%:

Նկարագրված ծառայությունների, խնչպես նաև 2021 թվականի հունվարից պետության կողմից պատվիրակման միջոցով՝ 6 մարզերում և Երևան քաղաքում ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել են «<< երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամքող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաներին ընտանիք վերադարձնելու և մուտքը

հաստատություններ կանխարգելելու ծառայություններ» և «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնահրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումները, որոնց շրջանակներում 327 շահառու երեխաները և նրանց ընտանիքները ստանում են ծրագրի նպատակներից բխող ծառայություններ՝ մասնագիտական աջակցություն, սոցիալական աջակցություն՝ սննդի զամբյուղ և էեկտրաէներգիայի փոխհատուցում, բնահրային փաթեթ:

Կյանքի դժվարին իրավիճակում հայրնված երեխաների ընդունակություններին ընդունական խորհրդակրվության և ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացների կազմակերպում: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքներին տրամադրվել է խորհրդատվություն, երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների գործունեության կենտրոնական բաղադրիչն է համարվում ընտանիքների հետ աշխատանքը, նախարարության ենթակայությամբ գործող երեխաների ցերեկային խնամքի հաստատությունների կողմից ծառայություն ստացող 100% երեխաների ծնողներին տրամադրվել է խորհրդատվություն, իսկ պետության կողմից պատվիրակված լիազորություններ ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից խնամքի ցերեկային ծառայությունների շրջանակներում այդ ցուցանիշը միջինում կազմում է 89.4%: Ինչ վերաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողների համար ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացների կազմակերպմանը՝ պետական հաստատությունների կողմից այդ ցուցանիշը կազմում է 83.3%, իսկ հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվել են ծնողների միջինում 71.1% մասնակցությամբ դասընթացներ:

Սոցիալական աջակցության և զբաղվածության ծրագրերում կյանքի դժվարին իրավիճակում հայրնված երեխաների ծնողների և ընդունակությունների ներգրավման առաջնահերթության սահմանում, թիրախային ծրագրերի մշակում և իրականացում: Համաձայն «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 20-րդ հոդվածի՝ սոցիալական աջակցության հիմնական սկզբունքներից է երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթությունը՝ սոցիալական աջակցություն տրամադրելիս երեխաներին նախապատվություն տալը:

Սոցիալական աջակցության ծրագրերից խոշորագույնը ընտանեկան նպաստն է, որի նպատակը անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելն է: Նպաստի այս տեսակից օգտվում են շուրջ 60000 ընտանիքներ: Ընտանեկան նպաստի չափը որոշվում է՝ ընտանեկան նպաստի բազային մասին ավելացնելով ընտանիքի կազմում գտնվող և ընտանիքի բնակության վայրում փաստացի բնակվող 18 տարին չլրացած յուրաքանչյուր անդամի համար տրվող հավելումը: Միաժամանակ՝ << կառավարության

2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած << կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի առաջին պարբերությամբ սահմանված է, որ սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզիետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների ու հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են: Այս նպատակի իրականացման համար նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Սոցիալական աջակցության մասին» << օրենքում և հարակից օրենքներում:

Զբաղվածության ծրագրերում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողների համար 2021 թվականին իրականացվել է «Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների համար դասընթացների կազմակերպում» միջոցառումը, որի նպատակն է մոտ 2 ամիս տևողությամբ դասընթացների միջոցով աջակցել հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողներին մասնագիտական հմտություններ ծեռք բերելու և աշխատանքի տեղավորվելու հարցում: 2021 թվականին միջոցառման մեջ ընդգրկվել է 28 անձ: Միաժամանակ, համաձայն զբաղվածության ոլորտի օրենսդրական կարգավորումների՝ հաշմանդամություն ունեցող երեխա խնամող գործազուրկ անձինք համարվում են աշխատաշուկայում անմրցունակ անձինք և կարող են ընդգրկվել զբաղվածության ապահովման բոլոր պետական միջոցառումներում առաջնահերթության կարգով:

Ճգնաժամային աջակցության կենդրուների սպեհում երևան, Գյումրի և Կապան քաղաքներում: << կառավարության 2020 թվականի նոյեմբերի 26-ի N 1878-Ն որոշմամբ «Գյումրի քաղաքի երեխաների հոգածության սոցիալական կենտրոն» և «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-Ները միաձուլման ծնով վերակազմակերպվել են «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, որն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից՝ իրականացնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 100 երեխայի

ցերեկային խնամք և 0-18 տարեկան 60 երեխայի շուրջօրյա կարճաժամկետ խնամք: Միաժամանակ ՀՀ կառավարության 2021թ. հունվարի 14-ի N 37 որոշմամբ ստեղծվել է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի գործունեությունը մեկնարկել է 2021 թվականի մայիսի 1-ից: Համաձայն հաստատության կանոնադրության՝ ցերեկային խնամքի բաղադրիչով խնամք են ստանում 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 100 երեխա, կարճաժամկետ շուրջօրյա խնամք է տրամադրվում 0-18 տարեկան 40 երեխայի: Երեխաների շուրջօրյա խնամքն անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է նաև խնամողի հետ:

Ճգնաժամային կենտրոնի մոդելով Երևան քաղաքում գործում է մեկ հաստատություն՝ «Երևանի «Զատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, որտեղ շուրջօրյա կարճաժամկետ խնամք կարող են ստանալ մինչև 25 երեխաներ:

Կենտրոնների աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով նախարարությունը մի շարք շահեկից կազմակերպությունների, այդ թվում՝ «Վորլդ Վիժն Հայաստան» բարեգործական կազմակերպության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համագործակցությամբ իրականացնում է աշխատանքներ, մասնավորապես, կահավորման, մասնագիտական գույքով հագեցման, ինչպես նաև մասնագետների գիտելիքների և կարողությունների հզորացման ուղղությամբ:

Վերոնշյալ կենտրոններից կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման ցուցանիշը կազմում է շուրջ 50%:

Անկախ ապրելակերպ ուղեկցող ծառայությունների սպեցիալիստ Երևանում և ՀՀ մարզերում: Հաստատությունների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների ձեռնարկման, անկախ կյանքի նախապատրաստման համար իրականացվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 16-23 տարեկան, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների կարիքի գնահատում, որից ելնելով մշակվում է մասնագիտական կողմնորոշման ծրագիր, կազմակերպվում են այցելություններ տարբեր հիմնարկներ, իրականացվում են հանդիպումներ տարբեր մասնագետների հետ, ֆիլմերի դիտում, ծանոթացում տարբեր մասնագիտությունների հետ, ուժեղ և թույլ կողմերի բացահայտում, նախասիրությունների, հետաքրքրությունների բացահայտում:

Միաժամանակ, Կազմակերպությունը համագործակցությամբ ՀՀ ԱՍՀ Ենթակայության հաստատություններում իրականացվել են «Քաղաքացիական կրթության ծրագիր» թեմայով 8 շաբաթ տևողությամբ վերապատրաստումներ, որի արդյունքում ակտիվ մասնակիցներին նախատեսվում է տալ գործիքներ՝ հաստատությունների շահառուների քաղաքացիական կրթության ուղղված մասնագիտական վերապատրաստումներ անցկացնելու նպատակով:

«Վորլդ Վիժն Հայաստան» ԲՄՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում մշակվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների բնականոն սոցիալականացմանն ու սոցիալական ներառմանն ուղղված ծրագիր, որը նույնպես ուղղված է 16-23 տարեկան երեխաների անկախ ապրելակերպի և սոցիալական ինտեգրման ապահովմանը:

Յերեկային խնամքի ծառայություններում սոցիալական օգնականի բաղադրիչի ներդրում և գործարկում: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում երեխաների ցերեկային խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից ներդրված սոցիալական օգնականի ծառայությունից օգտվել է շուրջ 650 շահառու: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում հասարակական կազմակերպությունների տրամադրած ցերեկային խնամքի ծառայություններից բավարարվածության աստիճանը 80-100 տոկոսի միջակայքում է, իսկ պետական ցերեկային կենտրոնների շահառուների բավարարվածության աստիճանը՝ 90-100 տոկոսի:

Յերեկային խնամքի ծառայություններում վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընդունիքների համար անհրաժեշտ ծառայությունների բաղադրիչի ներդրում և գործարկում: Ինչպես նախարարության ենթակայությամբ գործող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ցերեկային խնամքի կենտրոններում, այնպես էլ պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում մատուցվող ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են վարքային խնդիրներ ունեցող երեխաներ:

Նախարարության ենթակայությամբ գործող ցերեկային խնամքի հաստատություններում ծառայություն է տրամադրվում 89 վարքային խնդիր ունեցող երեխաների, իսկ պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում հասարակական կազմակերպությունների տրամադրած ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված են 265 վարքային խնդիրներ ունեցող երեխաներ:

Վարքային խնդիրներ ունեցող երեխաների և նրանց ընտանիքներին տրամադրված ծառայությունների շրջանակում երեխաները ստացել են անհատական սոցիալական ծրագրով նախատեսված ծառայություններ՝ իհմնվելով կարիքների համալիր գնահատման արդյունքում դուրս բերված հիմնախնդիրների վրա: Ծառայությունները մատուցվել են ինչպես խմբային, այնպես էլ անհատական մեթոդով: Իրականացվել են կանխարգելիչ դասընթացներ դպրոցներում, ապահովվել է սերտ համագործակցությունը ոստիկանության անչափահասների բաժնի հետ:

Երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող ոչ պետական, բարեգործական հասկապությունների ուսումնասիրություն և դրա հիման վրա գործունեության դադարեցման կամ վերակազմավորման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում << Վարչապետի

աշխատակազմ: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021թ. նոյեմբերի 24-ի N 179-Ա/1 հրամանի համաձայն ձեռնարկվել է երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող ոչ պետական, բարեգործական հաստատությունների գործունեության ուսումնասիրություն: Ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովում ներառված են պատգամավորներ, տարբեր գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ուսումնասիրություն իրականացվում է հաստատված ձևաթղթի լրացման, փաստաթղթերի ուսումնասիրության, ինչպես նաև հարցազրոյցների միջոցով: Ներկայում ուսումնասիրվել է 9 հաստատության գործունեություն: Արդյունքներն ամփոփվել են և ներկայացվել Վարչապետի աշխատակազմ, միաժամանակ, ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ ամրագրված թերությունները վերացնելու ուղղությամբ:

Վերոնշյալ միջոցառումներից զատ, ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված արդյունքների գրանցման նպատակով իրականացվել է նաև.

- 78 մասնագետների վերապատրաստում «Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների, չափահասների հետ աշխատելու հմտություններ» թեմայով,
- 58 մասնագետների վերապատրաստում «Համայնքային սոցիալական աշխատանքը COVID 19 համավարակի պայմաններում» թեմայով,
- 38 մասնագետի վերապատրաստում «Ասպահնստիտուցիոնալիզացիա և դեպի հաստատություններ կանխարգելում», «Հաշմանդամություն», «Միասնական սոցիալական ծառայություններ, տվյալների բազաներ» թեմաներով,
- 36 մասնագետի վերապատրաստում «Ֆիզիկական և մտավոր զարգացման առանձնահատկություններով երեխաների կյանքի կազմակերպումն ու վերականգնողական աշխատանքները թեմայով՝ ՍՈՐՍ հիմնադրամի կազմակերպմամբ,
- 25 մասնագետ վերապատրաստվել է «Արտ-գեղտալտ մոտեցման կիրառումը ճգնաժամային իրավիճակում հայտնված երեխայի և ընտանիքի հետ աշխատանքում» թեմայով,
- 32 մասնագետ վերապատրաստվել է «X-KEY նորարական տեխնոլոգիաները ներառական կրթության ոլորտում» թեմայով՝ ԱՍՀԵՆ նախաձեռնությամբ,
- երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերյալ տեսաձայնագրությունների մշակում և տարածում,
- երեխաների իրավունքների պաշտպանության մշտադիտարկման և գնահատման միասնական և արդյունավետ տեղեկատվական համակարգի ստեղծմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես 24 նոր ցուցանիշների մշակման, համակարգի արդիականացման աշխատանքներ, ԱՄՆ ՄԶԳ Դ4I ծրագրի շրջանակներում համագործակցության հուշագրի կնքում:

Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բնագավառ

2021 թվականին «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի շրջանակներում շարունակել են իրականացվել «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ», «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ», «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն», «Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ», «Մարդկանց թրաֆիքինգի և/կամ շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառումները:

«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ» միջոցառմամբ ապահովվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» <<օրենքի 19-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ծառայությունների տրամադրումը: 2021 թվականին ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոններ են գործել բոլոր մարզերում և Երևան քաղաքում: Ծրագրի ավարտին համապատասխան ծառայություններ են ստացել 1516 ընտանիքում բռնության ենթարկված անձինք:

«Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ապաստարանի ծառայություններ» միջոցառմամբ 2021 թվականին պետական համաֆինասավորմամբ գործել է <<կառավարության 2019թ. մարտի 29-ի N 364 Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան 2 ապաստարան, որտեղ ընտանիքում բռնության ենթարկվածները, անհրաժեշտության դեպքում նաև նրանց խնամքի տակ գտնվող անձինք, ապահովվել են անհատույց ապահով բնակելի տարածքով, սննդով, հագուստով, տրամադրվել է հոգեբանական, իրավաբանական օգնություն, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված սոցիալական աջակցություն: 2021 թվականին ծառայություններ են մատուցվել 160 ընտանեկան բռնության ենթարկված անձանց:

«Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցություն» միջոցառման շրջանակներում շարունակվել է իրականացվել ընտանիքում բռնության ենթարկված անձանց ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը: Ընտանիքում բռնության ենթարկված անձին ֆինանսական աջակցությունը տրամադրվել է ոչ ավելի, քան 150 հազ. դրամի չափով: 2021 թվականին ֆինանսական աջակցություն է տրամադրվել ընտանիքում բռնության ենթարկված 77 անձի:

«Թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ» միջոցառմամբ՝ «Մարդկանց թրաֆիքինգի և

(կամ) շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» << օրենքի հիման վրա ապահովվել է թրաֆիքինգի և շահագործման՝ սեռական բռնության ենթարկված անձանց պաշտպանությունը, բազմակողմանի ու օպերատիվ աջակցության կազմակերպումը՝ ուղղված նրանց կյանքի բնականոն ընթացքից մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկվելու հետևանքով առաջացած շեղումների վերացմանը: 2021 թվականին համապատասխան ծառայություններ են տրամադրվել թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված 13 անձի:

«Մարդկանց թրաֆիքինգի (և/կամ) շահագործման զոհերին միանվագ դրամական փոխհատուցման տրամադրում» միջոցառմամբ՝ «Մարդկանց թրաֆիքինգի և (կամ) շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» << օրենքի և << կառավարության 2016թ. մայիսի 5-ի N 492-Ն որոշման Հավելվածի 46 կետի համաձայն՝ նախատեսվել է մասնակի փոխհատուցել թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց կրած վնասները: 2021 թվականին միանվագ դրամական փոխհատուցում է տրամադրվել թրաֆիքինգի և շահագործման, սեռական բռնության ենթարկված 3 անձի:

Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բնագավառում

2021 թվականին իրականացվել են աշխատանքներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը և հավասար հնարավորությունների ապահովմանը՝ բնագավառի օրենսդրության կատարելագործման և հաշմանդամություն ունեցող անձի կարիքին համարժեք ծառայությունների մատուցման միջոցով:

Մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց՝ բոլորի հետ համահավասար հիմունքներով քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ու ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ, հասարակական կյանքում նրանց հավասար մասնակցությունը և արդյունավետ սոցիալական ներառումն ապահովելու նպատակով 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքը:

Միաժամանակ, 2021 թվականի մայիսի 5-ին ընդունվել է «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքը: Համաձայն օրենքի՝ բժշկասոցիալական փորձաքննությունից անցում է կատարվելու ֆունկցիոնալության գնահատման մոդելի, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել ըստ անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի նրա գործունեության և մասնակցության վրա միջավայրային գործուների ունեցած ազդեցության համատեքստում և որոշել յուրաքանչյուր անձի անհատական կարիքներին համարժեք ծառայությունները: Վերոնշյալ օրենքների ընդունումից

հետո հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման արդյունավետ մեխանիզմներ ապահովելու նպատակով մշակվում են ենթաօրենսդրական իրավական ակտեր:

2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված պատերազմի արդյունքում վիրավորում ստացած անձանց վերականգնողական գործընթացը խթանելու նպատակով հաստատվել է «Հառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 369-Ն որոշումը»:

Հաշմանդամություն ունեցող անձինք, «Հառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 1035-Ն որոշմամբ սահմանված կարգով և ժամկետներում, ստանում են աջակցող միջոցներ՝ պրոթեզներ, օրթեզներ, հենակներ, անվասայլակներ, քայլակներ, լսողական սարքեր, ձայնաստեղծ սարքեր, աչքի պրոթեզներ և այլն: 2020թ. սեպտեմբերի 27-ից Արցախի Հանրապետության դեմ սկսված պատերազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած զինծառայողներին աջակցող միջոցների տրամադրումը հնարավորինս սահուն և արդյունավետ կազմակերպելու նպատակով գործընթացը հնարավորինս պարզեցվել է՝ անկախ հաշմանդամություն ունենալու հանգամանքից, վիրավորում ստացած զինծառայողներին բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից կարիքների գնահատման արդյունքում տրամադրված եզրակացության հիման վրա տրամադրվել են անհրաժեշտ աջակցող միջոցները: Միաժամանակ, համաձայն «ԱՍՀ նախարարի 2020թ. հոկտեմբերի 7-ի N 178 Ա/1 հրամանի, «Հառավարության 2020թ. սեպտեմբերի 27-ի N 1586-Ն որոշմամբ հայտարարված ռազմական դրության ժամանակաշրջանում և դրա գործողության դադարեցումից հետո եռամսյա ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության քաղաքացիներին նույնպես, ըստ կարիքի, տրամադրվում են «Հպետական բյուջեով նախատեսված աջակցող միջոցներ՝ բուժատեխնիկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա»:

2021 թվականին «Հպետական աջակցության սոցիալական հարցերի նախարարության կողմից որակավորված շուրջ 16 կազմակերպությունների կողմից տարվա ընթացքում տրամադրվել են 9019 աջակցող միջոցներ, այդ թվում՝ պրոթեզներ, օրթեզներ, պրոթեզի, օրթոպեդիկ և օրթեզի կոշիկներ, լսողական սարքեր, անվասայլակներ, ձայնաստեղծ սարքեր և այլն:

Պետական բյուջեի առանձին ծախսային միջոցառումների շրջանակներում իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայություններ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի կազմակերպմանը, նրանց սոցիալական ներառմանը և անկախ կյանքի հմտությունների ծնավորմանը: Ծառայությունների իրականացման նպատակով հայտարարվում են դրամաշնորհի տրամադրման մրցույթներ, որոնց կարող են մասնակցել նախարարության կողմից սահմանված կարգով հավաստագրված

կազմակերպությունները: Մրցույթների արդյունքում հաղթող կազմակերպություններին << պետական բյուջեից տրամադրվում են դրամաշնորհներ՝ ցերեկային կենտրոններում կամ խմբային փոքր տներում հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը, գրաղվածությունը, անհրաժեշտ հմտությունների ուսուցումը կազմակերպելու նպատակով: Այս մոտեցումը թույլ է տալիս ընդլայնել ծառայությունների մատուցումը հանրապետության բոլոր մարզերում, միաժամանակ, կազմակերպությունների միջև մրցակցության պայմաններում բարձրանում է նաև մատուցվող ծառայությունների որակը:

Տարեցների հիմնահարցերի բնագավառ

2021 թվականին շարունակվել է պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին, խնամքի ծառայությունների տրամադրումը նույն ուղղություններով, ինչ 2020 թվականին: Մասնավորապես՝ շուրջօրյա խնամք է տրամադրվել 1160 տարեց և հաշմանդամություն ունեցող անձի (այդ թվում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող)՝ շուրջօրյա խնամքի ծառայություններ մատուցող ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) վեց հաստատություններում, այդ թվում՝ պետական ոչ առևտրային 4 կազմակերպություններում և Հայկական Կարմիր Խաչի ընկերության Գյումրու շուրջօրյա խնամքի կենտրոնում՝ 1110 անձի, իսկ մրցույթում հաղթող ճանաչված «Վանաձորի տարեցների տուն» հիմնադրամի ենթակայությամբ գործող կենտրոնում՝ 50 անձի:

Տնային պայմաններում խնամքի և այլ սոցիալական ծառայություններ են տրամադրվել Երևան քաղաքում և հանրապետության մարզերում բնակվող տարեց և հաշմանդամություն ունեցող 2083 շահառուի: Տնային խնամքի ծառայությունները տրամադրվում են դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթած երեք ոչ պետական և մեկ պետական կազմակերպության կողմից: 2021 թվականին տնային խնամքի ծառայություններ են տրամադրվել նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 56 անձի՝ Երևան քաղաքում:

Սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում խնամքի ծառայություններ են տրամադրվել 1334 անձի՝ Երևան քաղաքում և հանրապետության մարզերում: Ցերեկային խնամքի ծառայություններն ամբողջությամբ տրամադրվել են դրամաշնորհի տրամադրման մրցույթում հաղթած մեկ պետական կազմակերպության կողմից:

Շարունակվել է նաև որոշակի բնակության վայր չունեցող անօթևան անձանց կացարանով ապահովման և նրանց սոցիալական ներառմանն ուղղված ծառայությունների մատուցումը, այսպես՝ անօթևան մարդկանց ժամանակավոր օթևանում կացարան է տրամադրվել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անօթևան 86 անձի, որոնց մատուցվել են նաև տարբեր՝ սոցիալ-հոգեբանական և բժշկական օգնության, գրաղվածության ապահովման, իրավաբանական

խորհրդատվության ծառայություններ՝ փորձելով լուծել նրանց սոցիալական խնդիրներն ու վերադարձնել լիարժեք կյանք: Բացի այդ, կացարանի ծառայություններ են տրամադրվել տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող 54 անձի, որոնք բնակվում են հատուկ խմբերին դասված որոշակի անձանց կատեգորիայի կացարանում:

Ըստհանուր առմամբ, 2021 թվականին խնամքի և այլ սոցիալական ծառայություններ են տրամադրվել տարեց և 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև անօթևան 4773 անձի: Միաժամանակ կազմակերպվել և անց է կացվել Տարեցների հիմնախնդիրներով գրաղվող միջգերատեսչական հանձնաժողովի երկու նիստ, որոնց ընթացքում քննարկվել են ոլորտի համար կարևորագույն նշանակություն ունեցող հարցեր:

ԿԵՆՍԱԹՈՂԱԿԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

2021 թվականին պահպանվել են 2020 թվականի համար սահմանված պետական կենսաթողակների չափերը:

Շարունակվել են «Էլեկտրոնային կենսաթողակ» տեղեկատվական համակարգի արդիականացման (կատարելագործման) աշխատանքները՝ որոշումների կայացման գործընթացի ավտոմատացման, այլ տեղեկատվական համակարգերից ինքնաշխատ եղանակով ստացվող և կիրառվող տեղեկատվության (տվյալների) շրջանակի ընդլայնման, կենսաթողակային ապահովության և պետական նպաստների բնագավառի կառավարման համակարգի արդյունավետության բարելավման նպատակով: 2021 թվականին երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող մայրության, երեխայի ծննդյան միանվագ նպաստների չափերի փոփոխություն չի կատարվել, իսկ մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը 2021 թվականի հունիսի 1-ից սահմանվել է 26500 դրամ:

2021 թվականին ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ է տրամադրվել 83710 ընտանիքների, իսկ ընտանեկան նպաստի միջին ամսական չափը կազմել է 31350 դրամ: Հաշվի առնելով երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթության սկզբունքը՝ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ ստացող ընտանիքների թվում երեխա ունեցող ընտանիքների թիվը կազմել է 71.1%:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՐ

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման բնագավար

Հաշվետու տարում իրականացվել է «Սևան», «Դիլջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Սոսու պուրակ», «Զանգեզուր» և «Զիկատար» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համայիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովում, ինչպես նաև տնկարկների պահպանություն և պաշտպանություն:

Սահմանվել են << ջրային տարածքներում սոցիալական նպատակներով որսի (սիրողական ձկնորսություն) համար նախատեսվող օգտագործման թույլատրելի չափաբանակները և որսի ժամկետները, ինչպես նաև որսի կենդանիների համար նախատեսվող 2021-2022 թվականների օգտագործման թույլատրելի չափաբանակները և որսի ժամկետները: Շրջակա միջավայրի նախարարությանը՝ Կովկասի բնության հիմնադրամի (CNF) աջակցությամբ, փոխանցվել է ժամանակակից գերիզոր թվային տվյալների պահպանման համակարգ (server), որը ծևավորելու է նախարարության ենթակայության ներքո գործող բնության հատուկ պահպանվող տարածքներում տեղադրված տեսախցիկների միասնական հարթակը: Համակարգը թույլ կտա առցանց հետևել ԲՀՊՏ-ներում իրականացվող աշխատանքներին, հեռավար ուսումնասիրել բնության հատուկ պահպանվող տարածքներում բնակվող հազվագյուտ կենդանատեսակների շարժին ու սահմանել պատշաճ վերահսկողություն: «Էկոզրուսաշրջության բաղադրիչի ներդրման» նոր ծրագրի պաշտոնական մեկնարկմամբ 2021 թվականի հունիսի 3-ից «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը վերսկսել է մուտքի թույլտվությունների և զբոսաշրջային այցելությունների կազմակերպումը: Ծրագիրը ենթադրում է, ըստ երթուղիների, արգելոց մուտքի քվոտավորում, հստակ սահմանափակումների ամրագրմամբ, էկոզրուսաշրջության մատուցվող ծառայությունների փաթեթային առաջարկներ, այդ թվում՝ զբոսաշրջային օպերատորների համար, ովքեր հետաքրքրված են Խոսրովի արգելոցը զբոսաշրջային երթուղիներում և փաթեթներում ներառելու գործում:

«Սևանա լճում և նրա ջրհավաք ավագանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում» միջոցառման շրջանակներում Շրջակա միջավայրի նախարարության և << ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի միջև կնքված պայմանագրի համաձայն հետազոտվել են Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի կենսաբանական ու պոպուլյացիոն ցուցանիշները, գնահատվել դրանց պաշարները: Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի արդյունագործական պաշարներն ըստ << ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության

ինստիտուտի կազմել են. սիգ՝ 2021թ.՝ 641.80տ., 2020թ.՝ 586.2տ., արծաթափայլ լճածածան (կարաս, Սևանա լճի համար հանդիսանում է անցանկալի ձկնատեսակ՝ 2021թ.՝ 22-23տ, Սևանի իշխան (ընդհանուր պաշարը, ոչ արդյունագործական՝ 2021թ.՝ 4.82տ., 2020թ.՝ 4.56տ., խեցգետին՝ 2021թ. (ընդհանուր պաշարը՝ 78տ: Սևանա լճում արդյունագործական ձկնորսության վերահսկողության, ինչպես նաև ձկնագողությունը կանխարգելերու նպատակով ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կազմում ստեղծվել է պահպանություն իրականացնող ստորաբաժանում՝ շուրջօրյա հերթապահությամբ: Կառավարության որոշումներով կանոնակարգվել է Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների օգտագործման և կայուն կառավարման ոլորտը: Արդյունագործական ձկնորսության նպատակով Սևանա լիճ լողամիջոցների մուտքն ու ելքն իրականացվել է միայն որոշմամբ հաստատված 25 տեղամասերից, փաստացի որսն իրականացվել է 19 կետերից: Սևանա լճում արդյունագործական նպատակներով ձկան և խեցգետնի որս իրականացնելու համար Շրջակա միջավայրի նախարարության և ձկնորսների միջև կնքվել է 657 պայմանգիր: 2021 թվականի ընթացքում Սևանա լճից սիգի արդյունագործական որսի նպատակներով սահմանվել է 300 տոննա չափաքանակ, սահմանված ժամկետում փաստացի որսացվել է 294306 կգ:

«Սևանա լճի ջրածածկ անտառունկարկների մաքրում» միջոցառման շրջանակներում Սևանա լճի շրջակայքում ջրածածկ և ջրածածկման ենթակա տարածքներում անտառմաքրման աշխատանքները սկսվել են 2021 թվականի նոյեմբերի 15-ից: Աշխատանքներն իրականացվել են ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Մարտունու մասնաճյուղի Վարդենիկի տեղամասի 24-րդ և 25-րդ քառակուսիներում, ինչի արդյունքում մաքրված անտառունկարկների տարածքները կազմում են 4.18 հա:

«Պահպանվող Տարածքների Աջակցման Ծրագիր-Հայաստան (KFW)» ծրագրի շրջանակներում իրականացվել են սոցիալ-տնտեսական և բնապահպանական ուղղվածության դրամաշնորհային ծրագրեր, այդ թվում՝ ավարտվել են Զանգեզուր ԿՀ ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգման և Արևիք Ազգային Պարկի վարչական շենքի շինարարության նախագծման աշխատանքները, տրամադրվել է 3 հատ ՈՒԱՀ-ֆուրգոն ավտոմեքենա, որից՝ 2ԿՀ ՊՈԱԿ-ին (2 հատ) և Հայանտառ ՊՈԱԿ-ի Կապան անտառունտեսությանը (1 հատ): Կապան համայնքի համար ձեռք է բերվել ջրան մեքենա, Շիկահող, Ծավ, Սրաշեն և Ներքին Հանդ բնակավայրերի համար մինչև 220 էներգախնայող վառարանների արտադրությունը մեկնարկել է, ընդունվել է 40 հատ վառարան, մշակվել է Սոսու Պուրակ ՊԱ-ի տնկարանի արդիականացման ծրագիրը, ձեռք են բերվել 2 ֆոտոկամերաներ 2ԿՀ ՊՈԱԿ-ի համար, կատարվել է մասնակի վճարում 5 ՊՏ-ների ելակետային ուսումնասիրությունների համար:

Չրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և մոնիթորինգի բնագավառ

Չրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն: 2021 թվականին շրջակա միջավայրի նախարարությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության են ենթարկվել թվով 334 (2020թ.-ին՝ 303) նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտեր և գնահատման հաշվետվություններ: Տեխնիկական առաջադրանքներ են տրամադրվել թվով 127 (2020թ.-ին՝ 45) նախատեսվող գործունեությունների և հիմնադրութային փաստաթղթերի նախնական գնահատման հայտերին: Չրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություններ են տրամադրվել 239 (2020թ.-ին՝ 135) նախատեսվող գործունեությունների և հիմնադրույթային փաստաթղթերի գնահատման հայտերի և գնահատման հաշվետվությունների վերաբերյալ; Փորձաքննական բացասական եզրակացություն է տրվել 12 նախատեսվող գործունեության վերաբերյալ: Ընդհանուր առմամբ ընթացիկ տարում փորձաքննության են ներկայացվել տնտեսության տարբեր բնագավառների նախատեսվող գործունեությունների փաստաթղթեր՝ հանքավայրերի նախագծային փաստաթղթերի գնահատման հաշվետվությունների և երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների նախնական գնահատման հայտերի վերաբերյալ տրվել է 72 փորձաքննական եզրակացություն: 2021 թվականի ընթացքում տրվել է քաղաքաշինական բնագավառի փաստաթղթերի վերաբերյալ 89 դրական փորձաքննական եզրակացություն: 2021 թվականի ընթացքում նախատեսվող գործունեությունների նախագծերի վերաբերյալ եզրակացությունների Էլեկտրոնային տարբերակները տեղադրվել են շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում:

«**մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգ:** 2021 թվականի ընթացքում «**մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգը**» (Զոհ նմուշառում, դաշտային հետազոտություններ, ֆիզիկաքիմիական անալիզներ և որակի գնահատում) իրականացվել է հանրապետության ջրային օբյեկտների (գետերի, ջրամբարների, Արփա-Սևան, Սպանդարյան-Կեչուտ ջրատարների և Սևանա լճի) 144 դիտակետում: Զրի նմուշներում դիտարկվել է ջրի որակի բնութագրական 40-60 ֆիզիկաքիմիական ցուցանիշ՝ հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ, առաջնային օրգանական աղտոտիչներ և հիդրոկենսաբանական ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ որոշվել է 45460 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 45460): «Արաքս գետի ջրի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգի ծրագրի» շրջանակում Արաքս գետի հայ-իրանական սահմանային հատվածում իրականացվել է Արաքս գետի ջրի և հատակային նստվածքների որակի մոնիթորինգ: 2021 թվականի ընթացքում որոշվել է Արաքս գետի ջրի և հատակային նստվածքի 2040 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների

քանակ՝ 2040): Ուազմական դրությամբ պայմանավորված՝ << ջրային ռեսուրսների անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտություն է առաջացել իրականացնել Քարվաճառի տարածքում Արփա, Որոտան գետերը սնող ջրաղբյուրների և Սևանա լճի ջրհավաք ավագանի վերին հոսանքների ջրային ռեսուրսների ուսումնասիրություններ և դիտարկումներ: Այդ նպատակով Սևանի ԶԿՏ-ում հավելյալ իրականացվել են Փամբակ, Շիշկերտ, Արծվանիստ, Արտանիշ, Շափաթաղ, Դարանակ և Զիլ գետերի ջրի որակի հետազոտություններ, որի արդյունքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), իսկ Արփա և Որոտան գետերը սնող ջրաղբյուրները գտնվում են մշտական ուշադրության կենտրոնում:

<< մթնոլորդային օդի որակի մոնիթորինգ: 2021 թվականի ընթացքում << մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության 10 բնակավայրում օդի նմուշառման երեք եղանակով՝ պասիվ, ակտիվ և ավտոմատ: Մթնոլորտային օդում ուսումնասիրվել են փոշու, փոշում գտնվող մետաղների, ազոտի և ծծմբի երկօքսիդների ու գետնամերձ օգոնի պարունակությունները: Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ և Շաղկաձոր քաղաքներում մթնոլորտային օդի որակի դիտարկումներն իրականացվել են 15 ստացիոնար դիտակայանում՝ ակտիվ նմուշառման եղանակով: Պասիվ եղանակով նմուշառումներ իրականացվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան և Շաղկաձոր քաղաքների 215 դիտակետում: 2021 թվականի ընթացքում << բնակավայրերի մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի միջոցառումների շրջանակում որոշվել է 75300 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 75300):

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի ազգային ցանցի հիդրոերկրաբանական մոնիթորինգ: 2021 թվականի ընթացքում ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգն իրականացվել է << 6 ջրավազանային կառավարման տարածքում ընդգրկված 119 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ հորատանցքերում և բնաղբյուրներում: Ստորերկրյա ջրերի 119 դիտակետերը բաղկացած են 47 բնաղբյուրից, 48 չշատրվանող հորատանցքերից և 24 շատրվանող հորատանցքերից.

1. ստորերկրյա ջրերի 55 դիտակետում (դրական և բացասական մակարդակով հորատանցքերում) 3960 մակարդակի (ճնշման) չափում՝ 72 անգամ հաճախականությամբ (նախատեսված չափումների թիվ՝ 3960): Չափումները կատարվել են Արարատյան, Գյումրիի և Սևանի միջեռնային գոգավորությունների հորատանցքերում և ջրհորներում,

2. ստորերկրյա ջրերի 65 դիտակետում՝ 43 բնաղբյուրում և միջեռնային գոգավորությունների 22 շատրվանող հորատանցքում ծախսի 4680 չափում (նախատեսված չափումների թիվ՝ 4680),

3. ստորերկյա ջրերի 100 դիտակետում ջերմաստիճանի 7200 չափում (նախատեսված չափումների թիվ՝ 7200),

4. ստորերկյա ջրերի 100 դիտակետի շրջակայքում՝ հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք ուղղություններով 3 կմ երկարությամբ տեղազննում (նախատեսված ցուցանիշների թիվ՝ 100): Արդյունքում չեն բացահայտվել ստորերկյա ջրերի որակի և քանակի վրա ազդող նոր տեխնածին գործոններ կամ հնարավոր աղտոտման օջախներ: Ստորերկյա ջրերի որակի գնահատման համար 80 դիտակետից վերցվել է ջրի 80 փորձանմուշ: Ջրի նմուշներում դիտարկվել են ջրի որակի բնութագրական մինչև 40 ֆիզիկաքիմիական ցուցանիշներ՝ հիմնական անիոններ և կատիոններ, ծանր մետաղներ: Ընդհանուր առմամբ, որոշվել է 3200 ցուցանիշ (նախատեսված ցուցանիշների քանակ՝ 3200):

Թափոնների հաշվառում, դասակարգում և վերլուծություն: Թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեստրոների ստեղծմանն աջակցության նպատակով 2021 թվականի ընթացքում ուսումնասիրվել են թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման 20 օբյեկտներ և 11 հեռացման վայրեր: Ուսումնասիրվել են թափոնների օգտահանման, վնասազերծման 15 տեխնոլոգիա և երկրորդային հումքի վերամշակման 10 մեթոդ: Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին աջակցության նպատակով կատարվել է 2019-2020թթ. առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպետությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում և վերլուծություն: Կազմակերպությունների թիվը 1350 է: «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայով << ստանձնած պարտավորությունների կատարմանն աջակցելու նպատակով անալիտիկ լաբորատորիայում կատարվել է շրջակա միջավայրի օբյեկտներում կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների որոշում: Ընդհանուր առմամբ կայուն օրգանական աղտոտիչների մնացորդային քանակների որոշման նպատակով կատարվել է 300 ցուցանիշ:

Հիդրոոդերևսութաբանական ծառայություններ: Հաշվետու ժամանակահատվածում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևույթների ուսումնասիրման նպատակով օդերևսութաբանական դիտարկումները նախատեսվել է կատարել հանրապետության տարածքի 47 օդերևսութաբանական (այդ թվում՝ 6 բարձր լեռնային դժվարամատչելի և 3 մասնագիտացված) կայաններում՝ լրիվ ծրագրով, իսկ 26 հիդրոլոգիական դիտակետերում՝ կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևույթների և ձյան ծածկի բարձրության), Համաշխարհային օդերևսութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան 3 ժամը մեկ անգամ 00 ժամից սկսած

(Գրինվիչի ժամանակով), իսկ մթնոլորտային երևոյթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա: Տարեվերջին (4-րդ եռամյակի ընթացքում) համակարգի օպտիմալացման և արդիականացման արդյունքում օդերևութաբանական կայանների թիվը կրճատվել է 2-ով, և ներկայումս այն կազմում է 45 միավոր: Օդերևութաբանական դիտակումներն իրականացվել են օդերևութաբանական բոլոր տարրերի նկատմամբ: Ընդհանուր առմամբ 31.12.2021թ. դրությամբ կատարվել է 128472 դիտարկում: Կայաններից ստացված տեղեկատվությունը ենթարկվել է վերլուծական ստուգման և հանձնվել մուտքագրման բաժին՝ «CLICOM» ծրագրով օդերևութաբանական տվյալների բանկ մուտքագրման նպատակով: Շահագրգիռ կազմակերպություններն ապահովվել են օդերևութաբանական ռեժիմային տվյալներով: Հաշվետու ժամանակահատվածում տրվել է 100 նախազգուշացում օդերևութաբանական վտանգավոր երևոյթների վերաբերյալ:

Անտառների կառավարման բնագավառ

Անդառվերականգնում և անդառապայում: Համապետական ծառատունի շրջանակներում 2021 թվականի գարնանը կատարվել են շուրջ 63 հա անտառմշակույթների հիմնադրման աշխատանքներ: Պետական բյուջեի ֆինանսավորմամբ 2021 թվականի աշնանը կատարվել են անտառվերականգնման ու անտառապատման աշխատանքներ՝ 151.3 հա տարածքում (68.3 հա անտառմշակույթների հիմնում և 83.0 հա կոճղաշիվային վերաճի օժանդակում): Հիմնադրվել է 7.0 հա տնկարան, ինչպես նաև աճեցվել է փակ արմատային համակարգով 250000 հատ տնկանյութ:

Անդառապաշտպանություն: Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Արագածոտնի և Հրազդանի «Անտառունտեսություն» մասնաճյուղերի 5533 հա անտառներում վնասատուների և հիվանդությունների դեմ կատարվել են ավիացիոն-քիմիական պայքարի աշխատանքներ:

Անդառապահպանություն: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառունտեսություն» մասնաճյուղերի կողմից 2021 թվականին կազմվել է 383 անտառխախտման արձանագրություն, որից 1-ը՝ ապօրինի որսի, 5-ը՝ հողագավթման, կառուցապատման և 383 արձանագրություն՝ 11962 ապօրինի ծառահատման վերաբերյալ: Կազմված բոլոր արձանագրություններից 87-ն ուղարկվել է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, իսկ 296-ը՝ Ոստիկանության մարզային տարածքային բաժիններ: «Հայանտառ» ՊՈԱԿ-ը անտառային օրենսդրության խախտումների դեմ պայքարն իրականացնում է Ոստիկանության, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ: 2021 թվականի ընթացքում Կապանի, Սյունիքի, Սիսիանի, Ճամբարակի, Սևքարի, Իջևանի, Նոյեմբերյանի, Վանաձորի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Զիլիկայի

«անտառտնտեսություն» մասնաճյուղերում անտառպահպանության աշխատողների մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով կազմակերպվել են դասընթացներ՝ «Առկա անտառպահպանական խնդիրները և աշխատանքներ անտառային օրենսդրության խախտումների հայտնաբերման, արձանագրման և կանխարգելման ուղղությամբ» թեմայով: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի անտառային հողերում 2021 թվականին արձանագրվել է հրդեհի 29 դեպք՝ 225,607 հա ընդհանուր տարածքով, որից 150,205 հա՝ անտառածածկ և 75,402 հա՝ ոչ անտառածածկ տարածքի վրա: Հրդեհները մարվել են մասնաճյուղերի աշխատակիցների, Արտակարգ իրավիճակների նախարարաության մարզային հրշեց ծառայությունների, համայնքների ազգաբնակչության և որոշ դեպքերում նաև ոստիկանության աշխատակիցների կողմից:

Անդրագրագործում: 2021 թվականին «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերի կողմից մթերվել է 42945 խմ ծավալով փայտանյութ, որից շինափայտ՝ 2583 խմ, ինչպես նաև ազգաբնակչությանը տրամադրվել է 74331 խմ անվճար թափուկ վառելափայտ:

Բնագիտական նմուշների պահպանության և ցուցադրության բնագավառ

2021 թվականին թանգարանի կողմից իրականացվել է թանգարանի մշտական և ժամանակավոր պահպանությանը հանձնված 6710 նմուշների հաշվառումն ու պահպանումը, թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների մշտական ու ժամանակավոր հանրային ցուցադրումը: 2021 թվականի ծրագրով իրականացվել են 2 գիտարշավներ, հիմնական ֆոնդը համալրվել է թվով 20 ցուցանմուշով, համալրված ցուցանմուշներն անձնագրավորվել, քարտագրավորվել, պիտակագրավորվել և լուսանկարահանվել են, մշտական ցուցադրությունը համալրել է 10 ցուցանմուշով, թանգարանի երրորդ սրահում ներկայացված բոլոր դիտուամաները ձևափոխվել են՝ համապատասխանեցվելով միջազգային չափանիշներին՝ ապահովելով բնական միջավայր:

Վերանորոգման մաշկաքանդակագործական արհեստանոցում վերականգնվել է 20 ցուցանմուշ:

Միջատների դեմ պայքարող հատուկ քիմիական նյութերով հիմնական ֆոնդի ցուցանմուշները ենթարկվել են 4-անգամյա պրոֆիլակտիկ ախտահանման:

2021 թվականին «Կենդանաբանական այգու ցուցադրություններ» միջոցառման շրջանակներում «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ն իրականացրել է այգու կենդանիների մի շարք ազատավանդակների ջրահեռացման համակարգերի վերանորոգում, հարակից խաղահրապարակների, արգելապատնեշների վերանորոգում, ազատավանդակների

ճաղավանդակների պատրաստում և տեղադրում, կոնտակտային այգու ցանկապատի ծևափոխում, կարանտինի լուսային համակարգի վերանորոգում, դռների նոր մեխանիկական համակարգի տեղադրում, այգու տարածքում առկա թվով 4 սանհանգույցների վերանորոգում, համապատասխան սարքավորումների տեղադրում:

Պետական գույքի կառավարում

Հաշվետու ժամանակահատվածում պետական գույքի կառավարման առանձին բնագավառներում ձեռք են բերվել հետևյալ արդյունքները:

Պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգում գրանցված է 10342 միավոր անշարժ գույք՝ 8164825.79 քառ. մետր ընդհանուր մակերեսով, 197 իրավաբանական անձանց գույքի կազմում ընդգրկված 2645 միավոր անշարժ գույք՝ 1332182.07 քառ. մետր ընդհանուր մակերեսով, 3653 միավոր տրանսպորտային միջոց, 265 անվանում (քանակը՝ 14141) մտավոր սեփականության օբյեկտ, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 7742.19 կմ (այդ թվում՝ միջային միջային նշանակության՝ 1721.34 կմ, հանրապետական նշանակության՝ 2065.75 կմ, մարզային նշանակության՝ 3955.1 կմ):

Հաշվետու ժամանակահատվածում լուծարվող կազմակերպություններում և հիմնադրամներում իրականացվել են 764348.0 հազար դրամի վճարումներ, որից ՀՀ պետական բյուջե՝ 337072.0 հազար դրամ:

Մշակվել և շրջանառության մեջ են դրվել պետական գույքի տնօրինման վերաբերյալ ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 130 իրաման և ՀՀ կառավարության 142 որոշման նախագիծ, որից 83-ն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից, ինչպես նաև պետական գույքն օտարելու մասին ՀՀ կառավարության 12 որոշման նախագիծ, որից 9-ն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից:

Հաշվետու ժամանակահատվածում՝

- մասնավորեցման պայմանագրերով 5 գնորդ ստանձնել են ներդրումային, սոցիալական երաշխիքների ասպահովման և պրոֆիլի պահպանման պարտավորություններ: Պրոֆիլի պահպանման պարտավորություն են կատարել 3 գնորդ, 1 գնորդ ստանձնել է 3,400,000.0 հազար դրամի ներդրումային և 180 նոր աշխատատեղի ստեղծման պարտավորություն, իսկ 1 գնորդ չի կատարել պարտավորությունները.

- օտարման պայմանագրերով 8 գնորդ ստանձնել է ներդրումային, սոցիալական երաշխիքների և պրոֆիլի պահպանման պարտավորություններ (2 գնորդ ստանձնել է պրոֆիլի պահպանման պարտավորություն, որը կատարվել է, 6 գնորդ ստանձնել է 7,475,037.5 հազար

դրամի ներդրումային պարտավորություն, կատարվել է 451,378.0 հազար դրամի պարտավորություն):

Բնակչության սոցիալական խնդիրների լուծման ոլորտում մշակվել և << կառավարության կողմից ընդունվել է 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթած և << քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին << կառավարության 2 որոշում՝ վերջիններիս ընտանիքների կողմից զբաղեցված բնակելի տարածքներն իրենց ընտանիքներին սեփականաշնորհելու նպատակով (3 բնակելի տարածք, 3 ընտանիք, 9 անձ), իսկ տեղաբնակ հանդիսացող << քաղաքացիների իրենց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները նվիրելու նպատակով մշակվել և ընդունվել է << կառավարության 5 որոշում (102 բնակելի տարածք, 96 ընտանիք, 281 անձ), ինչպես նաև մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Բնակելի տարածքներ նվիրելու մասին» << կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 9 բնակելի տարածք (3 ընտանիք, 11 անձ):

Հաշվետու ժամանակահատվածում պետական գույքի օտարումից ստացված միջոցները կազմել են 884,181.6 հազար դրամ, որից << պետական բյուջե է փոխանցվել 678,629.4 հազար դրամը, պետական գույքի մասնավորեցումից ստացված միջոցները կազմել են 407,547.4 հազար դրամ, որից << պետական բյուջե է փոխանցվել 294,565.9 հազար դրամը, պետական գույքի վարձակալությունից << պետական բյուջե է մուտքագրվել 318,805.1 հազ.դրամ:

<< պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման պայմանագրերից հավաքագրվել է 272,045.6 հազար դրամ, որից 81,388.5 հազար դրամը մուտքագրվել է << պետական բյուջե:

Պետական սեփականություն համարվող հողերի օտարումից հավաքագրվել և << պետական բյուջե է մուտքագրվել 293,007.6 հազար դրամ:

Հարուցված հայցերի և արտադատական կարգով << պետական բյուջե է վերադարձվել 34,625.7 հազար դրամ գումար:

Պետական գույքային հարաբերությունները կանոնակարգող օրենսդրության բարեփոխման ոլորտում ընդունվել է 10 իրավական ակտ, 8 ենթաօրենսդրական ակտ, մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել 10 իրավական ակտի նախագիծ:

Անշարժ գույքի կադաստր

Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի պետական միասնական կադաստրի վարման համակարգի արդիականացման և զարգացման, հասարակության պահանջները բավարարելու նպատակով առաջիկա տարիների ընթացքում թվայնացվելու է մատուցվող ծառայությունների գերակշիռ մասը, ավելացվելու է առցանց ինքնաշխատ կարգով տրամադրվող տեղեկությունների ցանկը:

Անշարժ գույքի հարկման համակարգի բարեփոխումների շրջանակներում Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է անշարժ գույքի միասնական գնահատման և հարկման համակարգ, որը հնարավորություն կընձեռի անշարժ գույքի հարկով արդարացի հարկման մեխանիզմների ներդրմամբ ապահովել անշարժ գույքի շուկայի գնային իրավիճակի վերաբերյալ վերլուծական տեղեկատվական բազայի ստեղծումը, խթանել պարապուրդում գտնվող գույքի մասնակցությունը անշարժ գույքի շուկայում և նպաստել ավելացված արժեքի աճին, ինչպես նաև նպաստել անշարժ գույքի հարկման առավել արդարացի դաշտի ձևավորմանը, վարչարարության պարզեցմանը:

Գործարկվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից ներկայացվող գույքի նկատմամբ սահմանափակումների մշակման նոր համակարգը, որը հարմարեցվելու է նաև սահմանափակումներ կիրառող մարմինների համար:

Գործարկվել է Ազգային գեղագործակի քարտեզագրական համակարգը, և ապահովվել է բազային շերտերի հասանելիություն << պետական կառավարման մարմինների համար:

Գեղեցիայի ու քարտեզագրության բնագավառի զարգացման ոլորտում 2021 թվականին նախատեսված Հայաստանի ամբողջ տարածքի օդալուսանկարահանման աշխատանքները տեխնիկական նկատառումներից ենելով կավարտվեն 2022 թվականին՝ նպատակ հետապնդելով երկրատեղեկատվական համակարգի համար ստեղծելու բազային քարտեզ: Այս ուղղությամբ շարունակվում են նախորդ տարիներին սկսված քարտեզագրական հիմքի ստեղծման, աշխարհագրական անվանումների քարտադարանի վարման և ազգային ատլասների թարմացման աշխատանքները:

Գործարկվել է կադաստրային քարտեզների խմբագրման նոր համակարգը, որն ինտեգրված է Հայաստանի անշարժ գույքի տեղեկատվական համակարգի (ARPIS) հետ: Ներկայում 520 բնակավայրի կադաստրային քարտեզների խմբագրումն իրականացվում է այդ նոր քարտեզագրական համակարգով:

Անշարժ գույքի գործակալների գործունեության կարգավորման և զարգացման նպատակով իրականացվել է անշարժ գույքի գործակալների (բրոքերներ) գործունեության ոլորտի միջազգային

փորձի ուսումնասիրություն, ինչպես նաև միջազգային փորձի ուսումնասիրման հիման վրա ոլորտի կարգավորման մեխանիզմների և մոտեցումների հստակեցում:

Հասարակական կարգի պահպանություն

2021 թվականի ընթացքում, չնայած համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված ողջ համակարգի գերծանրաբեռնված օրակարգին, Ոստիկանությունը կատարել է իր առջև դրված խնդիրները, ձեռնարկված միջոցառումների շնորհիվ վերահսկվել է օպերատիվ իրավիճակը, պահպանվել կայուն հասարակական կարգն ու անվտանգությունը:

Անդրադառնալով <<-ում արձանագրված հանցագործությունների շարժընթացին, հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում հանրապետությունում գրանցված հանցագործությունների ընդհանուր թիվն աճել է 14.3%-ով կամ 3777 դեպքով (2020թ.' 26486, 2021թ.' 30245), ինչը գլխավորապես պայմանավորված է գողովայունների, խարդախությունների և թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների դեպքերի թվի աճով:

Գրանցված 30245 դեպքերի մեջ հիմնական բաժինն ընկնում է ոչ մեծ (17460 դեպք կամ 57.7%) և միջին ծանրության (7988 դեպք կամ 26.4%-ը) հանցագործություններին, որոնք համարվում են առավել նվազ հասարակական վտանգավորություն ներկայացնող հանցատեսակներ և կազմում են գրանցված ընդհանուր հանցագործությունների 84.1%-ը:

Հասարակական կարգի պահպանումն ու հասարակական անվտանգության ապահովումը պատշաճ կազմակերպելու նպատակով 2021 թվականի ընթացքում ոստիկանության ստորաբաժանումները հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգություն են ապահովել թվով 3134 (2020թ.' 2935) զանգվածային միջոցառումների ժամանակ:

Հանցավորության մակարդակի շարունակական նվազման, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի շարունակական բարձրացման խնդրի համակարգային լուծումը Ոստիկանությունը դիտարկել է՝ Պարեկային ծառայության՝ շարժական շուրջօրյա պարեկային միասնական ստորաբաժանման և օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման համատեքստում, որի նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է:

Այս ուղղությամբ իրականացված մեծածավալ իրավակազմակերպչական աշխատանքների արդյունքում 2021 թվականի հունիսի 7-ին գործարկվեց Պարեկային ծառայությունը և Պարեկային ծառայության Երևան քաղաքի գունդը, որը բաղկացած է շարային հիմնական (տրանսպորտային և հետիոտն) ստորաբաժանումներից, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարների

գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման, վարչական գործունեության, հերթապահ ծառայության բաժանմունքներից և հետախուզման հատուկ խմբից:

Հարկ է նշել, որ բացի նախկինում արտաքին ծառայություն իրականացնող ստորաբաժանումների գործառույթներից, պարեկային ծառայողները հանցագործությունների և վարչական իրավախախումների վերաբերյալ ահազանգերով մեկնում են դեպքի վայրեր, իրականացնում են դեպքի վայրի պահպանություն, օգնություն են ցուցաբերում դժվարին իրավիճակում հայտնված քաղաքացիներին, ընդունում են հանցագործությունների մասին հաղորդումներ, ինչպես նաև իրականացնում կանոնադրությամբ իրենց վերապահված մի շարք այլ գործառույթներ:

Պարեկային ծառայությանը զուգահեռ գործարկվել է նաև Օպերատիվ կառավարման կենտրոնը, որը հանդիսանում է քաղաքացիներից ահազանգերի ընդունման կենտրոն և բոպենների ընթացքում տալիս է անհրաժեշտ խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ մոտեցնում պարեկային կարգախումբը՝ ապահովելով կարճ ժամանակահատվածում Ոստիկանության աջակցության ցուցաբերումը դժվարին իրավիճակում հայտնված անձանց:

Ներկայումս ինտենսիվ աշխատանքներ են իրականացվում Լոռու և Շիրակի մարզերում Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ներդրման ուղղությամբ, որոնք նախատեսվում է գործարկել 2022 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Դեռևս 2021 թվականի նոյեմբերի 1-ից Ոստիկանության կրթահամալիրում մեկնարկել են Պարեկային ծառայության Լոռու և Շիրակի մարզերի (նաև՝ Երևանի) ստորաբաժանումների 583 պարեկային ծառայողների թեկնածուների 5-ամյա վերապատրաստումները:

Պարեկային ծառայության ներդրման շարունակականությունն ապահովելու նպատակով հաջորդիվ նման ստորաբաժանումներ կձևավորվեն Կոտայքի, Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում, ապա՝ ողջ հանրապետությունում:

Ոստիկանության կրթահամալիրում գործող մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների վերանայման նպատակով ձևավորվել է աշխատանքային խումբ, որի կողմից մշակվել է գործող մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների վերանայման միջոցառումների ժամանակացույց, որի հիմքում դրվել են կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների առողջականացումը: Ժամանակացույցով նախատեսվել է ընդհանուր թվով 9 միջոցառում, որի մի մասն իրականացվել է կամ գտնվում է իրականացման փուլում:

Արդարադատության նախարարության և ԱՄՊ գործնկերների աջակցությամբ ամբողջությամբ ներդրվել է պարեկների ուսուցման և վերապատրաստման հինգամսյա ծրագիրը, որը լիարժեքորեն համապատասխանում է միջազգային լավագույն չափորոշիչներին:

ՀՀ ներքին անվտանգության ապահովման ոլորտում առաջնային խնդիրներից համարվող հանցագործությունների մակարդակի շարունակական նվազման, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի բարձրացման հիմքում մեծ կարևորություն է տրվում ոստիկանություն-հասարակություն հարաբերությունների ներդաշնակությանը և ոստիկանության հանդեպ հասարակության վստահության ծևավորմանը:

Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության շրջանակներում մշակվել է «Հաղորդակցության ռազմավարություն գործողությունների ծրագիր», որում նախանշված են ամբողջ բարեփոխումների ընթացքում ռազմավարական հաղորդակցման հիմնական ուղղությունները, թիրախային խմբերը և յուրաքանչյուր թիրախային խմբի համար կիրառվող գործիքները, մեթոդաբանությունը:

Հանրությանը շարունակաբար տեղեկություններ են ներկայացվել նոր ոստիկանության տեսլականի վերաբերյալ, որի նպատակը ժամանակակից մարտահրավերներին դիմակայող, մասնագիտացված ու տեխնիկապես հագեցած, բարեվարք և հարգանքի արժանի ոստիկանության ու ժողովրդավարական իրավակարգին բնորոշ նոր ոստիկանի կերպարի ստեղծումն է, ինչպես նաև ներկայացվել է ռազմավարության իրականացման ընթացքը՝ հատուկ անդրադարձ կատարելով ռազմավարությամբ նախատեսված առաջնային միջոցառումներին, այն է՝ Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ծևավորման ընթացքին:

Ռազմավարության ու բարեփոխումների փաթեթի վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ավելի քան 20 քննարկումներ՝ Արդարադատության նախարարության և Ոստիկանության ներկայացուցիչների մասնակցությամբ, իսկ հայաստանյան լրատվական կայքերում հրապարակվել է ավելի քան 50 նյութ:

ՀՀ կառավարության 15.07.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1160-Ն որոշմամբ կանոնակարգվել է համարանիշերի գողության և կորստի դեպքում վերջինիս օգտագործողին նույն համարանիշի կրկնօրինակը հատկացնելու կարգը:

ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 03.07.2014թ. 712-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2390-Ն որոշմամբ զգալիորեն՝ (30-50%-ի չափով) բարձրացվել են ՀՀ ոստիկանության

2020-2022 թվականների բարեփոխումների ռազմավարության հիման վրա ստեղծվող պարեկային ծառայության պարեկների ամսական աշխատավարձերը:

Մշակվել է ՆԳՆ ձևավորմանն ուղղված՝ «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ: Նկատի ունենալով նախարարության ստեղծման օրենսդրական փաթեթի կարգավորումները՝ կիրականացվի Ոստիկանության կառուցվածքի առողիտ և կներկայացվեն առաջարկություններ՝ միտված Ոստիկանության ֆունկցիոնալության և ռեսուրսների արդյունավետ օգտագործման բարելավմանը:

Աշխատանքներ են սկսվել նաև Ոստիկանության գորքերի կարգավիճակի վերանայման, խնդիրների և գործառույթների վերահմաստավորման, Ոստիկանության գորքերի ծառայության կազմակերպահրավական նոր ձևի սահմանմանը:

Ոստիկանությունում ներկայումս արդեն ուսումնասիրվում են հտալիայում գործող Կարաբինյերների, Ֆրանսիական ժանդարմերիայի, ինչպես նաև Ոստիկանության գորքեր և Ազգային գվարդիայի ստորաբաժանումներ ունեցող ԱՊՀ այլ երկրների առաջավոր փորձի ուսումնասիրությունը՝ ֆունկցիոնալ և ռազմավարական խնդիրները սպասարկելու կարող, ՀՀ-ին համապատասխանող մոդելների վերհանման նպատակով: Աշխատանքները կավարտվեն սահմանված ժամկետում, միջոցառման իրականացման համար խոչընդոտներ առկա չեն:

Վերը նշված աշխատանքների իրականացման նպատակով Ոստիկանության պետի կողմից ստեղծվել է մասնագիտական աշխատանքային խումբ՝ Ոստիկանության գորքերի հրամանատար, ոստիկանության պետի տեղակալի գլխավորությամբ:

«Հայաստանում ոստիկանություն-հասարակություն համագործակցության ամրապնդում» ծրագրի շրջանակներում ԵԱՀԿ կողմից աջակցություն է ցուցաբերվում Ոստիկանությանը՝ բանակցային ոստիկանության ներդրման գործում, որն ուղղված է զանգվածային միջոցառումների ընթացքում ոստիկանական գործունեության արդյունավետության բարձրացմանը և նպաստում է ոստիկանություն-հասարակություն համագործակցության ու վստահության մթնոլորտի ամրապնդմանը, հասարակական անվտանգության արդյունավետ կառավարմանը:

ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դեպքերի կանխարգելման նպատակով «Ոստիկանության մասին» օրենքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում իրավական իհմքեր են նախատեսվել ՀՀ ոստիկանության շենքերի մուտքերին և ելքերին, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների՝ հարցաքննության համար

նախատեսված տարածքներում տեսաձայնագրող տեխնիկական միջոցներ տեղադրելու և տեսաձայնագրում իրականացնելու համար:

ՀՀ ոստիկանության թվով 10 տարածքային ստորաբաժանումների հարցաքննության համար նախատեսված 19 սենյակներում արդեն իսկ տեղադրվել են տեսաձայնագրման համակարգեր, իսկ թվով 20 տարածքային ստորաբաժանումների ելքերում և մուտքերում տեղադրվել են թվով 70 տեսահսկման համակարգեր:

Ակտիվացել են Եվրոպոլի և Եվրոզասթի հետ համագործակցության աշխատանքները: ԱԳՆ և Նիդերլանդներում ՀՀ դեսպանության համատեղ ջանքերով հաջողությամբ ավարտվել են Եվրոպոլի ներկայացուցիչների հետ տևական բանակցությունները, և արդյունքում 2021 թվականի սեպտեմբերի 16-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների և Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության միջև համագործակցության հաստատման վերաբերյալ» աշխատանքային համաձայնագիրը, որը հայկական կողմից ստորագրել է Ոստիկանության պետը:

Բյուջեների կազմման բնագավառ

«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագիծը կազմվել է ծրագրային բյուջետավորման ձևաչափով՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համահուն:

Հանրային ֆինանսների կառավարում

Մշակվում և յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո ՖՆ կայքէջում հրապարակվում են Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարեփոխումների ռազմավարության միջոցառումների կատարման ընթացքի և առաջընթացի վերաբերյալ հաշվետվությունները՝ հայերեն և անգլերեն լեզուներով (https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_pfk, https://minfin.am/en/page/reports_pfmr): ՖՆ կայքէջում հասանելի են 2020 թվականի և 2021 թվականի առաջին կիսամյակների և 2020 թվականի տարեկան հաշվետվությունները: Ներկայում մշակման փուլում է գտնվում 2021 թվականի տարեկան հաշվետվությունը:

2021 թվականի հունիսի 18-ին ՖՆ կողմից ԱՀԲ տեխնիկական սպասարկմամբ կազմակերպվել է ՊՖԿՀ բարեփոխումների ընթացքի վերաբերյալ դոնոր համայնքի համակարգման հերթական առցանց համաժողով՝ ռազմավարության՝ տեխնիկական օժանդակության կարիք ունեցող միջոցառումները և Զարգացման գործընկներ կազմակերպությունների (ԶԳԿ) առաջարկները քննարկելու նպատակով:

Համաժողովի ընթացքում ԶԳԿ-ների հետ ձեռք էր բերվել առաջիկա 12 ամիսների ընթացքում կատարման ենթակա պլանավորված գործողությունների ցանկը ներկայացնելու, ակնկալվող արդյունքները / կատարողական ցուցանիշները հստակեցնելու, ինչպես նաև առանձին շահագրգիռ ԶԳԿ-ների միջև տեխնիկական քննարկումների անցկացման պայմանավորվածություն՝ առանձին՝ հատվող կամ կրկնօրինակող գործողությունները ռացիոնալացնելու համար:

Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ավտոմատացման համակարգ

2021 թվականին հայտատու մարմինների ներկայացուցիչների հետ իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ բյուջետային հայտերում ներառվող ծրագրերի և միջոցառումների գծով ծախսերի հաշվարկ-հիմնավորումների ձևանմուշների մշակման վերաբերյալ: Հայտատու մարմինների կողմից տրամադրված ձևանմուշները համաձայնեցվել և հաստատվել են ՀՀ ֆՆ կողմից և մուտքագրվել են համակարգ:

«Կառավարության ֆինանսների կառավարման տեղեկատվական համակարգ (ԿՖԿՏՀ)»

2021 թվականի առաջին եռամյակում ֆՆ-ն ամփոփել է 2020 թվականին մեկնարկած ԿՖԿՏՀ-ի ներդրման ծրագրի շրջանակում ֆՆ-ին աջակցություն տրամադրող խորհրդատուի ընտրության երկու փուլով գնման գործընթացի արդյունքները, որի արդյունքում կնքվել է խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր:

ԿՖԿՏՀ ներդրման գործընթացում շահագրգիռ պետական մարմինների ներգրավվածության նպատակով ֆՆ մասնագիտական խմբի հետագա քննարկումներին մասնակից են դարձվել նաև ՀՀ փոխվարչապետների գրասենյակների, ԲՏԱՆ և «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ:

ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման մեկ միասնական գործընթացի ապահովման համար իրավական հիմքերի ստեղծման և մեթոդաբանության մշակման աշխատանքներ

Սկսած 2020 թվականից՝ ՄԺԾԾ և տարեկան բյուջեի կազմման աշխատանքներն արդեն իսկ իրականացվում են մեկ միասնական գործընթացով, որի շրջանակներում ՄԺԾԾ բյուջետավորման փուլում ներառվում է նաև առաջիկա տարվա բյուջեի նախագծի նախնական տարբերակը:

Պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերի/միջոցառումների նույնականացման և հաշվառման մեթոդաբանություն

2021 թվականի բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային հայտերի կազմման և ներկայացման մեթոդական ցուցումներն արդեն իսկ պարունակում են պետության պարտադիր պարտավորություններից բխող ծրագրերի/միջոցառումների նույնականացման և հաշվառման մեթոդաբանությունը:

Քաղաքացու բյուջեի հրապարակում

Մշակվել և համացանցում տեղադրվել է Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի համառոտ ուղեցույցը (քաղաքացու բյուջե), որի միջոցով այն առավել հանրամատչելի և տեսանելի է դարձել հանրության համար:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ

Ծրագրային բյուջետավորման մեթոդաբանության շրջանակներում նախատեսվել էր 2021 թվականի պետական բյուջեի մշակման գործընթացում ամբողջապես ներդնել գենդերային զգայուն բյուջետավորման տարրերը՝ ներառելով համապատասխան չափելի արդյունքային ցուցանիշներ, որոնք կապված են գենդերային հավասարության ռազմավարության իրականացումն ապահովող ծրագրերի հետ: Այդ նպատակով մշակվել է «ԳԵՆԴԵՐԱՅԻՆ զգայուն բյուջետային ծրագրերի սահմանման» մեթոդական ձեռնարկը: 2021 թվականի բյուջետային ծրագրերը, միջոցառումները ներառում են նաև գենդերային ցուցանիշներ:

Հաշվապահական հաշվառում և առողջիտորական գործունեություն

Հաշվապահական հաշվառման և առողջիտորական գործունեության ոլորտների կարգավորման նպատակով 2021 թվականի ընթացքում իրականացվել են ոլորտները կարգավորող նոր օրենքներով նախատեսված կառուցակարգերի ներդրման աշխատանքներ: Մասնավորապես Հայաստանի առողջիտորների և փորձագետ հաշվապահների պալատի կողմից մշակվել են մի շարք իրավական ակտեր, որոնք ներկայացվել են Հաշվապահական հաշվառման և առողջիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդին՝ համաձայնեցման նպատակով: 2021 թվականի ընթացքում տեղի է ունեցել Հանրային վերահսկողության խորհրդի թվով 7 նիստ, որոնց արդյունքում ընդունվել են Հանրային վերահսկողության խորհրդի թվով 15 որոշումներ: Միաժամանակ, մշակվել և հաստատվել են հաշվապահների և առողջիտորների որակավորման վկայականների երկարաձգման հետ կապված իրավական ակտերը:

Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ոլորտում՝ 2021 թվականին կազմակերպվել են հանրային հատվածի հաշվապահների որակավորման 34 քննություններ, որոնց արդյունքում որակավորվել է 143 անձ: Իրականացվել է հանրային հատվածի կազմակերպությունների 2020 թվականի գործառնությունների մատյանների և ֆինանսական հաշվետվությունների մշտադիտարկում, որոնց արդյունքում վեր են հանվել տեղ գտած սխալներն ու անճշտությունները և ներկայացվել են համապատասխան կազմակերպություններին՝ հետագայում նմանատիպ սխալներից խուսափելու նպատակով: Հաճախ հանդիպող սխալների հիման պատրաստվել և հանրային հատվածի կազմակերպություններին են տրամադրվել «Մասնագիտական տեղեկատու» պարբերականի 11-րդ և 12-րդ համարները:

Եկամուտների քաղաքականություն

2021 թվականին հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման նպատակով 2019 թվականի հունիսի 25-ին << Ազգային ժողովի կողմից ընդունված և 2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ << հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքի նախագծով՝ հարկային օրենսդրության մեջ կատարված փոփոխությունների կիրարկմանը: Այդ փոփոխություններն ուղղված էին հարկային բեռի վերաբաշխմանը, փոքր ձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգի կատարելագործմանն ու կիրառության շրջանակի ընդլայնմանը, ինչպես նաև գործունեության առանձին ոլորտներում առկա՝ հարկային համակարգին առնչվող խնդիրների լուծմանը: Կատարված փոփոխություններով, մասնավորապես, եկամտային հարկի դրույքաչափը 2020 թվականի 23 տոկոսի փոխարեն 2021 թվականին կիրառվել է 22 տոկոս, բարձրացվել են ակցիզային հարկի, որոշ ապրանքների բնապահպանական հարկի դրույքաչափերը:

Տեսանելի հարստության կամ ունեցվածքի համարժեք հարկում ապահովելու նպատակով 2021 թվականին մեկնարկեց բարեփոխված գույքային հարկերի կիրառումը, որի վերջնանպատակը համայնքների բյուջեների եկամուտների զգալի ավելացումը և տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսական անկախության մակարդակի բարձրացումն է: Բարեփոխման հիմքում ընկած՝ հարկման ուղղահայաց արդարության սկզբունքի տրամաբանությամբ՝ բարձրարժեք գույքի համար սահմանվել է պրոգրեսիվ հարկային բեռ՝ դրանով վերահմաստավորելով գույքային հարկերի խնսութութը՝ որպես հասարակության եկամուտների վերաբաշխման կարևոր համակարգ:

2021 թվականի օգոստոսի 26-ին << Ազգային ժողովի կողմից հավանության արժանացած՝ Կառավարության ծրագրով նախանշվել են առաջիկա տարիների հարկային քաղաքականության ուղղությունները, որոնց հիմա վրա << կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Ն

որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված թիվ 1 հավելվածով սահմանվել են համապատասխան միջոցառումներ:

Բարձրացվել է հիպոտեկային վարկերի տոկոսները եկամտային հարկի հաշվին փոխհատուցելու համակարգի հասցեականությունը՝ նպատակ ունենալով բարձրացնել դրա ազդեցությունը տարածքային համաչափ զարգացման նպատակի իրագործման հարցում: Մասնավորապես որդեգրվել է այնպիսի քաղաքականություն, որը հնարավորություն կընձեռի առաջիկա երեք տարիների ընթացքում բնակարանաշինական ծրագրերը Երևանի կենտրոնական գոտիներից աստիճանաբար տեղափոխել ծայրամասային գոտիներ, իսկ այնուհետև՝ մարզեր՝ դրանով նպաստելով հանրապետության մարզերում տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացմանն ու կյանքի որակի բարելավմանը:

Այս նպատակով համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ հարկային օրենսգրքում: Սահմանվել է, որ հիպոտեկային վարկի սպասարկման համար վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձի վճարած տոկոսների գումարների չափով եկամտային հարկը՝

ա) 2022 թվականի հունիսի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե նոյն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված առաջին գոտում,

բ) 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե նոյն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երկրորդ գոտում,

գ) 2023 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե նոյն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված երրորդ գոտում,

դ) 2025 թվականի հունվարի 1-ից հետո ստացված հիպոտեկային վարկերի մասով չի վերադարձվում, եթե նոյն հոդվածի 1-ին մասով սահմանված անշարժ գույքը գտնվում է կամ կառուցվում է կամ կառուցվելու է Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների

տարածագնահատման (գտնվելու վայրի)՝ Երևան քաղաքի վարչական տարածքում ներառված՝ նոյն կետի «ա», «բ» և «գ» Ենթակետերում չնշված գոտիներում:

Միաժամանակ սահմանվել է, որ վերոնշյալ սահմանափակումները չեն կիրառվում մինչև 2022 թվականի հունվարի 1-ն ընդունված որոշումներով ստացված շինարարության թույլտվությունների հիման վրա կառուցված (կառուցվող) բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների կամ անհատական բնակելի տների նկատմամբ:

Մյուս կողմից, 2021 թվականին հարկային քաղաքականությունն ուղղված է եղել նաև հարկեր/ՀՆԱ ցուցանիշի բարելավման և հարկաբյուջետային կայունություն ապահովելու նպատակով միջոցառումներ իրականացնելուն: Մասնավորապես, ԱՏԳ ԱԱ 2603000000 ծածկագրին դասվող պղնձի խտահանք, ԱՏԳ ԱԱ 2613 ծածկագրին դասվող մոլիբդենի խտահանք և ԱՏԳ ԱԱ 7202700000, 8102 (բացառությամբ 810297000) ծածկագրերին դասվող մոլիբդեն արտահանելու համար սահմանվել են պետական տուրքեր: Բացի այդ, ոչ ոեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետության տնտեսավարող սուբյեկտներին և ֆիզիկական անձանց էլեկտրոնային եղանակով ծառայությունների մատուցման դեպքում ԱԱՀ հաշվարկելու և վճարելու համար համապատասխան կարգավորումներ են սահմանվել << հարկային օրենսգրքով:

Միաժամանակ, 2021 թվականին հարկային քաղաքականությունն ուղղված է եղել առանձին խնդիրների կարգավորմանը, ինչպես նաև որոշակի ոլորտների խթանման համար հարկային խթանների ստեղծմանը: Մասնավորապես՝

1) կարգավորվել է անհատական բնակելի տան կառուցապատող համարվող ֆիզիկական անձանց կողմից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին անհատական բնակելի տունը օտարելու դեպքերում եկամտային հարկի գծով պարտավորությունների առաջացման հետ կապված խնդիրը,

2) կարգավորվել են անշարժ գույքի հարկով հարկման բազաները անշարժ գույքի շուկայական արժեքներին մոտարկման արդյունքում անշարժ գույքի կառուցապատմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների մոտ ԱԱՀ-ի և շահութահարկի մասով առաջացած խնդիրները,

3) շահութահարկի գծով արտոնություն սահմանելու միջոցով նպաստավոր հարկային միջավայր է ձևավորվել գյուղատնտեսական և սպառողական կոռպերատիվների գործունեության և զարգացման համար,

4) շահութահարկի գծով արտոնություն սահմանելու միջոցով նպաստավոր հարկային միջավայր է ձևավորվել ազգային ֆիլմերի զարգացման, հեռարձակման և կինոթատրոնում ցուցադրման համար,

5) մինչև 2024 թվականի հունվարի 1-ը երկարաձգվել է ԵՏՄ ԱՏԳ ԱԱ 8702 40 000, 8703 80 000 և 8711 60 ծածկագրերին դասվող՝ Էլեկտրական սնուցմամբ շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ներմուծումը և (կամ) օտարումն ԱԱՀ-ից ազատելու արտոնության կիրառությունը:

Ակտիվ քայլեր են իրականացվել նաև միջազգային հարկային հարաբերությունների բնագավառում: Այս առումով, հարկային քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրության ընդլայնմանը, ինչի արդյունքում 2021 թվականի ընթացքում Շվեյցարիայի Համադաշնության հետ ստորագրվել է Եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու մասին կոնվենցիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ արձանագրությունը:

Պետական Եկամուտների վարչարություն

Պետական Եկամուտների վարչարության ոլորտում իրականացված միջոցառումները բխել են << կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ հաստատված << կառավարության 2019-2023թթ. գործունեության միջոցառումների ծրագրից, << կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված << կառավարության հնգամյա (2021-2026թթ.) ծրագրից, << կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 12-ի N 1830-Լ որոշմամբ հաստատված <այսատանի Հանրապետության պետական Եկամուտների կոմիտեի գարգացման և վարչարության բարելավման ռազմավարական ծրագրից, ինչպես նաև << կառավարության կողմից հաստատված այլ ծրագրերից: Ստորև ներկայացվում է հարկային և մաքսային վարչարության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների ամփոփ նկարագիրը:

Հարկային և մաքսային հսկողություն

Վերլուծական և ոիսկերի բացահայտման գործընթացների բարելավման, ինչպես նաև հարկ վճարողների գործունեության նկատմամբ իրականացվող տեսչական ընթացիկ հսկողությունն Էլեկտրոնային հսկողության հարթակ տեղափոխելու նպատակով գործարկված մոնիթորինգային կենտրոնի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաներով, հաշվարկային փաստաթղթերով իրականացվող գործարքների մոնիթորինգի արդյունքների հիման վրա 2021 թվականի ընթացքում իրականացված մոնիթորինգի արդյունքներով հարկ վճարողներին բացառապես Էլեկտրոնային եղանակով ուղարկվել է 28,138 ծանուցում, և նոյն համակարգի միջոցով ստացվել է 6,220 բացատրություն:

Ներդրված է և գործում է տվյալների մեծ շտեմարանների» (Big Data) մշակման վերլուծական համակարգը (Big Data Analytics - Power BI), որը հնարավորություն է տալիս կատարել վերլուծական աշխատանքներ՝ ստեղծելով տարբեր չափանիշներով հաշվետվություններ: 31.12.2021թ. դրությամբ տվյալների համակարգում ներդրվել են ընդհանուր թվով 42 հաշվետվական ձևեր, այդ թվում՝ 6 հաշվետվական ձև արտաքին տնտեսական գործունեության վերաբերյալ:

Ոիսկերի վերհանման և դրա արդյունքներով ստվերի կրճատման նպատակով 2021 թվականին հարկային մարմնի կողմից հսկողական աշխատանքների շրջանակներում իրականացված 1156 համայիր հարկային ստուգումների արդյունքում արձանագրվել է 28.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա ընթացքում իրականացված 1130 ստուգմամբ արձանագրված 27.0 մլրդ դրամի դիմաց:

Տնտեսական գործունեության ռիսկային ոլորտները կամ ռիսկային հարկ վճարողների խմբերը վերհանելու և այդ ոլորտներում կամ խմբերում ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու նպատակով << ՊԵԿ-ի կողմից շարունակվել է «Հարկային և մաքսային կարգապահության բարելավման ռազմավարության» ծրագրի շրջանակներում «Խոշոր հարկ վճարողների», «Շենքերի շինարարություն», «Հանրային սննդի կազմակերպում» ոլորտներում գործունեություն իրականացնող հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև որպես ռիսկային խումբ ընտրվել և մշակվել է ներմուծող-իրացնող հարկ վճարողների հարկային կարգապահության բարելավման ծրագիրը:

Օրինապահ հարկ վճարողների խրախուսման առավել գրավիչ համակարգ ներդնելու և հարկ վճարողների կողմից հարկային պարտավորությունները կամավորությամբ կատարելու սկզբունքի արմատավորման և հարկային մարմին-հարկ վճարող գործընկերային հարաբերությունների առավել ամրապնդման նպատակով մշակվել և << ԱԺ-ի կողմից 18.05.2021թ. ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» <0-190-Ն օրենքը, իսկ 05.05.2021թ. N 191-Ն օրենքով փոփոխություն է կատարվել «Տոների և հիշատակի օրերի մասին» << օրենքում, որով ապրիլի 19-ը սահմանվել է որպես հարկ վճարողի օր: << կառավարության 12.08.2021թ. N 1324-Ն որոշմամբ հաստատվել են օրինապահ հարկ վճարող համարվելու չափանիշները և օրինապահ հարկ վճարողի հավաստագրի տրամադրման կարգը:

«Օրինապահ հարկ վճարող» կարգավիճակի տրամադրման համակարգով 2021 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ ներկայացվել է օրինապահ հարկ վճարողի հավաստագրի ստանալու թվով 280 դիմում (նախորդ տարվա 256-ի փոխարեն), թվով 188 հարկ վճարողի դիմում բավարարվել է (նախորդ տարվա 140-ի փոխարեն), ընդ որում «Հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքն ընդունելուց հետո ընդունվել է թվով 79 դիմում և բավարարվել 44-ը:

2021 թվականի ընթացքում հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է հարկ վճարողների կողմից ներկայացված 1877 բողոք, որից 43%-ը կամ 807 բողոք ամբողջությամբ կամ մասնակի բավարարվել է, իսկ 225 բողոք կարճվել է:

ՀՀ «Արտաքին առևտրի ազգային մեկ պատուհան» հարթակի «Թույլատվական փաստաթղթեր» համակարգի թվով 15 ենթահամակարգերն ամբողջությամբ մշակվել են և 2021 թվականի սեպտեմբերին ներկայացվել են թեստավորման: 2021 թվականի դեկտեմբերից իրականացվել են նաև «Թույլատվական փաստաթղթեր» համակարգի և trade.gov.am պորտալի մյուս էլեկտրոնային համակարգերի և տեղեկատու աղյուսակների ինտեգրման աշխատանքները:

Մաքսային ոիսկերի նվազեցման և վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով կատարվել է առկա համակարգերի մշտադիտարկում, որոնց արդյունքում մշակվել ու ներդրվել են սակագնային և ոչ սակագնային հսկողության նոր ալգորիթմներ:

Միջազգային առևտրատնտեսական հարաբերությունները զարգացնելու նպատակով ընդլայնվել է կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի աշխարհագրությունը: Մասնավորապես եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկեր չվճարելն ու հարկումից խուսափելը կանխելու նպատակով 2021 թվականից ուժի մեջ են մտել Մալթայի և Սինգապուրի հանրապետությունների կառավարությունների հետ կնքված համաձայնագրերը: Այսպիսով, 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ գործող՝ կրկնակի հարկումը բացառելու մասին ՀՀ միջազգային պայմանագրերի թիվը հասել է 49-ի:

Հարկային տեղեկատվության փոխանակման գործընթացների ներդրման նպատակով 2021 թվականի հովիս և օգոստոս ամիսներին իրականացվել է 02.11.2018թ. «Հարկային վարչարարություն իրականացնելու նպատակով ԱՊՀ մասնակից պետությունների միջև էլեկտրոնային եղանակով տեղեկություն փոխանակելու մասին» արձանագրության շրջանակներում հարկային տեղեկատվության ավտոմատացված առաջին գործնական փոխանակությունը, արդյունքում ավարտին են հասցվել ԱՊՀ պետությունների իրավասու մարմինների միջև միմյանց հարկ վճարողների եկամուտների և գույքի վերաբերյալ տեղեկատվության էլեկտրոնային փոխանակման համակարգի ներդրման աշխատանքները, իսկ արդեն սեպտեմբեր ամսին մեկնարկել է ՏՀՀԿ Գլոբալ ֆորումի կողմից փորձագիտական գնահատումը: Գնահատման առաջին փուլով ներկայացված տեղեկատվության վերաբերյալ փորձագետների արձագանքը ներկայացվել է 2022 թվականի հունվարին, որից հետո նախատեսվում է մեկնարկել գնահատման հաջորդ փուլը՝ կազմակերպելով միջազգային փորձագետների այցը Հայաստան՝ իրականացվող աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով:

Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների բարելավում, հարկային և մաքսային ընթացակարգերի կատարելագործում

ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների միասնական հաշվին մուտքագրման ժամկետների կրճատման միջոցառման շրջանակներում իրականացվել են օրենսդրական փոփոխություններ, ինչի արդյունքում 2021 թվականի հուլիսի 1-ից սկսած ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարների մուտքագրումը միասնական հաշվին կատարվում է յուրաքանչյուր ամսվա արդյունքներով՝ մինչ այդ գործող եռամյակի փոխարեն:

2021 թվականի ընթացքում կատարվել է ընդհանուր առմամբ 180,2 մլրդ դրամի հարկերի վերադարձ (նախորդ տարվա համեմատ հավելածի տեմպը կազմել է 30.1%), որն արտացոլված չէ պետական բյուջեի եկամուտներում: Մասնավորապես ԱԱՀ-ի գծով վերադարձը կազմել է 146.7 մլրդ դրամ, ակցիզային հարկի գծով վերադարձը՝ 0.9 մլրդ դրամ, եկամտային հարկի գծով վերադարձը՝ 32.6 մլրդ դրամ, այդ թվում՝ հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսագումարների վերադարձը՝ 22.7 մլրդ դրամ:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի ներդրման նպատակով իրականացված աշխատանքների արդյունքում 2022 թվականի հունվարի 1-ից ներդրվել է հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակը, իսկ գումարների վերադարձը կատարվում է դիմումը ներկայացվելուց հետո առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Տնտեսավարող սուբյեկտների մոտ ծագող հարցերի ու խնդիրների օպերատիվ լուծման նպատակով ակտիվորեն գործել է հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազնգերի կենտրոնը: Մասնավորապես, հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրության և վարչարարության վերաբերյալ 2021 թվականի ընթացքում ստացվել է 225,071 հարցադիմում (հարկային մասով՝ 80%, մաքսային՝ 20%): Նոյն ժամանակահատվածում հարկ վճարողների կողմից ստացվել են նաև 1240 դիմում-բողոք և 1 առաջարկություն:

Հարկ վճարողների իրազեկվածության բարձրացման նպատակով հարկ վճարողների տարբեր խմբերի համար 2021 թվականի ընթացքում անց է կացվել 72 ուսումնական միջոցառում՝ 826 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ, որոնց մասնակցել են 1023 հարկ վճարողներ և (կամ) նրանց ներկայացուցիչներ:

Կարևորելով բանհմաց, մասնագիտական և գործնական գիտելիքներով ու հմտություններով օժտված անձնակազմի դերը՝ 2021 թվականի ընթացքում աշխատանքներ են տարվել աշխատակիցների մասնագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ: Արդյունքում 113

Խմբերի համար իրականացվել են 1699.5 ակ/ժամ ընդհանուր տևողությամբ ուսումնական դասընթացներ, որոնց մասնակցել են 2141 հարկային և մաքսային ծառայողներ:

e-draft.am կայքէջում պարբերաբար տեղադրվել են << ՊԵԿ-ի կողմից մշակված համապատասխան իրավական ակտերի նախագծերը, զանգվածային լրատվության ներկայացուցիչների համար 2021 թվականի ընթացքում պարբերաբար կազմակերպվել են մամուլի ասովիսներ, հարցազրոյցներ, իրապարակվել են մամլո հաղորդագրություններ, ներկայացվել հարկային և մաքսային ոլորտներում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ տեղեկատվություն, կազմակերպվել են հեռուստատեսային տարբեր հաղորդումներ կոմիտեի աշխատակիցների մասնակցությամբ: Ընդհանուր առմամբ 2021 թվականի ընթացքում իրականացվել է հանրային իրազեկման 157 միջոցառում:

Համաշխարհային բանկի կողմից «Աջակցություն հարկային վարչարարության և քաղաքականության առաջնորդմանը» (STAPL) ծրագրի շրջանակներում 2021 թվականի փետրվար-մարտ ամիսներին իրականացվել է կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտություն՝ հարկային վարչարարության նկատմամբ հարկատուների ընկալման և վերաբերմունքի մասին: Հետազոտությունը ցույց է տվել, որ հարկ վճարողների ընկալումները հարկային մարմնի գործունեության նկատմամբ էապես բարելավվել են:

Կապիտալի շուկայի զարգացում

Standard&Poor's-ի սուվերեն վարկանշից սպացում: 2021 թվականի հոկտեմբերին «Standard&Poors» վարկանշային գործակալությունն առաջին անգամ վարկանշել է Հայաստանի կառավարությանը և շնորհել արտարժույթով և ազգային արժույթով երկարաժամկետ պարտավորությունների թողարկման «B+» սուվերեն վարկանշ՝ «դրական» հեռանկարով: Միննույն ժամանակ, արտարժույթով և ազգային արժույթով կարճաժամկետ սուվերեն վարկավորման համար շնորհվել է «B» վարկանշ, իսկ փոխարկելիության ոիսկը գնահատվել է «BB-»:

Առաջնային դիերների հետ կնքվող համաձայնագրի վերանայում՝ առաջնային և երկրորդային շուկաներում մասնակիցների իրավունքներն ու պարտավորությունները հավասարակշռելու և լրացուցիչ խթաններ նախադասելու համար: Հայաստանի ֆոնդային բորսայի՝ որպես կարգավորվող շուկայի օպերատորի, կողմից հաստատվել են «Արժեթղթերի շուկա ստեղծողի կանոնները», որոնք նոր խմբագրությամբ միավորում են նախկինում գործող «Շուկա ստեղծողի կանոնները» և «Պետական պարտատոմսերի գործակալների գնանշումների կանոնները»: Այս փաստաթղթով վերանայվել են առաջնային դիերների կողմից շուկա ստեղծողի գործառույթի իրականացման կանոնները: Մասնավորապես.

- Գնանշման հայտի ծավալի նվազագույն չափի ապահովման հնարավորություն հայտերի համախմբի միջոցով.
 - Ուղենշային պարտատոմսերի գնանշման սպրեդը 5%-ի փոխարեն սահմանվել է 3%.
 - Շուկա ստեղծողն իրավունք է ստանում հայտարարել երկկողմանի գնանշման ընդմիջում և ամսական կտրվածքով 2 առանձին կամ իրար հաջորդող առևտրային օրերի ընթացքում չիրականացնել երկկողմանի գնանշման պարտավորություններ.
 - Եթե շուկա ստեղծողի կողմից երկկողմանի գնանշման ծավալի նվազագույն չափը ապահովելուց հետո համախմբերում մնացել են մեկ կամ մի քանի ավելի վաղ ներկայացված և դեռևս չբավարարված հայտեր, ապա շուկա ստեղծողը կարող է դրանք չհեռացնել համակարգից, ինչպես նաև դրանցում կատարել փոփոխություններ.
 - Հանվել է առաջնային դիլերի կողմից 3 րոպեի ընթացքում պարտադիր գնանշում իրականացնելու պայմանը.
 - Հայտում կատարվող փոփոխությունների քանակը չի սահմանափակվում (նախկինում երկկողմանի գնանշման փաստացի կատարված յուրաքանչյուր երեք փոփոխության հաշվարկով տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում պարտավոր էր կնքել առնվազն մեկ գործարք).
 - Առևտրին թույլատրված արժեթղթերի քանակի փոփոխության դեպքում երկկողմանի գնանշման նվազագույն ծավալի փոփոխված չափը սկսվում է հաշվարկվել համապատասխան փոփոխությունն ամրագրելու օրվան հաջորդող առևտրային օրվանից:

Պետական պարտապոմսերի թողարկումների քանակի նվազեցում՝ զուգահեռաբար ծավալների ավելացմամբ: Պետական գանձապետական պարտատոմսերի համախմբման և տեղաբաշխման աճուրդների ժամանակացույցի վերանայման արդյունքում զգալիորեն նվազել են ինչպես շրջանառության մեջ առկա թողարկումների (ըստ առանձին ԱՄՏԾ-ների) քանակը, այնպես էլ տեղաբաշխման աճուրդների քանակը: Մասնավորապես, եթե 2016 թվականի վերջի դրությամբ շրջանառության մեջ առկա թողարկումների քանակը 64 էր, ապա 2020 թվականի վերջի դրությամբ՝ 32: Եթե 2016 թվականի ընթացքում իրականացվել է պետական գանձապետական պարտատոմսերի 101 աճուրդ, ապա 2020 թվականի ընթացքում՝ 54 աճուրդ: Ընդ որում, նոյն ժամանակահատվածում շրջանառության մեջ առկա պարտատոմսերի ծավալը գրեթե կրկնապատկվել է՝ 2016 թվականի 508.3 մլրդ դրամից 2020 թվականին հասնելով 958.8 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության հաշիվներում կանխիկ հոսքերի կանխադեսման և իրացվելիության միջնաժամկետ կանխադեսման գործառույթների արդյունավետության բարձրացում:

- Մշակվել և << ֆինանսների նախարարի 30.12.2020թ. թիվ 433-Ա հրամանով հաստատվել է «Գանձապետական միասնական հաշվի կանխիկ հոսքերի կանխատեսումների և կառավարման

մեթոդաբանությունը», որը սկսել է կիրառվել 2021 թվականից: Մեթոդաբանությամբ սահմանվում է գանձապետական միասնական հաշվի, այդ թվում՝ պետական բյուջեի և գանձապետական միասնական հաշվի այլ ենթահաշիվների հոսքերի և մնացորդների կանխատեսման և կառավարման գործընթացը:

• Բարելավվել է <<ՖՆ կողմից <<ԿԲ-ին տրամադրվող կանխիկ հոսքերի կանխատեսման որակը: Գանձապետական միասնական հաշվի հոսքերի օրական կտրվածքով կանխատեսումները մեկ շաբաթ ժամանակահատվածի փոխարեն պատրաստվում և տրամադրվում են մեկ ամիս ժամանակահատվածի համար՝ միաժամանակ պահպանելով հաջորդ երկու ամիսների համար շաբաթական կտրվածքով կանխատեսումները:

• «LS Finance» էլեկտրոնային համակարգում մշակվել և ավելացվել է «4335» հաշվետվության ձևը, որը հնարավորություն է ընձեռել <<ՖՆ-ին կազմել և <<ԿԲ-ին տրամադրել պարբերական բնույթ կրող «Կանխիկ հոսքերի արտադրության վճարումների շաբաթական կանխատեսումներն ընթացիկ և հաջորդող երկու ամիսների համար» տեղեկանքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿՐՈՏԻՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ

ՄԱԿՐՈՏԻՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Արտաքին միջավայրի զարգացումներ

Տնտեսական զարգացումներ⁴: 2021 թվականին համաշխարհային տնտեսությունում և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսություններում նկատվել են վերականգման միտումներ՝ հիմնականում պայմանավորված խթանող հարկաբյուջետային միջոցառումների իրականացմամբ, համավարակի դեմ պայքարի համար կիրառվող սահմանափակումների աստիճանաբար վերացմամբ և պատվաստանյութերի լայնորեն կիրառմամբ: 2021 թվականին համաշխարհային տնտեսական աճը կազմել է 5.9%: 2021 թվականին նախորդ տարվա նկատմամբ ԱՄՆ տնտեսությունը գրանցել է 5.6% աճ, որին նպաստել են իրականացված խթանող մակրոտնտեսական քաղաքականությունը (մասնավորապես՝ պետական ծախսերի աճը), մասնավոր սպառման, ներդրումների, արտահանման աճերը և սահմանափակումների աստիճանական վերացումը: 2021 թվականին Եվրոգոտու տնտեսությունն աճել է 5.2%-ով՝ սահմանափակումների թուլացման պայմաններում, իսկ Չինաստանի տնտեսությունը գրանցել է մոտ 8.1% աճ: Վերականգման փուլ է թևակողիսել նաև Ռուսաստանի տնտեսությունը. 2021 թվականին նախորդ նկատմամբ Ռուսաստանում տնտեսական աճը կազմել է 4.5%-ով՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության զարգացումներով:

Միջազգային գներ: Հիմնականում պայմանավորված համաշխարհային տնտեսության վերականգմամբ՝ միջազգային շուկայում հումքային ապրանքների գներն աճել են: 2021 թվականին պղնձի միջազգային շուկայում գներն աճել են 50.9%-ով, ինչին մեծամասամբ նպաստել է Չինաստանի բարձր տնտեսական ակտիվությունը: Համաշխարհային պահանջարկի վերականգնմամբ, ինչպես նաև առաջարկի ու պահանջարկի միջև ժամանակավոր շեղումներով պայմանավորված՝ նավթի միջազգային գները 2021 թվականին աճել են միջինում 66.5%-ով:

ՀՀ մակրոտնտեսական զարգացումներ


Համախառն առաջարկ և պահանջարկ

Համախառն առաջարկ: Համավարակի և Արցախյան պատերազմի շոկերից հետո 2021 թվականին տնտեսությունը թևակողիսեց վերականգնման փուլ՝ գրանցելով ՀՆԱ-ի 5.7% իրական աճ: Տնտեսական աճը պայմանավորված է եղել հիմնականում ծառայությունների աճով՝ (նպաստումը՝ 4.0 տոկոսային կետ): Արդյունաբերությունը և շինարարությունը ևս աճել են՝ նպաստելով տնտեսական

⁴ Աղյուրը՝ ԱՄՆ (<https://www.imf.org/en/Publications/WEO/Issues/2022/01/25/world-economic-outlook-update-january-2022>):


աճին (նպաստումները՝ համապատասխանաբար 0.8 և 0.2 տոկոսային կետեր): Մինչդեռ գյուղատնտեսության նվազումը բացասաբար է ազդել տնտեսական աճի վրա (նպաստումը՝ 0.2 տոկոսային կետ):

Գծապատկեր 1. ՀՆԱ-ի իրական աճը (%) և նպաստումները (տ.կ.) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ



Աղյուղը՝ << ՎԿ, << ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 2. ՀՆԱ-ի իրական աճը (%) և նպաստումները (տ.կ.) նախորդ տարվա նույն եռամյակի նկատմամբ



Աղյուղը՝ << ՎԿ, << ՖՆ հաշվարկներ

2021 թվականին նախորդ տարվա համեմատ գրանցվեց տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՅ) 5.8% աճ (Գծապատկերներ 3-6): Տնտեսական ակտիվության աճը հիմնականում պայմանավորված էր ծառայությունների աճով (նպաստումը՝ 3.6 տոկոսային կետ): Առևտրի, արդյունաբերության և շինարարության աճերը ևս նպաստել են տնտեսական ակտիվությանը (համապատասխանաբար՝ 0.9, 0.7 և 0.6 տոկոսային կետ), մինչդեռ գյուղատնտեսության նվազումը 0.1 տոկոսային կետով հակազդել է տնտեսական ակտիվությանը:


2021 թվականին համավարակի երրորդ և չորրորդ ալիքների, ինչպես նաև բնակչության շրջանում պատվաստման աճող, սակայն դեռևս համեմատաբար ցածր մակարդակի (տե՛ս Ներդիր 1) ազդեցությունները տնտեսության զարգացումների վրա չեն նկատվել:

Արդյունաբերություն⁵: 2021 թվականին արդյունաբերության համախառն թողարկումն աճել է 3.3%-ով, ինչը հիմնականում պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության (նպաստումը՝ 2.2 տոկոսային կետ) և էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում ենթաճյուղի աճով (նպաստումը՝ 1.1 տոկոսային կետ):

Մշակող արդյունաբերության աճին նպաստել է հիմնականում ներքին պահանջարկի աճը: Ենթաճյուղի աճը հիմնականում պայմանավորված է եղել խմիչքների (նպաստումը՝ 2.5 տոկոսային կետ), սննդամթերքի (նպաստումը՝ 1.4 տոկոսային կետ), ինչպես նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների (նպաստումը՝ 1.3 տոկոսային կետ) արտադրությունների աճով: Մշակող արդյունաբերության աճին հիմնականում հակազդել են ծխախոտային արտադրատեսակների

⁵ Ճյուղերի մանրամասն ցուցանիշները ներկայացված են Հավելվածում:

արտադրությունը՝ 1.4 տոկոսային կետով, հիմնային մետաղների արտադրությունը՝ 1.4 տոկոսային կետով, ինչպես նաև ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը՝ 1.0 տոկոսային կետով:



ՀՀ-ում համավարակի չորրորդ ալիքի ուժգնությունը մեծ էր, և հիվանդության հաստատված դեպքերի ընդհանուր թիվը դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 344,930 մարդ: 2021-2025թթ. իմունականխարգելման ազգային ծրագրով նախատեսվում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համաճարակային իրավիճակի գնահատում և բնակչության ոիսկի խմբերի շրջանում համաճարակաբանական ցուցումով զանգվածային պատվաստումների իրականացում, որն արդեն իսկ մեկնարկել է, ինչի շրջանակներում՝

- ✓ 2021թ. ՀՀ ներկրվել են «AstraZeneca», «CoronaVac», «Sinopharm», «Sputnik-V», «Sputnik Light», «Moderna», «Spikevax».
- ✓ Կորոնավիրուսային հիվանդության տարածման ոիսկը նվազեցնելու նպատակով, հոկտեմբերի 1-ից սահմանվել են պարտադիր պատվաստման կամ ՊՇՇ թեստերի իրականացման պահանջներ.
- ✓ 2021թ. նախատեսվում էր պատվաստել ՀՀ բնակչության 10%-ին: Սակայն 2022թթ հունվարի 2-ի դրությամբ կատարվել է 1,660,256 (ՀՀ մշտական բնակչության 56%-ը) պատվաստում, որից՝ առաջին դեղաչափ՝ 944,784 (ՀՀ մշտական բնակչության 31.9%-ը),՝ երկրորդ դեղաչափ՝ 714,685 (ՀՀ մշտական բնակչության 24.1%-ը):

Գյուղագնդեսություն: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը նվազել է 1.0%-ով՝ հիմնականում պայմանավորված բուսաբուծության նվազմամբ (նպաստումը՝ 1.5 տոկոսային կետ): Բուսաբուծության նվազումն իր հերթին պայմանավորված է եղել հացահատիկի և հատիկալներենի, կարտոֆիլի, խաղողի, ինչպես նաև բանջարեղենի համախառն բերքի նվազմամբ: Անասնաբուծության աճը հակազդել է (նպաստումը՝ 0.4 տոկոսային կետ) ճյուղի նվազմանը: Անասնաբուծության աճն իր հերթին պայմանավորված է եղել կաթի արտադրության, ինչպես նաև սպանդի համար նախատեսված գյուղատնտեսական կենդանու և թռչունի իրացման աճով:

Շինարարություն: Շինարարության ճյուղում գրանցված 7.4% աճը պայմանավորված է եղել հիմնականում կազմակերպությունների, համայնքների և բնակչության միջոցներով (նպաստումները՝ համապատասխանաբար՝ 3.6, 1.9 և 1.5 տոկոսային կետեր) իրականացված շինարարության ծավալների աճով: Ընդ որում՝ կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարությունն աճել է օտարերկրյա ներդրողների միջոցներով իրականացված շինարարության ծավալների զգալի անկման պայմաններում (նպաստում՝ -5.8 տոկոսային կետ): Ներքին ներդրողների միջոցներով ֆինանսավորվող կազմակերպությունների և բնակչության միջոցներով իրականացված շինարարության ծավալների աճը վկայում է ներքին միջոցներով իրականացվող մասնավոր ներդրումների աճի մասին (պայմանավորված հիմնականում բնակարանային շինարարության ծավալների աճով): Միաժամանակ շինարարության ճյուղի աճին հակագել է պետական բյուջեի միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումը (նպաստում՝ 0.4 տոկոսային կետ)՝ պայմանավորված միջազգային վարկերով իրականացված շինարարության նվազմամբ⁶:

Ըստ տնտեսական գործունեության տեսակների՝ շինարարության աճին հիմնականում նպաստել է տրանսպորտի (հիմնականում՝ ճանապարհաշինություն), անշարժ գույքի հետ կապված գործունեության (հիմնականում՝ բնակարանաշինություն), ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում ենթաճյուղի, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում իրականացված շինարարության ծավալների աճը: Ճյուղի աճին հիմնականում հակագել է մշակող արդյունաբերության և առևտուրի ոլորտներում իրականացված շինարարության ծավալների նվազումը:


Ծառայություններ և առևտուր: Ծառայություններն աճել են 7.8%-ով՝ հիմնականում պայմանավորված կացության և հանրային սննդի կազմակերպում (նպաստում՝ 3.9 տոկոսային կետ), տրանսպորտ (նպաստում՝ 2.6 տոկոսային կետ), առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում (նպաստում՝ 2.4 տոկոսային կետ), ինչպես նաև տեղեկատվություն և կապ (նպաստում՝ 2.1 տոկոսային կետ) ենթաճյուղերի աճով, իսկ առևտուրի 7.5% աճը հիմնականում պայմանավորված է եղել մեծածախ առևտուրի աճով (նպաստում՝ 6.2 տոկոսային կետ): Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ենթաճյուղի նվազումը հակագել է ընդհանուր ծառայությունների աճին (նպաստում՝ 6.3 տոկոսային կետ): Առևտուրի և ծառայությունների աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի և, մասնավորապես, մասնավոր սպառման աճերով:

⁶ Հարկ է նշել, որ պետական բյուջեի ներքին միջոցներով իրականացված պետական շինարարությունն աճել է: Իսկ պետական բյուջեի կապիտալ ծախսների և պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված շինարարության ծավալների տարրերությունը պայմանավորված է արտաքին վարկերով շինարարության իրականացման և պետական բյուջեից ֆինանսավորման ժամկետների տարրերությամբ, մասնավորապես՝ պայմանագրերով նախատեսված կանխավճարների և դրանց դիմաց դեռևս չիրականացված աշխատանքներով, իրականացված կրկնակի նախագծային աշխատանքների ծախսերով, ինչպես նաև մրցույթների արդյունքում հաղթող չճանաչելու պատճառով՝ կրկնակի մրցույթների անցկացման անհրաժեշտությամբ պայմանավորված շինարարական աշխատանքների հետաձգմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում բեռնափոխադրումների և ուղևորափոխադրումների ծավալներն աճել են: Բեռնափոխադրումների ծավալի 15.8% աճը հիմնականում պայմանավորված է եղել ներհանրապետական ավտոմոբիլային բեռնափոխադրումների աճով (նպաստումը՝ 14.6 տոկոսային կետ): Ուղևորափոխադրումների ծավալն աճել է 54.0%-ով՝ հիմնականում պայմանավորված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներով (նպաստումը՝ 39.0 տոկոսային կետ) և էլեկտրատրանսպորտով (նպաստումը՝ 12.7 տոկոսային կետ) իրականացված ուղևորափոխադրումների աճով:


Զբոսաշրջիկների այցելությունների բարձր աճն (140.0%) իր հերթին դրական ազդեցություն է ունեցել ծառայությունների որոշ տեսակների, առևտրի, ինչպես նաև ուղևորափոխադրումների վրա:

Գծապատկեր 3. ՏԱՅ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Աղյուղը՝ << ՎԿ

Գծապատկեր 5. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՅ-ին (տ.կ.)⁷




Աղյուղը՝ << ՎԿ, << ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 4. ՏԱՅ և տնտեսության ճյուղերի իրական աճերը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)



Աղյուղը՝ << ՎԿ

Գծապատկեր 6. Տնտեսության ճյուղերի նպաստումները ՏԱՅ-ին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (տ.կ.)



Աղյուղը՝ << ՎԿ, << ՖՆ հաշվարկներ

⁷ ՏԱՅ-ի աճին ճյուղերի նպաստումները << ֆՆ գնահատականներն են: Գյուղատնտեսության ցուցանիշը ոչ բոլոր հաշվարկներում է ներկայացված, քանի որ այն հրապարակվում է եռամյակային պարբերականությամբ՝ պայմանավորված գյուղատնտեսության սեզոնայնությամբ և բնակիմայական ոչ կայուն պայմաններից կախված՝ ամսական արտադրության տատանողականության հարթեցման անհրաժեշտությամբ:

Համախառն պահանջարկ: 2021 թվականին տնտեսական աճն ուղեկցվել է ներքին պահանջարկի աճով:

Սպառում: 2021 թվականին սպառումն իրական արտահայտությամբ աճել է 3.7%-ով՝ հիմնականում պայմանավորված մասնավոր հատվածի սպառման աճով, որին նպաստել են 2020 թվականի ընթացքում կուտակված խնայողությունների բարձր մակարդակը և տնօրինվող եկամտի (այդ թվում՝ արտերկրից ներհոսող դրամական փոխանցումների) աճը: Պետական սպառումը ևս աճել է՝ նպաստելով ընդհանուր սպառման աճին: Սպառման վերականգման վրա բացասական ազդեցություն է ունեցել սպառողական վարկավորման նվազումը:

Ներդրումներ: Հաշվետու ժամանակահատվածում կապիտալ ներդրումները⁸ նախորդ տարվա նկատմամբ իրական արտահայտությամբ աճել են 7.7%-ով՝ պայմանավորված ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ներդրումների աճով⁹: Մասնավոր ներդրումների վրա դրական ազդեցություն է ունեցել հիփոթեքային վարկերի ծավալների աճը:


Ներդրումների աճը հիմնականում պայմանավորված է եղել տրանսպորտի, անշարժ գույքի հետ կապված գործունեության, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում, ինչպես նաև գյուղատնտեսություն ոլորտներում կատարված ներդրումների աճով:

Չուր արդահանում: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալներն աճել են 16.5%-ով՝ պայմանավորված տնտեսական ակտիվության և արտաքին պահանջարկի վերականգնմամբ: Հաշվետու ժամանակահատվածում ապրանքների և ծառայությունների ներմուծման ծավալները նախորդ տարվա համեմատ աճել են 10.9%-ով՝ հիմնականում պայմանավորված ներքին պահանջարկի վերականգնմամբ:

⁸ Այստեղ ներկայացված են հիմնական միջոցներում ներդրումները՝ հաշվի առնելով, որ 2019 թվականից <<ՎԿ-ի կողմից համախառն կուտակման մեջ հաշվառվող պաշարների փոփոխության մեջ ներառում են նաև վիճակագրական շեղումները:


⁹ Ներդրումների ճյուղային կառուցվածքի ցուցանիշները վերաբերում են ներդրումների՝ կապիտալ շինարարությանն ուղղվող մասին: Ավելի մանրամասն տե՛ս Շինարարություն հատվածում:

Գծապատկեր 7. ՀՆԱ-ի իրական աճը (%) և նպաստումները (տ.կ.) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ



Աղյուրը՝ << ՎԿ, << ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 8. ՀՆԱ-ի իրական աճը (%) և նպաստումները (տ.կ.) նախորդ տարվա նույն եռամյակի նկատմամբ



Աղյուրը՝ << ՎԿ, << ՖՆ հաշվարկներ

Աշխատանքի շուկա

Աշխատանքի շուկայում նախորդ տարվա համեմատ նկատվում են դրական միտումներ: Այսպես, 2021 թվականին գործազրկության մակարդակը 2020 թվականի նկատմամբ նվազել է 2.8 տոկոսային կետով՝ կազմելով 15.3%: Գործազրկության թիվը նույն ժամանակահատվածում նվազել է 17.5%-ով՝ կազմելով 180.1 հազ. մարդ, իսկ զբաղվածների թիվն աճել է 0.3%-ով՝ կազմելով 993.7 հազ. մարդ: Ի տարրերություն զբաղվածների՝ վարձու աշխատողների թիվը 2021 թվականին աճել է ավելի արագ տեմպերով՝ 4.1%-ով, ինչը պայմանավորված է ինչպես տնտեսության ֆորմալ զբաղվածության աճով, այնպես էլ նոր կազմակերպությունների ստեղծմամբ (կազմակերպությունների թվաքանակն աճել է շուրջ 9%-ով): Միաժամանակ աշխատումի առաջարկը (տնտեսապես ակտիվ բնակչություն), հիմնականում պայմանավորված ժողովրդագրական տեղաշարժերով (մասնավորապես՝ բնակչության առողջական կարգավիճակ և զուտ միգրացիա), նվազել է 2.9%-ով և կազմել է 1,173.8 հազ. մարդ:


2021 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը նախորդ տարվա նկատմամբ աճել է 7.6%-ով՝ կազմելով 204,048 դրամ: Միջին ամսական անվանական աշխատավարձը պետական հատվածում աճել է 5.2%-ով՝ կազմելով 179,174 դրամ, իսկ ոչ պետականում՝ 8.4%-ով և կազմել է 215,674 դրամ: Իրական աշխատավարձը 7.2% գնաճի պայմաններում աճել է 0.3%-ով:

Գնաճ և դրամավարկային քաղաքականություն

2021 թվականին << սպառողական շուկայում արձանագրվել է գների աճի արագացում, որին արձագանքել է << ԿԲ-ն՝ տարվա ընթացքում խստացնելով դրամավարկային պայմանները: Գների աճի արագացումը պայմանավորված է եղել մի կողմից առաջարկի (միջազգային ապրանքահումքային շուկաներում դրսնորված գների աճ, բեռնափոխադրումների սակագների աճ, տարվա առաջին կեսին նախորդ համադրելի ժամանակահատվածի համեմատ << դրամի

արժեզույթած դիրք), մյուս կողմից՝ պահանջարկի գործոններով (մասնավոր սպառման աճ, գնաճային սպասումների ավելացում): 12-ամյա գնաճը տարեվերջին կազմել է 7.7%, իսկ միջին գնաճը՝ 7.2%:

Գծապատկեր 9. 2021թ. գնաճի նպաստումները խոշոր ապրանքախմբերով, տոկոսային կետ¹⁰



Միջին գնաճին առավելապես նպաստել է «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում արձանագրված 11.2% գների աճը (նպաստումը գնաճին՝ 4.2 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված առաջին անհրաժեշտության պարենային ապրանքների (բանջարեղեն, հացաբուլկեղեն և ծավարեղեն, կաթնամթերք, պանիր և ծու, այլ սննդային յուղեր) գների աճերով: «Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» խմբում արձանագրվել է 9.3% գնաճ (նպաստումը գնաճին՝ 0.4 տոկոսային կետ), իսկ «Ոչ պարենային ապրանքների» խմբում արձանագրվել է 8.7% գնաճ (նպաստումը գնաճին՝ 1.9 տոկոսային կետ), ինչը հիմնականում պայմանավորված է վառելանյութերի (այդ թվում՝ բենզինի) և բժշկական ու դեղագործական ապրանքների գների աճով: Բնակչությանը մատուցված ծառայությունների գծով արձանագրվել է 1.9% գնաճ (դրական նպաստումը գնաճին՝ 0.7 տոկոսային կետ), ինչի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայությունների, ամբողատոր և բժշկական ծառայությունների սակագների աճը:


2021 թվականի ընթացքում, հաշվի առնելով ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ միջազգային պարենային շուկաներում գնաճային զարգացումները և գնաճային սպասումների որոշակի ավելացումը, ՀՀ ԿԲ-ն բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույթը 2.5 տոկոսային կետով՝ սահմանելով այն 7.75%:

¹⁰ Աղյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ՖՆ հաշվարկներ:

Արտաքին հատված

Ընթացիկ հաշիվ: 2021 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը նախորդ տարվա համեմատ աննշան բարելավում է ցուցաբերել՝ կազմելով ՀՆԱ-ի 3.7%-ը: Ընթացիկ հաշվի բարելավումը հիմնականում պայմանավորված է եղել արտաքին պահանջարկի վերականգման հետևանքով ծառայությունների (ճանապարհորդություն) արտահանման առաջանցիկ աճի արդյունքում ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռի կրճատմամբ, ինչպես նաև դրամական փոխանցումների (սեզոնային աշխատողների վարձատրության և տնային տնտեսություններին անհատույց տրամադրով երկրորդային եկամուտների) աճով: Դոլարային արտահայտությամբ ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշիռը կազմել է ՀՆԱ-ի 8.3%-ը՝ նախորդ տարվա համեմատ բարելավվելով 1.6 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է եղել ներմուծման համեմատ արտահանման բարձր աճով (համապատասխանաբար՝ 29.7% և 20.3%¹¹): Ապրանքների և ծառայությունների և՛ արտահանման, և՛ ներմուծման երկնիշ աճերը հիմնականում պայմանավորված էին սահմանափակումների թուլացմամբ և արտաքին ու ներքին պահանջարկների վերականգմամբ: Հիմնականում ճանապարհորդության նպատակով ՀՀ այցելությունների աճի արդյունքում ծառայությունների արտահանումն աճել է 52.1%-ով, իսկ ծառայությունների ներմուծման աճը կազմել է 25.2%: Տնտեսություն ներհոսող դրամական զուտ փոխանցումները 2021 թվականին աճել են մոտ 24%-ով՝ հիմնականում պայմանավորված ԱՄՆ-ից, այլ երկրներից և ՌԴ մեկնելու սահմանափակումների վերացման արդյունքում՝ ՌԴ-ից ներհոսքի աճով: Նշված զարգացումների արդյունքում 2021 թվականին նախորդ տարվա համեմատ ընթացիկ հաշվի պակասուրդը բարելավվել է ՀՆԱ-ում 0.1 տոկոսային կետի չափով:

Գծապարկեր 10. Ընթացիկ հաշվի և դրա բաղադրատարրերի դինամիկան, % ՀՆԱ-ի նկատմամբ¹²




¹¹Այս հատվածում ներկայացվում են անվանական դոլարային աճերն ըստ ՀՀ վճարային հաշվեկշռի տվյալների, իսկ «Համախառն պահանջարկ» բաժնում՝ իրական աճերը:

¹² Աղյուրը՝ ՀՀ վիճակգրական կոմիտե, «ՀՀ վճարային հաշվեկշռ-6» տվյալների բազա և ՀՆ գնահատականներ:

Արտաքին առևտուր (դոլարային արտահայփությամբ)¹³: 2021 թվականի ընթացքում գրանցվել է արտաքին ապրանքաշրջանառության երկնիշ աճ: Արտաքին ապրանքաշրջանառությունը 2021 թվականին կազմել է 8379.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.7%-ով: Հաշվետու ժամանակահատվածում արձանագրվել է դոլարային արտահայտությամբ արտահանման և ներմուծման աճ: արտահանումն աճել է 19.1%-ով՝ կազմելով 3022.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 16.9%-ով և կազմել 5356.8 մլն ԱՄՆ դոլար: 2021 թվականին ապրանքների գծով արտաքին առևտուրի բացասական մնացորդը նախորդ տարվա նկատմամբ վատթարացել է (14.1%-ով) և կազմել 2334.4 մլն ԱՄՆ դոլար:

Գծապարկեր 11. Առևտրային հաշվեկշռի դինամիկան (մլն ԱՄՆ դոլար)¹⁴



Արտահանում: 2021 թվականին արձանագրվել է արտահանման աճ՝ հիմնականում պայմանավորված միջազգային շուկայում պղնձի գների բարձրացմամբ, ինչպես նաև տնտեսական ակտիվության և արտաքին պահանջարկի վերականգնմամբ: 2021 թվականի ընթացքում դոլարային արտահայտությամբ << ապրանքների արտահանումն աճել է 19.1%-ով՝ հիմնականում պայմանավորված մետաղների գների աճով: Մինչդեռ արտահանման իրական ծավալների աճը համեմատաբար թույլ է եղել:

Արտահանման աճին հիմնականում նպաստել է «Հանքահումքային արտադրանք», ապրանքախումբը (6.6 տոկոսային կետով): Դրական նպաստում են ունեցել նաև «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (5.3 տոկոսային կետով), «Պատրաստի սննդի արտադրանք» (2.4 տոկոսային կետով), «Բուսական ծագման արտադրանք» (2 տոկոսային կետով) և «Մանածագործական իրեր» (2 տոկոսային կետով) ապրանքախմբերը¹⁵: Արտահանման աճին


¹³ Ներմուծման տվյալները ներկայացված են ՍԻՖ գներով:

¹⁴ Աղյուղը՝ << վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական գեկոյցներ:

¹⁵ Մանրամասն ցուցանիշները ներկայացված են Հավելվածում:


հիմնականում հակագրել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Սարքեր և ապարատներ» (1.4 և 1.1 տոկոսային կետերով) ապրանքախմբերը:

Գծապատկեր 12. Ապրանքների արտահանման միտումները¹⁶



Ներմուծում: 2021 թվականին արձանագրվել է ներմուծման աճ՝ հիմնականում պայմանավորված տնտեսական ակտիվությամբ և ներքին պահանջարկի վերականգնմամբ: 2021 թվականին դոլարային արտահայտությամբ ապրանքների ներմուծման աճը կազմել է 16.9%: Ընդունում՝ գրանցվել է և՝ իրական ծավալների, և՝ ներմուծվող ապրանքների գների աճ:

Գծապատկեր 13. Ապրանքների ներմուծման միտումները¹⁷




¹⁶ Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական գեկուցներ և ՀՀ ֆենաշարկներ:

¹⁷ Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» ամսական գեկուցներ և ՀՀ ֆենաշարկներ:

Դոլարային արտահայտությամբ ներմուծման ծավալների աճին հիմնականում նպաստել են «Հանքահումքային արտադրանք» (4.2 տոկոսային կետով), «Վերգետնյա, օդային, ջրային տրանսպորտ» (2.4 տոկոսային կետով), «Ժանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (2.3 տոկոսային կետով) և «Մանածագործական իրեր» (1.2 տոկոսային կետով) ապրանքախմբերը¹⁸: Ըստ ապրանքների լայն տնտեսական դասակարգման¹⁹ ներմուծման աճին նպաստել են" «Միջանկյալ սպառման ապրանքները» (9.9 տոկոսային կետով, այդ թվում՝ արդյունաբերական մատակարարումները՝ 5.4 տոկոսային կետով), «Վերջնական սպառման ապրանքները» (5 տոկոսային կետով) և «Մարդատար ավտոմեքենաները» (1.3 տոկոսային կետով), իսկ «Կապիտալ ապրանքները» ներմուծման աճին հակազդել են՝ 0.6 տոկոսային կետով²⁰:

Ներմուծման ծածկման գործակից: Ներմուծման ծածկման գործակիցը 2021 թվականին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ զգալի բարելավվել է. 2021 թվականի արտահանման հաշվին ֆինանսավորվել է ներմուծման շուրջ 81%-ը:

Գծապատկեր 14. Ներմուծման ծածկման գործակիցը²¹



Արտաքին առևտուրն ըստ գործընկեր երկրների: 2021 թվականին արտաքին առևտրաշրջանառության աշխարհագրական կառուցվածքում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել, մինչդեռ նկատվել է դեպի ԵԱՏՄ և ԵՄ երկրներ աշխարհագրական ուղղվածության որոշակի աճ: << արտաքին առևտրաշրջանառության 35.2%-ը բաժին է ընկել ԱՊՀ (որից 32.7%-ը՝ ԵԱՏՄ), 18.9%-ը՝ ԵՄ և 45.9%-ը՝ այլ երկրներին: << արտաքին առևտրաշրջանառության մեջ ԵԱՏՄ և ԵՄ երկրների կշիռներն ավելացել են 0.8 տոկոսային կետերով, իսկ այլ երկրների կշիռը նվազել է 1.6 տոկոսային կետով:

¹⁸ Մանրամասն ցուցանիշները ներկայացված են Հավելվածում:

¹⁹ Ապրանքների լայն տնտեսական դասակարգմամբ (BEC) 2021 թվականի պաշտոնական տվյալները կիրապարակվեն 2022 թվականի վերջին, ուստի այս հատվածում ներկայացված են << ՖՆ գնահատականները (կիրառվել են արտաքին առևտրի 4-անից վիճակագրությունից BEC-ին անցման միջազգային փորձում ընդունված անցումային բանալիներ):

²⁰ Մանրամասն ցուցանիշները ներկայացված են Հավելվածում:

²¹ Աղյուրը՝ << վիճակագրական կոմիտե, << վճարային հաշվեկշո-6» տվյալների բազա և << ՖՆ գնահատականներ:

2021 թվականին ՀՀ խոշոր առևտրային գործընկերների շրջանակում ընդգրկված էին ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (առևտրաշրջանառության 31.4%, նախորդ տարվա 30.6%-ի դիմաց), իսկ ԵՄ և այլ երկրներից՝ Չինաստանը (համապատասխանաբար՝ 15% և 13.5%), Իրանը (6.0% և 5.6%), Շվեյցարիան (4.6% և 6.6%), Գերմանիան (3.5% և 4.2%), Իտալիան (3.4% և 3.3%), Բուլղարիան (2.7% և 2.4%) և Նիդերլանդները (2.7% և 1.8%):

Փոխարժեքներ


Երկկողմանի փոխարժեքներ: 2021 թվականին ՀՀ դրամն արժեզրկվել է՝ հիմնականում պայմանավորված համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով ձևավորված սպասումների և անորոշությունների արդյունքում տարվա առաջին կիսամյակի զարգացումներով: ԱՄՆ դոլարի, Եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ դրամը 2021 թվականին արժեզրկվել է համապատասխանաբար 2.9%, 6.4%-ով և 0.6%-ով:

Վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ 2021 թվականի առաջին կիսամյակում որոշակի արժեզրկումից հետո ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամը սկսել էր արժեսրութեալ՝ հիմնականում պայմանավորված ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բարելավմամբ և դրամական փոխանցումների նշանակալի ներհոսքով: 2021 թվականին ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի առավելագույն տատանումը կազմել է 11.6%, փոխարժեքի առավելագույն՝ 537.4 արժեքը գրանցվել է ապրիլի 8-ին, իսկ տարվա միջին փոխարժեքը կազմել է 503.8: Ի տարբերություն տարեկան միջին փոխարժեքի արժեզրկման՝ 2021 թվականի դեկտեմբեր ամսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ ՀՀ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեսրութեալ է մոտ 7%-ով:

ՀՀ դրամի միջին փոխարժեքը ՌԴ ռուբլու նկատմամբ 2021 թվականին նախորդ տարվա համեմատությամբ արժեզրկվել է 0.6%-ով՝ միջազգային շուկայում ռուբլու դիրքի ամրապնդմամբ պայմանավորված, իսկ դեկտեմբեր ամսին նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ այն դասորել է արժեսրման միտում՝ 6.4%-ով:


Արդյունավետ փոխարժեքներ: ՀՀ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր արժույթներից բաղկացած զամբյուղի նկատմամբ ՀՀ ազգային արժույթն անվանական արտահայտությամբ 2021 թվականին արժեզրկվել է 1.6%-ով, իսկ իրական արտահայտությամբ՝ 1.4%-ով, ինչը, այլ հավասար պայմաններում, իր դրական ազդեցությունն է ունեցել առևտրային հաշվեկշռի բարելավման գործում:

Գծապատկեր 15. << դրամի անվանական փոխարժեքի օրական դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ (աճ՝ արժևորում)



Աղյուրը՝ << ԿԲ, << ՖՆ հաշվարկներ

Գծապատկեր 16. << իրական և անվանական արդյունավետ փոխարժեքների կուտակային տ/տ աճերի դինամիկան (աճ՝ արժևորում)



Աղյուրը՝ << ԿԲ, << ՖՆ հաշվարկներ

Ֆինանսական շուկաներ²²


Վարկեր և ավանդներ: 2021 թվականին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է վարկերի ծավալների նվազում, ինչը պայմանավորված է նոր վարկերի նկատմամբ պահանջարկի նվազմամբ և անորոշությունների պահպանման պայմաններում << առևտրային բանկերի պահպանողական վարչագծով: Առևտրային բանկերի կողմից ռեզիլենտներին տրամադրված վարկերի ծավալների նվազումը կազմել է 4.3%²³՝ 2020 թվականին արձանագրված 15.5% աճի համեմատ: Վարկերի նվազմանը 7.6 տոկոսային կետով նպաստել է արտարժութային վարկերի նվազումը, իսկ դրամային վարկերն ունեցել են դրական նպաստում՝ 3.3 տոկոսային կետով: Վարկերի նվազումը հիմնականում պայմանավորվել է արդյունաբերության ոլորտի (3.6 տոկոսային կետ), սպառողական (նպաստում՝ 2.8 տոկոսային կետ), այլ (2.0 տոկոսային կետ) և առևտրի ոլորտի վարկերի (1.4 տոկոսային կետ) նվազմամբ, իսկ հիփոթեքային, շինարարության և գյուղատնտեսության ոլորտներին տրամադրված վարկերը դրական նպաստում են ունեցել (համապատասխանաբար 4.6, 1.2 և 0.6 տոկոսային կետ):

2021 թվականին ավանդների ծավալների աճի տեմպը նախորդ տարվա համեմատ զգալիորեն արագացել է՝ պայմանավորված ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ձեռնարկությունների ավանդների աճով: Առևտրային բանկերի կողմից ռեզիլենտներից ներգրավված ավանդներն աճել են 17.6%-ով, որին 10.9 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել դրամային ավանդների աճը, իսկ արտարժութային ավանդների նպաստումը կազմել է 6.6 տոկոսային կետ:

²² Աղյուր՝ << ԿԲ:

²³ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Գծապատկեր 17. Ուղղիղենտների վարկերի և ավանդների ծավալների աճը (նախորդ տարվա նկատմամբ, %)²⁴



2021 թվականի ընթացքում ֆինանսական միջնորդության դոլարայնացումը նվազել է: Ուղղիղենտների արտարժութային ավանդներ/ընդամենը ավանդներ հարաբերակցությունը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 41.8%, իսկ ուղղիղենտների վարկավորման ընդհանուր կառուցվածքում արտարժույթով վարկերի կշիռը նվազել է 5.7 տոկոսային կետով՝ կազմելով 43.8%:

Վարկերի և ավանդների դոլարայնացումներ: «Հ դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույթները (մինչև 1 տարի ժամկետով) 2021 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են՝ իրենց վրա որոշ չափով կրելով «Հ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույթի բարձրացման ազդեցությունը: 2021 թվականին «Հ դրամով վարկավորման (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույթը կազմել է 11.8%՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 0.2 տոկոսային կետով: «Հ դրամային ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տոկոսադրույթը կազմել է 8.2%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով:»

Արտարժույթով ավանդների տոկոսադրույթները նվազել են, իսկ վարկերի տոկոսադրույթները՝ մնացել անփոփոխ: Արտարժույթով ավանդների (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույթը 2021 թվականին կազմել է 2.0%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 0.2 տոկոսային կետով: Իսկ արտարժույթով վարկերի (մինչև մեկ տարի ժամկետով) միջին տարեկան տոկոսադրույթը կազմել է 7.8%:

Ֆինանսական շուկայում արտարժույթով և դրամով միջին կշռված մինչև 1 տարի ժամկետով տոկոսադրույթների միջև միջին սպրեդը 2021 թվականին նախորդ տարվա նկատմամբ աճել է 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 4%: Ընդ որում՝ դրամով վարկերի և ավանդների միջև

²⁴ Աղյուրը՝ «Հ ԿԲ և «Հ ՖՆ հաշվարկներ:

տոկոսադրույթների սպոերը չի փոփոխվել՝ կազմելով 3.5, իսկ արտարժույթով սպոերն աճել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 5.8 տոկոսային կետ:

ՀՀ պետական պարտապոմսերի շուկա: ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում նկատվել է ՊՊ տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերության որոշակի աճ, ինչը կարող է բացատրվել գնաճի և գնաճային սպասումների արագացմամբ և ՀՀ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույթի ու դրանից ածանցվող՝ ֆինանսական շուկայի կարճաժամկետ տոկոսադրույթների բարձրացմամբ: Այսպես, եթե 2020 թվականին տեղաբաշխված պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.7%, ապա 2021 թվականի նույն ժամանակահատվածում այն կազմել է 9.3%՝ աճելով շուրջ 1.5 տոկոսային կետով:

2021 թվականին տեղաբաշխված պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 394.3 մլրդ դրամ՝ 2020 թվականի 388.3 մլրդ դրամի դիմաց, իսկ տեղաբաշխման միջին կշռված ժամկետայնությունը՝ 3207 օր, 2020 թվականի 4073 օր ցուցանիշի դիմաց:

2021 թվականին պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը գերազանցել է տեղաբաշխման ցուցանիշը 1.9 անգամ (2020 թվականին՝ 1.7 անգամ), իսկ տեղաբաշխման ենթակա ծավալ/տեղաբաշխված ծավալ միջին հարաբերակցությունը կազմել է 1.15 (2020 թվականի համադրելի ժամանակահատվածում՝ 1.19):

ՀՀ եվրապարտապոմսերի երկրորդային շուկա: ՀՀ եվրապարտատոմսերի երկրորդային շուկայում եկամտաբերությունները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եղել են ավելի ցածր: Միջազգային կապիտալի շուկայում 2015 թվականին 7.5% եկամտաբերությամբ թողարկված պետական արտարժութային պարտատոմսերի եկամտաբերությունը 2021 թվականին միջինում կազմել է 3.3%՝ 2020 թվականին արձանագրված 4.1%-ի դիմաց: Մինչդեռ 2019 թվականին 4.2% եկամտաբերությամբ թողարկված պարտատոմսերի եկամտաբերությունը միջինում անփոփոխ է մնացել 4.2% մակարդակում:

2021 թվականի հունվարին ՀՀ պատմության ընթացքում կառավարությունը չորրորդ անգամ մուտք է գործել միջազգային կապիտալի շուկա՝ իրականացնելով 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով պետական արտարժութային պարտատոմսերի թողարկում: Նոր թողարկված եվրապարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերությունը կազմել է 3.875%, արժեկտրոնի եկամտաբերությունը՝ 3.6%: Նշենք, որ նոյն՝ 10 տարի մարման ժամկետով 2019 թվականին թողարկված ՀՀ եվրապարտատոմսերի տեղաբաշխման եկամտաբերությունը կազմել էր 4.2%, իսկ արժեկտրոնի եկամտաբերությունը՝ 3.95%: Սակայն պետք է նշել, որ ուղենիշի եկամտաբերությունը (ԱՄՆ գանձապետական պարտատոմսեր) նվազել է շուրջ 0.6 տոկոսային կետով, ինչը նշանակում է նախորդ թողարկման համեմատ ՀՀ դիսկի հավելավճարի բարձրացում շուրջ 0.3 տոկոսային կետով:

2021 թվականին նախորդ տարվա համեմատությամբ երկրորդային շուկայի դիսկի հավելավճարի գնահատականների նվազում է տեղի ունեցել՝ զարգացող երկրների դիսկի

հավելավճարների նվազմանը գուգընթաց: Մասնավորապես, 2029 թվականին մարվող եվրապարտատոմսերի ռիսկի հավելավճարը 2021 թվականին միջինում կազմել է 2.8 տոկոսային կետ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3.3 տոկոսային կետ ցուցանիշի դիմաց:

ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ


2021 թվականին հարկաբյուջետային քաղաքականության նպատակներն են եղել հարկաբյուջետային կայունության ապահովումը, նպաստումը տնտեսական վերականգնմանը և COVID-19 համավարակի ու Արցախյան պատերազմի հետևանքների էական մեղմումը: Մասնավորապես, հարկաբյուջետային դիրքը եղել է խթանող, սակայն այն 2020 թվականի համեմատությամբ նվազել է, ինչի արդյունքում, պլանավորված ուղղությանը համահունչ, հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի (դիրքի փոփոխություն կամ ազդակ) վրա եղել է զապոդ:

Պետական բյուջեի եկամուտները: 2021 թվականին << պետական բյուջեի եկամուտներն աճել են՝ պայմանավորված տնտեսության վերականգնման և հարկային օրենսդրության փոփոխությունների արդյունքում հարկային եկամուտների աճով: 2021 թվականի տարեկան արդյունքներով << պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են 1683.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 7.9%-ով: << պետական բյուջեի ընդհանուր եկամուտները <ՆԱ-ի մեջ կազմել են 24.1%-ը՝ նախորդ տարվա 25.2%-ի դիմաց, որի նվազման հիմնական պատճառը այլ եկամուտների և պաշտոնական դրամաշնորհների նվազումն է:

2021 թվականին հարկեր և տուրքերը կազմել են 1586.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 14.6%-ով՝ պայմանավորված հիմնականում հարկման բազաների (հիմնականում սպառման և ներմուծման աճի հաշվին) վերականգնմամբ, ինչպես նաև դրոշմանիշային վճարի և արտահանման տուրքի ներդրմամբ: Այս պայմաններում հարկեր և տուրքերը կազմել են <ՆԱ-ի 22.7%, նախորդ տարվա նկատմամբ բարելավելով 0.3 տոկոսային կետով:

2021 թվականին նախորդ տարվա համեմատ այլ եկամուտները <ՆԱ-ի նկատմամբ նվազել են 0.8 տոկոսային կետով, իսկ պաշտոնական դրամաշնորհները՝ 0.7 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է համեմատվող տարում դրանց բարձր ցուցանիշների արձանագրմամբ (այլ եկամուտների մասով՝ 2020 թվականին «Հայաստան» համահայկական հիմնադրամից պետական բյուջե մուտքագրված միջոցներով, իսկ դրամաշնորհների մասով՝ 2020 թվականին համավարակի պայմաններում դոնորներից ստացված դրամաշնորհներով):

Գծապատկեր 18. Պետական բյուջեի հարկային եկամուտները 2019-2021թթ. ըստ ամիսների



Պետական բյուջեի ծախսերը: 2021 թվականին արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի աճ՝ պայմանավորված պետական բյուջեով նախատեսված, կապիտալ ծախսերի ընդլայնմամբ, ինչպես նաև կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված հականգնաժամային միջոցառումների և Արցախյան պատերազմի հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի իրականացմամբ: 2021 թվականի արդյունքներով պետական բյուջեի ծախսերը կազմել են 2004.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 5.8%-ով: Ընդ որում, ընթացիկ ծախսերը կազմել են 1788.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.2%-ով, որն իր մեջ ներառում է Արցախյան պատերազմի հետևանքների մեղմանն ուղղված ծախսերը, կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հականգնաժամային ծրագրերի տնտեսական միջոցառումների իրականացումը և առողջապահությանն ուղղված լրացուցիչ ծախսերը: Պետական բյուջեի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում 2020 թվականի նկատմամբ նվազել է 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 28.7%, որում ընթացիկ ծախսերի կշիռը նվազել է 1.4 տոկոսային կետով՝ կազմելով 25.6%:

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 216.3 մլրդ դրամ, որում ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը (կապիտալ ծախսեր) կազմել են 218.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 4.1%-ով, որի հիմնական պատճառը 2020 թվականին Արցախյան պատերազմով պայմանավորված ռազմական լրացուցիչ ծախսերի իրականացումն է, առանց որոնց կապիտալ ծախսերի աճը կկազմի շուրջ 26.0%: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը ՀՆԱ-ում նվազել է 0.6 տոկոսային կետով՝ կազմելով 3.1%: Միևնույն ժամանակ, 2020 թվականի կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը 2021 թվականին բարելավել է, և կատարողականը ճշտված ծրագրի նկատմամբ կազմել է 92.5%՝ նախորդ տարվա 84.9%-ի համեմատ բարելավվելով 7.6 տոկոսային կետով: Ընդ որում, պետական բյուջեի տարեկան պլանի նկատմամբ կատարողականը կազմել է 101%: Հատկանշական է, որ արտաքին

աջակցությամբ իրականացվող ծրագրերի կատարողականը (առանց պետական բյուջեի համաֆինանսավորման) ևս բարելավվել է՝ ճշտված ծրագրի նկատմամբ կազմելով 88.1% (2020 թվականին այդ ցուցանիշը կազմել էր 56.7%): Այդուհանդերձ, կապիտալ ծրագրերի կառավարման և իրականացման արդյունավետության բարձրացման խնդիրը շարունակում է մնալ արդիական՝ հատկապես արտաքին աջակցությամբ իրականացվող ծախսերի գծով:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները: Կորոնավիրուսի համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքների հակազդմանը և մեղմմանն ուղղված միջոցառումները շարունակվել են նաև 2021 թվականի ընթացքում: ՀՀ 2021 թվականին պետական բյուջեից կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման նպատակով իրականացված միջոցառումների գծով հատկացված միջոցների ծավալը կազմել է 54.6 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի մեջ կազմում է 0.8 տոկոս: Այդ թվում՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների մեղմման ուղղությամբ հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են շուրջ 48.8 մլրդ դրամի չափով ծախսեր, որոնց կազմում առողջապահական ծրագրերին ուղղված ծախսերը կազմել են 36.4 մլրդ դրամ, տնտեսական աջակցության ծրագրերը՝ 11.5 մլրդ դրամ, 949.3 մլն դրամ ուղղվել է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, 1 մլն դրամ՝ սոցիալական պաշտպանությանը: Իսկ վարկավորման գծով հատկացվել է 5.8 մլրդ դրամ²⁵:

Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման ուղղությամբ իրականացված ծախսերը կազմել են շուրջ 68.9 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի մեջ կազմում է 1.0 տոկոս: Այս ծախսերում սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը կազմել են շուրջ 64.9 մլրդ դրամ: Բացի այդ, 2021 թվականին պետական բյուջեից Արցախի Հանրապետությանը տրամադրվել է 64 մլրդ դրամի չափով լրացուցիչ բյուջետային վարկ²⁶:

Պետական բյուջեի պակասուրդը և կառավարության պարտքը: 2021 թվականի տնտեսական վերականգնումը և հարկաբյուջետային քաղաքականության ջանքերը թույլ են տվել ապահովելու ՀՆԱ համեմատությամբ պետական բյուջեի պակասուրդի և կառավարության պարտքի որոշակի նվազում, որը հիմքեր է ստեղծել 2022-2026թթ. պարտքի բերի նվազեցման ծրագրի թիրախների իրականացման համար՝ միաժամանակ չխաթարելով 2020 թվականի շոկերից հետո տնտեսության վերականգնումը: 2020 թվականի ընթացքում ծնավորվել է պետական բյուջեի 320.5 մլրդ դրամ դեֆիցիտ՝ նախորդ տարվա 334.0 մլրդ դրամի համեմատ: ՀՆԱ-ի նկատմամբ, պետական բյուջեի պակասուրդը կազմել է 4.6%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: ՀՀ



²⁵ Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման նպատակով իրականացված միջոցառումների գծով հատկացումները և արդյունքային չափորոշիչները ներկայացված են հետևյալ տեղեկանքներում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\17. 2021 COVID-19.xls](#), [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\18. COVID-19 արդյունքային ցուցանիշ.xls](#):

²⁶ Ռազմական դրույթամբ պայմանավորված հատկացումները և միջոցառումների արդյունքային չափորոշիչները ներկայացված են հետևյալ տեղեկանքներում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\19. 2021 ռազմական.xls](#), [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\20. Ռազմական արդյունքային ցուցանիշ.xls](#):

կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 60.3%՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 3.2 տոկոսային կետով:

Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորվել է ՀՀ դրամի արժեքորմամբ և ՀՆԱ իրական աճով, մինչդեռ հարկաբյուջետային քաղաքականության դիրքը շարունակել է պարտքի բեռի աճին նպաստող գործոն մնալ: Կառավարության պարտք/ՀՆԱ ցուցանիշի 3.2 տոկոսային կետով նվազմանը -4.6 տոկոսային կետով նպաստել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեքորումը, -3.2 տոկոսային կետով՝ տնտեսական աճը, 2.7 տոկոսային կետով՝ իրական տոկոսադրույթի նվազումը (անվանական տոկոսադրույթի նվազման և գնաճի արագացման պատճառով): Առաջնային պակասուրդը և պետական բյուջեից զուտ վարկավորումը կազմել են ՀՆԱ-ում 2-ական տոկոս՝ համապատասխան չափով չեզոքանցելով դրամի արժեքորումից և ՀՆԱ աճից եկող դրական ազդեցությունները:


Գծապատճեր 19. ՀՀ կառավարության պարտքի և պակասուրդի դինամիկան²⁷



²⁷ Աղյուրը՝ ՀՀ ֆՆ:

Հարկաբյուջետային կանոններ: 2021 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների ներքո պետական բյուջեի կատարումը շարունակել է շեղվել հարկաբյուջետային կանոնների բնականոն իրավիճակների տրամաբանությունից՝ համահունչ 2021 թվականի ՀՀ պետական բյուջեի ուղերձում նախանշված քաղաքականությանը։ Մասնավորապես, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 2020 թվականին «բացառիկ դեպքի» կարգավորումների հիմք հանդիսացած գործոնների՝ COVID-19 համավարակի և Արցախյան պատերազմի տնտեսական և հարկաբյուջետային հետևանքները ոչ ամբողջությամբ էին հաղթահարված, 2021 թվականի համար ևս սահմանվել էր այդ կարգավորումների պահպանում և բնականոն իրավիճակներում գործող կանոններին համապատասխանության անցում 2022 թվականից։ Արդյունքում բյուջեի պակասուրդը շարունակել է գերազանցել կապիտալ ծախսերին, իսկ ընթացիկ առաջնային ծախսերի աճը գերազանցել է նախորդ 7 տարիների անվանական ՀՆԱ-ի աճի միջին տեմպը։ Այնուամենայնիվ, շեղումների չափը երկու դեպքում էլ որոշակիորեն կրճատվել է՝ հատկապես ընթացիկ ծախսերի համապատասխանության գծով՝ ՀՆԱ 3.3%-ից նվազելով մինչև 2.4%։

Գծապարկեր 20. Հարկաբյուջետային կանոնները և դրանցից շեղումը 2020 թվականին²⁸




Հարկաբյուջետային դիրքը և ազդակը: 2021 թվականի ընթացքում, տնտեսության վերականգնումը չխաթարելու ու, միաժամանակ, պարտքի բերի նվազման գործընթացի սկիզբը դնելու նպատակով պետական բյուջեի պակասուրդը շարունակել է բարձր մնալ պատմական միջինից, սակայն նախորդ տարվա համեմատությամբ ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը զսպող ազդեցություն է ունեցել։ Մասնավորապես, ինչպես

²⁸ Աղյուրը՝ ՀՀ ֆե:

պետական բյուջեի պակասուրդ/*ՀՆԱ*, այնպես էլ առաջնային պակասուրդ/*ՀՆԱ* ցուցանիշները շարունակել են գերազանցել վերջին 10 տարիների միջին ցուցանիշը, սակայն դրանց տարբերության չափը 2020 թվականի համեմատությամբ նվազել է: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2021 թվականին նախորդ տարվա նկատմամբ ունեցել է 1.6 զսպող ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների (0.5), և՛ ծախսերի զսպող (1.2) ազդեցություններով:

Գծապատկեր 21. Հարկաբյուջետային դիրքը և ազդակը²⁹



²⁹ Աղյուրը՝ <<ՖՆ գնահատական

Հարկաբյուջետային ազդակի հաշվարկներում ծախսերի ազդակը գնահատելիս ներառվել են նաև հակաճգնաժամային միջոցառումների կազմում դնդեսության վարկավորման (վարկերի համաֆինանսավորման) գծով վերևում նկարագրված գումարները:

Հավելված: Տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի, արտահանման և ներմուծման ապրանքախմբերի հիմնական ցուցանիշների աղյուսակներ

Աղյուսակ 1: Տնտեսության ճյուղերի և ենթաճյուղերի թողարկման ծավալների ցուցանիշները, 2021թ.

	Արժեք (մլրդ դրամ)	Կշիռ (%)	Աճի ինդեքս	Նպաստում (տոկոսային կետ) ³⁰
Ամբողջ արդյունաբերություն, այդ թվում՝	2385.9	100.0	103.3	3.3
հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	587.9	24.6	99.2	-0.2
մշակող արդյունաբերություն	1495.8	62.7	103.4	2.2
էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավագործում	279.2	11.7	109.3	1.1
ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	23.0	1.0	107.1	0.1

	Արժեք (մլրդ դրամ)	Կշիռ (%)	Աճի ինդեքս	Նպաստում (տոկոսային կետ)
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	977.3	100.0	99.0	-1.0
այդ թվում՝				
բուսաբուծություն	469.4	48.0	96.9	-1.5
անասնաբուծություն	463.6	47.4	100.8	0.4
անտառային տնտեսություն	1.5	0.2	74.1	-0.1
ձկնորսություն	42.8	4.4	103.2	0.1

	Արժեք (մլրդ դրամ)	Կշիռ (%)	Աճի ինդեքս	Նպաստում (տոկոսային կետ)
Շինարարություն	470.1	100.0	107.4	7.4
այդ թվում՝				
պետական բյուջեի, այդ թվում՝ միջազգային վարկերի	142.0	30.2	98.9	-0.4
համայնքների միջոցների	69.5	14.8	91.7	-1.5
մարդասիրական օգնության միջոցների	22.4	4.8	154.4	1.9
կազմակերպությունների միջոցների, այդ թվում՝ օպարերկրյա ներդրողների	5.8	1.2	320.0	0.9
բնակչության միջոցների	203.9	43.4	108.1	3.6
միջազգային միջոցների	13.9	3.0	35.9	-5.8
բնակչության միջոցների	96.0	20.4	107.6	1.5

	Արժեք (մլրդ դրամ)	Կշիռ (%)	Աճի ինդեքս	Նպաստում (տոկոսային կետ)
Առևտուր	3391.0	100.0	107.5	7.5
այդ թվում՝				
մանրածախ առևտուր	1452.6	42.8	101.6	0.7

³⁰ Աղյուսակներում նպաստումները հաշվարկվել են նախորդ տարվա կշիռների հիման վրա:

մեծածախ առևտուր	1819.5	53.7	112.2	6.2
ավտոմեքենաների առևտուր	118.9	3.5	115.7	0.5

	Արժեք (մլրդ դրամ)	Կշիռ (%)	Աճի ինդեքս	Նպաստում (տոկոսային կետ)
Ծառայություններ	1879.3	100.0	107.8	7.8
այդ թվում՝				
կացության և հանրային սննդի կազմակերպում	182.1	9.7	160.9	3.9
մշակույթ, գվարնություններ և հանգիստ	234.2	12.5	68.5	-6.3
կրթություն	59.6	3.2	110.5	0.3
առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	130.7	7.0	145.1	2.4
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	76.6	4.1	125.9	0.9
տեղեկատվություն և կապ	326.8	17.4	112.2	2.1
տրանսպորտ	219.1	11.7	128.3	2.6
վարչարարական և օժանդակ գործունեություն	63.9	3.4	120.1	0.6
մասնագիտ., գիտական և տեխ. գործունեություն	94.4	5.0	119.9	0.9
ֆինանսական և ապահովագրական գործունեություն	470.7	25.0	101	0.3
սպասարկման այլ ծառայություններ	21.2	1.1	114.1	0.2

Այլուսակ 2. Արտահանման ապրանքային կառուցվածքը և նպաստումները 2021 թվականի արտահանման աճին

ԱՐՏԱՀԱՆՈՒՄ	Ծավալ (մլն ԱՄՆ դոլար)	Կշիռ (տոկոս)	Աճ (տոկոս)	Նպաստում (տոկոսային կետ)
ԸՆԴԱՄԵՆԸ	3022.4	100.00	19.1	19.1
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	107.1	3.5	36.8	1.1
Բուսական ծագման արտադրանք	186.6	6.2	37.0	2.0
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.1	0.0	7.4	0.0
Պատրաստի սննդի արտադրանք	624.0	20.6	10.8	2.4
Հանքահումքային արտադրանք	982.3	32.5	20.6	6.6
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	41.4	1.4	40.0	0.5
Պլաստմասսա և դրանցից իրեր, կառչուկ և ռետինե իրեր	19.7	0.7	26.7	0.2
Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	5.9	0.2	13.8	0.0
Փայտ և փայտյա իրեր	1.1	0.0	84.1	0.0
Թուղթ և թղթից իրեր	1.7	0.1	34.5	0.0
Մանածագործական իրեր	183.5	6.1	37.4	2.0
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	4.7	0.2	55.9	0.1
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	20.3	0.7	0.7	0.0
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	333.0	11.0	-9.8	-1.4
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	364.4	12.1	59.0	5.3
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	59.5	2.0	40.5	0.7
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	38.7	1.3	175.3	1.0

Սարբեր և ապարատներ	34.3	1.1	-44.4	-1.1
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	13.2	0.4	-29.6	-0.2
Արվեստի ստեղծագործություններ	1.0	0.0	70.3	0.0

Աղյուսակ 3. Ներմուծման ապրանքային կառուցվածքը և նպաստումները 2021 թվականի ներմուծման աճին

ՆԵՐՄՈՒԾՈՒՄ	Ծավալ (մլն ԱՄՆ դոլար)	Կշիռ (տոկոս)	Աճ (տոկոս)	Նպաստում (տոկոսային կետ)
ԸՆԴԱՄԵՆԸ	5356.8	100.0	16.9	16.9
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	166.9	3.1	26.9	0.8
Բուսական ծագման արտադրանք	289.3	5.4	13.1	0.7
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	72.4	1.4	37.6	0.4
Պատրաստի սննդի արտադրանք	434.3	8.1	9.2	0.8
Հանքահումքային արտադրանք	937.1	17.5	25.5	4.2
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	455.0	8.5	9.0	0.8
Պլաստմասսա և դրանցից իրեր, կառչուկ և ռետինե իրեր	234.3	4.4	19.1	0.8
Կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	24.2	0.5	57.7	0.2
Փայտ և փայտյա իրեր	72.2	1.3	34.6	0.4
Թուղթ և թղթից իրեր	87.4	1.6	0.1	0.0
Մանածագործական իրեր	301.5	5.6	23.0	1.2
Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	59.8	1.1	32.4	0.3
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից	109.3	2.0	16.8	0.3
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	248.5	4.6	72.9	2.3
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	390.8	7.3	8.3	0.7
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	898.2	16.8	2.3	0.4
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	306.5	5.7	54.4	2.4
Սարբեր և ապարատներ	123.4	2.3	9.3	0.2
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	145.3	2.7	-3.2	-0.1
Արվեստի ստեղծագործություններ	0.3	0.0	-12.8	0.0

Աղյուսակ 4. Ներմուծումն ըստ ապրանքների լայն տնտեսական՝ BEC դասակարգչի և նպաստումները, 2021 թվական

	Կշիռ (տոկոս)		Աճ (տոկոս)		Նպաստում (տոկոսային կետ)	
	2020	2021	2020	2021	2020	2021
Ընդամենը	100	100	-17.2	16.9	-17.2	16.9
Վերջնական սպառման ապրանքներ	27.2	27.6	-11.2	18.5	-2.8	5.0
Միջանկյալ սպառման ապրանքներ	53.9	54.6	-8.3	18.5	-4.0	9.9
Կապիտալ ապրանքներ	17.5	15.4	-9.4	3.4	-1.5	0.6
Ավտոմեքենա մարդատար	1.5	2.4	-87.9	90.0	-8.9	1.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ


Հայաստանի Հանրապետության 2021 թվականի բյուջեի մասին օրենքով (այսուհետ՝ Օրենք), ելնելով մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսվող զարգացումներից, ինչպես նաև օրենսդրության փոփոխություններից և վարչարարական միջոցառումներից ակնկալվող մուտքերից, ծրագրվել էր ստանալ շուրջ 1,509.5 մլրդ դրամ եկամուտներ, որից 1,485.2 մլրդ դրամը՝ ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 24.3 մլրդ դրամը՝ արտաքին պաշտոնական դրամաշնորհների տեսքով։ Հարկ է նշել, որ Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներից ելնելով՝ պետության դրամական միջոցների համախմբված հաշվառման նպատակով պետական բյուջեի ցուցանիշներում ներառվել են նաև դրոշմանիշային վճարների գումարները (27.9 մլրդ դրամ) և առանց սահմանափակման պետական բյուջեից կատարվող վճարումներն ու դրանց արդյունքում ձևավորված եկամուտները (ավելի քան 1.1 մլրդ դրամ)։ Բացի այդ, կառավարությունը, ի լրումն եկամուտների ցուցանիշների վերոնշյալ փոփոխությունների, իր լիազորությունների շրջանակում ևս 151.7 մլրդ դրամով վերանայել է պետական բյուջեի եկամուտների ցուցանիշը, որից 114.4 մլրդ դրամի չափով ծրագիրն ավելացվել է հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով, 41.9 մլրդ դրամի չափով՝ այլ եկամուտների գծով, իսկ պաշտոնական դրամաշնորհների գծով ծրագիրը նվազեցվել է 4.6 մլրդ դրամով։ Արդյունքում կառավարության լիազորությունների շրջանակներում ՀՀ պետական բյուջեի եկամուտների ծրագիրն ընդհանուր առմամբ ավելացվել է 180.7 մլրդ դրամով (12%-ով)՝ կազմելով 1,690.2 մլրդ դրամ։ Նշված գումարից 1,670.6 մլրդ դրամը կազմել է ներքին աղբյուրներից ստացվող եկամուտների, 19.6 մլրդ դրամը՝ պաշտոնական դրամաշնորհների ծրագիրը։

2021 թվականին պետական բյուջեի փաստացի եկամուտները կազմել են 1,683.8 մլրդ դրամ՝ ապահովելով կառավարության կողմից ճշտված ծրագրի 99.6% կատարողական։ Նշված գումարից 1,671.5 մլրդ դրամը կազմել են ներքին աղբյուրներից ստացված եկամուտները՝ ապահովելով ծրագրի 100.1%-ը, 12.4 մլրդ դրամը ստացվել է պաշտոնական դրամաշնորհների տեսքով, որոնք 36.9%-ով զիջել են ծրագրված ցուցանիշը։ 2020 թվականի համեմատ պետական բյուջեի եկամուտներն աճել են 7.9%-ով կամ 123.2 մլրդ դրամով, որը պայմանավորված է հարկային եկամուտների և պետական տուրքերի աճով։

Այլուակ 1. ՀՀ պետական բյուջեի եկամուտները (մլրդ դրամ)


	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ. նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
Պետական բյուջեի եկամուտներ	1,560.7	1,690.2	1,683.8	99.6%	107.9%	123.2
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1,385.2	1,583.6	1,586.9	100.2%	114.6%	201.7
Պաշտոնական դրամաշնորհներ	53.2	19.6	12.4	63.1%	23.3%	(40.8)
Այլ եկամուտներ	122.2	87.0	84.6	97.2%	69.2%	(37.7)

Գծապատկեր 22. ՀՀ պետական բյուջեի փաստացի եկամուտները 2019-2021թթ.



Հարկային եկամուտների և պետական տուրքերի աճի, ինչպես նաև պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների նվազման արդյունքում 2020 թվականի համեմատ 2021 թվականի պետական բյուջեի եկամուտներում 5.5 տոկոսային կետով ավելացել է հարկային եկամուտների և պետական տուրքերի տեսակարար կշիռը, իսկ պաշտոնական դրամաշնորհների և այլ եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 2.7 և 2.8 տոկոսային կետով:

Գծապատկեր 23.ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2020-2021թթ.



2021 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 24.1%՝ կանխատեսված 23.6%-ի և նախորդ տարվա 25.2%-ի դիմաց:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր

Կառավարության սկզբնական ծրագրով 2021 թվականի համար սահմանվել էր 1,440.1 մլրդ դրամ հարկերի ու տուրքերի ստացում: Կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունների արդյունքում 2021 թվականի ճշտված ծրագիրը կազմել է 1,583.6 մլրդ դրամ, որի դիմաց ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 1,587.0 մլրդ դրամ հարկային եկամուտներ և պետական տուրքեր, որոնք 100.2%-ով ապահովել են ճշտված ծրագրով սահմանված ցուցանիշը:

2020 թվականի համեմատ հարկային եկամուտներն ու պետական տուրքերն աճել են 14.6%-ով կամ 201.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ԱԱՀ-ի, պետական տուրքի, դրոշմանիշային վճարների, սոցիալական վճարի, ինչպես նաև մաքսատուրքի գծով մուտքերի աճով: 2020 թվականի համեմատ գրեթե բոլոր հարկատեսակների գծով արձանագրվել է մուտքերի աճ, բացառությամբ ակցիցային հարկի: Հարկ է նշել, որ 2021 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա զգալի դրական ազդեցություն է ունեցել տնտեսական ակտիվության, ներմուծման և արտահանման աճը, հարկունակ ոլորտների իրացման շրջանառությունների, աշխատատեղերի ու միջին աշխատավարձի ավելացումը: Միաժամանակ, 2021 թվականի պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել ԱԱՀ-ի, եկամտային հարկի և ակցիզային հարկի գծով վերադարձված գումարների աճը, որոնք կազմել են 180.2 մլրդ դրամ՝ 30.1%-ով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը: Մասնավորապես, ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարները 2021 թվականին կազմել են 146.7 մլրդ դրամ՝ 22.2%-ով կամ 26.6 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան

ցուցանիշը: Նշված գումարից 146.2 մլրդ դրամը կազմել են ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարները, որոնք 21.9%-ով կամ 26.3 մլրդ դրամով գերազանցել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը, 522.5 մլն դրամ է կազմել Tax free հաշիվներով ԱԱՀ-ի վերադարձված գումարը՝ 2.6 անգամ կամ 318.6 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Ինչպես նշվեց, հաշվետու տարվա պետական բյուջեի հարկային եկամուտների ցուցանիշի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել նաև եկամտային հարկի գծով վերադարձված գումարների աճը: Եկամտային հարկի գծով վերադարձված գումարները 2021 թվականին կազմել են 32.6 մլրդ դրամ՝ 83.8%-ով կամ 14.9 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին է վերադարձվել 22.7 մլրդ դրամ եկամտային հարկ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 70.4%-ով կամ 9.4 մլրդ դրամով: Շահաբաժիններից վճարված՝ պետական բյուջեից փոխհատուցվող եկամտային հարկի գումարը կազմել է 9.6 մլրդ դրամ, որը 2.2 անգամ կամ 5.2 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը, իսկ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով եկամտային հարկի վերադարձված գումարը կազմել է 270.4 մլն դրամ: Նշենք, որ շահաբաժինների փոխհատուցման նպատակով եկամտային հարկի գումարների վերադարձման համակարգը ներդրվել է 2020 թվականի մարտի 1-ից, իսկ վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ ուսման վարձավճարի փոխհատուցման մասով՝ 2020 թվականի ապրիլի 3-ից:

Ակցիզային հարկի գծով վերադարձված գումարները 2021 թվականին կազմել են 915.8 մլն դրամ՝ 35.1%-ով կամ 237.9 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը:

Հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականին կազմել է 22.7%, որը 0.2 տոկոսային կետով գերազանցել է կանխատեսված ցուցանիշը և 0.3 տոկոսային կետով՝ 2020 թվականի փաստացի ցուցանիշը:

2021 թվականին պետական բյուջե մուտքագրված առանձին հարկատեսակների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Այլուակ 2. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական գուրքերի փաստացի ցուցանիշները (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. փաստ	2021թ. 2020թ. նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերու- թյունը
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	1 385.2	1 586.9	114.6%	201.7
1. Հարկային եկամուտներ	1 351.8	1 520.0	112.4%	168.2
ԱԱՀ	471.6	556.0	117.9%	84.4
Ակցիզային հարկ	123.6	113.1	91.6%	(10.4)
Շահութահարկ	148.8	158.6	106.6%	9.8
Մաքսատուրք	68.3	84.8	124.3%	16.6
Եկամտային հարկ	411.5	426.3	103.6%	14.8
Շրջանառության հարկ	26.6	32.4	121.9%	5.8
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակի գծով)	24.8	43.0	173.5%	18.2
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	53.1	62.7	118.2%	9.6
Այլ հարկեր	24.0	47.2	196.5%	23.2
Հարկերի անցումային գերավճարից մարված հարկային պարտավորություններ	(0.4)	(4.1)	1106.0%	(3.8)
2. Պետական տուրք	33.5	66.9	200.0%	33.5
Կշիռն ընդամենը հարկերի և տուրքերի մեջ				
1. Հարկային եկամուտներ	97.6%	95.8%		
ԱԱՀ	34.0%	35.0%		
Ակցիզային հարկ	8.9%	7.1%		
Շահութահարկ	10.7%	10.0%		
Մաքսատուրք	4.9%	5.3%		
Եկամտային հարկ	29.7%	26.9%		
Շրջանառության հարկ	1.9%	2.0%		
Սոցիալական վճար (կուտակային կենսաթոշակից)	1.8%	2.7%		
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	3.8%	3.9%		
այլ հարկեր	1.7%	3.0%		
Հարկերի անցումային գերավճարից մարված հարկային պարտավորություններ	0.0%	-0.3%		
2. Պետական տուրք	2.4%	4.2%		

Հաշվետու ժամանակահատվածի հարկային եկամուտների և պետական տուրքերի 35%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին: Նախորդ տարվա համեմատ ԱԱՀ-ի մուտքերի աճը պայմանավորված է ինչպես ՀՀ ներմուծվող ապրանքներից, այնպես էլ ՀՀ-ում արտադրվող ապրանքների ու ծառայությունների շրջանառությունից ստացված մուտքերի աճով:

Աղյուսակ 3. ԱԱՀ-ի գծով ՀՀ պետական բյուջեի մուլտիպլ մուլտիպլ (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. փաստ	2021թ. 2020թ. նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերու- թյունը
Ավելացված արժեքի հարկ	471.6	556.0	117.9%	84.4
Ներմուծումներ, այդ թվում՝	283.8	336.7	118.6%	52.9
- ԵԱՏՄ երկուներից	107.3	137.4	128.1%	30.2
Ներքին շրջանառությունից	187.8	219.2	116.8%	31.5

2021 թվականի արդյունքներով արձանագրվել է ՀՆԱ-ի 6,982.8 մլրդ դրամ մակարդակ՝ կանխատեսված 6,395.3 մլրդ դրամի դիմաց: ՀՆԱ-ի կանխատեսված և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմում է 587.5 մլրդ դրամ: Վերջինս, այլ հավասար պայմաններում, համարժեք է 46.3 մլրդ դրամ ԱԱՀ-ի՝ հաշվի առնելով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի հիմքում դրված 22.5% հարկային եկամուտներ և պետական տուրքեր/ՀՆԱ հարաբերակցությունը և ԱԱՀ-ի փաստացի մուտքերի կշիռը (35%) հարկային եկամուտների և պետական տուրքերի մեջ ($587.5 \times 22.5\% \times 35\%$): ԱԱՀ-ի մուտքերի վրա դրական ազդեցություն է գործել տնտեսական գործունեության ոլորտներում ստեղծված ավելացված արժեքների և սպառման ծավալների աճը, ինչպես նաև ներմուծման աճը: ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա ազդող դրական գործոններից հարկ է նշել գնաճի գործոնը, որը պայմանավորված է վերջին տարիների համար աննախադեպ՝ սպառողական գների 7.2% և ներմուծման գների 10.9% աճով: Վերջինով պայմանավորված՝ ԱԱՀ-ի գծով մուտքերի աճը, ըստ գնահատականների, կազմում է շուրջ 14.8 մլրդ դրամ: Մյուս առանցքային ուղղությունը հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման հաշվին հարկային հսկողության և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հավաքագրված լրացուցիչ մուտքերի աճն է, որով էլ պայմանավորված՝ հնարավոր է եղել 2021 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում հարկ վճարողներին վերադարձնել շուրջ 26.6 մլրդ դրամով ավել ԱԱՀ, քան նախորդ տարի: Միաժամանակ, ԱԱՀ-ի գծով մուտքերի վրա բացասական ազդեցություն է ունեցել ԱԱՀ-ի գծով վերադարձված գումարների աճը, որոնք, ինչպես նշվել է, 2021 թվականին կազմել են 146.7 մլրդ դրամ՝ 22.2%-ով կամ 26.6 մլրդ դրամով գերազանցելով 2020 թվականի ցուցանիշը:

ԱԱՀ-ի գծով եկամուտների վերադարձը փաստացի մուտքերում ներառելու դեպքում ԱԱՀ-ի մուտքերի աճը կկազմի 18.8% կամ 111 մլրդ դրամ, որից 5.9 տոկոսային կետը (լրացուցիչ աճի 31.4%-ը կամ 34.8 մլրդ դրամը) բաժին է ընկել հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման հաշվին հարկային հսկողության և կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հավաքագրված լրացուցիչ մուտքերի աճին, 7.2 տոկոսային կետը (լրացուցիչ աճի 38.3%-ը կամ 42.5 մլրդ դրամը)¹ գնաճին, իսկ մնացած 5.7 տոկոսային կետը (լրացուցիչ աճի 30.3%-ը կամ 33.7 մլրդ դրամը)² տնտեսական աճին:

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ ԱԱՀ-ի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³¹:

2021 թվականին պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.1%-ն ապահովվել է *ակցիզային հարկի հաշվին*:

Աղյուսակ 4. Ակցիզային հարկի գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. փաստ	2021թ. 2020թ. նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերու- թյունը
Ակցիզային հարկ	123.6	113.1	91.6	(10.4)
Ներմուծվող ենթաակցիզային ապրանքներից, այդ թվում՝	61.2	56.2	91.9	(5.0)
- ԵԱՏՄ երկրներից	20.9	15.2	73.1	(5.6)
ՀՀ-ում արտադրվող ենթաակցիզային ապրանքներից	62.3	56.9	91.3	(5.4)

Նախորդ տարվա համեմատ ակցիզային հարկի մուտքերի անկումը պայմանավորված է ինչպես հանրապետությունում արտադրվող, այնպես էլ ներմուծվող ենթաակցիզային ապրանքների գծով մուտքերի նվազմամբ: Ակցիզային հարկի գծով մուտքերի անկումը բացատրվում է հիմնականում 2020 թվականի դեկտեմբերին ակցիզային հարկով հարկվող ապրանքների իրացման և ներմուծման ծավալների անկմամբ, որով էլ պայմանավորված՝ 2021 թվականի հունվարին վճարման ենթակա ակցիզային հարկի մուտքերն էականորեն նվազել են: Այսպես՝ 2021 թվականի հունվարին ակցիզային հարկի մուտքերը կազմել են 8.4 մլրդ դրամ՝ 2020 թվականի հունվարի 16.0 մլրդ դրամի դիմաց, այսինքն՝ միայն այս գործոնի հաշվին բացասական նպաստումը կազմում է 7.6 մլրդ դրամ, իսկ եթե բացառենք ակցիզային հարկի դրույքաչափերի բարձրացման ազդեցությունը, ապա միայն 2020 թվականի դեկտեմբերին ակցիզային հարկով հարկվող ապրանքների՝ ՀՀ-ում իրացման և ՀՀ ներմուծման ծավալների կրճատման հետևանքով 2021 թվականի հունվարին ակցիզային հարկի մուտքերը նվազել են շուրջ 9 մլրդ դրամով: Ստորև ներկայացվում են ակցիզային հարկով հարկվող այն ապրանքների արտադրության և ներմուծման ծավալների փոփոխությունները, որոնք էական ազդեցություն են ունեցել 2021 թվականի ակցիզային հարկի մուտքերի վրա: Այսպես, օղու արտադրության ծավալները կազմել են 4272.4 հազար լիտր՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով շուրջ 14%-ով կամ 697.4 հազար լիտրով, իսկ օղու ներմուծման ծավալները կրճատվել են 32.7%-ով կամ 2153.4 հազար լիտրով՝ կազմելով 4423.6 հազար լիտր: Ծխախոտի արտադրության ծավալները կազմել են 1,227.9 մլն տուփ՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 12.8%-ով կամ 180.7 մլն տուփով, իսկ ծխախոտի ներմուծման ծավալները

³¹ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ 21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

կրճատվել են 15.6%-ով կամ շուրջ 20.4 մլն տուփով՝ կազմելով 110.3 մլն տուփ: Բենզինի ներմուծման ծավալները կազմել են 226.4 հազար տոննա՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 2.9%-ով կամ 6.4 հազար տոննայով: Դիզելային վառելիքի ներմուծման ծավալները կազմել են 196.5 հազար տոննա՝ նախորդ տարվա նկատմամբ նվազելով 2.3%-ով կամ շուրջ 4.6 հազար տոննայով:

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ ակցիզային հարկի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³²:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 10%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 158.6 մլրդ դրամ և 6.6%-ով (9.8 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Շահութահարկի գծով պետական բյուջեի մուտքերի վրա իրենց ազդեցությունն են ունեցել ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի նվազումը և աղբյուրի մոտ պահվող ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման բազայի նվազումը: Մասնավորապես, 2021 թվականին ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների համախառն եկամուտները կազմել են 8,336.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.5%-ով կամ 41.9 մլրդ դրամով: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողների 2020 թվականի հարկվող շահույթը կազմել է 799.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 14%-ով կամ 130.7 մլրդ դրամով: Ռեզիդենտ շահութահարկ վճարողների՝ աղբյուրի մոտ պահվող 2021 թվականի եկամուտները կազմել են 255.1 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 0.5%-ով կամ 1.3 մլրդ դրամով, իսկ վճարված եկամուտներից պահված հարկերը կազմել են 17 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 6.2%-ով կամ 1 մլրդ դրամով:

Նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է նրանով, որ կորոնավիրուսի համավարակի հետևանքով 2020 թվականի 2-րդ եռամյակից հետո շահութահարկ վճարողներին տրվել է կանխավճարների կատարումը հետաձգելու արտոնություն, արդյունքում՝ նշված մուտքերի հիմնական մասը, որոնք պետք է վճարվեին 2020 թվականին, վճարվել են 2021 թվականին:

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ շահութահարկի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³²:

Հաշվետու ժամանակահատվածում 426.3 մլրդ դրամ են կազմել եկամդային հարկի մուտքերը՝ ապահովելով հարկային եկամուտների և պետական տուրքերի 26.9%-ը: Նախորդ տարվա համեմատ

³² [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ\21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

Եկամտային հարկի 3.6% (14.8 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է 2021 թվականին աշխատատեղերի և միջին աշխատավարձերի աճով: Մասնավորապես, 2021 թվականին գրանցված աշխատատեղերի թիվը նախորդ տարվա համեմատ աճել է 4.1%-ով, իսկ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.6%-ով: Նշված երկու գործոնների համադրմամբ, Եկամտային հարկի հարկման բազայի նպաստումը եղել է 12 տոկոս ($1.041 * 1.076 = 1.12$): Միաժամանակ, Եկամտային հարկի մուտքերի վրա բացասական ազդեցություն է ունեցել Եկամտային հարկի գծով վերադարձված գումարների աճը: 2021 թվականին Եկամտային հարկի գծով վերադարձված գումարները կազմել են 32.6 մլրդ դրամ՝ 83.8%-ով կամ 14.9 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ըստ որում, Եկամտային հարկի գծով վերադարձված գումարներում ներառված են բնակարան ձեռքբերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների մասով վարկառուներին և համավարկառուներին վերադարձված, շահաբաժններից վճարված պետական բյուջեից փոխհատուցվող, ինչպես նաև վարձու աշխատող հանդիսացող ֆիզիկական անձանց՝ ուսման վարձավճարի փոխհատուցման նպատակով գումարները: Բացասական նպաստման չափը կազմել է 3.4% ($14.9 / (426.3 + 14.9) * 100$): Եկամտային հարկի մուտքերի վրա նվազեցնող ազդեցություն է ունեցել նաև 2021 թվականի հունվարի 1-ից Եկամտային հարկի միասնական դրույքաչափի 1 տոկոսային կետով նվազում՝ 23% դրույքաչափից նվազելով 22% դրույքաչափի: Վերջինս, այլ հավասար պայմաններում, համարժեք է 4.3% ($1 / 23 * 100$) կամ շուրջ 15 մլրդ դրամ Եկամտային հարկի՝ հաշվի առնելով աշխատավարձի և դրան հավասարեցված Եկամուտներից հարվող Եկամուտների տեսակարար կշիռը (81.1%) Եկամտային հարկի մեջ ($426.3 * 81.1 \% * 4.3\%$):

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ Եկամտային հարկի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³³:

2021 թվականին պետական բյուջե մուտքագրված հարկային Եկամուտների ու պետական տուրքերի 5.3%-ն ապահովվել է մաքսակուրքերի հաշվին:

³³ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ\21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

Աղյուսակ 5. Մաքսավորութերի գծով ՀՀ պետական բյուջեի մուլտիպլը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. փաստ	2021թ. 2020թ. նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերու- թյունը
Մաքսատուրթեր	68.3	84.8	124.3	16.6
Երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքներից գանձվող մաքսատուրթեր	0.4	0.2	55.8	(0.2)
ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից փոխանցված մաքսատուրթեր	67.9	84.6	124.7	16.8

Նախորդ տարվա համեմատ ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից փոխանցված մաքսատուրթերի գծով մուլտիպլը աճը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակից հետո համաշխարհային տնտեսական ակտիվության աճով և, որպես հետևանք, ԵԱՏՄ տարածք ներմուծումների ծավալների և գների աճով: Միաժամանակ, երրորդ երկրներից ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքներից գանձվող մաքսատուրթի գծով մուլտիպլը 178.3 մլն դրամով կամ 44.2%-ով զիջել են նախորդ տարվա նույն ցուցանիշը, որը հիմնականում բացատրվում է ավտոմեքենաների ներմուծման ծավալների 40% նվազմամբ:

2021 թվականին ԵԱՏՄ անդամ երկրներից փոխանցված 84.6 մլրդ դրամ մաքսատուրթից շուրջ 1.3 մլրդ դրամը կազմել է հատուկ, հակագնագցման (հակադեմիկինգային) և փոխհատուցման տուրթը: 2021 թվականին ԵԱՏՄ երկրներից բաշխման արդյունքում ստացված և ԵԱՏՄ երկրների միջև ՀՀ կողմից բաշխվող մաքսատուրթերի տարբերությունը կազմել է շուրջ 9.8 մլրդ դրամ:

2014 թվականի մայիսի 29-ի «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 5-րդ հավելվածով հաստատված՝ «Ներմուծման մաքսատուրթերի (համարժեք այլ վճարների, հարկերի և տուրթերի) գումարները հաշվեգրելու և բաշխելու, դրանք որպես եկամուտ անդամ պետությունների բյուջեներ փոխանցելու կարգի վերաբերյալ» արձանագրության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ ՖՆ միասնական գանձապետական հաշվին հաշվեգրված ներմուծման մաքսատուրթի գումարներից ԵԱՏՄ պետությունների միջև բաշխվել է 73,997.5 մլն դրամ:

Աղյուսակ 6. ԵԱՏՄ մասին պայմանագրի Հավելված 5-ի շրջանակներում անդամ պետությունների միջև բաշխված ներկրման մաքսավորքերի և հապուկ, հակագնազգման (հակադեմիինգային) ու փոխհատուցման գուրքեր (մլն դրամ)³⁴

	Ներկրման մաքսատուրքեր	Հատուկ, հակագնազգման (հակադեմիինգային) և փոխհատուցման տուրքեր
Ընդամենը	73,997.5	855.6
Հայաստանի Հանրապետություն	902.8	10.4
Ռուսաստանի Դաշնություն	62,946.0	727.8
Բելառուսի Հանրապետություն	3,596.3	41.6
Ղազախստանի Հանրապետություն	5,146.5	59.5
Ղրղզստանի Հանրապետություն	1,406.0	16.3

Հարկ է նշել, որ 2021 թվականին մի շարք ապրանքատեսակների համար տեղի են ունեցել ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխություններ: Նշված փոփոխություններն, այլ հավասար պայմաններում, կարող են հանգեցնել ՀՀ պետական բյուջե հավաքագրվող մաքսատուրքերի գծով եկամուտների փոփոխության, որի չափը հնարավոր չէ գնահատել:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 2%-ն ապահովվել է շրջանառության հարկի հաշվին՝ կազմելով 32.4 մլրդ դրամ և 21.9%-ով (5.8 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ շրջանառության հարկի գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է տնտեսական ակտիվության աճով, հատկապես այն ոլորտներում, որտեղ գործում են շրջանառության հարկով հարկվող գործունեություն ծավալող հարկ վճարողները: Մասնավորապես, առևտուրի ծավալներն աճել են 7.5%-ով, արոյունաբերական արտադրանքի ծավալները՝ 3.3%-ով, իսկ ծառայությունների ծավալները՝ 7.8%-ով:

2021 թվականին պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 3.9%-ն ապահովվել է բնապահպանական հարկի և բնօգուագործման վճարի հաշվին:

³⁴ ԵԱՏՄ մասին պայմանագրի Հավելված 5-ի շրջանակներում ներկրման մաքսատուրքերի և հատուկ, հակագնազգման (հակադեմիինգային) ու փոխհատուցման տուրքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ տեղեկանքում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\16.Մաքսատուրք.doc](#):

Այլուակ 7. Բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. փաստ	2021թ. 2020թ. նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերու- թյունը
Բնապահպանական հարկեր և բնօգտագործման վճարներ	53.1	62.7	118.2	9.6
Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար ներմուծվող ապրանքներից գանձվող մարսատուրեր	3.7	4.5	124.4	0.9
Ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար	1.6	1.5	97.5	(0.0)
Այլ պետություններում գրանցված տրանսպորտային միջոցներից օդային ավազան վնասակար նյութեր արտանետելու համար	0.6	0.7	112.4	0.1
ՀՀ ներմուծվող շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար	3.5	3.3	96.5	(0.1)
Արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար վճարվող ռոյալի	43.7	52.6	120.2	8.8

Նախորդ տարվա համեմատ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է հանքարդյունաբերության և բաց հանքերի շահագործման ոլորտում 2020 թվականին 2019 թվականի համեմատ ավելացված արժեքների իրական աճով, որը կազմել է 8.4%: Հարկ է նշել, որ նշված ոլորտում գնաճն ավելի փոքր է եղել՝ կազմելով 1.2%, ինչը նշանակում է, որ ռոյալի գծով պետական բյուջեի մուտքերի աճը հիմնականում ապահովվել է ծավալների աճի հաշվին: Ընդ որում, հատկանշական է, որ Հոնդոնի մետաղների բորսայի տվյալներով 2020 թվականին 2019 թվականի համեմատ հիմնական մետաղների տարեկան միջին գներն էականորեն չեն փոխվել: Մասնավորապես ուկու գինը նվազել է ընդամենը 1%-ով, պղնձինը՝ 0.2%-ով, իսկ մոլիբդենի գինն աճել է ընդամենը 1.2%-ով:

Պինդ օգտակար հանածոների, բացառությամբ մետաղական օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար գանձվող բնօգտագործման վճարները գերազանցել են նախորդ տարվա նույն ժանանակահատվածի մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է արդյունահանման ծավալների աճով:

ՀՀ ներմուծվող (այդ թվում՝ ԵԱՏՄ անդամ պետություններից) շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող մուտքերի 3.5% (122.9 մլն դրամ) անկումը հիմնականում պայմանավորված է ֆիզիկական անձանց կողմից երրորդ երկրներից ներմուծված անձնական

օգտագործման ավտոմեքենաների ներմուծման ծավալների 40% կրճատումը: ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող մուտքերն աճել են 66.4%-ով՝ պայմանավորված ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծվող ապրանքների ծավալների աճով:

Նախորդ տարվա համեմատ 2.5% (39.6 մլն դրամ) նվազում է արձանագրվել նաև ավտոմեքենաներից, գյուղմեքենաներից և լողամիջոցներից վնասակար նյութեր արտանետելու համար գանձվող մուտքերի գծով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ ներմուծվող և ՀՀ-ում շահագործվող ավտոմեքենաների քանակի նվազմամբ:

Այն օրենսդրական փոփոխությունը, որը կարող էր ազդեցություն ունենալ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված է առանձին տեղեկանքով³⁵:

Հաշվետու ժամանակահատվածում կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների կողմից պետական բյուջե է փոխանցվել շուրջ 43 մլրդ դրամ *սոցիալական վճար՝ 73.5%-ով* գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Աճը հիմնականում պայմանավորված է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնք ներկայացված են առանձին տեղեկանքով³⁵:

2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել ընդհանուր առմամբ 47.2 մլրդ դրամ այլ հարկեր՝ կազմելով պետական բյուջեի հարկային եկամուտների և պետական տուրքերի 3%-ը և 96.5%-ով գերազանցելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Մասնավորապես՝ 30.7 մլրդ դրամ են կազմել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված դրոշմանիշային վճարները: Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերն աճել են 3.4 անգամ կամ 21.6 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է 2021 թվականի հունվարի 1-ից օրենքում կատարված փոփոխությունների համաձայն դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ, որոնք ներկայացված են առանձին տեղեկանքով³⁷:

Հաշվետու տարում 8 մլրդ դրամ են կազմել *ռադիոհաճախականության օգտագործման պարուղիր վճարները*՝ նախորդ տարվա համեմատ աճելով 2.1%-ով կամ 162.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է մեկ կազմակերպության կողմից 2021 թվականի 3-րդ եռամյակի ռադիոհաճախականության օգտագործման պարուղիր վճարի մի մասը 2022 թվականին վճարելու հանգամանքով:

³⁵ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ\21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

Հաշվետու տարում 3.8 մլրդ դրամ են կազմել ճանապարհային հարկի գծով մուտքերը, որոնք նախորդ տարվա համեմատ աճել են 33.4%-ով կամ 955.3 մլն դրամով՝ իհմնականում պայմանավորված կորոնավիրուսի համավարակից հետո համաշխարհային տնտեսական ակտիվության աճով, որի հետևանքով ավելացել են Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվող սուբյեկտների մուտքն ու ելքը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդ տեղադրելու դեպքերը:

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ ճանապարհային հարկի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³⁶:

2021 թվականի ընթացքում 2.5 մլրդ դրամ են կազմել հարկային օրենսդրության խախտման համար սահմանված դրույգանքները՝ 3.6%-ով կամ 95.5 մլն դրամով զիջելով նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Մուտքերի նվազման վրա ազդեցություն ունեցած օրենսդրական փոփոխությունները ներկայացված են առանձին տեղեկանքով³⁶:

Հաշվետու տարում ավելի քան 1.2 մլրդ դրամ է կազմել ԵՏՄ անդամ չհանդիսացող պետություններից ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար ՀՀ մաքսային մարմինների կողմից գանձվող միասնական մաքսային վճարը, որը 20.5%-ով կամ 211.4 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ իհմնականում պայմանավորված ՀՀ տարածք ներմուծվող փոստածրարների քանակի աճով:

Հաշվետու տարում 852.6 մլն դրամ է մուտքագրվել հանրային ծառայությունների կարգավորման պարբառիր վճարների գծով՝ 1.1%-ով կամ 9.7 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել 66.9 մլրդ դրամ պետական դրույգեր՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 96.3%-ը: Շեղումը իհմնականում պայմանավորված է օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների ու պետական գրանցման համար սահմանված պետական տուրքերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ պետական տուրքի գծով մուտքերի կրկնակի աճը իհմնականում պայմանավորված է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու ու օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի աճով:

³⁶ [4.ՏԵՂԵԿԱՆ ՔՆԵՐԸ 21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

Առանձին պետական տուրքերի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Պետական փուրքերի գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ. նկատմամբ (%)
Պետական տուրքեր	33.5	69.5	66.9	96.3	200.0
Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար	1.3	2.3	2.4	104.7	185.1
Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար	2.1	1.8	3.1	167.9	144.8
Պետական գրանցման համար	4.6	6.2	5.1	82.4	111.8
Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար	1.2	2.6	2.2	83.6	180.1
Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար	13.7	36.6	38.3	104.8	279.8
Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար	10.2	19.4	15.4	79.3	150.8
Այլ պետական տուրքեր ³⁷	0.4	0.6	0.5	77.8	126.5

Հաշվետու տարում պետական տուրքերի 57.3%-ը կազմել են լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արդունագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող փուրքերը: Վերջիններս տարեկան ծրագրային ցուցանիշը գերազանցել են՝ հիմնականում պայմանավորված «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով 2021 թվականի սեպտեմբերի 4-ից պետք է մոլիրդենի խտահանքեր արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար պետական տուրքի սահմանմամբ: Հիմնականում նշված հանգամանքով է պայմանավորված նաև նախորդ տարվա համեմատ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի գծով մուտքերի աճը: Պղնձի և

³⁷ Ներառված են Հայաստանի Հանրապետությունում ամուսնության բացակայության մասին տեղեկանք տալու (56.1 մլն դրամ), ՀՀ քաղաքացիություն ստանալու (88.7 մլն դրամ), Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տրամադրելու (885 հազար դրամ) և Գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների (310.7 մլն դրամ) համար ՀՀ պետական բյուջե վճարվող պետական տուրքերը:

մոլիբդենի խտահանքեր արտահանելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր տրամադրելու համար ստացված պետական տուրքի հաշվին ապահովվել է լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի 64.2%-ը, որոնց գծով պետական բյուջե է մուտքագրվել 24.6 մլրդ դրամ՝ 16.9%-ով գերազանցելով տարեկան ծրագրային ցուցանիշը։ Մուտքերի գերազանցումը պայմանավորված է պղնձի խտահանքի, մոլիբդենի խտահանքի, մոլիբդենի և դրանից պատրաստված արտադրատեսակների (բացառությամբ 810297000՝ թափոններ և ջարդոն՝ դեպի երրորդ երկրներ արտահանելու համար վերջիններիս կողմից կանխատեսվածից բարձր պահանջարկով։

Հաշվետու տարում վիճակախաղերի, շահումներով խաղերի բնագավառից գանձված տուրքերը կազմել են 5.7 մլրդ դրամ՝ 6.3%-ով կամ շուրջ 338 մլն դրամով գերազանցելով ծրագրված մուտքերը։ Մուտքերի գերազանցումը հիմնականում պայմանավորված է տրամադրված խաղատան կազմակերպման լիցենզիաների՝ նախատեսվածից ավել քանակով, ինչպես նաև թվով 5 լիցենզիաների վերաձևակերպման համար պետական տուրքի վճարմամբ։ Նախորդ տարվա համեմատ նշված մուտքերը նվազել են 12.2%-ով կամ 796.5 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ 2021 թվականին տուրքերը ստացվել են միայն Շաղկաձոր քաղաքում գործող խաղատների կազմակերպման գործունեությունից, մինչդեռ 2020 թվականի ընթացքում մուտքերը ստացվել էին ինչպես Շաղկաձոր քաղաքում (տարեկան պետական տուրքը կազմում է 180 մլն դրամ), այնպես էլ այլ վայրում (այլ վայրում խաղատների կազմակերպման գործունեության համար տարեկան պետական տուրքը կազմում է 5.5 մլրդ դրամ) գործող խաղատների կազմակերպման գործունեությունից։ Բացի այդ, 2020 թվականի ընթացքում կատարվել էին պետական տուրքի՝ սահմանված ժամկետներում չվճարման համար տույժերի վճարումներ։

Մաքսային բնագավառում լիցենզավորման գծով մուտքերը կազմել են 3.6 մլրդ դրամ՝ 57.4%-ով ապահովելով կանխատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների կողմից նախատեսվածից քիչ քանակով մաքսային ծևակերպումներով։ Նախորդ տարվա համեմատ մաքսային բնագավառի լիցենզավորման գծով մուտքերն աճել են 7.5%-ով կամ շուրջ 254.8 մլն դրամով, որը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակից հետո համաշխարհային տնտեսական ակտիվության աճով և, որպես հետևանք, ներմուծման ծավալների աճով։

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ,

արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար գանձվող տուրքերի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³⁸:

2021 թվականին պետական տուրքերի 23%-ը կազմել են օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող փուրքերը, որոնք զիջել են ծրագրված ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձված տուրքերի 72.2% կատարողականով: Հիմնականում նշված տուրքերի գծով մուտքերի աճով է պայմանավորված նախորդ տարվա համեմատ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձվող տուրքերի գծով մուտքերի աճը: Հաշվետու տարում ՀՀ-ից օդային տրանսպորտով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար մուտքերը կազմել են 9.7 մլրդ դրամ՝ 27.8%-ով (3.7 մլրդ դրամով) զիջելով կանխատեսված ցուցանիշը, որը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետևանքով չվերթների ոչ ամբողջական վերականգնման արդյունքում մեկնած ուղևորների՝ նախատեսվածից պակաս քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով մուտքերն աճել են 2.8 անգամ կամ 6.2 մլրդ դրամով՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեջմման հետևանքով մեկնած ուղևորների թվի աճով:

Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ գբաղվելու իրավունք ձեռք բերելու համար սահմանված պետական տուրքը կազմել է 3 մլրդ դրամ՝ 18.7%-ով (692.9 մլն դրամով) զիջելով կանխատեսված ցուցանիշը և 28.4%-ով (1.2 մլրդ դրամով)³⁹ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը: Մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է իրանական ցեմենտի 6 ամիս ժամկետով ներմուծման սահմանափակմամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին ցածր գներով ներմուծվող իրանական ցեմենտը կարող էր հանգեցնել Հայաստանի ցեմենտ արտադրող ընկերությունների գործունեության խաթարմանը՝ ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2019 թվականին տրվեցին օրենսդրական կարգավորումներ, որոնք նպատակ ունեին տեղական շուկայում ստեղծել հավասար պայմաններ ներմուծվող և տեղում արտադրվող ցեմենտի համար: Մասնավորապես՝ 2021 թվականի հունվարի սկզբին 6 ամիս ժամկետով սահմանափակվել է ցեմենտի ներմուծումը ՀՀ տարածք, իսկ «Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և գիսավոր լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 8-ի թիվ 1111-Ն որոշումն ուժի մեջ է մտել հունիսի 10-ից, այդ իսկ պատճառով 2021 թվականի առաջին կիսամյակում պետական տուրք չի գանձվել:

³⁸ 4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ\21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc

Օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված պետական տուրքի գումարներից շուրջ 1.5 մլրդ դրամը ստացվել է վարորդական իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար՝ 34.9%-ով (376.8 մլն դրամով) գերազանցելով կանխատեսված ցուցանիշը և 76.2%-ով (630.5 մլն դրամով՝ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը): Մուտքերի գերանզանցումը հիմնականում պայմանավորված է մեծ թվով ժամկետանց, ժամկետին մոտեցող, ինչպես նաև վնասված վարորդական վկայականների փոխանակմամբ:

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ունենալ օրենքով սահմանված այլ ծառայությունների և գործողությունների համար գանձված պետական տուրքի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով³⁹:

Պետական տուրքերի 7.6%-ը կազմել են պետական գրանցման համար գանձված տուրքերը, որոնք զիջել են ծրագրային ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքերի 38.3% (467.2 մլն դամ) կատարողականով: Միաժամանակ, պետական գրանցման գծով գանձված տուրքերը գերազանցել են նախորդ տարվա փաստացի մուտքերը, որը հիմնականում պայմանավորված է ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ և ժամանակավոր համարանիշի) հատկացնելու համար, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար գանձվող տուրքերի՝ 37% և գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու դիմաց համար գանձվող տուրքերի 27.8% աճով:

Հաշվետու տարվա ընթացքում պետական գրանցումներից մուտքերից 2 մլրդ դրամը կազմել են ավտոմոբիլի հաշվառման համարանիշ (բացառությամբ տարանցիկ և ժամանակավոր համարանիշի) հատկացնելու համար, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենայի գրանցման, պետական համարանիշ տալու, ինչպես նաև կորցրած պետական համարանիշը վերականգնելու դիմաց ստացված պետական տուրքերը, որոնք 15.7%-ով կամ 375.9 մլն դրամով զիջել են ծրագրային ցուցանիշը: Վերջինս հիմնականում պայմանավորված է գործադրների՝ նախատեսվածից պակաս քանակով: Նշված հանգամանքը պայմանավորված է կատարված օրենսդրական փոփոխությամբ, որի համաձայն պետությունների քաղաքացիներն իրենց անվամբ տրանսպորտային միջոց գրանցելու և/կամ հաշվառելու համար պետք է ներկայացնեն կացության կարգավիճակը հավաստող

³⁹ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ 21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

փաստաթուղթ: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով մուտքերն աճել են 37%-ով կամ 547.4 մլն դրամով՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեղմման հետևանքով գործարքների թվի աճով:

Շուրջ 1.3 մլրդ դրամ է ստացվել գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու դիմաց, որը 17.2%-ով (184.5 մլն դրամով) գերազանցել է ծրագրված մուտքերը և 27.8%-ով (274.3 մլն դրամով)⁴⁰ նախորդ տարվա փաստացի մուտքերը: Մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեղմման հետևանքով կատարված գործարքների թվի աճով:

Ավելի քան 1 մլրդ դրամ պետական տուրք է ստացվել ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) հաշվառման վկայագիր տալու համար, որը 14%-ով (167.8 մլն դրամով) զիջել է ծրագրված մուտքերը: Վերջինս հիմնականում պայմանավորված է գործարքների՝ նախատեսվածից պակաս քանակով: Նշված հանգամանքը պայմանավորված է կատարված օրենսդրական փոփոխությամբ, որի համաձայն պետությունների քաղաքացիներն իրենց անվամբ տրանսպորտային միջոց գրանցելու և/կամ հաշվառելու համար պետք է ներկայացնեն կացության կարգավիճակը հավաստող փաստաթուղթ: Նախորդ տարվա համեմատ նշված տուրքերի գծով մուտքերն աճել են 35.2%-ով կամ 268.5 մլն դրամով՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեղմման հետևանքով գործարքների թվի աճով:

Հաշվետու տարում լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձված տուրքերը կազմել են ավելի քան 467.2 մլն դրամ՝ 61.7%-ով (752.8 մլն դրամով) դրամով զիջելով կանխատեսված և 56.6%-ով (609.1 մլն դրամով)⁴⁰ նախորդ տարվա փաստացի ցուցանիշները: Մուտքերի նվազումը հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական գննության համապատասխան նմուշի փաստաթյալների տրամադրման քանակի նվազմամբ: Մուտքերի նվազման վրա ազդեցություն ունեցած օրենսդրական փոփոխությունները ներկայացված են առանձին տեղեկանքով⁴⁰:

Հաշվետու տարում 241.6 մլն դրամ են կազմել ՀՀ պետական ռեգիստրում պետական գրանցման համար գանձված տուրքերը, որոնք 14.8%-ով (31.2 մլն դրամով) գերազանցել են ծրագրված մուտքերը և 35%-ով (62.6 մլն դրամով)⁴⁰ նախորդ տարվա փաստացի ցուցանիշը, որը պայմանավորված է գործարքների թվի աճով:

⁴⁰ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ\21.Հարկային օրենսդրության փոփոխություններ.doc](#)

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ ունենալ պետական գրանցման համար գանձված տուրքի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով⁴¹:

Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների դիմաց պետական բյուջե վճարված տուրքերը գերազանցել են կանխատեսված ցուցանիշը՝ պայմանավորված արտարժույթի՝ բյուջեի հաշվարկների հիմքում դրված փոխարժեքի համեմատ ավելի բարձր փաստացի փոխարժեքով, ինչպես նաև այն հանգամանքով, որ տվյալ եկամտատեսակին, բացի ՀՀ դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից գանձված և փոխանցված գումարներից, փոխանցվում են նաև հրավերով մուտքի վիզայի վճարները։ Նախորդ տարվա համեմատ մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է մատուցված հյուպատոսական ծառայությունների ծավալի աճով, որը կազմել է 48%։

Ֆիզիկական անձանց դրվող իրավաբանական նշանակության փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձված տուրքերը գիշել են կանխատեսված ցուցանիշը, որը հիմնականում պայմանավորված է քաղաքացիների նախատեսվածից պակաս դիմելիությամբ։ 2020 թվականի համեմատ արձանագրված մուտքերի զգալի աճը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեղմման հետևանքով դիմած քաղաքացիների թվի աճով։

Հաշվետու տարում դադարան դրվող հայցադիմումների, դիմումների ու գանգապների, դադարանների վճիռների և որոշումների դեմ դրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դադարանի կողմից դրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) դալու համար պետական բյուջե վճարված 2.4 մլրդ դրամի տուրքերը գերազանցել են կանխատեսված և նախորդ տարվա փաստացի ցուցանիշները՝ հիմնականում պայմանավորված դատական գործերի քանակի աճով։ Նշված գումարից 181.5 մլն դրամը կազմել են պետական կառավարման մարմինների կողմից վճարված և պետական բյուջեից փոխհատուցված գումարները, որոնք 23.6%-ով կամ 56.1 մլն դրամով գիշել են նախորդ տարվա ցուցանիշը։

Այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ ունենալ դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ տրվող վճռաբեկ բողոքների, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար գանձված տուրքի գծով 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի վրա, ներկայացված են առանձին տեղեկանքով⁴¹։

⁴¹ 4.SԵՂԵԿԱՆՔՆԵՐՎ21Հարկային_օրենսդրության_փոփոխություններ.doc

Պաշտոնական դրամաշնորհներ⁴²

2021 թվականին արտաքին աղբյուրներից տրամադրվել են 12.4 մլրդ դրամ պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով տարեկան ճշտված ծրագրի 63.1%-ը, այսինքն՝ կանխատեսվածից պակաս է ստացվել 7.2 մլրդ դրամ:


Աղյուսակ 9. Պաշտոնական դրամաշնորհներ (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. տարեկան ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ. նկատմամբ (%)
Պաշտոնական դրամաշնորհներ	53.2	19.6	12.4	63.1%	23.3%
Նպատակային դրամաշնորհներ	5.9	12.2	9.6	78.7%	162.0%
Ոչ նպատակային դրամաշնորհներ	47.3	7.5	2.8	37.8%	5.9%

Նպատակային դրամաշնորհների կատարողականի ցուցանիշը պայմանավորված է ծրագրերի կատարման ցածր աստիճանով: Մասնավորապես՝ նպատակային դրամաշնորհների 2 ծրագրերի շրջանակներում նախատեսված 1.2 մլրդ դրամ դրամաշնորհների գծով մուտքեր չեն ստացվել, իսկ 13 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են նախատեսված ոչ ամբողջ ծավալով՝ կազմելով 2.6 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 39.7%-ը: Միևնույն ժամանակ, 2 ծրագրերի շրջանակներում նախատեսված 369.7 մլն դրամը ստացվել է ամբողջությամբ, իսկ 5 ծրագրերի շրջանակներում ստացվել են նախատեսվածից ավել դրամաշնորհներ՝ ընդհանուր առմամբ կազմելով 6.6 մլրդ դրամ և 63.4%-ով (2.5 մլրդ դրամով) գերազանցելով տարեկան ծրագրված մուտքերը:

⁴² Պետական բյուջե մուտքագրված դրամաշնորհների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ տեղեկանքում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\10.Դրամաշնորհային մուտքեր.xls](#):

Գծապատկեր 24. Նպատակային դրամաշնորհներին ըստ դոնորների (մլն դրամ)



Ոչ նպատակային դրամաշնորհների ցածր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է ԵՄ բյուջետային աջակցության շրջանակներում նախատեսված դրամաշնորհների կատարողականով, որը կազմել է 1.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 19.2%-ը: Հայկական կողմը 2021 թվականի ապրիլին Եվրոպական կողմին է ներկայացրել նախատեսված 5 ծրագրերի ֆինանսավորման համաձայնագրերի նախապայմանների իրականացման վերաբերյալ ինքնագնահատման գեկուցները: ԵՄ կողմից 4 ծրագրերի շրջանակներում ֆինանսավորումը հատկացվել է 2021 թվականին, իսկ 1 ծրագրի գծով հատկացումն ակնկալվում է 2022 թվականին:

Մասնավորապես՝ ԵՄ կողմից 549.4 մլն դրամ (նախատեսվածի 47.8%-ը) տրամադրվել է «Աջակցություն Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանը» ֆինանսավորման համաձայնագրի թիվ 1 լրացում» ծրագրի շրջանակներում, որի նպատակն է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն աջակցելն ազատ ընտրությունների իրավունքի, խոշտանգումների կանխարգելման, խտրականության դեմ (այդ թվում՝ փոքրամասնությունների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների և այլ խոցելի խմբերի նկատմամբ) պայքարի, կանանց և տղամարդկանց իրավահավասարության ու երեխաների պաշտպանության բնագավառներում համապատասխան օրենսդրության ներդրման և իրականացման միջոցով,

ինչպես նաև մարդու իրավունքների բնագավառում համակարգման ու համագործակցության բարելավմանը և համապատասխան շահագրգիռ կողմերի կարողությունների ընդլայնմանը: Կատարողականը հիմնականում պայմանավորված է «Առաջընթաց խոշտանգումների կանխարգելման հարցում» (հարցաքննությունների ձայնագրություն, 10 պիլոտային ոստիկանական բաժանմունք) և «Գենդերային հավասարության արդյունավետ մեխանիզմներ/պետության կողմից ֆինանսավորվող աջակցության կենտրոններ» նախապայման/թիրախների մասնակի կատարմամբ:

233.5 մլն դրամ (նախատեսվածի 95.6%-ը) է ստացվել «Որակավորումների բարելավում՝ ավելի լավ աշխատատեղերի համար» ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված գործողության ընդհանուր նպատակն է՝ բարձրացնել աշխատաշուկայի արդյունավետությունը և նպաստել ՄԿՈՒ շրջանավարտների զբաղունակությանը՝ Հայաստանում, բարելավել աշխատաշուկայի միջնորդությունը և խորհրդատվական ծառայությունները՝ թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց համար ավելի լավ մուտք դեպի զբաղվածության դաշտ ապահովելու համար, ինչպես նաև շրջանավարտների զբաղվածության հեռանկարները փորձնական ոլորտում (ՄԿՈՒ գյուղատնտեսական հաստատություններ):

137.3 մլն դրամ (նախատեսվածի 95.6%-ը) է ստացվել Պետական ֆինանսների քաղաքանության բարեփոխումների ծրագրի շրջանակներում, որի նպատակն է՝ օժանդակել Հայաստանում հարկաբյուջետային կառավարման թափանցիկությանն ու հաշվետվողականությանը, բարձրացնել Հայաստանի պետական ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետությունը, էֆեկտիվությունն ու թափանցիկությունը՝ միջազգային գործելակերպին ու չափանիշներին համապատասխան:

135 մլն դրամ (նախատեսվածի 95.9%-ը) է ստացվել «Աջակցություն Հայաստանում հանրային կառավարման բարեփոխումներին. Ծառայությունների մատուցման բարելավում՝ ավելի արդյունավետ և պատասխանատու հանրային կառավարման միջոցով» ծրագրի շրջանակներում, որի ֆինանսավորման համաձայնագրով նախատեսված գործողության ընդհանուր նպատակն է՝ բարձրացնել Հայաստանի կենտրոնական հանրային կառավարման թափանցիկությունը, հաշվետվողականությունը և արդյունավետությունը՝ ենելով քաղաքացիների և գործարարության կարիքներից:

Վերջին 3 ծրագրերի գծով շեղումները պայմանավորված են ծրագրայինի համեմատ փաստացի ցածր փոխարժեքով:


2021 թվականի նոյեմբերի վերջին Հայաստանը պաշտոնապես նամակ է ստացել Եվրոպական կողմից վերոնշյալ 4 բյուջետային աջակցության ֆինանսավորման համաձայնագրերի իրականացման ընթացքի ավարտի վերաբերյալ:

Հաշվետու տարում չեն ստացվել Հայաստանում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման նպատակով Հայաստանի կառավարությանը ԵՄ կողմից բյուջետային աջակցության համաձայնագրով նախատեսված 3.8 մլրդ դրամի (6 մլն եվրո) միջոցները: 2021 թվականի դեկտեմբերին Հայաստանը պաշտոնապես դիմել է Եվրոպական կողմին, ներկայացնելով ինքնազնահատման գեկույց «COVID-19 համավարակի դիմակայման Հայաստանի պայմանագիր» ծրագրի ֆինանսավորման համաձայնագրի հատուկ նախապայմանների կատարմամբ նախատեսված մասհանման հատկացման համար: Նշված համաձայնագրով նախատեսված 30 մլն եվրոյից 24 մլն եվրոն հատկացվել էր 2020 թվականին, իսկ 6 մլն եվրոն ակնկալվում է ստանալ 2022 թվականին:

2021 թվականի ընթացքում Պետականաշինության և խաղաղաշինության հիմնադրամի (ՊԽՀ) TF0B5651 դրամաշնորհային համաձայնագրով՝ «Հայաստան՝ աջակցություն հակամարտությունից տուժած ընտանիքներին» դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՀԲ-ի կողմից տրամադրվել է 1.6 մլրդ դրամ (նախատեսվածի 89.5%-ը): Ծրագրի նպատակն է հանդիսացել բարձրացնել հակամարտությունից տուժած ընտանիքների դիմադրողականությունը և նվազեցնել հյուրընկալող ընտանիքների ֆինանսական բեռոք՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանաց և խոցելի բնակչությանը:

«Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացվող ընթացիկ տրանսֆեր Արցախի հանրապետությունից տեղահանված և ՀՀ տարածքում բնակվող ընտանիքներին» ծրագրի շրջանակներում 2021 թվականին ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի կողմից հատկացվել է 125 մլն դրամ:

Գծապատկեր 25. Ոչ նպատակային դրամաշնորհներն ըստ դոնորների (մլն դրամ)



Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված պաշտոնական դրամաշնորհները 76.7%-ով կամ 40.8 մլրդ դրամով զիջել են նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է բյուջետային աջակցության նպատակով ստացվող դրամաշնորհների նվազմամբ: Նշենք, որ 2020 թվականին, պայմանավորված կորոնավիրուսային համավարակով, ԵՄ կողմի համաձայնությամբ 4 բյուջետային աջակցության ֆինանսվորման համաձայնագրերում տեղի էին ունեցել դրանցով ամրագրված նախապայմանների չեղարկման, վերախմբագրման և իրականացման ժամկետների փոփոխություններ, և գումարներն ամբողջությամբ տրամադրվել էին:

Այլ եկամուտներ

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են շուրջ 84.6 մլրդ դրամ՝ 97.2%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ այլ եկամուտների գծով արձանագրվել է 30.8% (37.7 մլրդ դրամով) նվազում, որը հիմնականում պայմանավորված է այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտների նվազմամբ:

Այլ եկամուտների առանձին բաղադրիչների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Այուսակ 10-ում:

Այլուակ 10. Այլ եկամուգների գծով ՀՀ պետական բյուջեի մուտքերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ. նկատմամբ (%)
Այլ եկամուտներ	122.2	87.0	84.6	97.2%	69.2%
2020 թվականին ՀՀ կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքեր	1.3	-	-	-	0.0%
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	0.4	1.1	1.2	109.3%	303.1%
Տոկոսավճարներ և շահաբաժններ, այդ թվում՝	20.7	30.1	30.3	100.5%	146.4%
- բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և ռեարդիտներից ստացվող տոկոսավճարներ	17.1	29.0	29.5	101.7%	172.3%
- իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժններ	3.6	1.1	0.8	69.6%	22.1%
Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց վճարներ (տոկոսներ), այդ թվում՝	14.6	14.2	11.6	82.1%	79.9%
- ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ	14.5	14.1	11.6	82.0%	79.9%
- ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարներ	0.1	0.1	0.1	102.3%	79.3%
Այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերներ	54.5	0.7	0.7	107.0%	1.3%
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	11.5	15.9	16.4	103.2%	141.8%
Ապահնքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ	16.4	21.3	21.3	100.0%	130.0%
Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	2.9	3.8	3.1	82.2%	106.4%

2021 թվականին ՀՀ կադաստրի կոմիտեի նախորդ տարվա ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքեր չեն ստացվել՝ համապատասխան արտաբյուջետային հաշիվը փակելու հետ կապված: 2020 թվականից ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծառայությունների մատուցման դիմաց ստացվող եկամուտները մուտքագրվում են պետական բյուջե: Նշենք, որ 2020 թվականի հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կադաստրի կոմիտեի 2019 թվականի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից պետական բյուջե էր փոխանցվել ավելի քան 1.3 մլրդ դրամ:

Բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված մուտքերի տարեկան ծրագրված ցուցանիշի 1.7%-ով գերակատարմանը նպաստել է տարվա համար ծրագրված տոկոսադրույթի (5.1%) համեմատ ավանդի ներդրման փաստացի տոկոսադրույթի 1.59 տոկոսային կետով գերազանցումը: Ավանդի ներդրման տոկոսադրույթը 1.63 տոկոսային կետով գերազանցել է նաև 2020 թվականի մեծությունը՝ կազմելով 6.69%: Բացի նշված գործոնից, նախորդ տարվա ցուցանիշի համեմատ մուտքերի 72.3% աճը պայմանավորված է նաև 2021 թվականի ընթացքում տեղաբաշխված եվրապարտումներով, որոնցից ստացված միջոցները նույնական ավանդադրվել են, ինչպես նաև գանձապետական միասնական հաշվի միջին օրական մնացորդը ցածր մակարդակում պահելու մոտեցմամբ, որը 2021 թվականին կազմել է 11.1 օր՝ նախորդ տարվա 16.4-ի դիմաց: 2021 թվականի ընթացքում <<ԿԲ և <<ՖՆ միջև կնքվել է թվով 198 ավանդային պայմանագիր՝ 1,795 մլրդ դրամ ընդհանուր գումարով (նախորդ տարի կնքվել էր 177 ավանդային պայմանագիր՝ 1,424 մլրդ դրամ ընդհանուր գումարով)⁴³: Հաշվետու տարում ներդրված ավանդների միջին մեծությունը կազմել է 9,538 մլրդ դրամ, որն ավելի քան 1.1 մլրդ դրամով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու ժամանակահատվածում ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից ստացված մուտքերի՝ նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ 30% աճը հիմնականում ապահովվել է << ոստիկանության կողմից մատուցված ճանապարհային ծառայություններից ստացված մուտքերի հաշվին, << արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության մուտքերի հաշվին՝ պայմանավորված կատարողական վարույթների քանակի աճով, և << կադաստրի կոմիտեի ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների դիմաց ստացված մուտքերի հաշվին՝ պայմանավորված գործարքների և արագացված գործակցով կատարված գործարքների թվի աճով:

2021 թվականի ընթացքում իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից ստացված մուտքերի՝ տարեկան ծրագրված ցուցանիշի 3.2%-ով գերազանցումը հիմնականում պայմանավորված է << հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների կառուցման (Վերակառուցման) ժամանակահատվածներում նշված լիցենզիաների պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում ֆինանսական երաշխիքներից մուտքերով, որոնք կազմել են 183.5 մլն դրամ՝ 4.6 անգամ գերազանցելով ծրագրված ցուցանիշը, ինչպես նաև <<ԿԲ կողմից կիրառված պատժամիջոցներից ստացված մուտքերով, որոնք կազմել են 169.7 մլն դրամ՝ 5.7 անգամ գերազանցելով ծրագրված ցուցանիշը: Նախորդ տարվա համեմատ իրավախախտումների

⁴³ Տարվա ընթացքում վաղաժամկետ մարվել է թվով 8 ավանդ՝ 64 մլրդ դրամ ընդհանուր ծավալով:

համար կիրառված պատժամիջոցներից մուտքերի 41.8% աճը հիմնականում պայմանավորված է տեսանկարահանող սարքերի միջոցով արձանագրված խախտումների համար ՀՀ ոստիկանության կողմից կիրառված պատժամիջոցներից գանձված գումարների աճով, որոնք կազմել են 10.7 մլրդ դրամ՝ 53.1%-ով կամ շուրջ 4 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության դիմաց պետական բյուջե ստացված մուտքերի տարեկան ծրագրված ցուցանիշի 9.3%-ով գերազանցումը հիմնականում պայմանավորված է գործող վարձակալական պայմանագրերի քանակի աճով: Իսկ 2020 թվականի համեմատ պետական գույքի վարձակալությունից մուտքերի 3 անգամ աճը հիմնականում պայմանավորված է «Վեոլիա Զուր» ՓԲԸ կողմից վարձակալական վճարի ժամանակացուցի համաձայն ՀՀ պետական բյուջե փոխանցված վարձակալական վճարների աճով, որոնք կազմել են 731 մլն դրամ՝ նախորդ տարվա 6.1 մլն դրամի դիմաց:

Դրավարանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից 2021 թվականի ընթացքում ստացված շահութաբաժիններից մուտքերը նախորդ տարվա համեմատ նվազել են 77.9%-ով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ՏԿԵՆ քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կառավարման ներքո գտնվող ընկերությունների կողմից վճարված շահաբաժինների նվազմամբ: Վերջինս կապված է 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի և ռազմական դրության հետ, որոնց պայմաններում «Հայաէրոնավիդացիա» և «Ավիաբուժ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ներն աշխատել են վնասով:

Հայաստանի Հանրապետության կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի գծով 2021 թվականի բյուջետային մուտքերը կազմել են 77.5 մլն դրամ, որոնք գոյացել են Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից: Կանխատեսված մուտքերի համեմատ 2.3% գերազանցումը պայմանավորված է ծրագրայինի համեմատ փաստացի փոխարժեքի բարձր մակարդակով:

Ռեզիդենտներին պետության կողմից տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները 2021 թվականին կազմել են շուրջ 11.5 մլրդ դրամ՝ 81.3%-ով ապահովելով տարեկան ծրագրային ցուցանիշը և 20.2%-ով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրից շեղումը պայմանավորված է երկու վարկերի վերակառուցման արդյունքում 3.6 մլրդ գումարի չափով տոկոսագումարների պակաս հավաքագրմամբ, ինչպես նաև փոփոխական տոկոսադրույթների և արտարժույթի կանխատեսված ու փաստացի փոխարժեքների տարբերությամբ: Նշված գործոններով է պայմանավորված նաև նախորդ տարվա նկատմամբ մուտքերի անկումը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե մուտքագրված այլ կատեգորիաներում չդասակարգված տրանսֆերտները գիշել են նախորդ տարվա ցուցանիշը՝ 98.7%-ով՝

պայմանավորված 2020 թվականին ռազմական դրության պայմաններում ենթակառուցվածքների, սոցիալական և առողջապահական ծախսերի ֆինանսավորման համար պետությանը «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կատարված 52.7 մլրդ դրամ նվիրաբերությամբ, ինչպես նաև կորոնավիրուսային վարակի կանխարգելման և հաղթահարման ապահովման համար ֆիզիկական անձանց և կազմակերպությունների կողմից պետությանը տրամադրված 1.1 մլրդ դրամ ֆինանսական աջակցությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր տարեկան 1,850.9 մլրդ դրամ ծախսերի կատարում: Ենելով օրենսդրության պահանջներից՝ պետական բյուջեի ծրագրային և փաստացի ցուցանիշներում ներառվել են պետական բյուջեից առանց սահմանափակման կատարվող վճարումները: Նշված միջոցները, ինչպես նաև օրենքով կառավարությանը վերապահված լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունները ներառյալ՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի տարեկան ծրագիրն ավելացվել է 198.5 մլրդ դրամով:

Տնտեսագիտական դասակարգում⁴⁴

Աղյուսակ 11. ՀՀ պետական բյուջեի ծախսերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020թ.-ի նկատմամբ	2021թ. և 2020թ. տարբերությունը
Ընդամենը ծախսեր	1,894.6	2,049.3	2,004.3	97.8%	105.8%	109.7
Ընթացիկ ծախսեր	1,668.5	1,814.1	1,788.0	98.6%	107.2%	119.5
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	226.2	235.2	216.3	92.0%	95.6%	(9.9)
Կշիռն ընդամենը ծախսերի մեջ						
Ընթացիկ ծախսեր	88.1%	88.5%	89.2%			
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	11.9%	11.5%	10.8%			

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի փաստացի ծախսերի ճշտված ծրագրից շեղման ընդհանուր գումարի (45 մլրդ դրամի) 58%-ը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին, 42%-ը՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններին: Հաշվետու տարվա ընթացքում 48.8 մլրդ դրամ ուղղվել է կորոնավիրուսի համավարակի կանխարգելմանը, վերահսկմանը, բուժմանը և տնտեսական հետևանքների չեզոքացմանն ուղղված ծրագրերի գծով ծախսերին, 68.9 մլրդ դրամ՝ ռազմական դրությամբ պայմանավորված ծախսերին, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.8%-ով և 97.6%-ով:


Ըստ ֆինանսավորման աղբյուրների պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին կատարվել է ծախսերի 96%-ը կամ 1,923.2 մլրդ դրամը, որոնց ծրագիրը կատարվել է 98.4%-ով: Բյուջեի ծախսերի 4%-ը՝ 81.1 մլրդ դրամը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից, որը կազմել է

⁴⁴ ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման ներկայացված են հետևյալ տեղեկանքում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\5.Ծախսեր տնտեսագիտական դաս.xls](#):


ծրագրի 85.7%-ը: Հարկ է նշել, որ 2021 թվականին ապահովվել է պետական բյուջեի ծախսային ծրագրերի շրջանակներում պետական մարմինների կողմից սահմանված կարգով ստանձնված պարտավորությունների ամբողջական և ժամանակին կատարումը:

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերն աճել են 5.8%-ով կամ 109.7 մլրդ դրամով՝ պայմանավորված ընթացիկ ծախսերի աճով: Արդյունքում նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի ծախսերում 1.1 տոկոսային կետով ավելացել է ընթացիկ ծախսերի տեսակարար կշիռը և նույնքան նվազել է ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների տեսակարար կշիռը:

Գծապատկեր 26.ՀՀ պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը 2020-2021թթ.



Գծապատկեր 27.ՀՀ 2019-2021թթ. պետական բյուջեների ծախսերը



Ընթացիկ ծախսեր

2021 թվականի պետական բյուջեից կատարված ընթացիկ ծախսերի բաղադրիչների վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 12-ում: Նախորդ տարվա համեմատ ընթացիկ ծախսերի 7.2% աճը մեծ մասամբ պայմանավորված է նպաստների և կենսաթոշակների գծով ծախսերի աճով:

Աղյուսակ 12. ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերը (մլրդ դրամ)՝⁴⁵

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020թ.-ի նկատմամբ
Ընթացիկ ծախսեր	1,668.5	1,814.1	1,788.0	98.6%	107.2%
Աշխատավարձ	176.1	183.4	181.4	98.9%	103.0%
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	179.2	203.7	198.5	97.4%	110.8%
Տնկոսավճարներ	164.8	181.6	180.8	99.6%	109.8%
Սուրսիրություններ	119.1	138.7	136.8	98.6%	114.9%
Դրամաշնորհներ	186.9	210.8	204.7	97.1%	109.5%
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	559.1	625.3	621.2	99.3%	111.1%
Այլ ծախսեր	283.4	270.5	264.6	97.8%	93.4%
Կշիռն ընթացիկ ծախսերում					
Աշխատավարձ	10.6%	10.1%	10.1%		
Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	10.7%	11.2%	11.1%		
Տնկոսավճարներ	9.9%	10.0%	10.1%		
Սուրսիրություններ	7.1%	7.6%	7.6%		
Դրամաշնորհներ	11.2%	11.6%	11.4%		
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	33.5%	34.5%	34.7%		
Այլ ծախսեր	17.0%	14.9%	14.8%		

2020 թվականի համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է պետական կառավարման համակարգում աշխատավարձերի բնականոն աճով, ինչպես նաև որոշ մարմիններում հաստիքների ավելացմամբ: Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը 0.5 տոկոսային կետով նվազել է՝ կազմելով 10.1%:

⁴⁵ ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերն առավել մանրամասն ներկայացված են հետևյալ տեղեկանքում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\5.Ծախսեր տնտեսագիտական դաս.xls](#):

Հաշվետու տարում Կառավարության պարտքի սպասարկման ծախսերի աճը 2020 թվականի համեմատ պայմանավորված է ներքին պարտքի սպասարկման ծախսերի աճով: Չնայած նրան, որ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 2020 թվականի համեմատությամբ պարտքի ծավալն աճել է 7.3%-ով՝ պարտքի սպասարկման ծախսերն աճել են միայն պետական գանձապետական պարտատոմսերի գծով: Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի և դրա հիմնական բաղադրիչների կառուցվածքի փոփոխությամբ, կառավարության ընդհանուր պարտքի միջին կշռված անվանական տոկոսադրույթի բարձրացմամբ և արտարժութային վճարումների փոփոխությամբ համար կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքի փոփոխությամբ (2020թ. համար՝ 476.46, իսկ 2021թ.՝ միջին հաշվով 504.37):

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի միջին կշռված անվանական տոկոսադրույթը կազմել է 4.7% և նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.4 տոկոսային կետով: Արտաքին վարկերի գծով տվյալ ցուցանիշը մնացել է անփոփոխ: Նշենք, որ լրդացող տոկոսադրույթով տրամադրվող վարկերի սպասարկման ծախսերի հաշվարկման հիմքում ընկած 6-ամսյա ԱՄՆ դոլարի LIBOR դրույքաչափի միջին ցուցանիշը 2020թ. կազմել էր 0.69%, իսկ 2021թ. ընթացքում՝ 0.20%, ընդ որում հիշյալ տոկոսադրույթի հիման վրա է իրականացվում արտաքին վարկերի շուրջ 20%-ի սպասարկումը: COVID-19-ի համավարակով պայմանավորված՝ ՀԲ-ի և ՀՀ ֆՆ-ի միջև ձեռք էր բերվել պայմանավորվածություն առ այն, որ ՀԲ-ը երկու տարի (2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը) ժամկետով չեղարկել է ՀՄԸ-ի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի համար «արագացված մարման դրույթ» շրջանակներում 2014 թվականի հուլիսի 1-ից կիրառված լրացուցիչ 1.7% տոկոսադրույթը:

Շրջանառության մեջ գտնվող պետական գանձապետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը նվազել է 0.3 տոկոսային կետով: Դրան նպաստել է տեղաբաշխման ավելի բարձր միջին կշռված եկամտաբերությամբ պարտատոմսերի մարումը (մարվել են 5 տարի մարման ժամկետով՝ 12.6% տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությամբ պետական գանձապետական միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր և 10 տարի մարման ժամկետով՝ 17.9% տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությամբ պետական գանձապետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր):

Իրականացված գործառնությունների արդյունքում 0.9 տոկոսային կետով նվազել է արտարժութային պետական պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

Աղյուսակ 13. Կառավարության պարզբի սպասարկման ծախսերը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020թ.-ի նկատմամբ
Տոկոսավճարներ, այդ թվում՝	164.8	181.6	180.8	99.6%	109.8%
Ներքին տոկոսավճարներ	86.9	108.9	108.4	99.5%	124.7%
Արտաքին տոկոսավճարներ	77.9	72.7	72.5	99.7%	93.1%

2021 թվականին նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական բյուջեից տրամադրված սուբսիդիաների 14.9% (17.7 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է Գյուղատնտեսության խթանման ծրագրի շրջանակներում սուբսիդավորման 122.7%, կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագրի շրջանակներում սուբսիդավորման 147%, Գյուղատնտեսության արդիականացման ծրագրի շրջանակներում սուբսիդավորման 243.9% և Հանրակրթության ծրագրի շրջանակներում տրամադրված սուբսիդիաների 2.1% աճով:

Նախորդ տարվա համեմատ 2021 թվականի ընթացքում պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհների 9.5% (17.8 մլրդ դրամ) աճը հիմնականում պայմանավորված է զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման ծախսերի 3.2 անգամ (19.1 մլրդ դրամ) աճով՝ պայմանավորված դրոշմանիշային վճարների դրույքաչափերի բարձրացմամբ, համայնքներին համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաների 16.7% (9.2 մլրդ դրամով)⁴⁶, գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների միջոցառման ծախսերի 102.4% (1.7 մլրդ դրամով) աճով, ինչպես նաև 2021 թվականի պետական բյուջեից տրանսպորտային համակարգերի արդյունավետության բարելավման միջոցառմանը շուրջ 2.2 մլրդ դրամ սուբվենցիայի տրամադրմամբ: Միևնույն ժամանակ դրամաշնորհների գծով ծախսերի վրա նվազեցնող ազդեցություն են գործել կորոնավիրուսի տնտեսական հետևանքների նվազեցման և վերացման գծով ծախսերի նվազումը՝ 50.9%-ով (5.8 մլրդ դրամով), ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրման ծախսերի նվազումը՝ 12.4%-ով (1.7 մլրդ դրամով), ինչպես նաև 2020 թվականին տեղական ինքնակառավարման մարմիններին 3.3 մլրդ դրամի չափով ֆինանսական փոխհատուցման տրամադրումը:

⁴⁶ Համայնքների բյուջեներին «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի համաձայն տրամադրված դոտացիաները և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2019 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով տրամադրված հատկացումներն ըստ առանձին համայնքների ներկայացված են հետևյալ հավելվածում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\10.Հավելված N2.Դոտացիա.xlsx](#):

2021 թվականին ՀՀ պետական բյուջեից համայքներին տրամադրվել են 21 մլրդ դրամ սուբվենցիաներ՝ ապահովելով 92.9% կատարողական: Նշված գումարից 13.9 մլրդ դրամը կազմել են կապիտալ սուբվենցիաները, 7.1 մլրդ դրամը՝ ընթացիկ սուբվենցիաները: Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեից տրամադրված սուբվենցիաները նվազել են 8%-ով կամ 1.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ընթացիկ սուբվենցիաների նվազմամբ⁴⁷:

Աղյուսակ 14. ՀՀ պետական բյուջեից դրամադրված դրամաշնորհները (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020թ.-ի նկատ- մամբ
Դրամաշնորհներ	186.9	210.8	204.7	97.1%	109.5%
Միջազգային կազմակերպություններին	3.8	3.7	3.3	89.9%	87.3%
Պետական հատվածի այլ մակարդակներին (ընթացիկ), այդ թվում՝	161.2	187.3	183.9	98.2%	114.1%
- Համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դուստացիաներ	55.3	64.5	64.5	100.0%	116.7%
Պետական հատվածի այլ մակարդակներին (կապիտալ)	21.9	19.8	17.5	88.4%	80.0%

2020 թվականի համեմատ նպաստների գծով ծախսերի 62.1 մլրդ դրամ աճը հիմնականում պայմանավորված է ռազմական դրությամբ պայմանավորված ծախսերի 51 մլրդ դրամ և մայրության նպաստների գծով ծախսերի 6.5 մլրդ դրամ աճով: Կենսաթոշակների գծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների հաշիվներին կատարված հատկացումների աճով, որոնք կազմել են 101.7 մլրդ դրամ՝ 20.1%-ով կամ 17 մլրդ դրամով գերազանցելով 2020 թվականի ցուցանիշը: Կենսաթոշակների գծով ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն աշխատանքային կենսաթոշակները, որոնք կազմել են 238.6 մլրդ դրամ՝ պայմանավորված 99.9% կատարողական և 0.3%-ով (801.9 մլն դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Աղյուսակ 15. ՀՀ պետական բյուջեից դրամադրված նպաստները և կենսաթոշակները (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020թ.-ի նկատմամբ
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	559.1	625.3	621.2	99.3%	111.1%
Նպաստներ	202.1	248.6	244.8	98.5%	121.1%
Կենսաթոշակներ	356.9	376.7	376.4	99.9%	105.4%

⁴⁷ ՀՀ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրված սուբվենցիաների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ հավելվածում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\8.Հավելված_N1աղյուսակN7 սուբվենցիաներ համայնքներին.xls](#):

Նախորդ տարվա համեմատ պետական բյուջեի այլ ծախսերի 6.6% (18.8 մլրդ դրամ) անկումը հիմնականում կապված է 2020 թվականին ռազմական գործողություններով պայմանավորված ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի հետ, որոնք հաշվետու տարում կազմել են 197.8 մլրդ դրամ (նախատեսվածի 99.9%-ը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 9.2%-ով (20.2 մլրդ դրամով):

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ

Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների 92% կատարողականը, ինչպես նաև նախորդ տարվա համեմատ 4.4% (9.9 մլրդ դրամ) նվազումը հիմնականում պայմանավորված է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի (կապիտալ ծախսերի) կատարողականով⁴⁸:

Ծրագրված ցուցանիշից կապիտալ ծախսերի շեղումները հիմնականում արձանագրվել են ճանապարհային տրանսպորտի, դատարանների, կրթության, սոցիալական պաշտպանության, ոռոգման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում ինչպես արտաքին աջակցությամբ, այնպես էլ ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրերում:

Նախորդ տարվա համեմատ կապիտալ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման միջոցառման շրջանակներում կատարված կապիտալ ծախսերի նվազմամբ՝ պայմանավորված 2020 թվականին ռազմական դրության հետ կապված ծախսերով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ կապիտալ ծախսերի զգալի աճ է ապահովվել ճանապարհային տրանսպորտի և ջրամատակարարման ոլորտներում, որոնք կազմել են համապատասխանաբար 53.4 մլրդ դրամ և 6.3 մլրդ դրամ՝ 26.7%-ով (11.3 մլրդ դրամով) և 4.5 անգամ (4.9 մլրդ դրամով) գերազանցելով 2020 թվականի ցուցանիշները:

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից 2.1 մլրդ դրամ մուտքերից 1.1 մլրդ դրամը ստացվել է հողի օտարումից՝ 39.7%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը: 916.2 մլն դրամ է ստացվել այլ հիմնական միջոցների օտարումից՝ կանխատեսված 1.3 մլն դրամի դիմաց:

⁴⁸ ՀՀ պետական բյուջեի կապիտալ ծախսերի բաշխումն ըստ ուղղությունների (առանց օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող նպատակային ծրագրերի) առավել մանրամասն ներկայացված է հետևյալ հավելվածում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\4.Հավելված N1 աղյուսակ N3 կապիտալ ծախսեր.xlsx](#):

Այլուսակ 16. ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ	2021թ. 2020թ.-ի նկատմամբ
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	226.2	235.2	216.3	92.0%	95.6%
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	227.7	236.1	218.4	92.5%	95.9%
արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրեր	44.3	91.2	80.6	88.3%	182.0%
ներքին ռեսուրսների հաշվին իրականացվող ծրագրեր	183.4	144.9	137.8	95.1%	75.1%
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	(1.5)	(0.8)	(2.1)	250.8%	136.8%

Ծրագրային դասակարգում⁴⁹

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 174 ծրագրերի իրականացում 46 պետական մարմինների և Կառավարության պատասխանատվության ներքո: Կառավարության կատարած ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 178, որոնցից փաստացի միջոցներ են օգտագործվել 175-ի գծով, իսկ Կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 965 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 936-ը կամ 97%-ը:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կազմել են 2,004.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97.8%-ը: Շեղումը կազմել է 45 մլրդ դրամ, որը հիմնականում արձանագրվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (13.4 մլրդ դրամ), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի (7.4 մլրդ դրամ), ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (4 մլրդ դրամ), ՀՀ արդարադատության (3.9 մլրդ դրամ), ՀՀ էկոնոմիկայի (2.3 մլրդ դրամ), ՀՀ շրջակա միջավայրի (2 մլրդ դրամ) նախարարությունների, ՀՀ Վարչապետի աշխատակազմի (2.3 մլրդ դրամ) մասնակիությամբ:

⁴⁹ Բյուջետային ծախսային ծրագրերի և միջոցառումների գծով ֆինանսական և արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ հավելվածներում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\2.Հավելված N1 աղյուսակ N1_ծախսերն ըստ ծրագրերի.xls](#)

[3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ\3.Հավելված N1 աղյուսակ N2_ծախսերն ըստ ծրագրերի և միջոցառումների.xls](#)

[4.ՏԵՂՎԱԾՆԵՐ\2.Ծախսեր ըստ ՊԾՄԿ.xls](#)

[5.Արդյունքային ցուցանիշներ-հավելված 9\2.Արդյունքային ցուցանիշներ ըստ պատասխանատունների.xls](#)

[6.Արդյունքային ցուցանիշներ-հավելված 9.1\2.Արդյունքային ցուցանիշներ ըստ կատարողների.xls](#)

և ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (1.3 մլրդ դրամ) պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերում:

Պետական բյուջեի փաստացի ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռները՝ 30.9% և 16.8%, ունեցել են համապատասխանաբար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերը:

2020 թվականի համեմատ ՀՀ պետական բյուջեի ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ տարածքային կառավարման և Ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության ծախսերի աճով: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ ՀՀ պաշտպանության նախարարության ծախսերի 13.1%-ով (50.7 մլրդ դրամով) անկումը պայմանավորված է 2020 թվականին ռազմական դրության պայմաններում լրացուցիչ միջոցների հատկացմամբ:

Աղյուսակ 17. ՀՀ պետական բյուջեի ծախսերն ըստ պատասխանագործության մարմինների (մլրդ դրամ)

	2020թ. փաստացի	2021թ. ճշտված ծրագիր	2021թ. փաստացի	Կատարո- ղական (%)	2021 / 2020 (%)	2021 – 2020
ԸՆԴՀԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,894.6	2,049.3	2,004.3	97.8	105.8	109.7
ՀՀ ՏԿԵՆ	178.2	214.8	201.4	93.8	113.0	23.2
ՀՀ առողջապահության նախարարություն	141.8	159.2	157.9	99.2	111.4	16.1
ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն	34.0	45.7	43.4	94.9	127.6	9.4
ՀՀ ԿԳՄՍՆ	170.9	178.9	174.8	97.7	102.3	3.9
ՀՀ պաշտպանության նախարարություն	387.5	337.4	336.8	99.8	86.9	(50.7)
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	548.3	627.2	619.8	98.8	113.0	71.5
ՀՀ ֆինանսների նախարարություն	167.6	185.6	184.6	99.5	110.1	16.9
ՀՀ ռոտուրիանություն	63.8	66.4	65.5	98.6	102.6	1.6
Այլ պետական մարմիններ	202.5	234.4	220.2	94.0	108.7	17.7

ՀՀ Նախագահի աշխատակազմի պատասխանատվությամբ Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացման ապահովման ծախսերը 2021 թվականի ընթացքում կատարվել են 98.3%-ով՝ կազմելով 1.48 մլրդ դրամ: ՀՀ Նախագահի աշխատակազմին հատկացված միջոցների գերակշիռ մասն ուղղվել է Հանրապետության նախագահի գործունեության և ներկայացուցականության ապահովման միջոցառմանը, որի շրջանակներում օգտագործվել է 1.45 մլրդ դրամ՝ ապահովելով 98.3% կատարողական՝ պայմանավորված որոշ ծախսային հոդվածների գծով առկա տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ Նախագահի

աշխատակազմի ծախսերն աճել են 5.3%-ով կամ 73.7 մլն դրամով, որը հիմնականում արձանագրվել է Հանրապետության նախագահի գործունեության և ներկայացուցչականության ապահովման ծախսերում: Վերջիններս աճել են 9.6%-ով (127.6 մլն դրամով՝ պայմանավորված գործուղումների համար նախատեսված միջոցների ավելացմամբ:

ՀՀ Ազգային ժողովի ծախսերը 2021 թվականին կատարվել են 98.8%-ով՝ կազմելով 5.4 մլրդ դրամ: **ՀՀ Ազգային ժողովի** գործունեության ապահովման, օրենսդրական, վերլուծական և ներկայացուցչական ծառայությունների գծով ծախսերի կատարողականը կազմել է 98.7% կամ շուրջ 5.0 մլրդ դրամ՝ պայմանավորված որոշ ծախսային հոդվածների գծով առկա տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ **ՀՀ Ազգային ժողովի** ծախսերն աճել են 12.8%-ով՝ հիմնականում պայմանավորված արտասահմանյան գործուղումների գծով ծախսերի աճով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» **ՀՀ օրենքի** համաձայն պատգամագրավորի փոխհատուցման վճարի փոփոխմամբ, որը սեպտեմբեր ամսից սահմանվել է 250 հազ դրամ՝ նախկինում գործող 50 հազարի փոխարեն, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման և տրանսպորտային միջոցներով ապահովվածության ծախսերի ավելացմամբ:

ՀՀ Վարչապետի աշխատակազմի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացում կատարվել է պետական բյուջեի 10 ծրագիր: Ծախսերը կազմել են շուրջ 23.9 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 91.2%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է **ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ծրագրի** կատարողականով: Նախորդ տարվա համեմատ **ՀՀ Վարչապետի աշխատակազմի** պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերն աճել են 29%-ով կամ 5.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է **ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման և Պետական հատվածի արդիականացման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:**

Այլուսակ 18. 2021թ. ՀՀ Վարչապետի աշխատակազմի կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	18,512.0	26,189.7	23,873.8	91.2	129.0	5,361.9
Պետական հատվածի արդիականացման ծրագիր	1,900.8	3,680.7	3,396.6	92.3	178.7	1,495.8
Հանրային իրազեկում	1,520.9	1,058.9	1,019.5	96.3	67.0	(501.4)
ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովում	8,164.0	13,366.9	11,691.3	87.5	143.2	3,527.2
Տեսչական վերահսկողության ծրագիր	4,678.4	5,268.7	5,149.0	97.7	110.1	470.5
Միջազգային դատարաններում, միջազգային արդիուրաժներում և այլ միջազգային առյաններում ՀՀ շահերի ներկայացում և պաշտպանություն, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովում	1,521.5	2,112.7	1,970.5	93.3	129.5	449.1
Այլ ծրագրեր	726.3	701.8	647.0	92.2	89.1	(79.4)

2021 թվականի ընթացքում Պետական հարվածի արդիականացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.4 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 92.3%-ը: Միջոցներն օգտագործվել են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրի շրջանակներում Էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերման միջոցառման կատարողականով: Հիմնականում նշված միջոցառման ծախսերի աճով էլ պայմանավորված է նախորդ տարվա համեմատ Պետական հատվածի արդիականացման ծրագրի ծախսերի 78.7% (1.5 մլրդ դրամ) աճը:

Հաշվետու տարում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում Էլեկտրոնային կառավարման համակարգերի և սարքավորումների ձեռքբերման միջոցառման շրջանակներում.

- ձեռք են բերվել ծրագրային ապահովումներ և սարքավորումներ փոխգործելիության հարթակի կիրեռանվտանգության ապահովման համար,
- «Հայաստանի քրեական գործերի մինչդատական վարույթի Էլեկտրոնային կառավարման համակարգի մատակարարման և տեղադրման» պայմանագրի շրջանակներում ձեռք են բերվել սարքավորումներ,
- ՀՀ Վարչապետի աշխատակազմի սերվերային կենտրոնն արդիականացնելու նպատակով ձեռք են բերվել պահուստային համակարգեր,

- «ՀՀ ոստիկանության օպերատիվ կառավարման էլեկտրոնային համակարգի (Երևանի և մարզային 2 կենտրոնների՝ Գյումրիի և Վանաձորի) ներդրում» պայմանագրի շրջանակներում մշակվել են համակարգի հավելյալ մոդուլներ, ձեռք են բերվել սարքավորումներ, արդիականացվել է դեմքի ճանաչման համակարգը:

Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 3.2 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 95.2%-ը: Շեղումը պայմանավորված է ՀՀ ոստիկանության համար օպերատիվ կառավարման պիլոտային համակարգերի մատակարարման և տեղադրման պայմանագրում կատարված փոփոխությամբ, որի հետևանքով պայմանագրի վերջին փուլի աշխատանքների իրականացումը հետաձգվել է, և վճարումները չեն իրականացվել:

ՀՀ հանրային հատվածի ֆինանսական կառավարման բարեփոխումների մշակման և իրականացման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման նպատակով Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են ծրագրի մոնիթորինգի և հաշվետվությունների մշակման, գնումների փաստաթղթերի կազմման և գնումների գործընթացի վերահսկման ու ծրագրի ֆինանսական առողջության ծառայությունների հետ կապված աշխատանքներ, ինչպես նաև ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար էլեկտրոնային հարթակի ծրագրային ապահովման վերջնական տարբերակի մշակման հետ կապված աշխատանքներ: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 165.8 մլն դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 58.1%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համար էլեկտրոնային հարթակի մշակման աշխատանքներն ընդհանուր առմամբ իրականացվել են, սակայն ստուգումների ժամկետներով պայմանավորված՝ համակարգի վերջնական գործարկման ընդունումը հետաձգվել է: Բացի այդ, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային հարթակի մեկնարկային փուլի աշխատանքները պահանջել են նախատեսվածից ավելի երկար ժամկետ, որի հետևանքով մեկնարկային փուլի աշխատանքների ընդունումը և համապատասխան վճարումները չեն իրականացվել:

2021 թվականի ընթացքում Հանրային իրազեկման ծրագրի ծախսերը կազմել են 1 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 96.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՊՀ երկրներում հեռուստառադիոդրագրերի հեռարձակման համար «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության ՀՀ մասնաբաժնի վճարմանն ուղղված ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերը նվազել են 33%-ով կամ 501.4 մլն դրամով, որը հիմնականում

պայմանավորված է հանրային իրազեկման և հասարակական-քաղաքագիտական հետազոտությունների ծախսերի նվազմամբ:

Կառավարության գործունեության լուսաբանման, թեմատիկ վերլուծությունների և ՀՀՄ-ների ամենօրյա մշտադիտարկումների նպատակով հանրային իրազեկման միջոցառումն իրականացվում է «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: 2021 թվականին միջոցառման շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ՀՀ շահերին առնչվող միջազգային կառուցների դիրքորոշումների մշտադիտարկում և վերլուծական նյութերի պատրաստում,
- Քաղաքական թեմաներով փորձագիտական, մասնագիտական քննարկումների կազմակերպում,
- Արտերկրի և Հայաստանի գործընկեր կառուցների, լրատվամիջոցների հետ կապերի հաստատում,
- Կառավարության աշխատանքները և հաջողակ բիզնեսները լուսաբանող հաղորդումների պատրաստում,
- Սոցիալական հարթակներում Կառավարության պաշտոնական էջերի կառավարում, տեսանյութերի պատրաստում և տեղադրում, ուղիղ եթեր հեռարձակումների իրականացում, Կառավարության ընթացիկ նախագծերի մասին իրազեկում,
- Ներքաղաքական իրադարձությունների վերաբերյալ ամփոփագրերի և վերլուծական հոդվածների պատրաստում,
- Անվտանգության և պաշտպանական հիմնախնդիրների, ռազմական, ռազմաքաղաքական իրադարձությունները պարզաբանող, բանակի և բանակին առնչվող ինստիտուտների մասին տեղեկանքների պատրաստում,
- ՀՀ-ի համար կարևորություն ունեցող միջազգային թեմաների, ՀՀ արտաքին քաղաքականության կարևոր գործընթացների մասին քաղաքական ամփոփագրերի պատրաստում,
- Տարածաշրջանային երկրների (Վրաստան, Իրան, Ադրբեյջան, Թուրքիա, Մերձավոր Արևելք, Իսրայել) ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում,
- Թուրքիայի և Ադրբեյջանի ներքաղաքական զարգացումների մասին թեմատիկ տեղեկանքների պատրաստում, ինչպես նաև թուրքերեն և հայերեն լեզուներով լրատվական կայքի վարում,
- Միջազգային առաջատար լրատվամիջոցների կարևոր իրապարակումների վերաբերյալ ամփոփագրերի պատրաստում,

-
- Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-ադրբեջանական թեմայով փաստավավերագրական ֆիլմերի թողարկում,
 - սփյուռքին առնչվող էլեկտրոնային պարբերականում հրապարակվող տեղեկատվական նյութերի պատրաստում,
 - լրատվամիջոցների ներկայացուցիչների և պետական հիմնարկների հանրային կապերի պատասխանատուների համար ուսումնական ծրագրերի իրականացում:

Կառավարության գործունեության լուսաբանման, թեմատիկ վերլուծությունների և ՀՀՄ-ների ամենօրյա մշտադիտարկումների նպատակով հանրային իրազեկման ծախսերը կազմել են 564.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 44.8%-ով կամ 458.5 մլն դրամով, որը պայմանավորված է ՀՀ-ում հայտարարված արտակարգ և ռազմական դրույթունների պայմաններում, հաշվի առնելով առաջացող անհետաձգելի լուծումներ պահանջող խնդիրների առկայությունը՝ բյուջետային առաջնահերթություններից ենթելով՝ 2021 թվականին ՊՈԱԿ-ի ծախսերից կատարված նվազեցումներով, որի հետևանքով իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ և հաստիքների կրճատում: Բացի այդ, 2020 թվականին լրացուցիչ միջոցներ էին հատկացվել ՊՈԱԿ-ի՝ նախորդ տարիների ԱԱՀ-ի գծով գոյացած հարկային պարտավորությունների մարման նպատակով:

ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման նպատակով «Միր» միջազետական հեռուստառադիոընկերության՝ ՀՀ մասնաբաժնի վճարմանն ուղղված միջոցառումը հնարավորություն է տալիս «Միր» միջազետական հեռուստառադիոընկերության միջոցով ԱՊՀ երկրներից տեղեկատվություն ստանալ և այն տարածել ԱՊՀ երկրներում: «Միր» միջազետական հեռուստառադիոընկերությունը հայկական բաժնեմասով միակ օտարակենտրոն հեռուստառադիոընկերությունն է, որը հեռարձակվում է նաև Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և փոխադարձ հնարավորություն է տալիս ինչպես ԱՊՀ և մի շարք այլ երկրների բնակչությանը ծանոթանալ հայկական մշակույթին և մշակութային արժեքներին, այնպես էլ Հայաստանի բնակչությանը՝ ծանոթանալ ԱՊՀ մյուս պետությունների մշակույթին և մշակութային արժեքներին: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 191.1 մլն դրամ՝ 90%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ միջոցառման շրջանակներում համաձայնագիրը կնքվել է նախատեսվածից ցածր արժեքով: 2020 թվականին նշված միջոցառումն իրականացվել է երկու առանձին միջոցառումների՝ ԱՊՀ երկրներում հեռուստառադիոծրագրերի հեռարձակման (48.3 մլն դրամ) և «Միր» միջազետական հեռուստառադիոընկերության՝ ՀՀ մասնաբաժնի վճարման (144.8 մլն դրամ) շրջանակներում: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի

(նշված երկու միջոցառումների ծախսերի հանրագումարի) համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 1%-ով կամ 1.9 մլն դրամով:

Պետության համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների ուղիղ եթերում հեռարձակման, օտար լեզուներով թողարկվող տեղեկատվության որակի բարձրացման և քանակի ավելացման, արխիվացված տեղեկավության թվայնացման նպատակով միջազգային լրատվամիջոցներում պետական լրատվական գործակալության ցիտման ինդեքսի և ՀՀ-ի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկատվության տարածման աջակցության միջոցառման շրջանակներում ժողովուրդների ազգային ինքնագիտակցության բարձրացմանն ու ամրապնդմանը նպաստելու նպատակով իրականացվել են պատմության, մշակույթի և ազգագործության վերաբերյալ տեղեկատվության կազմման և տարածման աշխատանքներ: 2021 թվականի ընթացքում թվայնացված տեղեկատվության ծավալը կազմել է 14000 մեգաբայթ, տարեկան իրապարակվող տեղեկատվության քանակը՝ 5125 հատ: Միջոցառմանը հատկացված 100 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նշված միջոցառումը մեկնարկել է 2021 թվականին:

Հաշվետու տարում ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 11.7 մլրդ դրամ՝ ապահովելով 87.5% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտությունների և ենթակառուցվածքների զարգացման վարկային ծրագրի կատարողականությամբ: Հիմնականում նշված ծրագրի ծախսերի աճով է պայմանավորված նախորդ տարվա համեմատ ՀՀ Վարչապետի լիազորությունների իրականացման ապահովման ծրագրի ծախսերի 43.2% (3.5 մլրդ դրամ) աճը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտությունների զարգացման վարկային ծրագրի նպատակն է՝ հզորացնել արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և ձեռնակություններին տրամադրվող որակի կառավարման ծառայությունների կարողությունները: Ծրագրի բաղկացած է հետևյալ բաղադրիչներից:

- Առևտությունների խթանման և որակի համակարգերի արդյունավետության բարելավում,
- Ներդրումների և արտահանման խթանում,
- Որակի ազգային ենթակառուցվածքի արդիականացում,
- Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտությունների զարգացման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.8 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 73.4%-ը: Ծրագրի՝ ծառայությունների մատուցման բաղադրիչի շրջանակներում 2021 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ավարտվել են Հաղորդակցության և Հանրային կապերի արշավի 2-րդ և 3-րդ փուլերը, իսկ վերջին երկու փուլերի համար պայմանագրի ժամկետը 2021 թվականի դեկտեմբեր ամսից երկարաձգվել է մինչև 2022 թվականի մայիսը.
- Արտահանողների զարգացման դրամաշնորհների տրամադրում 9 հայտատուների, նորարարության զարգացման համաֆինանսավորվող դրամաշնորհների, մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհների տրամադրում՝ ընդհանուր 25 հայտատուների.
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի հիմնանորոգման ՊՄԳ հայեցակարգը հաստատվել է ծրագրի դեկավար հանձնաժողովի (ԾՂՀ) կողմից և ուղարկվել է ՀԲ-ին՝ վերջնական հաստատման.
- Ներկայացվել են Ինժեներական բիզնես աքսելերատորի շենքի և դրա ենթակառուցվածքների նախագծային աշխատանքները, որոնք, սակայն, պատվիրատուի դիտողությունների հիման վրա մի քանի անգամ փոփոխվել են.
- Ինժեներական քաղաքի տարածքի բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցման նախագծման և հեղինակային վերահսկողության աշխատանքային նախագիծը հանձնվել և ամբողջությամբ ընդունվել է պատվիրատուի կողմից: Հեղինակային հսկողության ծառայությունները կիրականացվեն շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում.
- Անցկացվել են Ինժեներական քաղաքի տարածքի բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության և շինարարության ծրագրի դեկավարի ընտրության մրցույթները: Ծառայությունների շրջանակներում աշխատանքները կիրականացվեն շինարարության հետ զուգահեռ.
- Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի (ՍՉԱՄ) լաբորատորիաների տարածքի վերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության, տեխնիկական հսկողության և շինարարության ծրագրի դեկավարի ծառայությունների գծով աշխատանքները սկսել են իրականացվել են 2021 թվականի նոյեմբեր ամսից.
- Իրականացվել են Ազգային հավատարմագրման մարմնի համար Էլեկտրոնային հավատարմագրման գործնթացի ավտոմատացման համակարգի մշակման աշխատանքները, որոնք ընդունվել են պատվիրատուի կողմից:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտությունների գարգացման վարկային ծրագրի՝ ծառայությունների մատուցման բաղադրիչի շրջանակներում ծախսերը կատարվել են 74.4%-ով՝ կազմելով ավելի քան 2.4 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների պայմաններում

Եվրոպական Երկրների սահմանների փակ լինելու հանգամանքով, որի հետևանքով Հանրային կապերի արշավի վերջին Երկու փուլերի համար պայմանագրի ժամկետը 2021 թվականի դեկտեմբերից հետաձգվել է մինչև 2022 թվականի մայիս: Բացի այդ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի հիմնանորոգման պետություն-մասնավոր գործընկերության հայեցակարգը ՀՀ կառավարության հետ ուշ է համաձայնեցվել, որի հետևանքով ուշ է ներկայացվել ծրագրի դեկավար հանձնաժողովի և ՀԲ-ի հաստատմանը: Արդյունքում՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի հիմնանորոգման պետություն-մասնավոր գործընկերության նախատեսված հայեցակարգը չի մեկնարկել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտությունների գարգացման վարկային ծրագրի՝ շենքերի և շինությունների շինարարության և հիմնանորոգման բաղադրիչի շրջանակներում 2021 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ինժեներական քաղաքի տարածքի բարեկարգման և ենթակառուցվածքների կառուցման աշխատանքների գծով մրցութային գործնթացն ավարտվել է 2021 թվականի դեկտեմբեր ամսին, ընտրվել է կապալառու, ընտրության արդյունքները հաստատվել են ԾՂՀ-ի կողմից.
- Նոյեմբերի 1-ից մեկնարկել են ՍՉԱՄ-ի լաբորատորիների տարածքի վերանորոգման աշխատանքները:

Վարկային ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների շինարարության և հիմնանորոգման համար օգտագործվել է նախատեսված միջոցների 9.4%-ը՝ 37.9 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է ծրագրի կառավարման խորհրդի բացակայության պատճառով ՍՉԱՄ լաբորատորիաների և այլ տարածքների վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիրը նախատեսված ժամկետից ուշ կնքվելու հանգամանքով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող առևտությունների գարգացման վարկային ծրագրի՝ սարքավորումների ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում 2021 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ինժեներական քաղաքի լաբորատորիաների համար մեքենաների, PCB արտադրության և այլ սարքավորումների ձեռք բերում.
- Կիբեռանվտանգության ուսուցման լաբորատորիաների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերում.
- Կիբեռանվտանգության ինկուբատորի IBM լաբորատորիայի համար սերվերների և տեխնիկայի ձեռքբերման գծով տեխնիկական մասնագրերի վերջնական տարբերակը ստացվել է 2021 թվականի նոյեմբեր ամսվա վերջին, պատրաստվել է մրցութային փաթեթ,

որը ներկայացվել է ԾՂՀ-ի հաստատմանը, մրցույթը կիայտարարվի հաստատումից հետո, ապրանքները կմատակարարվեն 2022 թվականին.

- Հայաստանի Գերհամակարգչային համակարգի արդիականացման նպատակով նոր բաղադրիչների ձեռքբերման, համակարգի տեղադրման, թեսթավորման և վերապատրաստումների իրականացման պայմանագիրը մեկնարկել է 2021 թվականի սեպտեմբեր ամսին, մատակարարը սեպտեմբերի վերջին առաջարկել է իր հաշվին արդիականացնել գերհամակարգչի որոշ բաղադրիչներ, իունի մեջ ապահոված է պատրաստվել է պայմանագրի համապատասխան փոփոխությունը, որը ԾՂՀ-ի կողմից հաստատվել է դեկտեմբերի 30-ին.
- ՄԶԱՄ-ի համար զանգվածի և հարակից չափումների լաբորատորիայի սարքավորումների ձեռքբերում.
- ՄԶԱՄ-ի լաբորատորիաների և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համար դյուրակիր համակարգիչների ձեռքբերում:

Վարկային ծրագրի շրջանակներում սարքավորումների ձեռքբերման միջոցառման՝ 87.8%՝

1.4 մլրդ դրամ կատարողականը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Գերհամակարգչային համակարգի արդիականացման նպատակով նոր բաղադրիչների ձեռքբերման, համակարգի տեղադրման, թեսթավորման և վերապատրաստումների իրականացման աշխատանքների համար կնքված պայմանագրի փոփոխության հետևանքով աշխատանքների դադարեցմամբ, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետևանքով կիրերանվտանգության ինկուբատորի լաբորատորիաների և ցանցի տեղադրման համար համակարգչային սարքավորումների մի մասի մատակարարման ժամկետների հետաձգմամբ:

Հաշվետու տարում ծառայությունների և ծրագրերի համակարգման միջոցառման շրջանակներում իրականացվել են ՀՀ կառավարության, վարչապետի և փոխվարչապետերի գործունեության աջակցության, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների ու հանձնարարականների կատարման վերահսկողության ապահովման, թվով 10 ծրագրերի և 59 միջոցառումների կատարման, աշխատակազմին վերապահված լիազորությունների շրջանակներում իրավական ակտերի մշակման աշխատանքներ: Նշված միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 4.4 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 94.9%-ը: Շեղումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետևանքով գնումների ընթացակարգով նախատեսված մրցույթների ոչ լրիվ իրականացմամբ, ինչպես նաև մրցույթների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել

են 5.8%-ով կամ 241.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեջման հետևանքով գործուղումների ծախսերի աճով:

2021 թվականի ընթացքում **Տեսչական վերահսկողության** ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 5.1 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 97.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ներմուծվող սննդամթերքի և կենդանական ծագման մթերքի անվտանգության ապահովման, ինչպես նաև առողջապահության և բնապահպանության բնագավառներում վերահսկողության ծառայությունների գծով ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ **Տեսչական վերահսկողության** ծրագրի ծախսերն աճել են 10.1%-ով կամ ավելի քան 470.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայությունների գծով ծախսերի աճով: **Տեսչական վերահսկողության** ծրագրին հատկացված միջոցներն ուղղվել են տարբեր բնագավառներում տեսչական մարմինների պահպանմանը և կարողությունների զարգացմանն ու տեխնիկական հագեցվածության ապահովմանը:

Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայությունների միջոցառման շրջանակներում << սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինն իրականացրել է սննդամթերքի, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում վերահսկողություն, պետությանը և հանրությանը սպառնացող վտանգների հայտնաբերման, ներթափանցման և տարածման կանխարգելման աշխատանքներ: 2021 թվականին տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացվել են թվով 727 ստուգումներ՝ նախորդ տարվա 374-ի դիմաց: Նշված միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 1.8%-ով կամ 23.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է կառուցվածքային փոփոխության հետևանքով հաստիքների կրճատման արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի նվազմամբ:

Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայությունների միջոցառման շրջանակներում << առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացրել է վերահսկողություն առողջապահության՝ աշխատողների առողջության և անվտանգության ապահովման բնագավառում: Նշված միջոցառման ծախսերը կազմել են 1.2 մլրդ դրամ կամ նախատեսված ցուցանիշի 97.5%-ը: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքների առկայության հետևանքով աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև գնման ընթացակարգով նախատեսված մասնակցության հայտերի բացակայության պատճառով որոշ մրցույթների չկայացմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 17.2%-ով կամ 178.9 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների համալրման արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: 2021

թվականին իրականացված ստուգումների քանակը ընդհանուր առմամբ կազմել է 196, որը 2020 թվականի համեմատ աճել է 2.3 անգամ (2020 թվականին իրականացվել է 85 ստուգում) և 44 վերստուգում:

Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում վերահսկողության ծառայությունների միջոցառման շրջանակներում ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինն իրականացրել է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության, տրանսպորտի, էներգետիկայի, պետական և տեղական նշանակության գեղեցիկական և քարտեզագրական աշխատանքների և հողօգտագործման բնագավառներում վերահսկողության աշխատանքներ: 2021 թվականին տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված ստուգումների քանակը կազմել է 918՝ նախորդ տարվա 695-ի դիմաց: Նշված միջոցառման ծախսերը կազմել են 906.7 մլն դրամ՝ ապահովելով 99.6% կատարողական, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 1%-ով կամ 9.1 մլն դրամով:

Բնապահպանության ոլորտում վերահսկողության ծառայությունների միջոցառման շրջանակներում ՀՀ բնապահպանության տեսչական մարմինն իրականացրել է շրջակա միջավայրի վրա վնասակար ներգործությունների և բնական ռեսուրսների գերշահագործման վերահսկողության աշխատանքներ: 2021 թվականին իրականացվել են 213 ստուգումներ՝ նախորդ տարվա 152-ի դիմաց: Նշված միջոցառման ծախսերը կազմել են 851 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 97.5%-ը: Շեղումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի տարածման հետևանքով գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև գնման գործընթացի արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերման հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 6.2%-ով կամ 49.6 մլն դրամով, որը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի կանխարգելման և վերահսկման նպատակով աշխատանքային գործունեության ծավալների և ստուգողական գործողությունների ավելացմամբ, ինչպես նաև հաստիքների համալրման հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Կրթության ոլորտում վերահսկողության ծառայությունների միջոցառման շրջանակներում ՀՀ կրթության տեսչական մարմինն իրականացրել է նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում պետական վերահսկողության աշխատանքներ: 2021 թվականին իրականացվել են 143 ստուգումներ՝ նախորդ տարվա 81-ի դիմաց: Նշված միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 255 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն

աճել են 13.9%-ով կամ 31 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների համարման հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Շուկայի վերահսկողության ծառայությունների միջոցառման շրջանակներում ՀՀ շուկայի տեսչական մարմինն իրականացրել է ոչ պարենային արտադրանքի անվտանգության, չափումների միասնականության ապահովման, համապատասխանության գնահատման, նյութական պահուստի ոլորտներում պետական վերահսկողության աշխատանքներ՝ աշխատանքային ռեսուրսները նպատակառությունով դեպի առավել ռիսկային ոլորտներ ու տնտեսավարող սուբյեկտներ և ապահովելով խախտումների կանխարգելումը, անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը, ինչպես նաև ստուգաչափված չափման միջոցների շահագործումը շուկայում: 2021 թվականին տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացվել են 514 ստուգումներ՝ նախորդ տարվա 486-ի դիմաց: Նշված միջոցառման ծախսերը կազմել են 236.9 մլն դրամ կամ նախատեսվածի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 13.9%-ով կամ 28.9 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների համարման հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում Արդյունահանող ճյուղերի զարգացման ծրագրի շրջանակներում կատարվել են 48.9 մլն դրամ ծախսեր՝ ապահովելով 76.9% կատարողական: Նշված գումարն օգտագործվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն (ԱՃԹՆ) աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Ծրագրի նպատակն է՝ աջակցել Հայաստանին հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցում՝ իրականացնելով ԱՃԹՆ ստանդարտը:

2021 թվականին միջոցառման շրջանակներում կազմվել և հրապարակվել է 2019 թվականի ֆինանսական տարին ընդգրկող ԱՃԹՆ-ի երրորդ ազգային գեկուցը, կազմվել և հրապարակվել է ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանման և մետաղական բնական պաշարների վերամշակման ոլորտներում ԱՃԹՆ-ի ստանդարտը տարածելու նպատակահարմարությունը հետազոտող նախնական ուսումնասիրությունը, 2021 թվականի հունիսի 23-ին անցկացվել է Հայաստանի ԱՃԹՆ 2019 թվականի ազգային գեկուցի և իրական սեփականատերերի հայտարարագրման էլեկտրոնային համակարգի ներկայացման համաժողովը:

Ծրագրի ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ կորոնավիրուսի համավարակի հետևանքով չեն կայացել ԱՃԹՆ-ի գործընթացների իրագեկվածության բարձրացման նպատակով նախատեսված միջոցառումները: Համացանցով և սոցիալական ցանցերով միջոցառումները չեն իրականացվել՝ պայմանավորված գնումների գործընթացը

չկայանալու հանգամանքով: Համակարգված բացահայտումների համար տվյալների ձևավորման ընթացակարգային և ծրագրային հնարավորությունների ուսումնասիրությունը չի պատրաստվել՝ ուսումնասիրության իրականացման աշխատանքների համար դրամաշնորհի գործողության սահմանված ժամկետը բավարար չինելու պատճառով: Աշխատանքների իրականացումը հետաձգվել է 2022 թվական, որոնք ներառվել են Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցության լրացուցիչ ֆինասավորման դրամաշնորհային ծրագրում:

2021 թվականի ընթացքում Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ասյաններում ՀՀ շահերի ներկայացման և պաշտպանության, դրանց կողմից ընդունված վճիռների և որոշումների կատարման ապահովման ծրագրի ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 93.3%-ը: Շեղումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայությունների գծով ծախսերի կատարողականով: Հիմնականում նշված միջոցառման ծախսերի աճով է պայմանավորված նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերի 29.5% (499.1 մլն դրամ) աճը:

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության շահերի ներկայացմանն ու պաշտպանությանն ուղղված փաստաբանական, իրավաբանական ծառայությունների շրջանակներում իրականացվել են Միջազգային դատարաններում, միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային ասյաններում ՀՀ վերաբերյալ գործընթացներում մասնակցության, դրանց կողմից ընդունված ՀՀ վերաբերյալ վճիռների և որոշումների կատարման ապահովման աշխատանքները: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 91.6%-ը: Վճարումները կատարվել են ծառայությունների դիմաց փաստացի ներկայացված փաստաթղթերի հիման վրա: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 34.6%-ով կամ 399.2 մլն դրամով, որը պայմանավորված է ընդունված վճիռների և որոշումների քանակի աճով:

Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարմանն ուղղվել է շուրջ 229.3 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նշված միջոցառումը մեկնարկել է 2021 թվականին:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների հիման վրա արդարացի ֆինանսական հատուցումների տրամադրման համար օգտագործվել է 189.4 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 48.6%-ով կամ 179.4 մլն դրամով, որը պայմանավորված է Եվրոպական դատարանի

կողմից կայացված որոշումների հիման վրա փոխհատուցում ստացող շահառուների քանակի և փոխհատուցման ենթակա գումարի չափի նվազմամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության ապահովմանը 2021 թվականի ընթացքում տրամադրվել է 678.7 մլն դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական: Միջոցները հիմնականում ուղղվել են ՀՀ սահմանադրական դատարանի գործունեության և սահմանադրական արդարադատության ապահովման միջոցառմանը, որի ծախսերը կազմել են 665.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.4%-ը: 2020 թվականի համեմատ ՀՀ սահմանադրական դատարանի ծախսերն աճել են 12.9%-ով կամ 77.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով՝ կապված աշխատողների թվաքանակի ավելացման հետ:

Բարձրագույն դատական խորհրդին 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 12.4 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 94.8% կատարողական: Միջոցներն ուղղվել են Դատական իշխանության գործունեության ապահովման և իրականացման ծրագրին: Բոլոր միջոցառումներում առկա շեղումները հիմնականում պայմանավորված են շարունակական ծախսերի խնայողությամբ: 2020 թվականի համեմատ Բարձրագույն դատական խորհրդի ծախսերն աճել են 5.7%-ով կամ 672.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականի ընթացքում դատավորների հաստիքների ավելացման արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի և շարունակական ծախսերի աճով:

ՀՀ դատախազությանը հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է ավելի քան 6.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.9%-ը: Հատկացումների հաշվին կատարվել են 2 ծրագրեր՝ «Փորձաքննության ծառայություններ» և «Դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն»: Միջոցների գերակշիռ մասը՝ 5.8 մլրդ դրամը, տրամադրվել է Դատական ղեկավարման և դատախազական հսկողության ծրագրին, որը կատարվել է 99.9%-ով: Նախորդ տարվա համեմատ Դատախազության ծախսերն աճել են 13.5%-ով կամ 730.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Քրեական հետապնդման, դատավարական ղեկավարման և դատախազական հսկողության ծառայությունների տրամադրման ծախսերի 15.3% (746.0 մլն դրամ) աճով, որն էլ պայմանավորված է դատաիրավական համակարգի բարեփոխումների, հանցավորության դեմ պայքարի աշխատանքների ուժեղացման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ, որը պահանջ է առաջացնում համակարգի պահպանման ծախսերում կատարել որոշակի փոփոխություններ:

ՀՀ հայուկ քննչական ծառայությանը տրամադրվել է 718.0 մլն դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 92.0% կատարողական: Միջոցների գերակշիռ մասը՝ 717.6 մլն դրամն ուղղվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությունների ծրագրի քրեական վարույթի իրականացման միջոցառմանը, որը կատարվել է 92.9%-ով: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 20-րդ մասի համաձայն՝ ՀՀ հատուկ քննչական ծառայության գործունեությունը 2021 թվականի հոկտեմբերի 22-ից դադարեցվել է, որով էլ պայմանավորված է ծախսերի շեղումը ծրագրված ցուցանիշների նկատմամբ:

ՀՀ գորածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 22 ծրագրի, որոնց գծով ծախսերը կազմել են 201.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.8%-ը: Ծրագրից շեղումը և նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է ճանապարհային ցանցի բարելավման, Տարածքային զարգացման, Ոռոգման համակարգի առողջացման, Քաղաքային զարգացման և Զրամատակարարաման և Զրահեռացման բարելավման ծրագրերի կատարողականով:

Աղյուսակ 19. 2021թ. ՀՀ գորածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	178,206.2	214,770.5	201,373.0	93.8%	113.0%	23,166.8
Ոռոգման համակարգի առողջացում	18,365.1	21,449.7	19,823.3	92.4%	107.9%	1,458.2
Ճանապարհային ցանցի բարելավում	51,990.8	66,380.1	60,475.3	91.1%	116.3%	8,484.5
Զրամատակարարաման և Զրահեռացման բարելավում	1,765.2	7,430.7	6,648.3	89.5%	376.6%	4,883.0
Քաղաքային զարգացում	16,731.2	21,238.2	19,748.9	93.0%	118.0%	3,017.7
Տարածքային զարգացում	75,392.4	82,868.3	81,224.5	98.0%	107.7%	5,832.1
Այլ ծրագրեր	13,961.4	15,403.5	13,452.7	87.3%	96.4%	508.8

2021 թվականին Ոռոգման համակարգի առողջացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 92.4%-ը՝ ավելի քան 19.8 մլրդ դրամ: Ծրագրի կատարողականը

հիմնականում պայմանավորված է տվյալ բնագավառում արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի կատարողականով:

Մասնավորապես՝ Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի նպատակն է՝ փոխարինել մեխանիկական ոռոգումը ինքնահոսով, վերականգնել մայր և երկրորդ կարգի ջրանցքների, ներտնտեսային ցանցի առավել քայլայված և վթարային հատվածները: Ծրագրի շրջանակներում 2021 թվականին շարունակվել են մայր և երկրորդ կարգի ջրանցքների, ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնման շինարարական աշխատանքները. հիմնանորոգվել են 187.4 կմ երկարությամբ ոռոգման ցանցեր՝ նախատեսված 215 կմ-ի դիմաց: Ծրագրի շրջանակներում կանխատեսվող խնայողությունների հաշվին նախատեսվել է կատարել լրացուցիչ շինարարական աշխատանքներ, որի նպատակով մեկնարկել են պատվիրակված նախագծահետազոտական աշխատանքները: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 4.6 մլրդ դրամ, կամ ծրագրի 81.2%-ը՝ հիմնականում պայմանավորված նախագծային փոփոխությունների պատճառով մի շարք կատարողականների փաստաթղթավորման ուշացմամբ, որոշ շինարարական աշխատանքների՝ 2022 թվական տեղափոխմամբ, ինչպես նաև լրացուցիչ շինարարական աշխատանքների կատարման խորհրդատուի կողմից կանխավճարից հրաժարվելու հանգամանքով:

Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում Վեդի և Խոսրով գետերի վրա ջրընդունիչ հանգույցների ու ջրի փոխադրման համակարգի և Վեդի ջրամբարի ոռոգման ջրանցքից սկսվող և ընդհանուր շուրջ 36.2 կմ երկարությամբ ոռոգման համակարգի կառուցման աշխատանքներն ավարտվել են: 2021 թվականին շարունակվել են Վեդու երկու պատվարների կառուցման աշխատանքները: Վեդու ջրամբարի իշխման տակ գտնվող ընդհանուր շուրջ 4000 հա հողատարածքների ոռոգման ներտնտեսային ցանցի վերակառուցման աշխատանքների մեկնարկը նախատեսված է 2022 թվականին: Վարկային ծրագրի շրջանակներում կառուցվել է 22 մետր երկարությամբ պատվար: Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է հատկացված միջոցների 94.2%-ը՝ 4.3 մլրդ դրամ: Շեղումը շինարարական աշխատանքների մասով պայմանավորված է նախատեսված ապրանքների և սարքավորումների գնման գործընթացների ժամանակատարությամբ և արտարժույթի կանխատեսված ու փաստացի փոխարժեքների տարբերությամբ, իսկ ծրագրի խորհրդատվության և կառավարման ծախսերի մասով՝ խնայողություններով: Ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող՝ Վեդու ջրամբարի կառուցման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

օգտագործվել է հատկացված միջոցների 50.7%-ը՝ 125.8 մլն դրամ, որը պայմանավորված է ֆինանսավորման համաձայնագրի ստորագրման և վավերացման գործընթացների ժամանակատարությամբ:

Ոռոգում-ջրառ իրականացնող «Ջրառ» ՓԲԸ-ին նախատեսված աջակցության հիմնական նպատակն է կազմակերպության վնասների փոխհատուցման արդյունքում նրա տեխնիկական և ֆինանսական գործունակության ու ֆինանսական կայունացման ապահովումը, որի համար նախատեսված 1.4 մլրդ դրամն օգտագործվել է ամբողջ ծավալով:

Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության նպատակով նախատեսված 2.9 մլրդ դրամը նույնպես ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են 15 ջրօգտագործողների ընկերություններին: Ոռոգման համակարգին պետական ֆինանսական աջակցության շրջանակների հստակեցումը և տրամադրման մեխանիզմների բարեփոխումն էլ ավելի է կարևորվում աղքատության հաղթահարման միջոցառումների համատեքստում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոռոգման ջրի կանոնավոր հասանելիությունը զգալիորեն նվազեցնում է աղքատության ռիսկը գյուղական բնակավայրերում:

Ոռոգման համակարգի առողջացման միջոցառման նպատակն է ոռոգման ծառայությունների արդյունավետության բարձրացումը, ծառայությունների մատուցման շարունակականության ու մատչելիության ապահովումը, ոռոգման ջրի համակարգի ընկերությունների ֆինանսական կենսունակության և կայունության բարելավումը, ոռոգման համակարգերի և ենթակառուցվածքների պահպանումն ու արդիականացումը, ինչպես նաև, ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների հետագա հզորացումը: Միջոցառման շրջանակներում ոռոգման համակարգի 15 ընկերություններին 2021 թվականի պետական բյուջեից հատկացված 5.5 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

2020 թվականի համեմատ Ոռոգման համակարգի առողջացման ծրագրի ծախսերն աճել են 7.9%-ով՝ կամ 1.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ոռոգման համակարգի առողջացմանն աջակցության, ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցության, ֆրանսիայի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացվող Վեդու ջրամբարի կառուցման վարկային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի և ջրային տնտեսության հիդրոտեխնիկական սարքավորումների տեղադրման աշխատանքների գծով հատկացումների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում Ճանապարհային ցանցի բարելավման ծրագրին ուղղվել է շուրջ 60.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 91.1%-ը: Շեղումը հիմնականում

պայմանավորված է պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և արտաքին աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի կատարողականով:

Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման միջոցառման շրջանակներում 2021 թվականին իրականացվել են առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող 218.5 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ, որից 120.7 կմ՝ միջապետական, 79.3 կմ՝ հանրապետական, 18.5 կմ՝ տեղական նշանակության (այդ թվում՝ 2020-2021թթ. փոխանցիկ՝ 34.8 կմ), իսկ 2021-2022 թվականների փոխանցիկ (25.4 կմ ընդհանուր երկարությամբ) և 2021 թվականից անավարտ մնացած (29.0 կմ ընդհանուր երկարությամբ) ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքները կավարտվեն և շահագործման կիանձնվեն 2022 թվականին: Միաժամանակ, հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված՝ բնակչության անվտանգությունն ու կենսական կարիքներն ապահովելու նպատակով, 2021 թվականին ՀՀ Սյունիքի մարզում իրականացվել են այլընտրանքային ճանապարհների կառուցման և վերակառուցման համար անհրաժեշտ աշխատանքներ: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 94.7%-ը՝ 25.8 մլրդ դրամ: Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ որոշ ճանապարհահատվածների ավարտական ակտերն ընդունող հանձնաժողովի կողմից չեն ընդունվել, եղանակային անբարենպաստ պայմաններից ելնելով աշխատանքներն ընդհատվել են և ամբողջությամբ չեն ավարտվել, ինչպես նաև նրանով, որ որոշ օբյեկտների պայմանագրային գումարի 5 տոկոսը և որոշ պայմանագրերի ժամկետների երկարացման հետևանքով հեղինակային և տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման համար նախատեսված գումարները չեն վճարվել:

Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում իրականացման ընթացքում է գտնվել Թալին-Լանջիկ և Լանջիկ-Գյումրի ճանապարհահատվածների կառուցումը:

Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի Տրանշ 2-ի՝ Աշտարակ-Թալին 42 կմ հատվածի վերակառուցման գործող ծրագրի (ԱԶԲ-ի վարկ) շրջանակներում 2021 թվականին ավարտվել են 8 կմ (կմ 29+600-կմ 37+545) հատվածի առկա նախագծի լրամշակման և նոր մրցութային փաստաթղթերի մշակման աշխատանքները: Հայտարարվել է կապալառուների ընտրության միջազգային բաց մրցույթ, սկսվել են 34 կմ հատվածի (կմ 37+545-կմ 71+500) նախագծի և նոր մրցութային փաստաթղթերի մշակման աշխատանքները:

Տրանշ 3-ի՝ Թալին-Գյումրի 46.2 կմ հատվածում 2021 թվականի ընթացքում կատարվել է մոտ 16 կմ երկշերտ ասֆալտի տեղադրում, 9 կմ երկշերտ ասֆալտի տեղադրում: Լանջիկ-Գյումրի՝ շուրջ

27.5 կմ հատվածում կատարվել է մոտ 15 կմ երկշերտ ասֆալտի տեղադրում, 10 կմ երկշերտ ասֆալտի տեղադրում:

Տրանշ 4-ի՝ Քաջարան-Ազարակ (Իրանի սահման) հատվածի վերակառուցման գործող ծրագրի շրջանակներում Քաջարան-Ազարակ (Իրանի սահման) շուրջ 45 կմ ընդհանուր երկարությամբ հատվածի համար խորհրդատու ընկերության կողմից իրականացվել են նախագծման աշխատանքներ: Շարունակվել են Սիսիան-Քաջարան ճանապարհահատվածի կառուցման ֆինանսավորման վերաբերյալ բանակցությունները միջազգային ֆինանսական կառուցների հետ: Իրականացվել են նաև Քաջարանի թունելի կառուցման նախագծման աշխատանքները: Համաձայն նախագծի նախատեսվում է կառուցել շուրջ 7.2 կմ երկարությամբ նոր թունել և դրա մոտեցումները (շուրջ 4 կմ):

Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման ծրագրի՝ տարբեր դրույթների աջակցությամբ իրականացվող միջոցառումների շրջանակներում օգտագործվել է 10.1 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 79.3%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիր, Տրանշ 3» միջոցառման ծախսերում, որոնք կազմել են շուրջ 3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 64%-ը՝ պայմանավորված ԵՆԲ-ին 2021 թվականի օգոստոսին ներկայացված ֆինանսավորման հայտը չֆինանսավորվելու հանգամանքով (միջոցները հատկացվել են 2022 թվականի հունվարին):

Միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայությունների շրջանակներում 2021 թվականին իրականացվել են ՀՀ պետական նշանակության ավտոճանապարհների պահպանում և շահագործում, միջին նորոգման աշխատանքներ (նորոգվող ճանապարհահատվածների ընդհանուր երկարությունը (77.423 կմ), ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և տրանսպորտային օբյեկտների ընթացիկ ամառային (2003.9 կմ) և ընթացիկ ձմեռային (2387.4 կմ), ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող և առանձին պահպանման հանձնվող թունելների (3 հատ), կամուրջների (5 հատ) և մետաղական արգելափակությունների պահպանման և վերականգնման (720.6 կմ) աշխատանքներ: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 9.7 մլրդ դրամ կամ ծրագրի 94.3%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով 2 օբյեկտների շինարարական աշխատանքների հետաձգմամբ:

Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում կատարվել են հողային, հորատապայթեցման, ջրահեռացման խողովակների, հենապատերի և մայթերի կառուցման,

հաղորդակցուղիների տեղափոխման, ինչպես նաև ասֆալտապատման աշխատանքներ, կառուցվել է արտաքին լուսավորության նոր ցանց ճանապարհի Ալավերդի քաղաքային հատվածում, վերակառուցվել է շուրջ 5.9 կմ ջրագիծ, սկսվել է ճանապարհի կմ 50+700-ում գտնվող 2 կամուրջների վերակառուցումը: Ավարտվել և շահագործման են հանձնվել <-8 հանրապետական ճանապարհի և Մ-5 Երևան-Արմավիր-Թուրքիայի հետ սահման միջապետական ճանապարհի վրա նախանշված 9 վտանգավոր կետերի անվտանգության հետ կապված աշխատանքները: Մ-2 և Մ-4 միջապետական ճանապարհների վրա նախանշված 9 վտանգավոր կետերի անվտանգության հետ կապված աշխատանքներն ընթացքի մեջ են: Շրագրի՝ տարբեր դոնորների աջակցությամբ իրականացվող միջոցառումների շրջանակներում օգտագործվել է 6.6 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 93.5%-ը: Տարբերությունը պայմանավորված է նրանով, որ խորհրդատունների կողմից դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների դիմաց հաշիվները ներկայացվել են տարեվերջին, որի արդյունքում միջոցները հատկացվել են 2022 թվականի հունվարին, ինչպես նաև 2021 թվականի օգոստոսին ներկայացված ֆինանսավորման հայտը ԵՆԲ-ի կողմից 2022 թվականի փետրվարին ֆինանսավորելու հանգամանքով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում 2021 թվականին շարունակվել են << Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում 2020 թվականին մեկնարկած շուրջ 67.8 կմ ընդհանուր երկարությամբ թվով 12 ճանապարհների շինարարական աշխատանքները: Հիմնանորոգվել և շահագործման են հանձնվել վերը նշված 12 ճանապարհներից 10-ը (ընդհանուր 55.84 կմ երկարությամբ): Մնացած երկուսը (12 կմ) նախատեսվում է շահագործման հանձնել մինչև ծրագրի ավարտը՝ 2022 թվականին: Շրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 5.4 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 90.8%-ը՝ իհմնականում պայմանավորված ծրագրի ժամկետների երկարաձգմամբ և նրանով, որ որոշ հաշվետվությունների դիմաց վճարումները տեղափոխվել են 2022 թվական:

2020 թվականի համեմատ ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 16.3%-ով կամ 8.5 մլրդ դրամով՝ իհմնականում պայմանավորված արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2021 թվականի ընթացքում Զրամադրակարարման և Զրահեռացման բարելավման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 89.5%-ը՝ ավելի քան 6.6 մլրդ դրամ: Շրագրի ծախսերի իհմնական մասն իրականացվել է արտաքին աջակցությամբ: Մասնավորապես՝ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ Զրամատակարարման և Զրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման երրորդ փուլի շրջանակներում օգտագործվել է 2.4 մլրդ

դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 85.5%-ը: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկային միջոցների գծով նախատեսված մասհանումներն ամբողջությամբ չեն կատարվել՝ պայմանավորված դրանց անհրաժեշտության բացակայությամբ: Այս ծրագրի շրջանակներում նախատեսվում է բարելավել ՀՀ Շիրակի, Լոռու, Արմավիրի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի՝ ընդհանուր թվով 11 քաղաքների և 37 գյուղերի (ծրագրի խնայողությունների հաշվին նախատեսվում է լրացուցիչ շինարարական աշխատանքներ կատարել նաև մի շարք այլ համայնքներում ևս) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերակառուցում: 2021 թվականին կնքվել են Շիրակի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի՝ ծրագրով նախատեսված համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման պայմանագրերը, որոնց մասով շինարարական աշխատանքները մեկնարկել են: Ծրագրին իրականացվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների վերականգնման ծրագրի երրորդ փուլի միջոցառման հետ համատեղ, որի շրջանակներում նախատեսված 2.9 մլրդ դրամ միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են:

Եվրոպական ներդրումային բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային ծրագրի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի վարկային և դրամաշնորհային բաղադրիչների՝ ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների հիմնանորոգման աշխատանքների շրջանակներում նորոգվել են 1.5 կմ երկարությամբ ջրագծեր, 1.2 կմ երկարությամբ մուտքագծեր, նորոգվել են 140 տնային միացումներ: Այդ նպատակով օգտագործվել է 384.6-ական մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 95.2%-ը և 98.1%-ը: Ծրագրված ցուցանիշների նկատմամբ շեղումները հիմնականում պայմանավորված են արտարժույթի՝ կանխատեսված ու փաստացի փոխարժեքների տարբերությամբ:

Նախորդ տարվա համեմատ Ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման ծրագրի ծախսերն աճել են 3.8 անգամ կամ շուրջ 4.9 մլրդ դրամով՝ պայմանավորված 2020 թվականին ծրագրի ցածր՝ 20% կատարողականով:

Քաղաքային զարգացման ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում օգտագործվել է ավելի քան 19.7 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 93%-ը: Ծրագրի կատարողականը պայմանավորված է հիմնականում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի և Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիսնի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրի կատարողականով:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացվել են Բարաջանյան-Աշտարակ և Արգավանդ-Շիրակ ճանապահահատվածների հանգույցների կառուցման շինարարական աշխատանքները, շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողությունը, ավտոբուսային հավաքակայանի նախագծման աշխատանքները, ճանապարհահատվածի ազդեցության գոտում գտնվող գույքերի չափագրումը, գնահատումը և հողի օտարման ու տարաբնակեցման ծրագրի կազմումը, այլ ինժեներական և բնապահպանական հետազոտությունները։ Ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են ավելի քան 8.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 92.8%-ը, որը հիմնականում պայմանավորված է բնակչության հետ առկա դատական վեճերի և համավարակի պատճառով աշխատանքների դանդաղ ընթացքով։

Եվրոպական միության հարևանության ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարվել են դրենաժային թունելի երկարացման և մետրոյի թունելների ամրակացի հետևում դատարկությունների լցոնման աշխատանքներ։ Ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 33%-ը՝ 153.8 մլն դրամ, որը պայմանավորված է կապալառու կազմակերպության թերի աշխատանքով։

ՎՀԵԲ-ի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագրի շրջանակներում 2021 թվականին ամբողջությամբ բարեկարգվել, հիմնանորոգվել, կահավորվել և արդիականցվել է Գյումրի քաղաքի փողոցների 25.5 կմ երկարությամբ ճանապարհահատված՝ իրենց հարակից մայթերով, փողոցների անձրևաջրերի հեռացման 2 համակարգի հիմնանորոգմամբ և փողոցային լուսավորության համակարգով՝ լուսակետ հենայունով։ Ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 93.1%-ը։ Շեղումը հիմնականում պայմանավորված է որոշ կատարողական ակտեր ՎՀԵԲ-ի կողմից 2022 թվականին ֆինանսավորվելու հանգամանքով։

Նախորդ տարվա համեմատ Քաղաքային զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 18%-ով կամ 3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող քաղաքային ենթակառուցվածքների և քաղաքի կայուն զարգացման ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով և հաշվետու տարում տրանսպորտային համակարգերի արդյունավետության բարելավման միջոցառման շրջանակներում Երևան համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում ձեռքբերված ZHONGTONG մակնիշի թվով 211 տրանսպորտային միջոցների ներմուծման արդյունքում առաջացած

ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված հարկային պարտավորությունների վճարման համար 2.2 մլրդ դրամի չափով միջոցների հատկացմամբ:

Տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 98%-ը՝ 81.2 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրման համար պետական աջակցության ծախսերի կատարողականով: Սուբվենցիոն ծրագրերն ուղղված են համայնքներում կապիտալ ներդրումներին, մասնավորապես՝ համայնքներում փողոցների, այգիների, պուրակների, խաղահրապարակների բարեկարգմանը, համայնքային շենքերի, մշակութային տների, մանկապարտեզների, հանդիսությունների սրահների կառուցմանն ու նորոգմանը, խմելու, կոյուղու, ռոռոգման համակարգերի կառուցմանն ու նորոգմանը, գիշերային լուսավորության անցկացմանը, բնակավայրերի գազաֆիկացմանը, բազմաթափառ շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի վերանորոգմանը, գյուղատնտեսական և կոմունալ ծառայությունների համար մեթենասարքավորումների, ինչպես նաև գույքի ձեռքբերմանը: Նշված միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 89.5%-ը կամ 12.3 մլրդ դրամ՝ պայմանավորված նրանով, որ համավարակային իրավիճակով պայմանավորված՝ որոշ սուբվենցիոն ծրագրեր թերի են կատարվել, և համայնքների կողմից համապատասխան ավարտական փաստաթղթեր չեն ներկայացվել, ինչպես նաև եղանակային անբարենպաստ պայմաններով, որոնց արդյունքում չափարտված սուբվենցիոն ծրագրերի ժամկետները երկարաձգվել են: Նախատեսված 265 համայնքից փաստաթղթերը ներկայացվել են 225-ի կողմից:

Տարածքային զարգացման ծրագրին հատկացված միջոցների հիմնական մասը՝ 64.6 մլրդ դրամը կազմել է տեղական ինքնակառավարման մարմիններին ֆինանսական աջակցությունը՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դուտացիաները և օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցման ծախսերը, որոնք նախատեսված ծավալով տրամադրվել են հանրապետության 502 համայնքներին:

Նախորդ տարվա համեմատ Տարածքային զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 7.7%-ով կամ 5.8 մլրդ դրամով: Աճը պայմանավորված է տեղական ինքնակառավարման մարմիններին ֆինանսական աջակցության ծախսերի 16.6% (9.2 մլրդ դրամ) աճով:

2021 թվականին ՀՀ ՏԿԵՆ պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերից է Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրը, որն իրականացվել է ԱԶԲ-ի աջակցությամբ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ շինարարական

պայմանագրով նախատեսված կանխավճարը չի վճարվել՝ կապալառովի կողմից բանկային երաշխիքն ուշացումով ներկայացվելու պատճառով։ Ծրագիրն օժանդակում է Աղետների ռիսկի նվազեցման ազգային ծրագրի իրականացմանը՝ բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը, որպեսզի նվազեցվեն դպրոցներում հնարավոր զոհերը և վնասները երկրաշարժերի ժամանակ։ Ծրագրի շրջանակներում շինարարական աշխատանքներ են տարվել անավարտ 20 դպրոցներում, աշխատանքներն ավարտին են հասցել 1 դպրոցում, մշակվել է 10 նոր նախագիծ։ Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 5.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 92.6% կատարողական։

2020 թվականի համեմատ Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 11.5%-ով կամ 584.1 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող դպրոցների սեյսմիկ պաշտպանության ծրագրի շրջանակներում ՀՀ դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումների գծով ծախսերի աճով։

2021 թվականին *Սոցիալական ներդրումների* և փեղական զարգացման ծրագրի իրականացման համար օգտագործված գումարի շրջանակներում Կողք համայնքում տեղադրվել և արդիականացվել է տրանսֆորմատորային կայանը։ Տարբեր համայնքների համար գնվել են 44 միավոր մեքենա և գյուղատնտեսական տեխնիկա, ինչպես նաև 150 աղբի մետաղյա կոնտեյներ։ Տեղադրվել է 16 ֆոտովոլտային կայան։ ՀՀ պետական բյուջեից տվյալ ծրագրին հատկացվել էր 2.3 մլրդ դրամ, որի դիմաց կատարված ծախսերը կազմել են շուրջ 2.4 մլրդ դրամ՝ ապահովելով 102% կատարողական։ Շեղումը հիմնականում պայմանավորված է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցությամբ իրականացվող Տեղական ինքնակառավարման բարեփոխումների դրամաշնորհային ծրագրի կատարողականով։ Նշված ծախսերը կազմել են 699.2 մլն դրամ դրամ՝ նախատեսված 503.7 մլն դրամի դիմաց՝ պայմանավորված նրանով, որ ֆոտովոլտային կայանների տեղադրումը նախատեսված չէր ընթացիկ տարվա պլաններով, և իրականացվել է նախորդ տարվա տնտեսումների հաշվին։ 2020 թվականի համեմատ տվյալ ծրագրի ծախսերն աճել են 3.1 անգամ կամ 473.2 մլն դրամով։

Հաշվետու տարում Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում սկսվել են շինարարական աշխատանքներ 6 օբյեկտներում, գնվել և ՀՀ տարբեր մարզերի համայնքներին է տրվել 21 միավոր տեխնիկա, և տեղադրվել է 11 ֆոտովոլտային կայան։ Ծրագրի ծախսերը կազմել են 1.5 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 91.7%-ը։ Շեղումը պայմանավորված է նրանով, որ որոշ շինանյութերի գների կտրուկ աճի

պատճառով շինարարական աշխատանքների ընթացքը դանդաղել է, որի հետևանքով մանկապարտեզների շինարարությունը չի ավարտվել, և հետևաբար դրանք պատրաստ չեն եղել կահույք ընդունելու: 2020 թվականի համեմատ տվյալ ծախսերը նվազել են 40.6%-ով կամ ավելի քան 1 մլրդ դրամով:

2020 թվականի համեմատ Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը նվազել են 15.1%-ով կամ 421 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տարածքային զարգացման հիմնադրամի ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքներում ջրագծերի, առողջապահության, կրթության, մշակույթի, հատուկ խնամքի և ենթակառուցվածքների ոլորտի վերականգնման և շինարարության աշխատանքների գծով ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 575.3 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 88.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի կոշտ թափոնների կառավարման դրամաշնորհային ծրագրի կատարողականով, որի շրջանակներում կատարված որոշ շինարարական աշխատանքների դիմաց վճարումների հայտը ներկայացվել է ՎՀԵԲ դեկտեմբերի վերջին: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում սանհիտարական աղբավայրի և երկու վերաբեռնման կայանների կառուցման համար հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Թունել Սադ Արիանա» ՓԲԸ-ի կողմից իրականացվել են Հրազդան համայնքում կառուցվող նոր սանհիտարական աղբավայրի տարածքի հարթեցման աշխատանքները, ընթացքում են աղմինիստրատիվ շենքի, աղբահանության մեթենաների կայանատեղիի, ջրի ռեզերվուարների, աղբավայրի տարածքի մուտքի, տարածքի ցանկապատման, վտանգավոր թափոնների պահեստի շինարարական աշխատանքները, ինչպես նաև կատարվել են նոր ճանապարհային հանգույցի շինարարական աշխատանքները, Ակունք և Մարտունի համայնքներում վերաբեռնման կայանների կառուցապատման և տարածքների առանձնացման համար բետոնե պատերի կառուցման աշխատանքները: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 570.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ Կոշտ թափոնների կառավարման ծրագրի ծախսերն աճել են 7.4 անգամ կամ 497.9 մլն դրամով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ ՎՀԵԲ-ի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի մեկնարկը տեղի է ունեցել 2020 թվականի դեկտեմբերին:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով Փախստականների ինքնեզրմանն աջակցության ծրագրին հատկացվել է շուրջ 2.3 մլրդ դրամ, սակայն, շահառուների թվաքանակով պայմանավորված, ՀՀ կառավարության որոշմամբ նվազեցվել է մինչև 542.6 մլն դրամ, որը կատարվել է 99.4%-ով: Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցների հիմնական մասը՝ շուրջ 457.4 մլն դրամ (100%), տրամադրվել է 1988-1992 թվականներին Աղրբեջանից բռնագաղթած և Հայաստանի Հանրապետությունում ապաստանած փախստական 36 ընտանիքների բնակարանային ապահովմանը: 2020 թվականին այս նպատակով օգտագործվել էր 1.9 մլրդ դրամ, որը տրամադրվել էր 182 ընտանիքի: Այս միջոցառմանն ուղղված ծախսերի նվազմամբ է հիմնականում պայմանավորված Փախստականների ինտեգրմանն աջակցության ծրագրի ծախսերի 72.5%-ով (1.4 մլրդ դրամով) նվազումը:

Երկաթուղային ցանցի զարգացման ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսված 394.1 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Միջոցներն ուղղվել են ուղևորափոխադրումներից ստացված վնասի դիմաց «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ին սուբսիդիայի տրամադրմանը, որը նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել:

Որորան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարման ծրագրին 2021 թվականի պետական բյուջեից տրամադրվել է 225.2 մլն դրամ, որը կազմել է նախատեսված միջոցների 73.8%-ը: Նշված գումարից 205.8 մլն դրամն ուղղվել է Արփա-Սևան թունելի հավատարմագրային կառավարման միջոցառմանը, որն ամբողջությամբ կատարվել է: Շեղումը պայմանավորված է Արփա-Սևան ջրային համակարգի վերագինման միջոցառման կատարողականով, որը կազմել է 19.5% կամ 19.4 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Արփա-Սևան» ջրատարի փականային և ջրաչափական հանգույցների վերագինման ու արդիականացման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված մրցույթները երկու անգամ չեն կայացել՝ նախագծի արժեքից ավելի բարձր գնային առաջարկի պատճառով: Երրորդ անգամ հայտարարված մրցույթի արդյունքում հոկտեմբերին կնքվել է պայմանագիր, որի հիման վրա փոխանցվել է 19.4 մլն դրամ կանխավճար: Ներկայացված կատարողական ակտը հանձնաժողովի կողմից ուսումնասիրության արդյունքում չի ընդունվել՝ հայտնաբերված թերությունների պատճառով: Կապալառու ընկերության կողմից թերությունների վերացումից հետո կատարողական ակտը ներկայացվել է 2022 թվականի հունվարին: Նախորդ տարվա համեմատ Որոտան-Արփա-Սևան թունելի ջրային համակարգի կառավարման ծրագրի ծախսերը նվազել են 1.5%-ով (3.4 մլն դրամով): Պայմանավորված 2020 թվականին Արփա-Սևան ջրային համակարգի տեխնիկական վիճակի բարելավման համար միջոցների հատկացմամբ, որը 2021 թվականին նախատեսված չէ:

Հաշվետու ժամանակահատվածում Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում նախատեսված՝ Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ իրականացվող «Կովկայան Էլեկտրահաղորդման ցանց I» Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/Ենթակայանների դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել Հայաստան-Վրաստան 400 կՎ օդային գիծը և համապատասխան Ենթակայանները։ Հաշվետու ժամանակահատվածում միջոցառման շրջանակներում կատարված վճարումներն իրականացվել են ծրագրի խորհրդատուի կողմից մատուցված ծառայությունների, ինչպես նաև սահմանված կարգով նախատեսված հարկերի և տուրքերի դիմաց, օգտագործվել է 111.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 80.2%-ը։ Շեղումը պայմանավորված է արտադրույթի՝ կանխատեսված ու փաստացի փոխարժեքների տարբերությամբ և գլխավոր կապալառուների ընտրության մրցութային փաստաթղթերի վերանայման ու վերշնականացման գործընթացի իրականացմամբ։

Պետական գույքի կառավարման ծրագրի գծով փաստացի ցուցանիշը կազմել է -812.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի -181%-ը՝ պայմանավորված ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ծրագրվածից ավել մուտքերով։ Մասնավորապես 2021 թվականի ընթացքում Պետական գույքի կառավարման ծրագրի շրջանակներում կատարվել են 1.3 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.5%-ը, որը պայմանավորված է խնայողություններով։ Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից ստացվել է 2.1 մլրդ դրամ՝ 2.5 անգամ գերազանցելով կանխատեսված ցուցանիշը։ Նախորդ տարվա ցուցանիշի համեմատ Պետական գույքի կառավարման ծրագրի ծախսերը նվազել են 16.3%-ով՝ պայմանավորված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գույք առանձնացնելիս գույքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման Ենթակա շահութահարկի գծով կամ շրջանառության հարկի գծով պարտավորությունների կատարման ծախսերի նվազմամբ։ Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերն աճել են 36.8%-ով։

ՀՀ առողջապահության նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել են 12 ծրագրեր, որոնց տրամադրվել է 157.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.2%-ը։ 2020 թվականի համեմատ ՀՀ ԱՆ ծախսերն աճել են 11.4%-ով կամ 16.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Սոցիալապես անապահով ու առանձին խմբերի անձանց բժշկական օգնության և Հանրային առողջության պահպանման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով։

Այլուսակ 20. 2021թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մին դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	141,778.9	159,190.6	157,909.7	99.2	111.4	16,130.8
Հանրային առողջության պահպանում	34,356.0	41,118.1	40,997.1	99.7	119.3	6,641.1
Սոողության առաջնային պահպանում	27,032.7	28,593.1	28,444.1	99.5	105.2	1,411.4
Մոր և մանկան առողջության պահպանում	16,970.7	19,271.9	19,245.7	99.9	113.4	2,275.1
Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության պահպանում	15,110.8	17,395.0	17,340.8	99.7	114.8	2,230.0
Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն	25,982.9	34,410.0	34,066.2	99.0	131.1	8,083.3
Այլ ծրագրեր	22,325.9	18,402.5	17,815.7	96.8	79.8	(4,510.2)

Հաշվետու տարում շուրջ 41 մլրդ դրամ տրամադրվել է Հանրային առողջության պահպանման ծրագրին՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.7%-ը: Նախորդ տարվա համեմատ Հանրային առողջության պահպանման ծրագրի ծախսերն աճել են 19.3%-ով կամ 6.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Հայաստանի Հանրապետությանում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման, վերահսկման, բուժման և այլ համալիր միջոցառումների իրականացում՝ մեկուսացած անձանց նմուշառման կազմակերպում, մեկուսացումից դուրս գալու և ինքնամեկուսացման օրերի վերաբերյալ ցուցաների կազմում և տրամադրում ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնաճյուղերին: Միջոցառման համար նախատեսված 27.7 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 4.7%-ով կամ 1.3 մլրդ դրամով՝ պայմանավորված ծրագրի նկատմամբ մեծ պահանջարկով, մատուցված ծառայությունների ծավալի և հիվանդների թվի աճով:

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID) կանխարգելմանն ուղղված՝ պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումների շրջանակներում ձեռք է բերվել պատվաստանյութի 1845680 չափաբաժին (1 բնակչի համար 2 դեղաչափ)՝ կանխատեսված 1817400-ի դիմաց: Պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով օգտագործվել է 7.4 մլրդ դրամ

Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID) կանխարգելմանն ուղղված՝ պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումների շրջանակներում ձեռք է բերվել պատվաստանյութի 1845680 չափաբաժին (1 բնակչի համար 2 դեղաչափ)՝ կանխատեսված 1817400-ի դիմաց: Պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով օգտագործվել է 7.4 մլրդ դրամ

կամ ծրագրված ցուցանիշի 98.8%-ը: Շեղումը պայմանավորված է բանակցությունների արդյունքում գների նվազմամբ, ինչպես նաև արտարժույթի կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ: Նախորդ տարվա համեմատ Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելմանն ուղղված՝ պատվաստանյութի ձեռքբերման միջոցառումների իրականացման գծով ծախսերն աճել են 8.3 անգամ կամ 6.5 մլրդ դրամով՝ պայմանավորված ծրագրի նկատմամբ մեծ պահանջարկով:

Իմունականխարգելման ազգային ծրագրի միջառման նպատակն էր ազգային օրացույցում ընդգրկված պատվաստումների ժամանակին և որակով իրականացումը: Միջոցառման շրջանակներում հաշվետու տարում հանրապետությունում պատվաստումային ծառայությունների որակը և անվտանգությունը բարձրացնելու, բուժաշխատողների շրջանում իմունականխարգելման վերաբերյալ անհրաժեշտ նվազագույն գիտելիքներն ամրապնելու նպատակով իրականացվել է իմունականխարգելման գործընթացի 1160 աջակցողական մշտադիտարկում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում:

Անցկացվել են առցանց դասընթացներ՝ «Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ կատարվող պատվաստումների հակացուցումներ» և «Սինտֆարմ» պատվաստանյութի կիրառման ուղեցույցի վերաբերյալ թեմաներով, որոնց մասնակցել են համապատասխանաբար 3700 և 4000 բուժաշխատողներ: << ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի, Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնի և Դեղերի փորձագիտական կենտրոնի մասնագետների կողմից անցկացվել են պատվաստումից հետո առաջացող հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերաբերյալ առցանց դասընթացներ:

Պատվաստումների անվտանգության ապահովման նպատակով իրականացվել է բժշկական կազմակերպությունների իմունականխարգելման կարինետների՝ անհետաձգելի օգնության միջոցներով հագեցվածության գնահատում, անաֆիլաքսիայի ախտորոշման և անհետաձգելի բուժօգնության ընթացակարգի վերաբերյալ տպագրական նյութերի բաշխում, առողջության առաջնային պահպանման բոլոր կազմակերպություններում պատվաստանյութերի պահուստի Էլեկտրոնային կառավարման համակարգի մշակում և ներդրում: Իրականացվել է COVID-19-ի դեմ պատվաստումների մուտքագրում «Արմեդ» Էլեկտրոնային համակարգ, և ստեղծվել է պատվաստված անձանց պատվաստման սերտիֆիկատի արտածման հնարավորություն «Արմեդ» առողջապահության Էլեկտրոնային համակարգից:

Պատվաստումների հասանելիության բարձրացման նպատակով իրականացվել են արտագնա/շարժական պատվաստումներ, ինչպես նաև սահմանափակ շարժունակությամբ անձանց կեցության վայրերում: Պատվաստումային կետերում իրականացվել է 60028 պատվաստում, իսկ

արտագնա պատվաստումային խմբերի միջոցով, այդ թվում նաև սահմանափակ շարժունակությամբ անձանց կեցության վայրերում՝ 40667 պատվաստում:

2021 թվականի զորակոչի ենթակա անձանց պատվաստումները ժամանակին և լիարժեք կազմակերպելու համար իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես՝ համագործակցություն հանրապետական և տարածքային գինկոմիսարիատի ներկայացուցիչների հետ, բժշկական կազմակերպություններում հաշվառված զորակոչի ենթակա անձանց պատվաստումային կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում՝ ըստ առանձին պատվաստումների, և հետպատվաստումային շրջանում առողջական վիճակի հսկողության 674 այց:

Կազմակերպվել են դասընթացներ բժիշկների և բուժքույրերի համար՝ «Իմունականիսարգելման գործնթացի կազմակերպումը և իրականացումը կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) համավարակի ընթացքում» և «Սեզոնային գրիպի դեմ պատվաստումներ» թեմաներով: Ապահովվել է բժշկական իմունակենսաբանական պատրաստուկների կենտրոնացված բաշխման գործընթացը, պատվաստանյութերի ու պատվաստման համար օժանդակ պարագաների անընդմեջ մատակարարումը: Պատվաստումների ազգային օրացուցում վերջնական ներդրվել են վեցավալենտ պատվաստումները՝ դիֆթերիայի, փայտացման, կապույտ հազի (ոչ բջջային), պոլիոմիելիտի, հեպատիտ Բ-ի, հեմոֆիլուս ինֆլուենզա Բ տիպի դեմ համակցված պատվաստումներով: Միջոցառման շրջանակներում 2021 թվականին իրականացվել է 801360 պատվաստում՝ նախատեսված 960000-ի և 2020 թվականի 818151-ի դիմաց:

2021 թվականին իմունականիսարգելման ազգային ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով 99.8% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 13.6%-ով կամ 373.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է իմունականիսարգելման ոլորտում գործող ենթածրագրերով, Արցախի Հանրապետության իմունականիսարգելման ծրագրի կարիքներով, պատվաստումների ազգային օրացուցով նախատեսված պատվաստանյութերի և համապատասխան օժանդակ պարագաների ծեռքբերմամբ, ինչպես նաև վեցավալենտ պատվաստումների վերջնական ներդրմամբ:

2021 թվականին բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ծեռքբերման միջոցառման նպատակն էր իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակների օջախներում, մանրէաբանական հետազոտությունների, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բոնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների, մալարիայի դեմ

պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում, էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով, ինչպես նաև ի հայտ եկած մարդուց մարդ փոխանցվող նոր հարուցչ՝ նոր կորոնավիրուսի (COVID-19) դեմ պայքարի և կանխարգելման ուղղությամբ մասնագիտացված շարունակական դիտարկումներ՝ վարակիչ հիվանդություններ փոխանցողների պոպուլյացիաների նկատմամբ ՀՀ ողջ տարածքում:

Միջոցառման շրջանակներում 2021 թվականին հակահամաճարակային միջոցառումների իրականացման նպատակով կատարվել են 1313956 հետազոտություններ՝ կանխատեսված 550000-ի և 2020 թվականի 792147-ի փոխարեն, վարակիչ օջախների ախտահանման 2307 ծառայություններ՝ կանխատեսված 5000-ի և 2020 թվականի 1984-ի փոխարեն: 2021 թվականին իրականացվել է ստացված պատվաստանյութերի 4050490 դեղաչափի արդյունավետ կառավարում՝ 2020 թվականի 965830-ի փոխարեն: Փաստացի արդյունքային ցուցանիշների գերազանցումը կանխատեսված և նախորդ տարվա ցուցանիշների նկատմամբ հիմնականում պայմանավորված է համաճարակային իրավիճակի արդյունքում փաստացի ներկրված պատվաստանյութերի և հետազոտությունների քանակի աճով, իսկ նվազումը՝ կորոնավիրուսային համավարակի պայքարի շրջանակներում կատարված ախտահանման աշխատանքներով և երկրում չորային տարածքների ավելացման հետևանքով վարակիչ օջախների թվի նվազմամբ:

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող 72 կազմակերպություններում իրականացվել է կորոնավիրուսային (COVID 19) հիվանդության ներիիվանդանոցային տարածման կանխարգելման նպատակով վարակի հսկողության կարողությունների համաճարակաբանական դիտարկում, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության 344980 դեպքերի տվյալների հաշվառում և գրանցում: Ազգային մակարդակում ստեղծվել է բժշկական կազմակերպություններում COVID-19-ով վարակված անձնակազմի՝ 7488 անձի տվյալների բազա, որի հիման վրա իրականացվել է 15 վերլուծություն: Առողջության առաջնային պահպանման օղակի 317 բժշկական կազմակերպություններում և 119 բժշկական կենտրոններում իրականացվել է վարակի հսկողության ծրագրերի գնահատում Առողջապահության համաշխարհային կազմակերպության գործիքի՝ (IPCAF)-ի միջոցով՝ բժշկական միջամտություններով պայմանավորված վարակների կանխարգելման առկա բացերը վեր հանելու, արդյունքները համեմատելու համար: Լրամշակվել են «Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վարման» և «Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի պատճառահետևանքային կապի գնահատման» ուղեցույցները: 2021 թվականի ընթացքում

Հայաստանի Հանրապետությունում չեն արձանագրվել կարմրուկի, կարմրախտի, դիֆթերիայի, պոլիոմիելիտի և փայտացման տեղական և բերովի դեպքեր:

2021 թվականին բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջապահության ծառայությունների ձեռքբերման նպատակով նախատեսված 2.3 մլրդ դրամն օգտագործվել է ամբողջությամբ, որը 14.8%-ով կամ 300 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված անձնակազմի տարբեր կատեգորիաների միջին աշխատավարձերի բարձրացմամբ, ինչպես նաև դեղերի և բժշկական պարագաների, բժշկական սարքերի ձեռքբերման և որոշ այլ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման ավելացմամբ:

2021 թվականին Առողջության առաջնային պահպանման ծրագրի շրջանակներում պետական բյուջեից օգտագործվել է ավելի քան 28.4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 5.2%-ով կամ 1.4 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ամբովատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների գծով ծախսերի աճով:

Առողջության առաջնային պահպանման ծրագրի ամբովատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների միջոցառման շրջանակներում իրականացվել է տեղամասային թերապևտի, տեղամասային մանկաբույժի, ընտանեկան բժշկի, բուժակ-մանկաբարձական կետերի քույրերի, դպրոցների աշակերտներին սպասարկող քույրերի, հոլիների, նախածննդյան և հետծննդյան հսկողություն իրականացնող մանկաբարձ-գինեկոլոգների, դիսպանսերային և նեղ մասնագետների կողմից բժշկական օգնություն և սպասարկում (ներառյալ՝ լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունները) հանրապետության ազգաբնակչությանը, Կառավարության համապատասխան որոշումներով հաստատված բնակչության խմբերին անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է դեղորայք: Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայությունների մասով ապահովվել է կենտրոնական բժշկական հանձնաժողովի 15 բժիշկ-փորձագետների, զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված 218 բժիշկ-փորձագետների և 21 բուժքույրերի աշխատավարձերի վճարում, ինչպես նաև նշված տարիքի անձանց փորձաքննության նպատակով հիվանդանոցային բուժիաստատություններ ուղեգրման ճանապարհածախսի փոխհատուցում: Հիվանդանոցային պայմաններում բնակչությանը մատուցվել են արտահիվանդանոցային բժշկական օգնության ծառայություններ:

Միջոցառման շրջանակներում բնակչության առողջության առաջնային պահպանման գծով կազմակերպություններում գրանցվել է 3077.4 հազար մարդ՝ բյուջեով նախատեսված 2951.7 հազարի և 2020 թվականի 3003.7 հազարի դիմաց, որից 18 և ավելի բարձր տարիք ունեցող

անձանց թիվը կազմել է 2364.8 հազար՝ բյուջեով նախատեսված 2333.6 հազարի և 2020 թվականի 2301.6 հազարի դիմաց, մինչև 18 տարեկան երեխաների թիվը՝ 712.6 հազար՝ բյուջեով նախատեսված 723.8 հազարի և 2020 թվականի 702.2 հազարի դիմաց, դպրոցում բժշկական օգնություն և սպասարկում է ստացել 385.2 հազար աշակերտ՝ նախատեսված 374 հազարի և 2020 թվականի 385.2 հազարի դիմաց, անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց փաստացի թիվը համապատասխանել է նախատեսվածին՝ կազմելով 1036871՝ 2020 թվականի 557525-ի դիմաց, հղիների նախածննդյան և հետծննդյան հսկողության ընթացքում իրականացվել են լաբորատոր-գործիքային ախտորոշիչ 701232 հետազոտություններ՝ նախատեսված 874000-ի և 2020 թվականի 733960-ի դիմաց: Փաստացի արդյունքային ցուցանիշների գերազանցումը կանխատեսվածների նկատմամբ պայմանավորված է Էլեկտրոնային առողջապահության միասնական համակարգում փաստացի հավաքագրված բնակչության թվաքանակով, 2020 թվականի ռազմական դրության հետևանքով Արցախից աշակերտների տեղափոխմամբ, իսկ կանխատեսվածից ցածր ցուցանիշները պայմանավորված են կորոնավիրուսի համավարակով, որի արդյունքում նվազել է ամբողատոր օղակ դիմելիությունը: Ամբողատոր-պոլիկլինիկական բժշկական օգնության ծառայությունների գծով ծախսերը կազմել են 27.8 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 4.7%-ով կամ 1.3 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է առաջնային օղակի կողմից մատուցվող ծառայությունների արդիականացմամբ, 15 տարեկան աղջկների առողջական վիճակի գնահատման նպատակով կատարվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծավալների ընդլայնմամբ, ինչպես նաև հղիների նախածննդյան հսկողության բարելավման շրջանակներում բարձր ռիսկի հղիներին ըստ ցուցումների լրացուցիչ լաբորատոր հետազոտությունների իրականացմամբ:

Հաշվետու տարում Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 19.2 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ Մոր և մանկան առողջության պահպանման ծրագրի ծախսերն աճել են 13.4%-ով կամ 2.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված երեխաներին բժշկական օգնության ծառայությունների գծով ծախսերի աճով:

Մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ծեռքբերման միջոցառման նպատակն է ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների դեպքերում բուժօգնության տրամադրումը: Միջոցառման շրջանակներում 2021 թվականին մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններից օգտվելու դեպքերի թիվը կազմել է 51631՝ կանխատեսված 52413-ի և 2020 թվականի 51698-ի դիմաց: 2021 թվականին ծնունդների թիվը կազմել է 36114՝

կանխատեսված 38250-ի դիմաց, իսկ կեսարյան հատումների թիվը՝ 13267՝ կանխատեսված 13500-ի դիմաց: Փաստացի արդյունքային ցուցանիշների շեղումը կանխատեսվածի և նախորդ տարվա նկատմամբ հիմնականում պայմանավորված է հիվանդների ցածր դիմելիությամբ: Հաշվետու տարում մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների ծեռքբերմանը հատկացվել է շուրջ 7 մլրդ դրամ, որն ամբողջությամբ օգտագործվել է, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել է 1%-ով (71.8 մլն դրամով):

Երեխաներին բժշկական օգնության ծառայությունների նպատակն է եղել մինչև 18 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության հիմնական և նորագույն թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների մատուցումը, հիվանդանոցային պայմաններում ախտորոշման ճշտումը: Պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում 2021 թվականին բուժօգնություն է ստացել 89889 հիվանդ՝ կանխատեսված 84313-ի և 2020 թվականի 75329-ի դիմաց՝ պայմանավորված կարճաժամկետ դեպքերի թվի աճով: 2021 թվականին ցերեկային ստացիոնար և կարճաժամկետ կամ փոքր ծավալի բուժօգնության դեպքերի թիվը կազմել է 8079՝ կանխատեսված 8249-ի դիմաց՝ պայմանավորված կորոնավիրուսի համավարակի պայմաններում հիվանդների ցածր դիմելիությամբ: Միջոցառման շրջանակներում մինչև 18 տարեկան երեխաներին տրամադրվել է հիվանդանոցային բուժօգնություն՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից: Հաշվետու տարվա ընթացքում երեխաներին բժշկական օգնության ծառայությունների ծեռքբերմանն ուղղվել է շուրջ 11.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.1%-ով կամ 2.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հիվանդների դիմելիության աճով:

Հաշվետու տարում Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 17.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.7%-ը: Ծրագրում ընդգրկված են հինգ միջոցառումներ: Ծրագրի շրջանակում իրականացվել է սիրտանոթային և նյարդային համակարգերի, աչքի հիվանդությունների, նյարդային խանգարումների, չարորակ նորագոյացությունների, թունավորումների, վնասվածքների, պարբերական հիվանդությունների վաղ կանխարգելում և արդյունավետ բուժում: Նախորդ տարվա համեմատ ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովման ծրագրի ծախսերն աճել են 14.8%-ով կամ 2.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված ուսուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների ծախսերի աճով:

Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայություններին հատկացված միջոցներով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության

և սպասարկման շրջանակներում 2021 թվականին իրականացվել է 151196 սեանս՝ կանխատեսված 177969-ի և 2020 թվականի 150519-ի դիմաց: Թերակատարումը պայմանավորված է շահառուներին տարվա ընթացքում տրամադրվող միջին սեանսների թվի նվազմամբ: Հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի անցկացման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.9% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.4%-ով կամ 338 մլն դրամով՝ պայմանավորված հեմոդիալիզի և պերիտոնիալ դիալիզի սեանսի արժեքի, ինչպես նաև հիվանդների քանակի աճով:

Անհետաձգելի բժշկական օգնության միջոցառման շրջանակներում մատուցվել են անհետաձգելի բժշկական օգնության, ինչպես նաև գլխուղեղի սուր և ենթասուր իշեմիկ կաթվածների թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայություններ: 2021 թվականին պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անհետաձգելի բուժօգնություն է ստացել 27414 հիվանդ՝ կանխատեսված 23934-ի և 2020 թվականի 26806-ի դիմաց: Փաստացի արդյունքային ցուցանիշի գերազանցումը կանխատեսվածի և նախորդ տարվա նկատմամբ հիմնականում պայմանավորված է մատուցվող բուժօգնության՝ միջինից ցածր գին ունեցող ծառայությունների տեսակարար կշռի աճով: Համաձայն <<ԱՆ կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի՝ գործում է համավճարի սկզբունքով փոխառության մեխանիզմը: Անհետաձգելի բժշկական օգնության ծախսերը կազմել են ավելի քան 3.5 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.3%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 12.1%-ով կամ 379 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հիվանդների թվի աճով:

Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում իրականացվում է քրոնիկ հոգեկան հիվանդների խնամք, հիվանդների փորձաքննություն, հարկադիր և սուր վիճակների բուժում և նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժում: Միջոցառման շրջանակներում 2021 թվականին բուժօգնություն է ստացել 7594 հիվանդ՝ կանխատեսված 7044-ի և 2020 թվականի 6145-ի դիմաց: Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության ծառայություններին հաշվետու տարում տրամադրվել է ավելի քան 3.3 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 11.3%-ով կամ 340.7 մլն դրամով՝ պայմանավորված պահպանման ծախսերի, ինչպես նաև հիվանդների թվի աճով:

Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում իրականացվել է չարորակ նորագոյացությունների համալիր,

Վիրահատական և ճառագայթային բուժում, չարորակ հիվանդությունների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնար պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և սիմպտոմատիկ բուժում։ Պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2021 թվականին բուժօգնություն է ստացել 36409 հիվանդ՝ կանխատեսված 34526-ի և 2020 թվականի 30837-ի դիմաց։ Հաշվետու տարում վիրաբուժական միջամտությունների թիվը կազմել է 7457՝ կանխատեսված 7000-ի դիմաց։ Կանխատեսվածի համեմատ դեպքերի փաստացի թվի գերազանցումը պայմանավորված է բուժօգնության՝ միջինից ցածր գին ունեցող ծառայությունների քանակի աճով։ Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով ծառայություններից օգտվելու դեպքերի թվի աճով։

Հաշվետու տարում 34.1 մլրդ դրամ է օգտագործվել *Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնության ծրագրի շրջանակներում՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99%-ը։ Ծրագրում ընդգրկված են իինգ միջոցառումներ։ Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 31.1%-ով կամ 8.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» և «Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայություններ» միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի աճով։*

Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնություն է ստացել 259873 հիվանդ՝ կանխատեսված 193500-ի և 2020 թվականի 150406-ի դիմաց։ Կանխատեսված և նախորդ տարվա համեմատ դեպքերի բարձր ցուցանիշը պայմանավորված է մատուցվող բուժօգնության՝ միջինից ցածր գին ունեցող, կարճաժամկետ ծառայությունների քանակի աճով։ 2021 թվականին ավելի քան 23.4 մլրդ դրամ է տրամադրվել սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին տրամադրվող բժշկական օգնության ծառայությունների ֆինանսավորմանը՝ ապահովելով 99.3% կատարողական։ Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 27.8%-ով կամ 5.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի սահմանափակումներով, որի հետևանքով շահառուները հանդիսացել են խոցելի խումբ, ուստի նվազել էր բուժհաստատություններ դիմելիությունը։

Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների գծով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն է մատուցվել 57361 հիվանդի՝ կանխատեսված 46738-ի և 2020 թվականի 32050-ի դիմաց: Հիվանդների փաստացի բարձր թիվը պայմանավորված է միջինից ցածր գին ունեցող ծառայությունների քանակի հարաբերական աճով, մասնավորապես՝ դժվարամատչելի հետազոտությունների քանակի ավելացմամբ: Միջոցառումն իրականացվում է չսահմանափակվող բյուջեի սկզբունքով: Զինծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար բժշկական օգնության ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 6.6 մլրդ դրամ՝ ապահովելով 98.1% կատարողական: 2020 թվականի համեմատ միջոցառման ծախսերն աճել են 99.6%-ով կամ 3.3 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված է 44-օրյա պատերազմին մասնակցած անձանց տրամադրվող բուժօգնությամբ, ինչպես նաև նշված շահառուներին վերականգնողական բուժօգնության ծառայությունների մատուցմամբ:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման գծով պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում 2021 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից հատուցվել է 28866 դեպք՝ կանխատեսված 11083-ի և 2020 թվականի 21537-ի դիմաց: Միաժամանակ, իրականացվել են սոցիալական փաթեթի 74111 շահառուների կանխարգելիչ քննություններ՝ կանխատեսված 72484-ի և 2020 թվականի 71804-ի դիմաց: Կանխատեսվածի համեմատ փաստացի բարձր արդյունքային ցուցանիշները պայմանավորված են հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնության և սպասարկման դեպքերի աճով, ինչպես նաև սոցփաթեթում նոր ծառայությունների ներդրմամբ: Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների ծախսերը կազմել են շուրջ 3.4 մլրդ դրամ՝ 98.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 9.8%-ով կամ 365.8 մլն դրամով զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ ապահովագրական կազմակերպությունների պայմանագրային գումարները հաշվարկվել են՝ հաշվի առնելով նրանց վնասաբերությունը, և կարող են տարբերվել բյուջեով նախատեսված գումարից:

ՀՀ ԱՆ կողմից իրականացվող այլ ծրագրերից Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավելության բարձրացման ծրագրի ծախսերը 2021 թվականին կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 89.5%-ը, ընդ որում գոեթե բոլոր միջոցառումներում արձանագրվել են շեղումներ: Ծրագրին ամբողջությամբ ֆինանսավորվել է արտաքին

աջակցությամբ իրականացվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում: Նախորդ տարվա համեմատ Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագրի ծախսերը նվազել են 36.3%-ով կամ 1.8 մլրդ դրամով: Վերջինս հիմնականում պայմանավորված է 2020 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ ՀՀ-ում կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելմանն ու բուժմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ, որոնց համար 2021 թվականին միջոցներ չեն նախատեսվել, ինչպես նաև Ասիական զարգացման բանկի միջոցներով Հայաստանի Հանրապետությունում COVID-19-ին արձագանքման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի նպատակն էր բարելավել մոր և մանկան առողջության պահպանման ծառայությունները և առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) օղակում ընտրված ոչ վարակիչ հիվանդությունների վաղ հայտնաբերումն ու վերահսկումը, ինչպես նաև ծրագրում ընդգրկված հիվանդանոցներում առողջապահական ծառայությունների որակը և արդյունավետությունը:

Ծրագրի ծառայությունների ճեղքերման շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են 178882 սքրինինգային հետազոտություններ՝ կանխատեսված 178000-ի փոխարեն: Փաստացի արդյունքային ցուցանիշը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով: Ամսական կտրվածքով այցելություններ են իրականացվել առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատություններ՝ սքրինինգների արդյունքների վերիֆիկացիայի/մշտադիտարկման նպատակով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի՝ շենքային պայմանների բարելավման բաղադրիչի շրջանակներում իրականացվել են ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային նոր մասնաշենքի շինարարական աշխատանքները, ինչպես նաև COVID-19 համավարակին հակազդելու նպատակով ճեղք են բերվել մեկ բժշկական թթվածին արտադրող կայան, ՀՀ Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցների արյան փոխներարկման բաժանմունքների համար արյան փոխներարկման 12 բժշկական սարքավորումներ և 2 արյան դոնորական բազկաթոռներ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման միջոցառման՝ շենքային պայմանների բարելավման բաղադրիչի շրջանակներում իրականացվել են ՀՀ Վայոց ձորի մարզի

«Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հիվանդանոցային նոր շենքի կառուցման աշխատանքները, իսկ ծառայությունների ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում՝ նշված շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման վարկային ծրագրի շրջանակներում 2021 թվականին ընդհանուր առմամբ օգտագործվել է շուրջ 1.4 մլրդ դրամ կամ ծրագրված միջոցների 87.2%-ը: Մասնավորապես՝ 306.2 մլն դրամ (նախատեսվածի 86.9%-ը) օգտագործվել է ծրագրի ծառայությունների ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում, 489.3 մլն դրամ (նախատեսվածի 88.2%-ը)¹ շենքային պայմանների բարելավման բաղադրիչի շրջանակներում, 556.6 մլն դրամ (նախատեսվածի 86.5%-ը)² լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շենքային պայմանների բարելավման բաղադրիչի շրջանակներում և 4.8 մլն դրամ (նախատեսվածի 75.3%-ը)³ լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի ծառայությունների ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է համավարակի արդյունքում խորհրդատվական ծառայությունների թերակատարմամբ, թափուր հաստիքների առկայությամբ, կատարված շինարարական ու տեխնիկական հսկողության աշխատանքների ծավալներով և ներկայացված կատարողական ակտերով, ինչպես նաև ծրագրված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային շարունակության ծրագրի նպատակն է տրամադրել տեխնիկական աջակցություն խորհրդատվության և հետազոտության կետերին ու լաբորատորիաներին՝ հակառետրովիրուսային և օպորտունիստական վարակների բուժման և կանխարգելման համար:

2021 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՄԻԱՎ վարակի հայտնաբերման և ախտորոշման համար նախատեսված թեստ-հավաքածուների ձեռքբերում,
- ՄԻԱՎ վարակի հակառետրովիրուսային բուժման համար նախատեսված դեղամիջոցների ձեռքբերում,
- ՄԻԱՎ վարակների բուժման համար նախատեսված դեղամիջոցների, ախտորոշիչ նյութերի և լաբորատոր ծախսանյութերի ձեռքբերում,
- ՄԻԱՎ-ի վերաբերյալ խորհրդատվության և հետազոտության (ԽՀ) կետերին ու լաբորատորիաներին տեխնիկական աջակցության տրամադրում,

- ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի վերաբերյալ մոնիթորինգի և գնահատման ազգային միասնական համակարգի հղորացում,
- ՀՀ ԱՆ կախվածությունների բուժման ազգային կենտրոնում, Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, Սյունիքի մարզային հոգենյարդաբանական դիսպանսերում, ինչպես նաև 9 քրեակատարողական հիմնարկներում մեթադոնային փոխարինող բուժման ծրագրի իրականացում,
- ՀՀ քրեակատարողական հիմնարկներում գտնվողների շրջանում ՄԻԱՎ-ի հետազոտության իրականացում:

Ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում հայտնաբերվել է ՄԻԱՎ-ի 410 դեպք: Հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ ՄԻԱՎ նկատմամբ խոցելի խմբերի շրջանում իրականացվել են 145000 հետազոտություններ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային շարունակության ծրագրի շրջանակներում օգտագործվել է 627.3 մլն դրամ՝ ապահովելով 100.3% կատարողական, որը պայմանավորված է ծրագրված և փաստացի փոխարժեքների տարրերությամբ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ծրագրերի հղորացման դրամաշնորհային ծրագրի նպատակն էր՝ ապահովել տուբերկուլյոզի բոլոր ձևերի որակյալ ախտորոշումը, բուժման մատչելիությունը, իրականացնել ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելման միջոցառումներ, աջակցել հակառետրովիրուսային և օպորտունիստական հիվանդությունների բուժման տրամադրմանը, ապահովել ախտորոշիչ լաբորատոր հետազոտությունների կատարումը և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի մոնիթորինգը, հղորացնել գնահատման համակարգը:

Ծրագրի՝ ծառայությունների ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում 2021 թվականի ընթացում «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- իրականացվել են վարակի վերահսկման ուժեղացման միջոցառումներ,
- տուբերկուլյոզով հիվանդներին բուժման խրախուման նպատակով տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ դրամային փոխանցումների տեսքով,
- ուղղակիորեն վերահսկվող բուժման ռազմավարության շրջանակներում, դեղորայքի ընդունումը բուժաշխատողի ներկայությամբ կազմակերպելու նպատակով հիվանդներին կամ բուժաշխատողներին տրամադրվել է տրանսպորտային ծախսերի փոխհատուցում,

- իրականացվել են պերիֆերիկ լաբորատորիաներից խորխի տեղափոխման, տուբերկուլոզային ծառայությունների մոնիթորինգի և գնահատման, հաշվետվական էլեկտրոնային համակարգի կիրարկման միջոցառումներ,
- բժշկական (տեղաշարժման) հակացուցումներ ունեցող հիվանդների համար կազմակերպվել է տնային բուժում,
- տրամադրվել է աջակցություն Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝ խոցելի խմբերի շրջանում տուբերկուլոզի ակտիվ հայտնաբերման աշխատանքների իրականացման նպատակով,
- տուբերկուլոզի բուժման համար ներմուծվել են անհրաժեշտ քանակով հակատուբերկուլոզային դեղորայք, բժշկական ծախսանյութեր և ժամանակակից ախտորոշիչ սարքավորումներ, գնվել են լաբորատոր և վարակի վերահսկման պարագաներ:

Ծրագրի՝ առողջապահական համակարգի կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման բաղադրիչի շրջանակներում ձեռք են բերվել 10 պացիենտի մոնիթոր, թթվածնի մատակարարման (CPAP) 10 սարքեր, 1 թթվածնային կայան:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի ծրագրերի հզորացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2021 թվականին ընդհանուր առմամբ օգտագործվել է 499.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 95.5%-ը: Մասնավորապես՝ 361.9 մլն դրամ է տրամադրվել (նախատեսվածի 97%-ը) ծրագրի ծառայությունների ձեռքբերման բաղադրիչի շրջանակներում և 137.9 մլն դրամ (նախատեսվածի 92%-ը): ՀՀ պետական առողջապահական համակարգի կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման բաղադրիչի շրջանակներում: Ծրագրի կատարողականը հիմնականում պայմանավորված է գնումների գործընթացով՝ թորակոսկոպիկ վիրաբուժական հավաքածուի և ապահովագրական ծառայությունների ձեռքբերման մրցույթների չկայացմամբ՝ մասնակիցների կողմից ներկայացված բարձր գնային առաջարկի հետևանքով, ինչպես նաև արտարժույթի կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տրամադրվել է տեխնիկական աջակցություն տուբերկուլոզի դեղորայքի կառավարման ոլորտում, հայտնաբերվել է նոր և կրկնակի տուբերկուլոզի 450 դեպք, 58 անգի մոտ հայտնաբերվել են լաբորատոր հաստատում ունեցող ռիֆամպիցին-կայուն տուբերկուլոզի և/կամ բազմադեղակայուն տուբերկուլոզի դեպքեր: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 398.0 մլն դրամ՝ ապահովելով 99.5% կատարողական:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ԶԻԱՀ վարակի կանխարգելում թմրամիջոցներ օգտագործողների շրջանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում իրականացվել է մեթադոնային փոխարինող բուժում, բուժման դեպքերի նախատեսված և փաստացի թիվը կազմել է 500, օգտագործվել է նախատեսված միջոցների 100.4%-ը՝ 44.2 մլն դրամ՝ պայմանավորված ծրագրված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզով հիվանդներին հոգեբանական աջակցության տրամադրման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 50 դեղակայուն տուբերկուլյոզով հիվանդների և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվել է հոգեբանական աջակցություն: Ծախսերը կազմել են 39.7 մլն դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը:

Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելում, ախտորոշում և բուժում քրեակատարողական համակարգում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ազատազրկված 2000 անձանց շրջանում իրականացվել է ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված իրազեկում և արագ թեստավորման իրականացում, տրամադրվել է նախաթեստային և հետթեստային խորհրդատվություն, ինչպես նաև ավիտոնատիպ նյութերից կախվածությամբ ներերակային թմրամիջոցներ գործածող 160 անձանց՝ մեթադոնային բուժում: Միջոցառման ծախսերը կազմել են 11.3 մլն դրամ կամ նախատեսվածի 100.2%-ը՝ պայմանավորված ծրագրված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ:

Ծրագրի բժշկական օգնության ծրագրի նպատակն է՝ շտապ և անհետաձգելի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը հիվանդանոցային բժշկական կազմակերպություններում՝ անկախ սոցիալական կարգավիճակից: Ծրագրի շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում սպասարկվել է 571.4 հազար կանչ՝ կանխատեսված 559.4 հազարի և 2020 թվականի 592.4 հազարի դիմաց, օդային ճանապարհով սանիտարական ավիացիայի 86 կանչ՝ կանխատեսված 100-ի դիմաց, մարզից երևան կամ այլ տարածաշրջանային հիվանդանոցներ տեղափոխվել է 16777 հիվանդ՝ կանխատեսված 16427-ի դիմաց: Փաստացի արդյունքային ցուցանիշների գերազանցումը կանխատեսվածների նկատմամբ հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով: Ծրագրի բժշկական օգնության ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 4.9 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ շտապ բժշկական օգնության ծրագրի ծախսերը նվազել են 9.8%-ով կամ 537.4 մլն դրամով՝ պայմանավորված առանձին կազմակերպություններում կանչերի թվի կրճատմամբ, ինչպես

նաև 2020 թվականին շտապ օգնության մեջնաներով հազեցվածության բարելավման նպատակով 298.2 մլն դրամի հատկացմամբ, որի համար 2021 թվականին միջոցներ չեն նախատեսվել:

ՀՀ արդարադարպության նախարարությանը 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 19.6 մլրդ դրամ՝ կազմելով տարեկան ծրագրի 83.3%-ը: Նախարարության պատասխանատվությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 9 ծրագրի: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում», «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» և «Քրեակատարողական ծառայություններ» ծրագրերի կատարողականով: 2020 թվականի համեմատ ՀՀ արդարադատության նախարարության ծախսերն աճել են 8.4%-ով կամ 1.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Հարկադիր կատարման ծառայություններ», «Քրեակատարողական ծառայություններ», «Դատական և հանրային պաշտպանություն» և «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում» ծրագրերի գծով ծախսերի աճով, ինչպես նաև 2021 թվականին «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» նոր ծրագրի ֆինանսավորմամբ:

Աղյուսակ 21. 2021թ. ՀՀ արդարադարպության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողա- կանը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	18,123.7	23,564.8	19,640.8	83.3	108.4	1,517.1
Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում, խորհրդատվության և մոնիթորինգի իրականացում	1,557.6	1,773.6	1,731.0	97.6	109.7	153.3
Քրեակատարողական ծառայություններ	11,885.0	12,882.5	12,231.6	94.9	102.9	346.6
Հարկադիր կատարման ծառայություններ	2,354.2	2,778.0	2,713.3	97.7	115.3	359.1
Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում	17.0	2,696.0	253.7	9.4	1492.5	236.7
Այլ ծրագրեր	2,289.9	3,434.6	2,711.2	78.9	118.4	421.3

Հաշվետու տարում Արդարադարպության ոլորտում քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման, խորհրդադպության և մոնիթորինգի իրականացման ծրագրին տրամադրվել է ավելի քան 1.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքներով, նախատեսվածից ցածր գներով ծառայությունների և

ապրանքների ձեռքբերմամբ, ինչպես նաև արխիվացման ու թվայնացման նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ չկատարվելու հանգամանքով: 2020 թվականի համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 9.7%-ով (153.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Արդարադատության ոլորտում քաղաքականության, խորհրդատվության, մոնիթորինգի, գնման և աջակցության իրականացում» միջոցառման ծախսերի 6.9% (100.6 մլն դրամ) և ԱՄՆ ՄՀԳ աջակցությամբ իրականացվող «Աջակցություն օրենսդրության զարգացման և իրավական հետազոտությունների կենտրոնի գործունեությանը» դրամաշնորհային ծրագրի ծախսերի 44.2% (23.4 մլն դրամ) աճով, ինչպես նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կանոնադրական կապիտալում պետական մասնակցության նվազեցման ճանապարհով ակտիվների կազմից գոյք առանձնացնելիս գոյքն ստացող պետական կառավարչական հիմնարկի կողմից մատակարարին վճարման ենթակա ԱԱՀ-ի պարտավորության կատարման նպատակով միջոցների հատկացմամբ, որը կազմել է 23.2 մլն դրամ (100%):

Քրեականարողական ծառայությունների ծրագրին հաշվետու տարում տրամադրվել է 12.2 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 94.9%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է «Քրեականարողական ծառայություններ» միջոցառման, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության քրեականարողական և պրոբացիայի ծառայությունների կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման ծախսերում: Նախորդ տարվա համեմատ Քրեականարողական ծառայություններ ծրագրի ծախսերն աճել են 2.9%-ով (346.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Քրեականարողական ծառայություններ» միջոցառման ծախսերի 2.6% (275.8 մլն դրամ) աճով):

Հատկացումների գերակշիռ մասն ուղղվել է «Քրեականարողական ծառայություններ» միջոցառմանը, որի ծախսերը կատարվել են 99.2%-ով՝ կազմելով 10.9 մլրդ դրամ:

ՀՀ արդարադատության նախարարության քրեականարողական և պրոբացիայի ծառայությունների կարողությունների զարգացման և տեխնիկական հագեցվածության ապահովման միջոցառման շրջանակներում նախատեսված էր «Արմավիր» քրեականարողական հիմնարկի համար ձեռք բերել տեսահսկման սարքավորումածրագրային արդի համակարգ, որը չի իրականացվել: Համակարգի ձեռք բերման համար տրամադրվել է 146.7 մլն դրամ կանխավճար, որը կազմել է ծրագրված միջոցների 25%-ը: Պայմանագրի վերջնաժամկետ է հանդիսացել 2022 թվականի հունվարի 24-ը:

Հարկադիր կարարման ծառայությունների ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 97.7%-ը: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքներով և ապրանքների ու ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ:

Նշված ծախսերը 15.3%-ով (359.1 մլն դրամով) գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականի մայիսի 1-ից փոստային ծառայությունների թանկացմամբ և «Հիբրիդ փոստ ծառայություն» նոր համակարգի ներդրմամբ:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի հրականացման ծրագրին հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է 253.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 9.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովում» և «Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովում» միջոցառումների շրջանակներում նախատեսված համապատասխանաբար 1.7 մլրդ դրամ և 409.5 մլն դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով:

Էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովումը նախատեված է ԵՄ-ի կողմից արդարադատության ոլորտին աջակցության շրջանակներում: 2021 թվականի վերջում կատարվել է առկա էլեկտրոնային ռեսուրսների գույքագրում՝ հետագայում անհրաժեշտ համակարգեր ձեռք բերելու նպատակով: Արդարադատության նախարարության կողմից 2021 թվականին կնքվել է պայմանագիր էլեկտրոնային սնանկության համակարգի ներդրման նպատակով: Կողմերից անկախ գործոնների ազդեցության պայմաններում սահմանված պարտավորությունները հնարավոր չեն եղել իրականացնել պայմանագրով նախատեսված ժամկետում: Կառավարության որոշմամբ պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվել է:

Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել, քանի որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թվականի նոյեմբերի վերջին, անցկացվել են մրցույթներ, սակայն ժամանակի սղության պատճառով գնման գործընթացները չեն ավարտվել: Նոյն հանգամանքով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով հատկացված միջոցներն օգտագործվել են 27.8%-ով՝ կազմելով 33.4 մլն դրամ: Չեն օգտագործվել նաև Հակակոռուպցիոն դատարանի և վերաբենիչ հակակոռուպցիոն դատարանի տեխնիկական հագեցվածության ու տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման համար նախատեսված միջոցները՝ համապատասխանաբար 148 մլն դրամի և 20 մլն դրամի չափով, քանի որ Հակակոռուպցիոն դատարանը 2021 թվականին չի ձևավորվել:

Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի հրականացման ծրագրի շրջանակներում 170.3 մլն դրամ է տրամադրվել Հակակոռուպցիոն

դատարանի շենքային պայմանների ապահովման նպատակով, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 83.9%-ը: Միջոցներն ուղղվել են Հակակոռուպցիոն դատարանի Արա Սարգսյան 5/1 հասցեում գտնվող շենքի վերակառուցման աշխատանքներին: Շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Աջափնյակի Սիլիկյան թաղամաս 12-րդ փող., 86 հասցեի տարածքում Հակակոռուպցիոն դատարանի շենքի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքները չեն ավարտվել, և նախատեսված շինարարական աշխատանքները չեն իրականացվել, իսկ Արա Սարգսյան 5/1 շենքի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության համար կանխավճար չի տրամադրվել՝ բյուջետային տարվա ավարտով պայմանավորված:

Հաշվետու տարում 50 մլն դրամ տրամադրվել է Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովմանը՝ կազմելով նախատեսվածի 96.7%-ը: Միջոցներն ուղղվել են Երևանի Աջափնյակի Սիլիկյան թաղամաս 12-րդ փողոց, 86 հասցեում տեղակայված տարածքում Հակակոռուպցիոն կոմիտեի շենքի կառուցման նախագծման աշխատանքներին, որոնք ավարտվել են տարվա վերջում:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացված այլ ծրագրերին տրամադրված 2.7 մլրդ դրամից 1.1 մլրդ դրամն ուղղվել է Դապական և հանրային պաշտպանության ծրագրին, որն ամբողջությամբ կատարվել է: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 38.9%-ով կամ 296.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Փորձագիտական կենտրոնի նյութատեխնիկական հագեցվածության ապահովման նպատակով կատարված 328.5 մլն դրամ ծախսերով, որի համար 2020 թվականին միջոցներ չեն հատկացվել:

Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 22.5%-ը՝ 210.4 մլն դրամ, որն ուղղվել է Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացման միջոցառմանը: Վերջինս իրականացվում է ԵՄ-ի կողմից արդարադատության ոլորտին բյուջետային աջակցության շրջանակներում: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր հույս ամսից, սակայն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թվականի նոյեմբերին, հաստիքները ամբողջությամբ չեն համալրվել, և չեն ավարտվել գնման գործընթացները:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացում կատարվել է պետական բյուջեի 14 ծրագիր: Ծախսերը կազմել են շուրջ 43.4 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 94.9%-ը: Ծրագրված ցուցանիշներից շեղումը հիմնականում պայմանավորված է Գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման, Հրոսաշրջության զարգացման, ճգնաժամերի հակագրման և արտակարգ իրավիճակների

հետևանքների նվազեցման և վերացման, Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման, Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերի 27.6%-ով կամ 9.4 մլրդ դրամով աճը հիմնականում պայմանավորված է Գյուղատնտեսության խթանման, Գյուղատնտեսության արդիականացման ու Գյուղական Ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Աղյուսակ 22. 2021թ. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողա- կանը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴՀԱՄԵՆԸ	34,003.0	45,698.7	43,390.5	94.9	127.6	9,387.5
Գյուղատնտեսության խթանման ծրագիր	5,951.1	13,567.2	13,549.5	99.9	227.7	7,598.3
Գյուղական Ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում	1,424.8	2,980.5	2,441.6	81.9	171.4	1,016.8
Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր	1,218.9	4,292.4	4,266.6	99.4	350.0	3,047.7
Զբոսաշրջության զարգացման ծրագիր	2,274.2	3,646.2	3,214.5	88.2	141.3	940.3
Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր	17,438.6	12,962.8	12,575.4	97.0	72.1	(4,863.3)
Այլ ծրագրեր	5,695.4	8,249.5	7,343.0	89.0	128.9	1,647.6

Հաշվետու տարում Գյուղադնդեսության խթանման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 13.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ Գյուղատնտեսության խթանման ծրագրի ծախսերն աճել են 2.3 անգամ՝ շուրջ 7.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական վարկերի և գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման ծախսերի աճով:

Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույթների սուբսիդավորման միջոցառման նպատակն է գյուղական համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում

զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը: 2021 թվականին միջոցառման շահառուների թիվը նախատեսված 68644-ի փոխարեն կազմել է 81131, որից 51644-ը նախորդ տարիներից սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտներն են: Ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է ծրագրի նկատմամբ պահանջարկով և վարկային պորտֆելի ավելացմամբ՝ 0% տոկոսադրույքով վարկերի տրամադրման արդյունքում: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 9.8 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 97.6%-ով կամ 4.8 մլրդ դրամով՝ պայմանավորված շահառուների թվի աճով, որը բացատրվում է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեղոքացմանն ուղղված՝ 0% տոկոսադրույքով տրամադրվող վարկերի նկատմամբ մեծ պահանջարկով: Բացի այդ, 0-ական տոկոսադրույքով վարկերը սկսել են տրամադրվել 2020 թվականի ապրիլ ամսից, իսկ 2021 թվականին տրամադրվել են ամբողջ տարվա ընթացքում:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցառման նպատակը գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց պտուղբանջարեղենի և խաղողի մթերումների նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության բարձրացումն է: 2021 թվականի ընթացքում միջոցառման շահառուների թիվը նախատեսված 141-ի փոխարեն կազմել է 204, որից 91-ը նախորդ տարիներից սուբսիդավորվող տնտեսավարող սուբյեկտներն են: Ցուցանիշի գերազանցումը պայմանավորված է կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեղոքացման շրջանակներում 0% տոկոսադրույքով տրամադրվող վարկերի նկատմամբ մեծ պահանջարկով: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 2.7 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 3.8 անգամ կամ շուրջ 2 մլրդ դրամով՝ պայմանավորված ծրագրի նկատմամբ եղած մեծ պահանջարկով, հատկապես կորոնավիրուսի պայմաններում սահմանված զրոյական տոկոսադրույքով, վարկառուների թվի աճով և մեկ վարկառուին տրամադրված վարկի միջին չափի ավելացմամբ: Բացի այդ, 0-ական տոկոսադրույքով վարկերը սկսել են տրամադրվել 2020 թվականի ապրիլ ամսից, իսկ 2021 թվականին տրամադրվել են ամբողջ տարվա ընթացքում:

2021 թվականին Գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 81.9%-ը: Ծրագիրն ամբողջությամբ ֆինանսավորվել է արտաքին աջակցությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 71.4%-ով կամ 1 մլրդ դրամով՝ իհմնականում

պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի համակարգման և ղեկավարման, ինչպես նաև նոյն ծրագրի շրջանակներում գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և/կամ զարգացման նպատակով տրանսֆերտների տրամադրման ծախսերի աճով:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում գյուղական ենթակառուցվածքների վերականգնման և/կամ զարգացման նպատակով տրանսֆերտների տրամադրման նպատակով վարկային համաձայնագիրը (23 մլն ԱՄՆ դոլար) ՎՀՄԲ-ի ու ՀՀ-ի միջև ստորագրվել է 2014 թվականի օգոստոսի 6-ին, ուժի մեջ է մտել 2015 թվականի հունվարի 23-ին: Ծրագրի իրականացման ժամկետն էր մինչև 2020 թվականի մայիսի 31-ը, որը, համաձայնագրում կատարված փոփոխությունների համաձայն, երկարաձգվել է մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը: Միջոցառման նպատակներն են՝ արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականության և կայունության հետագա բարելավումը թիրախային համայնքներում, գյուղատնտեսական տեխնիկայի գնումը, պետական կառույցների կարողությունների հզորացումը, անասնաբուժական սպասարկման կենտրոնների հիմնումը: Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար նախատեսվում է իրականացնել բարձրադիր տարածքների թիրախային համայնքներում արոտավայրերի և անասնապահական համակարգերի արտադրողականության և կայունության բարելավմանն ուղղված մասնակցային կառավարման պլանների մշակում և ներդրում, օժանդակություն պետական համապատասխան կառույցների զարգացմանը: Միջոցառման իրականացումը պահանջում է գյուղամերձ արոտներում կենդանիների գերարածեցման մեծապես աճող միտման կասեցում, համայնքների հեռագնա արոտների օգտագործման հնարավորությունների ստեղծում, վարելահողերի առավել արդյունավետ օգտագործում, կերարտադրության ու կենդանիների կերակրման և տոհմային աշխատանքների բարելավում, ինչպես նաև գյուղատնտեսական կենդանիների մթերատվության բարձրացում: Հաշվետու տարում միջոցառման շրջանակներում ՀՀ 8 մարզերի 109 բնակավայրերում կառույցվել են 34 կմ ջրագծեր, 28 խմոցներ, ջրարբիացվող արոտավայրերը կազմել են 14000 հա, ձեռք է բերվել 200 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է ավելի քան 1.2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 86.2%-ը, որը պայմանավորված է շինարարական աշխատանքների և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման մրցույթների երկար ընթացակարգով, որոշ կոռապերատիվների կողմից ներդրումների ուշացմամբ:

Ծրագրի համակարգման և ղեկավարման միջոցառման նպատակն է ընտրված սննդամթերքի արժեշղթաներում բարձրացնել տեղական արտադրողների և վերամշակողների կարողությունները՝ ներքին պահանջարկը բավարարելու և միջազգային շուկաներ մուտք գործելու համար։ Միջոցառմամբ նախատեսվել է նաև իրականացնել գործառնական, ինչպես նաև աշխատաժողովների կազմակերպման, լրացուցիչ տեխնիկական մասնագետների ընդգրկման, ազդեցությունների գնահատման և խորհրդատվական ծախսերը։ Ծրագրում ընդգրկվել է 109 համայնք, կնքվել են 48 պայմանագրեր։ Միջոցառման ծախսերը կատարվել են 94.5%-ով՝ կազմելով շուրջ 963.4 մլն դրամ։ Շեղումը պայմանավորված է նրանով, որ երկու բիզնես ծրագրեր չեն իրականացվել, քանի որ շահառուները հրաժարվել են՝ պայմանավորված սեփական ֆինանսական ներդրումների անբավարարությամբ։ Բացի այդ, կառավարչական և մասնագիտական ծառայությունների գծով եղել են տնտեսումներ։

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսության ոլորտում քաղաքականության մոնիթորինգի և գնահատման կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագրի նպատակն է՝ ուժեղացնել մոնիթորինգի և գնահատման ունակություններն ու համակարգը՝ հնարավորություն տալու համար վարել գյուղատնտեսության ոլորտում ապացուցահենք քաղաքականության մշակում և վերլուծություն։ Միջոցառման շրջանակում ստեղծված և վերապատրաստված անձնակազմի կողմից կանոնավոր կերպով օգտագործվել են քաղաքականության 4 գործիքներ։ Նախարարության գործընթացներում ներառված է ապահովել ծրագրի վերջում, սակայն կատարվել է փոփոխություն, ըստ որի ծրագրի ավարտի ժամկետը 2021 թվականի մայիսից երկարաձգվել է մինչև 2022 թվականի մայիսի 30-ը։ Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 200.7 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 42%-ը։ Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ դոնոր կազմակերպության կողմից հաստատման գործընթացների ձգձգման հետ կապված նախատեսված որոշ մրցույթների արդյունքներն ամփոփվել են տարեվերջին, որի պատճառով պայմանագրերի կնքումը հետաձգվել է։ Բացի այդ, մրցույթի արդյունքում ծառայությունների պայմանագրերը կնքվել են նախատեսվածից ցածր գներով, որի արդյունքում առաջացել են խնայողություններ, խնայողություններ առկա են նաև պահպանման ծախսերի գծով։

Գյուղակրնեսության արդիականացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 4.3 մլրդ դրամ՝ ապահովելով 99.4% կատարողական։ Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 3.5 անգամ (3 մլրդ դրամով), որը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու

այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության և վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի գծով ծախսերի աճով:

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցառման նպատակն է՝ այգետնկումների խթանմամբ հանրապետությունում զարգացնել պտղաբուծությունը և խաղողագործությունը, ավելացնել խաղողի, պտղի և հատապտղի արտադրության, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինման ու արտահանման ծավալները։ Հաշվետու տարում նախատեսված 291.5 հա-ի դիմաց փաստացի կատարվել է 912.62 հա նոր ինտենսիվ պտղատու այգիների և նախորդ տարիներին հիմնված 636.43 հա ինտենսիվ պտղատու այգիների համար նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում։ 2021 թվականին հիմնվել են 912.62 հա այգիներ՝ նախորդ տարվա 517.6 հա-ի դիմաց։ Նշենք, որ նախորդ տարի տվյալ միջոցառման շրջանակներում զրոյական տոկոսադրույքով վարկերը սկսել են տրամադրվել 2020 թվականի ապրիլ ամսից, բացի այդ, բարձրացել է տնտեսավարողների տեղեկացվածության մակարդակը։ Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական։ Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 5.7 անգամ կամ 888.7 մլն դրամով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալով, որը պայմանավորված է կորոնավիրուսի պայմաններում սահմանված 0% տոկոսադրույքով տրամադրվող վարկերի նկատմամբ մեծ պահանջարկով, տնտեսավարողների տեղեկացվածության մակարդակի բարձրացմամբ, ինչպես նաև այն հանգամանքով, որ 0-ական տոկոսադրույքով վարկերը սկսել են տրամադրվել 2020 թվականի ապրիլ ամսից, իսկ 2021 թվականին տրամադրվել են ամբողջ տարվա ընթացքում։

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության միջոցառման շրջանակներում տնտեսավարողին տրամադրվում է ծախսերի մասնակի փոխհատուցում այգու հիմնման համար կատարված ծախսերի 50%-ի չափով։ 2021 թվականին իրականացվել են 134.52 հա նոր ինտենսիվ պտղատու այգիների հիմնման աշխատանքներ՝ նախատեսված 135 հա-ի դիմաց։ Նշենք, որ 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների և երկրում հայտարարված ռազմական դրության հետևանքով այգեհիմնման աշխատանքները հիմնականում հետաձգվել են և ավարտվել 2021 թվականին, որով

պայմանավորված՝ 2020 թվականին հիմնված այգիները կազմել էին 24.24 հա: Հաշվետու տարում միջոցառման ծախսերը կազմել են 899.8 մլն դրամ կամ նախատեսվածի 99.5%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 8.6 անգամ 795.1 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում հաշվետու տարում սուբսիդավորումից օգտվել է 430 շահառու՝ նախատեսված 250 շահառուի դիմաց, որը պայմանավորված է կորոնավիրուսի պայմաններում վարկավորման 0-ական տոկոսադրույթ սահմանելու արդյունքում ծրագրի նկատմամբ մեծ պահանջարկով: Նշենք, որ նախորդ տարի ծրագրից օգտվել էր 238 շահառու: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել 776 միավոր սարքավորում՝ նախորդ տարվա 377-ի դիմաց: 2020 թվականին տվյալ միջոցառման շրջանակներում գրոյական տոկոսադրույթով վարկերը սկսել են տրամադրվել ապրիլ ամսից: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է շուրջ 967.5 մլն դրամ՝ ապահովելով 98.2% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ սարքավորումները ձեռք են բերվել նախատեսվածից ցածր գներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 4.4 անգամ կամ 749.6 մլն դրամով, որը պայմանավորված է շահառուների թվի աճով:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցությունից 2021 թվականին նախատեսված 1108-ի դիմաց ծրագրից օգտվել է 1186 շահառու, որը պայմանավորված է տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ, գյուղատնտեսական տեխնիկայի՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ, ինչպես նաև վարկերի գրոյական տոկոսադրույթով: Նախորդ տարի ծրագրի շահառուների թիվը կազմել էր 797: Միջոցառման շրջանակներում ձեռք է բերվել 583 միավոր գյուղատնտեսական տեխնիկա՝ նախորդ տարվա 573-ի դիմաց: Նշենք, որ 2020 թվականին տվյալ միջոցառման շրջանակներում գրոյական տոկոսադրույթով վարկերը սկսել են տրամադրվել ապրիլ ամսից: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 497.9 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 95.7%-ով կամ 243.5 մլն դրամով՝ պայմանավորված շահառուների թվի աճով:

Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովմանը պետական աջակցության միջոցառման հիմնական նպատակն է բարելավել կենդանիների պահման պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները: Միջոցառման շրջանակներում աջակցություն է տրամադրվել 36 անասնաշենքի կառուցման համար՝ նախատեսված 34-ի և նախորդ տարվա 20-ի դիմաց: Աճը պայմանավորված է ծրագրի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմամբ: Միջոցառման

ծախսերը կազմել են 347.8 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական և 50.7%-ով (117 մլն դրամով) գերազանցելով 2020 թվականի ցուցանիշը:

Փոքր և միջին չերմոցային տնտեսությունների ներդրման պետական աջակցության միջոցառման նպատակը գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից փոքր և միջին չերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծախսերի մասնակի փոխհատուցումն է, արդյունքում՝ պաշտպանված գրունտի մակերեսի, չերմատնային տնտեսությունների արտադրանքի արտադրության ծավալների, գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացումը: Միջոցառման շրջանակներում նախատեսված 10-ի դիմաց կառուցվել է 8 չերմոց. որի համար օգտագործվել է 227.3 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ ծախսերն աճել են շուրջ 4 անգամ կամ 170.4 մլն դրամով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2020 թվականին կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների և երկրում հայտարարված ռազմական դրության հետևանքով շինարարական աշխատանքները հիմնականում հետաձգվել էին և ավարտվել են 2021 թվականին:

Հաշվետու տարում Զբոսաշրջության զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 3.2 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 88.2%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի կատարողականով: Վերջինիս ծախսերի աճով է հիմնականում պայմանավորված նախորդ տարվա համեմատ Զբոսաշրջության զարգացման ծրագրի ծախսերի 41.3% (940.3 մլն դրամ) աճը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի նպատակներն են.

- նպաստել ընտրված մարզերի տեղական տնտեսություններում զբոսաշրջության աճին, որը տեղի կունենա ենթակառուցվածքներում ներդրումներ, քաղաքային վերածնունդ, մշակութային ժառանգության վերականգնում, հմտությունների զարգացում, տուրիստական պրոդուկտների զարգացում, զանազանում և մասնավոր հատվածի ներդրումների խթանում ապահովող համալիր մոտեցման իրականացման միջոցով,

- օգնել, ստեղծել և հիմնել զբոսաշրջային շրջաններ, որոնք կմիացնեն ընտրված մարզերի բազմաթիվ վայրեր:

Այս գործողությունները միասին կօգնեն ավելի մեծ թվով այցելուներ գրավել դեպի մարզեր, որն իր հերթին կխթանի աշխատատեղերի ստեղծումը և տեղական տնտեսական աճը:

Ծրագիրն իրականացվում է երկու քաղադրիչներով.

- պատմամշակութային ժառանգության և զբոսաշրջային օլակի զարգացում,

- ինստիտուցիոնալ զարգացում:

Ծրագրի շրջանակներում ավարտվել են Գյումրու «Կումայրի պատմական կենտրոն» փողոցի հիմնանորոգման, «Սոճուտ» դենդրոպարկ տանող ճանապարհի, Տաթևի վանական համալիր տանող ճանապարհի վերակառուցման, Խոր Վիրապի վանական համալիրի տարածքի բարեկարգման (փուլ 1), Գորիսի կենտրոնական մասի բնակելի տների վերանորոգման, Արենու գինու հյուրանոցի հանրային ենթակառուցվածքի, Գառնի համայնքի «Քարերի սիմֆոնիա» բնական հուշարձան տանող ճանապարհի վերականգնման, տարածքի բարեկարգման, Դվինի հուշարձանների մասնակի վերականգնման և բարեկարգման (փուլ 1), Գորիսի համայնքային ժառանգության կենտրոնի՝ Վարարակն գետի աջ ափի վերականգնման շինարարական աշխատանքները: 2021 թվականի ընթացքում շարունակվել են Երևան-Լանջազատ-Գառնի ճանապարհի վերակառուցման, «Զորաց քարեր» հուշարձանի բարեկարգման, «Գորիս համայնքի ժառանգության կենտրոնի՝ Գորիսի կենտրոնական մասի պատմական և մշակութային միջավայրի վերականգնման, Գառնու տաճարի շրջակայքի բարեկարգման, Խոսրովի անտառ պետական արգելոցի Գառնիի հատված տանող ճանապարհի վերականգնման, Գյումրու Բարեկամության այգի, Զերմուկի Շահումյանի և հարակից փողոցների վերանորոգման և լուսավորման, Զերմուկի Մաշտոցի փողոցի վերանորոգման և լուսավորման աշխատանքները: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 89.7%-ը: Շեղումը ծրագրի կառավարման մասով պայմանավորված է թափուր հաստիքների առկայության հետևանքով աշխատավարձի, ինչպես նաև տրանսպորտային նյութերի և գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում գրոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավման բաղադրիչի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 89.9%-ը՝ 2.9 մլրդ դրամ: Շեղումը պայմանավորված է 2 ծրագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների համար կատարողական և ավարտական ակտերը կապալառուների կողմից ուշ ներկայացվելու հանգամանքով, որի հետևանքով վճարումները կատարվել են 2022 թվականին:

Զբոսաշրջության զարգացմանն աջակցության միջոցառման շրջանակներում աշխատանքներն իրականացվել են ողջ ծավալով: Մասնավորապես՝ ապահովվել է մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին, իրականացվել են հեղինակավոր պարբերականներում Հայաստանի մասին գովազդատեղեկատվական հոդվածների պատվիրման, ՀՀ մարզերում փառատոններ կազմակերպություններին պետական աջակցության, գովազդատեղեկատվական նյութերի ստեղծման, թարգմանության, տպագրության, միջազգային համագործակցության շրջանակներում

միջոցառման կազմակերպման աշխատանքները, ինչպես նաև անցկացվել է գրոսավարների ուսուցման, վերապատրաստման 2 դասընթաց: Զբոսաշրջության զարգացմանն աջակցության միջոցառման շրջանակներում օգտագործվել է շուրջ 118.1 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 60.2%-ը: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ Հայաստանի մասնակցությունը 3 միջազգային ցուցահանդեսներին մասամբ իրականացվել է հովանավորների աջակցությամբ, ինչի արդյունքում միջոցները տնտեսվել են: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 14.4 անգամ կամ 109.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2020 թվականին համավարակի հետ կապված սահմանափակումներով:

2021 թվականի ընթացքում կորոնավիրուսի համավարակի կանխադրելման նպատակով ճգնաժամերի հակազդման և արդակարգ իրավիճակների հերթևանքների նվազեցման և վերացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 12.6 մլրդ դրամ՝ ապահովելով 97% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ-ում աշխանացան ցորենի արտադրության խթանման նպատակով սուբսիդավորման և կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեղոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության միջոցառումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերը նվազել են 27.9%-ով կամ 4.9 մլրդ դրամով, որը հիմնականում կապված է կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման համար կատարված ծախսերի նվազման հետ:

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեղոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցառման շրջանակներում տարբեր նպատակային ուղղություններով վարկեր են տրամադրվում շահառուներին: Հաշվետու տարում աջակցություն է ստացել 1052 տնտեսավարող՝ նախատեսված 1106-ի և նախորդ տարվա 785 տնտեսավարողի դիմաց: Նշված միջոցառման համար օգտագործվել է շուրջ 6.6 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերն աճել են 2.8 անգամ կամ 4.2 մլն դրամով, որը պայմանավորված է շահառուների թվաքանակի աճով:

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեղոքացման 23-րդ միջոցառման շրջանակներում իրականացվող աջակցության նպատակը գրոսաշրջությանն ուղղակիորեն առնչվող առանձին ոլորտների տնտեսավարողների համար կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեղոքացումն է, գործունեության շարունակականությունը և աշխատատեղերի պահպանումը: Միջոցառման շրջանակներում կանխատեսված 1500-ի և 2020 թվականի 1340-ի դիմաց աջակցություն է տրամադրվել 1237 տնտեսավարողի՝ 3.6 մլրդ դրամի չափով, որը կազմել է նախատեսված միջոցների 96.4%-ը: Շեղումը պայմանավորված է տնտեսավարողների դիմելիության՝ կանխատեսվածից ցածր մակարդակով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն

աճել են 49.6%-ով կամ 1.2 մլրդ դրամով, որը պայմանավորված է տրամադրվող աջակցության միջին չափի ավելացմամբ:

Հաշվետու տարում կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման համար իրականացվել են հիվանդանոցներում մեկուսացված անձանց կեցության ծախսերը: Նշված միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 99.9%-ը կամ 1.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 75.2%-ով կամ 3.4 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է նրանով, որ 2021 թվականին միջոցներն օգտագործվել են միայն հիվանդանոցներում մեկուսացված անձանց կեցության ծախսերի համար, մինչդեռ 2020 թվականին ֆինանսավորվել էին նաև հյուրանոցներում մեկուսացված անձանց կեցության ծախսերը:

Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 24-րդ միջոցառման միջոցները նախատեսվել էր օգտագործել մեծածավալ իրացում ունեցող կազմակերպություններին աջակցելու նպատակով: Միջոցառման շրջանակներում 16 տնտեսավարողների տրամադրվել է շուրջ 919.7 մլն դրամ աջակցություն և ապահովել 94.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է նրանով, որ հայկական կոնյակի սպիրտի տարանցիկ փոխադրումների ժամանակ վրացական կողմից ստեղծվող խոչընդոտների հետևանքով տնտեսավարողների կողմից արտահանվել է նախատեսվածից քիչ կոնյակի սպիրտ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են մոտ 3.4 անգամ կամ 645.4 մլն դրամով, որը պայմանավորված է աջակցություն ստացած տնտեսավարողների թվի (2020 թվականին աջակցություն էր ստացել 12 տնտեսավարող) և նրանց կողմից արտահանված արտադրանքի ծավալների աճով:

ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման նպատակով սուբսիդավորման միջոցառման շրջանակներում տրամադրվել է 2741 տոննա աշնանացան ցորենի սերմնանյութ՝ նախատեսված 5442.6 տոննայի և 2020 թվականի 2777 տոննայի դիմաց: Միջոցառման ծախսերը կազմել են 216.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 53.3%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ սուբսիդավորման համար մատակարարների կողմից փաստաթղթերը ներկայացվել են թերություններով, որոնք վերադարձվել են շտկման, և ուղղված փաստաթղթերը ներկայացվել են ուշացումով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 11.3%-ով կամ 22 մլն դրամով, որը պայմանանավորված է միջոցառման շրջանակում ԱԱՀ-ով հարկվող շահառուների և մատակարարների համար լրացուցիչ աջակցություն տրամադրելու հանգամանքով:

ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված այլ ծրագրերից Էկոնոմիկայի ոլորդում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի

ծրագրին ուղղվել է ավելի քան 2.2 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.2%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ու Առևտրի համաշխարհային կազմակերպությունում (ԱՀԿ) և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործման միջոցառումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 9.6%-ով կամ 197.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի միջոցառման ծախսերի աճով:

Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի միջոցառման ծախսերը հաշվետու տարում կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ՝ ապահովելով 97.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է գնումների արդյունքում առաջացած տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 6.9%-ով (132.8 մլն դրամով), որը պայմանավորված է համավարակի սահմանափակումների մեղմման հետևանքով գործուղումների գծով ծախսերի, շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի աճով:

ԱՀԿ-ում և օտարերկրյա պետություններում ՀՀ առևտրային ներկայացուցիչների նպատակների և խնդիրների իրագործման նպատակով հատկացված միջոցներն ուղղվել են ԱՀԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցի (նստավայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն, Ժնև), ինչպես նաև առևտրային կցորդների (Իրանի Իսլամական Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության) պահպանմանը: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 84.4 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 67.2%-ը: Շեղումը պայմանավորված է 4 առևտրային ներկայացուցիչներից 1-ի պաշտոնը թափուր լինելու, ինչպես նաև 2 առևտրային կցորդների՝ նախատեսված ժամկետից ուշ նշանակվելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 43%-ով կամ 25.4 մլն դրամով, ինչը պայմանավորված է առևտրային ներկայացուցիչների թափուր պաշտոնների համալրմամբ:

Հաշվետու տարում Անասնաբուժական ծառայությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.8 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 98%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության և գյուղատնտեսական կենդանիների պատվաստման միջոցառումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ Անասնաբուժական ծառայությունների ծրագրի ծախսերն աճել են 4.7%-ով

(81.9 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված նշված երկու միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Հաշվետու տարում գյուղատնտեսական կենդանիների պատվաստմանը հատկացված միջոցներն ուղղվել են կենդանիների հիվանդությունների անասնաբուժական ախտորոշմանը և կենդանիների հիվանդությունների կանխարգելման աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերմանը: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.2%-ով կամ 45.1 մլն դրամով, որը պայմանավորված է գնումների գործընթացում ներկայացված բարձր գնային առաջարկներով և կատարված աշխատանքների ծավալների աճով:

2021 թվականին Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի լաբորատոր փորձաքննության միջոցառումների շրջանակներում գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների, ինչպես նաև կենդանական ծագման հումքի և նյութի ախտորոշման նպատակով իրականացվել է 895191 լաբորատոր փորձաքննություն՝ կանխատեսված 968179-ի և նախորդ տարվա 890631-ի դիմաց: Միջոցառման ծախսերը կազմել են 353.3 մլն դրամ՝ ապահովելով 93.8% կատարողական: Շեղումը պայմանավորված է հետազոտության ներկայացված նմուշների քանակով: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 23.1%-ով կամ 66.4 մլն դրամով, որը պայմանավորված է լաբորատոր փորձաքննությունների քանակի աճով:

2021 թվականին Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 72.3%-ը կամ ավելի քան 887.5 մլն դրամ: Ծրագիրն իրականացվել է արտաքին աջակցությամբ: Շեղումը հիմնականում պայմանավորված է Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում դեգրադացված հողերի վերականգնման համար նախատեսված 115 մլն դրամ միջոցները չօգտագործելու հանգամանքով, ինչպես նաև տվյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսական փաթեթների տրամադրման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի ծախսերն աճել են 31.3%-ով կամ 211.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է Գլոբալ Էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսական փաթեթների տրամադրման ծախսերի աճով:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Հայաստանում արտադրողականության աճին ուղղված հողերի կայուն կառավարման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կվերականգնվեն համայնքային սեփականության ներքո գտնվող դեգրադացված հողերը, կներդրվի հողերի կայուն կառավարման և արդյունավետ շահագործման համակարգ: Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի դրամաշնորհով ֆինանսավորվող հողերի կայուն կառավարման բաղադրիչն ուղղված է ոռոգման ծրագրերի արդյունավետության բարձրացմանը և լրացնում է ծրագրի շրջանակում իրականացվող ոռոգման երրորդային բաշխիչ համակարգերի կառուցման կամ վերականգնման աշխատանքները՝ ջրամատակարարումը բարելավելու և փոքր հողատերերի ոռոգվող հողակտորների արտադրողականությունը բարձրացնելու նպատակով և ոռոգելի տարածքներն ընդլայնելով: Ծրագրի այս բաղադրիչը կզարգացնի անհատ ֆերմերների, ֆերմերային ասոցիացիաների, կոոպերատիվների, ջրօգտագործողների ընկերությունների, քաղձառայողների և մյուս տեղական շահառուների՝ կայուն գյուղատնտեսական համակարգերի և տեխնոլոգիաների որդեգրման, էկոլոգիական վերականգնողական պլանների նախապատրաստման և իրականացման, ինչպես նաև կայուն արժեշղթաների զարգացման կարողությունները՝ հաշվի առնելով հողի և ջրի պահպանության, կլիմայական ռիսկերի նվազեցման հիմնահարցերը: Ծրագրի շրջանակներում ֆինանսական փաթեթների տրամադրման նպատակով ապրանքային տեսքով ֆինանսական փաթեթներ են տրամադրվել 325 փոքր գյուղացիական տնտեսավարողների՝ նախատեսված 160-ի փոխարեն, որը պայմանավորված է տրամադրված ֆինանսական փաթեթների ցածր արժեքով: Ֆինանսական փաթեթների տրամադրումը կշարունակվի 2022 թվականի ընթացքում: Միջոցառմանը պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 577 մլն դրամ՝ ապահովելով 83.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է միջոցառման շրջանակներում նախատեսված ապրանքների ձեռքբերման մրցութային գործընթացի ձգձգմամբ: Տվյալ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կայուն գյուղատնտեսական համակարգերում և տեխնոլոգիաներում ներդրումների համար նախատեսված 115 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել: Վերջինս պայմանավորված է նրանով, որ միջոցառման շրջանակներում դեգրադացված հողերի վերականգնման աշխատանքների իրականացման նպատակով խորհրդատու վարձելու համար մշակվել են առաջադրանքի պայմանները և ուղարկվել ԳՀՄՀ-ին՝ հաստատման, որից հետո հայտարարվել է մրցույթ, կնքվել պայմանագիր խորհրդատուի հետ, իսկ հողերի վերականգնման և ծառատնկման աշխատանքների իրականացումը նախատեսվում է 2022 թվականին:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում նախատեսվել էր իրականացնել Շիրակի մարզի Հռում և Գեղարքունիքի մարզի

Վարդենիկ համայնքներում սառնարանների կառուցում, որը 2021 թվականին ավարտվել է: Սառնարանային տնտեսություններից օգտվող տնտեսավարող սուբյեկտների թիվը կազմել է 4540: Ծրագրի շրջանակներում օգտագործվել է 119.9 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 66.4%-ը: Նշված գումարից 116.3 մլն դրամը տրամադրվել է սառնարանային տնտեսությունների կառուցմանը՝ կազմելով նախատեսված միջոցների 65.8%-ը, որը պայմանավորված է եղանակային պայմանների հետևանքով շինարարական աշխատանքների ուշ մեկնարկով, որի արդյունքում հետավարտական աշխատանքների երաշխիքային գումարի վճարումը տեղափոխվել է 2022 թվական: 3.6 մլն դրամն օգտագործվել է ծրագրի շրջանակներում Հոռոմ և Վարդենիկ համայնքներում կառուցվող սառնարանների շինարարության ընթացքում հեղինակային և տեխնիկական հսկողության համար՝ ապահովելով 97.4% կատարողական, որը պայմանավորված է տնտեսումներով:

ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության վարկային ծրագրի նպատակն է ջրամատակարարման և ոռոգման համակարգերի բարելավումը հանրապետության 7 մարզերի՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արագածոտնի գյուղական համայնքներում՝ առաջնահերթություն տալով աղքատության ամենաբարձր ցուցանիշ ունեցող տարածքներին: Զրամատակարարման և ոռոգման համակարգերն ընտրվում են մանրամասն տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների հիման վրա: Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը հաստատում է միայն ներդրումային այն առաջարկները, որոնք ունեն հստակ տնտեսական արդյունավետություն, իսկ ջրամատակարարման դեպքում՝ ուղղված են խոցելի համայնքներին, որոնց ջրամատակարարումը չի գերազանցում 6 ժամը: Զրամատակարարման ծրագրերի ընտրության ժամանակ դիտարկվում են նաև անասնապահության զարգացման հնարավորությունները և տնամերձ հողատարածքների արտադրողականության բարձրացումը: 2017-2020 թվականների ընթացքում շինարարական աշխատանքներն ավարտվել են թվով 37 օբյեկտներում, ընդ որում, ջրամատակարարման գծով՝ 29 օբյեկտներում և ոռոգման ցանցերի վերակառուցման գծով՝ 8 օբյեկտներում: Ծրագրից օգտվել են 75141 գյուղաբնակներ: 2021 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում կատարվել են Գանձաքար համայնքի Ֆիլտրացիոն կայանի կառուցման շինարարական աշխատանքները: Ծրագրի շրջանակներում օգտագործվել է 112.3 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 95.1%-ը: Նշված գումարից շուրջ 25.8 մլն դրամը տրամադրվել է շինարարական աշխատանքներին՝ կազմելով նախատեսված միջոցների 94.8%-ը, որը պայմանավորված է մրցույթի արդյունքում առաջացած տնտեսումներով: 86.5 դրամն օգտագործվել է ծրագրի կառավարման և համակարգման համար՝ ապահովելով 95.2% կատարողական, որը պայմանավորված է Ծիգ-ի աշխատակազմի կրճատմամբ: Ծրագրիը 2021 թվականին ավարտվել է:

Հաշվետու տարում Ներդրումների և արդահանման խթանման ծրագրի շրջանակներում օգտագործվել է 991.5 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 93.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանման, իրականացման և հետներդրումային սպասարկման պետական աջակցության ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերն աճել են 63.1%-ով կամ 383.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2021 թվականին «Դուբայ ԷՔՍՊՈ-2020» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովման և Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանման, իրականացման և հետներդրումային սպասարկման պետական աջակցության միջոցառումների իրականացմամբ:

Հաշվետու տարում «Դուբայ ԷՔՍՊՈ-2020» համաշխարհային ցուցահանդեսին Հայաստանի Հանրապետության մասնակցության ապահովման նպատակով 2021 թվականին տրամադրվել է 632.3 մլն դրամ՝ ապահովելով 99% կատարողական: Միջոցներն ուղղվել են հայկական Ազգային տաղավարի շինարարական և կառուցապատման աշխատանքներին և Ազգային օրվա կազմակերպչական միջոցառումների ու թեմատիկ շաբաթների ապահովմանը:

Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծրագրերի խթանման, իրականացման և հետներդրումային սպասարկման պետական աջակցության միջոցառման շրջանակներում նախատեսված ողջ ծավալով իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- ներդրումային ծրագրերի ուղեկցում,
- ՀՀ-ում գործող օտարերկրյա ներդրողների հետներդրումային սպասարկում,
- սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցության տրամադրում,
- ներդրողների, գործարարների համար նախատեսված ՀՀ գործարար և ներդրումային դաշտը ներկայացնող, ինչպես նաև ոլորտային (ՀՀ տնտեսության ճյուղեր) ուղեցույցերի, շնորհանդեսների պատրաստում,
- ՀՀ ներդրումային միջավայրի, գործարար և արտահանման հնարավիրությունների մասին տեսահոլովակների պատրաստում,
- ֆինանսական աջակցության ծրագրերի շրջանակներում աջակցություն ստացած շահառուների մշտադիտարկում,
- սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար ուսուցողական աջակցության տրամադրում,
- կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեղոքացման 19-րդ միջոցառման շրջանակներում փաստաթղթերի ուսումնասիրություն, պայմանագրերի պատրաստում,

երաշխավորությունների կնքում, ֆինանսավորման համար անհրաժեշտ այլ աշխատանքների իրականացում,

- սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակության տրամադրում,
- մամուլում «Made in Armenia» ծրագրի արշավի խորհրդանիշ հանդիսացող ինքնասոսնձվող պատկերների առկայության ապահովում:

Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 298.6 մլն դրամ և ապահովվել 85.2% կատարողական: Այն իրականացվել է Նեղումների աջակցման կենտրոնի կողմից: Շեղումը հիմնականում պայմանավորված է հաստիքների ոչ լրիվ համալրվածության հետևանքով առաջացած տնտեսումներով, համավարակի սահմանափակումների հետևանքով որոշ միջոցառումների չեղարկմամբ, ինչպես նաև գնման մրցույթների արդյունքում ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ծեռքբերմամբ:

Հաշվետու տարում ռազմական գործողությունների արդյունքում առաջացած խնդիրների բացասական հետևանքների մեջման նպատակով Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արդակարգ իրավիճակների հերքանքների նվազեցման և վերացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 73.1%-ը՝ 938.8 մլն դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է նրանով, որ առաջացած տնտեսական դժվարությունների հաղթահարման նպատակով կազմակերպություններին տրվող աջակցության համար նախատեսված 339.1 մլն դրամ միջոցները չեն օգտագործվել սուբսիդավորման պայմաններին չբավարարելու պատճառով:

Հայաստանի Հանրապետությունում գարնանացան հացահատիկային, հատիկացնդեղեն և կերային մշակաբույսերի արտադրության խթանման նպատակով սուբսիդավորման շրջանակներում տրամադրվել է 1377 տոննա գարնանացան գարու, 130.1 տոննա գարնանացան ցորենի, 267.6 տոննա վարսակի, 70 տոննա ոլոռի, 1.5 տոննա ոսպի, 0.14 տոննա սիսեռի, 517 տոննա կորնգանի, 2 տոննա առվույտի սերմնանյութ: Նախատեսված ցուցանիշների գերազանցումը պայմանավորված է նրանով, որ գյուղացիական տնտեսությունների կողմից ցուցաբերվել է ոլոռի, ոսպի և սիսեռի ցանք կատարելու նկատմամբ մեծ հետաքրքրություն: Սերմնանյութերի որոշ տեսակների գծով կանխատեսվածից ցածր քանակական ցուցանիշները պայմանավորված են Վերին Հարսի անցակետում եղանակային անբարենպաստ պայմանների հետևանքով առաջացած ներկրման դժվարություններով: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 483 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.8%-ը:

Ռազմական դրույթամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին կացարանների տրամադրման արդյունքում առաջացած գույքային վնասները փոխհատուցելու և գործունեությունը վերականգնելու նպատակով նախատեսված 70-ի դիմաց աջակցություն է ստացել 63 տնտեսավարող: Նշենք, որ նախատեսված 70 տնտեսավարողներից դիմում են ներկայացրել միայն 64-ը, որոնցից 1-ը հրաժարվել է տրամադրվող օժանդակությունից: Միջոցառման շրջանակներում տրամադրվել է շուրջ 172.1 մլն դրամ պետական աջակցություն, որը կատարվել է 97%-ով:

ՀՀ արդարին գործերի նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 6 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են շուրջ 17.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.1%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում առաջացել է Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպման ու իրականացման և Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակման ու իրականացման ծրագրերում: 2021 թվականին նախորդ տարվա համեմատ նախարարության պատասխանատվությամբ կատարված ծրագրերի գծով ծախսերն ավելացել են 1.4%-ով կամ 240.2 մլն դրամով՝ պայմանավորված «Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում», «Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում» և «Աջակցություն օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության կազմակերպմանը և իրականացմանը» ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Այլուստ 23. 2021թ. ՀՀ արդարին գործերի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	16,850.0	17,427.3	17,090.2	98.1	101.4	240.2
Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակում և իրականացում	1,876.5	1,872.7	1,822.7	97.3	97.1	(53.8)
Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	2,279.3	2,204.3	2,197.1	99.7	96.4	(82.2)
Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության	11,867.7	12,119.3	11,852.6	97.8	99.9	(15.1)

մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում						
Այլ ծրագրեր	826.5	1,231.0	1,217.9	98.9	147.4	391.4

2021 թվականին *Օրբարերկրյա պետություններում* ՀՀ դիվանագիրական ծառայության մարմինների գործունեության կազմակերպման և իրականացման ծրագրի շրջանակներում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը դիվանագիտական ծառայության մարմինների (դեսպանություններ, գլխավոր հյուպատոսություններ, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչություններ) միջոցով ապահովել է երկկողմ և բազմակողմ արտաքին կապերի պահպանումը, մատուցել է հյուպատոսական ծառայություններ: Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել աշխարհի 176 երկրների հետ, արտերկրում ՀՀ-ն ունի 43 ռեզիդենտ դեսպան, ովքեր հավատարմագրված են ընդհանուր առմամբ 79 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 11 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ 10 գլխավոր հյուպատոսություն, 2 հյուպատոսական գրասենյակ: Ծրագրի շրջանականներում ծախսերը կազմել են շուրջ 11.9 մլրդ դրամ՝ 97.8%-ով ապահովելով ծրագրի կատարումը: Տարբերությունը հիմնականում պայմանավորված է նրանով, որ կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ մի շարք դեսպանություններում չեն իրականացվել արարողակարգային միջոցառումներ, գործուղումներ, ներկայացուցչական ծախսեր, որոշ ծրագրեր և հանդիպումներ իրականացվել են առցանց եղանակով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.2 մլրդ դրամ ուղղվել է Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրին՝ 99.7%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Ծրագրի շրջանակներում օգտագործված միջոցները հիմնականում ուղղվել են միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներին: Հայաստանն անդամակցում է 97 միջազգային կազմակերպությունների և ծրագրերի/կոնվենցիաների: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Մեդիա և տեղեկատվական գրագիտության քաղաքանության և ուազմավարության վերաբերյալ ազգային խորհրդատվության համար նախատեսված 7.2 մլն դրամ դրամաշնորհային միջոցները չեն ստացվել, ծրագրի իրագործման վերջնաժամկետը տեղափոխվել է 2022 թվական: Նախորդ տարվա համեմատ Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ծրագրի ծախսերը նվազել են 3.6%-ով կամ 82.2 մլն դրամով՝ պայմանավորված 2021 թվականին անդամակցության պայմանագրերի գումարների ճշտմամբ և արտարժույթի փոխարժեների փոփոխմամբ:

Արդարին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակման և իրականացման ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են ավելի քան 1.8 մլրդ դրամ

կամ նախատեսվածի 97.3%-ը: Շեղումը հիմնականում «Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում» միջոցառման գծով է, որի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.8 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 97.5%-ը: Ծրագրված ցուցանիշներից շեղումը պայմանավորված է տնտեսումներով և համավարակով պայմանավորված՝ գործուղումների սահմանափակմամբ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերում արձանագրվել է 2.9% (53.8 մլն դրամ) անկում՝ հիմնականում պայմանավորված 2020 թվականին կատարված ՀՀ հարկային և մաքսային մարմինների կողմից պետական կառավարման մարմիններում և հիմնարկներում օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորությունների մարման համար անհրաժեշտ վճարումներով, որոնց գծով հաշվետու տարում վճարումներ չեն իրականացվել, և ՀՀ մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացման ծախսերի կրճատմամբ:

2021 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերին տրամադրված 1.2 մլրդ դրամից 202.5 մլն դրամն ուղղվել է Միջազգային հարաբերությունների և դիվանագիրության ոլորտում մասնագետների պարրասպոման և վերապարրասպոման ծրագրին, որն օգտագործվել է նախատեսված ծավալով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 3.5 անգամ (145.4 մլն դրամով՝ պայմանավորված նրանով, որ Դիվանագիտական դպրոցի հիմնադրումից ի վեր դիվանագիտական կադրերի պատրաստման ծրագրի ծախսերն ամբողջությամբ և դիվանագետների վերապատրաստման ծրագրի ծախսերի մի մասն ամեն տարի իրականացվել են ԵՄ տրամադրած միջոցների հաշվին, իսկ 2021 թվականից դպրոցի ֆինանսավորման բոլոր ծախսերն իրականացվել են ՀՀ պետական բյուջեի հաշվին: Դիվանագիտական դպրոցի նպատակներն են՝ դիվանագետների, պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների վերապատրաստումը, դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով, միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը, այլ ուսումնական ծրագրերի իրականացումը: Ծրագրի նպաստում է նոր և որակյալ մասնագետներով դիվանագիտական ծառայության համալրմանը, պետական ծառայության, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների տեսական գիտելիքների և գործնական հմտությունների բարելավմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսված 5 վերապատրաստման ծրագրերի փոխարեն, անհրաժեշտությունից ենթակա իրականացվել է 7-ը, «Դիվանագիտական կադրերի պատրաստում» ծրագրի շրջանավարտների բանակը կազմել է 11՝

նախատեսված 20-ի փոխարեն, դիվանագետների և այլ գերատեսչությունների արտաքին կապերի ստորաբաժանումների վերապատրաստվող աշխատակիցների, վերապատրաստվող լրագրողների թիվը կազմել է 75՝ նախատեսված 70-ի փոխարեն:

Հայաստանի Հանրապետությունում և օդարերկրյա պեղություններում արարողակարգային միջոցառումների իրականացման նպատակով օգտագործվել է 314.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 96%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակով, որի պատճառով արտասահմանյան պաշտոնական գործուղումների մի մասը հետաձգվել է: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 80.6%-ով (140.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված համավարակի տեմպի թուլացման հետ կապված սահմանափակումների մեղմման արդյունքում արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների գծով ծախսերի 2.9 անգամ (99.1 մլն դրամ) աճով, որոնք հաշվետու տարում կազմել են 150.3 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում 162.4 մլն դրամ է տրամադրվել Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացմանը՝ 93.1%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը:

2021 թվականի ընթացքում ՀՀ արտաքին գործերի նախարարության արտաքրութետային միջոցներից, որոնք գոյանում են ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններին կատարվող նվիրաբերություններից, 700.8 մլն դրամ հատկացվել է Օդարերկրյա պեղություններում ՀՀ դիվանագիտական ծառայության կազմակերպմանը և իրականացմանն աջակցության ծրագրի շրջանակներում, որն օգտագործվել է ողջ ծավալով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի ծախսերն աճել են 17.7%-ով կամ 105.6 մլն դրամով՝ պայմանավորված կատարված նվիրաբերությունների ծավալով:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 6 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 7.2 մլրդ դրամ կամ նախատեսվածի 78.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է նախարարության ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման ծրագրի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի 17.3% (1.1 մլրդ դրամ) աճ՝ հիմնականում պայմանավորված 2020 թվականի երրորդ եռամյակից ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ենթակայության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» և «Անտառային մոնիթորինգի

կենտրոն» ՊՈԱԿ-ների և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևոյթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի միավորման ձևով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համակարգում ստեղծված «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին հատկացված միջոցները «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրում ներառելու հանգամանքով: 2020 թվականի համադրելի ցուցանիշի համեմատ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ծախսերն աճել են 7.7%-ով կամ 513.4 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 6 համայնքներին տրամադրված շուրջ 435 մլն դրամ բնապահպանական սուբվենցիաներով՝ որոնք նախորդ տարի, օրենսդրական կարգավորումներով պայմանավորված, նախատեսված չեն եղել:

Աղյուսակ 24. 2021թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից հրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ (2021թ. հետ համադրելի)	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	6,700.3	9,172.1	7,213.7	78.6	107.7	513.4
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ	1,660.2	2,055.1	2,050.8	99.8	123.5	390.6
Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում	1,800.4	3,105.3	1,498.2	48.2	83.2	(302.2)
Անտառների կառավարում	1,848.9	2,057.1	1,818.8	88.4	98.4	(30.2)
Այլ ծրագրեր	1,390.7	1,954.6	1,845.9	94.4	132.7	455.1

Հաշվետու ժամանակահատվածում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահակման և մոնիթորինգի ծրագրին հատկացվել է 2.1 մլրդ դրամ, որն օգտագործվել է 99.8%-ով: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ ծրագրի ծախսերն աճել են 23.5%-ով կամ 390.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված «Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» միջոցառման շրջանակներում կատարված ծախսերի աճով, որն իր հերթին պայմանավորված է ՊՈԱԿ-ին ՀՀ պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ գումարի հատկացմամբ:

Ծրագրին հատկացված միջոցների հիմնական մասն ուղղվել է «Հիդրոօդերևութաբանություն, շրջակա միջավայրի մոնիթորինգ և տեղեկատվության ապահովում» միջոցառմանը, որի շրջանակներում 46 գետում՝ 108 դիտակետից, 6 ջրամբարում՝ 6 դիտակետից և Սևանա լճում՝ 18 դիտակետից իրականացվել է ՀՀ մակերևութային ջրային օբյեկտների որակի մոնիթորինգ, որի

արդյունքում որոշված ցուցանիշների քանակը կազմել է 43420, և Արաքս գետի աղտոտվածության հայ-իրանական համատեղ մոնիթորինգ, որի արդյունքում որոշված ցուցանիշների քանակը կազմել է 2040: Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: ՀՀ մթնոլորտային օդի որակի մոնիթորինգն իրականացվել է 10 քաղաքներում, հետազոտվել է 75300 փորձանմուշ՝ «Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ (ЕМЕР) ծրագրի» շրջանակներում ուսումնասիրվել են Հայաստանում օդի անդրսահմանային աղտոտման մոնիթորինգի ցուցանիշներ՝ 10395 փորձանմուշ: Իրականացվել է ստորերկյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիթորինգ ՀՀ 6 ջրավագանային կառավարման տարածքում ընդգրկված 100 ստորերկյա ջրաղբյուրներում՝ հորատանցքերում և բնաղբյուրներում: 2021 թվականի ընթացքում ուսումնասիրվել են թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման 20 օբյեկտներ և 11 հեռացման վայրեր: Ուսումնասիրվել են թափոնների օգտահանման, վնասազերծման 15 տեխնոլոգիա և երկրորդային հումքի վերամշակման 10 մեթոդ: Հաշվետու ժամանակահատվածում մթնոլորտում և գետնի մակերևույթին տեղի ունեցող ֆիզիկական երևոյթների ուսումնասիրման նպատակով օդերևութաբանական դիտարկումները կատարվել են Հանրապետության տարածքի 46 օդերևութաբանական (այդ թվում՝ 6 բարձրեռնային դժվարամատչելի և 3 մասնագիտացված) կայաններում՝ լրիվ ծրագրով, իսկ 26 հիդրոլոգիական կայաններում՝ կրճատ ծրագրով (միայն օդի ջերմաստիճանի, տեղումների, մթնոլորտային երևոյթների և ծյան ծածկի բարձրության), Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության կողմից սահմանված կարգով և միջազգային ստանդարտներին համապատասխան 3 ժամը մեկ անգամ 00 ժամից սկսած (Գրինվիչի ժամանակով), իսկ մթնոլորտային երևոյթների և եղանակի վիճակի նկատմամբ՝ շուրջօրյա: Հիդրոօդերևութաբանության, շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության ապահովման միջոցառման ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով շուրջ 2 մլրդ դրամ:

Բնական պաշարների և բնության հարուկ պահպանվող բարածքների կառավարման և պահպանման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում օգտագործվել է նախատեսված միջոցների 48.2%-ը՝ 1.5 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում արձանագրվել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ ՀՀ Սյունիքի մարզի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության դրամաշնորհային ծրագրում, որի կատարողականը կազմել է 16.5% կամ 309.6 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ ծրագրի գործողությունները գտնվում են դոնորի հետ քննարկումների և համաձայնեցումների գործընթացում՝ կապված ծրագրի ավարտի և հնարավոր երկարաձգման հետ:

Արդյունքում չեն ապահովվել ծրագրի շրջանակներում նախատեսված արդյունքային ցուցանիշները: 2021 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են սոցիալ-տնտեսական և բնապահպանական ուղղվածության դրամաշնորհային ծրագրերը, այդ թվում՝ ավարտվել են «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի վարչական շենքի վերանորոգման և «Արևիք» ազգային պարկի վարչական շենքի շինարարության նախագծման աշխատանքները:

Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման ծրագրի շրջանակներում ավելի քան 1 մլրդ դրամ (ծրագրվածի 97.2%-ը) ուղղվել է բնության հատուկ պահպանվող տարածքների («Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» ազգային պարկերի, «Խոսրովի անտառ» պետական արգելոցի, Արգելոցապարկային համալիր և Զանգեզուր կենսոլորտային համալիր ԲՀՊ տարածքների) պահպանությանը, դրանցում գիտական ուսումնասիրությունների և անտառատնտեսական աշխատանքների կատարմանը: Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է տնտեսումներով: Նշված միջոցառումների շրջանակներում հիմնականում ապահովվել են նախատեսված արդյունքային չափորոշիչները, որոշ չափորոշիչների գծով արձանագրվել է ծրագրված ցուցանիշների գերազանցում: «Սևան» ազգային պարկի պահպանության, պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառատնտեսական աշխատանքների կատարման միջոցառման շրջանակներում նախատեսված՝ Սևանա լճի ջրածածկ անտառունկարկների մաքրման աշխատանքները թերակատարվել են՝ նախատեսված 50 հա-ի փոխարեն մաքրվել է 4.89 հա տարածք, որը պայմանավորված է եղել անբարենպաստ եղանակային պայմաններով:

Նախորդ տարվա համեմատ Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման և պահպանման ծրագրի ծախսերը նվազել են 16.8%-ով կամ 302.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) աջակցությամբ ՀՀ Սյունիքի մարզում իրականացվող դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում 1.8 մլրդ դրամ է օգտագործվել Անդրանիկ Արմենի կառավարման ծրագրի շրջանակներում՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 88.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների գծով ծախսերի կատարողականով, որը կազմել է 62% կամ 232.8 մլն դրամ: Միջոցառման գծով գումարը «Հայանտառ» ՊՈԱԿ-ին ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 2021 թվականի հունիսին, ինչի հետևանքով տնկման աշխատանքները հնարավոր են եղել իրականացնել միայն աշնանը, իսկ գարնանային խնամքի աշխատանքները չեն կատարվել:

Անտառների կառավարման ծրագրի կատարողականը պայմանավորված է նաև Անտառային ոլորտում քաղաքականության մշակման և աջակցության ծառայությունների ու ծրագրերի համակարգման ծախսերի կատարողականով, որը կազմել է 60.3% կամ 144.9 մլն դրամ, որը պայմանավորված է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից տարածքի համատեղ օգտագործմամբ, ինչի արդյունքում որոշ ծախսերի գծով նախատեսված միջոցները տնտեսվել են, ինչպես նաև թափուր հաստիքների առկայությամբ:

Անտառների կառավարման ծրագրի միջոցառումների շրջանակներում նախատեսված արդյունքային չափորոշիչները հիմնականում ապահովվել են: Ծրագրին հատկացված միջոցների հիմնական մասը՝ ավելի քան 1.3 մլրդ դրամը, տրամադրվել է անտառապահպանական ծառայություններին՝ ապահովելով 100% կատարողական: Միջոցառման շրջանակներում ապահովվել է 342.4 հազար հա անտառային տարածքների պահպանում, Անտառային կոմիտեի «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Անտառունտեսություն» մասնաճյուղերի կողմից կազմվել է 383 անտառիսախտման արձանագրություն: Թվով 12 մասնաճյուղերում անտառապահպանության աշխատողների մասնագիտական գիտելիքների բարձրացման նպատակով կազմակերպվել են դասընթացներ՝ «Առկա անտառապահպանական խնդիրները և աշխատանքներ անտառային օրենսդրության խախտումների հայտնաբերման, արձանագրման և կանխարգելման ուղղությամբ» թեմայով:

Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ Անտառների կառավարման ծրագրի ծախսերը նվազել են 1.6%-ով կամ 30.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների միջոցառման շրջանակներում կատարված ծախսերի 17.6% (49.8 մլն դրամ) նվազմամբ:

2021 թվականին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերին տրամադրված 1.8 մլրդ դրամից շուրջ 1.1 մլրդ դրամն օգտագործվել է Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի շրջանակներում, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 92.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է հաստիքների օպտիմալացմամբ և տնտեսումներով: 2020 թվականի համեմատ ծրագրի ծախսերն աճել են 0.8%-ով (8.7 մլն դրամով):

Բնագիտական նմուշների պահպանության և ցուցադրության ծրագրին հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է 353.6 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.5%-ը: Նշված գումարից 313.1 մլն դրամն ուղղվել է կենդանաբանական այգու ցուցադրություններին, 40.5 մլն դրամ՝ բնագիտական նմուշների պահպանությանը և ցուցադրությանը: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 3.4%-ով (11.5 մլն դրամով),

որը հիմնականում պայմանավորված է 2021 թվականին պետական բյուջեից հատկացված դրամաշնորհի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ գումարի փոխհատուցմամբ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատասխանատվության ներքո 2021 թվականի ընթացքում իրականացվել են 21 ծրագրեր, որոնց շրջանակներում օգտագործվել է 174.8 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.7% (4 մլրդ դրամով պակաս) կատարողական: Գույքե բոլոր ծրագրերում արձանագրվել են շեղումներ: Առանձնապես խոշոր շեղումներ են արձանագրվել Կրթության որակի ապահովման (1.4 մլրդ դրամ), Հանրակրթության (719.2 մլն դրամ) ու Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների (480.2 մլն դրամ) ծրագրերում: Նախորդ տարվա համեմատ նախարարության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է Հանրակրթության, Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ու Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության ծրագրերի գծով ծախսերի աճով:

Աղյուսակ 25. 2021թ. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ (2021թ. հետ համադրելի)	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴՀԱՄԵՆԸ	170,900.6	178,853.6	174,809.5	97.7	102.3	3,908.9
Մեծ նվաճումների սպորտ	1,924.3	3,087.3	3,048.1	98.7	158.4	1,123.8
Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	11,204.3	10,483.2	10,414.6	99.3	93.0	(789.7)
Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության ծրագիր	10,880.7	12,669.8	12,546.0	99.0	115.3	1,665.4
Հանրակրթության ծրագիր	96,574.1	100,140.7	99,421.5	99.3	102.9	2,847.3
Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	13,106.4	15,622.4	15,142.2	96.9	115.5	2,035.8
Արվեստների ծրագիր	12,030.4	9,121.1	8,854.4	97.1	73.6	(3,176.0)
Կրթության որակի ապահովում	4,943.8	5,501.0	4,084.2	74.2	82.6	(859.6)
Այլ ծրագրեր	20,236.5	22,228.2	21,298.4	95.8	105.2	1,061.9

Հաշվետու տարում **Մեծ նվաճումների սպորտի ծրագրի շրջանակներում կատարված ծախսերը կազմել են ավելի քան 3 մլրդ դրամ, որոնք կատարվել են 98.7%-ով:** Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերի 58.4%-ով կամ 1.1 մլրդ

դրամով աճը հիմնականում պայմանավորված է 2020 թվականին Հայաստանում կորոնավիրուսային համավարակի (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով միջոցառումների չեղարկմամբ։ Աճը հիմնականում արձանագրվել է ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ու միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման ծախսերում։ Բացի այդ, 2021 թվականի աշխարհի և Եվրոպայի առաջնություններին նախապատրաստվելու և մրցաշրջանը եզրափակելու նպատակով 2021 թվականի պետական բյուջեից 113.5 մլն դրամ ֆինանսական աջակցություն է տրամադրվել ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին, մարզիչներին և բժիշկներին, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99%-ը։

ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման միջոցառման շրջանակներում 2021 թվականին Հայաստանում գործող թվով 34 ֆեդերացիաների կողմից կազմակերպվել են ՀՀ 99 առաջնություններ (նախատեսված 100-ի դիմաց), որոնց մասնակցել է 9395 մասնակից՝ 2020 թվականի 86 առաջնության և 8350 մասնակցի դիմաց։ Կազմակերպվել է նաև 130 ուսումնամարզական հավաք (նախատեսված 153-ի դիմաց) 2375 մասնակցով՝ 2020 թվականի համապատասխանաբար 102-ի և 1890-ի դիմաց, 143 միջազգային միջոցառում (նախատեսված 200-ի դիմաց) 1706 մասնակցով՝ 2020 թվականի համապատասխան 55-ի և 586-ի դիմաց։ Նախատեսվածի համեմատ միջոցառումների փաստացի փոքր թիվը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի պայմաններում որոշ միջոցառումների չեղարկմամբ։ Պետական աջակցության ծրագրում ընդգրկված ֆեդերացիաների մարզիկները 2021 թվականի ընթացքում մեծահասակների, երիտասարդների և պատանիների Եվրոպայի և աշխարհի առաջնություններում նվաճել են 199 մեդալ, այդ թվում՝ 55 ոսկե, 57 արծաթե և 87 բրոնզե, Օլիմպիական խաղերին Հայաստանի օլիմպիական հավաքականի մարզիկները նվաճել են 2 արծաթե և 2 բրոնզե մեդալ։ ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստման և առաջնությունների անցկացման ծախսերի կատարողականը կազմել է 98.5% կամ 1.4 մլրդ դրամ, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 66.8%-ով կամ 572.4 մլն դրամով։

Ադապտիվ սպորտին առնչվող ծառայությունների միջոցառման շրջանակներում պետական աջակցություն է տրամադրվել «Հայաստանի ազգային պարալիմպիկ կոմիտե», «Հայաստանի կույրերի միավորում», «Էսուզերի հայկական սպորտային կոմիտե», «Հայկական հատուկ օլիմպիադաներ» հասարակական կազմակերպություններին, որոնք ֆիզիկական կուլտուրայի և

սպորտի միջոցով օգնում են հենաշարժողական համակարգի, տեսողության, լսողության հետ կապված խնդիրներ ունեցող, մտավոր խանգարումներով մարդկանց՝ ինքնադրսուրվելու և լիարժեք ինտեգրվելու հասարակության մեջ, ինչպես նաև նախապատրաստվելու և ապահովելու մասնակցությունը պարալիմպիկ, սուրդիմպիկ և աշխարհի խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցաշարերին: 2021 թվականին ադապտիվ սպորտին առնչվող ծառայությունների շրջանակներում անցկացվել է ՀՀ 7 առաջնություն, որոնց մասնակցել է հաշմանդամություն ունեցող 246 մարզիկ, 4 ուսումնամարզական հավաք՝ 37 մարզիկների մասնակցությամբ, 5 միջազգային միջոցառում՝ 22 մարզիկների մասնակցությամբ, ինչպես նաև 1 ֆիզկուլտուրային առողջարարական գանգվաճային հանրապետական միջոցառում՝ 117 մարզիկների մասնակցությամբ: Տոկիոյի ամառային պարալիմպիկ խաղերին՝ հաշմանդամային բազկամարտի աշխարհի առաջնությունում, մեր հավաքականը նվաճել է 3 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզե մեդալներ: Միջոցառման ծախսերը կազմել են 33 մլն դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 82.9%-ը և 7.9 անգամ կամ 28.8 մլն դրամով գերազանցելով 2020 թվականի փաստացի ցուցանիշը: Ծրագրված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է կորոնավիրուսային համավարակի տարածման կանխարգելման նպատակով «Խովերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ-ի կողմից նախատեսված ազատ և հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի ու ֆուտզալի ՀՀ առաջնությունների չեղարկմամբ, իսկ նախորդ տարվա համեմատ աճը՝ 2020 թվականին միջոցառումների մեծ մասի չեղարկմամբ:

Հաշվետու տարում շախմատիստների պատրաստման ծառայությունների միջոցառման շրջանակներում շախմատի ակադեմիայում սովորել է 1060 ուսանող, միջազգային մրցաշարերին մասնակցության նպատակով պատրաստվել է 1 շախմատիստ, կազմակերպվել է 3 միջազգային մրցաշար, մարզիչների վերապատրաստում, միջազգային մրցաշարերում ակադեմիայի սաներն ունեցել են 8 հաղթանակ և մրցանակային տեղեր: Շախմատիստների պատրաստման ծառայությունների համար նախատեսված 158.4 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որը տրամադրվել է «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամին: Հիմնադրամի նպատակներն ու խնդիրներն են՝ Հայաստանի ամբողջ տարածքում տաղանդաշատ երեխաների բացահայտումը, նրանց անվճար կրթումը, միջազգային մրցաշարերի և միջոցառումների կազմակերպման ճանապարհով շախմատի մասսայականացումը: Նշված նպատակների իրագործման համար մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնցից են՝ մարզերում շախմատային խմբակների ստեղծումը, որտեղ երեխաներն անվճար ուսանում են շախմատ, լավագույնները մասնակցում են մրցաշարերի, ստանում որակավորում, միջազգային և ազգային մրցաշարերի կազմակերպումը, մարզիչների որակավորումը բարձրացնելու նպատակով

սեմինարների կազմակերպումը, որտեղ արտերկրից հրավիրվում են փորձառու մարզիչներ՝ իրենց փորձը կիսելու և շախմատային գիտելիքներ հաղորդելու համար, լավագույն սաների համար հավաքների կազմակերպումը։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 3.9%-ով կամ 6.4 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Հայաստանի շախմատային ակադեմիա» հիմնադրամի պահպանման ծախսերի նվազմամբ։

Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման միջոցառման շրջանակներում 2021 թվականին տարեվերջյան պարգևատրման են ներկայացվել 112 մարզիկներ, 336 մարզիչներ և 29 բժիշկ՝ 2020 թվականի 48 մարզիկների ու մարզիչների և 5 բժիշկների դիմաց։ Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների հանձնման նպատակով հատկացված 371.5 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է և 12.4 անգամ կամ 341.7 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված դրամական մրցանակներ ստացած շահառուների թվի աճով։

2021 թվականի ՀՀ պետական բյուջեով ավելի քան 10.4 մլրդ դրամ է տրամադրվել Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ծրագրին՝ ապահովելով 99.3% կատարողական։ Ծրագիրն ուղղված է աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը, կրթության մատչելիության ապահովմանը։ Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 7%-ով կամ 789.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների ծախսերի նվազմամբ։

Հաշվետու տարվա ընթացքում միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառման շրջանակներում նպաստ է տրամադրվել 19197 ուսանողի՝ կանխատեսված 20071-ի և 2020 թվականի 19457-ի դիմաց։ Հանրապետությունում 2021 թվականին, ինչպես և 2020 թվականին, գործել է 69 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություն, միջին մասնագիտական կրթական ծրագիր է իրականացվել 79 պետական ուսումնական հաստատությունների կողմից, կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտվել է 18452 սովորող՝ կանխատեսված 6000-ի և 2020 թվականի 9577-ի դիմաց։ Հաշվետու տարում միջին մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրմանն ուղղվել է ավելի քան 6.8 մլրդ դրամ, որը կազմել է նախատեսված հատկացումների 99.7%-ը։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 11.1%-ով կամ 847.7 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստ ստացած ուսանողների թվի նվազմամբ։

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառման շրջանակներում նպաստ է տրամադրվել 6455 ուսանողի՝ կանխատեսված 7553-ի և 2020 թվականի 7512-ի դիմաց: Հանրապետությունում 2021 թվականին, ինչպես և 2020 թվականին, գործել է 21 նախնական մասնագիտական (արհեստագործական) պետական ուսումնական հաստատություն, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր իրականացնող 56 պետական ուսումնական հաստատություն, կարիերայի կենտրոնների ծառայություններից օգտվել են 3411 սովորողներ՝ կանխատեսված 2000-ի դիմաց: 2021 թվականի ընթացքում նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության գծով ուսանողական նպաստների ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ միջոցառման գծով ծախսերն աճել են 1.5%-ով կամ 33.9 մլն դրամով, որը պայմանավորված է նպաստների հատկացման կարգի փոփոխությամբ, որի արդյունքում 2021 թվականի սեպտեմբերից հատկացվել է նաև վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի փոխառություն:

2021 թվականի ընթացքում Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության ծրագրին տրամադրվել է ավելի քան 12.5 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99% կատարողական: Ծրագիրն ուղղված է գիտելիքների տնտեսության և գիտության զարգացման արդի պահանջներին համապատասխան բարձրագույն և հետքուհական մասնագիտական որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ Բարձրագույն և հետքուհական մասնագիտական կրթության ծրագրի ծախսերն աճել են 15.3%-ով կամ 1.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականի պետական բյուջեից ուղամական դրությամբ պայմանավորված բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողների ուսման վարձի փոխառություն նպատակով միջոցների հատկացմամբ: Նշված միջոցառման շրջանակում իրականացվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ը տևած հայ-ադրբեջանական պատերազմի (Արցախյան երկրորդ պատերազմի) ընթացքում բարձրագույն ուսումնական հաստատությունների մարտական գործողությունների մասնակից ուսանողների, ուսանող երեխաների և ամուսինների՝ 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսման վարձի փոխառությունը: Փոխառությունը տրամադրվել է Հայաստանի Հանրապետությունում գործող բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների առկա և հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում սովորողներին, որոնք 2020-2021 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դրությամբ ընդգրկված են եղել ուսումնական հաստատությունների ուսանողական համակազմում կամ սահմանված կարգով դադարեցրել են ուսումնառությունը:

պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ՝ ներառյալ 2020 թվականի ամառային զորակոչը, և որոնք (կամ որոնց օրինական ներկայացուցիչը (ծնող, որդեգրող, խնամակալ) կամ ամուսինը) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեյջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձագերծված պատերազմի ընթացքում մասնակցել են մարտական գործողություններին: Միջոցառման շրջանակներում ուսման վարձի փոխհատուցում է ստացել 7318 ուսանող՝ կանխատեսված 7228-ի դիմաց: Ռազմական դրությամբ պայմանավորված բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողների ուսման վարձի փոխհատուցման ծախսերը կազմել են շուրջ 1.6 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.1%-ը:

Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրման միջոցառման շրջանակներում 2021 թվականին նպաստ ստացող ուսանողների թիվը կազմել է 10468՝ կանխատեսված 10483-ի և 2020 թվականի 10426-ի դիմաց, իսկ ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացած ուսանողների միջին տարեկան թիվը կազմել է 608՝ կանխատեսված 620-ի և 2020 թվականի 530-ի դիմաց: Միջոցառման ծախսերը կազմել են 9 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական և 0.9%-ով (82.2 մլն դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

2021 թվականի ընթացքում ավելի քան 99.4 մլրդ դրամ է օգտագործվել Հանրակրթության ծրագրի շրջանակներում՝ ապահովելով 99.3% կատարողական: Ծրագրում ընդգրկված են 32 միջոցառումներ: Ծրագիրն ուղղված է մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացմամբ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիրակված, պատշաճ վարքով և վարվելակերպով անձի ձևավորմանը: Նախորդ տարվա համարելի ցուցանիշի համեմատ ծրագրի ծախսերն աճել են 2.9%-ով՝ կամ 2.8 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված տարրական ընդհանուր հանրակրթության միջոցառման շրջանակներում կատարված ծախսերի աճով:

2021 թվականին ընդհանուր հանրակրթական ուսումնական կրթություն է իրականացվել թվով 1336 պետական ուսումնական հաստատություններում՝ 2020 թվականի 1335-ի դիմաց:

Աղյուսակ 26. Ընդհանուր հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2020թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. և 2020թ. տարբե- րությունը	2020թ. փաստ (մլն դրամ)	2021թ. փաստ (մլն դրամ)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
Ընդհանուր հանրակրթություն	388422	390347	1925	88,529.4	89,922.6	101.6
Տարրական	151412	152362	950	29,915.8	33,740.3	112.8
Հիմնական	170330	178166	7836	39,589.5	39,391.2	99.5
Միջնակարգ	66680	59819	(6861)	19,024.1	16,791	88.3

Ընդհանուր հանրակրթության ծախսերը 2021 թվականին կատարվել են 99.5%-ով՝ կազմելով 89.9 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 1.6%-ով կամ 1.4 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված աշակերտների փաստացի թվի աճով:

Հանրակրթության համակարգում 2021 թվականին գործել է 7 հատուկ դպրոց՝ 2020 թվականի 8-ի դիմաց:

Աղյուսակ 27. Հարուկ հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2020թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. և 2020թ. տարբե- րությունը	2020թ. փաստ (մլն դրամ)	2021թ. փաստ (մլն դրամ)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
Հատուկ հանրակրթություն	716	533	(183)	1,329.0	1,179.8	88.8
Տարրական	183	158	(25)	348.4	329.6	94.6
Հիմնական	364	237	(127)	553.0	512.2	92.6
Միջնակարգ	169	138	(31)	427.6	338.0	79.0

Նախորդ տարվա համեմատ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորված է հատուկ դպրոցները տարածքային մանկավարժական գործառույթն է սովորողի կարիքի գնահատումը, ըստ անհրաժեշտության կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհատական ուսումնական պլաններով կրթության կազմակերպումը:

Աղյուսակ 28. Ներառական կրթության համակարգի ցուցանիշները

	2020թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. և 2020թ. տարբե- րությունը	2020թ. փաստ (մլն դրամ)	2021թ. փաստ (մլն դրամ)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
Ներառական կրթություն	959	770	(189)	567.9	340.6	60.0
Տարրական դպրոցում	348	265	(83)	200.9	114.6	57.0
Միջին դպրոցում	533	451	(82)	319.1	195.1	61.1
Ավագ դպրոցում	78	54	(24)	47.9	30.9	64.5

2021 թվականին տարրական, միջին և ավագ ներառական կրթության ծախսերը կատարվել են 98.2%-ով՝ կազմելով 340.6 մլն դրամ, որից 114.6 մլն դրամը (96%)՝ տարրական, 195.1 մլն դրամը (99.6%)՝ միջին և 30.9 մլն դրամը (97.2%)՝ ավագ դպրոցներում իրականացվող ներառական

կրթության ծախսերն են: Ծրագրային ցուցանիշներից շեղումները հիմնականում պայմանավորված են ներառական կրթական հաստատությունների աշակերտների՝ կանխատեսվածից պակաս թվով: 2020 թվականի համեմատ անկումը հիմնականում պայմանավորված է համընդհանուր ներառական կրթության համակարգի անցման գործընթացով, որը հանգեցրել է ներառական կրթական հաստատություններում աշակերտների թվի նվազման:

2021 թվականին, ինչպես և 2020 թվականին, մասնագիտացված կրթության համակարգում գործել է 10 մասնագիտացված դպրոց:

Աղյուսակ 29. Մասնագիտացված հանրակրթության համակարգի ցուցանիշները

	2020թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. սովորողների փաստացի թիվ	2021թ. և 2020թ. տարբե- րությունը	2020թ. փաստ (մլն դրամ)	2021թ. փաստ (մլն դրամ)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
Մասնագիտացված հանրակրթություն	3127	3674	547	2,759.8	3,676.0	133.2
Տարրական	268	301	33	216.6	254.6	117.5
Հիմնական	1447	1827	380	1,077.6	1,593.0	147.8
Միջնակարգ	1412	1546	134	1,465.6	1,828.4	124.8

Հաշվետու տարում տարրական, հիմնական և միջնակարգ մասնագիտացված հանրակրթական ուսուցման նպատակով օգտագործվել է շուրջ 3.7 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 94.7%-ը; Մասնավորապես՝ 254.6 մլն դրամ (100%) ուղղվել է տարրական, 1.6 մլրդ դրամ (100%)՝ հիմնական, 1.8 մլրդ դրամ (89.9%)՝ միջնակարգ մասնագիտական հաստատություններին: Վերջին միջոցառման շրջանակներում ծրագրային ցուցանիշից շեղումը պայմանավորված է <<ՊՆ Ենթակայությամբ գործող Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի սաների՝ կանխատեսվածից պակաս թվով, ինչպես նաև նշվածի արդյունքում սննդի ծախսերի տնտեսմամբ: 2020 թվականի համեմատ մասնագիտացված հանրակրթական ուսուցման ծախսերն աճել են 33.2%-ով կամ 916.2 մլն դրամով, որը նույնպես պայմանավորված է սովորողների թվի աճով:

2021 թվականի ընթացքում ավելի քան 15.1 մլրդ դրամ է տրամադրվել Գիրական և գիրապեխնիկական հետազոտությունների ծրագրին՝ ապահովելով 96.9% կատարողական և 15.5%-ով կամ 2 մլրդ դրամով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրին ուղղված է գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների հետազոտությունների իրականացմանը, գիտական ներուժի զարգացմանը, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանմանը: Ծրագրի նկատմամբ շեղումը հիմնականում պայմանավորված է

«Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» և «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառումների կատարողականներով։ Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է նշված երկու միջոցառումների գծով ծախսերի աճով։

Գիտական ենթակառուցվածքների արդիականացման միջոցառման նպատակն է գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացումը, ծրագրերի իրականացումը, գիտական սարքավորումների արդիականացումը, միջազգային համագործակցությանն աջակցությունը։ 2021 թվականին «Գիտական ենթակառուցվածքի արդիականացում» միջոցառման շրջանակներում փաստացի ներգրավված է եղել թվով 67 կազմակերպություն, համագործակցել է 1 գիտական կառույց, իրականացվել է թվով 71 միջազգային գիտական ծրագիր, Հայաստանն անդամակցել է թվով 3 միջազգային գիտական կառույցի, պետական բյուջեից ֆինանսավորել է երիտասարդ գիտնականների թվով 3 դպրոց և 30 երաշխավորված գիտական միջոցառում։ Կատարվել է նաև թվով 340 գիտական հայտի փորձաքննություն՝ կանխատեսված 500-ի և 2020 թվականի 200-ի դիմաց։ Միջոցառման գծով ծախսերը կազմել են շուրջ 8.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 95.6%-ը։ Շեղումը հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետ կապված՝ գիտական գործուղումների, ինչպես նաև գիտական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի, ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցների՝ նախատեսվածից պակաս քանակով։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով կամ 513.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված փորձաքննված գիտական հայտերի քանակի աճով։

Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների միջոցառման շրջանակներում 2021 թվականի ընթացքում պետական բյուջեից ֆինանսավորվել են թվով 500 գիտական թեմաներ՝ կանխատեսված 347-ի և 2020 թվականի 320-ի դիմաց։ Միջոցառման շրջանակներում իրականացվել են երիտասարդ գիտաշխատողների (մինչև 35 տարեկան) աջակցության ծրագրերի և հետազոտությունների ֆինանսավորում, Արցախի հետ համագործակցության ծրագիր, «ՔԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտ» հիմնադրամի «AREAL» գծային արագացուցչի վրա իրականացվող և Շիրակի մարզի գիտական կազմակերպություններում իրականացվող գիտական թեմաների ֆինանսավորում, «Արեւտական բանականություն և տվյալագիտություն», «Քվանտային տեխնոլոգիաներ», «Ուրբոտատեխնիկա» մասնագիտություններով հետազոտություններ, «Հասարակական գիտություններ», «Հայագիտություն և հումանիտար գիտություններ» բնագավառների հետազոտություններ, կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված հետազոտություններ։ Տրամադրվել է աջակցություն ասպիրանտներին և

Երիտասարդ հայցորդներին հետազոտությունների իրականացման, գիտական խմբերի կամ լաբորատորիաների ամրապնդմանն ուղղված և կին ղեկավարների առաջխաղացմանն ուղղված ծրագրերին, ինչպես նաև բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներին, այդ թվում՝ Երիտասարդ գիտաշխատողներին (մինչև 35 տարեկան) տարմադրվել են հավելավճարներ: Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների գծով ծախսերը 2021 թվականին կազմել են ավելի քան 3.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 98.6%-ը, որը պայմանավորված է փորձաքննության աշխատանքների ուշ ավարտով և այն հանգամանքով, որ կորոնավիրուսի տարածման պատճառով գիտաժողովների և գործողությունների համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ չեն օգտագործվել: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 102.4%-ով կամ 1.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված հետազոտությունների թվի ավելացմամբ, մասնավորապես ավելացվել է առաջատար գիտնականների ծրագրի ֆինանսավորումը:

Հաշվետու տարում *Արվեստների ծրագրի* շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 97.1%-ը՝ շուրջ 8.9 մլրդ դրամ: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Մշակութային միջոցառումների իրականացում», «Շատերական ներկայացումներ» և «Երաժշտարվեստի և պարարվեստի համերգներ» միջոցառումների կատարողականներով՝ պայմանավորված ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով: Ծրագիրն ուղղված է մրցունակ արվեստային արտադրանքի ստեղծմանը, ստեղծագործական գործընթացների խթանանը, արվեստի նոր նախագծերի ներդրմանը և մշակութային կյանքում հասարակության ներգրավմանը, անհատի և հանրության հոգևոր-մշակութային առաջընթացի գործում մշակույթի ռազմավարական դերակատարման բարձրացմանը, մշակութային ենթակառուցվածքների արդիականացմանը, մշակութային ծառայությունների որակի բարելավմանն ու մատչելիության ապահովմանը, ստեղծագործական ներուժ ունեցող անհատների դրսնորմանը և նրանց գործունեության համար բարենպաստ դաշտի ստեղծմանը, նորարարական մտահղացումների խթանմանը, երիտասարդ ստեղծագործողներին մարզային և միջազգային մշակութային գործընթացներին ինտեգրմանն աջակցմանը: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 26.4%-ով կամ 3.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված միջոցառումներում ընդգրկված որոշ կազմակերպությունների ծախսերի ֆինանսավորման համար 2020 թվականին լրացուցիչ միջոցների հատկացմամբ, քանի որ կորոնավիրուսի տարածման հետևանքով նրանք չեն կարողացել ծևավորել սեփական միջոցներ:

Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության միջոցառումն իրականացվել է օպերային և բալետային արվեստի ավանդույթների պահպանման, տարածման և

զարգացման, դասական ու ժամանակակից օպերային և բալետային ստեղծագործությունների բեմադրման նպատակով: Փաստացի ներկայացումների քանակը 2021 թվականին կազմել է 73՝ նախատեսված 110-ի և 2020 թվականի 23-ի դիմաց, հանդիսատեսի թիվը՝ 45848՝ կանխատեսված 64735-ի և 2020 թվականի 9085-ի դիմաց: Նշված ցուցանիշների ցածր մակարդակը կանխատեսվածների նկատմամբ հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի արդյունքում միջոցառումների չեղարկմամբ: Օպերային և բալետային արվեստի ներկայացումներին աջակցության միջոցառման շրջանակներում հաշվետու տարում ավելի քան 1.4 մլրդ դրամ է տրամադրվել Ար. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 48.1%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

Թատերական ներկայացումների միջոցառման շրջանակներում հատկացումներն ուղղվել են 19 թատրոնների գործունեության ապահովմանը: Փաստացի ներկայացումների քանակը 2021 թվականին կազմել է 2774՝ նախատեսված 2684-ի և 2020 թվականի 944-ի դիմաց, հանդիսատեսի թիվը կազմել է 423113՝ կանխատեսված 466157-ի և 2020 թվականի 156774-ի դիմաց, իսկ նոր ներկայացումների քանակը կազմել է 83՝ նախատեսված 71-ի և 2020 թվականի 29-ի դիմաց: Թատերական ներկայացումների ծախսերը կազմել են ավելի քան 2.3 մլրդ դրամ, որոնք օգտագործվել են 96.4%-ով: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերը նվազել են 15.1%-ով կամ 417.2 մլն դրամով:

2021 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների միջոցառման շրջանակներում հատկացումներն ուղղվել են 12 համերգային կազմակերպությունների գործունեության ապահովմանը, երաժշտարվեստի և պարարվեստի պահպանմանը, զարգացմանն ու տարածմանը, երաժշտադրամատիկական, երաժշտական կատարողական, երգի-պարի արվեստին հաղորդակցմանը, երաժշտարվեստի ու պարարվեստի վերաբերյալ տեղեկույթի ապահովմանը, նոր գաղափարների ու արժեքների տարածմանը: Փաստացի համերգների քանակը 2021 թվականին կազմել է 445՝ կանխատեսված 506-ի և 2020 թվականի 92-ի դիմաց, հանդիսատեսի թիվը կազմել է 154229՝ կանխատեսված 172812-ի և 2020 թվականի 31873-ի դիմաց, իսկ նոր համերգային համարների քանակը կազմել է 32՝ նախատեսված 24-ի և 2020 թվականի 12-ի դիմաց: Փաստացի արդյունքային ցուցանիշների թերակատարումը կանխատեսվածների նկատմամբ հիմնականում պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի տարածման կանխարգելման նպատակով որոշ մասսայական միջոցառումների չեղարկմամբ: 2021 թվականին երաժշտարվեստի և պարարվեստի համերգների միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ կամ նախատեսվածի 97.6%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել են 11.5%-ով կամ 387.6 մլն դրամով:

Մշակութային միջոցառումների նպատակն է հայ ժամանակակից արվեստի զարգացումն ու հանրահոչակումը, երիտասարդ ստեղծագործական ներուժի բացահայտումը, դրա զարգացման համար պայմանների ստեղծումը և ժամանակակից ստեղծագործական գործընթացներում ներգրավումը, նոր գաղափարների և մտահղացումների խթանումը, խաղացանկերի և երկացանկերի ժանրային ու ոճական բազմազանության և որակի ապահովումը: Միջոցառման շրջանակում իրականացվել են Լյուդվիգ Վան Բեթհովենի սիմֆոնիաների սերիալ ձայնագրություն և արտադրություն, Անրի Վեոնոյի 100-ամյակին նվիրված միջոցառում ՅՈՒՆԵՍԿՕ-ի Փարիզի կենտրոնակայանում, «Սպարտակ» բալետի վերականգնում 3 գործողությամբ, Պ. Չայկովսկու «Շչեկունչիկ» (Մարդուկ-Զարդուկ) բալետի բեմադրություն: 2021 թվականին պետական աջակցությամբ իրականացվող ստեղծագործական ծրագրերի թիվը կազմել է 21՝ կանխատեսված 13-ի և 2020 թվականի 30-ի փոխարեն, անցկացվել է 5 միջոցառում միջազգային համագործակցության շրջանակներում (Եվրախորհրդի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի, ՄԱԿ-ի, ԱՊՀ երկրների համապատասխան կառույցների հետ, միջազգային կառույցների հետ՝՝ կանխատեսված 6-ի և 2020 թվականի 2-ի փոխարեն, 6 հանրապետական փառատոն, մրցույթ, ցուցահանդես, ստուգատես՝ կանխատեսված 5-ի և 2020 թվականի 6-ի փոխարեն, 2 միջոցառում՝ Հայաստանում սփյուռքահայ արվեստագետների ներկայացման և սփյուռքում հայ արվեստագետների ներկայացման ուղղությամբ՝ կանխատեսված 8-ի և 2020 թվականի 2-ի փոխարեն, 12 մանկապատանեկան մշակութային միջոցառումներ՝ կանխատեսված 7-ի և 2020 թվականի 11-ի փոխարեն: Ընդհանուր առմամբ 2021 թվականին իրականացվել է թվով 133 միջոցառում՝ 2020 թվականի 85-ի դիմաց: Մշակութային միջոցառումների իրականացմանը հաշվետու տարվա ընթացքում տրամադրվել է 744.2 մլն դրամ՝ ապահովելով 89.3% կատարողական: Նախորդ տարվա համեմատ մշակութային միջոցառումների գծով ծախսերն աճել են 22.7%-ով կամ 137.7 մլն դրամով՝ պայմանավորված իրականացված միջոցառումների քանակի աճով:

«ՅՈՒՆԵՍԿՕ-ի Մասնակցության ծրագրի շրջանակներում աջակցություն Հայաստանում մշակութային ծրագրերին» դրամաշնորհային միջոցառման շրջանակներում կազմակերպվել և իրականացվել են «Ալեքսանդր Սպենդիարյան» սկավառակով ալբոմ գրքի թողարկում, «Անրի Վեոնոյի (Աշոտ Մալաքյան, 1920-2002 թթ.) 100-ամյակին նվիրված միջազգային համաժողով՝ «Փոքր կինոնկարներ, համընդհանուր ժառանգություն, փոքր կինոթատրոնների պահպանում, հասանելիություն և տարածում գլոբալ պլատֆորմներում», «Միջոլորտային դասընթացներ եզրի աղջիկների և կանանց շարունակական կրթությունն ապահովելու նպատակով՝ տարրականից դեպի միջնակարգ կրթություն» միջոցառումները: Միջոցառման ծախսերը կազմել են 34.5 մլն դրամ կամ

նախատեսվածի 92.7%-ը, որը պայմանավորված է ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված հատկացումներն ամբողջությամբ չօգտագործելու հանգամանքով:

2021 թվականի ընթացքում շուրջ 4.1 մլրդ դրամ է տրամադրվել Կրթության որակի ապահովման ծրագրին՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 74.2%-ը և 17.4%-ով կամ 859.6 մլն դրամով զիջելով նախորդ տարվա համադրելի ցուցանիշը: Ծրագրի նկատմամբ շեղումը և նախորդ տարվա համեմատ նվազումը հիմնականում պայմանավորված է ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման ծրագրի և «Հայաստանում ԵՄ-ն ի նպաստ նորարարության» դրամաշնորհային փորձնական ծրագրի ծախսերով: Ծրագրին ուղղված է եղել նախադարուցականից մինչև հետքուհական կրթության որակի՝ սովորողների, միջավայրի, ծրագրերի և ուսումնական նյութերի բովանդակության, գործընթացների, ինչպես նաև վերջնարդյունքների որակի՝ ըստ ներառետական և միջազգային ցուցիչների բարելավմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման վարկային ծրագրի շրջանակներում իրականացվել են հանրակրթության որակի բարելավման, Նորարարությունների մրցակցային հիմնադրամի զարգացմանն աջակցության ուղղությամբ ծառայությունների ձեռքբերում և ավագ, միջնակարգ ու հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում կապիտալ ներդրումներ: Միջոցառման շրջանակներում Նորարարությունների մրցակցային հիմնադրամից օգտվել է 6 բուհ, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ուղղությամբ դպրոցների վերապատրաստված ուսուցիչների և ադմինիստրատիվ աշխատակիցների թիվը կազմել է 1184՝ նախատեսված 1000-ի փոխարեն: Կապիտալ ներդրումների շրջանակներում իրականացվել են 8 ավագ դպրոցների հիմնանորոգում և 280 դպրոցների համակարգչային սարքավորումների ձեռքբերում: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող կրթության բարելավման վարկային ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 3.3 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 96.6%-ը, որը պայմանավորված է հիմնանորոգվող դպրոցներից մեկի մասով ավարտական ակտ չներկայացվելու հանգամանքով: Մասնավորապես՝ 2.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 96%-ը տրամադրվել է «Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Կրթության բարելավման ծրագիր» ծրագրի շրջանակներում կապիտալ ներդրումներ ավագ, միջնակարգ և հիմնական դպրոցներում և կրթության ոլորտի կազմակերպություններում /ԿՏԱԿ/՝ միջոցառմանը, 546.2 մլն դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը՝ ծրագրի շրջանակներում ծառայությունների ձեռքբերմանը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանում ԵՄ-ն հանուն նորարարության» դրամաշնորհային փորձնական ծրագրի շրջանակներում Տավուշի մարզում

գիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական մաթեմատիկական (ԳՏԾՄ) ոլորտների կրթական միջավայրի բարելավման միջոցառման շրջանակներում կապիտալ ներդրումների համար օգտագործվել է շուրջ 117.1 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 14.6%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է ՀԲ-ի կողմից կատարված գնումների պլանի փոփոխությամբ, որի հետևանքով գնումների ժամանակացույցում կատարվել են փոփոխություններ, և սարքավորումների ու գույքի ամբողջական մատակարարումը տեղափոխվել է 2022 թվական: Նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում տեխնոլոգիական, ճարտարագիտական մաթեմատիկական ոլորտներում կրթության բարելավման, «Կրթության զարգացման և նորարարության ազգային կենտրոնի» զարգացման նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 3.9%-ը՝ 20.2 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ սույն միջոցառմամբ նախատեսված՝ << Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների՝ SCS և ԳՏԾՄ առարկաների լաբորատոր սարքավորումների ուղղությամբ վերապատրաստումն իրականացվել է այլ միջոցառման շրջանակներում:

«ԿԳՄՍ նախարարության պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերից շուրջ 3.3 մլրդ դրամն օգտագործվել է Մշակութային ժառանգության ծրագրի շրջանակներում՝ ապահովելով 95% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների, ինչպես նաև թանգարանների և պատկերասրահների հիմնանորոգման ծախսերի կատարողականով: Մշակութային ժառանգության ծրագրի ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են 12.8%-ով՝ կամ 485 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների միջոցառման ծախսերի նվազմամբ:

Մշակութային ժառանգության ծրագրի գծով հատկացումների գերակշիռ մասը բաժին է ընկել թանգարանային ծառայությունների և ցուցահանդեսների միջոցառմանը, որի շրջանակներում օգտագործվել է ավելի քան 2.5 մլրդ դրամ՝ ապահովելով 96% կատարողական: Շեղումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի արդյունքում ստեղծված իրավիճակով, ինչպես նաև ԱԱՀ-ի վճարման համար նախատեսված միջոցները ոչ ամբողջությամբ օգտագործելու հանգամանքով: Թանգարանների գործունեության առաջնային ուղղություններն են համարվել թանգարանային հավաքածուների պահպանությունը, հանրահոչակումը, մշակութային ժառանգության թվայնացումը, բացառիկ ցուցանմուշների կրկնատիպերի պատրաստումը, թանգարանային առարկաների վերականգնումը: Միջոցառման շրջանակներում կազմակերպվել է 254 ցուցահանդես՝ նախատեսված 268-ի դիմաց, թանգարանների այցելուների թիվը կազմել է 1243409՝ նախատեսված 1327500-ի դիմաց, իսկ սպասարկվող ընթերցողների թիվը կազմել է 758՝

նախատեսված 1170-ի դիմաց: Թանգարանները, բացի փաստացի կազմակերպված ժամանակավոր ցուցահանդեսներից, համավարակով պայմանավորված՝ երկար ժամանակ աշխատել են նաև առցանց հարթակում՝ օգտագործելով հիմնականում սոցիալական և թանգարանների վեր-կայքերը՝ նպատակ հետապնդելով մեկուսացման օրերին ապահովել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կապը մշակույթի հետ: Ամենօրյա ռեժիմով համացանցում տեղադրվել են զանազան նյութեր և հրապարակումներ թանգարանների մասին՝ հաճախ հանրությանը ներկայացնելով նյութեր և պատմություններ, որոնք ներառված չեն մշտական ցուցադրություններում: Թանգարանային հավաքածուներում ընդգրկված առարկաների թիվը կազմել է 2263368՝ նախատեսված 2256043-ի դիմաց, որը պայմանավորված է նվիրատվություններով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ-ը չի աշխատել ամբողջ տարվա ընթացքում՝ թանգարանում ընթացող օդափոխության համակարգի տեղադրման աշխատանքների պատճառով, թանգարանը բարձր ակտիվություն է ցուցաբերել առցանց հարթակում՝ միջին ամսական դիտումների քանակը կազմել է 80000: Նախորդ տարվա համեմատ միջոցառման ծախսերը նվազել են 17.3%-ով՝ կամ 530.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է 2020 թվականին նախորդ տարիների ԱԱՀ-ի գծով առաջացած հարկային պարտավորությունների մարման համար գումարների հատկացմամբ:

2021 թվականին հուշարձանների ամրակայման, նորոգման և վերականգնման աշխատանքների իրականացմանը տրամադրվել է 355.5 մլն դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 98.4%-ը: Կատարողականը հիմնականում պայմանավորված է նրանով, որ պայմանագրերի երկարաձգման հետևանքով չեն ավարտվել թվով 3 հուշարձանի նախագծման աշխատանքները: Միջոցառման շրջանակներում իրականացվել են 2 հուշարձանի ամրակայման ու վերականգնման և 23 հուշարձանների պեղման, նախագծման աշխատանքներ: 2020 թվականի համեմատ հուշարձանների վերականգնման գծով ծախսերն ավելացել են 3.8 անգամ՝ կամ 281.1 մլն դրամով, որը պայմանավորված է ոլորտի կապիտալ ծախսերի ընդլայնման քաղաքականությամբ:

Հաշվետու տարում 3.8 մլրդ դրամ է օգտագործվել «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում, որը կատարվել է 95.5%-ով և 39.3%-ով (1.1 մլրդ դրամով) գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի նկատմամբ շեղումը և նախորդ տարվա համեմատ աճը հիմնականում պայմանավորված է ծրագրի ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեցող «Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցում» միջոցառման կատարողականով:

Հաշվետու տարում փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման միջոցառման շրջանակներում մեկնարկել են 6 դպրոցների,

շարունակվել են 15 դպրոցների մոդուլային շենքերի կառուցման աշխատանքները: Միջոցառմանը տրամադրվել է ավելի քան 2.9 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 94.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կազմակերպությունների կողմից որոշ կատարողական ակտեր չներկայացվելու հանգամանքով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 2.6 անգամ՝ պայմանավորված իրականացված շինարարական աշխատանքների ծավալների աճով:

Կրթական օրբեկտների շենքային պայմանների բարելավման միջոցառման շրջանակներում ներդրումներ են կատարվել 52 կազմակերպություններում: Մասնավորապես՝ կատարվել են 4 դպրոցի նոր մասնաշենքերի կառուցման և առկա շենքի վերակառուցման նախագծման, 2 դպրոցի վերակառուցման աշխատանքներ, մարվել են 22 դպրոցի շենքի մասնակի նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության դիմաց 2020 թվականի պարտավորությունները, 23 դպրոցի հատկացվել են կապիտալ դրամաշնորհներ՝ ճաշարանների նորոգում իրականացնելու նպատակով: Միջոցառման ծախսերը կազմել են 412.3 մլն դրամ՝ 98.9%-ով ապահովելով ծրագրային ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է կազմակերպությունների կողմից որոշ կատարողական ակտեր չներկայացվելու հանգամանքով: 2021 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 39.6%-ով՝ հիմնականում պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

Ավագ մակարդակի կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման միջոցառման շրջանակներում կատարվել են 3 դպրոցի մասնակի նորոգման աշխատանքներ, 9 դպրոցի հատկացվել են կապիտալ դրամաշնորհներ՝ 6 դպրոցի մասնակի նորոգման և 3 դպրոցի շենքի վերակառուցման համար անհրաժեշտ նախագծանախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման նպատակով, ինչպես նաև մարվել են 2 դպրոցի մասնակի նորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության դիմաց 2020 թվականի պարտավորությունները: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է շուրջ 151.4 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.6%-ը: Շեղումը պայմանավորված է գնումների գործընթացի արդյունքում առաջացած խնայողություններով: 2021 թվականի համեմատ նշված ծախսերը նվազել են 75%-ով՝ հիմնականում պայմանավորված կատարված աշխատանքների ծավալների նվազմամբ:

ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացում կատարվել է պետական բյուջեի 5 ծրագիր: Ծախսերը կազմել են 336.8 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ ՀՀ պաշտպանության նախարարության պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերը նվազել են

13.1%-ով կամ 50.7 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

Աղյուսակ 30. 2021թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	387,465.6	337,366.6	336,797.0	99.8	86.9	(50,668.6)
ՀՀ պաշտպանության ապահովում	384,030.8	334,129.4	333,764.8	99.9	86.9	(50,266.0)
Ռազմաքաղաքական սպասարկում և առողջապահական ծառայություններ	1,638.6	1,382.8	1,280.7	92.6	78.2	(357.9)
Այլ ծրագրեր	1,796.2	1,854.4	1,751.5	94.5	97.5	(44.7)

Հաշվետու տարում ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 333.8 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ ՀՀ պաշտպանության ապահովման ծրագրի ծախսերը նվազել են 13.1%-ով կամ 50.3 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման և ռազմական կարիքների բավարարման միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ:

2021 թվականին ռազմական կարիքների բավարարման ծախսերը կազմել են 224.8 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 99.8%-ը, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման ծախսերը՝ շուրջ 91.3 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համեմատ Ռազմական կարիքների բավարարման ծախսերը նվազել են 7.3%-ով (17.7 մլրդ դրամով), ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման ծախսերը՝ 34.9%-ով (49 մլրդ դրամով), որը պայմանավորված է 2020 թվականին ռազմական գործողությունների հետ կապված՝ նշված ծախսերի բարձր մակարդակով:

Հաշվետու տարում ՌԴ կողմից տրամադրված պետական արտահանման երկրորդ վարկի հաշվին ռուսական արտադրության անհրաժեշտ ինժեներական և ավտոմոբիլային տեխնիկայով ապահովման նպատակով նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով շուրջ 16.4 մլրդ դրամ: Նախորդ տարի նշված միջոցառման շրջանակներում նախատեսված ծախսերը չեն կատարվել:

Ռազմական նշանակության համակարգերի պահպանման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով շուրջ 1.1 մլրդ դրամ և 6.5%-ով (64.7 մլն դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը:

Հաշվետու տարում Ռազմաբժշկական սպասարկման և առողջապահական ծառայությունների ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 1.3 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 92.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է հոսպիտալների և բուժկետերի բժշկական սարքավորումներով համարման ու զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին դեղորայքի տրամադրման միջոցառումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ Ռազմաբժշկական սպասարկման և առողջապահական ծառայությունների ծրագրի ծախսերը նվազել են 21.8%-ով կամ շուրջ 357.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին դեղորայքի տրամադրման միջոցառման ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում զորամասային և հոսպիտալային օղակներում բուժօգնություն ստացողներին դեղորայքի տրամադրման միջոցառման ծախսերը կազմել են 785.7 մլն դրամ՝ ապահովելով 96.1% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 40.4%-ով կամ 532.7 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետությունից դուրս գինծառայողի բժշկական օգնության ծառայությունների գծով միջոցառման ծախսերն օգտագործվել են նախատեսված ողջ ծավալով՝ կազմելով 414.4 մլն դրամ: Նշենք, որ միջոցառումը պետական բյուջեում նախատեսվել է 2021 թվականից:

Այլ ծրագրերում ընդգրկված՝ Միջազգային ռազմական համագործակցության ծրագրի ծախսերը կազմել են 821.6 մլն դրամ՝ ապահովելով 95.1% կատարողական: Միջոցներն օգտագործվել են 13 երկրներում և 5 միջազգային կազմակերպություններում համապատասխանաբար 8 և 5 ՀՀ ռազմական կցորդների ու ներկայացուցիչների պահպանման նպատակով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 13.2%-ով կամ 95.9 մլն դրամով:

ՀՀ աշխարհի և սոցիալական հարցերի նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի 17 ծրագիր, որոնց շրջանակներում օգտագործվել է շուրջ 619.8 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 98.8% կատարողական: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումներ», «Սոցիալական ապահովություն», «Բնակարանային ապահովում» և «Սոցիալական փաթեթների ապահովում» ծրագրերի ծախսերում:

Նախորդ տարվա համեմատ ՀՀ ԱՍՀ պատասխանատվությամբ իրականացվող ծախսերն աճել են 13.0%-ով կամ 71.5 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Սոցիալական և Կենսաթոշակային ապահովության ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Աղյուսակ 31. 2021թ. ՀՀ աշխարհանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	548,283.8	627,154.2	619,774.1	98.8	113.0	71,490.3
Պարզևավճարներ և պատվովճարներ	11,099.1	11,102.2	11,060.5	99.6	99.7	(38.5)
Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	31,605.8	30,743.7	30,656.1	99.7	97.0	(949.7)
Սոցիալական փաթեթների ապահովում	9,409.5	10,339.5	9,404.4	91.0	99.9	(5.1)
Ժողովրդագրական վիճակի բարելավում	20,211.2	28,797.6	28,343.8	98.4	140.2	8,132.7
Սոցիալական աջակցություն անաշխատունակության դեպքում	16,567.8	19,530.6	19,289.1	98.8	116.4	2,721.3
Կենսաթոշակային ապահովություն	358,391.8	377,953.9	377,573.1	99.9	105.4	19,181.3
Սոցիալական ապահովություն	53,936.2	126,356.8	124,978.4	98.9	231.7	71,042.2
Ճգնաժամերի հակագրման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման նպատակով՝ առանձին սոցիալական խմբերին տրվող սոցիալական աջակցություն	25,921.4	1.0	1.0	100.0	0.0	(25,920.4)
Այլ ծրագրեր	21,141.2	22,328.9	18,467.6	82.7	87.4	(2,673.5)

Հաշվետու տարում Պարզևավճարների և պատվովճարների ծրագրի ֆինանսավորմանը, տրամադրվել է 11.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.6%-ը: Միջոցների գերակշիռ մասն ուղղվել է զինծառայողներին, ՀՄՊ մասնակիցներին, այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցներին, զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին, ընտանիքներին տրվող պարզևավճարներին: Հաշվետու տարվա ընթացքում պարզևավճար ստացած շահառուների թիվը կազմել է 34223՝ նախատեսված 38579-ի և նախորդ տարվա 34196-ի դիմաց: որոնց գծով ծախսերը կազմել են 10.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նախորդ տարվա համեմատ Պարզևավճարների և պատվովճարների ծրագրի գծով ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

2021 թվականին Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 30.7 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.7%-ը: 2020 թվականի համեմատ Անապահով սոցիալական խմբերին աջակցության ծրագրի ծախսերը նվազել են 3%-ով կամ 949.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների և համայնքային ենթակայության սոցիալական ծառայությունների կողմից սոցիալական աջակցության քաղաքականության իրականացման ապահովման ծախսերի նվազմամբ, ինչպես նաև

2020 թվականին «Ճգնաժամային իրավիճակներին արձագանքող դպրոցական սնունդ» միջոցառմանը կատարված հատկացմամբ: Ծրագրին հատկացված միջոցների հիմնական մասն ուղղվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներին, որոնց գծով ծախսերը կազմել են 30.1 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.8%-ը և 1.3%-ով (392.8 մլն դրամով) զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Հաշվետու տարվա ընթացքում նպաստառու ընտանիքների թիվը կազմել է 86943՝ ծրագրված 91738-ի դիմաց, որը պայմանավորված է ցուցակների ճշտմամբ: Նախորդ տարի նպաստառու ընտանիքների թիվը կազմել էր 85992:

Սոցիալական փաթեթների ապահովման ծրագրի շրջանակներում պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովման միջոցառման շահառուների թիվը կազմել է 130987՝ կանխատեսված 146576-ի դիմաց: Շեղումը հիմնականում պայմանավորված է 6 ամսվա աշխատանքային ստաժ չունեցող աշխատողների, թափուր հաստիքների առկայությամբ և շահառուների՝ սոցիալական փաթեթից օգտվելու իրավունքի դադարեցման այլ պատճառներով: Ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 91%-ը՝ 9.4 մլրդ դրամ: 2020 թվականի համեմատ նշված ծրագրի ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրին 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 28.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 98.4%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ծրագրի ծախսերում բարձր տեսակարար կշիռ ունեցող՝ երեխայի ծննդյան միանվագ նպաստի գծով ծախսերը կազմել են 18.4 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 97.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է իրավունք ձեռք բերած և փաստացի նպաստառուների թվի տարբերությամբ, ինչպես նաև ծնվածների համապատասխան կարգաթվերի՝ կանխատեսվածի համեմատ որոշ տարբերություններով:

2021 թվականին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ է ստացել 25121 քաղաքացի՝ կանխատեսված 27002-ի փոխարեն: Ծախսերը կազմել են 8.7 մլրդ դրամ՝ ապահովելով 99.9% կատարողական:

Նախորդ տարվա համեմատ ժողովրդագրական վիճակի բարելավման ծրագրի ծախսերն աճել են 40.2%-ով կամ 8.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի և երեխայի ծննդյան միանվագ նպաստի գծով ծախսերի համապատասխանաբար 133% (5 մլրդ դրամ) և 13.8% (2.2 մլրդ դրամ) աճով: Նշված ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ 2020 թվականի հուլիսի 1-ից առաջին և երկրորդ

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափի բարձրացմամբ 50 հազար դրամից մինչև 300 հազար դրամ և մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափի բարձրացմամբ 18000 դրամից մինչև 26500 դրամ: Ծախսերի աճին նպաստել է նաև «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 21.01.2021թ. N 55-Ն որոշման ընդունմամբ, որի համաձայն նպաստ է տրամադրվել նաև խնամքի արձակուրդում գտնվող գյուղական բնակավայրում բնակվող ծնողին. արդյունքում աճել է նպաստառուների թվաքանակը՝ 2020 թվականի 12388-ի դիմաց 2021 թվականին կազմելով 25121:

Անաշխարունակության դեպքում սոցիալական աջակցության ծրագրին հաշվետու ժամանակահատվածում տրամադրվել է 19.3 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 98.8%-ը:

Ծրագրի շրջանակներում մայրության նպաստ ստացող աշխատող անձանց թիվը հաշվետու տարում կազմել է 15111՝ կանխատեսված 12350-ի և նախորդ տարվա 13046-ի դիմաց, իսկ չաշխատող անձանց թիվը՝ 20582՝ կանխատեսված 26873-ի և նախորդ տարվա 24409-ի դիմաց: Մայրության նպաստին տրամադրվել է 13.2 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսվածի 98.2%-ը:

Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի գծով ծախսերը կազմել են 6.0 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.9%-ը:

2020 թվականի համեմատ Անաշխատունակության դեպքում սոցիալական աջակցության ծրագրի ծախսերն աճել են 16.4%-ով կամ 2.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված մայրության նպաստի և ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրվող նպաստի գծով ծախսերի համապատասխանաբար 13.2% (1.5 մլրդ դրամ) և 24.5% (1.2 մլրդ դրամ) աճով: Մայրության նպաստի գծով ծախսերի աճը պայմանավորված է աշխատող մայրերի թվի, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձի աճով, իսկ ժամանակավոր անաշխատունակության դեպքում տրամադրվող նպաստի գծով ծախսերի աճը՝ Կորոնովիրուսով (COVID-19) հիվանդների թվի ավելացմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների գերակշիռ մասը՝ 377.6 մլրդ դրամ, տրամադրվել է Կենսաթոշակային ապահովության ծրագրի ֆինանսավորմանը՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.9%-ը: Միջոցների գերակշիռ մասը հատկացվել է աշխատանքային կենսաթոշակներին: 2021 թվականին կենսաթոշակառուների թիվը կազմել է 439226՝ կանխատեսված 455566-ի և նախորդ տարվա 440945-ի դիմաց: Ծրագրային և փաստացի ցուցանիշների շեղումը պայմանավորված է կենսաթոշակի իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուների թվի և փաստացի կենսաթոշակ ստացած կենսաթոշակառուների թվի

տարբերությամբ, ինչպես նաև հանրապետությունից նրանց բացակայելու հանգամանքով։ Աշխատանքային կենսաթոշակաների գծով ծախսերը 2021 թվականին կազմել են 238.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 99.9%-ը։ Նախորդ տարվա համեմատ աշխատանքային կենսաթոշակաների գծով ծախսերն աճել են 0.3%-ով կամ 801.9 մլն դրամով։

Հաշվետու տարում սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակաների միջոցառման շրջանակներում կենսաթոշակ է ստացել 32036 անձ՝ կանխատեսված 34426-ի և նախորդ տարվա 31679-ի դիմաց։ Հատկացված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 32.6 մլրդ դրամ և 5%-ով (1.5 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը, որը պայմանավորված է կենսաթոշակառուների թվի աճով։

2021 թվականին կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների թիվը կազմել է 408656՝ կանխատեսված 311592-ի և նախորդ տարվա 379612-ի դիմաց։ Կուտակային հատկացումները մասնակցի կենսաթոշակային հաշվին կազմել են 101.7 մլրդ դրամ՝ ծրագրված ցուցանիշի 100%-ը։ Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.1%-ով կամ 17 մլրդ դրամով՝ պայմանավորված մասնակիցների թվի աճով։

ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների հատկացումներն ուղղվել են «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքով սահմանված պաշտոններում պաշտոնավարած 674 անձանց կենսաթոշակի վճարմանը։ Այդ նպատակով հատկացված 2.9 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է։

2020 թվականի համեմատ կենսաթոշակային ապահովության ծրագրի ծախսերն աճել են 5.4%-ով կամ 19.2 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին հատկացումների աճով։

Սոցիալական ապահովության ծրագրի շրջանակներում 2021 թվականին օգտագործվել է նախատեսված միջոցների 98.9%-ը՝ շուրջ 125 մլրդ դրամ։ Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 131.7%-ով (71 մլրդ դրամով)՝ հիմնականում պայմանավորված Ադրբեյջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հետևանքների մեղմմանն ուղղված ծախսերի աճով։

Հաշվետու տարում ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստներ են տրամադրվել 76626 նպաստառուների՝ կանխատեսված 82477-ի և նախորդ տարվա 69397-ի դիմաց։ Այդ նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 99.8%-ը՝ 26.3 մլրդ դրամ։

Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման համար նախատեսված միջոցներն ամբողջությամբ օգտագործվել են՝ կազմելով 27.9 մլրդ դրամ և 3.2 անգամ (19.1 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա հատկացումը:

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախում հաշվառված քաղաքացիներին միանվագ կամ պարբերական դրամական օգնության շրջանակներում հաշվետու տարում աջակցություն է տրամադրվել փաստացի դիմում ներկայացրած 408180 քաղաքացու՝ կանխատեսված 424873-ի և նախորդ տարվա 96027-ի դիմաց: Նշված աջակցությանը տրամադրվել է 27.5 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 98.7%-ը: 2020 թվականի համեմատ նշված ծախսերն աճել են 3.9 անգամ (20.5 մլրդ դրամով)¹ պայմանավորված շահառուների թվով:

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ 2021 թվականին միանվագ դրամական աջակցություն է տրամադրվել Ադրբեյչանի Հանրապետության վերահսկողության տակ անցած տարածքներում հաշվառված 23526 քաղաքացու՝ կանխատեսված 23659-ի դիմաց, որը պայմանավորված է փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով: Նշենք, որ նախորդ տարի միջոցառման շրջանակներում աջակցություն ստացած քաղաքացիների թիվը կազմել էր 13550: Հաշվետու տարում օգտագործվել է նշված աջակցության նպատակով նախատեսված միջոցների 99.9%-ը՝ կազմելով 7.1 մլրդ դրամ և 73.6%-ով (շուրջ 3 մլրդ դրամով) գերազանցելով նախորդ տարվա հատկացումը, որը պայմանավորված է շահառուների թվի ավելացմամբ:

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի բնակչությանն աջակցության համար նախատեսված 11.6 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է, որը տրամադրվել է Արցախի Հանրապետության կառավարությանը՝ սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Արցախի բնակչության սպառած էլեկտրաէներգիայի և գազի դիմաց վճարման ենթակա գումարները ֆինանսավորելու նպատակով:

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ 2021 թվականին աջակցություն է տրամադրվել Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը կորցրած՝ փաստացի դիմում ներկայացրած 6219 քաղաքացու՝ կանխատեսված 6243-ի դիմաց: Այդ նպատակով օգտագործվել է շուրջ 1.6 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.6%-ը: Նշենք, որ նախորդ տարի նշված միջոցառման շրջանակներում հատկացումներ չեն կատարվել:

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ դրամական աջակցությունն անհայտ կորած զինծառայողների ընտանիքներին կազմել է շուրջ 1.5 մլրդ դրամ կամ նախատեսվածի 100.0%-ը, որը նախորդ տարվա ցուցանիշից ավել է 2.9 անգամ (961.5 մլն դրամով):

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման նպատակով վեցամյա սոցիալական աջակցություն է տրամադրվել 14448 քաղաքացու: Այդ նպատակով օգտագործվել է 2.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.7%-ը: Նախորդ տարի նշված նպատակով հատկացումներ չեն կատարվել:

2021 թվականին սոցիալական աջակցություն է տրամադրվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արդբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած, փաստացի դիմած 7385 զինծառայողի: Այդ նպատակով օգտագործվել է 3.7 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.4%-ը: Սույն միջոցառման շրջանակներում ևս նախորդ տարի հատկացումներ չեն կատարվել:

Հաշվետու տարում 4 ամիս ժամկետով աջակցություն է տրամադրվել Արցախի Հանրապետությունից տեղահանված կամ Արցախի Հանրապետությունում բնակելի անշարժ գույքը կորցրած 72747 քաղաքացու՝ ծրագրված 84204-ի փոխարեն: Այդ նպատակով օգտագործվել է 5.4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 93.2%-ը՝ պայմանավորված միջոցառման գծով փաստացի դիմում ներկայացրած շահառուների քանակով և պահանջով:

Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների ծրագրի շրջանակներում իրականացվում են Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի գծով նախատեսված միջոցառումները: Ծրագրի շրջանակներում ընդհանուր առմամբ օգտագործվել է նախատեսված միջոցների 47.7%-ը՝ 1.4 մլրդ դրամ, ընդ որում, ծրագրի բոլոր երեք միջոցառումներում արձանագրվել են շեղումներ: Նախորդ տարվա համեմատ Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումների ծրագրի ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի նպատակներն ուղղակիորեն կապված են մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի ու հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավման հետ: Ծրագրի բաղկացած է հետևյալ բաղադրիչներից:

- Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում,
- Աշխատանքի և զբաղվածության ռազմավարություն,
- Կենսաթոշակային համակարգի արդիականացում,
- Սոցիալական աջակցության և մոնիթորինգի համակարգի բարելավում,
- Ծրագրի կառավարում, մոնիթորինգ և գնահատում:

Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

• Ավարտվել են թվով իինգ՝ Սպիտակի, Սիսիանի, Աշտարակի, Վայքի և Վաղարշապատի ՄՍԾԿ-ների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների պատրաստման աշխատանքները.

• Իրականացվել են շինվերանորոգման փուլում գտնվող ՄՍԾԿ-ների տեխնիկական հսկողություն և ավարտվածների՝ հեղինակային հսկողություն:

Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 53.1%-ը՝ 169 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է որոշ ՄՍԾԿ-ների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների պատրաստման և շինվերանորոգման աշխատանքների հեղինակային հսկողության աշխատանքների՝ սահմանված ժամկետներից ուշացմամբ, մասնագիտական ուսուցման և վերապատրաստման հետաձգմամբ, ինչպես նաև ծրագրի ինժեների հետ կնքված պայմանագրի լուծմամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգման միջոցառման շրջանակներում 2021 թվականի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

• Ավարտվել են թվով 7՝ Գավառի, Մեղրիի, Գորիսի, Դիլջանի, Իջևանի, Ստեփանավանի և Կապանի Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների (ՀՍԾԿ) շինվերանորոգման աշխատանքները.

• Շահագործման հանձնման փուլում է գտնվել Զերմուկի ՄՍԾԿ-ն.

• Ընթացքում են գտնվել թվով 9՝ Գյումրիի, Ալավերդիի, Արթիկի, Եղեգնաձորի, Աբովյանի, Աշտարակի, Սպիտակի, Բերդի և Սիսիանի ՄՍԾԿ-ների շինվերանորոգման աշխատանքները:

Ծրագրի շրջանակներում շենքերի և շինությունների հիմնանորոգման ծախսերը կազմել են 900.5 մլն դրամ կամ նախատեսվածի 48.2%-ը՝ պայմանավորված Իջևանի, Զերմուկի և Եղեգնաձորի ՄՍԾԿ-ների ավարտական ակտերի ներկայացման ուշացմամբ և այլ շինվերանորոգման աշխատանքների թերությունների շտկմամբ:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում սարքավորումների, ծրագրային ապահովման և աշխատանքային միջավայրի արդիականացման համար 2021 թվականի ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

• Մշակվել է Էլեկտրոնային սոցիալական ծառայությունների մեկ միասնական տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման աշխատանքներն իրականացնող

կազմակերպության ընտրության տեխնիկական հանձնարարականը: Այս համակարգը կընձեռի անհրաժեշտ արտաքին տեղեկատվական շտեմարանների հետ տեղեկատվության փոխանակման հնարավորություն, ինչի արդյունքում սոցիալական ծառայություններ տրամադրող կառուցները կարող են առցանց ձեռք բերել և ստուգել շահառուների մասին անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ նվազագույնի հասցնելով ծառայությունների ստացման համար շահառուների կողմից լրացուցիչ տեղեկությունների ներկայացումը.

- Իրականացվել է համակարգչային տեխնիկայի և հարակից սարքերի գնում ՄՍԾ կարիքների համար.
- Ավարտվել են Շաղկահովիտի, Ստեփանավանի, Սևանի, Մեղրիի, Մարտունու, Գորիսի, Ապարանի, Գավառի, Դիլիջանի և Իջևանի ՄՍԾԿ-ների կարիքների համար կենցաղային տեխնիկայի գնման աշխատանքները:

Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 44%-ը՝ 299.8 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է նրանով, որ 2 ՄՍԾԿ-ների համար ձեռք բերված կահույքի համար վճարումը հետաձգվել է թերությունների շտկումից հետո, իսկ 6 ՄՍԾԿ-ների կահույքի համար վճարումը նախատեսված ժամկետից ուշանում է՝ հանձնման-ընդունման աշխատանքներով պայմանավորված:

Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում պետական բյուջեից օգտագործվել է 821.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 44%-ը: Ծրագրում ընդգրկված երեք միջոցառումներում էլ արձանագրվել են շեղումներ: Նախորդ տարվա համեմատ Բնակարանային ապահովման ծրագրի ծախսերը նվազել են 79.2%-ով կամ 3.1 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծախսերի 95.6% (3.2 մլրդ դրամ) նվազմամբ:

Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով հաշվետու տարում աջակցություն է ստացել 9 ընտանիք՝ նախորդ տարվա 229-ի դիմաց: Օգտագործվել է նախատեսված միջոցների 30.6%-ը՝ 147.9 մլն դրամ, որը պայմանավորված է տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ ծախսերի անկումը պայմանավորված է շահառուների թվի նվազմամբ:

Զոհված (մահացած) առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ գինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բնակարանային պայմանների բարելավման նպատակով աջակցություն է տրամադրվել 54 շահառուի՝ նախատեսված 66-ի և նախորդ տարվա 16-ի դիմաց: Ծրագրված ցուցանիշից շեղումը պայմանավորված է այն հանգամանքով, որ տրամադրված 66 բնակարանի գնման վկայագրի դիմաց առուվաճառքի

գործարք է կատարվել 54-ի գծով: Միջոցառման ծախսերը կազմել են 325.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 65.1%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է տրամադրված բնակարանի գնման վկայագրով առուվաճառքի գործարքների փաստացի թվով: 2020 թվականի համեմատ տվյալ ծախսերն աճել են 158.9%-ով (199.8 մլն դրամով՝ պայմանավորված շահառուների թվի աճով):

Բնակարանային շինարարության միջոցառման շրջանակներում աշխատանքներ են իրականացվել նախատեսված 2 օբյեկտներում, օգտագործվել է նախատեսված միջոցների 39.4%-ը՝ 347.9 մլն դրամ: Ցածր կատարողականը պայմանավորված է վատ եղանակային պայմաններով:

Զբաղվածության ծրագրին 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ կազմելով նախատեսված ցուցանիշի 79.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության տրամադրման և ռազմական դրությամբ պայմանավորված՝ Աղբբեջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիներին աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրման ծախսերի կատարողականով: Զբաղվածության ծրագրի ծախսերը 2020 թվականի համեմատ նվազել են 12.3%-ով կամ 239.8 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման և աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության ծախսերի համապատասխանաբար 61.9% (284.6 մլն դրամ) և 20.1% (103.9 մլն դրամ) նվազմամբ:

2021 թվականին աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու համար աջակցություն է տրամադրվել 475 շահառուի՝ նախատեսված 474-ի և նախորդ տարվա 70-ի դիմաց: Ծախսերը կազմել են 413.0 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 75.7%-ը: Ծախսերի ցածր կատարողականը պայմանավորված է Զբաղվածության տարածքային կենտրոնների վերակազմակերպման գործընթացի արդյունքում ծրագրերի ուշ մեկնարկով, ինչպես նաև տարբեր պատճառներով թվով 12 ծրագրի դադարեցմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 20.1%-ով կամ 103.9 մլն դրամով: Ծահառուների թվի համեմատ փաստացի ծախսված ֆինանսական միջոցների անհամամասնությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ 2020 թվականին գումարի զգալի մասն ուղղվել էր 2019 թվականին կնքված պայմանագրերի շրջանակներում ծագած պարտավորությունների մարմանը, և փաստացի նոր պայմանագրեր էին կնքվել ընդամենը 70 շահառուի հետ:

Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Աղրբեջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձագերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիներին աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության շրջանակներում 388 գործազուրկ անցել է աշխատանքային պրակտիկա՝ նախատեսված 655-ի փոխարեն՝ պայմանավորված ՀՀ կառավարության որոշմամբ լրացուցիչ միջոցները նոյեմբեր ամսին հատկացվելու հանգամանքով, որի հետևանքով ժամանակի սղության պատճառով լրացուցիչ նախատեսված ծրագրերը չեն իրականացվել: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 50.6%-ը՝ 181.5 մլն դրամ:

Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին գուգահեռ կազմակերպելու համար հաշվետու տարվա ընթացքում աջակցություն է ստացել 597 շահառու՝ կանխատեսված 719-ի դիմաց, որը պայմանավորված է ՀՀ կառավարության որոշմամբ լրացուցիչ միջոցները նոյեմբեր ամսին հատկացվելու հանգամանքով, որի հետևանքով ժամանակի սղության պատճառով լրացուցիչ դիմած որոշ շահառուների հետ պայմանագրեր չեն կնքվել: Նշենք, որ 2020 թվականին միջոցառման շահառուների թիվը կազմել էր 616: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 96.2%-ը՝ 475.2 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 20.8%-ով կամ 81.9 մլն դրամով, ինչը բացատրվում է այն հանգամանքով, որ 2021 թվականին միջոցառման մեկ շահառուի համար փաստացի միջին ծախսը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ 24.7%-ով (կազմելով 796.0 հազ. դրամ)՝ պայմանավորված մեկ շահառուի՝ միջոցառման մեջ ընդգրկման ավելի երկար ժամկետով:

Հաշվետու տարվա ընթացքում սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության շրջանակներում շահառուների թիվը կազմել է 1076՝ նախատեսված 907-ի և նախորդ տարվա 2688-ի դիմաց, ծախսերը կազմել են 175 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97.5%-ը: ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ միջոցառման առավելագույն ժամկետը 6 ամիս է, սակայն միջոցառումը փաստացի իրականացվել է միջինը 3 ամիս ժամկետով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերը նվազել են 61.9%-ով կամ 284.6 մլն դրամով՝ պայմանավորված շահառուների թվի նվազմամբ:

Ձեռք բերած մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար հաշվետու տարվա ընթացքում աջակցություն ստանալու համար դիմել են նախատեսվածից ավել թվով շահառուներ. աջակցություն է տրամադրվել 353 գործազուրկի՝ կանխատեսված 347-ի և նախորդ տարվա 395-ի դիմաց: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված

միջոցների 99.8%-ը՝ 139 մլն դրամ, որը 6.1%-ով (9.1 մլն դրամով) զիջել է նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված շահառուների թվի նվազմամբ:

ՀՀ ԱՍՀՆ պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերից *Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրին հաջետու ժամանակահատվածում պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 6.0 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 94.5%-ը։ Շեղումը հիմնականում առաջացել է «Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» և «Սոցիալական պաշտպանության առանձին ծրագրերի իրականացման ապահովում» միջոցառումների ծախսերում, որոնք կազմել են համապատասխանաբար 1.7 մլրդ դրամ (87.2%) և 4.0 մլրդ դրամ (97.6%)՝ հիմնականում պայմանավորված տնտեսումներով։*

Նախորդ տարվա համեմատ Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի ծախսերն աճել են 20.1%-ով (1.0 մլրդ դրամով)։ Աճը հիմնականում արձանագրվել է սոցիալական պաշտպանության առանձին ծրագրերի իրականացման ապահովման միջոցառման ծախսերում, որոնք 84%-ով (1.8 մլրդ դրամով) գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված կառուցվածքային փոփոխություններով՝ ՄՄԾ ստեղծման հանգամանքով։ Հարկ է նշել, որ նշված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նվազել են «Սոցիալական պաշտպանության բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծառայություններ» միջոցառման ծախսերը՝ 33.3%-ով կամ 826.3 մլն դրամով։

ՀՀ բարձր դեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացում կատարվել է պետական բյուջեի 5 ծրագիր։ Ծախսերը կազմել են 6.6 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 92.3%-ը։ Ծրագրված ցուցանիշներից շեղումը հիմնականում պայմանավորված է Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ու Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների ծրագրերի կատարողականով։ Նախորդ տարվա համեմատ ՀՀ ԲՏԱՆ պատասխանատվությամբ իրականացվող ծրագրերի գծով ծախսերը նվազել են 21.4%-ով կամ 1.8 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների ու Ռազմարդյունաբերության համային զարգացման ծրագրերի շրջանակներում կատարված ծախսերի նվազմամբ։

Այլուսակ 32. 2021թ. ՀՀ բարձր դեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարե- րությունը
ԸՆԴՀԱՄԵՆԸ	8,410.7	7,161.8	6,611.7	92.3	78.6	(1,799.1)
Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 83.9%-ը:	678.5	2,360.5	1,979.3	83.9	291.7	1,300.8
Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ	2,841.2	1,274.1	1,168.4	91.7	41.1	(1,672.8)
Ռազմարդյունաբերության համալիրի զարգացում	3,454.2	1,965.2	1,965.2	100.0	56.9	(1,489.0)
Այլ ծրագրեր	1,436.8	1,562.0	1,498.7	96.0	104.3	61.9

Հաշվետու տարում Բարձր դեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 2 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 83.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհների տրամադրման միջոցառման կատարողականով: Նախորդ տարվա համեմատ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագրի ծախսերն աճել են 2.9 անգամ կամ 1.3 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է հաշվետու տարում Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 17-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրմամբ, որը 2020 թվականին չէր նախատեսվել, ինչպես նաև «Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհների տրամադրման միջոցառման ծախսերի աճով:

Հաշվետու տարում Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 17-րդ միջոցառման շրջանակներում աջակցության տրամադրման միջոցառման նպատակը նորաստեղծ և կայացած տեխնոլոգիական ընկերություններին դրամաշնորհների տեսքով պետական աջակցության տրամադրումն է՝ հաղթահարելու կորոնավիրուսային համավարակի հետևանքով առաջացած մարտահրավերները: Միջոցառման շրջանակներում ընկերություններին տրամադրված դրամաշնորհների քանակը կազմել է 38, որից նորարարական դրամաշնորհների քանակը՝ 23: Միջոցառումը մեկնարկել է 2021 թվականին: Նշված միջոցառման ծախսերը կազմել են 949.3 մլն դրամ՝ ապահովելով 98.1% կատարողական: Շեղումը պայմանավորված է հինգ ընկերությունների դրամաշնորհային պայմանագրով սահմանված գումարի 25%-ը չվճարելու հանգամանքով, որը որոշ դեպքերում պայմանավորված է սեղոնային առանձնահատկություններով, որոշ դեպքերում է՝ մասնագետների հավաքագրման դժվարությունների հետևանքով աշխատանքների ժամկետների

Երկարաձգմամբ՝ Արդյունքում ընկերությունների կողմից աշխատանքների ամբողջական իրականացումը տեղափոխվել է 2022 թվական:

«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհների տրամադրման միջոցառման նպատակն է՝ աջակցել բարձր տեխնոլոգիաների ոլորտի՝ գաղափարից մինչև հասունության փուլում գտնվող պրոդուկտների առաջխաղացմանը շուկայում: Ծրագիրը բաղկացած է երեք՝ նորարարական, հեռանկարային և բեկումնային բաղադրիչներից, որոնք համապատասխանաբար թիրախավորում են պրոդուկտի զարգացման շղթայի առանձին փուլեր:

- Ծրագրի նորարարական բաղադրիչի նպատակն է՝ աջակցել բարձր տեխնոլոգիաների ոլորտին առնչվող նորարարական գաղափարների առաջխաղացմանը, որոնք պատրաստվում են մուտք գործել շուկա:

- Հեռանկարային բաղադրիչի նպատակն է՝ աջակցել արդեն իսկ պրոդուկտի նախատիպի կամ նվազագույն կենսունակ արտադրանքի մշակման փուլում գտնվող ծրագրերի առաջխաղացմանը և նպաստելու դրանց շուկա մուտք գործելուն:

- Բեկումնային բաղադրիչի նպատակն է՝ աջակցել շուկայում արդեն իսկ որոշակի մասնաբաժին ունեցող ծրագրերին, որոնք պլանավորում են ընդլայնել իրենց թիրախային շուկաները:

Մրցույթի «հեռանկարային» բաղադրիչով երկրորդ փուլ անցած մասնակիցների գործարար ծրագրերի ներկայացումն իրականացվել է Հանրային հեռուստաընկերության հետ համատեղ կազմակերպվող «Գաղափարից բիզնես» հեռուստանախագծի շրջանակում: Կազմակերպվել և անցկացվել է տեղեկատվական հանդիպում դրամաշնորհային մրցույթի պոտենցիալ մասնակիցների հետ:

2021 թվականին Հայաստանում անցկացվել է ոռբոտաշինության և տիեզերական սարքաշինության ոլորտների առաջխաղացման դրամաշնորհային մրցույթ, որի նպատակն է՝ աջակցել ոռբոտաշինության և տիեզերական սարքաշինության ոլորտների առաջխաղացմանը:

Մեկնարկային բաղադրիչը (մինչև 5 մլն դրամ) նպատակ ունի աջակցելու տիեզերական գործունեության ոլորտին առնչվող արդի գաղափարների առաջխաղացմանը: Բաղադրիչը միտված է ֆինանսավորելու այն մտահղացումները, որոնք ուղղված են տիեզերական գործունեության ոլորտի արդի մարտահրավերներից որևէ մեկի լուծմանը:

Անցումային բաղադրիչը (մինչև 20 մլն դրամ) նպատակ ունի աջակցելու տիեզերական գործունեության ոլորտին առնչվող գործառնական նախատիպերի, ծառայությունների, պրոդուկտների մշակմանն ու արդիականացմանը: Բաղադրիչը միտված է ֆինանսավորելու շարունակական բնույթ ունեցող այն ծրագրերը, որոնք ունեն առևտրայնացման ներուժ, միտված են

տիեզերական գործունեության ոլորտի արդի մարտահրավերներից որևէ մեկի լուծմանը, ինչպես նաև նպաստում են ազգային տիեզերական կարողությունների զարգացմանը:

Կայացած ընկերությունների դրամաշնորհ բաղադրիչը (մինչև 50 մլն դրամ) նպատակ ունի աջակցելու տիեզերական գործունեության բնագավառում առավել հավակնութ ծրագրի իրականացմանը, որը, ունենալով առևտրայնացման մեծ ներուժ և կրելով կայուն զարգացման բնույթ, էապես կնպաստի ազգային տիեզերական կարողությունների զարգացմանը (ներառյալ ոլորտային որոշակի ենթակառուցվածքների ստեղծումը):

««Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհներ» միջոցառման ծախսերը կազմել են 562 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 68.9%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ «Տաղանդի ձևավորման փաթեթի» շրջանակում հայտարարված 3 դրամաշնորհային մրցույթներից 2-ում հաղթող կազմակերպություն չի ճանաչվել, «Ռոբոտաշինության և տիեզերական սարքաշինության զարգացմանն ուղղված բաղադրիչի» շրջանակում հայտարարված 3 մրցույթներից 1-ում հաղթող կազմակերպություն չի ճանաչվել, իսկ մյուս 2-ում դրամաշնորհներ են հատկացվել նախատեսվածից քիչ թվով ընկերությունների: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 3.2 անգամ կամ 383.7 մլն դրամով, որը պայմանավորված է միջոցառման ընդլայնմամբ՝ ընդգրկելով շահառուների ավելի լայն շրջանակ: Մասնավորապես, 2021 թվականին միջոցառման իրականացումը նպատակ է ունեցել խթանելու տեխնոլոգիական ձեռներեցությունը, մինչդեռ 2020 թվականին միջոցառումը մեծամասամբ թիրախավորել է կորոնավիրուսային համավարակով պայմանավորված խնդիրների լուծումը:

Պաշտպանության բնագավառում գիրական և գիրապեխնիկական նպատակային հելքազորությունների ծրագրի շրջանակներում օգտագործվել է շուրջ 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 91.7% կատարողական: Միջոցներն ուղղվել են «Գիտական և գիտատեխնիկական նպատակային ծրագրային հետազոտություններ» ծրագրի շրջանակներում կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների ֆինանսավորմանը: Շեղումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի պայմաններում մատակարարումների ուղացումների արդյունքում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական (ԳՀՓԿ) աշխատանքներ իրականացնող ընկերությունների կողմից պայմանագրերի՝ գնման ժամանակացույցերով սահմանված ժամկետների ուղացումներով: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 58.9%-ով կամ 1.7 մլրդ դրամով, որը պայմանավորված է կատարված աշխատանքների ծավալներով:

Պազմարդյունաբերության համայիրի զարգացման ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 2 մլրդ դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Հատկացված միջոցներն օգտագործվել են

ապրանքների ու արտադրանքի ձեռքբերման համար: Նախորդ տարվա համեմատ Ռազմարդյունաբերության համալիրի զարգացման ծրագրի ծախսերը նվազել են 43.1%-ով կամ շուրջ 1.5 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Ապրանքների ու արտադրանքի ձեռքբերում» միջոցառման ծախսերի 37.7% (1.2 մլրդ դրամ) նվազմամբ:

Նախարարության պատասխանատվությամբ իրականացվող այլ ծրագրերից Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ կամ ծրագրային ցուցանիշի 94.5%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ռազմարդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակման խորհրդատվական, մոնիթորինգի և աջակցության ծառայությունների, ծրագրերի համակարգման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի ծախսերն աճել են 9.9%-ով կամ 97.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է Բարձր տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության, թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, կապի, փոստի, համացանցի և տիեզերական բնագավառներում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի միջոցառման ծախսերի 9.4% (72.8 մլն դրամ) աճով:

Բարձր տեխնոլոգիաների, ռազմարդյունաբերության, թվայնացման, կիբեռանվտանգության, ինովացիոն տեխնոլոգիաների, կապի, փոստի, համացանցի և տիեզերական բնագավառներում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծախսերն աճել են 9.4%-ով կամ 72.8 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է նախարարության աշխատակազմի հաստիքների ավելացման և աշխատավարձի բնականոն աճի արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Ռազմարդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակման խորհրդատվական, մոնիթորինգի և աջակցության ծառայությունների, ծրագրերի համակարգման միջոցառման հատկացված միջոցներն ուղղվել են Ռազմարդյունաբերական կոմիտեի պահպանման ծախսերի ֆինանսավորմանը, որոնք կազմել են 199.8 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 83.2%-ը: Շեղումը պայմանավորված է թափուր հաստիքների առկայության արդյունքում աշխատավարձի ֆոնդի և գործուղումների ծախսերի տնտեսմամբ, ինչպես նաև գնման մրցութների արդյունքում ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Նախորդ տարվա համեմատ

միջոցառման նծախսերն աճել են 32.7%-ով կամ 49.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատակազմի հաստիքների ավելացման արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանատվության ներքո իրականացվել են 4 ծրագրեր, որոնց շրջանակներում 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է շուրջ 184.6 մլրդ դրամ՝ ապահովելով ծրագրի 99.5% կատարողական: 2020 թվականի համեմատ նախարարության ծախսերն աճել են 10.1%-ով (16.9 մլրդ դրամով՝⁵⁰ հիմնականում պայմանավորված Պետական պարտքի կառավարման ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով):

Աղյուսակ 33. 2021թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	167,644.6	185,567.4	184,582.8	99.5	110.1	16,938.2
Պետական պարտքի կառավարում	164,834.2	182,255.0	181,475.5	99.6	110.1	16,641.3
Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	2,666.0	3,174.1	2,972.2	93.6	111.5	306.2
Այլ ծրագրեր	144.4	138.2	135.2	97.8	93.6	(9.2)

Հատկացված միջոցների գերակշիռ մասը բաժին է ընկել Պետական պարտքի կառավարման ծրագրին, որի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 99.6%-ը՝ 181.5 մլրդ դրամ: Նշված գումարից 180.8 մլրդ դրամն ուղղվել է Կառավարության պարտքի սպասարկմանը, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.6%-ը⁵⁰: Նախորդ տարվա համեմատ Պետական պարտքի կառավարման ծրագրի ծախսերն աճել են 10.1%-ով կամ 16.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված պարտքի սպասարկման ծախսերի 9.8% (16.2 մլրդ դրամ) աճով:

Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծախսերը կազմել են շուրջ 3 մլրդ դրամ՝ ապահովելով տարեկան ծրագրի 93.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանն անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման

⁵⁰ Պարտքի սպասարկման ծախսերի առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է պետական բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման վերլուծության բաժնում:

ծախսերի կատարողականով, որը կազմել է 12.2%՝ 26.2 մլն դրամ: Համաձայն խորհրդատուի հետ կնքված պայմանագրի վճարման ժամանակացուցի՝ վճարումները նախատեսվել է իրականացնել 2022 թվականին:

Ծրագրի շրջանակներում հատկացված միջոցների մեծ մասը բաժին է ընկել պլանավորման, բյուջետավորման, գանձապետական ծառայությունների, պետական պարտքի կառավարման, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակման և մոնիթորինգի միջոցառման ծախսերին, որոնք կատարվել են 99.8%-ով և կազմել 2.5 մլրդ դրամ:

Նախորդ տարվա համեմատ Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի ծախսերն աճել են 11.5%-ով (306.2 մլն դրամով)¹⁾ հիմնականում պայմանավորված պլանավորման, բյուջետավորման, գանձապետական ծառայությունների, պետական պարտքի կառավարման, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակման և մոնիթորինգի միջոցառման ծախսերի 9% (209.2 մլն դրամ) աճով: Վերջինս էլ հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացում կատարվել է պետական բյուջեի 6 ծրագիր: Ծախսերը կազմել են 14.4 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.4%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ դրանք աճել են 0.2%-ով կամ 31.6 մլն դրամով: Նշենք, որ 2020 թվականին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ենթակայության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» և «Անտառային մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ների և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայության «Հիդրոօդերևսութաբանության և մթնոլորտային երևոյթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի միավորման ծևով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության համակարգում ստեղծվել է «Հիդրոօդերևսութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, որի արդյունքում 2020 թվականի երկրորդ կիսամյակից նախկինում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրին: 2020 թվականի համարելի ցուցանիշի համեմատ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պատասխանատվությամբ իրականացվող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Աղյուսակ 34. 2021թ. ՀՀ արդակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացված ծրագրերը (մլն դրամ)

	2020թ. փաստ (2021թ. հետ համարելի)	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարո- ղականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբե- րությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	13,819.3	14,488.5	14,402.4	99.4	104.2	583.1
Տեխնիկական անվտանգության կանոնակարգում	100.3	565.5	548.4	97.0	546.7	448.1
Սեյսմիկ պաշտպանություն	952.5	759.5	759.5	100.0	79.7	(193.0)
Փրկարարական ծառայություններ	11,216.5	11,452.0	11,434.7	99.8	101.9	218.2
Արտակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ	1,096.0	1,340.4	1,322.7	98.7	120.7	226.7
Այլ ծրագրեր	454.0	371.1	337.2	90.9	74.3	(116.8)

Հաշվետու տարում *Տեխնիկական անվտանգության ծրագրի շրջանակներում ծախսերը կազմել են 548.4 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 97%-ը: Շեղումը պայմանավորված է «Նախրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ վերջինիս ծախսերի աճով է պայմանավորված *Տեխնիկական անվտանգության ծրագրի ծախսերի 5.5 անգամ կամ շուրջ 448.1 մլն դրամով աճը:**

«Նախրիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովման համար միջոցներն օգտագործվել են «Նախրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական համակարգերում, տարողություններում և սարքավորումներում առկա քիմիական նյութերի և սարքավորումների անվտանգ պահպանության նպատակով: Միջոցառման շրջանակներում օգտագործվել է 506.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 96.7%-ը: Շեղումը պայմանավորված է նրանով, որ որոշ ծախսերի գծով վճարման փաստաթղթեր չեն ներկայացվել: Հարկ է նշել, որ 2020 թվականին նշված միջոցառման ծախսերը ներառված էին տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայությունների միջոցառման ծախսերում: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ նշված ծախսերն աճել են 9.4 անգամ կամ 452.7 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայությունների միջոցառումն իրականացվում է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, որի գործունեությունն ուղղված է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տեխնածին վթարների կանխարգելմանը,

դրանց հետևանքների վերացմանը, նման վթարների հետևանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցմանը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությանը: Միջոցառման ծախսերը կազմել են 41.7 մլն դրամ՝ ապահովելով 100% կատարողական: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի (առանց «Նախիտ գործարան» ՓԲԸ-ի անվտանգության ապահովման համար հատկացված միջոցների) համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 10%-ով կամ 4.6 մլն դրամով՝ պայմանավորված աշխատանքի վարձատրության գծով ծախսերի նվազմամբ:

Հաշվետու տարում **Սեյսմիկ պաշտպանության** ծրագրի շրջանակներում հատկացված միջոցներն ուղղվել են սեյսմիկ պաշտպանության ոլորտում ծառայությունների տրամադրմանը: Միջոցառման շրջանակներում «Սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվել են սեյսմիկ վտանգի մոնիթորինգի ապահովման, դրա հետ կապված այլ երկրորդային վտանգների գնահատման, ՀՀ տարածքում և տարածաշրջանում տեղի ունեցող երկրաշարժերի գրանցման, մշակման և դրանց մասին հաղորդագրությունների տրամադրման աշխատանքներ՝ ապահովելով 2021 թվականի համար նախատեսված արդյունքային ցուցանիշների կատարումը: Հատկացված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 759.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 20.3%-ով կամ 193 մլն դրամով, որը պայմանավորված է 2020 թվականին ԱԱՀ-ի գծով պարտավորությունների փոխհատուցման նպատակով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից 133.5 մլն դրամի հատկացմամբ, ինչպես նաև հաստիքների կրճատման հետևանքով 2021 թվականին աշխատանքի վարձատրության գծով ծախսերի նվազմամբ:

«**Փրկարարական ծառայություններ**» ծրագրի շրջանակներում կատարվել են 11.4 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծրագրի ծախսերն աճել են 1.9%-ով կամ 218.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է «**Փրկարարական ծառայություններ**» միջոցառման ծախսերի աճով:

Հաշվետու տարում «**Փրկարարական ծառայություններ**» միջոցառման շրջանակներում մարտունակության բարձրացման նպատակով նախատեսված 328 ուսումնավարժանքները ողջ ծավալով իրականացվել են: Նշված միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 11.4 մլրդ դրամ և ապահովել 99.9% կատարողական, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 1.9%-ով կամ 207.2 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է նոր հրշեց-փրկարարական ջոկատների ստեղծմամբ, հենակետերում գազաֆիկացման և Էլեկտրաէներգիայի ծախսերի, ինչպես նաև ընթացիկ պահպանման այլ ծախսերի աճով:

2021 թվականին Արտակարգ իրավիճակներում մարդասիրական աջակցության կազմակերպման միջոցառմանը կատարված հատկացումներն ուղղվել են Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի պահպանմանը: Հաշվետու տարում միջոցառման շրջանակներում արտակարգ իրավիճակներին արձագանքումների քանակը կազմել է 63՝ կանխատեսված 6-ի դիմաց, որը պայմանավորված է Սյունիքի մարզում և Բերձորում իրականացված հերթապահություններով: Ծախսերը կատարվել են նախատեսված ծավալով՝ կազմելով 34.9 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 50.1%-ով կամ 11.7 մլն դրամով, որը պայմանավորված է 19 հաստիքների ավելացման հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում Արդարակարգ իրավիճակների բնագավառի պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ծրագրի շրջանակներում օգտագործվել է 1.3 մլրդ դրամ՝ արձանագրելով 98.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակման, խորհրդատվական ծառայությունների տրամադրման և մոնիթորինգի իրականացման միջոցառման ծախսերի կատարողականով: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծրագրի շրջանակներում կատարված ծախսերն աճել են 20.7%-ով կամ 226.7 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված վերոհիշյալ միջոցառման ծախսերի աճով, ինչպես նաև 2021 թվականի պետական բյուջեից արտակարգ իրավիճակների բնագավառում խորհրդատվական և հոգեբանական ծառայությունների ծեռքբերման համար կատարված հատկացումներով:

2021 թվականին արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականության մշակման, խորհրդատվական ծառայությունների տրամադրման և մոնիթորինգի իրականացման ծախսերը կազմել են 1.2 մլրդ դրամ՝ ապահովելով 98.6% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 12.7%-ով կամ 137.7 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների ավելացման հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում Արտակարգ իրավիճակների բնագավառում խորհրդատվական և հոգեբանական ծառայությունների տրամադրման միջոցառման շրջանակներում մատուցվել են ուազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման ընդհանուր ծառայություններ: Միջոցառումը մեկնարկել է 2021 թվականին: Նշված միջոցառման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 100 մլն դրամ:

ՀՀ վիճակագրական կոմիտեի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 2 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 2.5 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 92%-ը, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են 11.4%-ով (260.9 մլն դրամով): Ինչպես ծրագրված ցուցանիշից շեղումը, այնպես էլ նախորդ տարվա համեմատ ծախսերի աճը հիմնականում պայմանավորված են Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի ծախսերով:

Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 74.3%-ը՝ 567.7 մլն դրամ, որը հիմնականում պայմանավորված է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական համակարգի զարգացման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացման դրամաշնորհային ծրագրի կատարողականով: Վերջինիս շրջանակներում նախատեսված արդյունքային ցուցանիշները մեծ մասամբ ապահովվել են: Ծրագրի ծառայությունների մատուցման բաղադրիչի շրջանակներում ներդրվել է 139 վիճակագրական արտադրանքների վերաբերյալ մեթատվյալների համակարգ՝ նախատեսված 138-ի փոխարեն: Վիճակագրական կոմիտեի շենքային պայմանների բարելավման բաղադրիչի շրջանակներում վերանորոգվել են նախատեսված 4 վարչական օբյեկտները՝ 130 քմ մակերեսով: Վիճակագրական կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման բաղադրիչի շրջանակներում ձեռք են բերվել 618 համակարգչային սարքավորումներ՝ նախատեսված 179-ի փոխարեն, որն իրականացվել է ՀԲ-ի առաջարկով և համաձայնությամբ դրամաշնորհային ծրագրում կատարված փոփոխության արդյունքում, իսկ սերվերային հանգույցի ձեռքբերումը տեղափոխվել է 2022 թվական:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական համակարգի զարգացման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացման դրամաշնորհային ծրագրի ծախսերն ընդհանուր առմամբ կազմել են 531.1 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 73%-ը: Շեղումը հիմնականում արձանագրվել է ծառայությունների մատուցման բաղադրիչի ծախսերում, որոնք կատարվել են 64.6%-ով՝ կազմելով 356 մլն դրամ: Վիճակագրական կոմիտեի շենքային պայմանների և տեխնիկական հագեցվածության բարելավման բաղադրիչների շրջանակներում օգտագործվել է համապատասխանաբար 41.3 մլն դրամ և 133.8 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշների 105.2%-ը (պայմանավորված ծրագրված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ) և 97.9%-ը:

Նախորդ տարվա համեմատ Վիճակագրական համակարգի ամրապնդման ազգային ռազմավարական ծրագրի ծախսերն աճել են 57.6%-ով (207.6 մլն դրամով), իիմնականում պայմանավորված Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող վիճակագրական

համակարգի զարգացման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի 47.5% (171 մլն դրամ) աճով:

Ազգային պաշտոնական վիճակագրության արդադրության և դարաձման ծրագրի շրջանակներում օգտագործվել է հատկացված միջոցների 98.8%-ը՝ շուրջ 2 մլրդ դրամ: Մասնավորապես՝ 1.3 մլրդ դրամ է տրամադրվել «Վիճակագրության քաղաքականության մշակում և իրականացում, պաշտոնական վիճակագրական տեղեկատվության մշակում, արտադրում և տարածում» միջոցառմանը, 611.1 մլն դրամ՝ «Վիճակագրական տեղեկատվության հավաքում» միջոցառմանը, որոնք կատարվել են համապատասխանաբար 98.8%-ով և 99.5%-ով: Միջոցառումների շրջանակներում հիմնականում ապահովվել են նախատեսված արդյունքային ցուցանիշները, որոշ շեղումներ հիմնականում պայմանավորված են կորոնավիրուսի համավարակով, որը դժվարացրել է տեղեկատվության հավաքման աշխատանքները:

2020 թվականի համեմատ Ազգային պաշտոնական վիճակագրության արտադրության և տարածման ծրագրի գծով ծախսերն աճել են 2.8%-ով (53.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով):

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում տրամադրվել է 832.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 97.7%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 1.2%-ով կամ 9.6 մլն դրամով: Շրագրի՝ Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման միջոցառման շրջանակներում 2021 թվականի ընթացքում տրամադրվել է թվով 27 լիցենզիա՝ կանխատեսված 35-ի փոխարեն, իրականացվել է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում թվով 237 սակագների սահմանում և վերանայում՝ կանխատեսված 277-ի փոխարեն, տրամադրվել է ՀՀ հեռահաղորդակցության բնագավառում ռադիոհաճախականությունների օգտագործման 11 թույլտվություն՝ կանխատեսված 6-ի փոխարեն: Միջոցառման ծախսերը կազմել են 814.7 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 97.6%-ը:

ՀՀ կենտրոնական ընդրական հանձնաժողովի կողմից 2021 թվականին Ընդրական գործընթացների համակարգման, կանոնակարգման և դեղեկարգվության դրամադրման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 93.9%-ը՝ շուրջ 6 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ ՀՀ կենտրոնական ընդրական հանձնաժողովի ծախսերն աճել են 7.6 անգամ կամ 5.2 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականի հունիսի 20-ին ՀՀ Ազգային

ժողովի արտահերթ ընտրությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անցկացմամբ: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում արձանագրվել է Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների կազմակերպման ծախսերում, որոնք կազմել են 1.8 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 88.7%-ը՝ պայմանավորված տնտեսումներով: Հաշվետու ժամանակահատվածում «ՀՀ Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունների, ինչպես նաև «ՀՀ Սահմանադրության հանրաքվեի կազմակերպում» միջոցառման շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 99.9%-ը՝ 2.8 մլրդ դրամ, իսկ «ՀՀ Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունների, ինչպես նաև «Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի կազմակերպման և անցկացման հետ կապված տեղեկատվական աջակցության միջոցառման ծախսերը կազմել են 531.6 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 80%-ը՝ հիմնականում պայմանավորված փոստային ծառայությունների գծով ծախսերի տնտեսմամբ:

ՀՀ ԿՈՐԴԱԿԱՆ ՄՐԳԱԿԳՈՒԹՅԱՆ ԱՎԱՉՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԵՄՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ «ՏՆԿԵՍԱԿԱՆ ՄՐԳԱԿԳՈՒԹՅԱՆ ԱՎԱՉՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵՐԱՄԱԴՐՎԵԼ Է 529.7 ՄԼՆ ԴՐԱՄ, ՈՐԸ ԿԱԶՄԵԼ Է ԾՐԱԳՐՎԱԾ ՑՈՒցԱՆԻՇԻ 98.5%-Ը: ՆԱԽՈՐԴ ՏԱՐՎԱ ՀԱՄԵՄԱՏ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐԳԱԿԳՈՒԹՅԱՆ ԱՎԱՉՊԱՆՈՒԹՅԱՆ ԱԵՄՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԾԱԽՍԵՐՆ ԱԲԵԼ ԵՆ 22.9%-ՆՎ (98.8 ՄԼՆ ԴՐԱՄՈՎ)՝ ՀԻՄՆԱԿԱՆՈՒՄ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐԳԱԿԳՈՒԹՅԱՆ ԱՎԱՉՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ Մշակման և ՎԵՐԱՀԱԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐԻ ԱԲՈՎ:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում քաղաքականության մշակման և վերահակողության միջոցառման նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը ՀՀ-ում: Զնայած կորոնավիրուսի հետ կապված սահմանափակումներին՝ հաշվետու տարվա ընթացքում միջոցառման շրջանակներում տարբեր ապրանքային շուկաներում իրականացվել են ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել տնտեսական մրցակցության բնագավառում երկրում առկա խնդիրները: 2021 թվականին տնտեսական մրցակցության իրավիճակը գնահատելու համար կատարվել են թվով 104 ուսումնասիրություններ՝ նախատեսված 100-ի փոխարեն: Միջոցառման ծախսերը կազմել են 529.5 մլն դրամ, որոնք կատարվել են 98.5%-ՆՎ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 23.9%-ՆՎ կամ 102.1 մլն դրամով՝

պայմանավորված հաստիքների ավելացման և աշխատավարձերի բնականոն աճի արդյունքում աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ կադասպրի կոմիտեի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է Անշարժ գույքի կադասպրի վարման բնագավառում պետական քաղաքականության իրականացման ծրագիրը, որի գծով ծախսերը կազմել են շուրջ 4 մլրդ դրամ կամ նախատեսվածի 94.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է «ՀՀ տարածքի օդալուսանկարահանման, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքներ» միջոցառման կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ կադաստրի կոմիտեի պատասխանատվությամբ իրականացվող ծախսերն աճել են 5.9%-ով կամ 219.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված 2021 թվականին ՀՀ տարածքի օդալուսանկարահանման, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման աշխատանքների ֆինանսավորմամբ, որոնց գծով 2020 թվականին միջոցներ չեն հատկացվել, ինչպես նաև Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների պերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծախսերը կազմել են 3.4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 3.9%-ով կամ 129 մլն դրամով, որը պայմանավորված է թափուր հաստիքների համալրման, ինչպես նաև աշխատավարձի բնականոն աճի հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու տարում Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ծախսերը կազմել են 3.4 մլրդ դրամ՝ ապահովելով 99.7% կատարողական: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 3.9%-ով կամ 129 մլն դրամով, որը պայմանավորված է թափուր հաստիքների համալրման, ինչպես նաև աշխատավարձի բնականոն աճի հետևանքով աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

ՀՀ տարածքի օդալուսանկարահանման, օրթոֆոտոհատակագծերի և թվային բարձունքային մոդելի ստեղծման միջոցառման շրջանակներում իրականացվել են ՀՀ ամբողջ տարածքի համար բազմասպեկտրալ, ժամանակակից պահանջներին բավարարող օրթոֆոտոհատակագծերի և ուղիեցի մոդելների ստեղծման աշխատանքներ, որոնց ուղղվել է 382.7 մլն դրամ կամ նախատեսված միջոցների 64%-ը: Ցածր կատարողականը պայմանավորված է եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով աշխատանքների ուշ մեկնարկով: Արդյունքում թերակատարվել են միջոցառման համար սահմանված բոլոր արդյունքային չափորոշիչները: Զկատարված աշխատանքները տեղափոխվել են 2022 թվական:

Հեռուսպագետնության և ռադիոյի հանձնաժողովի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում Տեսալսողական մերիայի ոլորտի կանոնակարգման ծրագրի շրջանակներում

իրականացվել են 3 միջոցառումներ, որոնց տրամադրվել է 315.6 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.3% կատարողական: Շեղումը պայմանավորված է «Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգման ծառայություններ» միջոցառման կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 3.3%-ով կամ 10.9 մլն դրամով՝ պայմանավորված Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավման ծախսերի 92.9% (27.2 մլն դրամ) նվազմամբ:

Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգման ծառայությունների միջոցառման շրջանակներում իրականացվել է տեսալսողական հաղորդումների պատրաստման և հեռարձակման՝ օրենսդրության պահանջների և լիցենզիայի պայմանների պահպանման նկատմամբ մշտադիտարկում և վերահսկողություն (3960 եթերային օրերի դիտարկումներ), անցկացվել է սլոթի օգտագործման, լսողական ծրագրերի հեռարձակման և մասնավոր մոլուխալեքս օպերատորի գործունեության լիցենզավորման 13 մրցույթ, որը նախատեսված չէր, տրամադրվել է սլոթի օգտագործման, լսողական ծրագրերի հեռարձակման և մասնավոր մոլուխալեքս օպերատորի գործունեության 27 լիցենզիա՝ նախատեսված 22-ի փոխարեն, և ցանցային օպերատորի գործունեության 11 լիցենզիա՝ նախատեսված 4-ի փոխարեն: Տրամադրվել են տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կարգավիճակի 16 հեղինակազորման վկայագրեր, իրականացվել է տեսալսողական 81 ծրագրերի դիստրիբյուտորների ծանուցումների հաստատում, որոնք նախատեսված չեն եղել: Իրականացվել է նաև տեսալսողական մեդիայի ոլորտը կանոնակարգող 6 իրավական ակտերի մշակում՝ նախատեսված 5-ի դիմաց և տեսալսողական մեդիածառայություն մատուցողների, ցանցային ու մասնավոր մոլուխալեքս օպերատորների, տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորների գործունեության հետ կապված 291 դիմումների քննարկում՝ կանխատեսված 90-ի դիմաց:

Տեսալսողական մեդիայի ոլորտի կանոնակարգման ծառայությունների միջոցառման ծախսերը կազմել են 313.4 մլն դրամ՝ ապահովելով 97.2% կատարողական, որը պայմանավորված է հիմնականում աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների տնտեսմամբ, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի հետ կապված սահմանափակումների հետ կապված՝ ծառայողական գործուղումների համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ միջոցառման ծախսերն աճել են 5.5%-ով կամ 16.3 մլն դրամով, որը պայմանավորված է հաստիքների ավելացմամբ և մատուցված ծառայությունների ծավալի աճով:

ՀՀ պետական եկամուպների կոմիտեի պատասխանատվությամբ 2021 թվականին իրականացվել է «Հարկային և մաքսային ծառայություններ» ծրագիրը, որի շրջանակներում

օգտագործվել է 27.9 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 97%-ը: Ծրագրված ցուցանիշից շեղումը հիմնականում պայմանավորված է «Հարկային և մաքսային ծառայություններ» և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության ու շենքային պայմանների բարելավման միջոցառումների կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի պատասխանատվությամբ իրականացվող ծախսերը նվազել են 3.4%-ով կամ 980.9 մլն դրամով, որը հիմնականում ձևավորվել է դրոշմապիտակների ձեռքբերման և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի շենքային ապահովվածության բարելավման ծախսերի նվազման ու ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման, ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման և հարկային ու մաքսային ծառայությունների միջոցառումների ծախսերի աճի արդյունքում:

«Հարկային և մաքսային ծառայություններ» միջոցառման շրջանակներում օգտագործվել է 19.9 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրային ցուցանիշի 98.2%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 2.2%-ով կամ 427.6 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Հաշվետու ժամանակահատվածում ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել ալկոհոլային խմիչքների 48000 հազար հատ ակցիզային դրոշմանիշեր և ծխախոտի արտադրանքի 550000 հազար հատ դրոշմանիշեր՝ 2020 թվականին ձեռք բերված համապատասխանաբար 27000 հազարի և 450000 հազարի դիմաց: Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար նախատեսված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 2.4 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 29.7%-ով կամ 556.6 մլն դրամով, որը պայմանավորված է անհրաժեշտությունից ելնելով ձեռքբերված ակցիզային դրոշմանիշերի քանակի աճով:

Դրոշմապիտակների ձեռքբերման միջոցառման շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում ձեռք են բերվել 750000 հազար հատ դրոշմապիտակներ՝ 2020 թվականի 1259000.8 հազարի դիմաց: Միջոցառմանը հատկացված միջոցներն օգտագործվել են ամբողջությամբ՝ կազմելով 2.8 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերը նվազել են 40.5%-ով կամ 1.9 մլրդ դրամով, որը պայմանավորված է պահեստում դրոշմապիտակների մնացորդի առկայության հետ կապված ձեռք բերված դրոշմանիշերի քանակի նվազմամբ:

2021 թվականին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի տեխնիկական հագեցվածության բարելավման համար հատկացված միջոցներն օգտագործվել են ունտագենյան սարքավորումների տեխնիկական սպասարկման ծառայությունների, հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տուկոսների գումարների վերադարձի էլեկտրոնային հարթակի, գրասենյակային գույքի,

համակարգչային և այլ սարքավորումների ձեռքբերման համար: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 2.3 մլրդ դրամ՝ ապահովելով 87.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է արտարժույթի՝ կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությամբ, ինչպես նաև մրցույթների արդյունքում ապրանքների և ծառայությունների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 2.5 անգամ կամ 1.4 մլրդ դրամով:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության 2021 թվականի ընթացքում կատարվել են 37.5 մլրդ դրամ ծախսեր՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 96.5%-ը: Հատկացված միջոցներով իրականացվել են 2 ծրագրեր: Ծրագրված ցուցանիշի նկատմամբ շեղումը հիմնականում արձանագրվել է Ազգային անվտանգության ծրագրում, որի ծախսերի աճով է հիմնականում պայմանավորված 2020 թվականի համեմատ ՀՀ ազգային անվտանգության ծառայության ծախսերի 8.3% (2.9 մլրդ դրամ) աճը:

Հաշվետու ժամանակահատվածում Ազգային անվտանգության ծրագրի իրականացման նպատակով պետական բյուջեից ծախսվել է շուրջ 33.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 96.2%-ը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են 8 միջոցառումներ, ընդ որում բոլոր միջոցառումներում առկա են ծրագրված ցուցանիշներից շեղումներ: Նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերն աճել են 8.8%-ով կամ 2.7 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր», «Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովածության բարելավում» և «Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավում» միջոցառումների շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Ազգային անվտանգության ծրագրի շրջանակներում 23 մլրդ դրամ է տրամադրվել հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպման միջոցառմանը, որը կատարվել է 98.4%-ով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 0.3%-ով կամ 73.3 մլն դրամով:

Պաշտպանության բնագավառի այլ ծախսերին տրամադրվել է 8.2 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 92.7%-ը: Շեղումը պայմանավորված է որոշ աշխատանքներ 2022 թվական տեղակողինելու անհրաժեշտությամբ: Նախորդ տարվա համեմատ տվյալ միջոցառման ծախսերն աճել են 12.2%-ով կամ 893.1 մլն դրամով:

Ազգային անվտանգության համակարգի շենքային ապահովածության բարելավման ծախսերը կատարվել են 88.3%-ով՝ կազմելով ավելի քան 1 մլրդ դրամ: Ծրագրված ցուցանիշի նկատմամբ շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում առաջացած տնտեսումներով, ինչպես նաև եղանակային պայմաններով և ՀՀ սահմանին ստեղծված իրավիճակով, որոնց հետևանքով հնարավոր չի եղել ամբողջ ծավալով իրականացնել նախատեսված շինարարական աշխատանքները: Նախորդ տարվա համեմատ տվյալ միջոցառման ծախսերն աճել են 6.8 անգամ կամ 882.4 մլն դրամով՝ պայմանավորված ՀՀ սահմանապահ զորքերի սահմանապահ ուղեկալների կառուցման անհրաժեշտությամբ:

2021 թվականի ընթացքում 839.7 մլն դրամ է տրամադրվել Ազգային անվտանգության համակարգի տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավման նպատակով՝ ապահովելով 98.4% կատարողական: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերն աճել են 6.7 անգամ (715.2 մլն դրամով՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների համալրման անհրաժեշտությամբ):

Պետական պահպանության ապահովման ծրագրի շրջանակներում հաշվետու տարում օգտագործվել է ավելի քան 4 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99.1%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ապահովման ծախսերն աճել են 4.2%-ով կամ 161.2 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված Պետական պահպանության ծառայության և ՊՊԾ տրանսպորտային միջոցներով ապահովածության բարելավման ծախսերի աճով:

Հաշվետու տարում 3.9 մլրդ դրամ է տրամադրվել պետական պահպանության ծառայություններին, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.2%-ը: Նախորդ տարվա համեմատ պետական պահպանության ծառայության ծախսերն աճել են 2.3%-ով կամ 89.5 մլն դրամով՝ պայմանավորված հաստիքների համալրմամբ և հատուկ միջոցների ձեռքբերմամբ:

ՀՀ ոստիկանության պատասխանատվությամբ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են 2 ծրագրեր, որոնց տրամադրվել է շուրջ 65.5 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 98.6%-ը: 2020 թվականի համեմատ ՀՀ ոստիկանության ծախսերն աճել են 2.6%-ով կամ 1.6 մլրդ դրամով՝ հիմնականում պայմանավորված Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակման, կառավարման, կենտրոնացված միջոցառումների, մոնիթորինգի և վերահսկողության ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի աճով:

Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակման, կառավարման, կենդրուացված միջոցառումների, մոնիթորինգի ու վերահսկողության ծրագրի շրջանակներում օգտագործվել է 63.9 մլրդ դրամ կամ նախատեսված միջոցների 98.6%-ը: Բյուջետային միջոցների օգտագործման

արդյունավետության հետագա բարձրացման, ստորաբաժանումների ծախսերի նախահաշիվների լիարժեք կատարման նպատակահարմարությամբ պայմանավորված՝ 2021 թվականին միավորվել են ոստիկանության նախորդ տարվա թվով հինգ ծախսային ծրագրեր⁵¹՝ միաժամանակ պահպանելով գործունեության առանձին ոլորտների գծով կատարվող ծախսերի տարանջատումն՝ ըստ առանձին քաղաքականության միջոցառումների: Նախորդ տարվա համադրելի ցուցանիշի համեմատ ծրագրի ծախսերն աճել են 2.5%-ով կամ 1.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծման հետ կապված ոչ ֆինանսական ակտիվների գծով (կապիտալ) ծախսերի աճով:

Հաշվետու տարում 12.9 մլրդ դրամ ուղղվել է Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակման, կառավարման, կենտրոնացված միջոցառումների, մոնիթորինգի և վերահսկողության միջոցառմանը, որը կատարվել է 96.6%-ով՝ հիմնականում պայմանավորված գնումների ընթացակարգերի արդյունքում ծնավորված տնտեսումներով: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերի 34.2% (3.3 մլրդ դրամ) աճը պայմանավորված է 2021 թվականի հունիսի 7-ից Պարեկային ծառայության և Օպերատիվ կառավարման կենտրոնի ստեղծմամբ:

Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելման միջոցառման շրջանակներում ծախսերը կատարվել են 97.8%-ով՝ կազմելով 11.4 մլրդ դրամ: Ծրագրից շեղումը պայմանավորված է տնտեսումներով, իսկ նախորդ տարվա համեմատ 11.1% (1.4 մլրդ դրամ) անկումը՝ կառուցվածքային փոփոխության շրջանակներում պարեկային ծառայության երևան քաղաքի գնդի կազմավորման արդյունքում ճանապարհային ոստիկանության 1-ին գումարտակի լուծարման հանգամանքով:

Հասարակական կարգի պահպանության, անվտանգության ապահովման և հանցագործությունների դեմ պայքարի միջոցառման ծախսերը կատարվել են 99.8%-ով՝ կազմելով շուրջ 25 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ տվյալ ծախսերը նվազել են 3.4%-ով կամ 877.6 մլն դրամով՝ պայմանավորված 2021 թվականի հունիսի 7-ից նոր պարեկային ծառայության գործարկման և միաժամանակ ոստիկանության երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի լուծարման հանգամանքով:

Պետական պահպանության ծառայություններ մատուցող << ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարմանը տրամադրվել է շուրջ 5.4 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.5%-ը: Պետական պահպանության ծառայությունների կազմակերպման և

⁵¹ 2020 թվականի «Հասարակական անվտանգության ապահովում», «Անձնագրերի և վիզաների տրամադրում, բնակչության պետական ռեգիստրի միասնական համակարգի վարում», «Ոստիկանության աշխատողների և նրանց ընտանիքի անդամների առողջության պահպանում» և «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագրերի միջոցառումները 2021 թվականին ներառվել են «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիթորինգի ու վերահսկողության իրականացում» ծրագրում:

իրականացման ծախսերը կազմել են շուրջ 4.0 մլրդ դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.8%-ը: Նշված միջոցառումների գծով ծախսերը նախորդ տարվա համեմատ նվազել են համապատասխանաբար 5.3%-ով (298.1 մլն դրամով) և 5.9%-ով (247.2 մլն դրամով)¹ հիմնականում պայմանավորված կառուցվածքային փոփոխությամբ և մի շարք կայուն պահակետերով պահպանվող օբյեկտների պետական պահպանությունը դադերեցվելու հանգամանքով: Վերոնշյալ երկու միջոցառումների շրջանակներում 2021 թվականին պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվը կազմել է 3558¹ նախատեսված 3710-ի և նախորդ տարվա 3612-ի դիմաց:

Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցման, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրման նպատակով օգտագործվել է 1.9 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 98.6%-ը: Միջոցառման շրջանակներում սահմանված արդյունքային չափորոշիչների գծով արձանագրվել են ինչպես գերակատարումներ, այնպես էլ թերակատարումներ՝ պայմանավորված քաղաքացիների դիմելիությամբ:

ՀՀ ոստիկանության կարիքի բավարարման միջոցառմանը տրամադրվել է 2.3 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 97.4%-ը: Միջոցներն ուղղվել են ՀՀ ոստիկանության նյութատեխնիկական բազայով ապահովմանը:

Հաշվետու տարում Ոստիկանության կրթական ծառայություններ ծրագրին հատկացված Միջոցներն ուղղվել են Ոստիկանության ծառայողներին նախնական, միջին և բարձրագույն կրթական ծառայությունների մատուցմանը: Ծրագրի շրջանակներում բակալավրիատի կրթական ծրագրով առկա ուսուցում է ստացել ՀՀ ոստիկանության 158 ծառայող՝ նախատեսված 186-ի և 2020 թվականի 140-ի դիմաց, մագիստրատուրայի կրթական ծրագրով առկա ուսուցում՝ 7 ծառայող՝ նախատեսված 20-ի և 2020 թվականի 10-ի դիմաց, միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում է ստացել ՀՀ ոստիկանության 89 ծառայող՝ նախատեսված 130-ի և նախորդ տարվա 72-ի փոխարեն, և նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում է ստացել ՀՀ ոստիկանության 56 ծառայող՝ նախատեսված 60-ի և 2020 թվականի 24-ի դիմաց: Ծրագրին հատկացված շուրջ 1.6 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ ծախսերի 4.7% (71 մլն դրամ) աճը պայմանավորված է Ոստիկանության կրթահամալիրում գործող մասնագիտական կրթական ծրագրերի և պետական կրթական չափորոշիչների վերանայման գործընթացով՝ պարեկների ուսուցման և վերապատրաստման հնգամյա ծրագրի ներդրման հանգամանքով:

Հանրային հեռարձակողի խորհրդին Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման ծրագրի շրջանակներում 2021 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացված ավելի քան 7.3 մլրդ դրամն ամբողջությամբ օգտագործվել է: Նախորդ տարվա համեմատ Հանրային հեռարձակողի խորհրդի ծախսերն աճել են 3%-ով՝ կամ 217.3 մլն դրամով՝ իմանականում պայմանավորված հեռուստատեսային ծառայությունների գծով ծախսերի աճով:

Հեռուստատեսային ծառայությունների շրջանակներում իրականացվել է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան տարբեր թեմատիկ ուղղվածության հեռուստահաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի և Միջազգային ալիքի եթերներում՝ յուրաքանչյուրում 8747 ժամ տևողությամբ՝ նախատեսված 8760-ի փոխարեն: 2021 թվականից գործարկված Լրատվական ալիքի եթերում հեռարձակված հեռուստառադիտիաղորդումների տևողությունը կազմել է 4926 ժամ՝ կանխատեսված 3672-ի դիմաց: Ծախսերի՝ ծրագրից շեղումը պայմանավորված է պոտֆիլակտիկ աշխատանքների իրականացմամբ: Միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 6.1 մլրդ դրամ՝ 5.6%-ով (322.5 մլն դրամով) գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծախսերի աճը պայմանավորված է 2020 թվականին պատերազմական իրավիճակի հետ կապված 300 մլն դրամի չափով կրճատված ծախսերի վերականգնմամբ և նոր լրատվական ալիքի եթերում հեռուստահաղորդումների հեռարձակման նպատակով ՀՀ կառավարության պահուատային ֆոնդից 427.5 մլն դրամի չափով հավելյալ ֆինանսավորման հատկացմամբ: Միևնույն ժամանակ, 405 մլն դրամի չափով կրճատվել է Հանրային հեռուստաընկերության ընթացիկ ֆինանսավորումը, քանի որ օրենսդրական դաշտի փոփոխության արդյունքում 2021 թվականին նախատեսվում էր առևտրային գովազդից եկամտի աճ:

Ռադիո ծառայությունների շրջանակներում իրականացվել են «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագրի», «Երկրորդ ծրագրի» և «Հոգևոր-մշակութային» ռադիոալիքի ու Մայրաքաղաքային սփոման «Արևիկ» ռադիոալիքի եթերներում՝ յուրաքանչյուրում 8760 ժամ տևողությամբ, և ՀՀ տարածքում, Մերձավոր Արևելքի ու հարևան երկրներում հաղորդումների հեռարձակում՝ 821.25 ժամ տևողությամբ՝ նախորդ տարվա համապատասխանաբար 8784 ժամի և 823.5 ժամի դիմաց: Միջոցառման ծախսերը հաշվետու տարում կազմել են 863.5 մլն դրամ և 5.1%-ով (46.2 մլն դրամով) զիջել նախորդ տարվա ցուցանիշը:

Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայությունների շրջանակներում իրականացվել է «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան հոգևոր-մշակութային հեռուստահաղորդումների հեռարձակում՝ 5286 ժամ տևողությամբ և այլ

հաղորդումների հեռարձակում 1284 ժամ տևողությամբ՝ նախորդ տարվա համապատասխանաբար 5490 ժամի և 1100 ժամի դիմաց: Միջոցառման ծախսերը կազմել են 206.1 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ էական փոփոխություն չի կրել:

ՀՀ հաշվեքննիչ պալատին Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննության ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել է ավելի քան 1.1 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 99.9%-ը: Նախորդ տարվա համեմատ ՀՀ հաշվեքննիչ պալատի ծախսերն աճել են 6%-ով կամ 64 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ծառայողական գործուղումների և աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: Հաշվետու տարում Հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում նախատեսված 51-ի դիմաց իրականացվել են թվով 69 հաշվեքննություններ, որից 33-ը հաստատվել է Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի, 36-ը՝ 2021 թվականի գործունեության ծրագրի առաջին մասի շրջանակներում: Պլանով հաստատված ցուցանիշների նկատմամբ տարբերությունը պայմանավորված է 2020 թվականի թվով 17 կասեցված հաշվեքննությունների՝ 2021 թվականին ավարտով, ինչպես նաև 2021 թվականի տարեկան ծրագրում 1 հաշեքննության օբյեկտի ավելացմամբ: 2020 թվականի գործունեության ծրագրի շրջանակներում իրականացված 12 հաշվեքննություն ավարտվել է 2021 թվականի 1-ին կիսամյակում, իսկ 2021 թվականի գործունեության տարեկան ծրագրի երկրորդ մասի շրջանակներում հաստատվել է 4 ընթացիկ եզրակացություն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է Մարդու իրավունքների պաշտպանության ծրագիրը, որի գծով ծախսերը կազմել են 531.3 մլն դրամ՝ ապահովելով ծրագրված ցուցանիշի 97.4%-ը: Նախորդ տարվա համեմատ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի պատասխանատվությամբ իրականացվող ծախսերն աճել են 12.6%-ով կամ 59.3 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ծառայությունների գծով ծախսերի աճով: Վերջինիս շրջանակներում իրականացվում են մարդու իրավունքների պաշտպանության հարցերին վերաբերող բողոքների քննարկում, որոշումների ընդունում, մոնիթորինգ, բողոքների լուսաբանում և հասարակական իրազեկում, օրենսդրության կատարելագործում, միջազգային համագործակցություն և այլ աշխատանքներ: Հաշվետու տարում միջոցառման ծախսերը կազմել են 504.7 մլն դրամ՝ ապահովելով 97.7% կատարողական: Շեղումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետևանքով նախատեսված մոնիթորինգային

այցերի և արտասահմանյան գործուղումների չկայացման հանգամանքով, ինչպես նաև շարունակական ծախսերի համար նախատեսված միջոցների տնտեսմամբ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 9.1%-ով կամ 41.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատանքի վարձատրության ծախսերի աճով:

Մարդու և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման բնագավառում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցության դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 19-ին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Բուլղարիայի արտաքին գործերի նախարարության միջև կնքվել է «Մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցություն» դրամաշնորհային ծրագրի իրականացման մասին համաձայնագիր: Կորոնավիրուսի համավարակի և երկրում հայտարարված ռազմական դրության հետևանքով միջոցառման հետաձգված գործողություններն իրականացվել են 2021 թվականին:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում՝ եվրոպական չափանիշներին համապատասխան աշխատանքային իրավունքների հարցերով բողոքների պատշաճ քննության համար,
- Աշխատանքային իրավունքների հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի դերի, լիազորությունների և գործառույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում:

Իրականացվող ծրագրի նպատակների մասին հանրությանն ու շահագրգիռ կառուցներին իրազեկելու, ինչպես նաև ոլորտում առկա խնդիրները քննարկելու նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Հայաստանում Բուլղարիայի դեսպանության հետ համատեղ կազմակերպել է մեկնարկային հանդիպում՝ տվյալ ոլորտի շահագրգիռ կառուցների մասնակցությամբ: 2021 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են նաև աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացմանն ուղղված երկօրյա սեմինար, ինչպես նաև լրագրողների վերապատրաստման 2 դասընթաց՝ նվիրված աշխատանքային իրավունքների պատշաճ լուսաբանմանը, խթանմանն ու պաշտպանությանը: Բացի այդ, մշակվել է արտահերթ գեկույց, որը վերաբերում է աշխատանքային իրավունքների իրացմանն առնչվող խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված առաջարկներին: Զեկույցը կազմվել է՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ու գեկույցներում տեղ գտած

աշխատանքային իրավունքի ոլորտում առկա խնդիրները, ուստի ունի նաև պրակտիկ կիրառելիություն: Զեկույցը թարգմանվել է նաև անգլերեն լեզվով: Աշխատակազմի աշխատակիցների համար զեկույցի հիման վրա մշակվել է ձեռնարկ-ուղեցույց՝ ոլորտի միջազգային և եվրոպական չափորոշիչների վերաբերյալ: Հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով պատրաստվել և տպագրվել են նաև իրազեկող թոռուցիկներ՝ աշխատանքային իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմների, ինչպես նաև տվյալ ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթների վերաբերյալ: Ծրագրի շրջանակներում պատրաստվել և հրապարակվել են 8 րոպե տևողությամբ տեսանյութեր, որոնք վերաբերում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներով բարձրացված և աշխատանքային իրավունքներին առնչվող հաճախ խնդիրներին:

Մարդու և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման բնագավառում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցության դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են ավելի քան 16.4 մլն դրամ՝ ապահովելով 94.4% կատարողական: Շեղումը պայմանավորված է մրցույթների արդյունքում ապրանքների՝ նախատեսվածից ցածր գներով ձեռքբերմամբ:

Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների ընդլայնման և Հայաստանում խոշտանգումների կանխարգելման նպաստման դրամաշնորհային ծրագրի իրականացումը նախատեսված էր 2020 թվականին, սակայն կորոնավիրուսի համավարակի և երկրում հայտարարված ռազմական դրության հետևանքով կողմերի համաձայնությամբ ծրագրի իրականացման վերջնաժամկետը երկարաձգվել էր մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել 2013 թվականի նոյեմբերի 15-ի ՄԱԿ-ի խոշտանգումների կանխարգելման ենթակոմիտեի՝ Հայաստան կատարված այցի վերաբերյալ զեկույցի առաջարկությունների կատարմանը: Առաջարկությունները, մասնավորապես, վերաբերում են Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների ամրապնդմանը, շահագրգիռ պետական կառույցների ներկայացուցիչների գիտելիքների և հմտությունների զարգացմանը, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- Կազմակերպվել է փորձի փոխանակում-ուսումնական այց Ալբանիայի Օմբուդսմանի հաստատություն: Այցի նպատակն էր խոշտանգումների կանխարգելման ոլորտում լավագույն փորձի փոխանակումը: Տարբեր թեմաների վերաբերյալ ինտերակտիվ քննարկումներից բացի, իրականացվել են նաև համատեղ մոնիթորինգային այցեր ազատությունից զրկման վայրեր.

- ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի տարեկան գեկույցը թարգմանվել է անգլերեն և տպագրվել.
- Կեսօրյա կլոր-սեղան քննարկում է կազմակերպվել դատավորների, հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ: Միջոցառումը նվիրված էր հոգեբուժական կազմակերպություններում անձանց կամավոր և հարկադիր բուժմանը և համապատասխան դատական պրակտիկային, անգործունակ ճանաչված անձանց իրավունքներին ու քրեակատարողական հիմնարկներում հոգեբուժական օգնության և սպասարկման ապահովմանը.

- Կազմակերպվել է երկօրյա դասընթաց հոգեբուժական կազմակերպությունների և ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների ընդլայնման և Հայաստանում խոշտանգումների կանխարգելման նպաստման դրամաշնորհային ծրագրի ծախսերը կազմել են շուրջ 6.3 մլն դրամ՝ ապահովելով 80.9% կատարողական: Շեղումը պայմանավորված է կորոնավիրուսի համավարակի հետևանքով կլոր-սեղան քննարկումներից մեկի չեղարկման և առողջտորական ծառայությունը չիրականացվելու հանգամանքով:

ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեին հատկացված միջոցներով 2021 թվականի ընթացքում իրականացվել է Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորման ծրագիրը, որի կատարողականը կազմել է 99.2% կամ 316.8 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ կոմիտեի ծախսերն աճել են 2.3%-ով (7.2 մլն դրամով): Հիմնականում պայմանավորված աշխատանքի վարձատրության ծախսերի աճով: Ծրագրի շրջանակներում 2021 թվականին ՀՀ միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի կողմից իրականացվել են միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների, լիցենզիայի պայմանների և պահանջների համապատասխանության 51 տեսչական ստուգումներ, տրամադրվել է ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում գործունեության իրականացման 691 լիցենզիա՝ կանխատեսված 719-ի փոխարեն, որը պայմանավորված է լիցենզիաների ժամկետների երկարաձգման համար ներկայացված հայտերի քանակով:

ՀՀ քննչական կոմիտեի կողմից իրականացված «ՀՀ քննչական ծառայություններ» ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում կատարվել են շուրջ 8.1 մլրդ դրամ ծախսեր՝ կազմելով ծրագրային ցուցանիշի 99%-ը: Նախորդ տարվա համեմատ կոմիտեի ծախսերն աճել են 8.1%-ով կամ 608.5 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված հաստիքների ավելացմամբ: Միջոցների

հիմնական մասը՝ շուրջ 8 մլրդ դրամը, կազմել են քրեական գործերով վարույթի իրականացման ծախսերը, որոնք կատարվել են 99.3%-ով:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել է պետական բյուջեի 2 ծրագիր, որոնց գծով ծախսերը կազմել են 1,238.4 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.7%-ը: Նախորդ տարվա համեմատ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ծախսերն աճել են 2.1 անգամ (649.6 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված քաղաքաշինության բնագավառում պետական ծրագրերի իրականացման ապահովման միջոցառման ծախսերով, որի գծով 2020 թվականին միջոցներ չեն նախատեսվել, և միկրոոեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման ծախսերի ֆինանսավորմամբ, որոնց գծով 2020 թվականին նախատեսված միջոցները չեն օգտագործվել):

Հատկացված միջոցները հիմնականում ուղղվել են Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության իրականացման և կանոնակարգման ծրագրի կատարմանը, որի գծով ծախսերը կազմել են 1,236.8 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 93.9%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է քաղաքաշինության բնագավառում պետական ծրագրերի իրականացման ապահովման միջոցառման կատարողականով, որի շրջանակներում միջոցներ են հատկացվել ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ Գորիս համայնքի Շուտոնուխ բնակավայրում բնակելի թաղամասի կառուցման նպատակով: Շինարարական աշխատանքների մի մասը չի կատարվել, շինարարության տեխնոլոգիական հաջորդականությամբ պայմանավորված՝ դրանք կիրականացվեն ավարտական փուլում, մասնավորապես՝ ճանապարհածածկույթի կառուցումը: Տվյալ միջոցառման գծով ծախսերը կազմել են 415.1 մլն դրամ կամ նախատեսվածի 88.3%-ը:

Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում պետական քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման, պլանավորման, մոնիթորինգի, կապիտալ ծրագրերի կատարման, պետական գնումների իրականացման ծառայության միջոցառման ծախսերը կազմել են 598.3 մլն դրամ կամ ծրագրված ցուցանիշի 99.7%-ը:

Միկրոոեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման միջոցառման շրջանակներում մշակվել է թվով 26 նախագծային փաստաթուղթ, և հատկացված 199.9 մլն դրամն ամբողջությամբ օգտագործվել է:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պատասխանատվությամբ 2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեի միջոցներով կատարվել են շուրջ 215 մլն դրամ ծախսեր՝ կազմելով

ծրագրված ցուցանիշի 82.9%-ը: Նախորդ տարվա համեմատ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ծախսերն աճել են 77%-ով կամ 93.5 մլն դրամով՝ կապված հաստիքների ավելացման հետ, որը պայմանավորված էր 2020-2021 թվականների օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանձնաժողովի կողմից իրականացվելիք աշխատանքների կտրուկ ավելացմամբ:

Հատկացված միջոցներն ուղղվել են Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացման ապահովման ծրագրի շրջանակներում «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքության համակարգի զարգացում» միջոցառմանը, որը կատարվել է 86.4%-ով: Ցածր կատարողականը հիմնականում պայմանավորված է հաստիքներն ամբողջությամբ չհամալրվելու հանգամանքով: Շեղումը պայմանավորված է նաև նրանով, որ կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերով կրթական և հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակման և միջոցառումների իրականացման աշխատանքների համար տարեսկզբին նախատեսված 10.3 մլն դրամի միջոցները չեն օգտագործվել, քանի որ, ըստ հանձնաժողովի, 2021 թվականի պետական բյուջեով հաստատված ֆինանսական և արդյունքային ցուցանիշները բավարար չեն եղել միջոցառումն իրականացնելու համար, ուստի լրացուցիչ հաստիքները գույքով ապահովելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ նոյեմբերին տվյալ միջոցառման համար նախատեսված գումարից 10 մլն դրամը վերաբաշխման միջոցով հատկացվել էր վարչական սարքավորումների ձեռքբերմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր տեխնիկական պատճառներով որոշման ընդունումը բավականին ձգձգվեց, ինչպես նաև գնման ընթացակարգի՝ էլեկտրոնային աճուրդի ժամանակատարության գործոնը՝ գնման իրականացումը մինչև 2021 թվականի բյուջետային տարվա ավարտը հնարավոր չեղավ ապահովել:

ՀՀ պետական վերահսկողական ծառայությանը Պետական վերահսկողական ծառայությունների ծրագրի շրջանակներում 2021 թվականի ընթացքում տրամադրվել է 676.7 մլն դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 94.7%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման միջոցառման կատարողականով: Նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական վերահսկողական ծառայության ծախսերն աճել են 16.2%-ով կամ 94.2 մլն դրամով, որը պայմանավորված է վերոնշյալ միջոցառման ծախսերի աճով:

ՀՀ վարչապետին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված վերահսկողական լիազորությունների իրականացման ապահովման միջոցառման շրջանակներում ըստ փաստացի ստացված հանձնարարագրերի իրականացվել են թվով 26 ուսումնասիրություններ՝ նախատեսված 30-ի դիմաց: Հաշվետու տարում միջոցառման ծախսերը կազմել են շուրջ 671.7 մլն դրամ, որոնք

կատարվել են 94.7%-ով: Շեղումը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքների առկայության արդյունքում աշխատանքի վարձատրության համար նախատեսված միջոցների տնտեսմամբ, 2021 թվականի դեկտեմբեր ամսվա հարկային պարտավորությունների մի մասը 2022 թվականի հունվարին վճարելու հանգամանքով, ինչպես նաև որոշ ծախսային հոդվածների գծով գնման կարիքի բացակայությամբ: Նախորդ տարվա համեմատ նշված միջոցառման ծախսերն աճել են 16.6%-ով կամ 95.5 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքների համալրման արդյունքում աշխատանքի վարձատրության ուղղված ծախսերի ու Էներգետիկ ծառայությունների, ինչպես նաև կորոնավիրուսի համավարակի սահմանափակումների մեղմման հետևանքով գործուղումների գծով ծախսերի աճով:

Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին մարզպետարաններին պետական կառավարման ծրագրերի շրջանակներում 2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից ընդհանուր առմամբ տրամադրվել է 5.5 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրված ցուցանիշի 98.6%-ը:

Միջոցները հիմնականում օգտագործվել են մարզպետարանների կողմից «Տարածքային պետական կառավարման ապահովում» միջոցառումների շրջանակներում, որոնց ուղղվել է 5.47 մլրդ դրամ՝ կազմեով ծրագրված ցուցանիշի 98.6%-ը:

Հատկացումներն ըստ մարզերի ներկայացված են Աղյուսակ 35-ում:

Նախորդ տարվա համեմատ մարզպետարանների ծախսերը նվազել են 6%-ով կամ 350.3 մլն դրամով՝ հիմնականում պայմանավորված ՀՀ կառավարության որոշմամբ ՄՍԾ ստեղծման հետ կապված՝ ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների գործունեության դադարեցմամբ:

Աղյուսակ 35. ՀՀ պետական բյուջեից հարկացումները ըստ մարզերի (մլն դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)	2021թ. և 2020թ. տարբերությունը
ԸՆԴԱՄԵՆԸ	5,825.8	5,553.0	5,475.6	98.6	94.0	(350.3)
Արագածոտնի մարզպետարան	517.3	483.2	474.9	98.3	91.8	(42.4)
Արարատի մարզպետարան	537.5	491.2	461.1	93.9	85.8	(76.4)
Արմավիրի մարզպետարան	545.7	520.7	512.4	98.4	93.9	(33.3)
Գեղարքունիքի մարզպետարան	759.1	713.7	702.8	98.5	92.6	(56.3)
Լոռու մարզպետարան	634.3	622.9	619.4	99.4	97.6	(14.9)
Կոտայքի մարզպետարան	580.7	557.3	553.9	99.4	95.4	(26.7)

Շիրակի մարզպետարան	687.8	639.8	638.8	99.8	92.9	(49.0)
Սյունիքի մարզպետարան	558.8	565.3	556.6	98.5	99.6	(2.2)
Վայոց ձորի մարզպետարան	434.4	427.9	425.8	99.5	98.0	(8.6)
Տավուշի մարզպետարան	570.4	531.1	530.0	99.8	92.9	(40.4)

ՀՀ կառավարության պատասխանատվությամբ նախատեսված «ՀՀ կառավարության պահուատային ֆոնդ»⁵², «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և պաշտոնական գործուղումների կազմակերպում» և «Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպում» ծրագրերի գծով ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքով նախատեսվել էին ընդհանուր առմամբ 4.5 մլրդ դրամի միջոցներ: ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունների և վերաբաշխումների արդյունքում նշված ծրագրերին հատկացված միջոցները սահմանված կարգով ուղղվել են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեով նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորմանը՝ հատկացումների չափով ավելացնելով համապատասխան ծրագրերի և միջոցառումների գծով նախատեսված գումարները, ինչպես նաև բյուջեով չնախատեսված ելքերի ֆինանսավորմանը՝ բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգման մեջ ավելացնելով նոր ծրագրեր և/կամ միջոցառումներ՝ ենելով այդ ելքերի ուղղություններից, նպատակներից, ակնկալվող արդյունքներից և դրանց համար պատասխանատու պետական մարմիններից: ՀՀ կառավարության լիազորությունների շրջանակներում կատարված փոփոխությունների և վերոհիշյալ սկզբունքով կատարված վերաբաշխումների արդյունքում ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո գտնվող վերոհիշյալ ծրագրերի շրջանակներում չօգտագործված միջոցները կազմել են 730.5 դրամ: Մասնավորապես՝ «ՀՀ կառավարության պահուատային ֆոնդ» ծրագրին հատկացված միջոցներից չի օգտագործվել 640 մլն դրամը, «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների և պաշտոնական գործուղումների կազմակերպում» ծրագրին հատկացված միջոցներից՝ 53 մլն դրամը, «Հասարակության և պետության հանդեպ հատուկ ծառայություններ ունեցած քաղաքացիների մահվան դեպքում արարողակարգային միջոցառումների կազմակերպում» ծրագրին հատկացված միջոցներից՝ 37.5 մլն դրամ:

Հույժ գաղտնի

⁵² ՀՀ կառավարության պահուատային ֆոնդից կատարված վերաբաշխումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ տեղեկանքներում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\13.Պահուատային ֆոնդ ՊՈԾՄԿ.xls](#), [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\14.Պահուատային ֆոնդ ՈՊԾՄԿ.xls](#):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ

2021 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 320.5 մլրդ դրամ պակասուրդով՝ կազմելով ծրագրի 89.2%-ը և 4.0%-ով (13.5 մլրդ դրամով) զիջելով նախորդ տարվա ցուցանիշը: Ծրագրի համեմատ պակասուրդի ցածր մակարդակը հիմնականում պայմանավորված է արտաքին աղբյուրներից վարկերի և փոխատվությունների ստացման ցածր ցուցանիշով:


Աղյուսակ 36. ՀՀ պետական բյուջեի պակասուրդի ֆինանսվորման աղբյուրները (մլրդ դրամ)⁵³

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողա- կանը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
Դեֆիցիտ (պակասուրդ)	334.0	359.1	320.5	89.2	96.0
Ներքին աղբյուրներ, այդ թվում՝	359.4	102.9	101.2	98.3	28.2
- Փոխառու միջոցներ	299.6	239.7	240.0	100.1	80.1
- Ֆինանսական գուտ ակտիվներ	59.8	(136.8)	(138.7)	101.4	(232.0)
Արտաքին աղբյուրներ, այդ թվում՝	(25.4)	256.2	219.3	85.6	(863.6)
- Փոխառու միջոցներ	54.1	385.5	350.9	91.0	648.3
- Ֆինանսական գուտ ակտիվներ	(79.5)	(129.3)	(131.7)	101.8	165.6

Պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը 2021 թվականին կազմել է 4.6%՝ կանխատեսված 5.3%-ի և 2020 թվականի 5.4%-ի դիմաց: 2020 թվականի համեմատ զգալիորեն փոխվել է պակասուրդի ֆինանսվորման աղբյուրների կառուցվածքը: Եթե նախորդ տարի պակասուրդն ամբողջությամբ ֆինանսվորվել էր ներքին աղբյուրների հաշվին, ապա 2021 թվականին պակասուրդը զգալի չափով (68.4%-ով) ֆինանսավորվել է արտաքին աղբյուրներից՝ պայմանավորված արտաքութային պետական պարտատոմսերի թողարկմամբ:

⁵³ Պակասուրդի ֆինանսվորման աղբյուրների մասին մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ հավելվածում՝ [3.ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՆԱՀԱՎԵԼՎԱԾ 3 դեֆիցիտի ֆին. աղբյուրներ.xls](#), իսկ ֆինանսական ակտիվների ձեռքբերման և ներգրավված փոխառու միջոցների մարման գծով ելքերի արդյունքային ցուցանիշները՝ հետևյալ տեղեկանքում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐՆԱԴԵՖԻՑԻՏ աղբյուրային ցուցանիշ2.xls](#):

Գծապատկեր 28.ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2019-2021թթ., մլրդ դրամ



Հաշվետու ժամանակահատվածում ներքին փոխառու միջոցներից պետական բյուջեն ֆինանսավորվել է գանձապետական պարտատոմսերի տեղաբաշխումից զուտ մուտքերի հաշվին, որոնք կազմել են շուրջ 240.1 մլրդ դրամ՝ նախատեսված 239.8 մլրդ դրամի դիմաց: 2021 թվականի ընթացքում ընդհանուր առմամբ տեղաբաշխվել են 397,486.48 մլն դրամի պարտատոմսեր, և տեղաբաշխումից ստացված մուտքը կազմել է 385,025.11 մլն դրամ, իսկ պարտատոմսերի մարմանը/հետգնմանն ուղղվել է 144,964.76 մլն դրամ: Հաշվետու տարում տեղաբաշխվել են 3,172.73 մլն դրամի խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնցից մուտքը կազմել է 3,178.51 մլն դրամ:

Կատարված գործառնությունների արդյունքում՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պետական գանձապետական պարտատոմսերը բնութագրող ցուցանիշները եղել են հետևյալը.

- միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 10.08% (2020թ.՝ 10.39%): Դրան նպաստել է տեղաբաշխման ավելի բարձր միջին կշռված եկամտաբերությամբ պարտատոմսերի մարումը (մարվել են 5 տարի մարման ժամկետով՝ 12.6% տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությամբ պետական գանձապետական միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր և 10 տարի մարման ժամկետով՝ 17.9% տեղաբաշխման միջին կշռված եկամտաբերությամբ պետական գանձապետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր),

- մինչև մարումը մնացած միջին ժամկետայնությունը՝ 3,761 օր (2020թ.՝ 3,945 օր).

- մարման բեռի բաշխվածությունը մինչև 2050 թվականն է.
- շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալն անվանական արժեքով կազմել է 1,208.9 մլրդ դրամ (2020թ.՝ 958.8 մլրդ դրամ), որի 4%-ը (48.5 մլրդ դրամը) կազմել են կարճաժամկետ պարտատոմսերը, 31%-ը (374.2 մլրդ դրամը)՝ միջնաժամկետ պարտատոմսերը, 64.6%-ը (780.4 մլրդ դրամը)¹ երկարաժամկետ պարտատոմսերը և 0.5%-ը (5.8 մլրդ դրամը)² խնայողական պարտատոմսերը:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող գանձապետական պարտատոմսերի 4.2%-ը (51.2 մլրդ դրամ) գտնվել է ոչ ռեզիդենտների մոտ:

Հաշվետու ժամանակահատվածում 108.9 մլն դրամ տրամադրվել է մուրհակների մարմանը՝ ծրագրով նախատեսված 112.3 մլն դրամի դիմաց, ինչը պայմանավորված է նրանով, որ թվով 9 մուրհակ մուրհակատերերի կողմից չեն ներկայացվել մարման:

2021 թվականի ընթացքում պետական բյուջեի ֆինանսավորումը ներքին ֆինանսական գուտ ակտիվների հաշվին կազմել է -138.7 մլրդ դրամ՝ նախատեսված -136.8 մլրդ դրամի դիմաց: Մասնավորապես՝ ավելի քան 46.9 մլրդ դրամ վարկեր են տրամադրվել ՀՀ ռեզիդենտներին:

Աղյուսակ 37. Ներքին ֆինանսական ակտիվների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողա- կանը ճշտված պլանի նկատմամբ (%)
Ֆինանսական գուտ ակտիվներ	59.8	(136.8)	(138.7)	101.4
Վարկերի և փոխարժեությունների դրամադրում, այդ թվում՝	(50.2)	(47.8)	(46.9)	98.2
Արտաքին աջակցությամբ իրականացվող վարկային ծրագրերի շրջանակներում	(10.1)	(14.8)	(14.0)	94.2
Այլ բյուջետային վարկեր, այդ թվում՝	(40.2)	(33.0)	(33.0)	100.0
- «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին	(18.7)	(27.2)	(27.2)	100.0
- Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեղորացման միջոցառումների շրջանակներում	(19.4)	(5.8)	(5.8)	100.0
- «Կորսան Կորվիհամ Կոնստրուկսիլոն» ԲԸ-ի կողմից չվճարված դրամական պահանջներ ունեցող ՀՀ կազմակերպություններին	(2.0)			
Տրամադրված վարկերի և փոխարժեությունների վերադարձից մուրքեր	29.8	32.1	34.8	108.4
Այլ ֆինանսական ակտիվներ	80.2	(121.1)	(126.6)	104.6

Արտաքին աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ՀՀ ռեզիդենտներին հատկացված 14.0 մլրդ դրամ վարկերի գերակշիռ մասը՝ 12.4 մլրդ դրամը,

տրամադրվել է Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 97.4%-ը։ Ծրագրից շեղումը հիմնականում պայմանավորված է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Աշնակ» և «Արարատ» ենթակայանների վերակառուցման ծրագրի շրջանակներում «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին տրամադրված ենթավարկի կատարողականով։ Միջոցառման շրջանակներում վերակառուցվել է «Աշնակ» ենթակայանը, և նախատեսվում է վերակառուցել «Արարատ-2» ենթակայանը։ Միջոցառման շրջանակներում տրամադրվել է 1.7 մլրդ դրամ՝ նախատեսված 2.1 մլրդ դրամի դիմաց, քանի որ կապալառուին վերջնավճարների վճարումը հետաձգվել է 2022 թվական՝ նրա կողմից համապատասխան պահեստամասերը պատվիրատուին հանձնելուց հետո։

Էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագրի շրջանակներում տրամադրված գումարի զգալի մասը կազմել է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիրի վերականգնման ծրագրի շրջանակներում «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ին տրամադրված ենթավարկը։ Միջոցառման շրջանակներում նախատեսվում էր Որոտան համալիրի (Տաթև ՀԷԿ, Շամբ ՀԷԿ, Սպանդարյան ՀԷԿ) էլեկտրական և մեխանիկական համակարգերի հինգ (բացառությամբ Սպանդարյան ՀԷԿ-ի) էներգաբլոկների ամբողջական վերականգնում, այդ թվում՝ հիմնական բաղադրիչների և համակարգերի փոխարինում։ Ծրագրի շրջանակներում նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են։ Արդյունքում բարելավվել է հիդրոէլեկտրակայանների, դրանց բլոկների և հարակից սարքավորումների աշխատանքը, հուսալիությունը և հասանելիությունը՝ վերականգնելով այս կարևոր էներգաբլոկների ամբողջական ֆունկցիոնալությունը։ Աշխատանքների նպատակն էր արդիականացնել և ավտոմատացնել կայանների աշխատանքը, ինացած սարքավորումները փոխարինել ժամանակակից սարքավորումներով և բարելավվել էներգամատակարարման անվտանգությունն ու կայունությունը՝ ապահովելով էլեկտրաէներգիայի արտադրությունը վերականգնվող էներգետիկ ռեսուրսների միջոցով, հուսալի, ծախսարդյունավետ, էկոլոգիապես որակյալ էներգամատակարարման միջոցով նպաստելով Հայաստանում կայուն տնտեսական զարգացմանը, կենսապայմանների բարելավմանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանությանը։ Միջոցառման շրջանակներում նախատեսված շուրջ 7.4 մլրդ դրամն ամբողջությամբ տրամադրվել է։

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագրի շրջանակներում «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին նախատեսված 1.9 մլրդ դրամից 956.1 մլն

դրամը տրամադրվել է որպես կանխավճար, 673.6 մլն դրամը՝ որպես կապալառուի կողմից փաստացի կրած և փոխհատուցման ենթակա ծախսի վճարում, 192.1 մլն դրամը՝ «Զարենցավան-3» ենթակայանի վերակառուցման շրջանակներում կապալառուի կողմից ներմուծված ապրանքների դիմաց վճարում, 64.0 մլն դրամը՝ «Վանաձոր-1» ենթակայանի վերակառուցման շրջանակներում իրականացված շինարարական աշխատանքների դիմաց վճարում, 22.6 մլն դրամը՝ խորհրդատուների կողմից մատուցված խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարում: ՀՀ Էներգահամակարգի պահանջների փոփոխություններից ելնելով, «Զարենցավան-3» ենթակայանի վերակառուցման ծրագրի հնարավոր փոփոխությունների նախագծի մշակմամբ պայմանավորված, ծրագրի շրջանակներում նախատեսված շինմոնտաժային աշխատանքները կասեցվել էին: Բանակցություններ են տարվել գլխավոր կապալառուի հետ ծրագրով նախատեսված աշխատանքներն առանց լրացուցիչ ծախսերի վերսկսելու համար, որոնց արդյունքում «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «EFASEC Engenharia e Sistemas, S.A.» (Պորտուգալիա) ընկերության միջև 2021 թվականի մարտի 12-ին կնքվել և ուժի մեջ է մտել պայմանագրի փոփոխությունը: Վերամեկնարկած պայմանագրի շրջանակներում «Զարենցավան-3» ենթակայանի վերակառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2023 թվականին: 2020 թվականի դեկտեմբերի 28-ին հայտարարված՝ «Զովունի» ենթակայանի վերակառուցման գլխավոր կապալառուի ընտրության մրցույթի արդյունքում «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ և China National Electric Engineering Co., LTD ընկերությունների միջև ստորագրվել է 220կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագիրը, որն ուժի մեջ է մտել 2021 թվականի սեպտեմբերի 28-ին՝ կանխավճարի վճարումից հետո:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն» վարկային ծրագրի հիմնական նպատակն է՝ բարելավել բնակչության տնտեսական և սոցիալական վիճակը ծրագրի իրականացման տարածքում՝ ստեղծելով եկամտի աճի և զբաղվածության կայուն հնարավորություններ: Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի շրջանակում շեշտը դրված է սոցիալական և արտադրական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ ջրամատակարարման և ռողոգման համակարգերի բարելավման, վերաֆինանսավորման և ներդրումային գործիքների տրամադրման վրա: ԳՖԿ-ի միջոցով մասնակից ֆինանսավական հաստատություններին տրամադրվում են ֆինանսական միջոցներ, որոնք վարկերի տեսքով ուղղվում են փոքր տնտեսավարողներին, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկություններին՝ իրենց գործունեության բարելավման և եկամուտների ավելացման նպատակով: Նշված միջոցառման շրջանակներում միջոցներն ուղղվել են Գյուղական

ֆինանսավորման կառույցի ներդրումային կապիտալի ավելացմանը: Հաշվետու տարվա ընթացքում վարկեր են տրամադրվել 85 փոքր գյուղացիական տնտեսավարողների՝ նախատեսված 80-ի: Դիմաց: Շրագրի շրջանակներում օգտագործվել է 762.2 մլն դրամ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 87.2%-ը: Շեղումը պայմանավորված է վարկի միջին մեծության հաշվարկի մեխանիզմով, որը կախված է վարկի ժամկետից և արտոնյալ տևողությունից:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում 2021 թվականին նախատեսված աշխատանքներն ամբողջությամբ կատարվել են: Մասնավորապես՝ սանիտարական աղբավայրի և երկու վերաբեռնման կայանների կառուցման համար հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Շունել Սադ Արիանա» ՓԲԸ կողմից իրականացվել են Հրազդան համայնքում կառուցվող նոր սանիտարական աղբավայրի տարածքի հարթեցման աշխատանքները, ընթացքում են ադմինիստրատիվ շենքի, աղբահանության մեքենաների կայանատեղիի, ջրի ռեզերվուարների, աղբավայրի տարածքի մուտքի, տարածքի ցանկապատման, վտանգավոր թափոնների պահեստի շինարարական աշխատանքները, կատարվել են նոր ճանապարհային հանգույցի շինարարական աշխատանքները, Ակունք և Մարտունի համայնքներում վերաբեռնման կայանների կառուցապատման և տարածքների առանձնացման համար բետոնե պատերի կառուցման աշխատանքները: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում տրամադրվել է 570.5 մլն դրամ կամ նախատեսվածի 99.3%-ը:

Քաղաքային զարգացման ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում նախատեսված 585.7 մլն դրամի դիմաց տրամադրվել է 175.4 մլն դրամ: Մասնավորապես՝ Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման երկրորդ ծրագրի շրջանակներում կատարվել են դրենաժային թունելի հորատանցման աշխատանքներ և մետրոյի թունելների ամրակապի հետևի դատարկությունների լցոնում: Միջոցառման շրջանակներում տրամադրվել է 162.1 մլն դրամ՝ նախատեսված 300.4 մլն դրամի դիմաց, որը պայմանավորված է կապալառուի թերի աշխատանքով:

Հաշվետու տարվա ընթացքում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի շրջանակներում նախատեսվել էր բարելավել Երևանի 28 փողոցների լուսավորության ցանցերը, որի համար նախատեսված էր «Երքաղլույս» ՓԲԸ-ին տրամադրել 285.3 մլն դրամ վարկ, սակայն փաստացի տրամադրվել է 13.3 մլն դրամ՝ նախորդ տարվա ընթացքում իրականացված աշխատանքների

դիմաց: Նախատեսված գումարի մեծ մասը չի օգտագործվել՝ պայմանավորված հողային աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած խոչընդոտների հետևանքով նախագծերում փոփոխությունների անհրաժեշտությամբ:

Նախկինում պետական բյուջեից ռեզիդենտներին տրամադրված վարկերից հաշվետու տարվա ընթացքում վերադարձվել է 34.8 մլրդ դրամ՝ 8.4%-ով գերազանցելով ծրագրված ցուցանիշը, ինչը հիմնականում պայմանավորված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման 1-ին և 3-րդ միջոցառումների շրջանակներում տրամադրված վարկերից 2.2 մլրդ դրամի վաղաժամկետ մարմամբ և «Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից նախատեսված 1.5 մլրդ դրամի դիմաց 2.2 մլրդ դրամի վերադարձով՝ վարկային միջոցների համալրմամբ պայմանավորված: Վերադարձված միջոցներից շուրջ 9.5 մլրդ դրամը վճարվել է «Հայկական ատոմակայան» ՓԲԸ-ի կողմից՝ ապահովելով ծրագրի 100.5% կատարողական, 4 մլրդ դրամ՝ «Երևանի Զերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից, որը կազմել է ծրագրի 98.5%-ը: Ծրագրից շեղումը պայմանավորված է կանխատեսվածի համեմատ փաստացի փոխարժեքի տարբերությամբ: ՀՀ կենտոնական բանկի կողմից՝ Տնտեսության կայունացման վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի գծով նախատեսված 3.5 մլրդ դրամն ամբողջությամբ վերադարձվել է:

2021 թվականին 12.6 մլրդ դրամ տրամադրվել է բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով՝ ապահովելով ծրագրի 100% կատարում:

Մասնավորապես՝ 5 մլրդ դրամ է տրամադրվել ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը՝ «Զեռնարկատեր+Պետություն հականգնաժամային ներդրումներ» ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդի բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման նպատակով: ՀՀ կառավարության կողմից ֆոնդի փայերի ձեռք բերումը նախատեսվել է իրականացնել 10 մասնաբաժիններով՝ յուրաքանչյուրը մինչև 5 մլրդ դրամի չափով: Ընդ որում, առաջին 5 մլրդ դրամի չափով փայերի ձեռքբերման դիմաց վճարումը կատարվում է ֆոնդի փայերի ձեռք բերման հայտը ֆոնդի կանոններով սահմանված կարգով ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սրանով պայմանավորված՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից 2021 թվականի ընթացքում ֆոնդի փայերի ձեռքբերման հայտի հիման վրա փաստացի վճարվել է 5 մլրդ դրամ: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Զեռնարկատեր+Պետություն հականգնաժամային ներդրումներ» փակ ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդին ներկայացված 200 ծրագրերից հաստատվել է միայն 7-ը՝ ընդհանուր 4,734.0 մլն դրամի չափով, որոնցից սահմանված պահանջներին ամբողջությամբ բավարարել է միայն մեկը՝ Սերմից Փերմա (Երևան փողոցին)

ընկերության հետ համատեղ) ծրագիրը: Նշված ընկերության ներդրումային ծրագրում իրականացվել է 265.9 մլն դրամի ներդրում (պայմանագրով՝ նախատեսված ներդրումներն իրականացվել են 100%-ով): Հայտերից 6-ում ներկայացված ծրագրերի պահանջներն ամբողջությամբ չեն բավարարել նախատեսված ներդրումային պայմաններին, ուստի նշված 6 ընկերություններից 4-ի ծրագրերում կատարվել են մասնակի ներդրումներ: Մասնավորապես՝ 63 մլն դրամի ներդրում է կատարվել «Ժամանակակից վիրաբուժության-կլինիկա» ՓԲԸ-ում, 83.3 մլն դրամի ներդրում՝ «Տավրոս ԿՎՄ» ՓԲԸ-ում, 55.4 մլն դրամի ներդրում՝ Հարդ Ռոք Կաֆե «Դոմ Արենա» ՓԲԸ-ում, 96 մլն դրամի ներդրում՝ «Ամբեր կապիտալ ԵՄ-Հայստան ՓՄՁ ԳԳ» ՍՊԸ-ում:

«Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ին տրամադրվել է շուրջ 5.6 մլրդ դրամ: Միջոցառման շրջանակներում ձեռք են բերվել 5,555,804.8 լրացուցիչ հասարակ՝ 1000 դրամ անվանական արժեքով բաժնետոմսեր՝ նորաստեղծ ավիաընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման և արդյունաբերական մասշտաբի «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի շրջանակներում արևային ֆոտովոլտային կայանների կառուցման նպատակով:

ՀՀ կառավարության 08.04.2021թ. N526-Ն որոշմամբ թույլատրվել է «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ին 2 մլրդ դրամով վճարել ընկերության կողմից տեղաբաշխված՝ պետությանը պատկանող համապատասխան թվով բաժնետոմսերի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռքբերման դիմաց: «Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից ձեռք բերված բաժնետոմսերի մարման միջոցով 2 մլրդ դրամով նվազեցվել է ընկերության կանոնադրական կապիտալը և ավելացվել «Հայկական ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալը՝ հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ, որը պայմանավորված էր «Հայկական ատոմային Էլեկտրակայան» ՓԲԸ-ի ֆինանսական ճեղքվածքի մասնակի փոխհատուցման անհրաժեշտությամբ:

Ծախսերի համեմատ եկամուտների բարձր կատարողականի արդյունքում ֆինանսավորման ներքին աղբյուրներում գրանցվել է բյուջեի ազատ միջոցների՝ նախատեսվածից ավել աճ, որը ծրագրված 110.6 մլրդ դրամի փոխարեն կազմել է 116.1 մլրդ դրամ: Նշված գումարից 148.3 մլրդ դրամը կազմել է կայունացման դեպոզիտային հաշվի մնացորդի փոփոխությունը:

2021 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արտաքին ֆինանսավորման աղբյուրներում 350.9 մլրդ դրամ են կազմել փոխառու գուտ միջոցները:

Աղյուսակ 38. Արդարին փոխառու միջոցների հաշվին դեֆիցիտի ֆինանսավորումը (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողա- կանը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
1. Փոխառու գուտ միջոցներ	54.1	385.5	350.9	91.0	648.3
1.1 Վարկերի և փոխառությունների ստացում	203.8	123.9	88.2	71.2	43.3
1.2. Ստացված վարկերի և փոխառությունների մարում	(103.1)	(117.1)	(116.0)	99.1	112.5
1.3. Արժեթղթերի (բացառությամբ բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության) թողարկումից և տեղաբաշխումից գուտ մուտքեր	(46.5)	378.7	378.7	100.0	(813.9)

2021 թվականի փետրվարի 2-ին Հայաստանի Հանրապետությունը միջազգային կապիտալի շուկայում հաջողությամբ տեղաբաշխեց 750 մլն ԱՄՆ դոլար ծավալով, 10 տարի մարման ժամկետով, 3.875% տեղաբաշխման եկամտաբերությամբ արտարժութային պետական պարտատոմսեր, որոնց արժեկտրոնային եկամտաբերությունը կազմել է 3.6%: Սա Հայաստանի կողմից միջազգային կապիտալի շուկայում արտարժութային պետական պարտատոմսերի չորրորդ թողարկումն էր: Ընդ որում, ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի համաձայն, պետական բյուջեի պակասուրդի գուտ ֆինանսավորումը արտարժութային պետական պարտատոմսերի հաշվին նախատեսվել էր 500 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով (241.9 մլրդ դրամ): Հավելյալ 250 մլն ԱՄՆ դոլարի արտարժութային պարտատոմսերի թողարկումն արդյունք էր կապիտալի միջազգային շուկայում ձևավորված բարենպաստ միջավայրի, թողարկվող պարտատոմսերի նկատմամբ բարձր պահանջարկի ու պարտատոմսերի ցածր եկամտաբերության և նպատակ է ունեցել բարձրացնել պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման հնարավոր ռիսկերի կառավարելիության աստիճանը, ինչպես նաև նպաստել վճարային հաշվեկշռի արտաքին հատվածի կայունությանը: 2021 թվականին փաստացի տեղաբաշխված 750 մլն ԱՄՆ դոլարի պարտատոմսերի գծով փաստացի մուտքը կազմել է 378,693,211.4 հազ դրամ (733,035,000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ հաշվարկված 03.02.2021թ. համար ԿԲ-ի կողմից սահմանված առքի փոխարժեքով 1 ԱՄՆ դոլարը = 516.61 դրամ): Տեղաբաշխումից ստացված ավելցուկային գումարը (136,750,811.4 հազ դրամ) ուղղվել է կայունացման դեպոզիտային հաշվի համարմանը:


Պայմանավորված վերը նշված թողարկմամբ՝ նախորդ տարվա համեմատությամբ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող արտարժութային պետական պարտատոմսերի ծավալն ավելացել է 750 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 1,750.000 մլն ԱՄՆ դոլար, որից՝

- 500 մլն ԱՄՆ դոլար՝ 2025թ. մարման ենթակա 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտատոմսերը,
- 500 մլն ԱՄՆ դոլար՝ 2029թ. մարման ենթակա 3.95% արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտատոմսերը,
- 750 մլն ԱՄՆ դոլար՝ 2031թ. մարման ենթակա 3.60% արժեկտրոնային եկամտաբերությամբ պարտատոմսերը:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող արտարժության պետական պարտատոմսերի 9.2%-ը (160.7 մլն ԱՄՆ դոլար) գտնվել է ռեզիդենտների մոտ, և այս ցուցանիշը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1.1 տոկոսային կետով:

Արտաքին աղբյուրներից ստացված վարկերի ցածր ցուցանիշը պայմանավորված է արտաքին վարկատունների աջակցությամբ իրականացվող նպատակային վարկային ծրագրերի կատարողականով, որոնց շրջանակներում ստացվել են ավելի քան 88.2 մլրդ դրամ վարկային միջոցներ՝ կազմելով ծրագրված ցուցանիշի 91.6%-ը, և բյուջետային աջակցության վարկերի գծով նախատեսված 27.5 մլրդ դրամը չստանալու հանգամանքով:

Գծապատկեր 29. Արտաքին աղբյուրներից նպատակային վարկերի ստացումն ըստ վարկատունների (մլրդ դրամ)



Աղյուսակ 39. ՀՀ պետական բյուջեից արտաքին վարկերի մարմանն ուղղված միջոցները (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	Կշիռն ընդամենը մարումներում	2021թ. փաստ	Կշիռն ընդամենը մարումներում (%)
Արտաքին վարկերի մարում	103.1	100.0%	116.0	100.0
Միջազգային կազմակերպություններ	69.9	67.8%	81.4	70.2
Օտարերկրյա պետություններ	32.4	31.5%	65.8	28.8
Առևտրային բանկեր	0.8	0.8%	2.3	1.0

2021 թվականի ընթացքում վարկերի մարմանն ուղղվել է 116.0 մլրդ դրամ՝ կազմելով ծրագրի 99.1%-ը: Շեղումը պայմանավորված է հետևյալ գործոններով.

- 2020 ու 2021 թվականների ընթացքում արտաքին վարկերի գծով ստացումների պլանի էական թերակատարմամբ ըստ առանձին վարկային ծրագրերի: Մասնավորապես մեծ ազդեցություն է թողել Գերմանիայի KfW «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման ծրագիր, I փուլ» և «Համայնքային ենթակառուցվածքների զարգացման II ծրագրի III փուլ - Լոռու, Շիրակի և Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածք» վարկերի գծով մասհանման պլանի թերակատարումը, ինչով պայմանավորված՝ պլանավորված 7.6 մլն եվրո (4.4 մլրդ դրամ) մարման փոխարեն փաստացի մարվել է վարկերի գծով պարտի մնացորդը՝ 1.1 մլն եվրո (0.7 մլրդ դրամ),

- SDR-ի ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ,

- արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ: Կառավարության արտարժութային պարտքի մարման գծով վճարումների համար 2021 թվականի ընթացքում կիրառված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ միջին փոխարժեքը կազմել է 505.65, մինչդեռ 2021 թվականի պետական բյուջեի ծրագրավորման ընթացքում արտարժութային մուտքերի և ելքերի փոխարկման համար կիրառվել է 493.76 փոխարժեքը (02.11.2020թ. դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված միջին փոխարժեք):

Նախորդ տարվա համեմատ ստացված արտաքին վարկերի և փոխատվությունների մարմանն ուղղված փաստացի վճարումներն աճել են 12.5%-ով կամ 12.9 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է եղել մի շարք վարկերի գծով արտոնյալ ժամկետների ավարտով և հերթական մարման ենթակա գումարի (մասնաբաժնի) ավելացմամբ, ինչպես նաև արտարժութային վճարումների փոխարկումների համար կիրառվող ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքի փոփոխությամբ (2020թ. համար՝ 476.46, իսկ 2021թ.՝ միջին հաշվով 505.65):

Կատարված մարումների 89.4%-ը բաժին է ընկնում թվով 7 վարկատուների՝ ԶՄԸ (31.4%), ԱՀԲ (18.5%), ՌԴ (16.4%), ԱՄՀ (7.9%), Գերմանիա (5.5%), ՎՀՄԲ (5.2%), Ճապոնիա (4.6%):

Կատարված մարումների կառուցվածքում լրացող տոկոսադրույթով վարկերի գծով վճարումների տեսակարար կշիռը կազմել է 11.6%, ֆիքսված տոկոսադրույթով վարկերի գծով վճարումների տեսակարար կշիռը՝ 88.4%:

Արտաքին ֆինանսական զուտ ակտիվների հաշվին պետական բյուջեի ֆինանսավորումը հաշվետու ժամանակահատվածում կազմել է -131.7 մլրդ դրամ՝ 101.8%-ով ապահովելով նախատեսված ցուցանիշը: Շեղումը հիմնականում պայմանավորված է արտաքին աղբյուրներից ստացված վարկային և դրամաշնորհային միջոցների մնացորդի շուրջ 2.3 մլրդ դրամ ավելացմամբ՝ նախատեսված 56.9 մլն դրամ օգտագործման դիմաց: Վրաստանի կողմից ՀՀ նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունների մարումը կազմել է 886.6 մլն դրամ կամ ծրագրային ցուցանիշի 100.2%-ը՝ պայմանավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերությամբ: Նոյն հանգամանքով է պայմանավորված նաև բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերման ցուցանիշը:

Աղյուսակ 40. ՀՀ պետական բյուջեի պակասուրդի արդարին ֆինանսական զուտ ակտիվները (մլրդ դրամ)

	2020թ. փաստ	2021թ. ճշտված պլան	2021թ. փաստ	Կատարողա- կանը ճշտված պլանի նկատմամբ (%)	2021թ. 2020թ.-ի նկատմամբ (%)
Ֆինանսական զուտ ակտիվներ, այդ թվում՝	(79.5)	(129.3)	(131.7)	101.8	165.6
Վարկերի և փոխատվությունների տրամադրում (Արցախի Հանրապետությանը)	(82.6)	(128.8)	(128.8)	100.0	155.8
Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերադարձից մուտքեր (Վրաստանից)	0.8	0.9	0.9	100.2	113.0
Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում (ԱՀԲ և ՎՀՄԲ)	(0.7)	(1.4)	(1.4)	99.7	197.5
Այլ	3.1	0.1	(2.3)	(4029.6)	(75.1)


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ⁵⁴

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ << պետական պարտքը կազմել է 4,429.6 մլրդ դրամ (9,225.6 մլն ԱՄՆ դոլար): << դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ նախորդ տարեվերջի համեմատ << պետական պարտքի ցուցանիշներն աճել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար 6.4%-ով և 15.8%-ով: Դա պայմանավորված է եղել 2020 թվականի և 2021 թվականի դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար / << դրամ փոխարժեքների տարերությամբ, որը փոփոխվել է 8.1%-ով՝ 522.59-ից նվազելով մինչև 480.14: << պետական պարտքում 3,192.2 մլրդ դրամը (6,648.4 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է արտաքին պարտքը, 1,237.4 մլրդ դրամը (2,577.2 մլն ԱՄՆ դոլարը)⁵⁴ ներքին պարտքը:

Աղյուսակ 41. << պետական պարտքը

	Առ 31.12.2020թ.	Առ 31.12.2021թ.	Փոփոխություն, գումար	Փոփոխություն (%)
(մլրդ դրամ)				
<< պետական պարտք	4,164.3	4,429.6	265.3	6.4
<< կառավարության պարտք, այդ թվում՝	3,923.9	4,209.8	285.9	7.3
- << կառավարության արտաքին պարտք	2,926.2	2,972.4	46.2	1.6
- << կառավարության ներքին պարտք	997.6	1,237.4	239.8	24.0
<< կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	240.4	219.8	(20.6)	(8.6)
(մլն ԱՄՆ դոլար)				
<< պետական պարտք	7,968.5	9,225.6	1,257.2	15.8
<< կառավարության պարտք, այդ թվում՝	7,508.5	8,767.9	1,259.4	16.8
- << կառավարության արտաքին պարտք	5,599.5	6,190.7	591.2	10.6
- << կառավարության ներքին պարտք	1,909.0	2,577.2	668.2	35.0
<< կենտրոնական բանկի պարտք (արտաքին)	459.9	457.7	(2.2)	(0.5)

⁵⁴ Պետական պարտքի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է հետևյալ տեղեկանքում՝ [4.ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ\8. Պետական պարտքի վերաբերյալ.xls](#):

Գծապատկեր 30.ՀՀ պետական պարտքը 2019-2021թթ. (մլրդ դրամ)

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 265.3 մլրդ դրամով (1,257.2 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով, որն աճել է 7.3%-ով, իսկ ՀՀ ԿԲ-ի արտաքին պարտքը նվազել է 8.6%-ով:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է ՀՆԱ-ի 63.4 տոկոսը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.9 տոկոսային կետով: Ընդ որում կառավարության պարտքը կազմել է ՀՆԱ-ի 60.3 տոկոսը՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.2 տոկոսային կետով:

Արտաքին պետական պարտքի հիմնական մասը ՀՀ կառավարության պարտավորություններն են: Կառավարության արտաքին պարտքի բաղադրիչներն են՝

- արտաքին վարկերը և փոխառությունները, որոնց ծավալը կազմել է 2,151.6 մլրդ դրամ,
- ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը, որոնց ծավալը կազմել է 53.9 մլրդ դրամ,
- ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժութային պետական պարտատոմսերը, որոնց ծավալը կազմել է 763.1 մլրդ դրամ,
- ՀՀ կառավարության կողմից տրամադրված արտաքին երաշխիքները, որոնց ծավալը կազմել է 3.8 մլրդ դրամ:

2021 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական պարտքի գուտ ներկա արժեքի ցուցանիշն (ՀՆԱ) աճել է՝ 2020 թվականի 5,184.2 մլն ԱՄՆ դոլարի դիմաց կազմելով 5,687.8 մլն ԱՄՆ դոլար: ՀՆԱ/ՀՆԱ հարաբերակցությունը մնացել է անփոփոխ՝ կազմելով 41%, իսկ ՀՆԱ/արտահանում ցուցանիշը նվազել է՝ 2020 թվականի 137.8%-ից հասնելով 116.5%-ի:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ << ներքին պետական պարտքը նախորդ տարեվերջի համեմատ աճել է 239.8 մլրդ դրամով (24%-ով), և դրա տեսակարար կշիռը << պետական պարտքի կառուցվածքում աճել է՝ 24%-ից հասնելով 27.9%-ի: Կառավարության ներքին պարտքի բաղադրիչներն են՝

- ոեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերը, որոնց ծավալը կազմել է 1,154.9 մլրդ դրամ,
- ոեզիդենտների կողմից ձեռքբերված արտադրութային պետական պարտատոմսերը, որոնց ծավալը կազմել է 77.1 մլրդ դրամ,
- ներքին երաշխիքներ, որոնց ծավալը կազմել է 5.4 մլրդ դրամ: